ՄՈՒՐԱՑԱՆ

ընտիր յերկեր

պետհրատ

Հ Ա Յ Կ Լ Ա Մ Ի Կ Ն Ե Ր

891.69
Մ-93

Մ Ո Ւ Ր Ա Ց Ա Ն

ՑՏՊԻԳՎԱԾ Է 1961 Թ.

ԸՆՏԻՐ ՑԵՐԿԵՐ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Հ Ա Տ Ո Ր

46396
II
A 28692

Թարգմանությամբ հայ առաջաբանով Ա. ՑԵՐՑԵՐՑԱՆԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՑՈՒՆ

ՑԵՐԵՎԱՆ 1936 ԼՐՈՍԿՎԱ

Տեքստի խմբ. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
Մուպիերը և կոմիքը ԼԵՎԿԱՐԻ
Տեխ. խմբ. Մ. ԱՐԴԱՐՅԱՆ

Տպագրված և ՀՍՀՀ Գեոնքատի Մոսկվայի տպարանում Մոսկվա, Արմյանովի պնը. 2. Պատվեր № 1455 Գրառնվատ № Բ — 12977. Հրատարակչ. № 3324. Տիրաժ 4400. Հանձնված և տպագր. 13/X-35 ստորագր. տպագր. 16/XI-35. 23 1/4 մամուլ. մամուլում 42000 տպանիշ

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մուրացանի ընտիր յերկերի ժողովածուն բաղկացած է լինելու յերեք հատորից: Հատոր Ա-ն «Նոյի ազռավը», «Առաքյալը» յեվ «Մորհրդավոր միանձնուհի». հատոր Բ-ն «Լուսավորության կենտրոնը» (վեպ). հատոր Գ-ն Ընտիր պատմվածքներ:

Առաջին հատորի նյութերի ընտրությունը յեվ դասավորությունը կատարել է հեղինակը:


Այս հատորում զետեղված նյութերի զանազան հրատարակությունների տեքստի համեմատությունը ցույց տվեց, վոր Մուրացանը, իր յերկերի ժողովածույի ներկա հատորը տպագրության հանձնելուց առաջ վերախմբագրել է այդ նյութերը, իսկ տեղ-տեղ կատարել լուրջ հավելումներ յեվ փոփոխություններ:

Պահպանելով նույն հատորի նյութերի թեմատիկ միասնությունը, ներկա հրատարակության տեքստը տպագրության պատրաստելիս, կարեվոր համարեցինք ոգտագործել հեղինակի կողմից վերամշակված յեվ 1904 թվին լույս ընծայված տեքստն անփոփոխ. (փոփոխված և մասամբ կետադրությունը):

Խմբագրություն

ՄՈՒՐԱՑԱՆԸ ԻԲՐԵՎ ԳՅՈՒՂԱԳԻՐ

(ԱՌԱՋԱԲԱՆ)



* * *

Մուրացանի յերկերի առաջին հատորը հարևոր նշանակություն ունի նրա առեղծագործությունն ընդհանրապես դնահատելու համար։

Պետք է նկատել, որ այս ժողովածուն սկզբնապես կազմել և ինքը հեղինակը 1904 թվին նշանակալից ևս, որ Մուրացանն իր յերկերի շարանը բաց և անում դյուղագրական նմուշներով, և իր գրվածքները դասավորում և վճռ թե ժամանակագրական կարգով, այլ ներքին բովանդակության նմանությամբ 1905 թվի հեղափոխության նախորյակին դյուղագրական յերկերով հանդես գալն բուռ ինքյան բնորոշ մի հանդամանք ևր, յեթե նկատի առնենք նաև այն, որ Մուրացանն այդ յերկերը մշտժամանակ հարևոր մեկնություն կամ բանալի յեն հանդիսանում նրա ողջ առեղծագործության համար։

Առաջ պետք է շեշտել յերկերի դասավորության սկզբունքը։ — հեղինակը դնում է նախկա դյուղից դեպի յերեվակայական դյուղը, տվյալից դեպի դաղափարականը։ Թե մեկը և թե մյուսը իրար լրացնում են։ մեկի մեջ ասած հարցին դուդակվում և մյուսի մեջ դոնված պատասխանը։ Այդ իմաստով Մուրացանի առաջին հատորը մի անբաժանելի ամբողջություն և ներկայացնում։ Վեդունց Սարգսի դյուղը, Կամասյանի Ջերմելուն և Քուլբ Աննայի Ելզորադեն (դերյերջանիկ աշխարհ) կազմում են մեկը մյուսի շարունակությունը վոչ միայն հեղինակի գաղափարախոսության տեսակետից, այլ և նյութի ծավալման կողմից։ Այնուհետև բնորոշ և այն պարագան, որ Վեդունց Սարգիսը յերազում է ևնոր դյուղի ջրագրեր և առհասարակ նորագույն դյուղատնտեսության մասին, որ իրագործում է անբնական մի հանձնարարական։ Նույն Սարգիսը պարտք է անում մի խոջայից ևՔսունանին մի արտաքո տոկոսով, նման մի խոջա հարևնման յեղանակով շահատակում է Ջերմելուում, և այլն։ Փաստական այդ տվյալները հաշվի առնելով, Մուրացանն իրավունք ուներ ասելու թե՝ առաջին հատորում թեև տարբեր նյութեր կան, բայց դրանք էգալուփարի նյութերով կազմում են մի ամբողջություն։

Մուրացանի առաջին հատորում նախ՝ առկա յե էգլխավոր դործող անձը, որ դյուղն է։ Դա առանձնանալորդ դարավորջի և բանեկորդ դարձակչդի դյուղն է։ Անդրանիկ և ցայտուն հատկանիշը, որ ունի այդ դյուղը — դա հատարտակական հակադրություններն և հակասություններն առկայությունն է։ Ցեվ յերկրորդ՝ բացի դյուղից ներկա յե նաև հեղինակը, որ պատասխանում և մոտոշ կարդեր, հարձակվում և չ'սիրած մարդկանց դեմ ու, այդ բոլորով հանդերձ՝ յերևան և բերում շատ մոտոշ հատարտակական աշխարհայացք։ Վերոնք են այդ աշխարհայացքի հիմնական դծերը։

I

Մուրացանի աշխարհայացքը, որով առաջնորդված են նրա գյուղագրական ընդհանրացումները և Անդրկովկասյան հայ գյուղի պատմական զարգացման ընթացքով ներգործությունն արդյունաբերական կապիտալի հարվածների տակ՝ ավել և հեղինակի մտքերին որոշ ուղղություն նրա մատծողությունը յերկու զինք ունի. նրա աշխարհայացքը յերկու գործիք ունի — քաղաքական և շինարարականից Նա քաղում է այն պայմանները, որոնք ծնում են իր գյուղի համար քայքայում։ Շինում է այն շինքը, ուր պիտի ապրի ազատագրված գյուղացին Ինչպես տեսնում եք, նա մի կողմից ջախջախում է, իսկ մյուս կողմից պաշտպանում է իր յերկերի մի մասում գնում է մի շարք էինչիւ-ներ, որոնց աշխատում է պատասխանել մի այլ մասում՝ Հնոյի ապամոնը ու «Առաքյալը» — այս ժամանակակից գյուղն է, մինչդեռ «Մորերդավոր մխանձնուհին» — ապագա ցանկալի գյուղն է։ Բոլոր այն քերթուղյուններըը, ինչ որ նա նկարագրել է առաջին յերկու յերկում, աշխատել է վերացնել յերրորդի մեջ Թե պակասությունները նշելիս և թե դրանց վերացման ուղիները ցույց տալիս յերկում է հեղինակի հասարակական համակրանքները ու հակակրանքները բնութագրելու Նրա ներհակությունը գյուղը քայքայող պայմաններին դեմ խիստ որոշ յերևում է այն բոլոր դեպքերում, յերբ նա զգոնում է կապիտալիզմից, արդյունաբերականացումից, լիբերալիզմից, բուրժուականացած յեկեղեցուց, ցարիզմից, մի խոսքով՝ կապիտալիստական այն հասարակարգից, որի վոլորտի մեջ ընկած ապրում եր Անդրկովկասյան գյուղը։ Մուրացանը ինչպես և ներկայացնում այդ գյուղի ներկան։

Նախ՝ գյուղի արտաքինը. այն, ինչ որ համբորդի աչքին և զարնում առաջին հերթ. — գյուղը կեղտոտ է, անորը գետնից կպած ու գետնափոր, խրճիթները հողածածկ, բակերն ալրով լիքը, աթարի դիզերն ամենուրեք, փողոցները ծուռ ու մուռ, բակերի և կուրքերի վրա բոկոտն ու կիսամերկ յերեխաները Ապա՝ գյուղացին թեև համբորդին իր ցավերը պատմելու սովորություն չունի, բայց վերջինս կ՚նկատե, որ նա ամբողջապես կապկված է կաթիլներից։ Հենց այժմից նկատենք, որ գյուղ և գյուղացի նկարագրելով՝ Մուրացանը գլխավորապես աչքի առաջ ունի գրեթե աղքատ և միջակ գյուղացիներին, որոնց նա համարում է բարի, աշխույժ և աշխատասեր մարդիկ. որոնք տեսական չափ հարմար վոչ վորքե չեն ընտրում, այլ ապրում են իրենց ճակատի քրտինքով։ Ճիշտ ես այդ գյուղացին գլխավորը և անմասնին աշխատում է որքնքուն, ինչպես և իր անասունը, բայց նրա վատառակը հափշտակում են՝ իրեն թողնելով ձեռնունայնե Մուրացանն առաջարկում է տալել գյուղացու ընտանիքում, տեսնել և շոշափել նրա աղքատությունը. Ներկա լինել դաշտում նրա հրած տանջանքներին և չափել այդ տանջանքների գնով ձեռք բերած արդյունքի չնչին արժեքը, վորպեսզի հարցող լինի մարդ գտնելիքը կատմել գյուղացու հարստությունների մասին Այդ պայմաններում մեջ գտնվող գյուղը վոչինչ հուսատրական հրատարակ չի ներկայացնում և, ինչպես պատկերավոր կերպով ասում է մեր հեղինակը՝ գյուղում հնձելու վոչինչ չկա. դա մի խորտացած, խոպանացած յերկիր է, որ պետք ունի հերկվելու, արորատրվելու, մշակվելու և պարարտացվելու Ամեն ինչ պետք է սկսել սկզբից, վորովհետև մի հափշտակիչ ձեռք մրկել է գյուղը, թողնելով ավեր և մոխիր Այդ ձեռքը սովորական ձեռք չէ, այլ մագել, վորի հատկությունները մեկ-մեկ մերկացնում է մեր վիպասանը։

Առաջին հերթին՝ վաշխառուն Գյուղացին պարտք է վերցնում տոկոսով և... հավիտյան տարուկ ետում վաշխառուի ձեռքին Այնուհետև անդոր է ետում գյու-

գային իր կյանքը կրծող չարիքներին առաջ, որովհետև տգետ և անուսում ժողով մի հոգմից բնությունն է նրան զրկում, իսկ մյուս կողմից՝ չար մարդիկ են կեղեքում. այդ պատճառով էլ նա վարում է դառն ու չարքաշ կյանք։

Բացի վաշխառվից՝ էլ ուրիշ ի՞նչ չարիքներից է տանջվում գյուղացին։

Գյուղացու հողը հափշտակվում է։ Գյուղում հարկահանությունը կատարվում է անարդարությամբ։ Գյուղացին անտեղի կեղեքով չնեխաբևվում է ծանր աշխատության և հոգսի, զրկանքներ և կրում զեղծումներ կատարող և հարբատարատության աչքից խուսափող պաշտոնյաներից։

Այդ բոլորից հետո՝ գյուղը քաղված և իր բախտին Գյուղի պայմաններին լավատեղյակ մեկը նկատում է. կեղեքիչներից և վաշխառուներից զատ՝ դեռ մինչև այսօր գյուղացիք չեն ազատել վեց վոքին իրենցով հետաքրքրվելու կեղեքիչ ատատ հունձ ունի գյուղում, որովհետև Հինականի համար մի մանրեք ննդատ ածի, ինչդես քաղքցու խոսքը խոշոր մանրեքն։ Այդ մանրեքը ձեռք բերելու համար գյուղացին լծվում է աշխատանքի, իր հետ միասին լծելով զրան նաև կնոջն ու անչափահաս զավակներին։ Այդ աշխատանքը ծանր և քրտնաջան, որովհետև գյուղացին հողի հետ կռիվ է տալիս աշխատանքի պարզնական գործիքներով։

Տիպական հայ գյուղը, որ նկարագրել է Մուրացանը, նրա մոտ անվանված է չարաբաստիկ Զիրուխլուս։ Այդտեղ են ապրում աղքատ Սայինները, որոնք տարի պարտք են վերցնում, այնինքն նույն իսկ ամբողջ չունեն և վերջինս ձեռք են բերում վաշխառի ձեռնտվությամբ։ Այդ վիճակի համար մեմ և մեղադրական նատաբանի վրա նատեցնում Մուրացանը։

Նախ կապիտալիզմը։ Նա հեղնորեն դա անվանում է Հյուսատվորություն։ Վերջինիս հետևանքով անպարծ չքացել և լիսատատ ու սիրատատ գյուղը։ Այժմ յեղբայրն ուզում է յեղբորը խեղդել, որդին հորը չի ճանաչում և նույնիսկ ատում է հորը ծախել։ Մի խոսքով՝ հաշխարհի շաբը շատացել է։ Շատ ապրյուրը Մուրացանը համարում է յեսատիրությունը։ Մեր հայրը ինքնատպատ ժամանակ և նա անվանում. վերացել և այլատիրությունը և ատպարեզը ճնացել անձնատիրության առաջ բացե Մարդիկ նույնիսկ ամենաբանկատին հարբությունները զոհ են ընկնում լուսատվորության հրապուրչներին, որովհետև ապահովությունը զորանում է և առաքինությունը նվազում։ Անաշխատ կյանք վարողների թիվը շատանում է. հարթ չեն շինում, ջանքներին ջափա չեն տալիս։

Անաշխատների վորջը — արդյունաբերական քաղաքն է, ուր նույն իսկ հանգիստ քնի մասին խոսք չի կարող լինել, որովհետև հանգիստ քունը աշխատանքով և պայմանավորված։ Այդտեղ են ապրում հյուսատվորվածները, այդ մեծ քաղաքում, ուր ոչն անատուղ է և ուր նրանք ավելի վոշի չեն ծծում, քան կեղեքվում։ Այդ նոր բաբելոնը ապահովված մեքենատոր ունի, լուսից և ոդից դուրկ գործատներ, ուր տերում են փողի և հաշվի հարցերը՝ նոր հաշվամատյաններին և անձիտ համաբերչներին ուղեկցությամբ։ Քաղաքներում վերանում են լավ, հնամենի սովորությունները և նրանց տեղը բռնում և վերելքյան մակարտյեր։ Այդտեղ խաղաղ կյանքը տեղի չի տալիս վոչինչ և ունայն հավաբությունն առաջնեներ հավ։ Թումանյանն ասել է՝ Ի՞նչ եմ անում այս գեհենում, աղմուկի մեջ վայրենի, — Մուրացանը նույն միտքն և արտահայտել՝ գրելով. Հեռու աշխարհային աղմուկից և ապահանությունից։ Ի՞նչ ունենք մենք այն խառնիճաղանճ մարդկանց բազմության մեջ։ Նրա լավագույն հերոսները անհամակիր են քաղաքի անցուդարձին, անհամակիր այն իրականությանը, ուր ամենը թե աշխատում է, սակը մուֆիա չեն ուտում. վեց ջաֆա կա, վեց նեղություն։

Արդյունաբերական քաղաքում են ծագում անաշխատ, պրոլետարիզացած կյանքի ժամադրավայրերը — «Հումաբրաիսխանանները» (հլուծինները)։

Մաքերի այս ջարդը զուգադիպում է մի քանի առա դյուղագիրներին (Ուսպենսկի, Կարոնին, Նաումով, Զլատովրատսկի) առելուքյանը կապիտալիստական քաղաքի նկատմամբ։ Վերջինս թալանում է դյուղը և կուլտուրային, «ճշմարիտ» լուսավորության փոխարեն տալիս նրան մոդաներ, ռիֆլիզիս, գրամոֆոն, տանգո, անհոգի մեխանիզացիա, փողի իշխանություն, մի խոսքով՝ իրերի այն «հաստատուքյունը», որով քափանցված և կապիտալիզմը։ Ինչպես և Մուրացաններն, այդ դյուղագիրներին ևս խոշոր արդյունաբերական քաղաքը պատկերում է իրրև նոր Սոդոմ-Գոմոր, որ նրանց զզվանք և սարսափ է պատճառում իր «անբարոյականությամբ»։ Այդ դյուղագիրների համակրանքը դյուղի կողմն է և ամեն լավ բան նրանք տեսնում են այնտեղ, թեև, իհարկե, նկարագրում են նաև իրենց հայացքների հակառակ յերևույթներ ևս։ Հետաքրքրական է դյուղացիական դեմոկրատիայի այդ գաղափարախոսների մասնության կողքին դնել Բալզակի մոտեցումը դյուղին և դյուղացուն։ «Բարոյական և աղնիվ մարդը, — ասում է նա, — քաղաքացիություն և դյուղում... դրա պատճառն այն է, որ դյուղացին բնության մոտիկ լինելով և դուռ նյութական կյանք վարելով, մոտենում է վայրենուն։ Աշխատանքը, յերբ պարապում է մարմինը, խլում է մաքից աղնվացնող նշանակություն»։

Ցերկրորդ հակակրելի յերևույթը Մուրացանի համար — դա կապիտալիզմի ջատագով հասարակական փիլիսոփայությունն է, այսինքն լիբերալիզմը (հազատասմասություն)։ Այս բաժնում նա հակադրում է իրար բազմազանյալ խոսքն և գործի, պատմական անցյալի և ներկայի տղտղակող հակասությունը։ Լիբերալիզմը տղտրարեց հազատասություն, յեղբայրություն և հավասարություն նշանաբանը։ Բայց ինչ իրագործեց դրանից։ — Հոչինչ։ Ուստի և, Մուրացանի կարծիքով, պատասխանության անունով տղտկողները հասում են մինչև և հեղծուծ։ Լիբերալի խոսքն ու գործը չեն համապատասխանում իրար կամ, ինչպես Մուրացանն է ասում՝ խոսքը տատիկական է, գործը՝ մոլեկան։ Որինակ. նեղբող ենք հարդում պատասխանության, բայց ընկերի իրավունքը հափշտակում ենք։ Դրվատում ենք գութն ու բարեգործությունը, սակայն, առանց ամաչելու, հանում մերձավորի վերջին շապիկը, պնդելով թե՝ դա մեզ է պատկանում...

Լիբերալների մեծագույն պակասությունը Մուրացանը համարում է յեսապաշտությունը։ Նրա համար յեղելի յե այն հաստատությունը, որը ծառայում է միայն անձնական յերջանկությանը կամ տնտեսական գոյությունը դյուրություն տալու համար։ Վերացական հանճնեղեն հուզք-եր և անվանում նրանց, ովքեր միայն իրենց յեսական շահերի պաշտամունք ունեն։ Անելանդամ սոցիալիստական իմատն այն է, որը հին բնաջիջ ժամանակ բոլոր գործոն ուժերը գնում էին կապիտալիստական քաղաքը բարգավաճելու համար և, ինչպես ծակովչելը և ասում՝ թողնում էտարբած և ոտից դյուղը կալվածատիրոջ հիմնավորների իշխանության տակ։ Անկենդան կամ անսիրտ կուռքեր են դյուղը աչքաթող անող գործոն ուժերը։ Իսկ կապիտալիստն է յե կալվածատերը նրանով, որ նա շահագրգռված չեր իր հողի մեջ տեխնիկական բարեկարգումներ մտցնելուց, որովհետև հողի կարիք ունեցող դյուղացին նրա համար մի կիրան կով էր։

Հայ լիբերալիզմի պարագլուխ Գ. Ալթրունին, որին ատելով ատում էր Մուրացանը, — հայ դյուղի վերքերը բուժելու համար յերբեք չի ծառացել վոչ կալվածատիրության և վոչ էլ մխաչեության դեմ։ Սակավահողության դեմ Ալթրունին առաջարկում էր լոկ հայվածատերերից հող գնել և վճռ կես խելք։

Ցերբրդ Չերչիլը, որ դյուղի գլխին էր ծանրացած, դա — ցարիզմն էր, բուրժուազիայի և կալվածատիրության Հազգանակը։ Այս բաժնում Մուրացանը սուկ ակնարկներ ունի և վեչ բացարձակ ժեստում և ինչամանքն կամարյանին Հերգրդը մեջ դրված և հարկահանության ժամանակ անարդարությունները դեմ պայքար, և դյուղացուն պաշտպանել այն դեպքում, յերբ հափշտակում են նրա կալվածները կամ հողերը։ Դրան պետք ավելացնել կոռն ու ձրի մշակությունը, ապա՝ դեղծումները կատարող պաշտոնյաների հիշատակությունը, կարևոր և նաև մի խոստովանություն — այսորվա դյուղին չեն սպասում հասան խանի ֆարթաշները, բայց... սպասում են որինագանցները։ Ինչպես և Գասոյանը, Մուրացանն էս խորությունն է դնում ցարական որենքի և որինագանցության մեջև, վոր շատ բնորոշ է նրանց աշխարհայացքի համար։ Բայց հասմենայն դեպս, մի շարք դեպքերում Մուրացանն իր բացասական վերաբերմունքն և ցույց ավել նաև ցարական որենքի դեմ։ Որինակ. Քարահաչայի կոյտրանապետը հայ դյուղում ուսուցիչ և յեղել, բայց զրկվել և պաշտոնից, վոր բոլշևիսև ցնդ ունենալու որենքը վանդել և նրան դյուղից և այժմ նա դաբձել և Հնորքատանիների վարժապետ։ Նույնպես և մալախանների դյուղի և Չիրուխլուլի հակադրությունը տալով, Մուրացանն անդադրում և ցարական իշխանության աջակցությունքը։ Բայց Աննայի գործունեության մեջ էս մի խուլ անկարկ կա, վոր մեզ թվում և թե՝ սերդողներին և վերաբերում։ Աստմ և, Աննան չեր ուզում փող փչել հրապարակում, վորպեսզի չ'գան և չ'քանդեն իր գործը. ուզում և ցրտնի մի հատիկ լինել, վորին այլևս հափշտակել չ'կարողանան։ Շատ բնորոշ և նաև այն ամենը, ինչ պատմում և Չիրուխլուլի դյուղացին անտառապահ պաշտոնյայի ապորինություններն մասին։ Կաշառք, ծեծ, հայհոյանք բանադրություն, սպասելիք — ահա նրա գործունեության սովորական մեջոցներն։ Նա իր հրթքին կախած պաշտոնական նշանը ցույց տալով՝ պարծենում և։ — Թեկուզ ոտ աշխարհը քանդեմ, ձի կարող և առաջս կտրել։ Նմանապես չժգոհ են դյուղացիք պրիստավից, վորն լեզուն չեն հասկանում, բայց հայհոյանքի և հնուտի ուշը գիտեն։

Ինչպես հայտնի յես, ցարական կառավարությունը աշխատում էր Անդրկովկասում հողեր ճարել ռուս գաղթականներին համար այն շրջաններում, ուր տեղական ազգաբնակչությունը նեղվում էր առկավհողությունից։ Դրա հետ, միևնույն կառավարությունը հայ դյուղերի մեջ հողային վեճեր էր առնծում՝ բնակչության ուշադրությունը հողի առկավության հանդեպ գրելու համար։ Մուրացանն մոտ այդ յերկու հարցի առիթով սուկ ակնարկներ կան, բայց վոչ շնշտակի ցուցմունքներ։ Որինակ, նա զժգոհում և, վոր հայ դյուղացիների արտերը տրանքով անցնել չի լինում, վորովհետև շատ նեղ և նրանց մեջ յեղած տարածություններ։ Ինչպես հայտնի յես, մինչև հեղափոխությունը՝ Անդրկովկասի մշակելի հողի մեկ 6, 2 % էր դյուղացիության ձեռքին, իսկ մնացած 93. 8 % պատկանում էր պետական գանձարանին, ազնվականությանը, հոգևորականությանը և վանականությանը։ Ընդհանը ցարական Ռուսիան անվանել և ժողովրդների բանտ։ Մուրացանի մոտ այդ բանտը իր ամբողջ մերկությամբ հանդես չի բերված, բայց և այնպես բանտապետության դեմ նա շատ ցայտուն հակակրական վերաբերմունք ունի։

Չնայած այդ բոլորին, այնուամենայնիվ մեր վիպասանը հեռու յե կապիտալիզմի հիմքերը հասկանալուց և քննադատելուց։ Այդ հանգամանքը մենք վորոշ չափով շնշանակենք, մեջ բերելով նրա միամիտ հակակրությունքը որենքի և որինագանցության միջև։ Մի խոսքով՝ Մուրացանը վոչ թե ծառանում և կա-

պիտալիստական սեռտեմի, այլ որա դիշատիչ հոմմերով դեմ, վոչ թե հավում է մասնավոր սեռհականությեյան, այլ անդադրում համ մասիսթուծական գոյությեյան դեմ։ Այդ և պատճառը, վոր նա ընդունում է լիբերալիզմի տեսությեյան վորոշ կողմերը և որոնցով պայմանավորում իր գրական ելևէջները։

Ինչով և պայմանավորված այդ հանգամանքը — Մուրացանն սրատեսությեյէ և Անգրիսվիսման հայ գյուղացիության այն խավերի, վորոնք դեռ ամբողջովին չեն վորկորել գյուղացիական դեմոկրատական սկզբունքները։ Ճիշտ է, Մուրացանն ապրեսով նպիհնալիստական քարոզներ չի կարդացել, բայց և այնպես նրա աշխարհայացքի մեջ նկատելի տեղ ունեն մանր բուրժուական նացիոնալիզմի վորոշ տարրեր։ Մենք արդեն գիտենք, վոր Զիբուխլուի գյուղացիները նախանձով հյին նայում Սիմյոնովկայի հարուստ գյուղացիների տոհմով վիճակին։ Հայտնի չի, վոր ստուգական ցարիզմի հալվածատիրական դաղութային քաղաքականությեյուններ վորոշակիորեն արտահայտվել և նաև այլազգի — գյուղացիական հոգիի անձնա հափշտակմամբ և կողոպտումով։ Հենց այդ իմաստով՝ մանր բուրժուական նացիոնալիզմը մնվել և հինարտոնից իսկող ճնշման դեմ ինքնապաշտպանության հնարներ վորոնելով։

Այդ բոլորից հետո շատ հասկանալի չեն Մուրացանի յերկերի մեջ վորոշ դրամատիզմություն այն բոլոր դեպքերում, յերբ խոսքերը վերաբերում և ռուս պաշտոնյաներին։ Մեր վիպասանի հերոսը շատ և բարկանում, յերբ հայ յեկեղեցում հոսված Քրիստոսի պատկերը հիշեցնում և դուխտավոր մալականին։ Յերբ՝ Մուրացանը բարկանում և, վոր Սևանի յեկեղեցական պատմանների մի քանի վրա կան ժամինչև իսկ ռուսերեն մակագրություններ։ Ռուսացման քաղաքականության դեմ ծառանալով՝ Մուրացանը նույնքան կրքոտությամբ և վերաբերվում նաև հայ լեզվի շահերին. «Մարդ վոր իրա ազգի լեզվով խոսելը գիտա վոչ, հայվան չի, բա ինչ ա», ասում և Մուրինի Վեդունց Սարգիսը գլխին վեց և տալիս և ձեռ ու վոտ անում, յերբ վորդին Հայրուբյու աղջիկ և առնում և մերժում և նրան ուղարկել իր հայրական տունը։ Այնուհետև նա պայքարելով և խոսում իր վորդու զավակների մասին, նրանց անվանելով Հայրուբյու ճաներ։ Բնորոշ և նաև նույն այդ Սարգսի վերաբերմունքը գեղի իր ծնողավայրը — դեղձկական վաճառքը։ Վորդու առաջարկին՝ գալ և մշտապես քաղաքում ապրել, նա պատասխանում և կծու հայհոյանքով։

Բացի ռուս և վրացի հարեւաններից, Մուրացանի մանր բուրժուական նացիոնալիզմը վորոշ ակնարկներ արել և նաև թուրքերի մասին, նրանց մեջից դուրս յեկած քրեական տարրերի չահատակություններն ակնարկելով։

Այնուհետև հատկանշական և վիպասանի պատճենհոտությունը հայրենիքի լեռնական բնության հրաշալիքների հանդեպ։ Զվիցերական հեղեցկությանց սերտած հայերին նա առաջարկում և չքերագնահատել հայրենի արժեքները, այլ նրանցով պատճենել հարկ յեղած դեպքում։ Մուրացանի մոտ բնությամբ պատճենելուն դուգադիպում և պատմական անցյալի գրվատումը, մանավանդ հին հայերի հզորության և մեծագործության հիացումով։ Գագիտալիզմի հրապնդիների տակ ոմքած մանր բուրժուական անցյալին դիմում և անպայման ներկայից վրեժ լուծելու համար և վոչ թե առել այդ անցյալի սերունդ Վեդունց Սարգիսը, յերբ լսում և հին ելավ լավ պատմություններ, մխիթարվում և, իսկ յերբեմն էլ լաց և լինում «բարատաղը ջրի նման թափելով»։ Հենց այդ պատճառով բուրժուազիայի սերտացիության որոշ, լիբերալիզմի հաղթական դրոշի տակ գնդվող Անդրկովկասում, Մուրացանը չի տեսնում «վոչ նշանավոր մարդիկ և վոչ նշանավոր գործեր»։

Մուրացանի մանր-բուրժուական նացիոնալիզմի համար բնորոշ է նաև նրա վերաբերմունքը դեպի կրոնն ու եկեղեցին։ Այդ կողմից ևս մերթ նա հարձակում է լիբերալիզմին, մերթ ազդեցիկ հանդիսանում հենց նույն այդ լիբերալիզմը դավանող բուրժուազիային։ Հին եկեղեցին և նախնի քրիստոնեական հավատքը նա հակադրում է բուրժուականացած եկեղեցուն և մոդեռնիզացիայի ենթարկված քրիստոնեությանը։ Այդ դեպքում էլ նա յուրահատուկ մխիթարիզմի քարոզիչով, անցյալին և դեմում՝ ներկայից վրեժ լուծելու համար։

Վիպասանի մխիթարիզմի վրա նշանավոր չափով իր ազդեցությունն է թողել Անդրկովկասում ծավալված համքարությունների դժգոհությունները և գանգատները հենց կարդերից։ Ինչպես հայտնի է, ազգայնական այդ ընդվզումները վորոշ չափով առացան կրոնական յերանգավորում։ Կռվում էին ժողովրդին, հշայլությանը և այլնի դեմ՝ քրիստոնեական չափավորության պատվիրանների յեղնելով։

Մուրացանը ափսոսանքով և նայում այն անցյալին, յերբ հոգեորականը, մանավանդ ավետարը, հայը եր համարվում ամեն հայ քրիստոնյի այնքան անձնանվիրներն անդամ դյուրը եյին խոնարհում նրա առաջ՝ առանց ապատելու, վոր մեկը ներկայացներ նրանց իրար Այդ պարզ կենցաղը սիրելի եր նրան. յերբեմն նա սկսում է կասկածել, թե վերն է լավը՝ արդյոք բնագիտությունն իմանալ և տեղյակ լինել ծխածան առաջանալու բնական պատճառներին, թե ապտ դյուրացու պես փոքրիկից հետո ապրիք անել՝ նոյն ուխտը հիշելով։ Վիպասանը քրիստոնեության յերկակի յերեսները անցյալը հակադրում է ներկային, յերբ դասակարգային անջրպետը խորացել և հավատակիցների մեջ։ Մինչդեռ նրա կարծիքով՝ հայ ազգային կրոնի հալածանքն սարքներում... իշխանն ու սարուխը, տիկինն ու աղախինը, միևնույն մեքին գնացփոքում, միասին պաշտում և աղոթում եյին։ Կեղծված հնության այդ պաշտամունքը վոչ այլ ինչ է, բայց յերե ներկայից վրեժ լուծելու մի ձգտում Նմանատիպ հայության մխիթարության կենտրոն Ջմխածնի հարյր վեց հարյուր ամյա հնությունը շեշտելով, Մուրացանը նրանից ակնկալում է այնպիսի բաներ, վորոնք ավելի շուտ զառանցական են, քան իրականն Նա Ջմխածնի տուքը տալով խոստովանում է, վոր «վիհհագնատական աքեռը» զարձել և անդանավորներին, հացկատակներին, բանաստիս խաղաթղթերին, գայթակղության անգամանողներին, տգիտության և շահագործող պաշտոնյաներին վայել Մուրացանը յերազում է մի հրաշագործ «վիհհագնի» մասին, վոր գար և այդ բոլոր «հնխմանդ և ոտարամուտ» բաները վերացներ և վողջ հայ ազգը դարձներ «մի հոտ, մի հովիվ» — միաբան, ամենքը միահամուռ մի սիրտ և մի հոգի։

Մուրացանը հեգնում է Սևմանի կրոնավորներին, վորոնք այնքան դյուրագրգիռ են դեպի հարուստները և կոպիտ աղքատների նկատմամբ Սերը կամաբյանն իր հրացանն և արձակում, կղզեցիները խուլուն հասկանում են թե դա աղքատ մարդու հրացանի ձայն չե և դիմադարձ շտապում են հարստին դիմավորելու։ Վիպասանը ձգտում է ինչ վոր տարբերություն դնելու կաթոլիկի և լուսավորչական եկեղեցիների միջև, վոր բանաքրոսիկ մի ջանք եղ, քան պատմական իսկ իրական փաստ։ Հայ եկեղեցու «ժողովրդական» լինելու առասպելը, հարատության և տառապանքի հակադրությունը վեչ այլ ինչ են, բայց յերե ներկայից վրեժ լուծելու մեռումն Մուրացանը ցավ և հայտնում, վոր բուրժուականացած հայ եկեղեցականի համար մի փութ ադամ հոգեկան ներքը ավելի քան արժե, քան թե Սևմանի չուրջն ապրող ժողովրդի ցավերն ու կարիքները։

Կարծելով թե «նախնի» քրիստոնեությունը այդ ցավերն ու կաթիլները վերացնելու համար եր առեղծված, Մուրացանը դիմաստում է անցյալը — բնական կենցաղը՝ կապիտալիստական յերկրաստիճան հասարակարգի հանդեպ։

Բնական կենցաղի պաշտամունքը Մուրացանի մոտ ակզբունքային նշանակություն ունի։ Գյուղացիական զիմակրատիայի շահերին ծառայող նրա մտայնության համար հղկված և ապահովության մի կետը — դա արդյունաբերական քաղաքն է, իսկ հեղափոխական ժողովրդի անմահական ջուրը — դա լեռնային հայության մի մասն է, իր պարզ նիստ ու կացով, հյուրասիրությամբ, համերաշխությամբ։ Բազմում յերկար տարիներ ապրած ուսուց գեղեցկացնում է, վոր իր չունեն ու շալվարը տանն են գործված և վոչ մի բաղարից և գնված, ուսուկ և «ենքան» ինդ են, վոր հինդ տարի կդիմանան։

Ո՞ւր և ուզում ապրել Մուրացանի հերոսը կամ վոր հասարակարգում կուզեր ապրել հենց ինքը՝ հեղինակը։ «Ծանկանում եմ ապրել այնպիսի մի տեղ, — ուր մարդկանց հետ միասին ապրում և նաև նահապետականությունը, ուր կյանքի պարզության հետ՝ պահպանվում է նաև բարքի մաքրությունը, արդի անկեծությունը»։ Անատոլ Ֆրանսն ասել է՝ հեղինակի գաղափարական պատկանելությունը ամենից ավելի պարզ յերևում է նրանից, թե ում կամ վոր հասարակարգում կուզեր ապրել նա կամ նրա սիրած հերոսը։ Այս կապակցությամբ շատ հետաքրքրական և ֆրանսիական գրականության պատմությունից մի գեպք հիշել։ — Ժորժ Զանդը փետրվարյան հեղափոխությունից հետո իր գյուղական պատմվածքները վերահրատարակելով, հայտնում է թե՝ քաղաքային գաղափարների ներմուծությունը, նրանց վիճաբանն առելությունը, իր մեջ կարիք և առաջ բերել գեղջկական հարթ բարքերին և քնքույշ զգացմունքներին դիմելուն։ Նա ցանկացել և քաղաքային յերկրագործված բնավորություններին հողքին գնել ամբողջական հերոսներին, հերոսության պաշտամունքը։

Մուրացանի համար հասկանալու հերոսությունը և հերոսության պաշտամունքը բղխում էին նրա հասարակական հոգեբանության հիմքերից։ Նրա իդեալական պատմահայեցողությունը շատ խոշոր գեր եր հասկացնում Անհատներին։ Ինչպես հետո իմանանք, հենց այդ բաժնում ուսուց նարդկնիկությանը վորոշ ազդեցություն նկատելի յե նրա աշխարհայացքի վրա։ Բերե մասամն անշարժ և իմ իրերի բերումով ի վիճակի չեն ինքնուրույնաբար շարժվելու, այս գեպքում պետք և շարժումը իրենց ուսերի վրա տանեն ակզբնական Անհատները մինչև մեծ ամբողջը վոտքի կանգնեն։ Մուրացանի կաթիլում յերեք գյուղացիությունը հասարակականորեն պատրաստված մի քանի տարեկան գործիչներ ունենար, այն ժամանակ հլեհներ կշարժեյինք, գետերի ընթացքը կիսուեցնեյինք։

Խոշ տեսակ մարդկանց կաթիլ ունի գյուղը կամ վոնե և վերատանի հերոսական խռնելը։ Առաջին պայմանն և արիությունը, լայնասրտությունը, բացախոհությունն և իմացի մի ուշ, վոր, ճիշտ և, արի և վտառդի դեմ չի ուզդված, բայց նույնքան աննկուն և, վորքան արի և վտառդի դեմ խիղախողը։ Այդ հատկությամբ շատ քնորոշ են Մուրացանի սիրած աֆորիզմները. — Ուլ իմաց կա, ասիտեղ կա՝ ճանապարհ։ — կամ կգտնեմ ճանապարհը, կամ ինքս կհանեմ։ — Մարդու համար մի բան վերջությունն ճանապարհ կա։ — կամենալ հարկավոր և։ — և այլն։

Ըստ Մուրացանի յերկերում պայմանն այն և, վոր հերոսն իր հոգեկան բոլոր ուժերի մեջ գեկավար գերը պիտի տա բանականությանը։ Այդ իմաստով Մուրացանը պատմում և մի համարում թե՝ մարդկությանը գեկավարում և իդեանները, ուսուկ և նա շատ մեծ արժեք և տալիս իդեոլոգներին։

Ներքոյդ պայմանը անձնազոհության մորալն եւ Մուբացանի համար հոգեկան համ Հասցիալական առաջնահերթության (Հունաչաբանու սերմինն ե) մեկ ուղին ինքնահոսության, ավելի շուտ՝ անձնամոլության հաղթահարումն եւ Մուբացիր լեզու, բայց մի կողքին նրան — ահա վիպասանի նշանաբանը, որ շատ նման ե Իբանեի հայացքին՝ կոչումն ունեցող մարդկանց մասին (Բրանդ, Շտոկմանն ե այլք)։ — դոքթիր մեզ դիր քո ամբողջ ներս Իբանեի համար ես կարևորը մարդկային կամքն ե, որ իրեն դրսևորում ե պատմության վրա։ Ինչպես տեսնում ես, սա ծայրահեղ ինդիվիդուալիզմ ե, ճիշտ ե, հակաբուրժուական քննադատով, որովհետև ժխտում ե ինքնահոսությունը եւ անձնամոլությունը, բայց իր եությամբ այդ տեսությունը ծնված ե բուրժուական աշխարհից, որի տհամանելուց դուրս չեն կարողանում գալ ոչ Մուբացանը եւ ոչ էլ Հենրիկ Իբանեը։

Հենց Մուբացանը հարձակվում բուրժուական կրթության վրա, որովհետև նրա տված գիտելիքը պիտանի չի համարում գյուղական իրականության համար, հետամնացության եւ անձնազոհության այն գաղափարների համար, որոնց մասին անդադար խոսում եւ նրա պաշտպանած դպրոցական կրթությունը ֆիզիկական աշխատանքից կտրված չեր Ինքը ուսուցչին անձնվիրությամբ եւ պատրաստում եւ անձնազոհության զգացմունքը ներշնչում։ Այդ տեսակ դպրոցից դուրս կգա գյուղատնտեսական այն ինտելիգենցիան, որի կարիքն այնքան զգում եր մեր հեղինակը։ Վերևում Մարգսի բերանով նա պահանջում ե կրթված ինքնատարրերից էլը ուսումով խափար գեղը լուսավորել, խնդճ ու հայհոյանքն վերանային կռվից եւ քաղաքից պատանեյ։ Բացի այդ՝ նույն Մարգիսը ներաղում ե գյուղատնտեսական նոր տեխնիկայի մասին, ներազում ե, որ պետք ե կրթված մարդին վերադառնա եւ իր անտեսությունը նոր ձեով սկսի տանի։ Էլքա բավական թանգագին լավ բաղ եր ու տնկելուց, նոր գործի ջանայ եր ու շինելու, ցանելու եւ ձիանդ եր ու չսանձելուց։ Այդ բոլորը միասին են ներազում, որովհետև վանականը գյուղ չեն վերադառնում. իսկ մեզ՝ ազգայս եւ մշտական գյուղացին գյուղական բարեկարգ ուսումնարան հիմնելու միջոցներ չունեն։ Տանին իր մանկավարժությունն արդարացնում ե հենց նրանով, որ գյուղացին հաղիվ հաց ե իր գլուխը պահում, ճար միայն թե տարիներ ուսումնարան հիմնել կարողանա։

Այդ բոլորով էլ պայմանավորված եւ Մուբացանի գաղափարական գյուղի ուսուցիչն կամ, ինչպես ինքն ե ասում, գյուղական ժողովրդի առաջնա բարբարոսությունը։

Ցեղին հին գյուղը գոյություն չուներ, իդեալական գյուղը ոչ միայն ուներ այլ եւ ապա եւ ապրիլի կողքի կողքի չեն այնտեղ ապրում, կրթությունը արվում եր ծրկարար, ոգով գյուղում մեկ հատ անգրագետ մարդ չկար։ Ցեղին հին գյուղը ներքուստ պատահական եր, անմխիթարության եւ անհամաձայնության վտանգ շատ կային այնտեղ, իդեալական գյուղում անհամաձայնություն, վեճ ու կռիվ, հուսահատություններ չկան։ Այնտեղ իշխում ե Հոգատարության հրեշտակը։ Հետաքրքրական եւ նկատել, որ Իբանեն ևս ժխտական վերաբերմունք ուներ հուսահատությունների նկատմամբ։ Ծերչեն գրա պատճառը համարում եր նրա մանր-բուրժուական, մեղշանական պահպանողականությունը՝ մարդկանց հնազան ու խոզաղ գոյության ներազրեր։ Ցեղին հին գյուղում հարուստը մի չարիք եր միասին, Մուբացանի իդեալական գյուղում նա զրկել ե բարեգործ ե Էլը ավելորդից մի բան ե հատկացնում չունեվոր գրացուն։ Վիպասանը հավատացնում ե, որ այդ ինդանակով հնար ե լինել աղքատությունը խաղաղ վերացնել ե անը ու բարեկամություն հաստատել ամենքի միջեւ։ Ցեղին հին գյուղում ին-

16236

հիղճերին և հոգևորականությունը ազիտության սերմնացաններ էին, Մուբյացանը հավատացնում է, որ իսլամական գյուղում նրանք դառնում են հերձվածքին լուսավորության առաքյալներ։ Ցեղին հին գյուղում ինքնոգնության հիմնաքարերը չկային, իսլամական գյուղում կան հասարակաց շահամարտ, հասարակաց նախիր, փոխառու դանձարան, որոնք, ինչպես պնդում է Մուբյացանը, պրկել են գյուղացուն վաշխառուների ճանկերից և նրանց հալածական դրքերել գյուղի սահմաններից։ Ցեղին հին գյուղը բանեցնում էր գյուղատնտեսական հետամնաց, պարզունակ տեխնիկա, իսլամական գյուղում գիղջուհին սովորեցնում են գիտության առաջադրած ձևերով մանկելու և պատվաստելու, հերկելու և ցանելու, հնձելու և կալսելու, անասուն, հավ և մեղու դարմանելու, պարտեզ և բանջարանոց մշակելու գյուղին յեղանակները։

Ի՞նչ նպատակներով յի հետապնդել Մուբյացանն իր ուսուցչան հերձնելիս — Տեսնելով վոր կապիտալիզմը քայքայում է գյուղը և հասարակական դիֆերենցիացիան ավելի խորացնում, վիլսոնյանը դրա հակառակ քարոզում է մի կատարյալ համերաշխություն. մեկ մի հուսահատություն, մեկ մի բաժանում, այլ միության և սիրոգին ընկերակցություն։

Մուբյացանի հասարակահայեցողության համաք շատ բնորոշ և նրա այն համոզմունքը թե՝ քաղաքներին կյանք մատակարարողը գյուղն է, ինչպես և ազգի հիմնադրության ուժ ավողը գյուղացիներ Ցեղին նա անհնարական քայքայման դեմ մխիթարություն և պաշտպանում, տալս քաղաքի դեմ՝ գյուղի առաջնակարգ նշանակություններն և առաջ քաշում, վորպես ոսոզիկյան արդյունաբերական բուրժուազիայի և նրա իդեոլոգների դեմ, վորոնք բոլոր դերծոն ուժերը դրել էին ի սպառ արդյունաբերական քաղաքին՝ բուրժուազիայի այդ ցնոտիներին։

Վիլսոնյանի իդեալը՝ հուշա և անվիշտ գյուղացին է, վոր իր բարոր վիճակին պիտի հասնի մեկ թե քաղաքական ապատամբություններով, այլ հեշմարիտ լուսավորությամբ, բարոյական կատարյալ վերածնությամբ նրան այդ գործում մեծ ոժանդակություն պիտի ցույց տան թե իր հարազատ ինտելիգենցիան և թե բուրժուազիայից ծագած՝ բայց անձնուրաց այն մտավորականները, վորոնք կարող են բարձրանալ անձնական շահերի մակարդակից և մի լայն, հայրենասիրական տեսակետ ընդգրկել։ Ինչպես տեսնում ևք, Մուբյացանին մխիթարական խոսքեր ևր սոցիալիզմի և հեղափոխության գաղափարը։ Նա խոսում գարգացման և լուսավորության ջատագով էր։ Իդեալական գյուղի նրա պատկերացումը ուտոպիական եր։ Դասակարգային հիմքը դրանց անտեսելով՝ նա հուսով գնում է բարեգործության վրա։ Այդ բոլորով ել պայմանավորված և նրա վոչ հասարակահայեցողությունը, վոր կարելի յի ամփոփել հետևյալ հինգերորդ — Բուրժուական հասարակության մեջ դասակարգային հակասությունները մեղմացնելու ձգտում. բանտնտիկական տնտեսներ խոշոր քաղաքների դեմ. պրիմիտիվ նախակապիտալիստական պայմանների իդեալիզացիա. վերջինս երբեմն տեղիքափ պատիտալիստական պատերազմի դեմ. հետեվափություն լիբերալիզմից, վոր չի հասցրել իր խոսքը՝ — ազատություն, իդեալություն, հավասարություն լոզունգը։

Վոչոր արդյունաբերությունը, արդյունաբերական կապիտալի զարգացումը էի հետ է ածել քաղաքի հաղիճանիը գյուղի հանդեպ (Մարքս)։ Մուբյացանը ցույց է տալիս այդ զարգացման ներքին պայմանները, բայց իր այդ քննադատության մեջ նա հետ չի գնում բարոյագիտական բնեռնաններ առաջարկելուց և դասակարգային հակամարտությունները իրենի մեջոցով վերացնելու ցանկություններից։

Մուրացանի այդ սոցիալական ուտոպիայով եւ մասամբ պայմանավորված է նրա առեղծագործության գրական արժեքը, որի քննությանը կանցնենք հետո հիմա

II

Մուրացանի աշխարհայացքի ուտոպիական տարրերը վորոշ չափով կռվան են հանդիսացել նրա գրական ուղղության համար, որ հիմնականում բռնաճոխ եւ Բայց վերջնա ամբողջապես ուտոպիզմով չի տոգորված։ Վորքան վոր մեր հեղինակը դժգոհ է իրականությունից եւ յերազում է մի այլ վիճակ իր հասրային խմբակցության համար — նա յերեսում է տվյալ սահմաններից ու ապատնում է ցանկալի վոլորտում։ Վիպասանը դժգոհ է կապիտալիստական իրականությունից, աշխատում է վարկաբեկել այն, տալով ռեալական դասակարգի քայքայումը։ Այդ նպատակին նա հասնում է փաստերը եւ դույներ առնելով հենց այդ իրականությունից։ Հետեւաբար Մուրացանի գրական ուղղության մեջ կան նաեւ բնաձեւական պատկերացման խաղեր, վորոնք կինդանացնում են նրա գրական առեղծագործության՝ ընդհանրապես բացառիկ վճռական նախանշող՝ բնույթագիծը։

Վորոնք են Մուրացանի բռնաճոխումի գլխավոր հատկանիշները։

Դժգոհ լինելով իրականությունից, վերջինս նույն իսկ ճիշտ նկարելու միջոցին՝ վիպասանը ասվորություն ունի յուրքից շեղվելու եւ իր սուբյեկտիվ զգացումներն արտահայտելու, վորոնք ընդհանուր եպիկական բնույթին տալիս են ինչ վոր լիրիկական դունավորում։

Մուրացանի պատմական խղճալիզմը գրել է իր կնիքը նրա գրական ուղղության վրա այն իմաստով, վոր նա շատ խոշոր արժեք է տվել խոսքի ուժին, արձնակին, պրոպագանդային։ Իր Ծուլը Աննայի հերոսության հիմնական առաջմղիչը նա համարում է նրա ստացած դաստիարակությունը։ Այնուհետեւ՝ հեղինակը իրեն միխիթարում է նրանով, վոր յեթե իր ընթերցողներից հարյուրից մեկը վոգեւորվի իր հերոսուհու արձնակով, դա յել իր համար բավական է։

Մուրացանի բռնաճոխումի մեջ եյական դեր են կատարում չափազանցությունը, հիպերբոլան։ Ընթերցողի յերեւակայությունը վառելու համար հեղինակին աշխատում է խտացնել դույները, բացառիկ, արտասովոր վիճակներ ստեղծելով։ Բավական է համեմատել Մեծարդավոր մխանձնուհուն մեջ նկարագրված փոթորիկը վորեւե բնական հեղինակի նկարագրի հետ համոզվելու համար, թե վորքան է սիրում վիպասանը իրականը վարպետորեն չպարզեցնել. ...առնձրները, ասես, աշխարհը վոչոչացնելու համար են ելած։ Նա գնալով զրանում է հեղինակի յեր փոխվում. կարծես, յերկինքն ամպերը պատռվել են։

Հեղինակին իր բռնաճոխումին պարզեվում է իրականության ազդած հուսահատության, անշարժության, հոռետեսության գեմ մի դեղձուկի հատկություն, դարձնում է այն, իբրեւ մի խրախուսիչ՝ արթնցնող ու վոգեոչնչիչ ըմպելի դորշ առերեսի հանդեպ։

Հակակրանք սածելով կապիտալիստական հասարակարգին եւ վերջինիս անց ու դարձին, Մուրացանն աշխատում է նույն իսկ իր արտահայտչական ձեւերին, իր լեզվի մեջ թափանցել հին գաղափարներ, հնամյա հիշողություններ։ Նրա վոճի մեջ կան արխայիզմներ, վորոնք բնորոշ են, վորպես իր դարը մոռանալու, հաշվի չառնելու նկրտումներ։ Առնա, թե Մուրացանը նախապրոլետարական Հայաստանի պայմանների մեջ դաստիարակվա լինել, յերբ գրել և ապրում այսօրվա

մի լեզվական արտահայտություն. Հետքեր կը մնքեն հայրս յերևակայել, քե յես ամենքեսաք կանեմ իրեն իր բարձակիցներն առաջ:

Վոչ միայն լեզվական արեսյիմր, այլ և ինքնակենսագրական շեղումները հատկանշական են մեր հեղինակի բոմանտիզմի համար: Հետաքրքրական և նկատել, վոր նման ասվորություն ուներ նաև արեվմտահայ յերդիճաբան Հ. Գաբոնյանը. վերջինս իր որյինակով նկարագրության թեզը յերբեմն ընդհատում կր ասցիալապես շատ բնորոշ վորևե ինքնակենսագրական փաստ կամ հիշատակություն անելու համար: Նույնն և անում Մուրացանը. «Վորքան թզվա կլինեյինք, — ասում է նա, — յերեխա մոռանալու ունակությունը չունենայինք... վորքան շատ են այն վշտերը, վորոնց յերեխ չմոռանայինք, կյանքը մեզ համար կդառնար դժոզք»:

Մեր գրական քննադատության մեջ այն պնդումն է արված թե՝ «Իր գրական ուղղությամբ Մուրացանը հարում է Շիրվանզադեյին» (Գ. Մակինցյան): Մենք վերև հիշատակեցինք, վոր բնական տարբեր կան Մուրացանի ստեղծագործության մեջ, քիչ ներքեվում փաստորեն կ այդ ցույց կտանք, բայց հիմնականում, գրական ուղղության խոսքից, Շիրվանզադե և Մուրացան գրեթե հակոտնյաներ են: Մինչդեռ վոմանք Մուրացանի հիմնական ուղղությունը համարել են բնականիզմը (որինակ՝ Սուքիասյան), մենք կ նրա մոտ տեսել և վորոշ չափով նատուրալիզմի (Ստ. Վահանովսկի): Այդ բոլոր պնդումների պատճառը հատկանշական է. Մուրացանը նախ քան վորևե յերկ գրելը, գերազանցորեն ուսումնասիրում և իր նյութը. նա այնպես և վորոշ ատիճ իրականության հետազոտում, ինչպես պատմական վեպ գրողը — պատմական անցյալը: Որինակ՝ նախ քան «Ահաբյալը» գրելը՝ Մուրացանը յերկար ու բարակ թղթակցություններ և տալել Սեվանի և նրա շրջակայքի վերաբերյալ, ուսումնասիրելով վոչ միայն իր վեպի հատկանշական, այլ և աշխարհագրական մի ջավայրը: Բնական և, վոր այդ բոլոր հետազոտությունները թողնում են իրենց հետքերը նրա գեղարվեստական յերկերի վրա: Սակայն դեռևս, վոր այդպես եր աշխատում նաև Վիկ. Հյուգոն, վոր նախ քան գրելը բազմապիսի հետազոտություններ եր անում իր ընտրած նյութերի շուրջը, բայց այդպես վարվելով՝ նա, իհարկե չեր դադարում բոմանտիկ լինելուց (որինակ Գաբրիել Կոյուղու մանրամասնությունների վերաբերյալ): Մանավանդ խոսափանջ եր Մուրացանն իր հերոսների լեզվի նկատմամբ. նա մեր բարբառները լավ գիտեր և հաջողությամբ գործադրում եր:

Այդ բոլոր հատկություններով՝ Մուրացանը, հարկավ, չեր դադնում բնականից, քանի վոր նա յերբեք չի տվել հիշյանքը ինչպես վոր ես, այլ այն խմբագրել և իր կանխակալ հայացքներին վոգով. նա վերստեղծել և իր գիտած իրականությունը սեղեսիան իդեալներին համաձայն: Տոլստոյն ասել և՝ «բոմանտիզմը ծագում և իրականության աչքին նայելու վախից»: Դա ասպիսին և Մուրացանի համար. նա էս վախենում և իրականությունից, ուստի և հիմնական անցյալին և դիմում, հիմ փախչում դեպի ազգագրնի նրա նկարագրած մարդիկ և նրանց շրջապատող պայմաններն էս քան մեծի մասին սեպական չենք Որինակ. վեչ միայն Վեդունց Սարգիսն և բացառիկ անձն իրեն դյուցազն, այլ և նրան շրջապատող վանքն ու վանահայրն էս ասվորական չենք Բայց դարձնով հանդերձ՝ գյուղի քայքայման նկարագիրը հետաք չե բնավ շրջիններից: Այսպես ուրեմն, Մուրացանի ստեղծագործության մեջ բնականը և բոմանտիզմ միացած են, վերջինս սերական շեշտումով: Այդ սեմբողը ցույց և տալիս նրա աշխարհայացքի մեջ հակադիր սկզբունքների պայքար, մինչդեռ իրեն բոմանտիկ նա փախչում և իրականությունից, բնականը Մուրացանը տալիս և սեղ-

հակառակորդի քայքայման պատճառը։ Աբջինը, ասկայն, նրա մոտ ունի դիմադրական բնույթ. նյահանը — իրականությունը փոխող կամ այն գաղջ հերոսներն են Մուբայանի բոմանտիզմի մեջ կարևոր ժամանակը նրա զգոնությունն է և կապիտալիզմի դիշատիչ դեմքի մերկացումը։ Զգոն լինելով ներկայիս՝ նա հույս և ապագան, որը առկծում է վաղ թե ներկայից չլինելով, այլ ներկան ժխտելով։ Այդ ևերպ նրա յերազանքը ապագա արդարության նկատմամբ առանում է ուտոպիական կերպարանք։

Ասացինք, որ Մուբայանը բնավ ճշտությամբ տալիս է իր դասակարգի քայքայումը։ Բայց այդ բնավորվը դեռ չե որոշ միակողմանիություն։ Այսպես, օրինակ. նա նկատել է, որ քայքայված գյուղացու յերքը — քաղաքն է։ Սակայն նա քաղաք գնացած և յերկար տարիներ քաղաքում ապրած գնացուն չի զգացնում պրոլետարիանալ բանվոր, այլ բերում է նորից գյուղ՝ գլուխը հանելու համար։ Այդ վերադարձը շատ բնորոշ է Մուբայանի գրական փիլիսոփայության համար։ Վճռականը մոչ թե ընդհանուր յերևույթն է, այլ առանձին շեղումը։ Դա, իհարկե, բնավորվի մեթոդը չե գնացք և խոսափանել, որ այդ յեղանակով Մուբայանը տալիս է կյանքի պատկերը — յեթե խիստ արտահայտվելու լինենք — բավական աղավաղված։ Իսկ ինչ որ առում իրականությունը. խ և ա ք գնացները բազմում խոցոտում են պրոլետարիատի բանակը և մոչ թե հանդիսա մորոնում գյուղում։

Վերև նշեցինք, որ Մուբայանի բոմանտիզմը ոգեագործել և նաև բավ դեռատություն՝ իր դասակարգի ապագան պատկերացնելու ժամանակ։ Ցավ խնայելու. ապագայության, կարտությունի մասին խոսելիս վիպասանը տոգորված է իրականությամբ։ Մի քանի նմուշ բերենք։

Նա հակադրում է հարուստ մորուս վերապրածը՝ աղքատ մորուս վերապրածին պանդխտությունից. Հիարտությունը... աղքատի տան մեջ իր ներկայությունը զգալ և տալիս նույն խոր վայրկյանին, յերբ մայրը մողջագուրում և պանդխտությունից վերադարձող մորուն, որ հաճախ ըստացնում և համբուրի ջերմությունը և շուրթերի վրա ժպիտը առանցնում։

Մեր դրականության մեջ անմոռ կլիա հին գյուղի այն նկարագիրը, որ թողել և Մուբայանը Զերթխլուի՝ Հայդ գյուղ կոչված ավերանոցի մասին։ Անծայրածիր աղքատությունը ծվարել և մի ավերանոցի վրա, ուր մարդիկ ապրում են՝ անասուններից տարբերվելով միայն իրենց բանականությամբ, այն գիտակցությամբ թե՝ վոչինչ չեն կարող փոխել ավյալ դրությունից, որ առեղծել են ցարերին ու վաշխառությունը։ Զերթխլուն հակադրելով Գիքիլիչին, Բոբոմին և Սեմյոնովիչին, Մուբայանը կուլտուրական բևեռներ և ավել դոթծին ծանոթ մարդու լավատեղյակությամբ։

Վոչ միայն էքսերթ, այլ և «սոցիալական հոգեբանության» յերևույթներին մի քանի նմուշներ Մուբայանը ավել և ճշտությամբ Շատ բնորոշ և Սեմանի վանահայրության վերաբերմունքը աշխատավոր մարդկանց նկատմամբ, վորոնց նրանք արհամարհում, բանի տեղ չեն գնում։

Ճիշտ և պատմած այն ուրախության մասին, որ զգում են աղքատ Մոյու թոռները, յերբ վաշխառի ձեռքից իրենց «մալը» ազատում և. փոքրիկները շփոթվում են անակնկալ հաջողությունից. մեկը կովի գլուխն եր գրկել և անվերջ համբուրում եր, իսկ մյուսը՝ ձիու կապը բռնած՝ չգիտե ինչ անե և անդադար ճչում և հուզմունքից։

Մուբայանի լեզվի և վոճի մեջ ևս դիմիքնդիմառն գնում են՝ իրար հետ հյուսվելով՝ նրա գրական ուղղությունի յերկու հատկություններ — բոմանտիզմը քնալիզմի խառնուրդով։ Նրա բոմանտիկ վոճը (ինչպես հատուկ և այդ վոճին

առհասարակ), նպատակ ունի խոցելի հատուկ գաղափարությամբ, բաժնի վրա ընթերցությամբ փոխանցել ընթերցողին հեղինակի ցանկացած արժանապատվությունը, նրան համակած միտքն ու հույզը։ Վերև մենք, մի այլ կապակցությամբ, ցույց ավինք նրա լիրիկական շեղումները, ասել ավելացնենք այժմ արտահայտչական չափազանցումները, անունն իրերը ընդհանրացնելու հակումները, այն բոլոր լեզվական հնարները, որ գրականագիտության ֆորմալիստական դպրոցն անվանում է հնարքային բառարան։ Սակայն այդ բոլոր միջոցներից բացի՝ Մուրացանի մոտ մենք հանդիպում ենք բանահիւսական դրոյթի քերականական վոճական կոմպոզիցիայի բոլոր սրինակները, ինչպես են՝ հրհրնությունները, հանդարական հարցեր ու բացականչություններ, պարալելիզմները, և այլն։

Այդ բոլորով հանդերձ՝ Մուրացանը մեծ աշխատանք է դրել իր հերոսների լեզվի վրա։ Ահա այս բանում նրա վոճական բանահիւսիզմը հավասարակշռվում է լեզվական բնականության վորոշ սահմաններով։ Մեր հեղինակը չի լուսանկարում իր գործող անձերի լեզուն, մանավանդ գյուղացիների խոսվածքն է դրույցի ձևերը։ Չի լուսանկարում այլ դեղարվեստորեն մշակում ու հղկում է բառերի ընտրությամբ և նրանց վորոշ կապակցությամբ և նա վորևէ՝ լեզվական եֆեկտ հասնում է վոչ թե սոսկ գավառաբարբառի ֆոնետիկան լուսանկարելով։ Ինչպես վոր նա չի լուսանկարում իր տիպերի արտաքինը, այնպես էլ չի լուսանկարում նրանց լեզուն։

Մուրացանի բանահիւսիզմը լեզվի բաժնում շատ խոշոր չափով տեղ է տալիս դրաբարի ազդեցությանը։ Սա էս նրա ռոմանտիկական նյութերին դիմելու հակումից։ Դրաբարի ձևով հոլովումներ ու խոնարհումներ շատ ունի։ Այդ բոլորն, իհարկե, հնության վորոշ դրոշմ են դնում նրա լեզվի վրա, վոր պետք չէ, այլ մինուռն է նրա գրական արժեքի համար։ Նա ունի վորոշ արտահայտություններ ու բառեր, վորոնց հանախանալու համար պետք է դիմել կամ Հայկազյան բառարանին կամ անմիջ կուլտուրայի հանդուգնությանին։ Առատաձեռ, դարեվանդ, դիանոց, պարեգոտ, փարատ, պարեխավոր, Ցեղվոտ, ազոխներ, ժուժալ, պայազատ, Մորֆեոս, յեղոյլ-բնները, և այլնի էնտ մղող տգավորություն են անում նաև մի շարք հնացած համաձայնական ձևերը։

Մուրացանի լեզուն, բացի դրաբար ձևերից, տոգորված է նաև վորոշ մեսաիքլիզմով, վոր կապ ունի նրա կրոնական մտայնության հետ։ Հաճախ կհանդիպենք նրա մոտ Հնախոհնամության անորինություն արտահայտությանը։ Գնել առնելու փոխարեն գործ է ածում Հախտաղության հրեշտակին հանձնվելու։ Նեղության հանձն առնել — Հծանրագույն խաչ բարձել», և այլնի

Մեր հեղինակի վոճաբանության մի այլ հատկություններն է բնության շրջապատվորելու միտումը, վոր նրան յերբեմն հաջողվում է՝ գեղարվեստական տպավորություն գործելու խնամով Որինակ. Գեղամա Ծովակի և շրջակա լեռների նկարագրությ Ծպտավորիչ և յերկինքի և յերկրի սիրահարությունը, վոր Թումանյանի պոեզիայի մեջ էս արտահայտվել և մի բանաստեղծությամբ. Հյերկինքիամարը համբուրվում է Գեղամա ծովակի հետ», և այլնի

Վերջապես բնությունը կենդանացել է Մուրացանի գրչի տակից։ Բնության նկարագրության մեջ նա սիրում է, Վ. Հյուգոյի պես, հակադրություններ տալ եմոցիոնալ ներգործության անելու նպատակով։ Վիլասանը կապտ լողշ դղրդյունը հակադրում է թռչնիկների այգածին ճռվողյունի հետ, վորպես սիմֆոնիայի մեջ մանող տարբեր գործիքների տակյալ։ Բնությունը Մուրացանի մոտ անտարբեր չէ և վոչ էլ դաժան, ընդհակառակն, վիլասանը թարգ-

մանում է իր գաղափարները բնության լեզվով և իր արամադրությունները հաղորդում նրան։ Այդ իմաստով չատ տպավորիչ է լեռնային անասուն քաղաքացի համրորդի ասացած տպավորությունների թափչկանքոտ հինդիս, ինչու բնությունից դասեր չենք առնում ասում է Մուրացանը

Բնության նկարագրի մեջ էս յերևան են գալիս հեղինակի սոցիալական աշխատանքները։ Ճիշտ է, Մուրացանը սիրում է բնությունը, բայց այդ սերն իր մեջ չունի վոչինչ պանթեիստական և միստանական, ինչ վոր բնորոշ կլիներ յերկուստող Դյուհեյի, Բայրոնի և նույն իսկ Արովյանի համար։ Մուրացանի վոխաուսոր դեպի բնությունը—դա քաղցնում պատսպարան գտնելու միտումն է վերահաս սոցիալական փոթորիկներից հանգիստ, նահապետական պայմաններ գերազատություն՝ արդյունաբերական քաղաքի կուլտուրական յեռ ու զեռի դիմաց։

Մուրացանի վոճի յերևույթ առանձնահատկություններից է — պատկերավորություն նմանություններով և համեմատություններով առատաբաշխված՝ մեր հեղինակի խոսքի էմոցիոն հոգին նպատակ ունի նրա համոզմունքն ավելացնելու վոտքի ավյալներ գեղարվեստորեն հոնկրետացնելուց Վերև ասացինք, վոր վիպասանը գերծ չէ մեստիկական մտայնություններից Վերջինս արտահայտություն է ստացել նրա վոճի պատկերավորության մեջ կրոնական ոգեվորման Ներբուծվելիս հետևողները նրա խոսքի մեջ դրա թոթ, վորպես յերջանկության աղբյուր, տա՛ր թե այնտեղ իբրև վհուկների նշան, որ բն, մասնավոր վորպես յերկրպագած հետաքրքրության առարկա, հրաշալի բնություն, առանց թրթչալու ձեռքից նոր մարմին առած. և այլն Բացի քրիստոնեության՝ նրա պատկերավորության մեջ ունի յն նաև անտիկ աշխարհի մոտիվներ։ — աղջիկները՝ չերմություններից չինված այտերով, հիշեցնում են Ապոլոնի նժույգները Արշալույսի բացած դռներով յերևելիս, իսկ տիկիններն և որբորդները վոխանարկություն — Դիանաներն վորսորդություն

Ստեփն գրքերից ավելի հարուստ և նրա վոճի պատկերավորության մեջ տարբերած սոցիալական դիտողություններ, վորոնք խորապես մտնում են կենցաղավարի փորձից են բղխում Ինչպես և Նար-Դոսի պատմվածքների մեջ, Մուրացանի դյուցազնության մեջ էլ էգլեկտիզմ գործող անձը — անտեսանելի հարքեր են Ենթե Մուրացանի հերոսը մի դժվարին կացություն է ուզում մատնանշել՝ հիշեցնում է ա ն ա խ ո ջ պ ա տ ա ս խ ո ղ ոձիք բայց չհոգնող հետազոտությամբ Բնորոշ է Մուրացանի հերոսներին բուռն առելությունը առևտրական աշխարհի հանդեպ. հեղինակի՝ գործադրած մակդիրները փորի և հաշվի մասին արտահայտում են գորշներ ու նողկանք Մուրացանի՝ աղքատները հաց են ուտում ջ ր ո վ ու կ ա ր կ ո ւ տ ո վ (մեծ դժվարությամբ)։ Արդյունաբերական բուքժուազիան յեղծում է բնությունը. «Հողը ավելի քիչ և ինտա պտղաբերում, քան մարդը»։

Մ՝վ կարող է դիմագրավել ժամանակի ժանրերին—Հերոսը չենք այդ ինդիվիդուալիստական մտայնությունն ևս արտահայտություն է գտել Մուրացանի վոճի պատկերավորության մեջ։ Համայնքը, բազմությունը, կոլլեկտիվը յերբեք նրա մոտ հանդես չեն գալիս, վորպես գործողության, ակտիվության, նախաձեռնության ֆակտոր, այլ միշտ Անհատը, Հերոսը Ազգային հոգին Առյուծները միշտ հակադրվում են ոչխարներին, դյուցազունները—գամաճներին Բայց Մուրացանի անհատը Նիցշեյի ֆաշիստական գերմարդը չէ, նրա հերոսը դեմոկրատ է, այլասերը և դեգեներատ Զոր եզոյիտը այն բարեկ ծառն է, վոր Տեռմանում, բարձրանում է մինչև ամպերը, բայց վեր հովանի չի տալիս արևակեզ անցորդին և վեր էլ պատռ՝ անկող մշակին։ Բուռն համարձակությունը՝ Մուրացանի հերոսի՝ հատուկ է ճ ն շ ա ն դ ե մ ա պ ա տ ա մ բ ո ղ հ ո գ ի ն ե ր ի ն

Սակայն Մուրացանի մանր բուրժուական մտայնության համար բնորոշն այն է, որ նա իր պատկերների առաջը մեծ մասամբ վերցնում է ընտանեկան ժոլորտից։ Որինակ. դյուղացիների նահապետական կյանքի դեմ քաղաքակրթության հախուռն հարձակումը մերժում է Մուրացանը, հիշեցնելով մարդ և մարդկան հարաբերությունը քայլելու մի ջոգին, թե ինչպես մեկը հարմարեցնում է իր քայլափոխը մյուսի դողդոջուն քայլվիճակներին։

Մուրացանի պատկերավորության մեջ կարևոր տեղ է բռնում բնությունը։ Սևմանը և իր շրջակայքը նա կարողացել է հիանալիորեն, առնո, դրանք սպառում են նկարչի՝ յուղաներկով զբաղվելու համար։ Ահա ձեզ յերկու պատկեր. Սևմանի կողին իրրև առասպելական հինդանի, որ ջրից վեր է բարձրացել ոդ շնչելու համար. — շրջակա լեռները իրրև հանդիսատես հսկաներ, որոնք ծովի հուզումն են դիտում և դրանով ապրում... Նույն իսկ քաղաքային կյանքի իրարանցումները նա հաճախ թանձրացնում է բնության պատկերներով. որինակ. իրար հետ պարող ճերմակազգեստ կանանց և սևազգեստ տղամարդկանց նմանեցնում է դարձյալ ծիծեռնակների խայտաբղետ մի պարի, որի մեջ տղամարդիկ հիշեցնում են բոզեղնիկներին։

Մուրացանի պատկերավորության համար շատ բնորոշիչ շեմարանն են հանդիսացել հայ բարբառները, հայ ժողովրդական բանահյուսությունը, — առակները, առածները, անեծքները, հեգնություններ, որհնություններ, նախատաշարժներ, — առհասարակ ֆոլկլորը։ Մեր հեղինակի վերաբերմունքը վերջինիս նկատմամբ՝ բանել և քննադատորեն այն յուրացնելու ուղղություն ինչպես ասել ենք, հում-յեղ անմշակ լուսանկարչորեն նա վոչինչ չի դնում ընթերցողի առաջ, այլ վորոշ մշակվածքի յե անում, բարբառի միջոցով արտահայտելով դյուղացու հոգեկան մտայնությունը։ Միքանի նմուշ բերենք. — ա ն ա ծ ա կ, ըսենց հանած կլի. — ինձ պատին դեմ ե արել. — ճարտ ճրագ մի տար. — ըրեխեն ուզում են ձեռիցը խլեն, չանը կըտակ ըներվ. — ակռնջումը, վոր քոփ տրաքե ը, լսելու չեր. — փեքըլ մեջ ընկավ, որա պես տեղ ե մ ֆ ն ում. — չուսումնչեն հասկանալիլ, բա մարդ իր աչքը քոռ կուզի։ — իր որում եր տեսած այսպիսի հյանաչ. — արևն երում ե, առնո, մարդի կուշլեն ելել տի, և այլն։

Այդ ամենը, ինչպես տեսնում եք, բարբառի լուսանկարչություն չեն, այլ բանաստեղծություն։ Մուրացանի ականջը նրբորեն և լսում նուշիկով Աղասաֆիա հայրարանում կանգնած կառապաններին գոռում գոչյուններին մեջ նա լսում և իրենց արհեստի գովքն անող ալիմիսիով բանաստեղծական արտահայտություններ. — ախան գովել, ասում է վիկտոնը, մենկ իր թռչկան ձիերը, մյուսը՝ իր ա լ լ ո ղ կալասկան, յերբորդը, իր դինջ ոմնիբուսը, և այլն։

Ծուլիյորի գոհարներից են առածները, վոր այնքան տեղին և հմուտ կերպով գործածվում է մեր հեղինակը։ Դյուղացու զրույցի մեջ առկա այդ խոսաոճիկ խոսքերը վերստին նմանատիպ մշակված, հղկված ձևով և տալիս և վոչ թե յեղածը կրկնում մեքենաբար։ Այս դեպքում նա վարվում է Հ. Աղայանի պես, վոր դիտեր վորևե բառ հետ ու առաջ դնել՝ տարբեր տպավորություններ առեղծելու համար։ Իր կողմից՝ առածանման խոսքեր առեղծելու պահուն՝ Մուրացանն աշխատում է ոգտագործել դյուղացու աշխատանքի կամ նրա շրջապատի տպավորությունները։

Մուրացանն ընդհանրապես մտածում և գրում է հայերեն. հաղվագյուտ դեպքերում է նա խախտում հայերենի քերականությունը և ոտարբառաբանություն մուծում խոսքի մեջ, ինչպես որինակ՝ ցնծեն նա բ ա ժ ա ն ու մ լինեք իմ

զգացումները։ Բառապաշարն ևս լիովին հայերեն է, հաղվագյուտ դեպքում է նա ասար բառ գործ ածում։

Մուրացանի արվեստի առանձնահատկությունները, նրա գրական ուղղության բնույթը ավելի լավ յերևում է, յերբ նա մարդկային դեմքեր և գծագրում իամ մարդկային հոգեբանության զանազան հոդմեր և աշխատում վերլուծելու Իհարկե, այս բաժնի մեջ ևս նա հիմնականում մնում է բոլորովին նա տալիս է բացառիկը, հաղվագյուտը, յեղակին։ Բայց և այնպես մարդկային հոգեբանության մեջ ժամանակ ցուցադրվել են նրա մոտ հաջող կերպով, և չեր ել կարող ուրիշ կերպ լինել. բոլորովին ևս էյ անգլ իմացության մի ձև է։ Մի քանի փաստեր բերենք Նախ և առաջ մոր հոգեբանության մի քանի գծեր ճշտությամբ և ավելի Բնորոշ և Վանու մոր պարծենկոտությունը թե՝ «աղբատ աշխատը ճանաչում է իր վորդուն։ Մոր կարոտն ևս տպավորիչ է։ դա մասամբ հիշեցնում Աբովյանի Ազատու մոր նամակը։ զգացմունքների հորդությունը, պատկերների առատությունը մայրական սիրուն պարգևել է մի հզոր աֆֆեկտի բնավորություն։ Նույնիսկ բնել զգացմունքը Մուրացանի մոտ հանդես է դալիս փոքր ինչ ուռուցիկ և անհամեմատալի։ Այդ դեպքում նրա նկարագիրը իրական ազրատը տալիս է հիպերբոլիկ չարիքներով։ — «Ի կարգ պատմել թե ինչ ևր անում մերը»—«Հանդումը վոր թռի տրաքեր, լռելու չեր» և այլն։

Դեղջուկ հինգ անարվեստ և անմխիթար սիրուն Մուրացանը հակադրում է խոշոր բուրժուազիայի չարքերից յեկած հինգ փառասիրական և արվեստակիալ սիրը դեպի իր շրջանավարտ վորդին։ Գամառյանի հարուստ մայրը հաճույք և զգում իր ամուրի վորդու հետ դրսում լինելու և խոսք ու զրույցի առարկա դառնալու հետաքրքիր։ Բայց այդպես կոնկրետ և համոզիչ չեն Մուրացանը, յերբ նկարագրում է քույր Աննայի հիշողությունը իր մոր սիրո մասին։ Այդ հիշողությունը վեր մի փաստական հիմք չունի ամբողջ վեպի ընթացքում...

Հոր հոգեբանության մի քանի գծեր ցայտուն են դուրս յեկել Վեդունց Սարդի բնույթագրի մեջ։ Յերբ Վանին քաղաք է գնում և մայրը առաջին կարոտում է նրան, Սարգիսը մխիթարում է հինգը թե՝ տղաղ կգա, գյուղի մեջումը մի հատ կլինեն, բոլորը նրա հզուլումը կլինեն, սիրուդ կվառավորվի։ Առաջ, որ Գամառյանի մոր յերգն է. բայց Մուրացանը մի կարևոր շարքիս է մրցում՝ «բոլորը Վանու արևով յերգում կուտենք»,— և տարբերություններ շեշտում։ Բայց հայրական այդ ճիշտ հոգեբանությունը Սարգսին չի գործնում բնավորական տիպ՝ ամենօրյա գյուղացիներից մեկը նրա մոտ բացառիկ յերևույթ է համարելը չանհրի պատասխանության վոգի թեորեան, գյուղի մեկուսացման իդեալիզացիան, քաղաքի հանդեպ բուռն ատելությունը, ուսման դեմ ֆելիստինիան, մի խոսքով՝ նարոդնիկական վեպի տրամաբանությ

Յեթե Սարգիսը ամենօրյա գյուղացի չե, Ոսկի վարդապետն ել ամենօրյա հոգևորական չեր Մուրացանը նրան գործել և համեստ, ուսումնասեր, անշահախնդիր, իր ուսումնությունը խոստովանող մեկը։ Իր «հոգի» առաջ իրեն նվաստացնող այդ կղերականը — արատասիրտ մի յերևույթ եր Մանավանդ վոր այդ վարդապետն ևս համայն գյուղացիության շահերից է խոսում։

Վոչ այդպիսի հոգևորականներ չեն յեղել, խոստովանել է ինքը, Մուրացանը, ասելով թե՝ մեր գյուղերում յես միշտ տեսել եմ, վոր հետզհետե ժողովուրդը հոգևորականությունից և առաջում յեկեղեցու նկատմամբ Ինչպես տեսնում եք, այստեղ ևս իրականություն և բոմանտիկա քայլում են զուգահեռ

Նույնիսկ այդ այդպես է Մուրացանի քունդ գաղափարատիպերի մեջ։ Վորքան էլ քույր Աննան յերազական մտահղացում է, այնուամենայնիվ նրա մեջ կինոջ հոգեբանությունն մի քանի գծեր արտահայտվել են հարազատորեն։ Այդ կինոջ սիրո սիզբնավորությունը, խանդի վորոշ ակնյծումը, տաբլիներ հետո՝ սիրո վերհուշը — բոլոր դիտողությունները դուրս չեն Ցեղը Աննան պատմում է իր մեջ սիրո դարձոնքը, այնուհետև իր մեջ ծավալվող հակառական զգացմունքները, անուսիթ ուրախությունն ու վիշտը, սիրո իր գագաններքը պահելու ջանքերը, մինանալու հակումը, նույնիսկ և խանդի այն խուլ զգացմունքը, վոր գլուխ է բարձրացնում իր մեջ, յերբ մտածում է Քեն Գարեգինն ուրիշ կնոջ համար է քաղնում իրեն, վերջապես, տաբլիներ հետո սիրո վերհուշը, վոր նրան պատճառում է մի նկատելի հուզմունք և այդ զրանիսյան կնոջը լացացնում, — այդ ամենը Մուրացանի ուշադրության վեպի հիմնադրության է։

Այդ բոլորը, սակայն, մի կողմակ է բոմանտիկական ծովի մեջ Իր անվտանգ նպատակին հասնելու համար Մուրացանը կանգ չի առնում վճռ մի խոչընդոտի առաջ Աննան ցարական բարձր պաշտոնյայի — գավառապետի ոգնականի աղջիկ է։ Նա մեծացել է փափկության պայմաններում... Ալեքսանյալ (Վառգյալ) մասին խոսելիս՝ վիպասանը տարակուսում է Քե՝ Նա փափկության մեջ մեծացած՝ կհամաձայնի՞ Քողնել քաղաքը։ Բայց Աննայի պատմության մեջ մի տարակուսանք չկա — Հառաց և յեղեվնի հենց այդ պատճառով հեղինակը խոսովանում է Քե՝ Հիյանքումս առաջին անգամ եմ պատահում մի կնոջ՝ այդքան զերազանց ուժով Նրա սերն էս այնքան բուռն Քափով սիրված՝ վերջանում է յեղբայրական կամ քրոջական համբույրով։ Մուրացանը պնդում է, վոր մեր ժամանակներում սերը Հեղինակ և Մում առաքինական սահմաններում Հետևապես իր նկարագրածը հենց այն հաղվագեպն է, վոր կպոմում է բոմանտիզմի խնկական Քիմոլը։

Նույնիսկ գյուղը, ուր նա՝ գնում է և հրաշքներ գործում, սովորական գյուղ չի, այն գյուղը, վոր ամբա յեր իր ցարական պաշտոնյաներով և շահագործող կղերականներով։ Այդ նկարագրության բացակայում են էքզոտիկությունը, այնքան պետությունը, գյուղացու Հիվանդների հափշտակումը, հանդուգն հարկահանությունը, Հիման ու քեզաբը, զեղծարար պաշտոնեությունը, և այլն, — այնքան այն ամենը, ինչ վոր հեղինակի կարծիքով սովորական յերևույթներ էին իրական հայ գյուղում։ Բոլոր խոչընդոտները վերացնելով՝ Աննայի գործունեությունը ոհվում է՝ իր հարատությունն է սպառ դնելով գյուղափրկման ծրագրին։ Նա դառնում է այն իդեալական Հասատ ձեռքը, վորի մասին յերազում էր Բազվից վախած չքնությունեցի Գևոնին։

Վերջինս էլ, այդ Գևոնին Աննայի պես մի բացառիկ անձնավորություն է։ Ցերկար տարիներ ապրելով արդյունաբերական քաղաքում իրեն աշխատավոր, նա չի զարձել ալրոֆեսիոնալ բանվոր, և մերվել քաղաքային հուլտուրայինը, այլ զղվելով քաղաքից, յեկել է գյուղ՝ գլուխը Հերնչ ապրելու համար։ Ինչպես վոր Գևոնու Բազվից գյուղ վերադառնալը, այնպես էլ Աննայի քաղաք Քողնելն ու Հշխնական գործին դառնալը համոզիչ կերպով են պատճառաբանված։ Վերջ է վերջը Աննան իր քայլը վճռում է անել Գարեգինի աղերսություններ Բայց հենց այդ Գարեգինը վեպի մեջ դուրս է բերված ավելի շուտ, վորպես խոսող մեջենա, քան իրրև կենդանի մարդ։ Նա Հոգին և սրտացում կպցնե քաղերով, ինչպես կասեր Ս. Շահազիզը՝ ձառերից մեկի մեջ խոսովանում է Քե, գնալե Աննան ուժեղ եր ջերմ համակրանքի պատճառով քիչ է Ուզել վերադարձը դառնալու Հնարավոր դժվեր Բայց դա մի պնդում է, վոր Ուզել և առանց հատուկ Ուշադրական վեպի գեղարվեստական Քերություններից մեկն էլ

Աննայի հաստատակամ գործունեությունն այդ մութիայով պայմանավորելն ե, ինչ խոսա համոզիչ չեն

Ինչպես նկատեցինք, Աննայի հայրը — Սիմոն բնիկը պետական բարձր պաշտոնյա ելե Սա նա վեպի մեջ հիմնադրություն չի ստացել։ Հեղինակը պնդում ե, թե այդ պաշտոնյան իր բարեբեդությամբ և ոգևոր բնավորությամբ մեծ ժողովրդականություն ելե վայելում քաղաքում։ Այս պնդումը թանձրացում չի ստացել իր ամբողջ ամուսնացման ամբողջ պատմության մեջ նա միանգամայն ծիծաղելի ե դուրս գալիս հեղինակի կամքից անկախ։ Առել են՝ բռնանալիքը ազատությունների հարստատ և անհրաժեշտությամբ աղքատ դրական ուղղություն ե։ Գ ա մ ա ց ա լ ե ս ի ո ղ ն ա կ ա ն ն ե իր մենությամբ աղջկան ինքն իր կողմից հնության առաջարկելով մի աղքատ վարժապետ — բռնանալիքի ազատությունը դարձնում ե իրեք ասնձամբակություն։ Այդպիսի մի դրական պաշտոնյա ես ունի նույն վեպում Մուրացանը — ատնուտերը, որ աջակցում ե Աննային դուրը փրկագործելու։ Հ. Աղայանի սոցիալական ուտոպիայի մեջ ես կան նման պաշտոնյաներ։ Դա լուսե և տալիս յերկու հեղինակների տատանվող վերաբերմունքը ցարերի նկատմամբ։

Մուրացանին հաջողվել ե իրականությանը քիչ թե շատ մոտիկ դուրս բերել մի յերկու յերկրորդական անձեր — աղքատ Սային և յերկատարդ Մինաբյաններ։ Աղքատ Սային — այդ՝ Հմայն յերեսին չորացած ծերուկը, որը մորթե գոտկը կապ ե տալիս առած և մեջքը արևի այնկեն հենած՝ խեղճ ու կրկնա յում ե պաշտոնյային առանց մի բառ արտասանել կարողանալու, և ապա հայացքը նետում ե իր վերջին հույսը և ապավենը Հիսո և մյուկ կողմը, որտեղ պատրաստվում ելին առաջինը վեր գրել իրեք արժեքավոր իրեր — այդ Սային իր վոտքը դնելով ավելի հանգիստ ե, քան շատ Հնհրոսներ։ Սայու ատրկական վոճը, խոշոր հետ էքե դուրսանց առելով խոսելու ազատկան յեղանակը, այնուհետև, յերբ կամաբյանը փրկում և նրան պատրաստ՝ ուրախությունից համրացած չի կարողանում խոսել, այլ զղզոցյուն ձեռքերը բարձրացնելով՝ աղոթում և յերկատարդը գլուխը բռնել և համբուրել — այդ բոլորը լավ, անմոռաց գծեր են։

Նույնը պետք ասել նաև յերկատարդ Մինաբյանի մասին, որը ամենևին շատ հարհանգի գծագրված տիպ ել նրա բնավորության մի քանի գծերը Մուրացանին հաջողվել և բռնել և արձանացնել։ Մինաբյանի վիճաբանությունը, անատիությունը, անհամբերությունը, — յերկար մնում են ընթերցողի հիշողության մեջ։ Գրված ել սկզբում հեղինակը տալիս և սրա տեղ բնությագիրը և հետագայում հետևանքներում և այդ՝ գործողություններով։

Մուրացանն ուրիշ հաջող տիպեր ել ունի, բայց դրանք յերկրնական բնույթ ունեն։ Այժմ ժամանակն և արդեն մի քանի խոսք ասել մեր հեղինակի յերկրնական տատանքի, նրա յերկրնքների բնույթի և յերկրնական տիպերի մասին։

III

Մուրացանն անպայման ուժեղ և յերկրնական տատանքով։ Այս վերջինն և մասամբ պատճառ յեղել, որ նա լրիվ քննադատության առաջ հարձակումներին և յենթարկվել, մոդովհետև հեղինակի յերկրնական կարողությունը մի խոշոր չափով ուղղված և յեղել բուրժուական հուլուսության և ինտելիգենցիայի դեմ։ Միայն կլինի, իհարկե, յեթե ասենք որ նրա յերկրնքները ուղղված և միայն հակատարդ դասակարգի դեմ, մինչ. անգիական գաղափարները ես ձգտել և և յերբեմն ավելի պակաս ատամնությամբ և զայրույթով, քան ինչպես յերբեմն իր վոտնքները դեմ ուղղվածը։

Գյուղագրական յերկերի մեջ ընդհանրապես բացառական գծերով և գույներով բնված և ծաղրված հոգևորականությունը, յեթե չհաշվենք ուսուցչական տեր Ռոսիին կամ այն Ռոսի վարդապետին, որի մասին արդեն խոսել ենք, ծեփե փոքր ինչ մոխիից դիմենք, կտեսնենք, որ Մուրացանի ծաղրը որոշ չափով տարբեր է հոգևորականության դանազան խավերի հանդեպ։ Վերնախավի դեմ, այսպես կոչված՝ «բարձր» հոգևորականության նկատմամբ նրա ծաղրն ավելի անողոք եւ Սակայն այդ ծաղրը փոքր ինչ մեղմանում է, յերբ վերաբերում է ոգեւոր կամ կիսագրագետ գյուղական տերտերներին, որոնք հողային աշխատանքի հետ միասին «հոգևոր պաշտոն» են կատարում։ Տեր Մակուչը զուրկ է տարրական գրագիտությունից. բայց Մուրացանը մեղադրում է ոչ թե նրան, այլ ձեռնադրող յեպիսկոպոսին. յերբ, յեթե հարևանի խոզը ուտում է, մեղավոր չե, այլ տերն է մեղավոր, որ նրան չի կապել, — ասում է Մուրացանը Մի-ծաղաշաթ և այդ տերտերը, յերբ կարծում է թե մի փոքր գրաբար ֆրազ քաղցմանելու համար պետք է Մողոմոն իմաստուն լինել, կամ, յերբ մասածում է, թե ինքը ծնվել է անուսում, իսկ քաղաքացիք ծնվում են ուսումով։

Բայց այդ ծիծաղը բոլորովին այլ բնույթ ունի, քան այն ծիծաղը, որով Մուրացանը ծաղրում է բարձրաստիճան հոգևորականներին, որոնք չեն գրաշնվում — Մուրացանի կարծիքով — իրենց տեղում, արժանի չեն իրենց կոչման կամ է չարն են գործադրում իրենց դիրքն ու պաշտոնը։ Այդպիսիներին վերապահում է ուղիղ վոշնչացնել և նրա ծաղրն այդ դեպքում ատամնում է և իժու տարկամի բնույթ և անպայման տարբեր է տեր Մակուչների դեմ ուղղված խնայող յերգիծանքից կամ արտահայտ հումորից։

Բայց սխալ կլինի ենթադրել, ասել, թե ատորեն հոգևորականների նկատմամբ միշտ հումոր և բանեցնում Մուրացանը ծերբեմն նա ատելագին էլ և գործադրում, յերբ թեորությունը համարում է անհանդուրժելի Որինակ՝ շատակեր տեր Վանեն, որը Սեվանում վորկրամոլության ներկայացում է տալիս վոդջ վանականության և վանահոր ներկայությամբ և իր շատակերության մասին այնպես պարծանքով և խոսում, վորպես մեկը կխոսեր իր քաջության կամ մեծ գործերի մասին։ Նրա համազումնքը թե՝ մարդ ատելագված է միայն շատ ուտելու համար կամ նրա այն պնդումը թե՝ կյանքում ուրիշ նպատակ չկա բացի ուտելուց — Մուրացանն այդ ամենի մասին խոսում է սպանիչ, քշնամական հեգնանքով։ Տեր Վանու դեմ գործադրած ծաղրի արտիյությունն ու զայրույթը պորթկումը պատր յերևում է այն կետից, յերբ այդ հոգևորականն իրեն սկսում է համեմատել Հիսուս և յեղան հետ։ Բացի այդ՝ տերտերն իր շատակերությունն արդարացնում է Բիբլիայից բերած ցիտատներով. սովորական բանի համար գործ ածվող այդ հեռուն գրաբար խոսքերն ավելի ևս ծիծաղելի յին դարձնում շատակեր կղերականին Ծաղրի այդ տարիատիկ բնույթն ավելի յի ակնթարթ դառնում, յերբ համեմատում ենք աղքատ գյուղացու տգիտության, բնակարանի, հագուստի հիգոստության, և այլնի դեմ ուղղված հումորական արտահայտ հեգնանքի հետ, որոն ըստ եության Հարցուն ծիծաղ է։

Այդ կողմից շատ բնորոշ դեմք է գյուղական վարժապետը — Մանուկ։ Ինչ հետո մենք կտեսնենք, որ Մուրացանը վոնահորը յերգիծական բնույթերի մեջ տալիս է նրա արտաքին տեսքն ու դեմքը և ամենահետև ներքին դատարկությունը, ավելի շուտ՝ այդ յերկուսի հակադրության, որը և ծիծաղ է շարժում Մանուկ դեպատան չէ. նա հանդես է գալիս այնպես, ինչպես կա. և նրա խոսք ու գործի մեջ դրված է մեծ անկեղծություն Ճիշտ է, նա ատետ է. յեթ որինավոր վարժապետ չեմ, — խոստովանում է նա. բայց ուզում է մի բան անել, ոգտակար լինել, իմացածը հաղորդել ուրիշին Նա իրեն ժուռյալշ չի հա-

յերկիրը, փոխանակ անմիջապես փող աշխատելու և հորը վերադարձնելու, ինչ որ իր վրա ծախված է...

Գնտրուն մայրն ևս յերկիծական շարքերով է դիմագրված։ Սրա չաղուքիյունն ևս խիստ ծաղրված է։ Ընդը ուիկինը լուսե է, թե որդին պիտի դյուղ գնա գործելու՝ ասում է. «Գնայ, ամբողջ տարին ապասել ենք քեզ, կարոտից հալվել (իսմննում էր ասել՝ հեռվել ու մաշվել), բայց մեկ էլ մտածելով, որ ինքը խիստ պարապ է, ասաց), մաշվել է արտերում։ Այդ կինն առհասարակ անաշխատ կին է, բայց յերեք տանը փորը ինչ աշխատում էլ է, դա անում է բժշկի բնակարան վերջինս ասել է՝ մի քիչ աշխատիր, որ շատ չհղանաս։ Այդպես խորհուրդ տվողը մի բժիշկ է, որ հիվանդներ չունենալու պատճառով՝ ինքը հաճախ հիվանդանում է, գրում է Մուրացանը հեդնորեն՝ Տոլստոյի արհամարհանքը հանդես բերելով նախկին գավակների հանդեպ։

Այժմ արդեն ժամանակն է յերկու խոսք ասել Մուրացանի կրած գրական ազդեցությունների մասին, և վերջացնել։

IV

Մուրացանի դյուղագրական յերկերը քննության առնելով՝ տեսանք, որ Անդրկովկասի հայ դյուղի քաղաքական և տնտեսական վիճակին այն ուսել հմքն է յեղել, որ մեզ հետաքրքիր աշխարհայացքը, գրական ուղղությունը և յերդիծանքի վիպասանը, ինչպես տեսանք, մանր բուրժուական դեմոկրատիայի իրական արտահայտիչներին անսալով՝ ավել և իր դյուղագրական յերկերում վեր չի եկել այդ արտահայտիչների մտքանական լուծման ուղին, այլ ուտոպիական գործելակերպի հետևողությամբ նրա այդ կրավորականությունը, անգործ, անձնական դիծ չեր, այլ պայմանավորված էր իր ապրած գաղաշրջանի դյուղացիական դեմոկրատիայի առաջադիմության հանդեպ ծառացած խոչընդոտներով։

Մանր բուրժուազիայի մասին Լենինը գրել է. «Նա պրոգրեսիվ է, որքան որ առաջադրում է համազեմոկրատական պահանջներ, այսինքն հավում է մինչև ապրելը և հարատևության ամենաանհրաժեշտ միջոցներին դեմ։ Նա բնակչության է, որքան որ պայքարում է իր մանր բուրժուական դրությունը պահպանելու համար, ձգտելով արդելակել, հետ տանել յերկրի բուրժուական ուղղությամբ զարգացումը։ Մանր բուրժուական ծրագրի այդ յերկու կողմերը պետք է խիստ դատապարտել իրարից, և ժխտելով այդ տեսությունների վերևն սոցիալիստական բնույթը՝ կռվելով նրանց բնակչության կողմերի դեմ, չպետք է մոռանալ նրանց դեմոկրատական մասը»։

Մենք տեսանք Մուրացանի առնղծագործության աշխարհը, նրա աշխարհայացքն և գրելակերպի դեմոկրատական և բնակչին կողմերը։ Վերևում Մարգիսը վորպես ուսման և տալիս, վորպեսզի նա դյուղը փրկի դիշատիչներից։ Նրա մանր բուրժուական ազգասիրությունը խոհական ուղղված է տիրող կարգերի դեմ, նույնիսկ նրա ազգային միաբանության քարոզը — ըստ ինքյան ցարիզմի և կապիտալիզմի դեմ ներհակության հետևանք է։ Բայց դրա հետ միասին պետք է ասել, որ բնակչին գծեր ևս կան Մուրացանի առնղծագործության մեջ։ Գրողն և յեկեղեցու խնդիրը — վորքան էլ Շնախնականը խմասում ըմբռնված — հետամնաց գյուղացու ազգասիրության արտահայտն է նրա գայտիարտասանության վրա։ Մուրացանի սոցիալական ուտոպիայի քվնա նույնպես հետևյալն է. — «Ժողովուրդը կփրկվի համայնական կարգերին անցնելով, — այդ մեկ։ Այնուհետև՝ այդ կարգերի հիմքը գյուղացիության ինքնամփոփումն է և քրիստոնեական մորալը, — սա յեկեղեցական

հավի ուղին ժխտելով՝ վիպասանը քարոզում է աղգային հպարտություն ու համերաշխություն բարեգործությամբ և ուղում լուծել այն հոգեբանական խնդիրը, որը լուծում էր Միքը. Նալբանդյանը առակալի փոքրոգիներուվ Մուրացանին դյուրում գառն ու գայլը միասին են արածում. հարուստ և աղքատ ձեռք ձեռքի յին տվել հասարակականորեն վերկվելու, կալվածալիզմի ընդդիմության համար, — դա իդեալական գյուղում էր. Իսկ իրական գյուղի մեջ վաշխառվականն կալվածատեր և ավերածություններ անում. գյուղացին տոկոսով պարտք և վերցնում, — գրում է Մուրացանը, — էհ հավիտյան տարուկ մնում վաշխառվի ձեռքին...» Վաշխառության դեմ ինչ՞ միջոց է առաջարկել վիպասանը.— փոխառու դանձարան հիմնել, որով «վաշխառությունը կհալածվի գյուղից» և գյուղացին «էլը աշխատության արդյունքը ոչ թե կեղեքիչներին ձեռքը կտար այլ իր հարկի տակ կժողովեր» Իր ուտոպիական գյուղում էս Մուրացանը պալխառիվ մլիցներ և առաջադրում՝ աղքատության վերացնելու համար՝ Որպեսզի՝ հասարակաց շահմարանի գաղափարը հետաքրքրական և նկատել, որ այդ տերմինը ինքը՝ Մուրացանը չի առեղծել և, ինչպես պատմում է գյուղատնտես Յոզեֆ Խնկոյանը, «հասարակաց շահմարաններ» հիմնում էր կառավարությունը էլի տարիներըն, որպեսզի շուտ շուտ տեղի ունեցող «սովի տարիներում» բարեգործություն անել Գետության մեջամտությունը, ինչպես վիպասանում և հիշված գյուղատնտեսը, հուշականերին և ազատակը լինում. բոլոր հասարակաց շահմարանների վարիչները ունեվորներից են, որոնք անխիղճ կեղեքով յուրացումներ են անում և «սովի տարում» աղքատի ձեռքը կամ բան չի ընկնում, կամ մուրացկի բաժին և մնում:

Բողոքը բուրժուազիայի դեմ, յեթե Մուրացանի աչքն և, բարեգործության այդ խեղումը—նրա անկարն ու հենց այդ և պատճառը, որ վիպասանի գյուղագրական յերկերում հովհաննես ավետարանչը հանդես է բերված իբրև որինակելի մաքեր արտահայտող հեղինակ, այնուհետև միայն հիշատակված են Աբովյանի և Գառոյանի անուններըւ

Բայց գյուղացիական դեմոկրատիայի իր զաղափարախոսությամբ, անշուշտ, Մուրացանը պատասխան և տվել միայն Անդրիովիչասի հայ գյուղի, այլ և ուսա մաքի և իրականության ազդեցությանը Նարոդնիկական մաքի և գործելակերպի վորոշ նշմարներ նկատելի յին մեր հեղինակի մոտ Հենինը գրել է Նարոդնիկության մասին. «Գյուղացիական դեմոկրատիա — ահա նարոդնիկության միակ ճիշտ բովանդակությունը և հասարակական նշանակությունը» Մուրացանի վրա յերևում են, իհարկե, վոչ այն նարոդնիկության ազդեցությունը, վոր յոթանասնական թվականների հեղափոխական շարժումներն էր ղեկավարում, այլ առ ի տարողնարոդնիկության արձագանքները, վորոնք գոյացել են ութսունական թվականներին տղատոյականության վերլուծության և գործելակերպի մեջ: Գյուղական ինքնամփոփ կյանքի և ժողովրդի իդեալիզացիան, հայ գյուղացու բնավորության համակրելի գծերի շեշտումը, «խոհեմները, ճակատի քրտինքով ապրող» մարդկանց հանդեպ մարդասիրական վերաբերմունքը քարոզը, «տիրող կամ բանացող ուժի» դեմ հակակրանքը, աշխատանքի և ջանասիրության վորոշ կուլտը, «բարեր խոսքը կենցաղի և վարքի ամփոփման և նախնականացման փափագը, «շվայտ և անառակ» իշխանների դեմ քամահրանքը, անցհասակը և անձնուրաց հասարակական գործունեությունը, վաճառական թվականների շարժման դեմոկրատիկ բաժնի նկատմամբ դրական վերաբերմունքը, և այլն, — ահա մաքերի և ցանկություններն, գործն և պրակտիկայի այն բնագավառը, վորի նկատմամբ հաշտ աչքով և նայում դեմոկրատ Մուրացանը: Ցավ հենց այդ բաժնում նրա քիչ թե շատ ամուր կապը

ուս նարոդնիկական մաքի վորոշ տարբերի հետ անուրանալի յեր Հասարակական ի՞նչպիսի գործունեությունից կարող է հաճույք ղգալ մեր վիպասանը. — Ժողովրդի քաղցր յերանություն պիտի ղգաք մի որ, — ասում է նա, — յերբ ձեր աչքով տեսնեք այն ամենը, ինչ վոր արել եք, յերբ տեսնեք ամային ձեր ձեռքով շինացած, ավերակը վերականգնած, խղճությունը խնամված, ոգիությունը և նրանից առաջացող չարիքները դյուղից հալածական, յերբ տեսնեք ձեզ շրվա մի ժողովրդի մատաղ սերունդը... կարողանում է անդհանան աշխատությամբ իր վիճակը բարվոքել, իր ջանքն ու քրտինքը արդյունավոր գործադրել։

Մուրացանի հայացքը, թե անհատներն են պատմություն առեղծում, թե ուժեղ հոգեբ մարդն է յերկրի աղը, — անպայման արձագանք է այն անհատապաշտության, վոր գալիս եր ռուս գրականության հերոսական շրջանից։ Տնտեսական պայմանների ազդեցությունը, հարկավ, չենք մոռանում — վիպասանը ցավագինորեն ներկայացրել է հայ դյուղական կյանքի կայունության խախտումը Ո՞վ կարող է դյուղը փրկել — Մաքի մարդը — լինի դա ուսուցչի, փաստաբանի, դյուղատնտես թե տերտեր Սրանք պետք է իրենց անձնական օրինակով բարձրացնեն նրանց դյուղը, վորպես նրա կայունության խախտումը և լուսավորեն այն մի քիչ թե գաղաքի փոշոտ լուսով, այլ համքուր, բնական և առաքինի կյանքի շողերով։

Մաքերի այդ շարքը շատ ել հեռու չի նարոդնիկի դյուղագիրների իդեալներից։ Մուրացանն ևս դյուղացիության հարցում նարոդնիկական-լուսավորական իդեալներից դինը չի անցնում։ Նարոդնիկները պես մեր հեղինակն ևս կարծում եր, վոր դ յ ու ղ ա ց ի ու թ յ ու ն ը մ ի խ ա տ ա ր ր ն է, վոր ի վ ե ճ ա կ ի յ ն վ ե ր ա կ ա ղ մ ե լ ու հ ա ս ա ր ա կ ու թ յ ու ն ը ք ա ղ ա ք ն ե ր ի ն հ յ ա ն ք մ ա տ ա կ ա ր ա ր ո ղ դ յ ու ղ ն է, — ասում է Մուրացանը, — ինչպես և ազգի կենդանության ուժ ու վոզը դյուղացին Ով վոր կամենում է ազգի կենդանությունը զորացնել, նա պիտի դյուղը դա զործելու, դի ծառը ջրելու և ուռճացնելու համար, նախ նրա արմատները պետք է հագեցնել։ Նա էլ, ինչպես ասացինք, իդեալացնում է շինականի առանձնահատկությունները։ Նրա դյուղ ուղարկելով ինտելիգենտներ, ցանկանում է դյուղի քայքայման առաջն առնել և նոր հայացքներ պատմական էգուբա և սոված խրճիթներում ապրողներին։ Թե, իհարկե, նահապետական ինքնամփոփության մեջ Հնարու ձգտող դյուցիության ազդեցիկան ևր նորամուտ կապիտալիզմի դեմ։

Մուրացանի ամենածագործությունն ևս վեր ինչ եր, բայց չեթե հաղնիվ բամանտիկական պայմիկա իդեալիստալիզմի դեմ։ Այդ պայմիկան, սակայն, Մուրացանի մոտ դունավորված և վորոշ ազգասիրական նեղվով, և նրա նարոդնիկությունը վոչ թե հեղափոխական նարոդնիկություն է, այլ հնացյալ նարոդնիկություն։ Ինչպես տեսանք I գլխում Մուրացանի մաքի թերությունը համընկնում է նարոդնիկական մաքի այն թերությանը, վոր ցույց է տվել Լենինը, գրելով. «Մենք բուժուազիան բամանտիկական տեսակետով կավելով կապիտալիզմի դեմ, նարոդնիկը դեն է շարունակ պատմական բնավիզմը, կապիտալիստական իրականության հանդեպ միշտ դնելով նախակապիտալիստական հասարակարգի մտացածին բաները։

Դյուղի հնդծ իդեալիզացիան և «համայնական» կյանքի ու վարքի մասին յերազանքը — ազդում զրկեց Տոլստոյի դ ե ղ ջ կ ա ց մ ա ն քարոզներին։ Ուժեղ յերկրի մեծ գրողը առհասարակ արդյունաբերական քաղաքի կապիտալիզմի այդ ցնտության նկատմամբ, նրա դարշանքը կեղտոտ, ծխոտ ու ոտնձ վոջիների դեմ, յեվրոպական արդյունաբերության (յերկաթուղու) ազդանշանները։

կական հարմարություններին հանդիպել և բնության ու բնական կենցաղի դրվատումը — այդ ամենից քիչ թե շատ Մուրացանի մոտ էլ կա, ինչպես այդ տեսնում ենք Հնոյի ազատվի առաջին դրվագում, ուր խոսում է արդյունաբերական քաղաքի դեմ, «Անաքյալում» ուսուցչի գնային համարատվում և Հերոսի վերջապես, «Որբերդավոր մինձնուհուն» մեջ քուրը Աննան քարոզում է դյուղի անվճարությունն անխախտ պահելու և բնական կենցաղով ապրելու դաղափարները։

Տոլստոյականության հիմնական թեղերից և նաև հոգեկան-բարոյական կատարելագործման քարոզը. ուստ մտածողն այդ միջոցով էր ձգտում հասարակությունը վերանորոգել։ Ամբողջապես ուտոպիական այդ տեսությունը մարդու բարոյական էյությունը համարում էր հիմնական՝ նրա սոցիալական դերն արժեքավորելու համար։ Մուրացանի մոտ էլ Կամասարյանը բարոյական դատաստանի փորձ է անում Հոջա Մերդոյի նկատմամբ։ Նրա հոխալները հրապարակով մերկացնելուց հետո՝ նրանից խոսք է առնում, որ այլ էս ճվնասակը և անպիտան արհեստով (վաշխառությամբ) չդրաղվի։ Աննան թե այստեղ Մուրացանն իր չհիմած հերոսի գործնականերպին թեղեա ամբողջապես համամիտ չե. բայց ուտոպիական վերաում էս քուրը Աննան էրարոյական ներգործությամբ և բոլոր վիճելի հարցերը լուծում դյուղական տարբեր դասակարգերի միջեւ հարաբերությունը դաղարում և հասարակական չարիք լինելուց, յեթե նրա մեջ դնում էս մարդասիրության ձգտելու միտումը—ահա Մուրացանի ուտոպիական վեպի հասարակական նպատակադրումը։

Տոլստոյը մեծ նշանակություն էր տալիս կրթությանը, յեվնելով այն տեսակետից, թե օրինավոր պայմանների բերն փոփոխման ուղին (հեղափոխական ուղին) ցանկալի չե (մի կող հանգամանք չարին բնությամբ)), ուստի և մարդուն ուղղել կարելի յե միայն և յեթե ներքուստ, և այդ կերպ ձգտել փոխելու օրինավոր պայմանները (հյերկինքի արքայությունը ձեր ներսը)։— Մուրացանի ուտոպիական վեպում հիմնական տեղ և բռնում կրթության և բարոյական դատախարհության պրոբլեմը «Վարժուհու հրամանով անան յերգել) (աշակերտները) առավոտյան աղոթքը», գրում է Մուրացանը՝ ուտոպիական դյուղի մանկավարժության կրոնական թեքումը շեշտելով։ Նոր կոդերը պատրաստելով՝ Աննան ձգտում է դյուղը փրկել քայքայումից և հասատատուն դարձնել գեղջկական ինքնամփոփությունը։ Նա սոցիալական խնդրի լուծումը դնում է մաքի, ավելի շուտ՝ սրտի մաքրագործման հողի վրա։ Սա հենց Տոլստոյի քարոզի քվինտեսենցիան է։

Ներքին կատարելագործման այդ քարոզը մի բնակցիա յեր յոթանասնական թվականների քաղաքական-տերրորիստական գործունեության դեմ և վարկյան դեպի ինդիվիդուալիզմը, «Ամեն գործերի» քաղաքականությունը և կրավորականությունը Ձարի հանդեպ։ Այդ բոլորը հնահավատական դյուղի փափկամորթության արձագանքն էր Տոլստոյի ուսմունքի մեջ, որ մինչեւ մահանալ էսուսական հեղափոխության հայելին էր (Լենին), որ չափով նրա ուսմունքում արտահայտված էր դյուղացիական դեմոկրատիայի դժգոհությունը ցարիզմից և կապիտալիզմից։ — Մուրացանի մոտ էս մեկ դեպքում մեծագույն փառք և մարդու համար նեղության համբերելը (պասսիվիզմ), մի այլ դեպքում նա իր յերգիծանքով պոռում է բուրժուական եգոյիզմի դեմ (ակտիվիզմ) և քարոզում անձնուրացության մորալ։ Տոլստոյի մոտ, ինչպես հայտնի յե, այդ յերկուղին դուգահեռ գնում են նրա գրվածքներում՝ առանց իրար խանգարելու։— Մուրացանի մոտ հեղափոխությունը բառը գործ է ածվում սոսկ Ներքին հեղափոխության իմաստով, ինչպես այդ տեսնում ենք նաև Տոլստոյի

յերկերում։ Քանը Աննան իր ուսուցչի ազդեցությամբ ներքին հեղափոխություն ապրեց։ Նման հեղափոխություն հաճախ են ապրում Տոլստոյի հերոսները (Ռեզուխով, Լևին, Նեխլյուդով, և այլն), որոնք չարիքին չարիքով կամ բռնությամբ դիմադրելու կողմնակից չեն։ Այստեղից էլ բղխում է կրոնն իբրև ներքին ըմբռնելու տեսությունը, որը դավանում է Մուրացանը։ Գարեգինը և վոլկիսի դավանանքը տոլստոյականության մեկն է։ Քանը Աննան Տոլստոյին հետևելով քարոզում է՝ «սիրել ընկերը իր ունձից ավելի»։ Հայտնի չէ, որ սա ավետարանական մաքսիմի տոլստոյական խմբագրությունն է։ ավետարանում ասված է՝ «սիրիր քո ունձ իբրև քեզ», Տոլստոյը պահանջում է — քո անձից ավելի, վորպեսի ձեր վրա է առել Մուրացանը Տոլստոյիզ։

Վերջինս մի տեղ ասել է թե՝ «Գրքեցս Ռուսաստն գրել է իբր՝ Տոլստոյի հայրեր Ժենվցի փիլիսոփայի ժխտական վերաբերմունքը քաղաքակրթության նկատմամբ և բնական պայմաններին շեշտումը Տոլստոյի սրտին մոտեցան այն ժամանակ, յերբ նա «զարթնի յեկավ» և հանդեցնց նահապետական դյուղացու տեսակետի վրա։ Իսկ այդ դարթնի համար, ինչպես հայտնի չի, դեր են կատարել ավատական դյուղի քայքայման պրոցեսը, դասակարգային կռվի ուսումնասիրությունը, կապիտալիզմի զարգացումը — Մուրացանի մոտ էս մենք տեսանք բնական պրոցեսների քարող, վերադարձ դեպի նահապետական պարզունակ պայմանները, խորանումն առաջարկան կապիտալի այն շոշափուկների, որոնց կոնկրետացումն են Յոզանները—Մարուքն ու Միքռան։ Մուրացանը սրանց դիշատիչ և անմխիթար, իսկ նորդնիկի դյուղացիները — նեռ, խոզ, անդղ (Անտիխրիստոսով, Կաբանով, Նորշունով)։ Տոլստոյն իր «Ռավարի թագավորության» մեջ ցույց է տալիս, որ տգետ դյուղացին զանազանվ անքաղաքականի՝ կերպարանափոխվում է հրեշի։ Քանը Աննայի հառերի մեջ տոլստոյական այդ միտքը քարոզվում է այսպես. «... յերբ տգետ դյուղացու մեջ մեռնում է քաղաքականը, այնուհետև նա ուժ այլ ինչ և, յեթե ուզ մարդակերպ մի հրեշ, որի խոսքերը դղմանք և գոչիները ահռելի են բերում մարդու վրա»։

Թե Տոլստոյը և թե Մուրացանը մեծագույն դերը են համարում ավետարանի։

Ձուլագրվում են նաև յերաժշտության մասին յերկու հեղինակների հայացքները։ Պետք է հիշատակել «Յորերդավոր մխանձնուհուն» մեջ յեկեղեցական յերաժշտության ազդեցությունը հերոսի վրա։ Նա չոքում և խոնավ գետնի վրա, որ ուրիշ տեղ չկար անուն։ Տոլստոյն էս հաճախ նկարագրում է իր և իր հերոսների վրա յերաժշտության հզոր ազդեցությունը։ Նրա ազդեցությամբ, ասում է նա, «Հարող եմ անել այն, ինչ որը իրոք չեմ կարող» (Կրեյցերյան Սոնատ)։

Ինտուիցիայի այդ շեշտումը արդյունք է «անգիտակցականի» փիլիսոփայության հակադրմանը բուրժուական բացոնալիզմին, որը բղխում էր դյուղացիական կենսահայեցողության դերագնահատումից թե Տոլստոյի և թե Մուրացանի մոտ։ Հուզական աշխարհի վրա շեշտ դնելը կողմորոշել է նաև յերկու հեղինակների վերաբերմունքը գեղի հինը։

Տոլստոյի հերոսուհիները ապրում են ազամարդու համար և ազամարդու սիրով կինը արժեքավորվում է նրա մոտ՝ ազամարդու հետ միասնալով և նրանից, ինչպես արևից, լույս և ջերմություն ստանալով։ Դրա հետ միասին Տոլստոյը ծաղրել է անաշխատ կինոջը — նույն տեսակետն է հայտնում նաև Մուրացանի մոտ։ Սիմոնը վերջին կետից։ Մենք տեսանք արդեն նրա ծաղրը Լիկոտ Գավրիլիչայի նկատմամբ։ Անաշխատ կինոջ դեմ առելությամբ են խոսում թե Մուրացանը, թե իր դյուղացիքը։ Վերջիններից մեկն առաջարկում է նրանց մի քանով կապել և գետն ածել։ Ինչ պատասխաններ և ծաղրել մեր հեղինակը

անալեռնա հինոջ մեջ — նա նորամեծությանն սիրահար է, զեմք ու զգացմունք հեղծող, ամուսնանալուց առաջ արձին աշխարհը ճանաչող, և այլեւ հինոջ սիրուց բարակ և խելքը կարճ է, առում են Մուբայանի դյուղացիքը Դրանով նրանք համեմատում են ցույց տալ թե՝ հինը միշտ տղամարդու զեհավարությանն կորիք ունի, որպես Հմեծ յերեխա», որոլ հուզական աշխարհը զերակշռում է խոհական աշխարհի հանդեպ Ինչպես տեսնում եք, այստեղ Մուբայանն քննում է ինքնահակասության մեջ նման մի բան և և հետևյալ իրար ժխտող դրությունները. — Համաբայանն իրական հայ գյուղում տեսնում է յերեխա ծածկած, չխոհական հինոջ և զայրանում է թե՝ Հմի հին առողջ հաղորդածքով, զորեղու կորով և ասկայն զրկված խոսելու ազատություններից» նա բողոքում է այդ հանգեցությանն զեմ Մինչդեռ Մուբայանի իդեալական դյուղում, որ տեղեկ և նրա զրական հերոսուհին՝ հինոջ չխոհականությունն ունա յե, որպես նահապետական լավագույն հավորություն՝ հզեղական պարկեշտություն» Մուբայանը հանդուգնով և զարմում, որ տեր Ոսեիի հարցը ամաչկոտ եր, տղամարդի հետ ծանոթանալու, ուզում եր ձեռքը համբուրել, իսկ նորատի վարժուհին խոսելու չի՛նում եր...

Նույնիսկ Մուբայանի ամենասիրելի հերոսուհին՝ Աննան, իր կատարած գործերի հեղինակ համարում է վեց քեր իրեն, այլ Դարեգինին. «Մեքեն կարող ելի մոռանալ նրան, նրան, որ իմ բոլոր մտքերի, խորհուրդների և գործերի հեղինակն եր» Նույն իսկ այդ հինոջ մահվան պատճառը, կարելի յե ասել, սիրած տղամարդի անհաղորդությունն եր Դրանից հետո մարում է Աննայի մեջ գործելու փափագը և, ինչպես ինքն է դրում, պատճառն այն է, որ «իմ մեջ տեսավին տեղում է կիրքը, նա, որին մեծ բանաստեղծը իրավամբ (?!) անվանել է քուլությունն (ընդգծումները մերն է Մուբայանը)։ Իր հիշատակարանի մեջ եռ այդ բոլորն էլ իրեն անվանում է «տեսակ արարած», «զգացմունքների և քուլության մարմնացում» Նա իրեն հակադրում է տղամարդուն, որին գովաբանում է ամեն կերպ, և արժանի համարում նրան ինքնուրույն և անկախ ապրելու, մինչդեռ հինոջը նա զրկում է ինքնուրույն քայլեր անելու ազատությունից և դնում տղամարդից կախման մեջ Կին-լուսինը արև-տղամարդից է լույս առնում» «Բայց յերբ այդ լույսը մարում է, — առում է Մուբայանը, — յերբ ճառագայթների աղբյուրը ցամաքում է, ճ, այն ժամանակ մի գործիք հինոջը հենդանիների մեջ» Մի խոսքով՝ վիպասանը տեսնում է հինոջը միայն հանվերջ նվիրվելու, հավիտյան զոհվելու առաքինություն» Նա իր կյանքն ու ուրախությունը պիտի վորոնե միայն ամուսնու մեջ» Տղամարդը կռվի մեջ վերք առացող է, իսկ հինը — գեթ վերք կապող է...

Այդ տեսակետն մանր-բուրժուական տեսակետը շատ բնորոշ է Մուբայանի աշխարհայացքի համար, վորի համաձայն հինը տան, ընտանիքի և ամուսնու վոլորտի զարդն է և, յեթե այդտեղից դուրս գա, կրկվի հոշյախ սրբությունը» Այստեղից եր հասկանալի յե դառնում, թե ինչու Մուբայանն ուսուցչի Տոլստոյը չեր հավանում Մաքսիմ Գորկու կանացի առնական տիպերից մի քանիսին, վորոնք չեին համընկնում Տոլստոյի առհասարակ հետադիմ հայացքներին կանանց հարցում

Բայց, չհարկե, Մուբայանի աշխարհայացքի հետադիմ կողմերը չերբեք չեն վոշնչացնում նրա գրական գործի մյուս արժանիքները Վերոնք են այդ արժանիքները —

— Նախ՝ այսոր Մուբայանի արժեքը մեզ համար այն է, վոր նա կապիտալիզմի՝ հասկացող առևտրական կապիտալի գիշատիչ զեմքն և ցույց տվել

և նորհանդ հարուցել իր ընթերցողների մեջ դեպի խոշոները, բուրժուազիայի լաքեյ յեկեղեցին, պորտաբուծ և անաշխատ կանայք, և այլն։

Ցերիրորդ՝ ի հարկե, Մուրացանի աշխարհայացքը իդեալիստական է, բայց, ինչպես ասել է Ռոդա Ռոդան իր հուշերում՝ կան հեղինակներ (որինակ՝ Շելլերը) որոնց սոցիալական ակտուալությունը պայմանավորված է հենց այդ իդեալիզմով։ Ներհակվելով բուրժուական հասարակության բացերի դեմ, Մուրացանն իր իդեալիզմով անջատվել և դիշատիչների որջից։ Անշուշտ, այդ իդեալիզմը ունի խոշոր արատներ. — նա չի ցույց տալիս դասակարգային կռվի ճանապարհը, այլ մարդասիրության քարոզ է կարդում, հրահանգում է սիրել մերձավորին և բարեգործություն անել, բայց դրա հետ միասին Մուրացանը նաև կարողացել է պահել դիմակը բուրժուական բարեգործության յերեսից, ծողնելով հրապարակում սուտ ակիրը եզոյիզմը։

Ցերրորդ՝ ցարական դարաշրջանի հայ դյուղի աղքատության և ավերածության ցնցող նկարագիրը տալով, Մուրացանն ահագին պրոպագանդիստական դերծ է կատարել ցարիզմի դեմ, ցույց տալով ցնցող իրականություններ Հայաստի յի ուսա դրականության պատմությունից, որ Ձերնիշևսկին Ուսպենսկու պերհախսա նկարագիրները մեջ տանում էր սիրող կարդը ժխտելու և պայքարի հրավիրելու հերը կանչելու Անպայման, Մուրացանի վաստակը մեր դրականության մեջ նաև այդ է — դալրուլի առաջ բերել ընթերցողների մեջ տիրող կարծիքը հանդեպ և կամք առաջացնել դրանց դեմ կռվելու ուղղությամբ։ Հարկե, այդ ընդդեմը հետևողական, հեղափոխական բնույթ չունի, վորովհետև Մուրացանը խառնվածքով բարեյսիտս է և քարոզիչ։

Ցեվ, վերջապես, Մուրացանի դրական ուղղությունը բոմանտիզմը լինելով՝ պետք է ասենք, վոր դա ըստ էության բնական բոմանտիզմ չէ, վոր քարոզում և ներարձնացնում, հերովորական ինքնահաստատում, անպատում յերազանքը Մուրացանի դրական ուղղությունը — Մաքսիմ Գորկու խոսքով ասենք — ակտիվ բոմանտիզմ է, վոր մի հայացք չունի դրական դեր և կատարել մեր դրականության պատմության մեջ, վոր ձգտել և ուժեղացնել մարդու կամքը, դրդել նրա մեջ ընդդեմ սիրող կարդերի, ճնշումների սխտեմի՝ ցարիզմի և կապիտալիզմի դեմ։ Հարկավ, այդ ընդդեմը դերծ չէր տատանումներից. բայց ուրիշ կերպ էլ չէր կարող լինել։ Մուրացանի աշխարհայացքի մանը բուրժուական բնույթով էլ պայմանավորված և հենց այդ տատանվողականության պատճառով։

Ա. Տերտերյան

1935 թ. ապրիլ
Ցերևան

ՆՈՅԻ ԱԳՌԱՎԸ

1899

Ա

Ոդեսսոսի սիրուն առավոտներից մինն էր, յերբ յես ու ընկերս, կանխավ արած մեր վորոշման համաձայն, դուրս յեկանք քաղաքից ձիով՝ հայրենի գավառակի գյուղերը պատելու և մի քանի ավերակներ անձամբ տեսնելու։

Մենք պատկանում էինք Հռուն վերադարձող այն նորեկների թվին, վորոնք ընտանիքի հացը հայթայթելու համար ստիպված են լինում տարիներով ապրել մեծ քաղաքում, ծծել միշտ նրա անառողջ ոդը, տնվել ավելի փոշիով, քան թե կերակրով և հետևապես կարոտիլ այնպիսի բարիքներին, վոր բնության մեջ ապրող մարդը վայելում և առատորեն, առանց սակայն նրանց արժեքը դնահատել կարենալու։

Ի՞նչ բան և, որինակ, մաքուր ոդը, դաշտի կանաչը, հովտի ավակը, անտառի զովը... մեթե կարելի յև կարոտիլ դրանց, կամ ցանկացած ժամին չվայելել։ Հռունցի դեղջուկը, վոր կարթը բառը հասկանում և միայն նյութականի վերաբերմամբ, անշուշտ կծիծաղեր, յեթե իմանար թե՝ մեր զրկանքը կազմում և այդ չնչին, հազիվ յերբևիցե յուր կարիքը լրացնող բաներըւ

Բայց ով տարիներով ապրել և մեծ քաղաքում, միշտ միևնույն նեղ փողոցի վրա, նույն ապականված մթնոլորտի մեջ և զրծնել շաբաթնակ լուսյից ու ոդից զուրկ մի դրասենյակում, վորի բոլոր հրապույրը կազմում են յեղել չոր հաշվեմատյանները, յերկաթե պահարանը և անմիտ համարիչը, իրեր, վորոնք առնչություն ունին միայն փողի և հաշվի հետ, բայց վորոնց անծանոթ և սիրտը և ավելի ևս զգայուն հոգին, իրեր, վորոնք մարդու ուղեղը բթացնում, աշխուժը մարում և հոգին նվաստացնում են... այդպիսին, հարկավ, կարոտելով կկարոտի այն ամենին, ինչ վոր անարժեք և բնության գավակի համար, կկարոտի նրա գաշտին ու մարգին, նրա հովին ու առվակին, նրա անտառի անույշ հովերին։

Մենք էլ, ահա, այդ կարոտյալներից էինք։ Ընկերս վերադարձել էր Մոսկվայից, իսկ յես Թիֆլիսից։ Ցերկուսս այժմ միա-

ցած՝ դնում էինք բնութեան գաղտնութիւններից մեր կարոտն առնելու։

Գեարուս Մինաբյանը (այս էր ուղեկիցիս անունը) հայոց հոգեվոր դպրոցի սան էր, տակավին յերիտասարդ, միջահասակ, փոքր ինչ թուլակազմ, բայց աշխուժ և գրավչադեմ։ Բնավորութեամբ բավական անհամբեր և դյուրագրգիռ էր, յերբեմն նույնիսկ հանդուգն ու անքաղաքավար, բայց սրտով բարի և անկեղծ։ Ուներ տարօրինակ հայացքներ, վորոնք յուր խոսակիցներին մերթ զայրույթ և հաճախ՝ զվարճութիւն էին պատճառում։ Սիրում էր խառնվել ուրիշների գործին, կամ հաճախ ինքնակոչ դատավոր հանդիսանալ։ Սիրում էր վիճաբանել, ազատ մտքեր հայտնել, բայց յերբեմն ավելի հակառակելու, քան մի ճշմարտութիւն ասելու համար։ Այսուամենայնիվ, այս բոլոր տարօրինակութիւնների հետ միասին, ճանապարհի լավ ընկեր էր, վորովհետև սրտով էր, կամարար և տակավաղտ։

Բավական ժամեր էին անցել ինչ յելել էինք քաղաքից և թեպետ առավոտը զով էր ու հեշտալի, այսուամենայնիվ, քանի արևը բարձրանում էր, այնքան ավելի տոչը չերմանում և նեղացնում էր մեզ։ Միջօրեյի մոտ մենք դանվում էինք արդեն բաց դաշտի վրա։ Արևի ճառագայթները այրում էին. չկար վոչ հովի շունչ վոչ ծառերի շքարան։ Այդ պատճառով աշխատում էինք ժամ առաջ հասնել դյուղը, վոր դանվում էր մեր հանդիպակաց յեղող լեռան գեղադիր լանջի վրա։

Ընայելով վոր քաղաքից յելածներս միջոցին ընկերս պատմում էր ինձ՝ մի որ հիացմունքով էր մտածում այն ժամի ու վայրկյանի մասին, յերբ մայրաքաղաքից հեռացած՝ դանվում կլինեք հայրենիքում, նրա ազատ ոդի ու դաշտերի մեջ և չնայելով վոր այդ ժամին նրա փափագն արդեն կատարված էր, այսուամենայնիվ, նկատում էր, վոր յերիտասարդի համբերութիւնը յենթարկվում է փորձութեան։ Տոթից, ըստ յերևույթին, նա շատ էր նեղանում, ուստի և հաճախ դանգատվում էր։

Ցերբ մի ձորակի դետակն անցնելով սկսանք դեպի դյուղը տանող առապարը բարձրանալ, միջօրեյի տապը ավելի ևս զգալի դարձավ. վորովհետև արևի ճառագայթներից զատ՝ այրել սկսան մեզ նաև կեծացած ժայռերը, վորոնք յեզերում էին առապարը յերկու կողմից։

— Ա՛խ, մի հանեցինք այն սոխներին, — բացականչեց հանկարծ ընկերս, այնպիսի մի կարոտով, վոր կարծես դանվում էր Սահարայի անապատում և ուր վոր է խորշակը շնչասպառ պիտի աներ իրեն։

— Համբերություն, բարեկամ, սոսիներին էլ կհասնենք,— նկատեցի յես։

— Համբերություն... միշտ համբերություն,—շշնջաց Պետրոսը, դժգոհ իմ խոսքից և ապա դառնալով ինձ՝ հարցրեց.— Ինչ ես կարծում, ձվերը են համբերում։

— Ինչպես թե ոչքեր, համբերատարները—պատասխանեցի յես։

— Իսկ յես չեմ կամենում համբերատար կոչվիլ։

— Ինչու,— հարցրի նրան։

— Վորովհետև համբերում են միայն թուլերն ու տկարները. այսինքն մարդիկ, վորոնք այս կամ այն չարիքը սեփական ուժով իրենցից հեռացնել չկարենալով՝ տանում են նրա պատճառած նեղությունները սարիկաբար։ Ցնվ վորպեսզի այդ անարգանք չհամարվի իրենց՝ ասում են թե՝ «համբերում ենք»։

— Եհ, յեթե չհամբերես, ինչ պիտի անես. կարող ես արևի հրամայող դունդը հեռացնել քո գլխից, կամ այս շիկացած ժայռերը հավանավոր ծառերի փոխել։

— Չեմ կարող։

— Ինչու ուրեմն խղճալ տղմուկ ես հանում։

— Նրա համար, վոր ցույց տամ թե՝ անղգա արարածին մեկը չեմ, թե իմ մեջ կյանք ու կենդանություն կա, թե հեշտությունն ինձ հաճույք, իսկ նեղությունը դժգոհություն և պատճառում։

— Իսկ դրա ոչինչը։

— Այն, վոր մարդիկ ճանաչելով ինձ՝ դգաստ լինեն իմ վերաբերմամբ և զգուշությամբ վարվեն հետս։ Ինքդ էլ հո դիտես, վոր աշխույժ ու չսանձահարվող ձիուն մտանում են յերկյուղով ու փայտքշանքով և հաղիվ ուրեմն կարողանում են հեծնել. մինչդեռ համբերատար իշին ակնկիներից քաշելով՝ բարձում են միշտ վորքան կամենում են, առանց նրա կամքն ու ցանկությունը իմանալու։

Ցնս ծիծաղեցի։

— Դու այս կարծիքին չես,— հարցրեց ընկերս։

— Վհչ,— ասացի։

— Ինչու։

— Վորովհետև համբերել բառը ավելի բարձր նշանակություն ունի, քան ինչ վոր դու տալիս ես նրան։ Նշերի ու ձիանների ընկերության մեջ, հավանական և, վոր համբերությունը համարվի անարգ հատկություն, բայց մարդկային հասարակության մեջ ճանաչվում և այն իբր առաքինություն։

— Մի՞նչև ազգային վարդապետների կարծիքով,— ընդհատեց Պետրոսը։

— Նույնիսկ դարավերջի փիլիսոփաների կարծիքով, — հարցրի ես։

— Պատճառը։

— Վերովհետև համբերությունը բարիք է արտադրում, մինչդեռ անհամբերությունից միայն չարիք է առաջանում։

— Ի՞նչպես։

— Աշխարհում համբերում են, առհասարակ, կամքի ուժ, հոգվո արիություն և սրտի կորով ունեցողները, հետևապես, մեծ գործերն էլ սոսկ նրանք կարդա պատմությունը և կտեսնես, որ աշխարհի բոլոր նշանավոր դյուտերը, բոլոր մեծամեծ գործերը արդյունք են յեղել դժվարատար նեղությանց ու հերոսական համբերությանց։ Անհամբերությունն, ընդհակառակը, նշան է թուլության և անզորության։ Ուստի յերբեք չէ տեսնված, որ անհամբերին մեկը կարողանար մարդկության համար ստեղծել մի մեծ բարիք։ Այս է, ահա, պատճառը, որ համբերությունը համարվում է առաքինություն և բարոյախոսներից մինը, մինչև անգամ, ավելի մեծ փառք է համարում մարդու համար մեծամեծ նեղությանց համբերելը, քան մեծ գործեր կատարելը։

— Այդ դուցե այդպես է, բայց յերբ արևն այրում է, հո կբելի չե նրա դեմ տրտնջալ։ Չե վոր տրտունջը թեթևացնում է մարդու նեղությունը։

— Ընդհակառակը, պետք է սովորել յերբեք և վոչ մի բանի դեմ չտրտնջալ, այլ դրա փոխարեն աշխատել նեղությանն պատճառը մեջտեղից հեռացնել։ Ծույլ ու անզոր մարդը ճանճի շիթելու դեմ էլ է տրտնջում, փոխանակ լուրյամբ ձեռքը բարձրացնելու և նրան քշելու։

— Ճանճը կարելի չե քշել, արևը վիրտեղ քշենք։

— Այդ դեպքում էլ արևը քշելու փոխարեն քո ձին պետք է քշես և մի կես ժամ առաջ հասնես տուն. համբերատար և դրծունյա մարդու համար միշտ փրկության ճանապարհը կա։

Ընկերս լուռ եր։ Զգիտեմ համաձայնվեց ինձ հետ, թե չկամեցավ անզոր յերևալ իմ աչքում։ Այսուամենայնիվ, վոչ մի նոր առարկություն չանելով շարունակեց ճանապարհը, առանց այլևս տրտնջալու արևի դեմ, վոր այրում եր մեզ, արդարև, անզորմաբար։

Քիչ ժամանակից հետո մենք դյուղը հասանք և ուղղակի դիմեցինք ընկերոջս ազգական դյուղացու տունը։ Վերջինի հովանավոր սրտի և հյուրընկալի քաղցր ընդունելությունը շուտով մոռացրին մեզ ճանապարհի շոգից կրած մեր նեղությունը։

Բ

Հետևյալ որը, նախաճաշ անելուց հետո, դուրս յեկանք տա-նից՝ դյուղն ու նրա շրջակաները դիտելու։ Հարկ չկա ասել, որ ամենից առաջ այցելեցինք դյուղի յեկեղեցին, որը գտնվում եր շինուԹյուններից դուրս, մի առանձնացած բլրակի լանջի վրա, որտեղից բացվում եր մեր առաջ ԹԷ դյուղի և ԹԷ շրջակաների տեսարանը։ Եկեղեցին մի անպաճուճ շինուԹյուն եր, մամռա-պատ կտուրով և փայտե խարխուլ զանգակատնով։ Տեսնելու արժանի վոչինչ չուներ յուր շուրջը, բացի փոքրիկ բանջարանոցը, որը գտնվում եր յեկեղեցու առաջ և վոռոգվում բավական հոդ առվակով։ Մեզ ուղեկցող հյուրընկալի ասելով այդ բանջարանոցը ծառայում եր տեղական քահանային և տալիս եր նրան ուտելու սոխ, կանաչեղեն, մի քանի տասնյակ վարունգ և ձմեռվա համար մի քանի հատ դդում։

— Այս ջրով կարելի յեր դրախտ առեղծել այստեղ, իսկ ձեր քահանան մի այն սոխով ու վարունգով և բավականանում,— նկատեցի յես հյուրընկալին։

— Եդ ջրով, հրամանք ես, շատ բան կշինվեր քաղաքում, ամա ինչ արած, որ դերը (քահանան) եշխա (աշխույժ) չունի,— պատաս-խանեց դյուղացին։

— Դուք շինեցեք,— վրա բերավ ընկերս։

— Մենք ինչ շիննենք։

— Ծառեր տնկեցեք, վազեր շարեցեք, դրսոնելու ճանապարհ բացեք, յեկեղեցին հո տերինը չէ։

— Դերինը չի, դիդամ, ժողովրդինն ա, ամա որ դերը չԹողնի, մենք ինչ կարանք անել։

— Ինչպես Թե չԹողնի. ինչ իրավունք ունի արգիլելու,— բացականչեց Գևորսը և տեսնելով, որ քահանան յեկեղեցու կող-մից իջնում և դեպի մեզ, ավելացրեց,— ահա յե ձեր քահանան. Թող մի գա այստեղ, տես ինչպես եմ հանդիմանում։

— Թող, այ մարդ, ինչ գործ ունիս, ինչ հանդիմանությանն ժամանակ ե. դեռ առաջ մի ծանոԹացիր մարդուն,— նկատեցի յես։

— Ի՞նչ ծանոԹություն, բան չունիմ,— պատասխանեց ընկերս և կռվելու պատրաստվող աքաղաղի նման հարձակողական դիրք բռնեց։

— Թող, քե մատաղ, խոսալ մի, դերն ինձանից կնեղանա,— խնդրեց հյուրընկալը։

Բայց Գևորսն արդեն մի քայլ առաջացել եր դեպի քահանան, որը մոտենում եր։

Սա տարիքով հիսունի մոտ, առողջակազմ, հաստամարմին ալեխառն մորուքով և բարի դեմքով մի մարդ էր։ Հագած էր սև մահուդից կարած մի պարեզոտ, վորն հնությունից արդեն մաշվել, դունատվել էր։ Ծածկած էր գառան մորթուց պատրաստված գլխարկ վառքերին ուներ քաշեր, իսկ ձեռքին՝ դեղնափայտի գավազան։

Մինչև այդ ասենք, վոր տարիներ առաջ, քանի դեռ լուսավորությունն ճառագայթները այնքան չէր մոտեցել մեր յեկեղեցու շեմքերին, հայ քահանան հայր էր համարվում ամեն մի հայ քրիստոնեյի. նրանք միմյանց պատահելուց սիրով վողջունում էին իրար, առանց նայելու թե՝ ծանոթ են միմյանց, թե վոչ։ Այժմ, ի հարկե, այդ դեղեցիկ և բուն քրիստոնեական սովորությունը մոռացության և տրված՝ իբրև անպետք հնություն։ Քաղաքներում, մանավանդ, անհրաժեշտ է վոր այս ինչ հային՝ անպատճառ մի յերկրորդը ծանոթացնե պաշտոնապես այն ինչ քահանային, վորպեսզի այնուհետև առաջինը բարեհաճե վողջունել վերջինին, յերբ պատահե նրան ճանապարհին, կամ վորևե հասարակության մեջ։

Տեր Մակուչը (գյուղի քահանայի անունն էր) անծանոթ էր ի հարկե քաղաքներում ընդունված այս սովորության, ուստի հեռվից տեսած լինելով մեզ, իբրև հայ քահանա, շտապել էր մեզ վողջունելու և, իբրև նորեկների, բարի գալուստ մաղթելու։

Այդ իմանալով յես շտապեցի Գեորգից առաջ անցնել և գլխարկս հանելով՝ «բարևյա՛ տեր» ասել։

— Աստված արհնեսցե, բարի լինի գալուդ,— պատասխանեց տեր հայրը և ձեռքը նախ ինձ՝ ապա Գեորգին տալով՝ վողջունեց մեզ սիրով և այնպիսի մաեծմություամբ, վոր կարծես թե հին բարեկամներ եյինք։

Գեորգը, վոր անհամբերությամբ էր սպասում վողջույնի այս ծիսակատարության, հանկարծ, առանց վորևե առաջաբանի, հարցրեց.

— Տեր հայր, ինչ է նշանակում ավետարանի այս խոսքը՝ «դուք վոչ մտանեք և վորոց մտանեննե՝ չտայք թուլ մտանել»։

Քահանան, վոր այսպիսի անակնկալ հարցի չէր սպասում, նախ շփոթվեց, ապա ինքն իրան գալով՝ ժպտաց և մեղմով հարցրեց.

— Ընչի՞ համար ես հարցնում։

— Ի՞նչպես թե ինչի համար, քահանա յես, շատ անգամ ժողովրդի առաջ կարդում ես ավետարանի այդ խոսքերը, այժմ կամենում եմ իմանալ թե՝ հասկանո՞ւմ ես դրանց նշանակությունը, թե վոչ։

— Բաս վոր չհասկանանք, վինց կարանք կարդալ, վերդի,— պատասխանեց տեր հայրը։

— Դե՛հ, վոր հասկանում ես, թարգմանիր տեսնեմ։

— Վիճաց Թարգմանեմ, ավետարանը ըստի պտի, վոր կարդամ Թարգմանեմ,— առարկեց քահանան ժպտալով։

— Ա՛յ, յես բերան ասում եմ ելի՝ ջուր վոչ մտանեք և վորց մտանեննն՝ չտայք Թուլլը, դեհ, Թարգմանիր։

— Սաքի դու դրա միտքը իմանում չես։

— Իմանում եմ։

— Բա խի յես հարցնում։

— Հարցնում եմ տեսնեմ դու յել իմանում ես, Թե վոչ։

— Ա Մուքի (Միքայել) ես մեր Մինարանց Ակոբի տղան չի,— դարձավ քահանան մեր հյուրընկալին։

— Հա, ա դեր, Ակոբ աղի տղան ա,— պատասխանեց դյուղացին։

— Աստուծ պահի, լավ մեծացել ա, հերը քյոմակ կըլի (կոզնի),— հարցը քահանան, աշխատելով այս միջանկյալ հաճոյախոսությամբ ազատվել Գևորսի հետապնդությունից։

Բայց վերջինս, անխիղճ պարտատերոջ պես, տեր հոր ոձիքը չթողեց։

— Այդ իմացանք, տեր հայր, դու իմ հարցին պատասխանիր,— կրկնեց նա, քահանայի թևից քաշելով։

Տեր հայրը, կարծես բարկացավ, և խոսակցի վրա մի քննական հայացք ձգելուց հետո դարձավ մեր հյուրընկալին։

— Ա Մուք, դռնադդ (հյուրդդ) կռվարար մարդ ա բևում (յերևում)։

— Չե, ա դեր, լավ տղա յա, ասենք մի քիչ հանաքչի ա,— պատասխանեց դյուղացին, աշխատելով արդարացնել Գևորսին։

— Տե՛, ունածմդ, ըսենց հանաք կըլի։ ինձ պատին դնմ ա արել Թե՝ հենց դու յես վոր պտի Թարգմանես Ա՛ր, յես Սողոմոն իմաստունն եմ։

Մենք սկսանք ծիծաղել։

— Ա՛յ, տեսնում ես, տեր հայր, յերեկ մի վոքը առաջ խոստովանեյիր Թե չգիտես, այն ժամանակ ինքս կթարգմանեյի,— դարձավ Գևորսը քահանային,— այժմ բացատրեմ, լսի՛ր. ջուր վոչ մտանեք և վորց մտանեննն՝ չտայք Թուլլը կնշանակե Թե՝ դուք չեք մտնում, և ուրիշներ ևս վոր մտնում են, նրանց չեք Թողնում...

— Դիտում եմ, դիտում,— ընդհատեց հանկարծ քահանան, չկամենալով, այսուամենայնիվ, բոլորովին տպավ յերևալ մեր աչքում,— Բրիստոս եդ խոսքերը մեր վարդապետներին ա ասում. յանի Թե՝ (այսինքն) դուք ամուսնությենի մեջ չեք մտնում ու հավ վոր ել ուզում ա մտնի, նրան Թողում չեք։

— Վայ, տունդ չծակվի, տերտեր, — բացականչեց Գևորոսը և բարձրաձայն ծիծաղեց. նրան հետևեցի և ես։

— Ձեր լեզ ծիծաղում, բա ըսիմց չի, — հարցրեց քահանան մի առանձին հավակնությամբ։

— Չե, չե, տեր հայր, — մեջ մտա ես. Քրիստոս արքայության համար է խոսում, և դպիրներին ու փարիսեցիներին է ասում թե՝ դուք արքայություն չեք մտնում և ուրիշներ էլ վոր կամենում են մտնել, թույլ չեք տալիս նրանց։

— Դե, հեր սրհնած, ամուսնությունն էլ արքայության նման բան ա, ես ըսկի շատ չեմ յանդլիշ յեկել (սխալվել), — ժպտալով ասաց քահանան և ապա դառնալով Գևորոսին հարցրեց.

— Մի ասա տեսնեմ՝ ինձ խի ես ըտենց հարցուփորձ անում։

— Ա՛յ թե ինչու։ Մենք յեկել ենք ձեր յեկեղեցին այցելելու և տեսնում ենք սրա առաջ այս վողորմելի բանջարանոցը, վորի մեջ միայն մի քանի ածուներ ունես դու։ Միևնույն ժամանակ այստեղ հոսում է այս հորդ առվակը, վորից դու կարող ես ոգտվել և յեկեղեցու առաջ, այս ահագին տարածության վրա ծառեր տնկել, զրոսարան շինել, իսկ այդ ծառերը ոգուտ կբերեին քեզ, քեզ յեկեղեցուն և քո ժողովրդին։ Բայց դու չես արել, վորովհետև, ինչպես Մուքին ասում է, ետ չունես։ Հարցնում ենք սրան թե՝ ինչու դուք, դյուղացիներդ չեք անում, պատասխանում է թե՝ ետեր հայրը չի թողիլ։ Ա՛յ, հենց դրա համար էլ կամեցա հասկացնել քեզ թե՝ Քրիստոսի այն խոսքը, վոր ասում է՝ ըղուք չեք մտնում և ուրիշներ էլ վոր մտնում են, չեք թողնում, հենց ձեզ նման հովիվների համար է ասված։

Տեր Մակուչը մի դժգոհ հայացք ձգեց մեր հյուրընկալի վրա և ապա դառնալով Գևորոսին՝ ասաց.

— Հեր սրհնած, ես յեղցումը (յեկեղեցում), ինձանից առաջ, մինչև տասը, տասներկու քահանա ծառայել են, ծերացել ու մեռել։ Դիփուկանց գերեզմաններն էլ, հրես, ըստի, յեղցու քամակինա, ուզում եք, դնանք մի մի շանց (ցույց) տամ։ Ընդունցից վիրն ա ըստի մի չուխ (վոսոի կտոր) տնկել, վոր յես տնկեմ։

— Նրանք չեն արել, դու արա, դու բարի սրինակ յեղիր քեզանից հետո յեկողներին։

— Մի քամ եղ ինչ ոգուտ պտի բերի ինձ, յա (կամ) յեղցուն։

— Նախ այն, վոր այս չոր գետինը կծածկվի ծառերով, իսկ ծառաստանը ավելի լավ է, քան թե չոր տափաստանը։ Ծերկրորդ՝ յեկեղեցու շրջապատի ողը ավելի մաքուր և առողջարար կլինի, իսկ տեսարանը՝ դյուրական. յերրորդ՝ տնկածդ ծառերը պտուղ կբերեն, վորից թե դու կոգտվես և թե յեկեղեցին։ Չորրորդ...

— Դե, մի խրե (մի քիչ) սպասիր, — ընդհատեց քահանան Պետրոսին, և ապա կրթնելով գավազանի վրա, մի առանձին, հեղինակավոր յեղանակով շարունակեց. — վորդի, դիտաս, ինչ կա, խոսիլը հեշտ ա քանց անիլը։ Մի բան պատմեմ լսիր։ Մի քսան որ սրանից առաջ մեր հաջորդը վանքն եր գնում, քաղաքից գալիս մեր գեղումն անցավ. շնորհակալ եմ, պատվեց. յեկավ մեր տանը գինջացավ (հանդստացավ), հաց կերավ. վերջը ասեց. — «Տեր Մահուչ, գնանք մի ձեր յեղբին տեսնենք» — ծառա յեմ, ասացի, հայր սուրբ, գնանք։ Վեր կացանք յեկանք։ Ջյոխվին ել մեզ հետ եր, սուղիան ել, մի յերկու ել գեղի իշխան (առաջավոր) մարդիկ։ Վարդապետը հենց վոր յեղբին մտավ, աչքերը մի դես ու դեն դցեց, ինքն իրան փնթփնթաց ու ասեց. «Տեր Մահուչ, ես խի յեղբին անդարդ ես պահում» — Վինց եմ անդարդ պահում, հայր սուրբ, հարցրի յես. — «Վինինց ես անդարդ պահում, ասեց, վոր ախ, ես սուրբ սկիհի տակը մի աբրեշում աղլուխ չես դցում. ես ավետարանը մի գառ շորում չես փաթաթում. ես առենին կազմել չես տալիս. յա չէ, ես ինչ պատկեր ա, վոր դրել ես սեղանի վրա, քանց Բրիսառս կըլի։ ես հու դուխտերը մալտկան ա։ Ինչ մեղքս ծածկեմ. շատ նիկացա (վրդովվեցա), ամա ինչ կարի անիլ. իշխանավոր եր. ասում եր. պատ սուս կենայի։ Վերջը յերբոր խոսքը կարեց, ասացի. — Հայր սուրբ, ծառա յեմ կարգիդ. իրավունք կտաս վոր խոսեմ. — հա, խոսիր, ասեց. Թե քեզ արդարացնելու բան ունես, ասա — ես ա յես ել ես առակն ասեցի։ — Մին անգամ, հայր սուրբ, ասեցի մոլլա Նասրեդինի կնիկը գնում ա շահին գանգատվում, Թե շահն ապրած կենա, իմ մարդը ինձ կուշտ փորով հաց չի տալի, ինձ համր շոր չի առնում. ախ, տեսնում ես, տկլոր եմ, ասում ա, ես եմ, ես եմ. կնիկը հա պիտաս, վոր խոսիլը կգնց ել տաղ չի անիլ (չի լռիլ)։ Շահը բարկանում ա ու ես ահաթին փարաշ գրկում, մոլլա Նասրեդինին բերել տալիս։ — Ծը, մոլլա, ասում ա, ձեր յուչյուն արվադնա խորակ ալմըրսան — հրամանքդ Թուրքերեն պիտաս, — խոսքն ընդհատելով հարցրեց քահանան Պետրոսին։

— Վոչ, լավ չեմ հասկանում, — պատասխանեց վերջինս։

— Լավ, քեզ հայերեն կասեմ, ամա հայր սուրբին Թուրքերեն պատմեցի. — հա, ասում ա, ախ մոլլա, խի կնկանդ համր կերակուր չես առնում, վոր մի կուշտ ուտի. խի նրա համր մի քանի ձևոք շոր չես առնում, վոր մինը մաշելուց, մեկելը հագնի։ Մոլլան պատասխանում ա. — Շահն ապրած կենա, ասում ա, դրա համր ոխտը մանի (պատճառ) ունեմ։ — Վիրն ա ոխտը մանին. մեկ մեկ ասա, հրամայում ա շահը. — առալջինն են ա, ասում ա մոլլան, վոր չիրսում մի շահի փող չկա, յերկրորդը... Մնացած

վեց մանին դլխիդ աված, — ասում ա շահը. կորի դնա, Հմի դուն ես, ասեցի, հայր սուրբ, ախր փող վոր չկա, յես վիրդիան աբրեշում աղլուխ առնեմ, վիրդիան զառ ճոթ դառնեմ. վինց դուխտրոր մալականը վեր ունեմ տեղն սրինավոր Ջրխառոս դնեմ։ — Ըհը, — ասում ա հայր սուրբը, — ևսքան ժողովուրդ ունես, կարում չես մըշնին մին աղլուխ առնել տալ, մըշնին մի զառ ճոթ. յա խը վեդունց Սարդսի տղին դրում չես, հրեն Թիֆլիղ նստած ա, մին լավ Ջրխառոս առնի զրկի։ Ասում եմ, հայր սուրբ, ծառա յեմ քե, ախար ջեն վող եր վոր եղը կաղ եր», հիմի էլ ձվ ա տերտերի խոսքին մտիկ տալի, էլ վիրդիան ա հավատ ծնացել, բարեպաշտութին ծնացել. առաջ դրուստ ա, քահանաներն ին ժողովրդին պլոկում, ամա հըմի ժողովուրդն ա քահանի վրեն ընկել՝ ուզում ա հագի փարաջեն հանի, յա չե, դլխի գդակը թոցնի։ Մի կտոր հացը վոր ուտում են, հենց դիտում են թե՝ հարամ ա, տեղից վեր կացողը մեր դլխին ա բամփում (խփում), էլ ասում չեն թե ինչ ենք ավել ես խեղճերին, վոր հսքան պահանջում ենք։ Հիմի, ասում եմ, ես այսմաւմը (ժամանակում), վոր յեղբայրն ուզում ա յեղբորը խեղդի, վորդին ուզում ա հորը ծախի, մարդ կարուն բարեգործութենի անուն տալ։ Հայր սուրբը տեսավ, վոր դրուստ եմ ասում, են ա սուս կացավ։

— Հըմի դու յես, վորդի, — դարձավ քահանան Գևորսին, — ասում ես ըսաի բաղ շինի, բանչա շինի։ Ծուռ չունեմ, լավ ես ասում, ամա պըտի են էլ մտածես թե՝ ես քյասիբ դերը վիրդիան ըտունք անի։ Ախար ըսաի հող փորիլու, ծառ տնկիլու, չուխար (ցանկապատ) քաշիլու հըմար փող ա հարկավոր, թե վչչ։ Ծա յես փող վիրդիան գիննեմ. փող վոր ունենամ, խը դհենց դարտակ բաների կտամ, հրեն, այ, Ծոլա Մարութը թուտմանին իրեք շահի շահ և տալիս. ասում ա, ա դեր, թե վոր հարյուր մանեթ բերես, քեզ տարին տասնութ մանեթ շահ կտամ։ Տասնութ մանեթը գըզում, մի տուն քյուլփաթ (ընտանիք) կկառավարի, ամա հարյուր մանեթն ինձ ձվ ա տվել։

— Ծերեկ դու ինձ համբերություն եյիր քարոզում. — դարձավ ընկերս ինձ՝ ռուսերեն լեզվով, — այժմ ասա, խնդրում եմ ինչպես անեմ վոր չհայհոյեմ այս մարդուն։

— Հայհոյել, ինչու, — հարցրի յես զարմանալով։

— Ինչպես թե ինչու. մերթեն քեզ չեն դայրացնում սրա առարկություններըդ։

— Բնավ։

— Ցավ վոչ էլ այն, վոր սա առչորվում և հարյուր բուբլի ունենալու և այն շահեցնելու առնչվի։

— Ցավ վոչ ել այդ։

— Դու ինձ վրդովում ես։

— Ցեքե արդարությամբ մտածես, չես վրդովվիլ։ Քահանան մեղավոր չի, վոր տգետ է այդ աստիճան։

— Բայց հո մեղավոր է, վոր տգետ լինելով՝ դիմել է քահանայության։

— Վոչ ել այդ դեպքում է մեղավոր։ Մարդուն հաց էր հարկավոր և ահա այդ հացը ձեռք բերելու համար նա ընտրել է քահանայությունը։

— Բայց ախար նա իրավունք չուներ։

— Իրավունք ճանաչելու համար, մարդ, նախ և առաջ, տգետ չպետք է լինի։ Միթե դու կարող ես իրավունքի տեսակետից մեղադրել քո յեղբին, յեթե նա հարևանի բակում փափուկ խոտ տեսնելով՝ մտնենա և ուտե։ Այդ դեպքում հանցավորը վոչ թե յեղբայր դու կլինես, վոր չես կապել անբանին, կամ թե քո հարևանը, վորը չի փակել յուր դուռը։

— Այդ ասելով մենք մեքեր ենք։

— Դու յեկեղեցական ես, վոր ձեռնադրել ես տեր Մակուչին, իսկ հարևանդ՝ ժողովուրդը, վոր իրեն հանձնել է նրա ձեռքը։

— Եդ խոմ ինձանից եք խոսում, — յուր անունը լսելուն պես, ննջ մտավ քահանան, — դե հայելավ խոսեցեք, յես ել հասկանամ։

— Այո, տեր հայր, քեղանից ենք խոսում, — պատասխանեց Գեորգը։

— Բա ինչ եք խոսում։

— Առում ենք վոչ են ժողովրդին, վորի քահանան տեր Մակուչին է։

— Ին յեք ըղենց ասում, վորդի, — հարցրեց քահանան այնպիսի մի ճնշված ձայնով, վոր յես խղճահարվեցա։

— Վորովհետև դու տգետ ես, — պատասխանեց Գեորգը կոշտ առնասրտությամբ։

— Այդ արդեն չափազանց է, պարոն, — նկատեցի կամացուկ և միևնույն ժամանակ վրդովվելով։

— Ընդհակառակը դեռ քիչ է, — հարեց Գեորգը և ապա դառնալով քահանային հարցրեց. — Դու նեղանում ես, վոր յես տգետ եմ ասում քեզ։

— Ին յեմ նեղանում, վորդի, չանիլ ես, ասում ես, վոր ահիլ (հասարակ) լինես, կմտածես թե ես մարդն ինչ մեղավոր ա, վոր ասում ա տգետ։

— Ինչու՞. ասված վիրքին է ուսումով տգետ։

— Վիճաց թե վորին. այ, մինը հենց քեզ, մինն էլ քո ընկերին, հրեն քաղաքն էլ լիքն ա ձեզ նմաններով։

— Մենք էլ քեզ պես անուսում ենք ծնվել, բայց հետո մեծանալով, աշխատել ենք, չարչարվել և ուսում առել։

— Ծի՛ յես եղենց ասում Գեաբե-ջան, — մեջ մտավ մեր հյուրընկալը. — թե վոր քու հերը, Ավոր ողան չըլներ, դու վիճաց կաբիր հուսում առնիլ։

— Այ, քու հորն ողորմի, ա Մուք, մի ըտենց խոսա յես, տեսնում ես քու դերին նեղն են լծել, — քաշալերեց քահանան դյուղացուն և ինքն էլ, կարծես սիրա առնելով, դարձավ Գեաբոսին.

— Հը՛, ըսաւր ինչ պատասխան ունես, դե տուր։

— Ի՞նչ պատասխան պիտի ունենամ։ Իմ հայրը, իհարկե, վճարել է իմ ուսման վարձը, բայց յես էլ հո աշխատել ու չարչարվել եմ, որերս պարապ չեմ անցրել։

— Դե լավ, համի լսիր։ Քո հերը փող ա ունեցել, քեզ կարդացրել ա, բա իմ հերը, վոր փող չուներ, վիրդիան կարդացներ։ Ինքը մի լեզեճ նախրապան ա լել. քարով, կարկուտով (մեծ դըժվարությամբ) մի կոսր հաց ա ճարել մեզ ուտացրել, մի գազ կտավ ա գտել ծակել, մեր ճիսը դցել, վերջն էլ հանդումը շատ բաց պարկելուց արևի ու անձրևի հետ կռվելուց ու հազար ու մի չարքաշությին աներելուց հիվանդացել, մեռել ա ու մեզ էլ անտեր, անտիրական թողել։ Աստծ ա իմանում թե մենք ու մեր լեզեճ մերը ինչ որեր ենք տեսել, ինչ նեղություններ ենք քաշել։ Մեր ամեն մի թիքա հացը լեղի ու արտասուք ա լել։ Դժար բան ա աղքատությինը, են էլ գեղի միջումը, աստծ վոչ շանց տա ձեզ... Համի, վիրդի, յես վոր են լեզեճ դրությենում հաքան էլ գրաճանաչ եմ գտել, գրել կարդալ եմ սովորել, քանի տարի վանքումը տիրացությին արել ու վերջը ես մենծ գեղի վրա քահանա գտել, ես քիչ բան ա՝ թե վոր մինը քեզ վրա խարջած փողն ինձ վրա խարջեր, ձվ գիդա հըմի փիլիսոփա կլեյի դառած։ Ամա, դու տեսնում ես, ըսկի մարդիփաթին (քաղաքավարությամբ) խոսալն էլ չես սովորել, գրաշխես, վոր ես խոսքը յերեսիդ ասում եմ. սամա յես քու հոր տեղն եմ. հախկ (իրավունք) ունեմ։ Ընչի՞ հըմար եմ ասում, գիտես. այ, դու գարիբ (ոտաբ) տղա յես, յեկել ես մեր գեղը, յես էլ ըստեղի քահանան եմ. շնորհակալ եմ, մենծ ու պստիկ պատվում են։ Բայց յես, վոնց վոր Քրիստոս ասում ա, վոր խոնարհեցցե զանձն, բարձրացցե. յես էլ խոնարվեցի, յեկա վոր բարի գալուստ ասեմ ձեզ, ու որհնեմ, սամա դու իմ գեղակացի առաջ, ինձ անպատիվ արիր։ Աստում ես՝ վայ են գեղին, վոր դու նրա քահանան ես, ասում ես դու ոչխա ես. քիչ ա ըստում, վոր ասես թե հայվան ես։ Ախր

բաներ չեն խոսիլ, վերդի, աշխարհում մինը տգետ կըլի, մինը հուսումնական. մինը աղքատ կըլի, մինը հարուստ. ամա, բոլորի ասածը մեկ ա. վոչ հարուստն ու հուսումնականը պիտի հմայարատանան, վոչ էլ տգետն ու աղքատը վոտի տակ ընկնենն։ Ինչ մնդքս ծածկեմ, վերդի, առաջ մի քիչ դարդ էյի անում, վոր Վեդունց Սարդսի խոսքին լսեցի ու վորդիքս հուսման չղրկեցի։ Ամա հմի փառք եմ տալիս ասածուն, վոր ղրկել չեմ. չուն (վորովհետև) տեսնում եմ, վոր հուսումը մարդին հրեշտակ շինելու տեղ՝ սատանա ա շինում։ Դե վոր բաներց ա, աղբեր, խի չեմ հուսման ղրկում, վոր վերջը փոշմանեմ։

Տեր հոր վերջին խոսքերը տպավորություն արին Գեաբոսի վրա և նա լսեց։ Բայց յես քահանայի սիրտը ամոքելու համար, կամեցա խոսակցությունը մեղմով վերջավորել, ուստի հարցրի.

— Դու, ուբեմն, վորդիներ ունես։

— Վոնց չե, չորս հատ, — պատասխանեց յերեցը, կարծես, պարծենալով։

— Հասակավոր են նրանք։

— Մենծը քսանութ տարեկան ա, միացած յերեքը մինը մեյց երկու տարով պակաս են։ Զորսն էլ աժդահա (հսկա) տղամարդիկ են։ Երկուսին պսակել եմ. երկուսին էլ, թե վոր աստած հաջողի, դյալաջաղ (դալ տարի) պիտի պսակեմ։

— Զորսին էլ, ուբեմն, անուսում ես թողել։

— Չե, վանահոր մատ քիչ ու միչ կարդացել են. ընենց վոր իրանց բանը յոլա կտանեն։

— Դու, ուբեմն, չեյիր կարող, դռնե, քաղաքի դպրանոցը ուղարկել նրանց, — կրկին մեջ մտավ Գեաբոսը և այս անգամ, արդեն, զրգռված։

— Ախի չեյի կարող։

— Բա ինչու չուղարկեցիր, մեղք չե՞ վոր չորս աժդահա տղամարդ, ինչպես վոր դու յես անվանում նրանց, անուսում ես թողել։

— Ընդհուբ վոր... ամա չե, ըտուբ մասին էլ Վեդունց Սարդիսը կասի։

Տեր հայրը դիտմամբ խուսյա տվավ Գեաբոսին պատասխանելուց, վորպեսզի նորանն վեճի չբռնվի նրա հետ։

— Ո՞վ է Վեդունց Սարդիսը, — հարցրի յես։

— Հրենն այ, տունն ընդի ա. են մենծ մենծ չընարուցը տակին, — ասաց քահանան, ցույց տալով դյուղի հարավակողմը, ուր մի ընդարձակ դարևանդի վրա բարձրանում էյին մի խումբ գեղջուկ սոխներ։

— Վարդիքը քոնն են, ինչու՞ դու չես բացատրում թե՝ ինչու՞ չես նրանց անուսում թողել, — հարցրեց Գեարոսը։

— Վարդիքն իմն են, ըտենց ա, ամա Սարգիսն եր սաբաք (պատճառ), վոր նրանց ուսման չղրկեցի։ Ա՛յ, թե ուղում եք, գնացեք հարցրեք։ Նա խելոք մարդ ա, սուտ չի խոսիլ։ Ղորդ ա, գեղացի ա, ամա հարիր քաղաքացու խելք ունի գլխումը։ Հարցրեք, նա ամեն ինչ տեղն ու տեղը կասի ձեզ։ Դեհ, շատ խոսեցի, վարդիք, գլուխներդ ցավացրի, կրախշեք, հըմի չես գնում. բարով եք յեկել, բարով ել գնաք...

Այս ասելով տեր հայրը վողջունեց մեզ վերջին անգամ և յերեսը դարձնելով՝ ծանրաքայլ հեռացավ։

Գ

Ճանկանալով շարունակել մեր պատմյալը, մենք իջանք դեպի ձորակն, ուր հոսում եր գյուղի լեռնային վտակը։ Ջնայելով ջրի վոքրությանն, նա շարունակ խոխոջում, աղմուկ եր հանում, վորովհետև իջնում եր ատիճանավոր բարձրություններից, վորոնցից յուրաքանչյուրը, առանձին առած, ներկայացնում եր մի գատ դեղանկար պատկեր։ Վտակի ափերը քերելով, մենք հետզհետե դիտում էինք այդ պատկերները և զվարճանում։ Մի տեղ ժայռերը միմյանց վրա կուտակված, փորձում էին, կարծես, վտակի հոսանքն արգիլել, իսկ սա ավազով ու խճով նրանց խորշերը լցած՝ յուր փրփրուն ալիքները գահավիժում եր ժայռերի բարձունքից։ Մի ուրիշ տեղ մոշենին, վայրի վարդը, կամ նունենին գետակի կրկին ափերը գրաված, իրենց ճկուն վոստերը դեպ իրար ձգելով և իրար շաղափառելով, կազմում էին ջրի վրա կանաչազարդ մի կամուրջ և այդպիսով հոսանքը մեր աչքերից ծածկում։ Մի յերրորդ տեղ ուռենին, կանաչազեղ վոստերն աջ ու ձախ տարածելով, հովանավորում եր մի փոքրիկ ու վճիտ լճակ, վորի ջուրը, կարծես, կարկաչելուց հոգնած հանգստանում եր այդտեղ ժայռերի խորշում և յուր ջինջ հայելու մեջ արտացոլում թե՛ ափի կանաչազարդ ուռենին, թե՛ ժայռերն ու թուփերը և թե՛ յերկնքի կապուտակը։

— Տեր ասածդ, ինչու՞ մարդիկ այս գեղազարդ վայրերը թողած, շնչասպառ են լինում ապականությամբ լի քաղաքներում։ Մթթե նրանցից ամեն մեկի համար չի գտնվիլ վայելչության մի անկյունն այս ազատ լեռների մեջ, այս սիրուն ջրերի ափին, այս կապուտակ յերկնքի տակ, բացականչեց ընկերս՝ շրջապատող տեսարաններից զմայլվելով։

— Իսկ դու կարծում ես թե՝ բնության այս գեղեցկությունները անպատրաստ կմնայինք, եթե մարդիկ հաստատվեյին այստեղ, — հարցրի ես։

— Բնության գեղեցկությունները... ինչու՞ չէ, ոմն կպատրաստեր նրանց։

— Նույն ինքը մարդը։ Նա չի կարող ապրել առանց այդ գեղեցկությունները յոլծանելու, առանց յուր շուրջն ավեր ու ապականություն սփռելու։ Ընդհակառակն, ավելի լավ է, որ մարդկանց մեծամասնությունը խռնված և քաղաքներում, այդպիսով, դառնա, բնությունը ավելի քիչ և աւտժում և նրա գեղեցկությունները ավելի քիչ են աղարտվում, իսկ սրանցով զմայլիլ գիտցող սակավաթիվ մարդկանց համար բնության մեջ տակավին մնում է մի բան, որը զանև նրանք կարող են վայելել։

— Դու իրավունք ունես... — պատասխանեց ընկերս՝ մի վոքը մտածելուց հետո, — մարդը, արդարև, բնության յոլծանիչն է. իզուր են գեղծավորները «բնության զարդ» անվանել նրան. իմ կարծիքով խողը ավելի քիչ է ջնաս պատճառում բնությանը, քան մարդը։ Ինչ ես կարծում, Մուքի, — դարձավ ընկերս հյուրընկալին, — եթե վեց ամիս շարունակ հարյուր խող պահեյիք այս ձորում, նրանք շուտ կվնչացնեյին այս տեղերը, թե եթե այդքան ժամանակում հարյուր մարդ ապրեր այստեղ։

— Հեր սրհնած, խողն ինչ ա, որ ինչ փչացնի, — պատասխանեց դյուղացին ժպտալով. Նա մի խեղճ հայվան ա, թե կաքաուկից բանից դասավ կուտի, թե չէ, ան ա սաղ օրը խոխռալով ման ա գալու ու իրա համար ապածի, ծառը չի պոկելու, քարը չի շուռ տալու։ Ամա թե վոր ըսոհդ հարիր մարդ ապրի, վեց ամիս չէ, վեց շաբթումն էլ վերանա (ավերակ) կանի սաղ ձորը։ Գալերը կրակ կտա, ծառերը կկոտրատի, կանաչը կմաուտաուի (կապականե), յես վոր մեկն ասեմ։

Այսպես խոսակցելով մենք անցանք ուրիշ կողմեր, դիտեցինք հինավուրց ջրատարը՝ յուր հետաքրքրող շինքով ու կազմությամբ. պատեցինք դյուղացվոց մի քանի պարտեզները, վորոնք ընկած էյին գետի ափափարակի ուղղությամբ, նայեցինք ջրանց մեջ զանվող մեղվանոցները, իրենց հնաձև, շաղախապատ փեթակներով, և, վերջապես, նորեն շրջան առնելով՝ բարձրացանք դեպի դյուղը։

— Ճերեկ, հիշում ես, յերբ արևը այրում եր, ահա այս սոսիներին եյի ուզում հասնել, — սկսավ խոսել Պետրոսը՝ յերբ մտանք այն դարևանդին, վորի վրա քահանայի յուլց տված սոսիները էյին բարձրանում, — այժմ էլ բավական հոգնած ենք, անցնենք այս լանջի վերը և հանգստանանք այդ սիրուն ծառերի տակ։

Т-7350
28692

— Անցնենք, — ասացի յես և ապա դառնալով մեր հյուրընկալին՝ հարցրի. — վիրինն են այդ սոսինները։

— Սոսին վիրն ա։

— Ա՛յ, այս ծառերը։

— Բա եդ չընար ա, դու խի սոսի յես ասում, — հարցրեց նա։

— Հայերեն չինարին սոսի կասեն, — բացատրեցի յես։

— Վոր քահենց ա, բաս չընարը Թուրքերեն ա։

— Այծ, — հաստատեցի յես։

Գյուղացին գլուխը շարժեց և ապա նորեն դառնալով մեզ՝ հարցրեց։

— Ես մենք վոր չընարու անունն էլ հայնվար ասելը դիտում չենք, մեր ճարն ինչ կըլի, հավատաս, քանի գնանք ենքան ավելի հայվան դառնանք։

— Ինչու՞, բարեկամ, մի բան չիմանալով մարդ հայվան կըդառնա, — հարցրի յես ժպտալով։

— Աղբաթիխեր, ես որ մի բառը կմոռանանք, եդուց երկուսը, դալ սրն իրքը. մին էլ ենա կտեսնես, վոր խոսքի կեսը հայերվար ենք խոսում, կեսը՝ Թուրքերվար։ Մարդ վոր իրա ազգի լեզվով խոսիլը գիտա վոչ՝ հայվան չի բա ինչ ա։

Ընկերս նայեց ինձ խորհրդավոր հայացքով և հարցրեց.

— Ի՞նչպես ես գտնում այս գյուղացու կարծիքը։

— Շատ բանավոր, — պատասխանեցի յես. ապա Մուքիին դառնալով՝ նկատեցի, — ինչու՞ չասացիր թե՝ ուշն են պատկանում այս սոսիները։

— Ես սոսիքը վեդունց Սարգսինն են, — պատասխանեց նա։

— Հապա վիրն և նրա տունը, — հետաքրքրվեցա յես։

— Չենց, այս ծառերից դենը. կտուրն ըստիան երևում ա, — ցույց տվավ գյուղացին։

— Ի դեպ, այդ վեդունց Սարգսից մի հարցնենք՝ թե ինչու՞ յև քահանային արգիլել յուր վորդիքը ուսման ղրկելու, — խոսեց Գեորգը։

— Անշուշտ կհարցնենք, յերևի մի պատճառ և ունեցել, բայց նախ հանգստանանք այս սիրուն ծառերի տակ, — հարեցի յես։

— Լավ կըլի, գնացինք. եդ ծառերի տակը վոր նստենք, կմխիթարվենք. յես էլ մի մեր դյումոշը (զոմոշը) ընդունեմ, էլ շատ յեդ կգամ տուն, — ասաց հյուրընկալը։

— Դու ուրիշն չես գալիս մեդ հետ, — հարցրեց ընկերս։

— Ձև, ձեդ մատաղ, ես անգամ դուք մենակ գնացեք, — պատասխանեց գյուղացին և ճանապարհը ծռեց։

Ըստ յերևույթին, նա չկամեցավ ընկերանալ մեզ, վախենալով թե՝ մի գուցե Պետրոսը դարձյալ յուր անտակտ հարց ու փորձով ամաչեցնե իրեն Վեդունց Սարգսի առաջ, վորի ով լինելը սակայն, մենք չդիտեյինք։

Ցերբ այս մասին իմ կարծիքը հայտնեցի Պետրոսին, նա ուսերը թոթվելով ասաց.

— Շատ կարելի յե... բայց և այնպես, նա ինչո՞ւ պիտի ամաչի, յեթե յես, մինչև անդամ, շատ հիմար բաներ խոսեմ։

— Կամաչի նրա համար, վոր դու յուր հյուրն ես։ Չե՞ս լսել հայկական առածը թե՝ ագիժը չի ամաչիլ, դժի տերը կամաչի»։

Պետրոսը հարեց աչքերը վրաս, կարծես, կամենալով հարցնել թե՝ մի՞թե ինքը այնքան անմտաբար և խոսում, վոր ամաչեցնում և նույնիսկ մի հյուրընկալ դյուղացու։

— Այդպես և, բարեկամ,— շարունակեցի յես,— անհամբերությունը միասում և ամենքին, իսկ քեզ՝ առավել ևս։ Ներիր եմ տալիս չշտապել յերբեք կարծիքներ հայտնելու, յեթե դիտես դրա համար ժամանակ ունիս դեռ։ Հին փիլիսոփաների պատվերը ասիչ խոսիր և շատ լսիր» ամենից ավելի դու պիտի կատարես։

— Այս անդամ պիտի աշխատեմ բոլորովին չխոսել, միայն թե դու կարողանաս ինձ հետաքրքրող հարցերն առաջարկել այդ դյուղացուն։ Ճիշտն ասած, յես շատ եմ ցանկանում իմանալ թե՝ ինչո՞ւ նա յուր հարևաններին այդպիսի հետաղրքիր խորհուրդներ և տալիս։ Ցես շատ հայ դյուղերում եմ յեղել և միշտ ել դրուժցներ ունեցել դյուղացիների հետ, բայց ինձ յերբեք չի պատահել հայ գնդջուկի, վոր ուսման և կրթության դեմ խոսեր։ Ընդհակառակն, ամեն մինի փափագը յեղել և այն, վոր կարողանա ուսում տալ յուր վորդուն։ Ցեվ այդ յես համարել եմ հայ դյուղացու բնավորության համակրելի գծերից մինը։ Այժմ ինձ թվում և թե՝ այդ Սարգիսը, վորի մասին խոսում ենք, նախապաշարյալ ապուշին մեկն և լինելու։

— Դու դարձյալ շտապեցիր քո կարծիքն հայտնելու, առանց այդ մարդուն տեսած կամ լսած լինելու,— նկատեցի յես։

— Ով վոր ընկերին խորհուրդ և տալիս՝ թողնել վորդուն անուսում, նրան կարելի յե տպուշ անվանել, նու յնիսկ առանց նրան տեսած կամ լսած լինելու։

— Բայց կարող և պատահել, վոր այդպիսի խորհուրդ տալու համար մարդ ունենա մի բանավոր պատճառ։

— Բանավոր պատճառ... խելապարվել ես, ինչ և, մի՞թե կարելի և դրա համար բանավոր պատճառ ունենալ։

— Գուցե այդ Սարգիսն ունի։

— Անկարելի չեւ Մի մարդ, որ պաշտպան և հանդիսանում ուժիւթեյան, նա չի կարող վորևե ուրիշ պատճառ ունենալ, բացի այն, վոր կլինի ապուշ, կամ խելագար։ Իսկ այդ Սարգիսը չեթե ապուշ չեւ, անշուշտ այն ցեցերից մինն եւ, վորոնք այսպիսի անհայտ անկյուններում ապրելով՝ զվարճութեյուն են համարում իրենց համար, ժողովրդի միաքն ու հոգին թունավորելը։ Մեթե, արդարև, կարելի չեւ ուսման ու դիտութեյան դեմ խոսել. այդ միևնույն եւ թե ասես՝ խավարն ավելի դյուրական եւ քան լուսյը։

— Ցերբեմն խավարը վոչ միայն դյուրական, այլ և ավելի ազատավետ եւ լինում, — նկատեցի ես ժպտալով։

— Լռիր, լռիր, խելքդ ցնդել եւ. լավ եւ վոր վոչ վոք չեւ լսում մեզ, այդ խմասութեյունը վերահեղից ես ամբարել... իրար յեռևից վրա ասվալ գեաբոսը։

— Տեսանք վոր ելի շատակեցիր։

— Հապա ինչ անեմ, մինթե խավարը յերբևիցե կարող եւ դյուրական, կամ ազատավետ լինել մարդուն։

— Իսկ յեթե մարդու աչքերը հիվանդ, կամ ցնասվածե լինեն։

— Այդ ուրիշ բան եւ, դու նյութական լուսյի ու խավարի մասին ես խոսում։ Ջափարանց պայծառ լուսյը, այո, հաճելի չեւ լինում ցնասված աչքերին։

— Հոգվո ու մտքի աչքերն էլ յերբեմն ցնասվում, կամ հիվանդանում են։

— Ուրեմն դրանց էլ հոգեկան կամ մտավոր խավարն եւ ոգտակար։

— Ցեթե չեւ ոգտակար, դեթ, հանգստութեյուն եւ բերում։ Կան դեղեր, վորոնք չեն բուժում սուր ցավ պատճառող հիվանդութեյունը, բայց ան ժամանակ թմրեցնում են սրա պատճառած կրակիծը։ Հիվանդն այդպիսի դեղը հաճութեյամբ եւ ընդունում։

— Այդ մեկի միտքը չեմ հասկանում։

— Այդ էլ կհասկացնեմ։ Վեդունց Սարգսի կարծիքները լսելուց հետո։

Այսպես խոսակցելով մենք ավարտեցինք դարիվերը և մոտեցանք սոսիներին։ Դրանք հինավուրց ծառեր էին, թվով մի քանի հատ, վորոնք իրարից անջատ բուսած էին գյուղի վրա իշխող այդ դարեվանդի վրա։ Նրանց վիթխարի բունները՝ բարձր ու դեղուդեղ բազուկներով և լայնատարած վոստերով՝ գրավել էին հարթավայրի մեծագույն մասը։ Սազարթախիտ ճյուղերի հովանին ծածկում էր վոչ միայն կանաչազարդ տափարակն ու դարեվանդի լանջերը, այլ և Վեդունց Սարգսի տունը, վոր գտնվում էր հարթավայրի արեգընդդեմ կողմը և արտաքինով զանազան-

վում եր դյուղի հասարակ մեներից։ Նա առջևն ուներ ընդարձակ բակ, որի մի մասում դեռևղված էին դոմն ու հորթանոցը, իսկ յետևից՝ պատատու ծառերի մի պարտեղ, որ վոռոգվում եր լեռնալանջի կողմից իջնող մի առվակով։

— Ի՞նչ հրաշալի հովանոց է, ճիշտ որ Աստվածաշնչեն, — բացականչեց ընկերս և նստելով փոքրիկ կոճղի վրա, որ դրված եր սոսիներից մինի տակ իբրև նստարան, հանեց գլխարկը, ճակատի քրտինքը սրբելով, շարունակեց, — նստիր, բարեկամ, և բացատրիր ինձ թե՝ ինչու ջանասուր լավ տանձը արջն է ուտում։

— Վայր տանձի և վեր արջի մասին է խոսքը, — հարցրի յես, նստելով նույնպես կոճղի վրա։

— Ահա այս սիրուն հովանոցի, որ արժանի յեր գեղանի մի իշխանուհու սեփականութիւնը լինելու, բայց որ վիճակվել է մի ապուշ գյուղացու։

— Մի գեղանի իշխանուհի... այո, իրավունք ունիս, — հարեցի յես ժպտալով, — և, անշուշտ, այնպիսի իշխանուհի, որ լիներ նրբատաք, քնքուշ և գեղահասակ, գրավիչ դեմքով, կախարդող աչքերով և միևնույն ժամանակ, անմեղ՝ ինչպես հովտի շուշանը և կյանքով լի՝ ինչպես գարնան առավոտը...

— Դրանք արդեն ավելորդ մանրամասնութիւններ են։

— Հապ չե, լսիր։ Ցեղ այդ գեղեցկուհին ապրում լիներ այստեղ՝ հոյակապ դղյակի մեջ, շրջապատված գեղանի նաժիշտներով։ Ցեղ մի գեղեցիկ որ, դու քո վորսորդական հագուստներդ հագած, վորսագի մախաղն ու հրացանը ուսիդ, վորսկան շունը յետևիցդ ձգած՝ անսպաս կերպով հայտնվեիր այստեղ։

— Կատակդ թող։

— Ցեղ տեսնեիր վոր այս սոսիների հովանում, շքեղ գահավորակի վրա հանգստանում և դղյակի մանկամարդ տիրուհին և Մորփեոսը իր քնարեր թևերով նրանց և սփռել նրա գեղանի աչքերին, իսկ լեռնից իջնող այս առվակը որոր և յերգում նրա ականջին...։ Դու, իհարկե, խոհուն հիացմունքից այլայլված, յետ կքաշվեիր այս բնի յետևը և դողունի հայացքով դիտելով գեղեցկուհուն՝ քեզ ու քեզ կասկիր. — «Ո՛, յեթե յես իրավունք ունենայի չոդել սրա առաջ և ապրելս...։ Ցեղ ապա մտածելով, որ դու այդ կարող ես անել, առանց գեղեցկուհուց տեսնվելու և նրանից նախատվելու, կչոգեկիր և կսպոթեիր... Բո այդ վարմունքը, իհարկե, կզարմացներ քո շանը և նա յուր այդ զգացմունքը արտահայտելու համար՝ կսկսեր հաչել։ Այդ անսպաս ձայնից կզարթներ գեղեցկուհին և տեսնելով քեզ յուր առաջ ծնկաչոք, բարկացայտ ձայնով կբացականչեր, — «Ո՞վ ես դու՝ հանդուգն արարած, վոր

համարձակվում ես խանգարել իմ մենավոր հանգստությունը։ Ցավ մի ակնթարթում դուրս կթափվեիր դղյակից նաժիշտներն ու ծառաները և պարանով կասկպելով քեզ, կառաջնորդեիր դեպի դղյակի զնդանը...

— Լավ, բավական է։

— Սպասիր, վերջացնեմ։ — Հետո, մի սիրուն որ, դեղանի իշխանուհին յուր պարտիզում զբոսնելիս կլսեր, որ մինը յերգում է յուր զնդանում մի շատ տխուր, բայց հրաշալի յերգ։ Նա հանկարծ կմտաբերեր բանտարկյալ վորսորդին, բերել կտար նրան յուր մոտ և մանրամասն հարցաքննելով՝ կիմանար որ դու չոգել եիր իր առաջ վոչ թե իրեն անարդելու, այլ պաշտելու նպատակով։ Ապա քո արկածներով լի անցյալի պատմությունը լսելով կգթրովվեր քեզ վրա, կսիրահարվեր և հետդ ամուսնանալով՝ քեզ իր սրտի և դղյակի իշխան կկարգեր։

— Ի՞նչու համար է այդ կատակը, — հարցրեց ընկերս, այս անդամ արդեն մի քիչ բարկանալով։

— Նրա համար, որ դու և քեզ հետ ել շատերն այն յերիտասարդներից, որոնք, իրենց ասելով, պիշեր ու ցերեկ ժողովրդի ցավերը դարմանելու վրա յեն մտածում, որոնց մշտական ղրույցը դիտության վերջի խոսքի, բարձր գաղափարների և ազատ մտքերի համար է լինում, չեն կարողանում հանդուրժել, յերբ տեսնում են, որ խեղճ արջին մեկը անտառում դեղ է մի տանձ և ուտում է. չեն կարողանում ներել, որ այդ սիրուն սոսինները պատկանում լինին մի խեղճ գյուղացու և վոչ թե մի դեղանի իշխանուհու։ Կարծես, բավական չե, որ այդ իշխանուհի կոչվածները և՛ գեղեցիկ են, և՛ հարուստ, և՛ բաղդից դուրգուրված, դեռ նրանք պետք է սիրեն նաև յերկրադնդի բոլոր դեղեցիկ անկյուններին։ Կամ արդյոք այդ խոսքի մեջ խելք, արդարություն, կամ ազատ մտածություն, վորով սիրում եք դուք ամեն տեղ պարծենալ։

— Սպասիր, բարեկամ, դու ասածս չհասկացար, ուստի և իմ վերաբերմամբ արած դիտողությունդ անտեղի յեւ Ցավ, իհարկե, միշտ կցանկանամ, վոր յերկրադնդի վրա գտնված լավագույն անկյունները, պարարտ հողերը, պտղաբեր հովիտները և այլն, պատկանեն միայն խեղճերին, ճակատի քրտինքով ապրողներին և վոչ թե բաղդից յերես առած մարդկանց։ Սակայն սոսինների մասին ասածս բացառիկ նշանակություն ուներ, հետևաբար և դու ուրիշ կերպ պիտի հասկանայիր։ Ցավ ուզում եյի ասել թե՝ վորովհետև Վեդունց Սարգիսը մի խավարամիտ և ուսման ու գիտության դեմ խոսող ու գործող մարդ է, ուրեմն չարժե, վոր այս գեղատվայրը պատկանի նրան։

— Լավ, յունթաղրենք թե այդպես է, հապա ինչու՞ չասացիր թե՝ լավ կլիներ, որ այս սոսինները պատկանեին մեր հյուրընկալ Մուքին, կամ մի ուրիշ, քո կարծիքով ավելի ուսումնասեր դյուղացու, այլ ցանկացար, որ նա լինի մի գեղանի իշխանուհու սեփականություն։

— Ասացի հենց այնպես, առանց մտածելու։

— Ուրեմն ասել ես ավելի անկեղծորեն, քան կարող էիր ասել՝ չթե մտածելիր։ Առաջին դեպքում դու արտահայտել ես քո իսկական ղյացմունքը, մինչդեռ յերկրորդ դեպքում պիտի աշխատեիր վարագուրել այդ ղյացմունքը և ասել այն՝ ինչ որ, առհասարակ, ընդունված է ասել՝ լուսամիտ, և աղատախոհ յերևալու համար։

— Սխալվում ես։

— Ինձ համար նշանակություն ունի այն, ինչ որ ասացիր առանց մտածելու։ Մի աշխատիր արդարանալ։ Դրանով միայն ծանրացնում ես հանցանքդ։ Թե դու և թե նրանք, որոնք հրապարակին ազմկում են արդարության և աղատամտության անունով, սուտ են միշտ ու կեղծում։ Ցավ դուք մեզավոր չեք։ Մի ժողովուրդ, որ մոտ հազար տարի ապրել է սարկական կյանքով, չի կարող ծնել այնպիսի վորդիք, որոնք ազատ մտածելու հետ միասին կարողանային, նաև, ազատ գործել։ Ազատամտության դլխավոր հատկանիշն այն է, որ, նախ՝ ներողամիտ աչքով նայես ընկերոջդ թերության ու սխալանքների վրա, յերկրորդ՝ ցանկանաս որ նա ևս վայելե այն բարիքները, ինչ որ դու վայելում ես, կամ կցանկանայիր վայելել, և յերրորդ՝ որ նրան էլ իրավունք տաս խոսելու կամ գործելու այնպես, ինչպես որ դու կես խոսում կամ գործում։ Բայց ձեղանից քանիսի՞ մեջ կարելի կ՚դտնել այս որինակ աղատամտությունը։ Թուրքը մի առած ունի, որ ասում է՝ ձիաթի հետ մտածը՝ հոգու հետ դուրս կդա։ Այս ճշմարտության մենք հանդիպում ենք ամեն քայլափոխում. թե ինչպես, բացատրեմ։ — Մեր խոսքն ու գործը, առհասարակ, չեն հարմարում իրար։ Խոսքն առաքինական է, գործը՝ մոլեկան։ Ներող ենք կարդում աղատամտության և արդարության համար, բայց առանց խղճահարվելու բռնանում մեր մրցակցի վրա և կամ ընկերի իրավունքը հափշտակում։ Դրվատում ենք դութն ու բարեգործությունը, և, սակայն, առանց ամաչելու, հանում մեր յեղբոր վերջին շապիկը, առարկելով թե՝ դա մեղ է պատկանում։ Ինչու՞ ես այս այսպես։ Նրա համար, որ ձիաթի հետ միասին սարկության, բռնության և անարդարության շատ սոսկմեր են մտել մեր սրյան մեջ և նրանք միայն մեր հոգու հետ պիտի դուրս գան։

— Դու չափազանցում ես։

— Ձեմ չափազանցում, այլ ասում եմ ճշմարտությունը։ Ցավ այդ դեպքում ել, ինչպես ասացի, անպայման չեմ մեղադրում վոչ քեզ, վոչ քո նմաններին։ Իզուր և աշխարհը հայհոյում հրեաներին, թե նրանք չեն պարապում ծանր աշխատանքով, թե նրանք յերկչոտ են, խարդ, վաշխառու և այլն։ Այդ հո իրենք չեն այդպես արել իրենց, այլ աշխարհի բռնապետությունը։ Ցնեթե այսօրվա հրեան, վորի նախահայրերը, ըստ Մաքս Նորդաուի, ոշխատակ են յեղել և հալարած», փախչում է աշխատանքից, այդ նրա համար է, վոր նրա յերակներում դեռ վազում է յեզիպտացվոց ազնուական գործարաններում չարաչար աշխատող հրեայի արյունը։ Ցնեթե նա սուտ է ու քաղցնում, այդ նրա համար է, վոր հրեական արուեստները խեղդող Փարավոնի և Ցերուսաղեմի ավերյալներն այրող Նաբուզոդոնոսորի ներշնչած սարսափը դեռ հալածում է նրան։ Ցնեթե նա խնամում և պինդ է բռնում վոսկու քսակը, այդ նրա համար է, վոր նույն վոսկու դարուբյամբ հին բռնակալների կատաղությունը սեղմող և խարուկահանդեսների կրակը մարող հրեաների հոգիները դեռ ղղնջում են այսորվա հրեայի ականջին թե՝ վոսկու մեջ է միայն քո փրկությունը։ Այս տեսակետից ել կարող ենք նայել մեր բարոյական շատ թուլություններին վրա։ Ցնեթե իրավ է, վոր դարերի ընթացքում մեր հայրերն ու պապերը հեծել են անլուր բռնություններին տակ և նրանց թոռներն ու թոռնորդիները շարունակ ծառայել անիրավությամբ ու անարդարությամբ իշխող բռնակալների կամքին, ինչու՞ պիտի զարմանանք, յեթե նրանց վարդիներից մինը, թեկուզ Գևորս Մինարյան անունով, այնքան մեծ նշանակություն տա իշխանին, կամ իշխանուհուն, վոր մինչև անգամ ցանկանա վեդուից Սարդսի սոխները հատկացնել նրանց։

— Ցնեթե իմանամ թե իմ մեջ խոսել և սարկամության հոգին, հուսահատությունից ինձ կսպանեմ։

— Ինչու՞ յես հուսահատվում, դու հո մենակ չես, քեզ նման հազարավորները կան։ Բացի այդ յես քեզ կարող եմ մխիթարել — նաև մի ուրիշ բացատրությամբ։ Այդ այն է, վոր մարդ արարածը, վորքան ել վոր զարդանում է և գիտության լուսով լուսավորվում է, այսուամենայնիվ, նա իր մեջ դեռ կրում է բնազդներն այն հին մարդի, վորը վայրենության դարերշրջաններում ապրելով վախենում եր փայլակից ու վորոտից, վոր աստղածում եր յուր համար գերբնական և անհասանելի ուժերը ու նրանց յերկրպագում ու զոհում։ Այն ժամանակներից սկսած մարդը սովորել և հպատակել գերազանց ուժին և նրա վրա նայել հիացմունքով։

Այդ հպատակութեան ու հիացման մէջ նա զոհութիւն և զոհում և շատ ակարամիտներ, մինչև անգամ, անհանգստանում են, երբ տիրող կամ բռնացող ուժը վերանում և մնջահեղից։ Այդ առաջ և զալիս նրանից, որ ակարամիտը վախենում է թե՝ մի դուցե ազնիւատոհմ զաղանի տեղը բռնե իրեն հավասար մի վոչխար... Ցեխ տեսել եմ զարդացած և ինքն իրեն պատասխոհ համարող մարդ, որ դառնացել ու սրտմտել էր՝ իմանալով, որ սեփական աշխատասիրութեամբ հառաջադիմող անտոհմիկ մի զավառացի գնել և թիֆլիսում՝ անհաշիվ շռայլութեամբ հար դուլքը վատնող մի իշխանի կալվածքը։ Նա սրտմտում էր վոչ թե նրա համար, որ իշխանը շվայտ էր կամ անտառակ, այլ նրա համար, որ անտոհմիկ զավառացին տիրում և իշխանական կալվածքին։ Ուրեմն զարգացած մարդը չէր մեծապրում աշխատասիրութիւնն ու զործունեութիւնը, վորովհետև նա այդ տեսնում էր անտոհմիկ զավառացու մէջ. չէր էլ զարշում անառակութիւնից ու շվայտութիւնից, վորովհետև դա յուր աչքում մեծ համարվող իշխանի ունակութիւնն էր։ Այսպիսով ուրեմն, այդ զարգացած մարդու մէջ միաժամանակ զործում էին՝ թե նախկին վայրենիի սարկան բնազդը և թե զեհրի նախանձը, վորը թույլ չէր տալիս նրան ծաղումով իրեն հավասար զավառացուն տեսնել իշխանական կալվածքի տեր։ Այս տեսակետով էլ չես բացատրում եմ քո արտահայտած ցանկութեան միտքը։

Գևորոսը լուռ էր և չէր պատասխանում։ Նա, չերեի, վորոճում էր իմ ասածները՝ նրանց մէջ հերքելի կէտեր զտնելու համար։ Բայց յերբ չես հարցրի — համաձայն ես ինձ հետ թե վոչ, նա պատասխանեց.

— Ես յենթադրութիւնները վիճելի կէտեր շատ ունին, բայց վորպեսզի մեր խոսքը չերկարի, չես առարկութիւն չեմ անում, այդ մասին կխոսանք ուրիշ ժամանակ։ Այժմ դեռ այցելենք սոսիների տիրոջը։

Այս ասելով՝ նա վերկացավ տեղից։ Ցեխ ևս հետևեցի նրան։

Դ

Վեղունց բակը մտնելով՝ մենք վոչ վոքի չպատահեցանք։ Այդտեղ լուռթիւն էր տիրում։ Ցեխն դեմի դրան մոտ կապած ուլը չկիներ, վորը թե առջև թափած խոտը ուտում և թե մեզ էր նայում, այլ և պառավ, ուժաղուրկ շունը, վոր արահի շքարանից յեղնելով՝ մի յերկու բերան ծուլարար հաջեց և ապա նորեն բակի մեջ ընկած հին սայլի տակը մտավ, մենք կկարծեյինք թե այս տան մեջ կենդանի շունչ չկա։ Բոլոր նշաններից յերևում էր, վոր

մի որ այդ հարկը շեն ու փարթամ և յեղել, վորովհետև բացի շքեղ սոսիներից, վորոնք նրա բակի մի մասն եյին բռնում, տունն ել, քսո ինքյան, գրավում եր ընդարձակ տեղ և շինված եր հարուստ դյուղացու ճաշակովի Նա բաղկացած եր մի մեծ, բարձրաշեն ոդայից և յերկու ուրիշ, նուլնպես բարձրադիր սենյակներից։ Նրանց մեջտեղում գտնվում եր ընդարձակ, սյունազարդ սրահ։ Վերջինի սյուները տաշված եյին կաղնու հաստ գերաններից և ունեյին, մինչև անգամ, խոյակներ, վորոնք թեպետ ծխից ու հնությունից սևացած, այսուամենայնիվ, իրենց վրա կրում եյին հյուսնի ձեռքերի ճարտարության նշաններ, այն է՝ զանազան քանդակներ, վորոնք ներկայացնում եյին կենդանիներ, բույսեր և այլ նկարներ։ Բակի, դոմի և հարթանոցի ընդարձակությունը ցույց եյին տալիս, վոր այդ տունն ունեցել և մի որ բազմաթիվ անասուններ։ Իսկ թոնդրատան մոխից հեռու դրսնվելը, արդեն ապացույց եր, վոր Վեղունք շեն ոջախ լինելով միշտ ունեցել են հյուրեր, վորոնց ծխից ազատ պահելու համար թոնիրը վոչ թե ուրիշների պես տան սրահում, այլ բակի մի անկյունումն են դնեցել։ Ընդեղով այս բոլորին, այսուամենայնիվ, յերևում եր վոչ միայն նախկին կյանքը չեր յեռում այդ տան մեջ, այլ և մի ավերիչ ձեռք ծանրացել և նրա վրա։ Վորովհետև տան կառուրը մի կողմից արդեն ծուվել եր, իսկ բաշերի հողը մի քանի տեղ թափվել։ Ցերկու սենյակների պատուհանները մեծ մասամբ ապակիներից զուրկ՝ ծածկված եյին ձեթած թղթով, դոմի դուռը կրճկնահան յեղած՝ ընկած եր պատի տակ, իսկ հարթանոցը, մինչև անգամ, զուրկ եր այդ բանից։

— Այստեղ մարդ չէ յերևում, վերադառնանք,— ասացի ընկերոջս։

— Չե, թող մի անգամ ել հնչակը քաշենք, դուցե մեկը յերևվա,— պատասխանեց նա։

— Հնչակը վիրն է,— հարցրի յես զարմանալով։

— Գյուղացու հնչակը չգիտես, սա յես, այ, տես ինչպես լավ է հնչում։ Այս ասելով նա գետնից մի քար վերցրեց և նետեց սայլի տակ պառկած շան վրա։ Վերջինս վերկացավ տեղից և այս անգամ սկսավ հաշել ավելի աշխուժով։ Մի քանի րոպեյից, արդարև, ոդայի դուռը բացվեցավ և այդ տեղից դուրս յեկավ աղքատ հագնված մի պառավ, վորն հուշիկ հառաջանալով, մոտեցավ ու կանչեց սրահի սյուների մեջտեղը։ Սա մոտ վաթսուն տարեկան կինն եր, միջահասակ ու վոտիտ մարմնով, խորշոմած յերեսով, կկոցված աչքերով՝ բայց դեմքի բարի ու միամիտ արտահայտությամբ։

Տեսնելով մեզ բակում, նա ձախ ձեռքով հովանի արավ աչքե-րին՝ կարծես, աշխատելով ճանաչել մեզ և ապա հարցրեց.

— Ո՞ւմ եք ուզում։

— Վեդունց Սարգսի տունը սա չէ, — հարցրի չես, իբր չճա-նաչելով։

— Հա, ես ա, — պատասխանեց պառավը։

— Սարգիս-ապերը տա՞նն է։

— Հրմն բախչումը (պարտեզ) ծառի տակ բհում (փորում) ա։

— Բախչան վրթռեղից գնանք, — հարցրի չես։

— Ա՛յ, կյումի կողքով վեր անցնք, դուռն ընաի ա, — հայտնեց պառավը։

Հաղիվ թե մենք շուռ կեկանք, նա ավելացրեց. — ամոթ չըլի հարցնիլը, դուք հով եք։

— Ոտար մարդիկ ենք, կեկել ենք ձեր գյուղը տեսնելու, — ասացի չես։

— Բա վրդիան եք գալի, — հետաքրքրվեց նա։

— Շատ հեռու տեղից, — պատասխանեցի չես։

— Ել հա, հա աշխարքի են ճեդիցը չեք գալի (ծայրիցը) մին ասեցնք տենամ, վեր շհարից եք։

— Ցես Թիֆլիզից եմ գալի, իսկ իմ այս ընկերը՝ Մոսկվայից։

— Դու Թիֆլիզից ես գալի. վայ քե մատաղ ըլեմ, բա խէր շուտ չես ասում... Այս խոսքերով պառավը մոտեցավ և ձեռքը տալով ինձ՝ վողջունեց այնպես սիրով, որ ասես թե, յուր քե-ռորդուն, կամ վորևե հարազատին եր պատահել և ապա հարցրեց.— Մի ասա, քե մատաղ, մեր Վանուն ել (Հովհաննեսին) տեսար։

— Ձեր Վանուն... կճանաչեմ, նանի, չեմ ճանաչում, — ասացի։

— Ճնաչում չես... բա մեր Վանուն արարած աշխարքը ճնաչում ա, եղ վրից ա վոր դու ճնաչում չես։

— Վերտնեղ և լինում։

— Սուդուն ա ըլում, քե մատաղ, առվակատ ա, գողերին ու մարդասպաններին նա ա Սիբիրից պատում։ Դա խէր չես ճնա-չում։

Պառավի վերջին տեղեկությունը ոչնչով հիշողություն։

— Այո, այո, ճանաչում եմ, այնտեղ նրան Վեդով են ասում։

— Հա, քե մատաղ, վրից ա, ապղ, սալամաթ ա։

— Տեսել եմ, նանի, շատ առողջ և, միամիտ յեղիր, — պահով-վացրի պառավին։

— Մատաղ ըլեմ քու աչքերին, ես ա հինդ տարի ա, յերեսը տեսել չեմ... քոռանամ ինձ նման մերը, — ասաց պառավն ու լացա-կումեց։

— Ինչո՞ւ չես տեսել, այստեղ չի՞ գալիս, — հարցրեց Գևորոսը։

— Չե՛, քե՛ մատաղ, գալիս չի։ Առում է գամ գեղում ինչ շինեմ։ Առում եմ, վորդի, յեկ, կողքիս նստիր, սկի բան մի շինել. յեկ վոր ամեն որ երեսդ տեսնեմ, բոյիդ բուսաթիդ յաշեմ... Ախար աչքումս մազ ա կանաչել, վոր քե եղ սրին եմ հասցրել... Առում ա, նանի, ասիլ մի, եղ ըլելու բան չի...

Վերջին խոսքերի հետ՝ արտասուքի կաթիլները գլորվեցան պառավի խորշոմած դեմքի վրա։ Նա դլխաշորաթի ծայրով աչքերը սրբեց։

— Ինչո՞ւ յես լաց լինում, նանի, վորդիդ, փառք աստծո, վողջ առողջ է, գործն էլ հաջողակ, քո ուղածն էլ այդ պիտի լինի, սիրտ ավի յես պառավին։

— Հա, քե մատաղ, բա ինչ ա. վորտեղ ըլում ա ըլի, թաքի (միայն թե) սաղ ըլի... Ի՞նչ անեմ թե յես ըսաի իրա կարոտը քաշում եմ... պատասխանեց պառավը, աշխատելով յուր վիշտը ծածկել։ Բայց մի փոքր հետո ավելացրեց. — Շատ վախտ ա դիր չենք ստացել, աստված պահի քե, վոր իմ Վանուցը խեր խաբար (բարի լուր) բերիր... Ապա տեսնելով, վոր ընկերս շարժվում է դեպի առաջ, ասաց, — կուղեք, ըսաի եյվանումը նստեցնք, յես գնամ մեր հալեվորին կանչեմ։

— Չե, նանի, մի նեղանար, մենք ինքներս կերթանք, ձեր բախչեն էլ կտեսնենք, — ասացի յես և վողջունելով պառավին, առաջ անցա Գևորոսի հետ։

— Այս ինչ հանելուկ է, — հարցրեց վերջինս, յերբ մենք հեռացանք։ — Այս մարդը Տեր-Մակուչին խորհուրդ և տալիս անուսում թողնել իր չորս վորդիներին, մինչդեռ ինքն յուր վորդուն քարձր կրթություն և տվել և փաստաբան շինել։

— Այդ հանելուկը լուծելու համար մենք պիտի մի փոքր էլ համբերենք՝ ծերունուն լսենք, — պատասխանեցի յես։

Գևորոսը վոչինչ չխոսաց և մենք միասին պարտեզ մտանք։

Դա մի ընդարձակ տարածություն եր, վորի մեծ մասը ծածկում էյին մի քանի շարք պտղատու ծառեր, այն է, խնձորենիներ, տանձենիներ, սալորենիներ և սերկևիլներ, ամենքն էլ, ըստ երևի, պտուղներով ծանրաբեռնված։

Պարտեզի վերջում մի մարդ, գլուխը կապույտ թաշկինակով կապած՝ փորում եր կիսաչոր մի դեղձենու շուրջը։

— Անշուշտ սա յե Վեդունց Սարգիսը, — ասացի յես Գևորոսին և նրա հետ միասին առաջացա դեպի նրան։

Սա հաղիանդամ, բարձրահասակ, բայց մի փոքր կորաքամակ ծերունի յեր, մոտավորապես յոթանասուն տարեկան։ Թաշկինա-

կով կապած դլխի շուրջը մաղ չէր յերևում, բայց ընչացքն ու կարճ մորուքը բոլորովին ճերմակ էին։ Նրա դեմքի արտահայտությունը խիստ էր, բայց վոչ չար, իսկ աչքերը, թեպետ ծածկված թավամաղ հոնքերով, սակայն ցոլացնում էին խելք և բարություն։ Նա հագած էր կոշտ կտավե շապիկ՝ կապույա նաշուրթ ոձիքով, իսկ դրա վրայից սև դադաքի, մի հնամաշ արխալուխ վարտիքը, վոր կարած էր դյուղում դործված բրդեն շալից, ուներ նույնպես մի քանի կարկատան և սրունքների մոտ սեղմված էր սև տոլաղներով։ Վոտքերին ամրացրած էին հասարակ կաշվի արևելներ, իսկ մեջքը սեղմած սև կտավի մի գոտիով։

Նշմարելով մեզ մի քանի քայլ հեռավորության վրա, նա իսկույն գործելուց դադարեց և բահը դնդձնու բնին հենելով՝ առաջացավ դեպի մեզ։

— Բարի աշողում, Սարգիս ապեր, — ասացի յես առաջին անդամ, և մոտենալով, ձեռքս պարզեցի դեպի ծերունին։

— Ա՛յ, ասածո բարին. բարով եք յեկել, — պատասխանեց նա ժպտալով և յուր կոշտ աշով մեր ձեռքը թոթվելուց հետո շարունակեց, — հալատաս (յերևի), դուք եք Մհարանց Մուքուռ դռնաղները։

Ամբողջ դյուղն արդեն դիտեր, վոր մի որ առաջ հյուրեր են յեկել Մհարենց Մուքուռ առենը, և մեզ, ահա, այդ անուններով եր ընդունում ծերունին։

— Այո, Սարգիս ապեր, մենք ենք։

— Բարով եք յեկել, հաղար բարով, կլի վոր լավ բանի համար ըլեք յեկած, ասածո աշողի։

— Մի առանձին բան չունինք, հենց ման գալու համար ենք յեկել։

— Ինչ վոր ա, բարի ըլի։ Աշխարի շառն (չարն) ենքան շատացել ա, վոր մարդ ջուր խմելու համար էլ թե տեղիցը վեր կենա, պտի ասածո կանչի, վոր բարի ըլի։ Ձեզանից վեր ա Մինաբենց Ակոբի ապենն։

— Ճիշ եմ, — պատասխանեց Պետրոսը։

— Հա, քու հերը լավ մարդ ա, լավ էլ հայ ա. դաղրը (յերախտիքը) դիտում ես, պատիվ ես տալի։

— Ինչպես կարող եմ պատիվ չտալ, քանի վոր նա իմ հայրն է։

— Ի՞նչ դիտամ, ես այսմեռմը ըսկի վերդին հորը ճնաչում չի։ Եղ շլտղեն ում գլխին տեսնում եմ, հենց դիտում եմ հոր տանից ջուդա ընկած (տարագիր յեղած) ա։

— Ձև, յես ծնողներիս շատ եմ սիրում և հենց նրանց տեսնելու համար է, վոր Մոսկվայից վեր եմ կացել յեկել։

— Հա, վոր ըտենց ա, շատ ապրես, ասած պահի քեզ. բարի ժառանգ ըլես. — որհնեց ծերունին և ապա դառնալով ինձ հարցրեց, — կրաղչես, քե ճնաչում չեմ. դու ումմնցից ես (վորտնցից)՝

— Ցես էլ տեր Ովանեսի Քոռն եմ, — պատասխանեցի յես։

— Աաաուրի տղեն։

— Այո։

— Դե շուտ ասա, հեր որհնած, ախար քու վողորմած հոգի հերը իմ տան լավ բարեկամն ա էղել, առանց իրար Թիքա չենք կարել։ Քանի՞-քանի անգամ ես բախչումը նստել, քեֆ ենք արել, քանի՞ անգամ մեր չինարուցը տակին դուռնա դավալով մարաքա յենք սարքել... Ողորմի քո հոգուն, Աաաուր... ասում եր, ա, Սարդիս, ես չնարիքը, վոր քունն ա, լավ կլի վոր տանդ գլխին մին առաժ (հարկ) էլ շինես ու առաջը լին ու բոլ մի թախտապանդ (պատշգամ), ընենց ըլի վոր չնարուցը ճղնիերը կռանան թախտապանդի վրեն շուք անեն։ Ես չախը (ժամանակ), ասում եր, տուռդ ամարաթի (պալատի) նման մի բան կդառնա, հենց վոր թախտապանդին նստես են սարերին մարիկ ասես, յա չե սարրինն (դովը) ընկած վախտը ընտի մի ամաքան չայ խմես, հենց կմտանաս թե դրախտումն ես։

— Ցեվ իրավ լավ ե ասել, մեզ էլ հենց այսոր ձեր չինարիքն են բերել այստեղ։ Ափսոս չի, վոր այդ գեղեցիկ ծառերի առաջ դուք յերկհարկանի մի տուն չունիք,՝ — հարեցի յես։

Ծերունին նայեց ինձ վրա քննական հայացքով, կարծես ստուգելու համար թե՝ արդյոք յուր սիրտը ցավեցնելու համար ասացի այս խոսքերը։ Բայց յես, իհարկե, ասել էլի միամտաբար, առանց իմ խոսքերին մի առանձին նշանակություն տալու։ Սակայն հետո իմացա, վոր դրանք ծերունու սիրտը խոցած պիտի լինեյին։

— Լավ ես ասում, վորդի, լավ կլեր վոր շինի, ամա ինչ անես վոր...

— Հա, ինչու՞ չշինեցիր։

Ծերունին վոխանակ պատասխանելու նայեց յուր շուրջը, ապա դառնալով մեզ՝ ասաց.

— Ես խի՞ յենք ըստի կաղնել, գնանք եյվանումը թախտի վրեն նստենք, յեդո կխոսանք։ Կրաշխեք, մարդ վոր ծերանում ա, մարիֆաթով (գաղաքավարությամբ) ժաժ գալն էլ ա մոռանում... գնանք, ըսենց կաղնած կնեղանաք։

— Ձե, Սարգիս ապեր, այստեղ ավելի լավ ե, ախ, այս սիրուն ծառի տակը կնստենք, — ասացի յես։

— Լավ, վոր ըռանց ա, Թող մի խալիչա բերեն... Աչքի հեչ, ա Սավդյու լ, մի խալիչա դրկի ըսառեղ, — ձայն տվավ ծերունին դեպի տան կողմը։

Մի քանի րոպեյից հետո, մի փոքրիկ, աղքատ հագնված աղջիկ, մի հին գորգ քաշ տալով բերավ փռեց ծերունու ցույց տված տեղը։ Վերջինի հրավերով մենք նստանք գորգի վրա։

— Հա, ասում ես թե՝ խի չչինեցիր, — շարունակեց ծերունին ընդհատված խոսակցությունը, — լավ ես ասում, վորդի, վոր շինած ըլեյի, հմի ես ա վոր յեկել եք, կատնի ու կնստացնի ձեզ են հավտար թախտապանդումը ու մի թիքա հաց կդնի առաջներդիդ... ամա դե կարացի վոչ...

— Ցնրևի փող չունեյիք, — հարցրեց Պետրոսը։

— Փձղ... ընչի չունեյի, փող ենքան ունեյի, վոր մի ատաժ չև, յերկուս ել կշինեյի։

— Հապա, ինչու չշինցիր, — հետաքրքրվեցա յես։

— Նոյի ագռավը չթողեց, վորդի, Նոյի ագռավը։

— Նոյի ագռավը։

— Հա։

— Վիրն է Նոյի ագռավը, — հարցրի յես զարմանալով։

— Նոյի ագռավը դիտում չես վորն ա։

— Վոչ։

— Բաս դու սկի հուսուվ ըռան չես կարդացել։

— Կարդացել եմ։

— Դե, ենտա վարժապետը ասած կըլի թե հոլ ա Նոյի ագռավը, ել խի յես ասում դիտում չես։

— Ջրհեղեղի ժամանակի Նոյի ագռավն ես ասում։

— Հա, բա ել ուրիշ քինչ Նոյի ագռավ կա։

— Ա՛յն ագռավն է, վոր չի թողել քեզ տունդ շինելու։

— Հա, հենց համին (իսկ և իսկ) են ագռավը։

Ցնս դժվարությամբ եյի ծիծաղս զսպում, իսկ Պետրոսը արդեն քահ քահ ծիծաղում էր։

— Մի յես ծիծաղում, վորդի, — հարցրեց ծերունին ընկերիս։

— Հապա քինչ անեմ, վոր չծիծաղեմ. ասում ես Նոյի ագռավը չի թողել, վոր տունդ շինես։ Առաջինը՝ ագռավը վիրց կարող ե արգելել քեզ քո տունը շինելու, յերկրորդ՝ Նոյի ագռավը մինչև այսոր ապրում է, վոր քեզ արգելի։

— Բաս չի ապրում։

— Իհարկե, վոչ։

Ծերունին ժպտաց։ Սակայն նրա այդ ժպտի մեջ այնքան ծաղր կար ուղղված դեպի ընկերս, վոր յես չկարողացա իմ հետաքրքրությունը զսպել։

— Բացատրիր, աղաչում եմ, ինչ ասում է այդ, կամ ճիշտ ես դու ասում անվանում, — խնդրեցի յես։

— Առաջ դու ինձ ասա, եղ ասվածի պատմությունը գիտում ես, թե չե։

— Ինչպես չե։

— Դե պատմիր։

— Ի՞նչ պատմեմ, Ջրհեղեղի պատմությունը։

— Չե, եղ յես քեզանից լավ եմ իմանում։ Ասես թե՝ Սարդիս ապերը գնացի ա, զատ չի գիտալ։ Վանքումը իրեք տարի կրդացել եմ, իրեք տարի էլ կեսդերութեյուն (տիրացութեյուն) եմ արել։ Ասուվածաշունչը երկու անգամ անց եմ կացել (կարդացել եմ)։

— Ուրեմն միայն ասվածի պատմութեյունն ես ուզում։

— Հա։

— Նէ, նա մեծ պատմութեյուն չունի։ Ցերը Նոյի տապանը Արարատ սարի վրա կանգնեց, այդ ժամանակից քառասուն որ անցած՝ Նոյը տապանի պատուհանը բացավ և դուրս թողեց ագռավին, վորպեսզի իմանա՝ թե՝ ջուրը ցամաքել են, թե վոչ։ Բայց ագռավը գնաց, յետ չդարձավ։

— Ծարար չբերեց Նոյին։

— Այո։

— Բա ինչ յետ չդարձավ։

— Հայտի չէ. դրա համար աստվածաշնչումը բան չկա գրած։

— Գիտում եմ բան չկա գրած, ամա դու ինչ ես սիրը անում, ինչ յետ չեկավ։

— Ագռավը ծանրամարմին թռչուն է, յերևի շատ թռչելուց հոգնելով՝ ընկավ ջրի մեջ ու խեղդվեցավ, — հարց ու փորձ։

— Չը՞... ժլատաց ծերունին, եղա ձեր հուսումնարանումը ըղենց էտամ են թողնում ձեզ ե. ագռավը խեղդվող չանավար (գազան) ա։

— Ապա, ձեր կարծիքով, ինչու չվերադարձավ, — հարցրի յես։

— Նրա համար, վոր քերձերի գլխին, յա չե, սարերի գոշին մարդի, յա հեյվանի չամդաք (դեղ) տեսավ, վրան ընկավ ու սկսեց լափելը։ Ինչ, ագռավը մտածելու յեր թե ընտեղ տապանումը Նոյը, աչքը ջուր կտրած (ակնկառույց)՝ իրան ա ըսպասում։

— Կարելի յե այդպես ել։

— Վոչ թե կարելի ա, հենց դրուստ ես ա վոր ասում եմ։

— Թող այդպես լինի, միայն ասա տեսնենք այդ ագռավին ինչպես արդելեց քեզ քո տունը շինելու, — հարցրի յես։

— Ի՞նչպես արդելեց, մի քիչ մաջալ (մինոց) ասու, ասեմ։

Այս խոսքերով Ծերունին դէմի Թաշկինակը հանեց և կոշտ ձեռքով հազաւ դլուխը շոյելով ու դոլացնելով՝ շարունակեց.

— Դիտում եք, ինչ կայ Աշխարհում առանց աստծու բան չի լինում, բոկի տերևն էլ ծառից առանց չի ընկնում։ Հալբաթ ես էլ աստծու կամքն եր, վոր բանից լլավ։

Ծերունին դարձյալ լռեց, ապա նորեն դէմի Թաշկինակը կանգնելով շարունակեց։

— Ինչ վոր պատմեմ, հնուց բան ա, կլի վոր քսանհինգ տարի լլի, յա չեն երսուն. են չաթը յես հլա բարաթ (բավական) չանել ի Մի որ Ոսկի վարդապետը յեկավ մեր տուն։ Ոսկի վարդապետի անունը լսած կեք, — հարցրեց Ծերունին։

— Վոչ, — պատասխանեցի յես։

— Հա, լսած չեք լլի, դուք չանել եք։ Նրա մեռնիլը, հավատաս, տասը յա տասներկու տարի լլի։ Աստծո հոգին լուսավորի. արդար մարթ եր, ասիլ (աղնիվ) հոգևորական։ Վանքի վանահայրն եր. շուտ շուտ կդար մեր տուն. կնստինք ես ծառերի շուքումը, դրից կանինք։ Ողորմած հոգի քաւ հերն էլ շատ կսիրեր նրան։ Ենա մի որ յեկավ տեսավ, վոր դերաններ եմ բերել տվել, վոր տախտակ քաշել տամ. գնդապետի հետ էլ խոսում եմ, վոր քար ու կիր բերի։ — Ա Սարգիս, ասեց, եդ ընչի համար ես թաղարիք (պատրաստություն) տեսնում։ — Հայր սուրբ, ասեցի, ծառա յեմ քե, ուզում եմ առնս դլուխը շինել տալ։ Մեր տղա Առաստուրն էլ ա խրհուրդ տալի։ Ցես էլ տեսնում եմ, վոր լավ կլլի։ Ախոռս ա վոչ. ես լաչին (գնդուղեզ) չնարուցը առաջին երկու տասժանի մի տուն չլլի, վոր յեկող գնացողը նրա հովհար թախտապանդումը նստի, մի սհաթ էլ ա քեֆ քաշի։ Ես խոսքի մեջտեղումը մեր Վանին հոլթի յեդից վաղելով՝ յեկավ վոր մեր մոտիցը անց կենա՝ քե ինչ ա, հոլթի առաջը կտրի, բանի ու վրեն նստի։ Են չաթը նա հլա տասը տարեկան եր։ Են ա հայր սուրբը բեխի ձեռքը բռնեց ու ասեց. — ա Սարգիս, դիտես ինչ կա. տանդ դլուխը մի շինիլ. մայ, սրա դլուխը շինիր։ Են փողը վոր խարջելու յես քե ինչ ա տանդ վրան մի տասժ ավելացնես, լավն ես ա, վոր խարջես ու ես բեխի դլխումը ուսում ու դիտություն մըտցնես։ — Ասեցի հայր սուրբ, բեխին հո անուսում չեմ թողնիլ. մի քիչ վախտից յեդը վանքը պտեմ դրկիլ, վոր լավ կարդալ սովրացնես։ Վայ ինձ, հենց դիտում ի քե՝ հայր սուրբը նրա համար ա ասում, վոր բեխին իրա մոտ դրկեմ, հինչ ա մեղանե խերվի (ոգավի)։ Ամա ողորմած հոգին պատասխանեց. — ա Սաք, ասեց, յես ինչ ուսում յա դիտությին ունեմ, վոր դրան ինչ տամ։ Հրեն դարկի Թիֆլիս, դիմյազումը կարթի, լավ հուսում առնես։ Ընդհան

յեղն ել ղրկի Մասկով, յա չե Պետրպուրկ, վոր ունիվերս մտնի, ընտեղի մեծ հուսուսի ել առնի, փիլիսոփ դառնա։ Ինչպես կըդա, ես գեղի միջումը մին հատ մարթ կըլի։ Համ իրա ձեռովը տանդ գլուխ կչինի, համ ել միջումը հուսուսիարան կբանա. խելճ են ես գեղըցիքը, խավար ծնացել են, խավար ել պտի մեռնին. սրանց բախտը կհավաքի, ուսում կտա, ու մի քանի տարին յեթը սաղ գեղը կլուսավորի։ Ես բանը համ աստծուն դուր կգա, համ բանդին մարդկանց։ — Հայր սուրբն ես վոր ասեց, խելքուսմս նստեց։ Ասեցի, հայր սուրբ, լավ ես ասում. թող տանս գլուխը հին ծնա, ինձ հոգի ա տնաղ անելու (ծաղրելու) թաք ըլի իմ վանուն գլուխը զարթարվի։ Ասենք, ինչ մեղքս ծածկեմ, յես ել հենց են գլխիցը հուսուսմի ու գիտությանն գերի եյի։ Ցերը մի հուսուսիական մարթ կգար մեր գեղը, ում տան ել վոր վեր գար, կգնայի զոռով զոռաղ կբերի մեզ մոտ, թե ինչ ա, աշխարհի են լավ լավ բաներիցը մին երկու բերան խոսա, լսենք, բան իմանանք։ Մեր հայր սուրբը մի լավ Զամչյան ուներ։ Նրա համար շուտ շուտ վանք կգնայի, թե ինչ ա, կշտիս նստի, մին մին գլուխ կարդա։ Ին հայկի, Արամի, յա չե Վարդան զորավարի լավ լավ պատմությինը, վոր կլսի, հոգիս կմխիթարվեր։ Շատ վախտ ել սիրտս են հանդի կլցնվեր, վոր լաց կըլնի, ու արտասուքս ջրի նման կթափվեր։ Ի՞նչ յերկարացնեմ, տեսա վոր հայր սուրբի խորհուրդը լավն ա, վճռեցի վոր տանս շինությունը թողամ ու բերեն Թիֆլիս ղրկելու թաղարիքը տեսնամ։ Ցեփ վոր ես բանը մեր ռնացուն (կնոջը) ասեցի, քիչ մնաց, վոր խեղճը խելքիցն ընկնի։ Ի՞նչ լաց, ինչ շիվան, ինչ գլուխ թակիլ։ Ա մարդ, ասում ա, եդ խի ըտենց անաստած բան ես բռնում, բա մենք ճար ու ճրագ մի տղա ունենք, են վիրց վեր ունինք ղրկենք գարիը տեղ ու մենք, երկու հոգի, մնանք ըստի բայդուշ. — ա կնիկ, ասում եմ, տղին հո ծախում չենք, ղրկում ենք, վոր հուսուսմ առնի, մարթ դառնա ու ել նոր յեղ գա մեր աչախը լուսավորի։ Ղոլթ ա, ես ասում ի, ամա մեր տղուշաղին (կնոջը) ել դնամիշ անիլ (մեզադրել) չեր ըլիլ։ Ախար աստած մեղ չորս բեխա յեր տվել ու ել յետ իրեքին տարել, մին եդ եր մնացել, վոր դիփուռնանցից պուռճուրն (փոքրն) եր։ Ի՞նչ մեր ըլեր, վոր լսեր թե իրա մինուճար բեխին ուզում են ձեռիցը խլել, չանը կրակը չգցեր, վոր տանեն։ Կնիկարմատը, դոլթ ա, խելքը կարճ ա, ամա սիրտը բարակ ա, ըսենց ցավին դժար ա դիմանում։ Նրա համար լավ ա, վոր իրա տղան սաղ սալամաթ իր աչքի առաջը կանդնած ըլի, թեկուզ հենց չոբան (հովիվ), յա հոլթարած ըլի, քանդ դնա, յերկրբե յերկիր, հուսուսմ առնի, յա փիլիսոփա դառնա։ Ամա դե յես անա-

ցոց լաց ու շիվանին մոխիկ չարի. իմ թաղարիքը տեսա ու վանին իմ ձեռքովը տարա Թիֆլիղ, Քափշուր արի (հանձնեցի) մեր հնքազորի տղին։ Նա յել ընտեղ լավ վաճառական եր. ծանոթ բարեկամ ուներ, ըսեին պատրաստել տվավ, ու մի տարին յեղը գիմյաղը տվավ, վոր ըսեան գշեր-ցերեկ ընտեղ ինա, համ եյ կարթիր։

«Ենդ որից դնեը վանին դառավ իմ դարդն ու գեյիղը (ցավն ու հոգսը)։ Ղորթ ա, ըսեին սաղ սալամաթ Թողեցի յեկա, ամա որ ու գշեր հենց նրա վրեն ի մտածում։ Ցարսքը, ասում ի, ըսեաս հո չմրսեց, յա չհիվանդացավ։ Ցարսքը յաղի (ոտար) տանը ըսեի սիրտը հո չկտրվեց։ Ցես վեր միննե ասեմ. ինսան ենք եյի. մտածմունքը ասառած մեզ ա տվել։ Ամա ինչ վոր նրա մերն եր անում, ըսերանով տավիլ չի ըլի։ Ոնդեը վոչ գշերը քուն ուներ, վոչ ցերեկը գարար (հանգստություն)։ Տափը, ասես, տեղ չեր տալի վոր նստի. են ա ամեն մի նեղս ու դուրս անելով ընենց եր ան քաշում, վոր ասես ջիգարը պոկ ա գալու։ Րնեի սիրած շունը, վոր տեսնում եր ըս հոտոտելով դես ու դեն ա գնում, ասում եր. — ա Ղաթար, Վանոն ես ման գալի, ըսեի չի, ըս մատաղ, են ա ոխտը սարի քմակին, ասում եր ու լաց ըլում։ Նախիրը վոր հանդումը յեղանում եր, հորթերը բռանչում ին, ասում եր — Ջանն, յարար իմ ըսեանն ել ձեզ նման անմեր ենացած բռանչում ա, ու ձենը լսող չկա... Ցեվի վոր մտնում եր ես բախչեն հու տեսնում ծառերը տանձ ու խնձորով լիքը, ասում եր — ձեր աչքը քոռանա, եդ ձեր ձեր ըդենց կանանչ կարմիր լցվել, ճոնքոռել (ծանրաբեռնվել), ախար վոր Վանին ըսեի չի, խի չեք չորանում, վեր թափում։ Ուլասա (վերջապես) յես վեր միննե ասեմ։ Շատ վախտ ել ականջներս ծածկում ի հու փախչում, ինչ ա խնդճի լացն ու արտասուքը չտեսնեմ։ Գիտում եք, ծնող ըլիլը հեշտ բան չի. ըսեի տեր պտի ըլեք, վոր ես ցավը քաշեք հու իմանաք ըս ինչ դժար բան ա։ Ամա դե յես եյի գիմանում ի. ըսեանց ընցնում չի. հլա Սավդյուլին ել սիրտ ի տալի. ասում ի, տղեյի, ըսեանց վրվթալ (մրմնջալ) մի։ Ես ա ըսեան հուսումը կպըծնի կդա. ննչախը ուրախությինդ տասնապատիկ կըլի։ Ղորթ ա, համ նեղությին ես քաշում, ամա դե են վախտը, վեր տեսնես ըս քու տղեն գեղի միջումը մին հատ ա, ու գիմունանք նրա դուրումն են (ծառայությունում) կանգնած, տեսնես վոր սրանց ել հերերն ու մերները նրա արևումն են յերդում ուտում, սիրտդ կվառավորվի, քաշած ցավերդ կմոռանաս...։ Ոնդեզ կնիկը, ղորթ ա, ես խոսքերով մին որ հանդատանում եր, ամա ել եդաը իրա ցանկ իրա հետ եր։

«Վրա երկու ամսուն. եր գնում, վոր մենք մեր սրերը ըսենց դժվարությինով անց ինք կացնում։ Մին որ վանքումը Ոսեի հայր սուրբին տեսա։ Հա, մոռացիլ ի ասեմ ձեզ, թե են որից, վոր Վանին տարել ի Թիֆլիզ, Հայր սուրբն իրա վոտը մեր տանից կըտրացրել եր։ Ջուն լսել եր, վոր Սավզյուլն ասել ա թե՝ էիմ ընեխին եդ սևադլուխը զարիրությին դրեց. ել իմ աչքը դրան տեսնա վոչ, ինեզն են ա սրա համար ել մեր տուն չեր գալի։ Եդ որը, վոր վանքում պատահեցի, ասեցի «Հայր սուրբ, մատաղ ըլիմ կարդիդ, ախր մեր տանեցին ինձ դինջությին (հանգստություն) չի տալի, կրում չի դիմանա։ Ձի ըլի, վոր Վանուն ել յեդ բերել տանքդ։ Ասեց՝ ա Սաք, խելքդ կորցրիլ ես, բա ընեխեն անջախ (հաղիվ) ա հուսումի վրեն տաքացել, բերում ես վոր ինչ անես, չորան պիտի շինես։ Ասեցի բա վռնց անենք, վոր մոր սիրտը դիմանում չի։ Ասեց, հեր որհնած, դե են ա տարին իրենք ամիս պատղնիկ ա. խի չենք են վախտը բերել տալի։ Ճես ել, ինչ մնդքս ծածկեմ, պատղնիկի բանը սկի լսել չի։ Ասացի, հայր սուրբ, պատղնիկը ինչ բան ա։ Ասեց, ըսենց, ըսենց, ըսենց։ Վայ ասածու խեր խաբարը քե, ասեցի, հայր սուրբ, բա եդ խի մինչև հմի ասել չես։ Դե շուտ մի պիր գրի մեր կնքավորենց տղին, վոր ընեխին գրկի։ Ես վոր ասում եմ, մայիսի միջումն եր։ են ա հայր սուրբը, ասառծ հոգին լուսավորի, գիրը գրեց ու մի քսան որից յեդը ընեխան եկավ։

«Դե հմի դուք ըստեղ պտի ըլեյիք, վոր տեսնիք թե՝ մերը վոնց եր գնում տղի առաջը։ Ըսկի մտոանալ չեմ։ Իրիկվա չախն (դեմն) եր. նախիրը նոր եր հանդիցը եկել։ Սավզյուլը կովկիթը ձեռին՝ Սոնա անուշով մի սիրուն կով ունինք, նրա առաջը չոքած՝ կթում եր։ Հենց վոր չըլսեց վոր ընեխեն գալիս ա, կովկիթը ձեռեն վեր դրեց, ու գժի նման վազ տվավ։

— Սավզյուլ, Սավզյուլ, աղջի, եդ ձուր ես վազ տալիս, ընեխեն հլա հեռու ա, կանչեցի յեդիցը, ամա լսեց վոչ։ Աղջի, կացի յես ել գամ, մենակ գնալ մի, բղավում ի յեդիցը. ամա Սավզյուլի ականջումը վոր թուխ ել որաքեր լսելու չեր։ Ճարս կտրեց, յես ել վեր կացա ու յեդիցը վազեցի։ Գեղցիք բանից ընեխաբար (անգիտակ) կարներիցը յա եյվաններիցը մտիկ են տալի մեզ ու արմանում։ Հենց գիտում են թե՝ կնիկս պեյացել (գժվել) տանիցը փախչում ա, ու յես ել յեդիցը վազում եմ վոր բռնեմ։ Եդ ահաթուսին հմի եր կանգնելու, թե ինչ ա, նրանց բան հասկացնի։ Ինչկլի մին վերստաչափ ըսենց իրար յեդից վազ տվինք։ Հենց են ա, եյլի (հասարակաց) ճամպին հաս ու հաս ինք, վոր թուխի յեդիցը ընեխան բևաց։ Սավզյուլը, վոր ինչկլի են՝ դուշի նման թռչում եր հու յես յեդիցը կարում չի հասնեմ, հմի վոր ընեխին

տեսավ վիշ, ասես տեղն ու տեղը մխիվեց. «Վանի՛ Ջան, բալա Ջան, դու յկկաը, մայամ (ուրևեն) յես քե տենամ պտի...» ասեց ու ծնկներըը թուլացած ճամպի միջումը չոքեց։ Ինխան ձիի վրիցը թռավ, վազ տվավ, մորը ճառին ընկավ։ Ել հրվ կարա պատմիլ քե ինչ ևր անում ըսահզ մերը՝ տղին։ «Վանի՛ Ջան, բալա Ջանդ ևր ասում ու դլխիցն ինչկլի վոտը պաչում, լիլլիզատում, թողում չևր, վոր դոշիցը պուկ դա, քե ինչ ա, մի հատ ել յես խատեմ (պրկեմ), երեսիցը պաչեմ, վոր սիրտս հովանա... Ուզում ևր, ասես, սիրան ևն ինուքին (բռանչին) ճղի ու բխեն միջումը դնի, յա չև, աչքի լիսերն հանի, վոր վանու վոտի տակը գցի... Ի՞նչ յերկարացնեմ, ես քահրով բխեին վեր կալանք, յեկանք տուն։

Ծերունին լռեց։ Ապա ձեռքը դեպի ճակատը տանելով՝ նորեն դլխակապը հանեց, ճաղատ դլուխը շոյեց և կրկին շարունակեց.

— Համի դուք կասեք, ես հալևորը ինչ ա ըսենց երկեն-բարակ խոսում. մենք ուղեցինք վոր Նոյի ագռավի բանն իմանանք, սա իրա ազի պատմությունն ա կցկը։

— Չև, պատմիր, մենք սիրով լսում ենք, — ապահովացրի յես ծերունուն։

— Հա, ինչկլի համ պատմեցի քե՝ ծնողն ինչ ցավ ու կրակի մեջ ա ըլում, յեսի իրա բխեին գարիբուքին ա դրկում։ Համ յել մի ուրիշ ցավ պատմեմ։ — Ինչ առաջ յեսի ընկերդ ասեց տունդ խի չշինեցիր, կլի վոր փող չունիր. ասեցի ինչի չունի, փող ենքան ունեցի, վոր միներ չև, երկու հատ ել կշինի, քե վոր ուզի։ Սրանով ուզում ի ասեմ քե՝ յես հարուստ եմ։ Համա դե գեղական հարստությունն ինչ ա։ Մին հազար, յա երկու հազար մանեթ, վոր ունենում ա, յա չև մի քսան, երսուն դլուխ տավար, մին պուճուր իլխի (ջոկ) ձի, մին քանի ուլախ (դրաստ), են ա ասում են քե մեծ գովլաքի (հարստության) տեր ա։ Ցես ել ըսենց հարուստ իս։ Ցեսի Ոսկեի հայր սուրբն ասեց՝ փողդ խարջի բխեին ուտում տու, յես հենց գիտացի քե՝ իմ նադդ (կանխիկ) փողը բավական կլի դրան։ Ասեցի են լավ ա իմ վանին հուսուվհական ըլի, քանդ յես հազար, յա երկու հազար մանեթի տեր։ Փողը նրա գլխին մատաղ, իմ բադն ու բախչեն, իմ տունն ու ջրաղացը, իմ տավարն ու ձիանը, վոր ինձ մնան, են ել ինձ հերիք ա։ Համա դե վոր փողի ճնդիցը կցկցի վոչ խարջիլը — հենց բան չգիտաք դեղականի համար տարին իրեք հարյուր մանեթ գիմյաղը փող ըրկիլը, — են ա տևսա, վոր ոխտը տարվա մեջ ելած փողս ձեռքես դուրս եկավ ու յես մնացի դարդակ։ Եդ տարին վանին գիմյաղը պրծնել եր։ Գրեց քե, ա հեր, ինձ պտիմ ոչնես, վոր գնամ ուներվրա։ Ես բանը ինձ փիքրի մեջ դցեց. ընդուր վոր տեսնում ի քե

որս փիս տեղ ա մքնում։ Գնացի վանահոր մոտ խորհուրդի։ Հայր սուրբ, ասեցի, ախր ձեռիս փողը դուրս եկավ, ընչեն էլ գրում ա քեզ՝ ինձ ուղիվերս դրկի։ Ցես ինչ անեմ։ Ուզում եմ վանին բերել տամ. բոլ ա (բավական է) վորքան հուսում առավ։ Հայր սուրբը, հախ ասածու (ճիշտն ասած) իմ գալը (կողմը) խոսաց։ — Ա. Սաք, ասեց, քե վոր փող չունես, դիմյազի հուսումն էլ ա բավական, գրի թող դաս։ Ին ա, յես էլ գրեցի։ Ամա դե վանին թարսի ձին նստեց, էլ վեր չեկավ (հակառակվեց)։ «Ա հեր, գրում ա ինձ, դու մի բաղ ես անկել, պահել, բջարել (մշակել), ծառերը հասցրել, մին ջուր տվել ես, ճացել ա մեկելը, վոր բաղը հասնի, պտուղը քաղես։ Էմի դու եդ ջուրը բեվախտ (անժամանակ) կորում ես, պտուղը խակ թողնում, եդ ասած վեր չունիլ։ Իմ ընկերները դիփ գնացին, վիրը Մոսկվա, վիրը Պետրոլուկ, մենակ յես եմ ճացել ձեռս ծացումս, գլուխս քաշ։ Ցեկ եդ բանը դու մի անիլ, իմ վիղը մի կորիլ... Դե, ձեզ եմ հարցնում, մի հեր, վոր իրա մին ու ճար ըռեխիցը ըսենց նամակ առաներա, ինչ կանի։

— Ի հարկե, բոլոր ելած չելածը կծաքեն, նրան կուղարկեն, — արագ պատասխանեց Պետրոսը։

— Էմ, ապրես, յես էլ ըդենց արի։ Ինչ վոր ջեբումըս, յա սանդուխումս փող եր ճացել, են հվաքեցի, դրկեցի Վանուն, ասեցի, վորդի, ես քի՝ ճնապարի խորշլուխ, գնա, ասած քե հետ. հուսումի ու ապրուսաի փողն էլ կղրկեմ։ Սրանից յեդը՝ հորենական մի թթի բաղ ունինք, են ծախեցի քաշալ Մոսու տղի վրեն ութ հարյուր մանեթի ու փողը յավաշ յավաշ դրկեցի Վանուն։ Եդ հերիք չարավ։ Ցեդո մեր ես ջրի վրա մի ջաղաց ունինք, կլի վոր տեսած ըլիք։

— Այո, տեսել ենք, — հաստատեցի յես։

— Էա, են ջաղացը ծախեցի խոճա Մարութի վրեն չորս հարյուր մանեթի ու փողն էլի դրկեցի Վանուն։ Սա էլ իմ քոռ բաղդիցը, ուղիվերսի մի կլասումը իրար վրա, երկու տարի ճացի։ Գրում եր թե, մինոմ, վարժապետները փախլուխին են արել (նախանձել եյին), վոր ինքն ընենց լավ կարթում ու ճգրու մին տարի ավել ին պահել են կլասումը։ Ամա դե, ուրիշներն էլ ասել ին մեր կնքավորենց տղին՝ քե Վանին մի նախշուն աղչկա սեր ա ավել, յեդիցն ընկել, դես ու դեն շուռ յեկել, ու դրա համար ա կլասումը ճացել։ Սուտն ու դորթը ասած ա իմանում, անջախ ես կա, վոր եդ մին տարվա խաթրին՝ չաղացի փողը քոռ ու փուչ ելավ (վոչնչացավ)։ Են ա չլիզ (բոլորովին) դայամիշ ի ըլել (հոգնել եյի), գնացի հայր սուրբի մոտ, ասեցի. ա վարդապետ, ախր էլ դիմանալու ուժ չունեմ, ինչ անեմ։ Ասեց, ա Սաք, շատին

դմացնել ես, քչին էլ դմաց, ձիանդ ծախի, յեղներդ ծախի, փող հասցրու։ Դու սկի վախիլ մի, տղադ վոր յեդ դառնա, իրա սովրած թահրովը լավ բաղ էլ ա անկելու, նոր դայդի (տեսակի) ջաղաց էլ ա շինելու, յեղներդ ու ձիերդ էլ ա շատացնելու։ Ուսում առած տղան վոր կա, Նոյի ապաշխին ա, վոր ձիթենու շիվը բերանումն յեդ ա դալիս ու բախտավորութենի խաբարը բերում ծնողին։ Ի՞նչ յերկարացնեմ, հայր սուրբի խոսքերը սիրտ տվին ինձ, յես էլ կցնցի առաջ ձիաներիցս, վերջը յեղներիցս մի մի ծախել ու փող դրկել Վանին։ Ին ա վերջին տարին եր. ամառը Վանին ամեն բան պտի վերջացներ ու յեդ գար գեղը։ Խոսք չկա, վոր յես էլ որեր եմ համբարում (համարում) թե՝ յեսի ա բախեն յեդ գալու, վոր համ ես դժար հոգսիցը մեդ ազատի, համ էլ իրեն տեննանք ու կարոտիս առնենք։

— «Մին էլ ես ա մին դիր եմ առանում թե՝ ա հեր, հուսումս վերջացրել պրծել եմ, ամա ըսաեղ պարաք ունիմ, բաց չեն թողնում ինձ. վորդիան վոր ա, մին երկու հարյուր մանեթ հասցրու, վոր ես պարաքը թափեմ ու գամ։ Ղորթ ա, պարաքի անումը, վոր լսեցի սիրտս շատ կոտրվեց, ամա դե ասեցի ազյուշան աղլամազ (ընկնողը լաց չի լինել), թող ես մինեն էլ յոլա տանենք։ Գնացի Խոջա-Մարութից երկու հարիր մանեթ պարաք արի, թյումանին մի արաս շահով (24 %) ու մին ամիս ժամանակով։ Եդ փողն էլ դրկեցի Վանուն։ Մաքումս էլ ասըմ ի թե, ես ա բախես կդա, համ ես պարաքը կտա, համ էլ իրա ծռացրած բաները կդրստի։ Հենց դիտում ի թե՝ Վանին վոր իրա հուսումովը դեղ մանի, են ա փողը յերկինքիցը վեր ա թափվելու։

— «Մենց կացավ մին ամիս, երկու ամիս, Վանուցը խաբար չկա։ Մնծ փքըի մեջ ընկա։ Ծամրաթ ես իրենց ելավ. Վանին վիրդին ճտաց. չըլի մի քամբախտութին պատահեց. յա չե Գետրպոլիսումը բռնեցին բախտս, չուն ըսենց բաներ շատ ի լսել։ Մի խոսքով սիրտս ճաքում եր։

— «Մին էլ ես ա մի որ Վանիցը դիր եմ առանում, գրում ա թե՝ ա հեր, աչքդ լիս ըլի, եկել եմ Թիֆլիս ու մի սիրուն աղջկա հետ պսակվում եմ, հալի հալրաթ (անպատճառ) քու ու նանի սրհանությունը դուշի թևովը հասցրու ինձ։

«Վանից վոր մարդու գլխին մի թուխ տրաքի, ընենց ես խաբարը տրաքեց իմ գլխին ու ինձ շշմեցրեց։ Սաղ մին քանի որ յես կնիկս չլիդ պլեցել, ընկել ինք ըսաեղերք, վոչ տրածներս ինք իմանում, վոչ չտրածներս։ Շատ մտածելուց ու փիքր անելուց յեդը՝ վեր եմ կենում գրում տղիս թե՝ ա վորդի, ախար հլա քու ինչ պսակվելու վախտն ա. հլա նոր ես հուսումդ վերջացրել, մին յեկ

քե տեսնենք, մեր կարասն առնենք, մեր ցավերիցը խոսանք. ախար քու աբոնը (հուսով) ելած չելածս ծախել, պարտքի տակ եմ ընկել, յեկ իմ ցավին մի ճար արա, ել յեդ դնամ պահվիրա։

«Հմի դուք փիքր կանեք քե՝ դեղացին իրա տղին պահում ա տանհինդ, յա չե տասնվեց տարումը. ես խի Սաքի տղերը ուզում չեր, վոր իրա քսանըչորս տարեկան տղեն պահվի։ Դրա մանինն, դրուսան ասած, մին են եր, վոր յես Թիֆլիսի աղչկերանցից վախում ի. չուն դրանցից շատ բաներ ի լսել։ Մտածում ի քե՝ չլի տղես գլխից հանեն ու մին քոռ ու քաչալ դատ գլխին կապեն։ Ջահելը, հո գիտաք, քոռ կըլի. ասում ի ընենց ըլի՝ վոր մինուճար տղես անբաղդ չանեն. մին ել են եր, վոր գիտում ի Վանին Թիֆլիսում պահվիլուց յեդը ել մեղ մատ չի գալու, վաքտանն (հայրենիքն) ել ա մոքիցը գցելու, հոր տունն ել։ Ես ցավին, գիտաք, դմանալ չեր ըլիլ։

«Իմ գրին տղես պատասխանում ա քե՝ ա հեր, ես աղչկանը Պետրպոլիից եմ սեր տվել, ինչկլի հեդը չպահվիմ՝ կարալ չեմ դեղը գալ. հալի հալբաթ քու սրհնութինը գրկի։

«Գրում եմ, ա վորդի, ախար մին ասես ել ա՝ նդ ինչ աղչիկ ա, ինչ աղդի վորդի ա. հայ ա, ռուս ա, չհուդ աւ Ախար, յես վրենց իմ սրհնութինը գրկեմ են հարսին, վորի երեսը տեսել չեմ, ձենը լսել չեմ։ Գրում ա քե՝ — ա հեր, խի յես եդ բանը հարցնում. յես հո թուրքի, յա չհուդի աղչիկ չեմ ուզիլու։ Գիտում չես, վոր ուզածս քրիստոնի աղչիկ կլի։ Ամա մի երկու որ յեդը մեր կնքավորենց տղեն գրում ա (չուն նրան ել ի հարցրել), քե՝ ասիլ չես, Վանին պահվում ա մի գյուրջու (վրացու) աղչկա հետ...։

«Հմի ձեղ եմ հարցնում. մին հեր, վոր ես բանը լսի ինչ կանի։ Հ՞ը։ Ամա ձեր եմ հարցնում. դուք ինչ գիտաք։ Են ա կցեցի գըլխիս վայ տալն ու մե ու վեշ անիլը։ Ամա դե ել ձեր կհասներ։ Բանը բանից անցել եր։

— Ուբեմն քու սրհնությունը չուզարկեցիր, — հարցրի յես։

— Չե, չզարկեցի։ Ամա ինքը առանց դրան ել պահվիլ պրծել եր։ Ճեղո ել ինձ վրա ուռած, փքված գրում ա քե՝ «ա հեր, դու վոր քու սրհնութինը ինձ չզրկեցիր ու ես իշխան մարդկանց միջումն ինձ խայտառակեցիր, ել հորես դենը յես քու վորդին չեմ։

— Հետո դու ինչ պատասխանեցիր։

— Վոչինչ։ Մենակ են արի, վոր նրա դիրը վեր կալա, գնացի վանքը։ Են վախտը Ոսեի հայր սուրբը մեռել եր։ Գնացի նրա դերեզմանի ոաջին չոդեցի, քարը համբուրեցի ու լաց ըլելով ասեցի — «Ոսեի հայր սուրբ, լուս դառնաս դու հողովդ ու քարովդ. ախար դու ինձ ասեցիր, վոր իմ Վանին Նոյի աղաջին ա, ես ա ձիթե-

Նու շիվը բերանում յեղ ա դալու, վոր բանդավորութենի խաբարը բերի ինձ. բա խի ըանց չիլավ... ախը Վանին հմի Նոյի ապռանքը ա դառել, ջամդաքի վրեն նստել ա՝ ու էլ յեդ չի դալի. սրա ճարն ինչ կլի...

Մերուշին լռեց, կարծես, այլ ևս չկամենալով խոսել։

Բայց Գևորսոը, վոր, ըստ յերևույթին, չեր նկատում ծերուհու հուդմունքը, հարցրեց.

— Վերջը ինչպես յեղավ. տղեդ պատկվելուց հետո դյուղը չհիմվ։

— Ցնկալ հինդ տարուց յեղը. կնիկն էլ բերավ, մի յերեք էլ դյուրջու ճամբ հեղը։

— Հետո։

— Հետո էլ ինչ. մի տաս որ ինաց, սաքի (վորպես թե) մեր խաթրը առնելու համար ու էլ յեդ գնաց։

— Բան ըսկի չհարցրիր. թե ինչու յե այդ աղջիկ հետ պատկվել։

— Հարցրի, ասեց սրա հերը ընտի մեծ դուլուդում (պատռատի մեջ) ա, պատկվեցի վոր ինձ էլ կուռն տակը քաշի ու մենծ մարդկանց չարքը (շարքը) դնի։

— Այսուամենայնիվ, դու քո նպատակին հասել ես, տղիդ բարձր ուսում ես տվել՝ ու Թիֆլիսի նման քաղաքում հայտնի մարդկանց շարքը դրել՝ այդ էլ մեծ բան է, — նկատեց ընկերս։

— Ա քե մատաղ, բա յես իմ ելած չելածը փչացրել, Վանին հուսում եմ տվել, վոր նա Թիֆլիսին պետք գա. խի, Թիֆլիզումը նրա նմանները քիչ կան. յա չե իմ սերտը շատ ես յավում եղ բարբադի (քանդվածի) համը... Ցես իմ տղին հուսում եմ տվել, վոր առաջ իմ աշխատը չինի, իմ հանդած ճրագը վառի, իմ տունը հարս բերիլով ինձ ու իմ պատռվին ուրախացնի, յեղն էլ իրա ուսումով ես խաղար գնդը լուսավորի. մեր խեղճ ու հայվան շինականին դռից, բանգոից ազատի... Թիֆլիսում Վանին Թող հենց յերկնքից հրնշական վեր բերի. ինձ ինչ... հրեն, վեր յերկրում, վոր լուսավոր, յա չե փառդ ու փիլով (հնարագետ) մարդ կա, հենց դրա Թիֆլիս ա վազ տալի. դուք մեր ես խեղճ գնդի դարդը քաշեցեք, վոր վոչ տեր ունի, վոչ սրտացավ...

— Վանին դրեն վող ուղարկեմ և քեզ, — հարցրի յես ծերուհուն։

— Ձև, չի դարկում, մեր կնքավորի տղին ասել ա Թե՝ ապուն աստ ինձանից նեղանա վոչ. խարջս շատ ա մենծ. տարին 3—4 հազար մանեթը հերիք չանում, յես էլ անջախ (հաղիվ) եդքան եմ աշխատում։

— Իսկ Նոյա-Մարութի պարտքը վճարեց։

— Ջե, քե մատաղ. նրան եվ երկու դոմշակովս ավի, հոդիս ազատեցի։

— Հապա յերբ այստեղ յեկավ, իսկի չասացիր, թե ինչու գոնե յուր համար արածդ պարտքը չի վճարում։

— Աեցի, ասում ա, ա հեր դիփ մեկ չի. ինչ ունես չունես ծախիր կեր. յեվ վոր կդարատակվես, կդաս Թիֆլիս իմ տանը կապրես։

— Դու ինչ ասեցիր։

— Աեցի, յանղլիշ ես, վորդի, վոր իմանամ քաղցած մեռնելու յեմ իմ վառն իմ գեղիցը դուրս չեմ դնիլ, ըստեղ ծնվել եմ, ըստեղ եվ պտի մեռնեմ. իրա վաթանը մոռացողը, հոր տունն աչքից ու մաքից քցողը մարդ չի, հայվան ա։

— Ցավ այդ դրության մեջ ուրեմն դու վոչ մի մխիթարություն չունեիս, — հարցրի յես ծերունուն, ի սրտե ցավակցելով նրան։

— Ունեմ, վհնց չունեմ, — պատասխանեց նա հուզված ձայնով — իմ մխիթարությունն եվ են ա, վոր յեվ լսում եմ թե մեր գեղականին մինը ուզում ա իրա տղին քաղաք դրկի հուսում առնելու, են ահաթին գնում եմ կռնիցը բռնում, բերում մեր հայաթումը կանգնացնում ու ասում. — տես, վորդի, ես վեդունց Սարդսի շեն ոջախն ա, վոր ևսոր վերանա (ավերակ) ա դառնալ։ Ա՛յ, տես կտուրը ծռվել ա, պեշերը թափվել են, դերանը կախ ա ընկել, պյումը դարատակվել ա, ու մեզ թացան (թաց կերակուր) ավողը մի ևծ (այծ) ա ճռացել... Մենք եվ, տեսնում ես, մարդ ու կնիկ ծերացել, ճռացել ենք անտեր. վոչ ձեռք կա, վոր մեր դուռը բանա, վոչ ձեն կա, վոր սրտներս ուրախացնի... ես դիփ նրա մեղն ա, վոր յես իմ տղին հուսումի դրկեցի... Վախեր եղ բանիցը, վորդի, ըսենեղ քու կյանին պահիր, տանիցդ մի հեռացնիլ, վոր իմ վանու նման նոյի ապռավ չդառնա...։

— Բայց դուք հո դրանով չարիք եք գործում, — բացականչեց Գևորոսը վրդովվելով։

— Չարիք խի եմ գործում, — պատասխանեց ծերունին յեռանդով, — լավը են չի վոր մեր գեղը հիսուն վար անող տղամարդ ավելի ունենա, քան թե հարիր նոյի ապռավ։ Վար անողը հլա հաց կբերի տուն, քյուլփաթի (դավակներին) ուտկին կդառցնի. նոյի ապռավը ինչի ա պետք։ Ծա չե, հիվ ա մեղավոր, վոր յես հմի ըսենց եմ խրատում մարդկանց, յես, թե իմ տղեն։ Մի սհաթ առաջ գնացել եք Տեր-Մակուչի յախեն (ոձիքը) բռնել թե՝ ես խի դու գիտուն չես, ես խի տղերանդ հուսումի չես դրկել... Ծեզնե են սհաթին յեկավ ինձ դանդաղեցրեց։ Աեցի, ձեր ա, եղ շլապովոր տղերանց մի դրկի ըսեղ՝ յես եվ նրանց իմ հարցմունքն անեմ։

Համի հաղիր յեկել եք. խնդրում եմ վոր ասեք. — հիվ է մեղավոր, վոր դեղի քահանան Տեր Մակուչն ա. հիվ ա մեղավոր, վոր յեղյուս առաջը անապատ ա. հիվ ա մեղավոր, վոր դեղը կեղտոտ ա, ուները տակից կպած, հայաթենները թրքով լիքը, քուչեքը ծուռ ու մուռ... ասեցեք տենամ, հիվ ա մեղավոր, խեղճ դեղակինը, թե Նոյի ագռաւիները։ Ախար ինչկլի համ ես դեղարանքից մի առսը, քսան տղա դնացել են հուսում առել, լուսավորվել. համ ձեր են, ընչէ նրանցից մինն ու մինը յեդ չեկավ, վոր իրա հոր ոջախը վառի, իրա վաթանը պայծառացնի, վոր դեղացին հենց մինը որինակ ել ա տեսնի ու ասի թե՝ ղորթ ա, հուսումը լավ բան ա, յեկեք մենք քար ու քացախ ուտենք, համ մեր ըսխանց հուսում առնք, լուսավորենք...»

Ծերունին լռեց, իսկ մենք պատասխանելու վոչինչ չունեյինք։

Բարեբախտաբար այդ միջոցին պարտիզի դռնում յերևաց մեր հյուրընկալը, վոր յեկել եր մեզ ճաշի կանչելու։ Ոդուտ քաղելով առիթից, վերկացանք տեղից և վաղուընելուն ծերունուն, հետացանք ծանր տպավորութեյան տակ։

Ցերը իշնում եյինք սոսինների զառիվայրով՝ հարցրի Պետրոսին թե՝ — արդյոք հիշում և այն խոսքը, վոր ասում եյի՝ թե վկզբանվին հոգվո կամ մտքի աչքերով հիվանդներ, վորոնք խավարը կվորոնեն իբրև ղեղ, իրենց ցավը մեղմելու համար»։

— Հիշում եմ, ասաց նա, և այս ծերունին այս հիվանդներից մինն և։

— Այո. սակայն նրա միտքն առողջ և հոգին կայտառ և յեղել. յերկուսն ել հիվանդացրել և լուսավոր վորդին, — հարեցի յես։

— Անշուշտ, — պատասխանեց ընկերս և այս անգամ արդեն խոր համոզմունքով։

ԱՌԱՔՅԱԼԸ

1902

Եւ այլն անկաւ յայսմաւրէ, ուր ոչ գոյր հող բազում, և վաղվաղակի բուսաւ առ ի չգոյէ հիւթոյ երկրին, և ծագել արեւու տապացաւ, և զի ոչ գոյին արմատք չորացաւ։

Ավետ. Մատթ.

Ա

Ողբ մեզմ եր և տաքուկ, յերկինքը պարզ և աստղազարդ։ Տների ներսը չեր դրաւում մարդկանց, ուսաի ժողովուրդը լցված եր դուրսը և դրոնում եր սալած մայթերի վրա, կամ նոր կառնաչաղարդ ծառուղիներում։ Շառագույն լուսինը, վոր նոր եր բարձրանում մթնացող հորիզոնում, խոստանում եր գեղեցիկ, լուսնկա գիշեր։ Այդ պատճառով վողոջներում աշ ու ձախ սլացյող կառքերի թվին հետզհետե ավելանում էին և այն դեսպակները, վորոնք իրենց մեջ խնամքով ծածկում էին հեռավոր գրոսարաններն խորհրդավոր հաճախորդներին։ Այդպիսով դրսի աղմուկը գնալով սաստկանում եր և կենդանությունը տիրում ամեն տեղ։

Միայն ծերուկ փիլիսոփան, կամ դեղեցկուհուց մերժված սիրահարը կարող էին այդպիսի ախորժելի յերեկոյին փակվել տան խորշերում և մտածել մինը՝ աշխարհի ունայնության և մյուսը՝ յուր վշտի ծանրության վրա։ Բայց կյանքի արժեքը մեծագրել դիտցող մարդը, մանավանդ յեթե դա յերիտասարդ եր կամ յերիտասարդուհի, չեր կարող այդպիսի գրավիչ ժամերին չդանվիլ գրոսնողների ընդհանուր ժխորի մեջ։

Սակայն արի տես, վոր հենց այդպիսի մի ժամանակ՝ ներքին հարկի մի ցածուն, բայց և ընդարձակ սենյակի մեջ ժողված էին մի խումբ աշխույժ յերիտասարդներ, վորոնք չէին մտածում վոչ նորեկ գարնան, վոչ սիրուն լուսնի և վոչ ճեմելիքներում գրոսնող դեղեցկուհիների մասին։ Նրանք գրաղված էին ավելի արժանավոր, կամ ինչպես իրենք կասկին՝ գաղնվական գործով։ Դրանք հայ ուսանողներ էին՝ համալսարանի կամ այլ բարձրա-

գույն դպրոցների վերջին կուրսերից, վորոնք հաճախ ժողովում էին այդտեղ միմյանց հետ տեսնվելու, մտերմապես զրուցելու, մայրենի լեզվով կարդալու, կամ հեռավոր հայրենիքից ստացված նորությունները միմյանց հաղորդելու, յերբեմն էլ իրենց ցավերի մասին միմյանցից կարծիք, կամ խորհուրդ հարցնելու։

Այդ քաղաքում կային և ուրիշ հայ ուսանողներ, վորոնք իրենց աղատ ժամանակը անօրինում էին այլ կերպ։ Վոմանք սիրում էին չափել փողոցները, աշխարհի չար ու բարին այդ տեղերում միայն ուսումնասիրելու նպատակով, վոմանք զրաղվում էին սովորական թղթախաղով՝ ժամանակի ձանձրույթը մեղմելու համար. ուրիշներն այցելում էին հարուստ ընտանիքներին՝ նրանց տիրուհիներին զրաղցնելու կամ որիորդներին դրավելու հուսով և յերբ նրանց չեր հաջողվում վոչ մինը և վոչ մյուսը, շատանում էին համեղ ընթրիք վայելելով։ Մի մասն էլ եպիկուրյան փիլիսոփայության հետևելով՝ ազատ ժամերը նվիրում էր հաճույքի աղջիկների ընկերակցության, մտածելով թե՝ այդպիսով ավելի լավ է ծառայում մարդ ազգածի իսկական կոչման։

Բայց ներքնահարկի ցածուն առաստաղով սենյակում ժողովվածները չէին պատկանում հիշյալների թվին։ Նրանք ուսանողության ամենաբնտիր մասը, կամ բանաստեղծորեն ասած՝ ծաղիկներն էին, վորոնք իրենց կոչման նշանակությունն ըմբռնելով, ժողովվել էին այդտեղ, ինչպես ասացինք, լավագույն մի գործով զրաղվելու համար։

Ցավ նրանց այսորվա պարապմունքի առարկան նշանավոր էր շատ կողմերից։ Այսօր քննվում էր այն կարևոր հարցը, թե նրանցից վերը ինչպես պիտի գործեն կյանքի ասպարեզը մտնելուց հետո։

Այդպիսի հարցեր, ինչպես հայտնի է, փորձված մարդիկ չեն տալիս իրար, միշտ մտածելով թե՝ գրանը բան ցույց կտա. իսկ փորձված հոգևորականը մինչև անգամ ասում է՝ «Որ ավուր բղխե զբան և գիշեր՝ գիշերի ցուցանե զգիտություն», ուստի և յերբեք խոստում չե անում, բայց ուսանողն, հո գիտեք, անձնվիրան է ամեն դեպքում, հետևապես և կարող է նման հարցեր քննելու։ Անփորձությունն էլ, անշուշտ, մի արտոնություն է, վորից մարդիկ յերբեմն ոգտվում են հաջողությամբ։ Ցավ քիչ չե պատահում, վոր բաղդն ավելի ժպտում է նրանց, վորոնք զրաղծում են առանց յերկար մտածելու։

Ինչ և է, առաջադրյալ խնդրի մասին յերկար խոսել ու վիճել էին ուսանողները, յերբ նախագահը, վոր մի առողջ, զվար-

քաձայն և կոպիտ արտաքինով յերիտասարդ եր, ուժգին զանգահարելով ժողովականների ուշադրությունը հրավիրեց յուր վրա։

Դահլիճում լռություն տիրեց։

— Ընդհրը մենք քննեցինք ամեն կողմից, — ասաց նախագահը, — մինչև անգամ ավելորդ մանրամասնությունների մեջ մտանք. այժմ արդեն ժամանակ է ամփոփել մեր մտքերը, ձևակերպելով այսպես։

Բարեսիրտ խնդությունը լարեց ուշադրությունը նախագահի խոսքերը դրի առնելու համար։

— Մենք վորդիք ու անդամներ ենք այնպիսի մի ազգի, — շարունակեց նախագահը, — վոր ունի կարիքներ ու ցավեր։ Այդ ազգին իրավունքով սպասում է մեզ, յուր հարազատ վորդիներին, վորովհետև գիտե, վոր մենք բարձր ուսում ու կրթություն ստանալով, ձեռք ենք բերում այն ուժը, վորով պիտի կարենանք յուր կարիքները լցնել և ցավերը դարմանել։ Հետևապես, մեզ վրա դրվում է սրբազան պարտք՝ ի դերև չհանել սպասող ազգի հույսն ու ակնկալությունը։ Մեզանից յուրաքանչյուրը պիտի համարև իրեն մի պարտապան, վոր ունի վճարելիք յուր պարտատիրոջ, այսինքն ազգին, ուսում և մտածե այդ պարտքը վճարելու յեղանակի վրա, և վճարև սիրով, համարելով այդ պարտքը մեծ բեռն ու ծանրություն, այլ յուր սրտին հանգիստ և հոգվույն հաճույք բերող մի գործ։ Մի յերկու ամիս ևս և մենք կթողնենք այն տաճարները, վորոնց հարկերի տակ մեր սրտերում ցանեցին գիտություն ու բարվո, ճշմարտի և գեղեցկի լավագույն սերմերը. մի յերկու ամիս ևս և մենք կրաժանվինք իրարից, ով գիտե, դուցե հավիտյան։ Արդ, քանի միասին ենք, քանի տեսնում և լսում ենք իրար, անա խոստանում ենք միմյանց՝ ընկերի և ուսանողի աղնվագույն խոստումով, վոր մեր սրտերում ցանված սերմերը պիտի աճեցնենք կյանքում հիսնատասիկ, հարյուրապատիկ և այդ սերմերից յելած պտուղները լայնել տանք նախ այն ազգին ու ժողովրդին, վորին պատկանելու պատիվն ունինք և ապա թե դրանից բաժին հանենք մեզ։ Ենք վստահում, ի հարկե, թե ով մեզանից ոչինչ չափով և պարտավոր ծառայել ազգին, բայց հավատում ենք թե մեզանից յուրաքանչյուրը սիրով պիտի լսե այն ձայնը վոր կանչում է՝ «հունձք շատ է և մշակք սակավ...» Հետևապես և պիտի շտապե դառնալ «մշակ» այդ «հունձերի» համար և աշխատել ու քրտնել ազգի անդաստաններում։ Խոստանում ենք, վոր վոչ վոք մեզանից պիտի յետ քաշվի վատաբար, կամ ասե թե իմ ուժն անկարող է ազգի կարիքները լցնելու, այլ պիտի աշխատե ըստ յուր կարո-

դուքյան, հիշելով այն առածը թե՝ ջուր կամք կա, այնտեղ կա և ճանապարհ։ Ցավ իրավ, յերբ չուրը յուր կաթիլներով ծակում և ազատվում, մերթ մեր կամքը այդ չի կարող անել։ «Ամենալավ իմաստասիրությունը, հաստատ վարդուհի ես, ասում եր Նապոլեոնը։ Ցավ յես կարծում եմ, յերբ մենք ևս կյանքի մեջ հետևինք այդ իմաստուն խրատին, անշուշտ կգործեինք ավելի հաջողությամբ, քան կարող ենք այժմ յերևակայել։ Մեր ժողովուրդն, իրավ, կրկներ շատ ունի և այդ ամենը մենք չենք կարող դարմանել։ Բայց յերբ այսօր մենք մի մասը դարմաններ և վաղն ուրիշները մի ուրիշ մասը, և այսպես գործը շարունակվի անընդհատ, կրկները կդարմանվին կարճ ժամանակում և ցավերը կվերանան անզգալապես»։ Աշխատող ձեռքը պարապներ, չի պորիլ յերբեք վարդալիր պարտեզ, այլ կերթա այնտեղ, ուր հողն անմշակ և քաշտերը խոպան, նա յուր քրտինքը կթափե այդ հողում, վորպեսզի ապագայում մխիթարվի այն մաքով թե ինքն իրավամբ կրում և արարչի պատկերը, վասնզի կարողացավ բնչն ստեղծել վչնչից։ Պատմությյան մեջ հայտնի բազմաթիվ անձինք նշանավոր են դարձել և աղգերի ու սերունդների սերն ու սիրտը գրավել վոչ այն պատճառով, վոր իրենց անձն են սիրել, կամ շահը խնամել, այլ վորովհետև նվիրվել են հասարակաց բարվույն, ժողովրդին ու հայրենիքին։ Դրանցից շատերը սկսել են գործել ամենաանշնչաստ պայմաններում, շարունակ արգելքների ու հալածանքների հանդիպելով, բայց վորովհետև ունեցել են հաստատուն կամք, վորովհետև անկեղծորեն սիրել են ժողովուրդը, ուսում և հաղթել են ամեն արգելքների և ստեղծել աշխարհում հոյակապ գործեր։ Մենք ել, ուրեմն, գործելու ժամանակ առաջնորդ ունենանք պատմությյան հերոսներին և ինչ անհնազանդ պայմաններում ել, վոր սկսենք մեր գործը, հիշենք այն իմաստուն նշանաբանը, վոր վորված և յեղել մի հին կացնի վրա՝ «կամ կգտնեմ ճանապարհը և կամ ինքս բաց կանեմ»։ Այսպիսի վորոշումով գործել ցանկացող մարդուն արգելքը չի վհատեցնիլ, այսպիսի մարդու առաջ ժայռերն անգամ կհալվին...»

Այս յեղանակով դեռ յերկար խոսեց նախագահը, վոր ճեմարանի նախկին սան լինելով վարժ եր հայ լեզվով ճառ արտասանելուն, ուստի յերբ ավարտեց, ուսանողները վոգևորված ծափահարեցին նրան։ Ապա սկսան ամեն կողմից հանդիսավոր խոսուներ անել այն մասին թե՝ արդարև, կյանքի մեջ մանելուց հետո պիտի նվիրվին հասարակաց շահին։ Յերիտասարդներից վոմանք, մինչև անգամ, իրենց ապագա գործունեության ծրագիրն առաջարկեցին, վոմանք ել այդ ծրագիրը պակասավոր դըս-

նելով, ավելի ընդարձակ խոստումներ արին։ Դանվեցան ի հարկն և այնպիսիները, վորոնք համեստությամբ խուսյս ավին թե ծրագիր առաջարկելուց և թե այն քննադատելուց։

Բայց բոլոր խոսողների մեջ ավելի դրական և կշիռ ունեցող խոսումն արավ Պետրոս Կամսարյանը, վոր մի բարեկազմ և դեղեցիկ արտաքինով յերիտասարդ եր։ Լինելով հարուստի զավակ, նա միևնույն ժամանակ բարեսիրտ եր և դյուրաղդաց, կարիքի ժամանակ ոգնում եր ընկերներին և ուսանողական աշխատությանց մասնակցում սիրով։ Բայց լինելով ի բնե զգույշ և կարգապահ, ամեն ինչ անում եր չափով ու կանոնով։ Նույնիսկ ոգնության կամ աշխատության վերաբերյալ գործերում, նա յուր համար ուներ վորոշ չափ ու կշիռ։ Առում եր իննչպես անհոգությունը, նույպես և ամեն ծայրահեղություն, ուստի և խուսյս եր տալիս այնպիսի ընկերներից, վորոնց ներկայացնում էին իսկական ուսանողի տիպ. այսինքն, լինում էին անփույթ՝ վազվա պարտքի նկատմամբ, անհաշիվ՝ իրենց ծախսերի մեջ, անտարբեր՝ դեպի կարգ ու կանոնը, մաքրասիրությունը և ճշտապահությունը։ Եվ թեպետ այս պատճառով նա ընկերներից ստացել եր պերճանուն մականունը, այսուամենայնիվ, այդ բանից նա չեր վիրավորվում, վորովհետև փորձով դիտեր, վոր անկարդ ու անկանոն յոդանակով ապրողները միշտ այդ անունով են միրառում կարգապահ մարդկանց, վորպեսզի դրանով իրենց թերությունը ծածկեն։

Այս իսկ պատճառով ուսանողներն ապշեցան, յերբ Կամսարյանը հանդիսարար հայտնեց թե վորոշել և քննություններից հետո վերադառնալ հայրենիք և իրեն նվիրել յուր աղգակիցների ամենից ավելի ոգնության կարոտ դասակարգին, այսինքն՝ մտնել դյուղը և այնտեղ հիմնել ոգնության մեծ գործ, հատկացնելով այդ նպատակին՝ յուր հարուստ հորից իրեն հասանելիք ժառանգությունը։

Սկզբում ընկերները, կարծես, չհասկացան այդ հայտարարության միտքը և նայում էին իրար հարցական հայացքներով։ Բայց յերբ յերիտասարդը կրկնեց յուր վորոշումը ավելի մանկին և հաստատակամ, ներքնահարկի դահլիճը թնդաց կեցցեների վորոտընդոստ ձայներից և մի քանի ուժեղ ձեռքեր բարձրացրին Կամսարյանին դեպի առաստաղը և սկսան շրջեցնել դահլիճի շուրջը՝ շարունակ «կեցցե» գոռալով և «Հերիք ընկերք» յերդելով։ Աղմուկը դադարելուց հետո Պետրոս Կամսարյանի հայտարարությունն ընդունվեց ուսանողների աշխատանական դովեստով և խոսքն էլ մուծվեցավ արձանագրության տետրակը։

Բ

Ամառ է. քննությունները վերջացել են։ Կամսարյանն սառցել է ավարտման վկայական։ Այժմ նա իրավաբան է. կարող է ապրել քաղաքում և շրջապատել իրեն հարմարություններով, այսինքն կահավորել մի փոստավոր տուն՝ համաձայն յուր նուբեր ճաշակի պահանջներին, ապա ընդարձակել ծանոթությունների շրջանը, այցելել բարձր դասակարգի անձանց, կապեր հաստատել, խնդրարկուներ ընդունել, գաներ պաշտպանել և յուր հասարակական գործունեությամբ՝ անուն ու հռչակ վաստակել։

Բայց մի բան այդ պիտի լինի յերիտասարդ Կամսարյանի կյանքի նպատակը։ Ցերեկը. նա ավելի արժանավոր, բարձր և սուրբ նպատակ ունի աչքի առաջ. նա այժմ իրեն չէ պատկանում, հեռուսաես է և չէ կարող ծառայել յուր անձին։ Նա պիտի նվիրվի յուր մեր աղքակիցներին, շինականին ու գյուղացուն, նրանց համար պիտի հոգա, նրանց համար պիտի մտածե։

Ցեվ այդ պիտի անե վճռ թե նրա համար, վոր հանդիսարար խոստացել է ընկեր ուսանողներին, վոչ, այլ վորովհետև ինքն այդ կամենում է սրտանց, վորովհետև ամեն անգամ, յերբ խոսք է յեղել այդ աղքակիցների մասին, յուր աչերը թուննդ է առել և թռել դեպի նրանց, վորովհետև ինքը միշտ մի առանձին սեր, մի թաղուն գորով է տածել դեպի այդ հեռավոր յեղբայրները։ Ցեվ թեպետ անձամբ չէ տեսել նրանց, բայց միշտ լսել ու կարդացել է թե բարի մարդիկ են, աշխատասեր, թե սեփական շահի համար վոչ վոքի չեն ճնաասում, այլ ապրում են իրենց ճակատի արդար քրտինքով։ Բայց թե, վորովհետև ոգետ են և անուսում, ուստի մնում են անդոր աշխարհի չարիքների առաջ. վորով և մի կողմից բնությունն է նրանց դրկում, իսկ մյուս կողմից չար մարդիկն են կեղեքում. այդ պատճառով էլ նա վրդում է դառն ու չարքաշ կյանք և մնում կարող բարի մարդկանց ողնության։ Բայց միևնույն ժամանակ նա լսել ու կարդացել է և այն, թե յուր այդ աղքակիցները կարող են ազատվել կյանքի դառնություններից և հասնել մի որ յերջանիկ դրության, յեթե խելոք գլուխները մտածեն նրանց մասին և կարող ձեռքերն աշակցեն նրանց աշխատության։

Ցեվ ահա Կամսարյանն ունի թե խելոք գլուխ և թե կարող ձեռքեր. ինչու, ուրեմն, չերթա չվորոնե այդ սիրելի աղքակիցներին, չապրե նրանց հետ, չսովորեցնե նրանց իրենց դրությունը բարվոքելու և մարդավայել կերպով ապրելու յեղանակը։

Այս մտածությունները վոգևորում էին յերիտասարդ իրավաբանին, այն յերկար ճանապարհին, վոր հյուսիսից տանում էր Նրան հարավ։ Այդտեղ նա շարունակ ծրագիրներ էր կազմում յուր ապագա գործունեության համար և նրանցով հիանում։ Այդ ծրագիրների մեջ մտնում էին նախ գյուղական հասարակության իրավունքների պաշտպանությունը, վոր արդեն վերաբերում էր յուր մասնագիտության և ամփոփում յուր մեջ գյուղացու կալվածների հափշտակությունից ազատելու, հարկահանության ժամանակ տեղի ունեցող անարդարություններն արդելելու, գյուղացուց հաճախ անտեղի կերպով պահանջվող կոռն ու ձրի մշակությունը մերժել տալու և պաշտոնի մեջ, ի հեճաս գյուղացու գնդծումներ կատարող և արդարադատության աչքից խուսափող պաշտոնյաների արարքը մերկացնելու կարևոր խնդիրները. յերկրորդ՝ լուսավորության գործի հիմնադրությունը, վոր կապնում էր կանոնավոր դպրոցներ հաստատելու, գեղջուկ մանուկներին ձրի ուսում մատակարարելու, մանկական-ժողովրդական գրադարան հիմնելու և հասակավոր գյուղացիներին ազատ ժամերում, մանավանդ, ձմեռ ժամանակ ոդաներում, կամ յեկեղեցիներում դասեր խոսելու և աշխարհի չար ու բարի հետ նրանց ծանոթացնելու մեջ. յերրորդ՝ գյուղացու անտեսական դրության բարվոքումն, վոր կախում ուներ նրա յերկրագործական, տյուկնատնական, անասնապահական, հավաբուծական և այլ այսպիսի աշխատությունները կանոնավորելուց, իսկ այդ նպատակին հասնելու համար պետք է սովորեցնել գեղջուկին դիտության մշակած ձևերով մոնկելու և պատվաստելու, հերկելու և ցանելու, հնձելու և կալսելու, անասուն, հավ և մեղու գարմանելու, պարտեղ ու բանջարանոց մշակելու դյուրին յեղանակները։ Տնտեսական դրությունը բարվոքելուն էր վերաբերում նաև փոխատու դրամարկղ հիմնելու գիտավորությունը, վոր չեթե հաջողեր նրան իրագործել, դրանով վոչ միայն վաշխառությունը կհալածվեր գյուղերից, այլ և կստեղծվեր բարություն մի գործ, վոր կոգներ գյուղացուն յուր աշխատությունն ու արդյունքը վոչ թե կեղեքիչների ձեռքը, այլ յուր հարկի տակ ժողովելու։

Բայց այս ծրագիրներն այնքան ընդարձակ էին, վոր նույնիսկ նրանց համառոտ կազմությունը խլեց Կամսարյանի, Մոսկվայից մինչև Կովկաս հասնելու միջոցում ունեցած ազատ ժամերը։ Ճիվ յերբ նա վերջին անգամ նայեց յուր Note-երի տետրին և տեսավ նրա ծայրեիծայր լիքը յուր ապագա գործունեության վերաբերյալ գիտողություններով, զգաց յուր սրտում մի քաղցուն ուրա-

խություն, վոր բղխում եր յերբևիցե ստաքյալից փառք ու հրաշակ ստանալու հաստատուն հույսից։

Վերջապես յերիտասարդը հասավ Թիֆլիս։ Հարկ չկա նկարագրելու այն ընդունելությունը, վորին հանդիպեց նա հոր տանը։ Ամենքդ արդեն դիտեք թե պանդխտությունից վերադարձող վորդուն ինչպես են ընդունում կարոտակեզ ծնողները, կամ նորատի քույրերն ու յեղբայրները։ Հորքեռն ջերմ համբույրներ, վորպիսի դրկախառնություն, խանդաղատանք, ուրախության արցունքներ և ամա ինչպիսի քաղցր ու յերջանիկ ժպիտներ շրջապատում են նորեկին։ Ցնեթե դրա վրան էլ ավելացնենք այն, վոր այդ բոլորը տեղի յեր ունենում մի հարուստ տան մեջ, ուր մեծ թե փոքր, աղջիկ թե ամա չդիտեին թե ինչ և կարոտություն, վոր ազգատի տան մեջ յուր ներկայությունը դդալ և տալիս նույնիսկ այն վայրկյաններին, յերբ մայրը վողջագուրում և պանդխտությունից վերադարձող վորդուն, վոր հաճախ ցրտացնում և համբույրի ջերմությունը և շուրթերի վրա ժպիտը սառեցնում, այն ժամանակ կհասկացվի թե վորպիսի յերանություն եր շրջապատված նորավարտ, գեղեցիկ արտաքինով և դեռ ամենքին սիրելի Պետրոս Կամսարյանը։

Թողնենք ուրեմն նրան դվարճանալ առայժմ յուրայիններով հետ։

Գ

Անցավ մի շաբաթ և այդ միջոցին խոսք ու դրույց չեղան յերիտասարդի սկսելիք պարապմունքի մասին. վորովհետև ամենքի համար էլ պարզ եր թե ինչով կարող և դրաղվել մի յերիտասարդ իրավաբան։ Նրա առաջ բաց եյին թե պետական պաշտոններն և թե մասնավոր պարապմունքի արդյունավոր ճանապարհները։ Ցնեթե առաջինը չհաջողվեր, յերկրորդի համար բավական եր մի յերկու տող հայտարարություն և, ահա, հաճախորդները իրար թևակոխելով կլցվեյին փաստաբանի նորաբաց ընդունարանը։

Այս եյին մտածում Կամսարյանի ծնողները և ցանկանում, վոր Պետրոսը առ ժամանակ հանդստանա և մանավանդ թե կաղդուժվի դովարար ամարանոցում, ուր մտադիր եյին տեղափոխվել քիչ ժամանակից հետո։

Սակայն մի որ դարմանքով տեսան նրանք, վոր իրենց վորդին ինչ վոր պարտաստություններ և տեսնում։ Նա գնել եր ճանապարհի նոր հագուստ, յերկարաճիթ կոշիկներ, ձիու թամբ, նոր տեսակի պայուսակ, վորտորդական հրացան և այլ այնպիսի իրեր, վորոնք կարող եյին հարկավորվել միայն վայրենի տեղերում, ուստի հետաքրքրվեցան իմանալ թե ինչու համար են դրանք։

— Գիտի ճանապարհորդեմ, — ասաց նա ծնողներին։

— Պիտի ճանապարհորդես... ինչպես, ուրեմն ամարանոց չի պիտի գաս, — հարցրեց յերիտասարդի մայրը անհանգստությամբ։

— Վախ, պիտի գնամ դեպի հեռավոր հայ գյուղերը և, ձի պիտի, գուցե շատ ուշ վերադառնամ, կամ... (ուզում եր ասել «բոլորովին չվերադառնամ», բայց դժալով, վոր լավ չեն վախեցնել ծնողներին, խոսքն ընդհատեց)։

— Այդ անկարելի չե, — ճչաց իսկույն սիկին Կամսարյանը, կամ յուր լեզվով ասած՝ Լիդիա Պավլովնան, վոր մի պարարտ, կլորիկ և թեպետ հիսունը անցած, բայց դեռ դրավչագեմ և հաճելի լինելու առավելություններով ժժված կին եր, — այդ, անկարելի չե... այնքան ժամանակ հուսով սպասել եմ քո դարձին, վոր դեռևս ամառվա ամիսները միասին անցնենք, իսկ դու ասում ես թե պիտի ճանապարհորդես, վոչ, այդ չի լինիլ, ասաց սիկինը վճռաբար և մինչը թիկնաթոռին տալով՝ աշխատեց պարարտ մարմինը դնահզել նրա վրա կարելվույն չափ հանդիստ։

Տիկին Կամսարյանի «վախ այդ չի լինիլ» վճիռն ուներ յուր հարդելի պատճառները։ Բացի այն, վոր նա իբրև սիրող մայր, կցանկանար անշուշտ ամառն անցնել յուր վորդու հետ, կար և մի ուրիշ հանգամանք, վոր դրդում եր նրան չհամաձայնվել վորդու հետ։ Դա՝ մոր փառասիրությունն եր. այն թագուն դգացմունքը, վոր շատերը խնամքով փայփայում են սրտի խորքում, բայց վորի գոյությունն ուրանում են մարդկանց առաջ։

Լիդիա Պավլովնան առաջին անդամ չեր գնում ամարանոց, ուստի գիտեր, վոր ամեն ամառ այնտեղ առեղծվում և ծանոթների ու բարեկամների հետաքրքրական շրջան. անդի չեն ունենում նոր տեսակի ընդունելություններ ու այցելություններ, սարքվում են փայլուն դրոսանքներ, ճաշեր ու պիկնիկներ, յերբեմն և յերեկույթներ։ Արդ, չի վոր մեծ փառք եր ամեն մոր համար այդ բոլոր տեղերում յերևալ նորավարտ, զեղեցիկ արտաքինով, հաճելի ձևերով և տակավին ամուրի յերիտասարդ վորդու հետ... այդպիսի մայրն, առհասարակ, ամարանոցի սիրած ու փայփայած անձն է լինում։ Բոլորը (խոսքս իհարկե հարստացու աղջիկ ունեցող մայրերի, կամ վեհացու վճռորոշ հարսնացուների մասին է, իսկ յերե դրանց թվում ընթերցողները դասեն, նաև, նորատի այրիներին, դրա դեմ ել վախենչ չունիմ), շրջապատում են նրան սիրալի, քընքշությամբ, ամենատանկեղծ բարեկամությամբ։ Այդպիսի մայրը, բնականաբար, այցելում է հաճախ և այն միշտ յերկուսով կամ յերեքով (նայելով թե այցելողը քանի հարստացու աղջիկ ունի) հրավիրում են շատ տեղերից. նույնիսկ այնպիսի տներից, ուր այդ մայրը յերբեք վոտք դրած չե յեղել, բայց ծանոթացել և

նրանց սիրուհիներին, այս ինչ պիկնիկում կամ պարահանդիսում։ Բացի այդ, հանդիսավոր ճաշերի ժամանակ, ամենից պատվավոր տեղը առաջարկում են այդպիսի մորը և ամենից համեղ պատառը հրամեցնում նրան։ Հարկ չկա ասել, որ դրոսարաններում էլ ամենից սիրելի ու քնքուշ խոսակիցները շրջապատում են նրան, յեթե յերիտասարդ որդին էլ դրանում և նրա հետ միասին բանիվ, ամեն տեղ կատարվում է այն, ինչ որ հայկական առածն է բնորոշում, այսինքն «ձուտաձեղի համար թռվի կոթը պաչում ենք»։

Այս ամենը դիտեր սիկին Կամսարյանը. այս ամենի մասին նա մտածել, յերազել էր և այն՝ յերկար ամիսներով... այժմ հանկարծ լսել թե իրեն ղրկում են քաղցը հույսերից, իհարկե, նա չէր կարող, հետևապես և չի պիտի թույլ տար որդուն իրագործել այդպիսի մի անհեթեթ վորոշում։

Դժբախտաբար, յերիտասարդն էլ յուր կամքի տերն էր, (դրանից ինքը հաճախ այդպես էր ասում), ուրեմն և հեշտ չէր յետ կեցնել նրան յուր ընտրած ճանապարհից։ Այդ պատճառով մոր ժպիտ այդ չի լինելի վճռին, նա պատասխանեց խստությամբ։

— Ամաթանացում դվարճանալուց առաջ յես պարտք ունիմ կատարելու, մայրիկ, մի հուսար թե յես կհետաձգեմ իմ դործը քեզ ընկերանալու համար։

— Գեայթ, Գեայթ, մեկ մտածիր թե ինչ ես ասում... ամբողջ տարի աչքներս ջուր կտրած սպասել ենք քեզ, կարոտից հալվել... (կամենում էր ասել «հալվել ու մաշվել ենք», բայց մեկ էլ մտածելով թե ինքը խիստ պարարտ է, ասաց) մաշվել է սրտներս այժմ դու նորեն կամենում ես մեզ թողնել... Ուրեմն դու սիրտ չունիս, դու հայր, մայր, յեղբայր ու քույր չես ճանաչում...

Վերջին բառի վրա սիկինը հեկեկալու նման մի սրտաշարժ ձայն հանեց, հետո հուպ տվավ աչքերը, հուսալով թե նրանցից մեկն ու մեկը արտասուք կդլորե յուր սպիտակ ու փափուկ այտերի վրա, (վոր իհարկե շատ տեղին կլիներ), բայց տեսնելով վոր այդ չեղավ, ընդհատեց խոսքը...

Յերիտասարդին այնպես թվաց թե դյուրազդաց մայրը սրտի նեղությունից չի կարողանում այլևս խոսել, ուստի վերջինիս չհաղթահարվի այդ սրտաշարժ տեսարանից, իսկույն ծոցից հանեց յուր հուշատետրը և սկսավ թերթել... Այո, բավական եր նայել այդ հուշատետրի եջերին, կարդալ դրանց կեսը ամեն դրծերից այն ցանկին, վոր նա կազմել եր մայրաքաղաքից վերադառնալիս, վորպեսզի նա նորեն վոգևորվեր և առ վոչինչ դրեր մոր թախանձանքն ու արտասուքը, կամ արհամարհեր ամարանոցի հանգստությունն ու զվարճություններըւ

Ցնծ այդպես էլ յեղավ. Ցերը Պետրոսը հուշատետրը դրավ նորից ծոցը, նրա սիրտն արդեն այնքան եր ամրացել, որ նա ուղղակի ասաց.

— Դու, մայրիկ, բախտավոր կին ես. ունիս ամուսին, առողջ զավակներ, մեծ հարստություն, սեփական ապարանք, դեղեցիկ ամարանոց, ապրում ես պոն ու յերջանիկ և, միևնույն ժամանակ, չես կամենում դրկել քեղ նույնիսկ մի ավելորդ դարձությունից, այսինքն, որ ամառվա ամիսներում ընկերանա քեղ որդիդ... Բայց կան աշխարհում մարդիկ, որոնք շատ անհրաժեշտ բաներից են դրկված. այ, յես դնում եմ նրանց մոտ, որպեսզի կարողանամ նրանց մի փոքր մխիթարել, կամ նրանց կարիքներից մինը կամ յերկուսը լցնել։

Լիդիա Գավրիլևան որդու այս ճառից ոչինչ չհասկացավ, բայց Կիրիլ Կարպիչը (հայր Կամսարյանը), որի անունը Ճիշտն Տեր Ոհանեսի ձեռքով չափարերական մատյանում նշանակված եր «Կարապետի վարքի Կիրակուա և վորը դեռ խալաթով նըստած եր բազմոցի վրա և յերկար ծխափողը ձեռքին թե ծխում և թե լսում եր հիշյալ վիճաբանություն, որդու վերջին խոսքերի վրա մի անհանդիստ շարժուն արավ։ Ջաղցր ժպիտը, որ մինչև այն փայլում եր նրա ածիլած ու դերություններից փայլող դեմքի, կրկնածալ ծնոտի և դորշ ընչացքով հովանավորված հաստ շըրթունքի վրա, չքացավ իսկույն, թավամազ հոնքերը կարծես վայր իջան աչքերի սուր հայացքը ավելի խստացնելու համար. իսկ անխառն հայկական քիթը, որ պատկառելի տեղ եր բռնած խոշոր դեմքի վրա, դղալի կերպով կախվեցավ, վորպեսզի սիրոջ դըժդոհությունը մարմնացնե յուր մեջ ամբողջովին։

Ինչու՞ անհանդստացավ Կիրիլ Կարպիչը — դրա պատճառը բոլորովին այլ եր։ Նա, իհարկե, չեր մտածում վոչ Լիդիա Գավրիլովնայի մայրական վսասիրությունը դոհացնելու և վոչ էլ վորդու ամարային հանգստության մասին. նրան հետաքրքրում եր ավելի յուրջ ու դրական խնդիր. այսինքն այն, որ յուր վորդին ասան յերկու տարի շարունակ ուսման համար իրենից հազարներ սատնելուց հետո, այսոր, յերբ արդեն ուսումն ավարտած վերադարձել և, փոխանակ լրջորեն գործի կպչելու և հորից ստացած փոդերի գնի մի մասի յուր ձեռքի աշխատանքով հորը վերադարձնելու և դրամով նրան ուրախացնելու, ընդհակառակը, դեռ նոր ծախսեր և անում և ինչ որ ճանապարհորդության կամ հեռավոր ազգակիցների վրա յև մտածում։

Անհանդիստ շարժուն անելով հանդերձ, Կիրիլ Կարպիչը մի կողմը դրավ ծխափողը և ձեռքերը խրելով խալաթի դրպանները, վո-

բոնք դանվում էին տիկի պես ուռած և խալաթի փինջաղարդ ժապավենով հագիվ սանձահարված փորի աչ ու ձախ կողմերում, հարցրեց վորդուն։

— Պետո, չլինի թե քո դլխումն էլ հոպոպներ են լույս ընկել։

Ծերիտասարդ կամաբյանը, վոր այսպիսի մի հարց ընկերներից լսելուց կարող էր նրանց մեննամարտի հրավիրել (վորպեսզի առացուցանե թե վորքան պատվասեր է), հորից լսեց այդ խոսքը նուչնիկ առանց բարկանալու, համոզված լինելով, վոր նա ուրիշ կերպ հաճոյախոսել չի կարող։

— Ի՞նչ ես կամենում դրանով ասել, հայրիկ, — հարցրեց նա։

— Այն, վոր ուսումը խելքահան է արել քեզ, վերդի... ախար մի դնա դատարան և տես թե քեզանից մի տարով առաջ ավարտողները քիչ չեն այնտեղ գործեր պաշտպանում, ժամերով վիճում կամ ճառեր խոսում և դրա համար նրանք հարյուրներ, հազարներ են ստանում, իսկ դու դեռ վհռոններից մասին ես մտածում, կամ նրանց հատած դյուղերում ապրելու պլաններ քաշում։ Սա ինչքի նման է...

Կերկիլ Կարապիչը նորեն ձեռք տարավ ծխափողը և հատա շրթունքները կպցնելով յերկար բնի ծայրին, յերկու անդամ առատորեն ներս քաշեց ախորժելի ծուխը և ապա արտաշնչելով այն, վեր կացավ տեղից։

— Գործի վրա մտածիր, վորդի, գործի վրա, թե չե կոռներից շահ չի լինելու քեզ։ — Այս ասելով նա դուրս դնաց սենյակից, չկամենալով ավելի ձանձրացնել վորդուն։ Վորովհետև, իրրև վորձառու մարդ, դիտեր վոր խելքի հասած յերիտասարդին անոգուտ և յերկար խրատներ կարդալը։ Բավական է, վոր մարդ յերկու խոսքով հայտնի նրան յուր դժգոհությունը և ապա թողնե նրան մտածել ու վորոշել անհրաժեշտը։

Մինչդեռ Վիղիա Պավլովիչան այդ կարծիքին չեր. նա, իրրև կին, միշտ յուր ուղածն անել եր տվել յերկար խոսելով, թախանձելով հեռևապես, հավատում եր շատախոսելու փրկարար զորությանը։ Այդ պատճառով էլ, յերբ ամուսինը հեռացավ, նա մոտ քաշեց վորդուն (վոր դարձյալ ձեռքն եր առել յուր հուշատետրը, անշուշտ հոր խոսքերի աղդեցությունը իրենից հեռացնելու նպատակով) և իրրև մի մեծ նորություն, հաղորդեց նրան հետևյալը.

— Ցես վոր քեզ ասում եմ գնանք ամարանոց, հո նրա համար չեմ ասում, վոր միայն քաղաքի շոքերից ազատեմ քեզ, վոչ. յես ուրիշ միտք էլ ունեմ և դրա համար է, վոր չեմ ուղում քեզ թողնել...

— Ի՞նչ միտք, — հարցրեց յերիտասարդը։

— Մարիոսովննց տուն հո գնացիր, Ադելինին տեսար, — հարցրեց մայրը խորհրդավոր ձեղանակով։

— Այո, գնացի, Ադելինին էլ տեսա, հետո։

— Իրրև թե չդիտես ինչու համար եմ հարցնում, — նկատեց մայրը խորամանկ ժպիտով։

— Վոչ։

— Ձի վոր մի ար հավանում էիր նրան։

— Հենց հիմա չել հավանում եմ։

— Հո տեսնում ես թե ինչ է դառել... ինչպես մնծացել, դեղեցկացել է։

— Այո, շատ է դեղեցկացել։

— Ե, այդպես աղջիկը, վոր քեզ սիրում լինի և քո պատճառով էլ բորժոմ լինի դալիս, ինչ կասես դրան։

Ցնրխատասարդը նայեց մոր աչքերին և ուսերը վեր քաշեց։

— Դեղեցկությունը կա, ուսումը կա, քաղաքավարությունը էլ բաժինը... Այս ամառ անպատճառ բանը կվերջանա, վորովհետև ծնողները համաձայն են, աղջիկն էլ համաձայն է համաձայն. հարցը մնում է քեզ վրա։ Ինչ ես ասում դու։

Ցնրխատասարդը, կարծես, տատանվում եր։ Ադելինի անունը մի փոքր պղտորեց նրա միտքը. յնթե յերևակայությանը ևս թույլ տար յուր առաջ պատկերացնելու դեղանի որիորդին, այն ժամանակ արդեն հատանքը կատներ իրեն։ Այդ պատճառով, կարծես, յուր թուլությունը դդալով, վեր կացավ տեղից և ձեռ տնտեղնք, մատծենք, ժամանակ շատ ունենք» ասելով դուրս գնաց պատշգամ։

Դ

Բայց բաղդը շատ անգամ կատակներ և անում և դրանցից զվարճալին լինում է այն, յերբ նա չարիքից փախչող մահկանացուին՝ հենց նրա փախստյան ճանապարհի վրա, բերում հանդիպեցնում է նույն չարիքին, վորից սա խույս և տալիս։ Այդպես պատահեց և Կամսարյանին։ Հազիվ նա յելել եր պատշգամ և ձեռքը տարել ծոցը, վորտեղի հուշատետրը հանի, և այն տեղ մուտքի հնչակը քաշեցին։ Սպասուհին վաղեց դուռը բանալու։ Ցեվ վորովհետև Գնարոն ևս մտանեցել եր ամենուքեքին, ուստի հետաքրքրվեց իմանալ թե՝ ով և յեկողը։ Ցեվ վճռեցան մեծ յեղավ նրա հուզմունքը, յերբ տեսավ թե՝ գնդապետ Ադելինան և՝ յուր մոր հետ։ Անշուշտ նրանք գալիս եին յերիտասարդի այցելությունը փոխարինելու և սրա մարդ իրենց խնդակցությունը հայտնելու։ Կամսարյանն իսկույն ծոցը դրավ հուշատետրը, վոր նոր եր հանել և վայրկենաբար համոզվելով, վոր «հայոց ազգը խիստ դըժ-

բախտ ազդ եւ, վորովհետեւ նման արդելքներ խանգարում էին իրեն նրա վրա մտածել, քնքուշ ժպիտը դեմքին, դիմավորեց հյուրերին և սիրալիր կերպով վողջունելով նրանց, առաջնորդեց դեպի ընդունարանը, ուր դանվում եր արդեն Լիդիա Պավլովնան։

Ձափ... չըփ. չըփ. չափ, համբուրվեցան բարեկամուհիները և սկսան խոսուն մի սիրալիր զրույց, վորն առհասարակ սկզբում լինում է աղմկալի և ապա հետզհետե մեղմանում, կանոնավորվում։

Ամենից առաջ Լիդիա Պավլովնան մեղադրեց բարեկամուհուն՝ իրենց այդքան ուշ այցելելու համար, և հավատացրեց, վոր ամեն որ սպասում է յեղել նրանց։

Տիկին Մարկոսյանը ներողություն խնդրեց յուր ակամա դանցառության համար, ասելիքով թե՝ չափազանց զբաղված են թե ինքը և թե դուստրը, ընդ նմին և հավատացրեց (ավելի չերմ խոսքերով, քան ասի տիկինը), վոր իրենց բոլոր բարեկամուհիների մեջ Լիդիա Պավլովնան միակն է, վորին ցանկանալով ցանկանում են տեսնել թե ինքը, թե աղջիկը, հենց վոր ազատ են լինում զբաղմունքից։ Ժիրախատաբար, ազատ ժամեր քիչ են ունենում։

Լիդիա Պավլովնան, իհարկե, դիտեր թե ինչ զբաղմունք կարող եր ունենալ տիկին Մարկոսյանը, իբրև բազմանդամ ընտանիքի մայր, բայց ցանկացավ լսել մի բան, նաև, որիորդ Աղելինայի մասին, մանավանդ, յուր վորդու, Գեորգոսի ներկայությամբ։

Տիկին Մարկոսյանը, վոր մի քիչ ավելի տարիքով եր, քան Լիդիա Պավլովնան և մի քիչ էլ պակաս գեղեցիկ, քան թե նա, բայց վորը նազելու մեջ գերազանցում եր բարեկամուհուն, նազելով էլ պատասխանեց։

— Ա՛խ, սիրելիս, չես կարող յերևակայել, թե վորքան զործ ունի խեղճ յերեխաս։ Առավոտից մինչև ճաշը ձրի դասեր և տալիս «վորբերի» ուսումնարանում. ճաշից հետո՝ մեր չարաճճիների դասերն և սովորեցնում. յերեկոյան տնքրիկ աղջկա դաշնամուրի վրա վարժություն և անել տալիս։ Դրա վրան էլ ավելացրու այն, վոր բարեգործական նպատակով տրվող ներկայացումներին ու նվագահանդեսներին մասնակցում և անխոիր, վորովհետև խընդրում, աղաչում են։ Իսկ իմ Աղելինան, հո դիտեք, փափուկ սիրտ ունի և չե կարող մերժել...

— Այդպես չի կարելի, սիրելիս, այդպիսով դու կհոդնեցնես ձեզ, իսկ շատ հոգնելը վնաս և առողջությանդ, — դարձավ Լիդիա Պավլովնան որիորդին, վոր լսում եր մոր հայտարարությունը։

— Վա՛յ, չես չեմ հոգնում, ընդհակառակը, վորքան շատ եմ գործում, այնքան ավելի առողջ եմ զգում ինձ, — պատասխանեց որիորդն աշխուժով և թեթև շառաչունելով։

— Այո, պարապությունը ավելի յև ընտանում առողջությունը, քան չափազանց զբաղմունքը, — հաստատեց յերիտասարդ կամասարյանը։

Որիորդի մայրը համաձայնվեց վերջինի հետ՝ և առանց մի վայրկյան կորցնելու սկսավ պատմել թե՝ ինչպես ինքն առաջ թուլլ ևր ու տկար, վորովհետև տան գործը մեծ մասամբ թողել ևր սպասուհիներին։ Բայց այն որից, վոր իմացավ թե գործունեյությունը կազդուրում և մարդուն ավելի, քան բժիշկների դեղերը (այդ բանն էլ ասել ևր նրան մի բարեկամ բժիշկ, վոր հիվանդներ չունենալու պատճառով ինքը հաճախ հիվանդանում ևր), նա սկսավ այնուհետև տան գործերից շատերը յուր ձեռքով անել և այն որից ի վեր այնքան առողջացավ, վոր էլ չևր դանդատվում վոչ սրտի ցավից, վոչ թուլությունից։

Այս դրույթի ժամանակ Լիդիա Պավլովնան լսում ևր բարեկամուհուն ուշադրությամբ և ընդ նմին աշխատում, վոր յուր լայն բացված և ուղիղ բարեկամուհու դեմքին նայող աչքերը համոզեն վերջինս թե ինքը չափազանց հետաքրքրական և դնում նրա բացատրությունը։ Մինչդեռ յերիտասարդը զբաղված ևր նրա աղջկանով։

Աղելինային, իրավ, սա ճանաչում ևր վաղուց, այսինքն, յերբ դեռ ինքը դիմնազիոնի աշակերտ ևր, իսկ նա՝ ինստիտուտի փոքրիկ աշակերտուհի։ Այդ ժամանակ նրանք զրացիներ էյին, իսկ ծնողները միմյանց բարեկամ։ Ցեվ վորովհետև վերջիններս հաճախ այցելում էյին միմյանց, ուստի իրենք էլ տեսնվում էյին իրար հետ։ Բացի այդ, նրանք հանդիպում էյին միմյանց զբոսնելիս և այդ դեպքում յերիտասարդը միշտ ուղեկցում ևր որիորդին մինչև ինստիտուտի փողոցը, խոսակցելով նրա հետ աշակերտներին հետաքրքրող նյութերի մասին, կամ պատասխանելով այն հարցերին, վոր Աղելինան հաճախ տալիս ևր իրեն։

Այդ ժամանակ որիորդը 14 տարեկան ևր և թեպետ մարմնով նիհար ու չկազմակերպված, բայց դեմքով դեղեցիկ ևր և ընդունակ խիստ աշխուժ։ Այդ պատճառով կամասարյանին դուր ևր գալիս այնքան, վոր սա նրա մասին դովությամբ ևր խոսում միշտ վոչ միայն ընկերներին, այլև մոր առաջ։ Իսկ յեթե մի փոքր էլ ավելի սրտին հավատայինք, կարող էյինք ասել թե հենց այդ ժամանակ նա սիրահարված ևր փոքրիկ դրացուհուն, վորովհետև միշտ մի առանձին փափագով ևր հետամտում այն սիրուն ժպիտներին, վորոնցով Աղելինան առավոտյան ժամերին հանդիպում ևր նրան փողոցում։

Բայց շուտով յերիտասարդը ավարտեց դիմնազիոնը և դնաց համալսարան, ուր շատերի հետ միասին մոռացավ նաև Աղելինա-

յին։ Վարուվհետև համալսարանը նոր դրաժմունքներից զատ, տվավ նրան, նաև, նոր բարեկամներ, որոնք իրենց կողմից ծանոթացրին նրան նոր դպացմունքների և ձգտումների հետ, որոնք դրավեցին նրա բոլոր ուշը։ Բացի այդ, մայրաքաղաքում շատ կային Աղելինաներ, այնպես որ յեթե կամաթյանը ցանկանար յերբեվիցե ժպիտներով զմայլվիլ, ստիպված չեր լինի հիշել յուր նիհար դրացուհուն։

Սակայն անցավ ժամանակ և նա, վերադառնալով հայրենիք տեսավ նախկին Աղելինային բոլորովին փոխված։ Այժմ նա այլևս վոչնչով նման չեր առաջինին։ Նրա տանն և ինտիմյա ծաղկափթիթ հասակին ամփոփում եր յուր մեջ արբունքի հասած մի աղնվական կուսություն՝ դեղանի դեմքով, դրավիչ աչքերով, արյան ու կաթի խառնուրդն այտերին, վարդը՝ շուրթերին, որոնք նշան եյին կյանքով ու կրակով լի քաղուբյան։ Նրա ճկուն հասակին աճել եր սպասածից ավելի, կուրծքը դարգացել վայելուչ չափով, իսկ մարմնի մասերը լցվել, բոլորվել այնպես համաչափ, որ յերբեմնասարդը համեմատելով նրան մայրաքաղաքի ծանոթ դեղեցկուհիների հետ, դտնում եր դրեթե բոլորից դերազանց։

Ցեղ նա այժմ նայում եր նրան անթարթ աչքերով, հիշում եր մոր առաջարկությունը և ինքն իրեն մտածում.— «իրավ, որ արժե ժառանգել այս գանձը»։

Լիդիա Գավրիլնան, որ աչքի տակով նայելով, տեսնում եր թե ինչպես վարդու հայացքը անշարժ մեխվել և դեղանի որիորդի վրա, շտապից ոդուտ քաղել դեպքից և խոսքը դարձնելով սամրանոցի վրա, հայտնեց թե ինչպես ապերախտ Գեորգն վորոշել և միայնակ թողնել իրեն այս ամառ։

— Ի՞նչպես, մինչև կարելի յե,— բացականչեց տիկին Մարկոսյանը այնպիսի մի յեղանակով, որ կարծես, հայտնված նորությունը վերաբերում եր մի մեծ յեղեռնագործության։

— Այո, միայնակ և թողնում և դնում և ճանապարհորդելու,— ավելացրեց նա տխրությամբ և ընդ նմին սպասելով, որ բարեկամուհին մեղադրական մի աղդու ճառ ուղղե վարդուն։

— Այդ ձեզ չի վայելիլ, պարոն Գեորգոս,— նկատեց տիկինը լրջությամբ — Ի՞նչպես կարելի յե, որ այսքան ժամանակ ուսանության մեջ ընալուց հետո, չկինաք այժմ ծնողներիդ մոտ դոնե այնքան, որ նրանք իրենց կարոտը առնեն ձեզանից։ Ուրիշները նուիրեսկ գործերնին թողնելով, գալիս են ծնողների հետ ամառն անցնելու, իսկ դուք, որ այստեղ եք, մինչև ուխտի թողնեք նրանց ու հեռանաք։

— Բայց յերբ հարկը պահանջում է։

— Ինչ հարկ. ամառը հանգստության ժամանակ է և վոչ դպրծի. վոչ մի հարկ այդ ամիսներում չի կարող ստիպել մարդուն ղրկել իրեն ամառանոցի մաքուր ու զով ոդից, հանգստությունից... Ա՛յ, մենք էլ անով, տեղով գնում ենք Բորժոմ, չեթե դուք էլ գաք, միասին կլինենք և հիանալի ժամանակ կանցնենք։

— Հանդիսներ կսարքենք, կոնցերտներ կտանք, իսկ այդ բաներում դուք մեզ միշտ կոգնեք,— ավելացրեց որիորդը շտապելով մասնակցել մոր ցանկությանը։

— Հանդիսներ, ինչ նպատակով,— հարցրեց յերիտասարդը հետաքրքրությամբ։

— Իհարկե բարեգործական, այդ մասին խնդրել են մեզ մի քանի ընկերությանց վարչություններ։

— Ձեղ։

— Այսինքն ինձ և ընկերուհիներիս։

— Հասկանում եմ։ Ցավ, իրավ, ամառանոցում հաջող մուտք կունենաք։ Ախտս, վոր չեմ կարող ոդնել ձեղ այդպիսի բարի ձեռնարկությունների մեջ։

— Ցնթե դաք ամառանոց, կարող եք ոդնել,— նկատեց որիորդը ժպտալով։

— Այո, չեթե դամ, բայց չեթե չգամ։

— Կխնդրեմ, վոր գաք,— ասաց որիորդը այնպիսի մի քնքշությամբ, վորի մեջ, կարծես, խոսում եր մանրմության ձգտող մի հատուկ դպացմունք։

Ցերիտասարդը ժպտաց և չիմացավ ինչ պատասխանել։ Նրան թվաց թե այդ րոպեին նա լսեց Աղիլինայի նախիկին, մանկական ձայնը, այն անմեղ, միշտ ժպտող, միշտ շարժուն ու կրակոտ Աղիլինայի, վոր ամեն առավոտ հանդիպում եր իրեն դրպրոց դնալիս, վողջունում այնքան սիրալիր և դանում միշտ հարցեր իրեն դրաղեցնելու համար։ Նրան թվաց թե այդ վայրկենին նորոգվեց նախկին մանրմությունը և թե ինքն այլևս իրավունք չունի սառն և անտարբեր խոսքերով այդ նորոգվող բարեկամության հաճելի ատավորությունը թուլացնելու։

— Ձղմարիտն ասած շատ կցանկանայի կատարել ձեր խնդիրը, բայց...

— Ինչն և արդելք լինում,— ընդհատեց որիորդն աշխուժալի։

— Մի բարոյական պարտք, վոր հանձն եմ առել դեռ այստեղ գալուց և ձեղ տեսնելուց առաջ։

— Ցնթե այդպես և, ուրեմն ամենից առաջ այդ պարտքը պիտի կատարեք. մենք իրավունք չունենք պահանջել, վոր դուք ան-

կատար թողնեք այն, ինչ վոր կատարել խոստացել եք դեռ այստեղ գալուց առաջ։

— Շնորհակալ եմ, որիորդ, դուք ինձ հասկանում եք. վորքան ուրախ կլինեյի, յեթե մայրս էլ այդ ձևով մտածեր, բայց նա...

— Մայրդ դիտե թե ինչ և մտածում, — ընդհատեց վորդուն Լիդիա Պավլովնան. — դու իրավունք չունեյիր մեզ լսելուց առաջ ուրիշներին բաներ խոստանալ։

— Ի հարկե, առաջ մայրն և, հետո ուրիշները, — ձայնակցեց տիկին Մարկոսյանը։

— Բայց դուք հո չգիտեք թե ինչ խոստումի մասին և խոսքը, — նկատեց Սդեփինան մորը։

— Իսկ դու գիտե՞ս, — հարցրեց վերջինս։

— Ցես էլ չգիտեմ, բայց կարծում եմ, վոր պարոնը մի դատարկ բանի պատճառով չեր համաձայնվիլ զրկել իրեն ամարանոցի հանգստությունից և զվարճություններից...

Այս ասելով որիորդը մի խորհրդավոր հայացք ձգեց յերիտասարդի վրա, կամենալով, կարծես, հարցնել թե՝ ասդ ինչ բարեյական պարտք և, վորի կատարումը ավելի անհրաժեշտ և, քան ինձ նման դեղեցկուհուն ամարանոցում ընկերանալը։

Յերիտասարդն էլ, դրեթե, այդպիսի մի նշանակություն ավավ այդ խորհրդավոր հայացքին, բայց վոչինչ չբացատրեց, վորպեսզի այդպիսով հասկացնե որիորդին թե՝ իրավ, ինքը խիստ մեծ ու արժանավոր նպատակի համար և զրկում իրեն ամարանոցի զվարճություններից։ Բայց վորպեսզի բոլորովին անքաղաքավար չդանվի որիորդի հարցասիրությունը դոհացնելու նկատմամբ, կարևոր համարեց այսքանը հայտնել թե՝ — կդա մի որ, յերբ ինքը կբացատրե նրան այն կարևոր պատճառները, վորոնք սիրում եյին իրեն զրկվել Սդեփինայի աննման ընկերակցությունից։

ՅԵ

Տիկնոջ ու որիորդի հեռանալուց հետո, Գեորգն զգաց, վոր վերջինի յուր վրա թողած ազդեցությունն այնքան և սաստիկ, վոր յուր նախկին մտածմունքներին վերադառնալու համար իզուր պիտի լիներ այժմ դիմել հուշատետրի ոգնությանն։ Նրան այժմ հարկավոր եր ավելի զորեղ ցնցում, վորպեսզի յուր մտքերը նորեն փոթեյին զաղափարական հայտնի նպատակին։ Այդ պատճառով նա առավ Արովյանի «Վերք Հայաստանին» և իջավ պարտեզ։ Այս գիրքը նրան սիրելի յեր դարձել մանավանդ այն որից, յերբ ուսանողական ժողովում յուր հայտնի խոստումն արավ։ Շեմարանավարտ ուսանողն, վորին ծանոթացանք պատմության

առաջին դլխում և վորն ուսանողական ժողովներին նախադահելուց զատ, առաջնորդում եր ընկերներին, նաև, մայրենի լեզվին ու դրականությանը ծանոթացնելու դործում, խորհուրդ եր տվել Համազասպյանին կարդալ Աբովյանի «Վերքը» վորքան կարելի չե շատ։ «Դու վոր նվիրում ես քեղ հայ ժողովրդի մոռացված մասին, այնինքն դյուղացուն ու մշակին, այդ դիրքը պիտի կարդաս հաճախ, ասել եր նա նրան, վորովհետև բոլոր մարդկանցից ու դրքերից ավելի «Վերք Հայաստանին» կարող և քեղ ծանոթացնել հայ դեղջուկի հոդուն ու դդացմունքներին, նրա արժանիքին ու թերություններին, նրա կարիքներին ու ցավերին»։ Ցավ, իրավ, քանի Պետրոսը կարդացել եր այդ դիրքը, այնքան ավելի նա սկսել եր սիրել հայ շինականն ու դյուղացին, վորոնց նա յուր հարազատ ազգակիցն եր համարում, բայց վորոնց, ավաղ, չեր ճանաչում անձամբ։

Նատելով հովանավոր ակաճենու տակ, նա բաց արավ դիրքը, բայց... մեքենայաբար։ Նրան թվում եր թե դեղեցկուհին դեռ նայում և իրեն յուր սիրուն աչքերով, թե նա հենց նոր ժըպտալով ասաց իրեն «կվճնդրեմ վոր գաք». իսկ մի փոքր հետո՝ աշխուժով ավելացրեց «Ինչն և արգելք լինում...» Այո, այս ձայները հիշում եյին դեռ յերիտասարդի ականջում, իսկ գաղտնի պատկերն ու փայլուն հայացքը չեյին հեռանում նրանից։

— Դժվար և... իրավ վոր դժվար և,—մտածում եր յերիտասարդը, ամենքին կարելի չե թողնել, ամեն ինչ կարելի չե դոհել, բայց այս հրևշտակին, այս դիցուհուն... ճիշտ վոր դժվար և. չե՞ վոր ամ ինձ համար կարող եր լինել ամեն ինչ... և յեթե նա, իրավ, անտարբեր չե դեպի ինձ... այն ժամանակ արդեն կատարյալ խելագարություն և թողնել նրան... Բայց հենց այս մտածմունքի հետ հիշեց յերիտասարդն ուսանողների ժողովը, յուր հանդիսավոր խոստումն և այն ուժգին ծափահարությունը, վոր հետևեց հայտարարությանը... հիշեց թե ինչպես «Վերքը» դղրդացրին ներքնահարկի ցածուն դահլիճը։

«Վաչ, չես հաստատ կլինամ իմ վճռին, չես կկատարեմ իմ խոստումը», վորոշեց յերիտասարդը և նորեն առավ դիրքը, վոր արդեն փակել, դրել եր նստարանին։ Բանալով դիրքը, նայեց նրան նորեն և ապա դրավ ծնկներին։ Այս անգամ էլ մի ուրիշ, սակարկող պայման դրավեց նրա մտածությունը։

— Ցես կկատարեմ իմ խոստումը, չես կնվիրեմ ինձ մոռացված ժողովրդին... բայց յեթե Ադելինան ընկերանար ինձ այս դործում, ո, վորպիսի մեծ հաջողություն կդտակվեր իմ նվիրումը... իրավ, չե՞ վոր ամենայնոանդուն աշխատանքն իսկ ապադյուն կանցնեն, յեթե նրան չկարախուսե կնոջ սերն ու ժպիտը...

Ցավ ինչ յերջանկություն. մենք միասին կաշխատեինք, միասին կզործեինք...»

Այս միտքը յերկար զբաղեցրեց յերիտասարդին։ Նա մտածում էր մինչև անդամ, համակերպել առայժմ յուր մոր ցանկության, դնալ ամարանոց, մտերմանալ այնտեղ Աղելինային, նշանվել, պսակվել և հետո... իհարկե, Աղելինայի հետ միասին վերադառնալ դյուղը։ Իսկ այնտեղ... չե՞ վոր յերկու խելքը կարող էին ավելի լավ գործել, քան մեկը։

Բայց հայտնի չե, թե ինչու յերիտասարդի յերևակայությունը նորեն այդ դյուղից փոխադրեց նրան ամարանոց։ Նա պատկերացրեց յուր առաջ նշանադրության հանդեսն, ապա հարսանյաց պատրաստությունները, վերջը՝ փառահեղ պսակադրությունը, հարուստ հյուրերը, մեսրոպի, ադամանդի և փարիզական ճոխությանց մեջ փայլող կիսամերկ կրծքերով ու հոլանի թևերով դեղեցկուհիները, վորոնց մեջ սպիտակազգեստ և ծաղկապսակ Աղելինան պիտի յերևար իբրև մի հրաշագեղ դիցուհի, հավերժահարսներով շրջապատված...

Բայց հենց այդ փայլի ու շքեղության պատկերը, կարծես, մարմին առնելով շշնջաց յուր ականջին՝ «մի՛թե չես ցնորում... Մի՛թե Աղելինան, այն կրթված, զարգացած, փափկության մեջ մեծացած, թատրոնի, յերեկույթների և պարահանդեսների սովոր աղջիկը կհամաձայնվի թողնել քաղաքը, նրա կյանքով ու հրապույրներով լի մթնոլորտը և դնալ, մտնել դյուղը, աշխարհի մի լուռ, անծանոթ անկյունը, թե ինչ է այդտեղ պիտի հոգա շինականի կյանքը բարելավելու մասին...»

Այդ գաղտնի շշունջը ցրեց յերիտասարդի նախկին մտքերը։

«Ես մինչև անդամ կարող է լինեմ վրա ծլծաղել, իմ նպատակը ծաղրել, յեթե չես դրա մասին խոսում նրա հետ» — տրամաբանեց Պետրոսը և տխրելով դլուխը կախեց։

Նրա աչքերն ընկան ծնկանը դրված դրքին և նա, կարծես, մտածելուց հոդնած, սկսավ կարդալ բաց յերեսի վրա Աթոյենց աղջիկ Թագուհու մասին դրված հետևյալ տողերը.

«Բաս ինչ կըլներ, վոր եսպես չեր ելել։ Մինչև են հադաղը (միջոցը) նրա (Թագուհու) ականջը մեկ թթու խոսք չեր լսել, նրա աչքը՝ մեկ դառը որ չեր տեսել. նրա յերեսը մեկ կոշտ ղրից չեր յեկել։ Վարդի պես ծաղկել, մանիշակի պես մեծացել եր։ Տասնհինդ տարին անց եր կացել, դեռ նրա անմեղ հոդին աշխարհքից մեկ բան չեր խաբար։ Նրա ընկեր աղջկերքը դոներին, կըրնեին ման եյին դալիս, որ անցկացնում, նա ծունկը մոր ծնկանը կպցրած, յա կար եր անում, յա քարդան, յա իրենց տանն ու

դաննն եր մարիկ տալիս, յա իրենց մալին, ապրանքին աչք ածում։ Ղուշը դլխի վրով թռչկալիս՝ կարմրատակած, շունչը կտրած տուն եր ընկնում, վոր իր շվաքն էլ ա աքմին չըտեսնի։ Մար մեկ մասը փուշ ըլելիս, յա մեկ տեղը ցավկլիս, ուղում եր հոգին հանի իրան տա. էլ քար, էլ խոտ չեր ճնում, վոր նա վրեն չըչոքի ու ասածու վողորմությունը խնդրի։ Աղքատ տեսնելիս բերնի թիքեն հանում, իրան եր տալիս, վոր նրան որհնի, արևշատություն խնդրի։ Բադն են ժամանակ եր գնում, վոր լիսն ու մութը դեռ չեր բաժանված ըլում, բադիցն էլ են վախտն եր տուն գալիս, վոր մութը գետինն առած, վոսը քաշված, խաղաղված եր ըլում։ Ով նրան ուզենար տեսնի, յա ծառի, յա պատի տակ պետք և տափ կենար, վոր նրա յերեսին մարիկ տար. նրա աչքերի լսեն հայիլ մայիլ ճնար... Զայիր չիմանի, մանիշակի վրա, վարդի, թիթեռու տակին, յա քնքշան տալի մոտ, վոր բադի վախտ քնած չեր ըլում, հենց իմանաս յերկնքիցը լիս ա վեր յեկել, ափնիքը հայլի գառել... Ծուռը նրա աչքերին ենպես եր մոտենում, ինչպես մեկ սրբի յերկնային հրեշտակը, թևերն յերեսին փռում, անմահական յերազով նրան գրկում, գզվում, արթնացնում, ել յեդ իր գիրկը դնում... Ախ, վոր մեկն ասեմ։ Նրա ամեն մեկ շարժմունքը, ամեն մեկ խոսքը, ամեն մեկ մարիկ տալը, ամեն մեկ աչքի ու պռոշի ժամ գալը՝ հրաշք եր։ Ես լուսակոլոլ աչքերը, են խնկան ծաղիկ շրթունքը, վոր բաց չեր ըլում, մարդ ուղում եր վոչ ուտի, վոչ խմի հենց նրան մարիկ տա, նրա սուրահի բոյին թամաշա անի, նրա վոտքի տակին հոգին տա, նրա ձեռիցը իր մահն առնի... Ցավ ես յերկնային հրեշտակը, ես անմեղ գառն եր են հոգատին՝ են գազաններուն (Հասան խանի ֆարրաշների) ձեռին... Ինչ քարացած, ապառաժ սիրտ պետք և ըլի, վոր նրան տեսնելիս, կամ նրա պատմությունը լսելիս գլխին կրակ չըվառվի...»

Ցերիտասարդն էլ չշարունակեց։ Վարքան Թադուհու գեղեցկության նկարագիրը հիացմունք պատճառեց իրեն, այնքան էլ վերջին տողերը հուզեցին յուր հոգին։ Նա փակեց գիրքը և ինքն իրեն շշնջաց։

— Ամեթ ինձ, հարյուր ամեթ... Ցավ յես դեռ տատանվում եմ, դեռ յերկմտում եմ։ Մինթե կարելի յե մի վայրկյան անդամ ուշանալ... Մի ժողովուրդ, վոր այսպիսի ծնունդներ ունի յուր մեջ, մինթե արժանի չե մեր խնամքին ու ազնության։ Ո՞ւմ մասին եմ մտածում — մի Ադելինայի, բաղից յերես առած մի կենցաղասեր աղջկա... Ինչու չգնամ Աթոյենց աղջկերանցը, Թադուհիներին պարելու... Ցեթե այսոր Հասան խանի ֆարրաշները չեն սպառ-

նում նրանց, հո տգիտությունն ու խեղճությունը, հո վաշխառուներն ու որինազանցները սպառնում են։ Ինչու, ուրեմն, չերթամ, ոգնության կարուտ այդ ժողովրդի մատ, ինչու չծառայեմ նրանց և իմ աշխատության ընկերը չընտրեմ Թագուհիների միջից... Մերթ նրանց անմեղ ու միամիտ սերը պակաս ուժով կխթանե և կոգևորե ինձ։ Այն աղջիկը, վոր աչքը բանալու որից ճանաչում է միայն իր ծնողներին, յուր տունն ու դուռը, յուր արտն ու այգին, վոր յուր ուրախությունը գտնում է ծնողական հարկի տակ, արդար աշխատության մեջ, վոր յուր սերը խնամքով ծածկում, պահում և սրտի խորքում է նվիրում միայն նրան, ով աստուծո կամքով վիճակվել է իրեն ամուսին և, վորն ապա յուր կյանքն ու ուրախությունը վորոնում է այդ ամուսնու մեջ, մերթ հազար անգամ ավելի մեծ, բարձր ու արժանավոր չե, քան այդ դվարճասեր, փողոցի ու հանդեսների սիրահար, նորաձևության յերկրպագու դեմքեր ու. զգացմունքներ կնոջող, շպակրատու, նազող, հաճոյասեր, ամուսնանալուց առաջ արդեն աշխարհ ճանաչող, Թագուհի անկյուններում ուսարի հետ պաչվըչվող, իսկ սալոններում սիրո սրբությունը դրվատող արիորդներն ու մեծահինները... Այո, վորշված է, յես կերթամ և ինձ այլևս չի արգելիլ վոչ վոք։

Չ

Դեռ այս մտքի վրա յեր կամսարյանը, յերբ հանկարծ նրա յետևից հնչեց մի թավ ձայն.

— Տո, Պետո, դեռ միստեղ ես, իսկ յես կարծում եյի թե Մասիսն արդեն անցել ես։

Պետրոսը յետ նայեց և տեսավ մեկին այն ընկերներից, վորոնք ուսանողական ժողովում լսելով յուր խոստումը, դղրդացրել եյին ողը կեցցեներով և իրեն բարձրացրել ձեռքերի վրա։

— Գնում եմ, բարեկամ, գնում եմ, — պատասխանեց նա կարծես չվիթխելով և արագ տեղից յելավ։

— Ճշմարիտ, թե կատակ ես անում, — հարցրեց յերիտասարդը պարզելով ձեռքն ընկերին։

— Իհարկե ճշմարիտ, կատակ ինչու յեմ անում։

— Ցեղբայր, մեծ մարդ ես, խոստովանում եմ. բայց յերբ։

— Շուտով, հենց այս քանի որը։

— Ուրեմն, պատրաստություն տեսել ես։

— Արդեն։ Կամենում ես արի ցույց տամ։

— Հապա, տեսնենք, հետաքրքրական է, — ասաց յերիտասարդը և հետևեց Պետրոսին։

Առաջնորդելով ընկերին յուր սենյակը, Գևորոն սկսավ մի մի ցույց տալ նրան այն ամենը, ինչ վոր գնել էր դյուղ տանելու համար։

— Ամենից առաջ սա՛ս այս թամբը, հունդարական է, բոլորը խոպի կաշվից. 60 ռուբլի արժե. սանձը, ասպանդակները մաքուր պողպատից։

— Այդ ինչո՞ւ համար է։

— Ի՞նչպես թե ինչո՞ւ. դյուղերը չի՞ պիտի պատեմ. միշտ հո մի տեղ չեմ նստե։

— Իսկ ձի՞ն։

— Ձին էլ այնտեղ կգնեմ, այստեղից հո չե՞մ տանելու, ինչ ասելդդ հարց է։

— Հասկացա. հետո՞։

— Սա էլ հրացանս. ամերիկական նոր տեսակի, յերկփողյա. յուր բոլոր պարագաներով արժե 120 ռ.

— Այդ ինչո՞ւ համար է, ավազակներ պիտի հալածե՞ս։

— Ի՞նչ ավազակներ, ինչեր ես հարցնում. վորսորդությանն չի՞ պիտի դնամ. բոլոր որը հո պարապելով չե՞մ անցնելու. մի մի անդամ էլ զվարճություն է պետք — այս էլ պայուսակս, բոլորը կաշվեկար պղնձե ողակներով, թամբի վրա հարմարեցնելու համար. — այս էլ դաշտային հեռադիտակ. միշտ հարկավոր է լինում. — այս էլ կողմնացույց...

— Կողմնացո՞ւյց. այդ ինչի՞ համար է. ծովերի վրա՞ պիտի թափառե՞ս։

— Ախ, ինչ ապուշն ես։ Ծո, չի՞ պատահիլ, վոր անտառներում պատելիս հանկարծ մոլորվեմ. այ, հենց այդպիսի ժամանակ կողմնացույցը կարող է ինձ ցույց տալ թե ինչ ուղղություն բռնեմ, վոր դյուղը դուրս գամ։

— Այդ հո բոլորը քեղ համար ես հոգացել, դյուղացիների համար ինչ ես տանում։

— Սպասիր, նրանց համար էլ կա, տեսնում ես...— այս ասելով Գևորոը ցույց տվավ սեղանի վրա դանվող գրքերի մի կույտ և նրանցից մի-մի հատ առնելով, շարունակեց. — այ, „Полный курс охоты“ — Маркса-Манн. սա էլ ասենք ինձ համար է, բայց դյուղացիներին էլ կհարկավորվի։ Ես վոր վորսորդության մասին ես կարող եմ խորհուրդներ տալ նրանց։ — „Ляговая собака„ — Фридриха Освальд. սա նույնպես կարևոր գիրք է վորսորդական շներ վարժեցնելու համար։

— Այ մարդ, դու կարծում ես թե հայ դյուղացին բան ու գործ չունի, հենց միշտ վորսի յեռևից պիտի լինի։

— Համբերիր բարեկամ, ախար մենք էլ քեզ չափ մտածել դիտենք քե վոչ։ Ա՛յ, „Плодовая школа и плодовый сад" — Раевского, սա հո պատվական ձեռնարկ է ծառեր տնկելու, պատվաստներ անելու, պտղատու այգիներ խնամելու համար։

— Հա, դրան խոսք չունիմ։

— Իսկ սա „Домашний огород" — Мицулья. ընտիր ձեռնարկ է բանջարանոցների համար։ Սրան կցված է Черноглазов մի դեղեցիկ աշխատությունը՝ „Огурцы, дыни, арбузы и тыквы" վերնագրով, հատուկ այդ չորս տեսակ պտուղները աճեցնելու համար։

— Հետո։

— Սա յել „Общедоступное руководство к земледелию" — Костычева, թեպետ համառոտ, բայց շատ պարզ և հասկանալի վոճով կազմված մի ձեռնարկ է յերկրագործության համար։ Իսկ սա կոպեկի հայտնի «Յերկրագործություն և անասնապահություն» աշխատությունն է, վոր թարգմանել է պրոֆեսոր Վոյլֆը. հիսուն տարուց ավելի գործածության մեջ է և, հմուտների կարծիքով, դյուղատնտեսական գրականության մեջ համարվում է իբրև կլասիկ գրվածք։ Իսկ սա՝ „Скотоводство" — Трипольского, հատկապես կազմված յեղջյուրավոր անասուններ և ձի, վոչխար ու խոզ պահելու համար։

— Ուրիշ։

— Իսկույն. „Практическое руководство виноградарства и виноделия" Винберга. սա անհրաժեշտ գիրք է այգեգործության և գինեգինության համար։ Մեր դյուղացիների դևաւոր պարապմունքը, կարծեմ, դա յե։ Այդ պատճառով այդ ճյուղին վերաբերյալ ձեռնարկներ մի քանիսն եմ ընտրել։ Ա՛յ, „Руководство по виноградарству" Цобеля, բազմաթիվ ու բազմազան նկարներով...

— Իսկ մեղվապահական, հավաբուծականը...։

— Սպասիր, սպասիր, դրանք էլ ունիմ. ա՛յ, „Птицеводство" Д-ра Прибыня. պատվական աշխատություն է՝ գերմաներենից թարգմանված, իսկ սա „Пчела и пчеловодство" Бутлерова. մեղվապահական ընտիր ձեռնարկներից մինն է։ Սա յել „Как добывать шелк" — Иверина շերամապահության վերաբերյալ մի դեղեցիկ աշխատություն է։ Սրանից զատ յես դնել եմ նաև, մի քանի հատ հայերեն գրքեր, ա՛յ, որինակ, Մելիք-Շահնազարյանցի «Բուսական աշխարհը», «Գործնական գինեգործությունը» և «Շերամապահության» ուղեցույցները։ Նույնպես Քալունու «Մեղվաբուծությունը» և «Շերամապահությունը»։ Թեպետ ռուսերեն ձեռնարկներով յես կարող եմ լիուլի ծանոթանալ գյուղատնտեսական

այս կամ այն ճյուղին, և քան այնմ, հարկ չեղածը սովորեցնել դյուղացիներին, այնուամենայնիվ, այս ձեռնարկների մեջ կըլինեն բազմաթիվ տերմիններ, որոնց հայերենը չգիտեմ. ահա այդ դեպքում ոդնության կհասնեն ինձ հայերեն ձեռնարկները։

— Այո, լավ են մտածել, դյուղացու աչքում ամեն կերպ պետք և հեղինակավոր յերևալ։ Բայց ուրիշ ել ինչ պատրաստություն ունիս։

— Ել ինչ պիտի ունենամ, միացածն ել ղլխումս ե...

— Ցավ դրպանումդ, իհարկե։

— Առանց դրան հո քան չի առաջանալ։ Բայց, սկզբում, կարծեմ, հարկ չի լինիլ դրպանի ոդնության դիմելու։ Դեռ առաջ պետք և դյուղը մտնել, դյուղացուն ու նրա կարիքներին ծանոթանալ, իսկ այնուհետև ամեն քան հեշտ և։

— Նախանձում եմ քեղ, բարեկամ, վորքան բաղդավոր ես, վոր կարող ես այդպես աղատորեն նվիրվել հասարակաց գործին. իսկ յես...

— Ո՞վ և քեղ խանգարում հետևել ինձ։

— Ո՞վ և խանգարում... ազգատ ծնողներ պահելու, քույրը ու յեղբայր աղրեցնելու, և, նույնիսկ, ինձ նման ահագին մարդուն կերակրելու անհրաժեշտությունը։

— Այո, իրավունք ունիս, քո դրությունը ծանր և, — հարեց իսկույն Կամսարյանը, զգալով վոր ընկերի ցավոտ կողմը շոշափեց։

— Բայց վիճակս մասամբ բարվոքելուց հետո, պիտի հիշեմ նաև քեղ հետևելու պարտքս, մի կարծիր թե ուսանողական ժողովի վորոշումը կարող եմ յերբևիցե մոռանալ։

— Մի վշտանար, բարեկամ, քո ծնողներն ու հարազատները նույնպես հասարակության անդամներ են. յեթե դու նրանց խնամում ես, դրանով արդեն վորոշ չափով ծառայում ես հասարակությանը։ Ես հավատացած եմ, վոր յերբ դրությունդ բարվոքվի, կաշխատես ավելի անել։

— Անշուշտ։

— Ուրեմն չխոսանք այլևս այդ մասին. դառնանք իմ ձեռնարկության։ Ի՞նչ խորհուրդ ես տալիս. վիր կողմում հաստատեմ ոդնության գործը։

— Դու դեռ չես վորոշել։

— Վհչ, վորովհետև մտածում եմ թե բոլոր կողմերն ել միևնույնն են ինձ համար, ուր վոր հայ շինական կա, այնտեղ ել կարող եմ գործել։

— Ճեվ շատ լավ ես մտածում։ Նատիր յերկաթուղի և դնա դեպի աջ։ Հենց վոր հասար Աղստաֆա (դա մեր պատմական Աղստաևն է, չմոռանաս), իջիր այնտեղ։ Փոստային կառքը Աղստաև գնում ուղղությամբ կտանեն քեզ դեպի Դիլիջան։ Անցել ես դու այդ ճանապարհով։

— Վա՛չ։

— Լավ, ուրեմն, կերթաս և կտեսնես այն աշխարհն, ուր քո պապերն են ապրել։ Կարող ես հենց առաջին պատահած գյուղում իշնել և այնտեղ էլ քո ոգնության գործը հիմնել։ Այժմյանից, ի հարկե, դժվար է վորոշել թե ինչ պիտի անես, բայց յերբ կմտնես ժողովրդի մեջ, այն ժամանակ արդեն ինքդ կտեսնես նրա կարիքները և կսկսես հոգալ կարևոր դարմանը։ Ինչպես լավ, նույնպես և վատ արհեստը վարակիչ է։ Ճերը քո ձեռքը կտեղծե մի գյուղում դպրության արժանի գործ, կտեսնես, վոր հետո լույս կընկնեն ուրիշ ձեռքեր, վորոնք նույնը կանեն ուրիշ գյուղերում։ Ո՞վ դիտե, դուցե հենց քեզ է վիճակված կարապետ լինել այն դաղափարական գործին, վոր ամփոփում է յուր մեջ գյուղացիան ժողովրդի ապագա բարորությունը և վորի մասին այնքան շատ խոսել ու քարոզել է հայ լրագրությունը։ Ճերևակայիր թե ինչպիսի հռչակ պիտի վաստակես դու հայ հասարակության մեջ, յերբ հայտնի լինի մի որ թե՝ այն, ինչ վոր գրողները միայն յերազել են, դու արդեն մարմնացրել ես քո հաստատուն կամքով։

— Դու ինձ վոգևորում ես, բարեկամ,— բացականչեց Կամսարյանը և ընկերոջ ձեռքն առնելով ամուր-ամուր սեղմեց։

— Վոգևորվիր ու գնա գործիր։ Ասածդ անշուշտ կորհնե քո ընտրած ճանապարհը։

Այսքանն արդեն բավական եր, վոր Կամսարյանն յուր վորոշումը իրագործեր անպատճառ։ Ընկերոջ հետ խոսելուց հետո, նա սկսավ կարդի բերել յուր իրեղեններն և կապկպել։

Ճնայելով, վոր այդ առթիվ Լիդիա Պավլովնան ու Կիրիլ Կարպիչը մի անգամ ևս լուրջ վիճաբանություն ունեցան իրենց վորդու հետ և այս անգամ մայրը վոչ միայն հուզվեց, այլ և կարողացավ լաց լինել, այսուամենայնիվ, Գևորոսը ճնշց անընկճելի։ Միակ զիջումը, վոր նա արավ ծնողներին, այն եր, վոր խոստացավ չերկարել ճանապարհորդությունը և աշխատել մի քանի շաբթով վերադառնալ Բորժոմ։

Այս պայմանը խաղաղացրեց յերկու կողմերն էլ և Գևորոսը մի լուսնկա յերեկո յուր պարկ ու պուրկը կառքի մեջ ժողովելով, ճանապարհվեց դեպի յերկաթուղու կայարանը։

Ե

Կես գիշեր էր, երբ գնացքը կանգ առավ Ազատաև կայարանի առաջ։ Ղազախ ու Դիլիջան գնացողների թվում իջավ գնացքից և Պետրոս Կամսարյանը։ Ուղևորներին իրենց ծառայությունն առաջարկող կառապանները մոտեցան, նաև վերջինիս և սկսան գովել՝ մեկն յուր բիձկան ձիերը, մյուսն յուր բալղո կալասկան, յերրորդն՝ յուր դինջ «ամեխրուսը» և այլն, և այլն։

Պետրոսը, ինչպես հարմարություններ սիրող մարդ, չէր կամենում փոստի սայլակով ճանապարհորդել, երբ կարող էր կայարանների քամահաճույքին, այդ պատճառով էլ ընտրեց «բալղո կալասկան», թեպետ հաստատ չգիտեր թե՝ վերջքան և նա հարմար առաջիկա ճանապարհորդության համար։ Ցնծ վարվհատև ոգեխրատւթ, կամ ուրիշ կառքերի տերերը վախեցնում էին նրան ասելով՝ «էդ կալասկան եդա ճամփի միջումը կոտրվելու ա, քե էլ թողի արևումը խաշվելիս» և այլն. ուստի յերիտասարդը սկսավ կասկածել թե մի գուցե սխալվել և յուր ընտրության մեջ։

— Սուտ են ասում, աղա ջան, քե վախեցնում են, վոր իրանց գյալտոնը բանես, առարկում էր «կալասկիե» տերը և ավելացնում.— իմ կալասկեն կրկի չորս տարի, վոր բանեցնում եմ, հլա պռունգը ձեռսվել չի։ Հրեն մեկել արը պրիստավին տարա Ղազախ, ընդհան էլ նաչալնիկին դուբս բերի Դիլիջան, բա խի չկոտրվեց։ Հլա նաչալնիկն էլ ասեց «մալադեց Ոհաննես, ավոյ կալասկա աչեն խաբոշի»։

Պետրոսն անդուշակ յերկար կմնար յերկբայության մեջ, յեթե նրան ոգնության չհասներ կարճահասակ մի մարդուկ, վորն, ըստ յերևույթին, ծանոթ էր տեղական կառապանների սովորության ու հնարներին։

— Աղա, ես մարդի կալասկեն լավն ա, ըսկի սիրտդ շաք (կասկած) մի դցիլ, նստի ու գնա։ Դու քե ամեն խոսդի լսես, երկու որ կմնաս ըստեղ,— ասաց նա բարեկամաբար։

— Ա՛յ, քու հերը լիս դառնա, ըտենց խոսա ե՛,— ուրախացավ Ոհաննեսը և ապա դառնալով Պետրոսին՝ ավելացրեց.— տես. աղա, սա վարժատես մարդ ա, սուտ չի խոսալ, վոր ասում ա իմ կալասկեն լավն ա, իմաց վոր լավն ա։

— Շատ բարի, գնա լծիր,— կարգադրեց Պետրոսը, նախապես վարձավճարը վորոշելով։ Ապա դառնալով միջամտող մարդուկին՝ հարցրեց.— վերտեղի վարժատես եք։

— Դիլիջանից գենը հայի դեղ կա, ընդեղի վարժատեսն եմ։

— Ուրեմն գուք էլ Դիլիջան եք գնում։

— Հրամանք ես։

«Սա կարող է լավ առաջնորդ լինել ինձ» մտածեց Գևորսը և առաջարկեց նրան՝ ընկերանալ իրենն։

— Չէ, աղա, յես փուրդոնով պտի գնամ,— առարկեց վարժապետը։

— Ինչմէ, մինչև կառքը ավելի հանդիստ չէ։

— Հալբաթ կոր (ինարկե) հանդիստա ա,— ծիծաղեց վարժապետը։

— Ինչմէ ուրեմն չէք գալի։

— Բա դեղի վարժապետը վիրդիան կարա կառքի փող տալ։

— Ի՞նչ փող, յես փող չեմ ուզում։

— Բա վինց։

— Հենց այնպես, ձրի։ Ցես, միևնույն է, կառքի փողը պիտի վճարեմ, շատ ուրախ կլինեմ, յերբ դուք էլ ինձ ընկերանաք։

Վարժապետը քաշվում էր և չէր կամենում յերիտասարդի առաջարկությունն ընդունել։

— Ա, շնշշ (ապուշ), խի յես մաթ ճնացել (զարմացել), լավ բանը դլուխդ վեր չունում,— նկատեց վարժապետին դաշխեցի ծանոթներից մինը։

— Դե խի չի վեր ունում, ասում եմ, ծանդրուքյուն չըլեմ աղի համար։

— Վոչինչ, ծանդրուքյուն չես լինիլ, դնանք,— ասաց կամաորյանը և իրեղենները հանձնելով բեռնակրին, առաջ անցավ։

Մարդուկը հետևեց նրան։

Կառապանը, վոր մի քանի վայրկյանում արդեն «կալասկեն» լծել, բերել էր կայարան, ժողովեց իսկույն Գևորսի իրեղեններըև կառքի յետքին ու առաջին դարսելով, սկսավ ամրացնել։ Ալա իմանալով, վոր վարժապետն ևս ընկերանում է «ադինա», նրա խեղճ կապոցն էլ տեղավորեց մի խորշում։ Հետո բարձրանալով յուր նստատեղը, ասաց.

— Ցես իմ աստոծը, աղա, լավ ընկեր ես վե կալել, արժանավոր մարդ ա, ըտենց ընկերի հետ գնացած ճանապան էլ բարի կըլնի։

— Հապա յես վատ մարդ կըընկերացնեմ ինձ,— պատասխանեց կամաորյանը և կառքը բարձրացավ։

— Տեսնում ես, վարժապետ, լավութինը կորչում չի,— նորեն խոսեց Ովանեսը,— դու վոր ինձ համար բարեխոս չեյիր ըլել, աստոծ էլ քե ես բանին ոստո չեր բերիլ, փուրդոնի ճոճոցից ազատվեցար, ուբ աբասին էլ ճնաց չկըտմդ։

— Լավ, մի յերկարացնիր, քշիր տեսնենք,— նկատեց կամաորյանը, ղգալով վոր կառապանի խոսքերը անհաճո պիտի լինին վարժապետին։

— Բշիլ տամ, ախպեր, բա քշիլ չըպտեմ, քե ընենց լեզով (շուռտով) տաննամ, վոր նաչալնիկի պես ասես՝ «մալադեց Ովանեսյան»։

Այս ասելով կաուպտանը շարժեց տանձերը, խրախուսեց ձիաներին և կառքը սլացավ խճուղու ուղղությամբ։

Լուսյոր բացված չլինելով, դիշերային զովը զգալի չեր դեռ։ Պետրոսը փաթաթվելով վերարկուի մեջ, կծկվեցավ կառքի անկյունում և սկսավ խոսակցել վարժապետի հետ։

— Ձեր անունն ինչ է, — հարցրեց նա։

— Ին ծառա՝ Մոսի, — պատասխանեց վարժապետը։

— Ջասացիք վոր դյուղի վարժապետն եք։

— Ջքուլլու։

— Ջիքուլլու։ Դա հայից դյուղ է։

— Հայոց ա, բա ինչ ա։

— Ախունը, կարծեմ, հայերեն չեն։

— Հրամանք ես, թուրքերեն ա, ամա մեր վանահայրն ասում ա, շատ առաջ հայերեն ա ըլել։ Ճապոտիկ են ասել։

— Վանահայրն ով է. ձեր դյուղում վանք էլ կա։

— Չե, Սևանա վանահայրն եմ ասում։

— Սևանն, ուրեմն, մոտ է ձեզ։

— Մոտ ա, բա, հենց մեր առաջին ա։

Այս նորությունը ուրախացրեց Պետրոսին։ Վորքան ժամանակ եր, վոր նա փափագում եր տեսնել Գեղամա ծովակը, վորքան լավ բաներ եր լսել նրա մասին, վորքան բաներ կարդացել։ Այժմ, ահա, նա կհասներ փափագին։

— Ձեր դյուղում, ուրեմն, ուսումնարան էլ ունիք, — շարունակեց նա յուր հարցերը։

— Ուսումնարան վորդիան ա. մի տասը-քսան րնեխա չես եմ հավաքել մեր տունը, կարդացնում եմ... քե դրուստն ասեմ. չես էլ ըսկի արինավոր վարժապետ չեմ։ Ցեղցումը, վոր երեցին ոգնում եմ, ախրացութին անում, են ա զեղականն անունս վարժապետ ա դրել։

Ուրեմն Պետրոսի ուղեկիցը ախրացու չեր և վոչ վարժապետ։ Սրանով էլ պարզվում եր յերիտասարդի համար այն հանելուկը, վոր վարժապետ կոչվածը դյուղական բարբառով եր խոսում։

Այս նորությունը, թեպետ վորոշ չափով ձգեց ուղեկցի վարկը կամսարյանի աչքում, այսուամենայնիվ, վերջինս դարձյալ հետաքրքրվեց նրանով։

— Վիրտեղ ես ուսում առել, — հարցրեց նա։

— Հրնա, առաջներիս զեղ կա, Քարվանսարա չեն ասում, ընդեղ եմ կարդացել։ Ձես ինքս էլ Ղազախի զեղերիցն եմ. միայն

Զքեխուի երեցը մեր ազգական եր, դուռից, տարավ իրա կուշտը (մոտը) ասեց՝ ըստի տիրացուքին պատես անել, ժամանակով էլ քահանա կշինեմ քե։

— Լավ դյուղ է Զիբուխլուն։

— Հլե մեղ համար լավ ա, ուբիշի համար ինչ գիդամ։

— Վարքան ժողովուրդ ունի։

— Իսկը գիտում չեմ, կըլի վոր հարյուր հիսուն տուն ըլի։

— Ո՞նչպես ե, վոր այդքան տուն չի կարողացել յուր համար ուսուցիչարան հիմնել։

— Բա, գեղականը վիրդիան կարա ուսուցիչարան հիմնել։ Սաղ որը չարչարվելով, արևի, անձրևի հետ կռիվ տալով ըսկի կարում չի ենքան աշխատի, վոր իրա ըսխանց ուզին հասնի, յա նրանց տկլոր լաշը ծածկի, ուսուցիչարան վինց տի հիմնիլ։

— Իսկ յեթե գտնվի մեկը, վոր ցանկանա յուր ծախքով այդ բանն անել, դյուղացիք հո չեն հակառակիլ։

— Բա, եղ ինչ ես ասում, աղա ջան, մարդ իրա աչքը քոռ կուզի, գեղացիք չե թե հակառակիլ չեն, հլա դեենց մարդու վոտն էլ կպաչեն։

«Այս դյուղն, ուրեմն, կարժանանա իմ ուշադրությանն», — մտածեց ինքն իրեն Համասարյանը և շարունակեց։

— Իսկ դյուղատնտեսությունը ինչ դրության մեջ և ձեր կողմերում։

— Դյուղատնտեսությունը վիրն ա։

— Վար ու ցանքը, անասնապահությունը, գինեգործությունը...

— Վար ու ցանքն էս տարի լավ ա, տավարն էլ, փառք ասծու, ցավ ու չոռից ազատ ա, ամա դե գինին մեր կողմերում չի ըլիլ, չուն մեր տեղը սար ա, բաղն արշա չի գալ (չի առաջանալ), — պատասխանեց տիրացուն, այլ կերպ հասկանալով իրան տրված հարցը։

Այդ հանգամանքը կարծես սառեցրեց Պետրոսի հետաքրքրությունը և նա այնուհետև սկսավ ավելի մտածել, քան խոսել։ Դրա հետևանքը յեղավ այն, վոր յերիտասարդը տաքուկ վերարկուի և դրվ ոդի աղմուկության տակ սկսավ նիրհել։ Ցեվ վորովհետև յերկաթուղու վրա շատ քիչ եր քնել, ուստի շուտով էլ քաղցր քուն մտավ։

Տիրացուն յուր կողմից աշխատեց չարթնացնել նրան և քիչ ժամանակից հետո ինքն էլ հետևեց նրա որինակին։

Սակայն Ովանեսի «կալասկան» շարունակ սլլում եր հարթ խճուղու վրա։ Նա արդեն Ղազախը, Գազիա դաշտը և Ուզունթալան անցել և Քարվանսարի ճանապարհն եր մտել, յերբ Համասար-

յանն անուշ քնից արթնացավ։ Աչքերը բանալով, նա չորս կողմը նայեց և իրեն շրջապատող տեսարանները դիտելով, հիացավ։

Ճանապարհի մի կողմից ընկած էին հասուն արտեր կամ սիզավետ արտեներ, վորոնք ուղղաձիր, կամ վայրահակ տարածվում, հասնում էին մինչև հեռավոր բարձրաբերձություններըը, իսկ մյուս կողմից կանաչազարդ թումբեր, ձորակներ ու բլուրներ, վորոնց հետևում էին և նախ մանր ու ծառախիտ և ապա խոշոր, մշտապատ լեռներ։ Դրանց մեջ, իրենց բարձրությամբ, աչքի էին ընկնում աջ կողմից Նալբենքանը, իսկ ձախից՝ կարմիր քարը՝ յուր յերկար լեռնաշղթայով, ապա Համղասարը, Արտազը և այլն, վորոնք հետզհետե իրար հաջորդելով հորիզոնը զարձնում էին վեհ և գեղատեսիլ։ Սակայն աջ ու ձախ տարածվող այդ տեսարանների գեղեցկությունը գլխավորում էր Ազատևի հինավուրց գետակը, վոր շարունակ անծայր խճուղուն ընկերանալով, զվարճացնում էր նրա մշտական անցորդներին մերթ վճիտ ջրերի քաղցր կարկաչով, մերթ փոքրիկ ջրվեժների փափուկ շառաչով և հաճախ, յուր յեղերքը ծածկող կամ յուր յեղույրներում խմբովին ցոլացող ծառերի պուրակներով։ Արևը, վոր նոր էր յուր շողերը սփռում Ազատևի ձորի վրա այդ տեսարաններին տվել էր մի դյութական պայծառություն, վառելով մշուշը լեռների լանջերում, կանաչը՝ ծառերի կատարին, դալարը դաշտերի մեջ և ցողը՝ ծաղիկների վրա։

— Ո՛հ, ինչ գեղեցիկ և վորքան հրաշալի յե մեր յերկիրը, — բացականչեց Կամսարյանը, հրապուրվելով բնությյան այդ սիրուն տեսարաններով և ապա ձեռքերն աջ ու ձախ տարածելով, կամենում էր կարծես հորիզոնը զրկել։

— Ըստեղ հլա ինչ գեղեցկություն կա — գեղեցկություն, գեղեցկություն Դիլիջանա դեռն ա, Շամլուխի ձորումը, Մայմեխի ընջերին, հրես գնում ենք, կտեսնաս, — նկատեց տիրացու Մոսին։

Կամսարյանը, վոր դեռ քննական աչքով չէր նայել ուղեկցին, վորովհետև, դիշերանց էր ծանոթացել նրան, թալ ձայնով նրա դիտողությունը լսելուց, յետ նայեց մի վայրկյան և տեսավ, վոր դա մի մարմնացյալ աննկարագրելի անկանոնություն էր նկատմամբ այն պոեզիայի, վոր շրջապատում էին իրենք։ Տիրացուի կարճ ու գիրուկ մարմինը, վոր նստած լինելու պատճառով կորացել էր, նմանում էր մի ռեձև մսագնդի, վորի վրա գլուխը շարժվում էր, կարծես, առանց պարանոցի։ Նրա թուխ դեմքը, վոր արևահար լինելուց ավելի յէր սևացել, ծածկված էր խիտ և յերկրիք չհանրված մորուքով։ Վերջինս թեպետ տարածվում էր մինչև նրա այտոսկրները, այսուամենայնիվ, չէր ծածկում տիրոջ մեծ բերանը, վոր լեզերված էր հաստ լրթագույն շրթունքներով։ Որ ընկած աչքերը,

չնայելով իրենց սնուցյան, թավալում էին նեղ կապիճներում առանց կրակի և արտահայտության, իսկ դրանց հավանավորող թավարծի հոնքերը տալիս էին նրա դեմքին մի առանձին գունկությունն։ Հասա շալի կապան, կեղտոտ ոձիքով արխալուխը և մորթե մեծ գդակը, վոր նա խնամքով քաշել էր մինչև հասա բլթակներով լոշի պես կախված ու փոշոտած ականջները, տիրացուին նմանեցնում էին անտառաբնակ խոզարածի, նրան պակասում էր մի մահակ՝ ձեռքին և մի պարկ՝ մեջքին։

Գևորոսը ուշի ուշով նայելով ուղեկցի վրա, զգաց այնպիսի մի անհանգստություն, վոր պաշարում և մարդուն՝ դղվանք զգալուց առաջ։ Նա զարմացավ յուր անմտության վրա, վոր մի առաջնորդ ունենալու պատճառով, նստեցրել էր կողքին այնպիսի մի գունկի, վորից, մինչև անգամ, կեղտի ու քրանքի հոտ էր փչում։ Այս պատճառով յերիտասարդն անդգալի կերպով քաշվեցավ մի կողմ և, վորպեսզի տիրացուից ավելի անջատվի, առջևը դրած իրերից մինն առնելով, դետեղեց նրա և յուր միջտեղը, ասելով.

— Սրա մեջ կոտրելու բան կա, լավ և այստեղ դնենք։

Բայց վորովհետև Գևորոսին այնպես թվաց թե Մոսին հասկացավ յուր միտքը, ուստի սկսավ զբաղեցնել նրան։

— Աստմ ես թե այն կողմերն ավելի գեղեցիկ են, հա՞։

— Գեղեցիկ են, բա, ըստեղ հլա շատ փայը դյուղ ա (դաշտ) արևը վոր աշմիշ ա ըլում (բարձրանում է) են դայդի ա երում, վոր ասես թե մարդի կաշին պուկիլ ա, ամա դենի ճամպեն չիմ մեշալով (անտառով) ա անց կենում, վոտով էլ վոր գնաս մեջդ տաքանալ չի։

Չնայելով տիրացու հայտարարությանն, կամարյանն, այսուամենայնիվ, թերություն չեր դտնում շրջապատող տեսարաններում, ընդհակառակը, նա վորքան հառաջանում, այնքան ավելի յեր հիանում նրանցով։ Մանավանդ Աղստևի մշտակարկաչ հոսանքը և նրա սիրուն, ծառազարդ ափերը գրեթե շարունակ դմայլեցնում էին նրան, այնպես վոր մի ժամանակ նա, մինչև անգամ, մոռացավ տղեղ տիրացուին և ինքն իրեն խոսեց.

— Ահա թե քանի տեղեր են և քանի գեղեցկություններ են անհայտ մնում մեզ... Իսկ սրանց մեջ ապրող մեր աղքակիցները... չե՞ վոր նրանք էլ ունին դեղեցկություններ ու կատարելություններ, վորոնք անծանոթ են մեզ։ Գեռք և շնորհակալ լինել բաղդից, վոր վերջապես ոչնչից ինձ՝ իմ նվիրական խոստումն իրագործելու, (այդ վայրկենին յերիտասարդի հայացքը հանդիպեց յուր ուղեկցին և նա մի քայլ յետ կատեց յուր մտածության մեջ՝ ավելացնելով) կամ, դոնե, ծանոթանալու այս յերկրին ու ժողովրդին,

վորպեսզի համոզվիմ թե ինչ չափով և հնարավոր այդ վորոշումն իրագործել։

Քիչ ժամանակից հետո յերիտասարդ կամաբյանը նստած Բարվանասար դյուղի առաջ, կարկաչահոս Աղստևի ափին, մի հովանավոր ծառի տակ, ախորժակով նախաճաշում և քեյֆ ևր վայելում։ Այստեղ արդեն սիրացուն չևր ընկերանում նրան, վորովհետև հանդղնություն ևր համարում ձդվիլ «աղայի» հետ, նաև, նախաճաշի ժամին։ Նա համեստությամբ խույս ևր տվել դեպի մոտակա կրպակը, ուր խոնված եյին Ղազախի գանազան կողմերից դյուղացիներ և նրանց հետ խոսում ևր։ Տիրացուն այդ վարմունքը դյուր յեկավ կամաբյանին և համոզեց նրան, վոր յուր ուղեկիցը այնքան ել անտաշ դեհկին մեկը չե։ Այդ պատճառով ել, յերբ նախաճաշն ավարտեց, կանչեց վերջինիս և առաջարկեց նրան նուչնպես քեյֆ խմել և նախաճաշել, իսկ ինքն հեռացավ մի փոքր զրնգայելու։

Տիրացուն յուր կողմից հրավիրեց կառապան Ոհաննեսին։ Նրանք յերկուսը նստեցին նույն հովանավոր ծառի տակ և սկսան վայելել «աղայի» քեյֆ ու նախաճաշի առատ մնացորդը։ Կառապանը տեսնելով, վոր «աղան», ի միջի այլոց, քեղել ևր իրենց համար տասը կոր շաքար, այդ համարեց առատասրտություն և դրանից ել յեղրակացրեց, վոր նա «մենծ մարդ պիտի ըլի»։

— Մենծ մարդ ա, բա, մենծ վոր չըլևր, մենակ կալասկա կրոներ կդներ,— հաստատեց տիրացուն։

— Ցա չե, առանց փողի քե կողքին կդներ կբերեր։

— Ցես ել եդ չեմ ասում։

— Թյունդ հուսումնական կըլի, ախ։

— Հուսումնական ա, բա։

— Ձըլի քե ընչներ ա։

— Զե, ընչներ չի բևում։

— Բա խի յաշչիկը ծանդր ա, յես նըհենց եմ՝ մանում թե ընչների յարաղ (գործիք) կա միչումը։

— Զե, կլի վոր դրևր ըլին։

— Գրևրը ինչ ին ա պետք։

— Վ.ինց քե ինչ ին ա պետք, բա հուսումնականն առանց գրևրի մանը կըգա։

— Ցես ըմ (ինչ պիտեմ), հրևն մեր դեղի ադան ել ասըմ են հուսումնական ա, ամա համպա դնալուց՝ արաղից սավայի դատ չի ըլում հետը։

— Ը՛, շաշ, դու ել մարդու անուն տվիր. դեղի հուսումնականն ու քաղաքինը մ.ին ա ըլում։ Դեղի հուսումնականը սաղ կյանքումը

հինգ, յա վեց դիր անջախ (հաղիվ) ա կարդում, ամա քաղաքինը՝ աշխարքումս էլ դիր չի թողնում չիմ (բոլորը) կարդում պըրծնում ա։

Այսպես ղրուցելով տիրացուն ու կառապանը վերջացնում էլին իրենց նախաճաշը, յերբ Համասարյանն յուր շրջազայությունից վերադառնալով, տեսավ նրանց միասին։

— Այս տիրացուն իսկապես կառապանի ընկերն ե, յես ինչու՞ հիմարաբար իմ կողքին եմ նստեցրել, — մտածեց նա և վորոշեց առաջարկել, վոր սա այնուհետև նստի կառապանի մոտ։ Բայց ինչպես աներ առաջարկությունը, վոր տիրացուն չվիրավորվեր, նա այդ մասին էլ մտածեց։

Ցերբ Ովանեսը յուր գահին բազմած՝ կառքը մոտեցրեց գաղինձ, վերջինս հրամայեց ծածկել հովարանը, վորովհետև արևն այրում եր արդեն։ Կառապանն իսկույն կատարեց հրամանը։

— Նախաճաշից հետո յես սիրում եմ հանգստանալ. արդյոք չե՞ կարելի պառկել ձո կառքում և այնպես դնալ, — հարցրեց Գևորոսը կառապանին։

— Ինչ չի կարելի. տեղում չես վորքան լեն ա իմ կալասկեն։ Դու վոտերդ ձգի ու պառկի, վարժապետն էլ իմ կողքին կնստի, — պատասխանեց Ովանեսը։

— Հա, յես ըստի կնստեմ, դու նեղանալ մի, — հարեց տիրացուն, ցույց տալով կառապանի նստատեղը։

Համասարյանը հիացավ այս հաջողությանն վրա և կառքը բարձրանալով, դլխի տակն առավ փոքրիկ բարձը և ձգվեց բազմոցի յերկարությամբ։

Տիրացուն սեղմվեց կառապանի կողքին։

Գարվանասարայից յելնելուց Աղստևը դարձյալ ընկերանում եր ճանապարհորդներին յուր ընդդիմակաց հոսանքով, յերբեմն փոքրիկ ձորակներից անցնելով, յերբեմն դաշտերի յեզերքը քերելով, իսկ շատ տեղ Թեումբերի յեռևը թաքնվելով։ Գանի շարունակվում եր տեսարանների միակերպությունը, Համասարյանը նրանցով չեր հետաքրքրվում, այլ պառկած եր։ Բայց հենց վոր հասան Ղլիճ-Ղալա կոչված ժայռերի առորոտին, նա ուղղվեցավ իսկույն և դլուխը կառքից դուրս հանելով, սկսեց ուշի ուշով դիտել այդ ահավոր և միևնույն ժամանակ գեղատեսիլ պարեհները, վորոնք ճանապարհի աջ կողմից ձգվելով, իրար վրա դիզված, հետզհետե բարձրանում, կազմում էլին տարօրինակ ամբարտակներ, մի տեղ սուր ու միապաղաղ, մյուս տեղ խրոխտ ու բազդ-բարդ, իսկ շատ տեղ թեք դեպի ճանապարհը, կարծես սպառնալով փլչել բարձր գահավանդից և իրենց փլվածքի տակ

ծածկել տեղի խաղաղությունը վրդովող հանդուգն ուղևորներին։

Յարակիների այդ ահավոր ամբարտակներից հետո տեսարանը դարձյալ մեղմանում ու դաշտանում էր, իսկ խճուղու մի քանի կեռմաններ անցնելուց՝ հորիզոնը դարձյալ փակում էին նոր, կանանչ սարալանջեր, որոնք հետզհետե դեպի վեր բարձրանալով ձգվում, հասնում էին մինչև Ղըղըլի սարը։

Մի յերկու ժամ այսպես ճանապարհորդելուց և սարերը տեսարաններ անցնելուց հետո, մեր ուղևորներն հասան Թարաչայ կայարանը, որ գտնվում էր Դիլիջանի սարավանդը հանող բարձրության սառրոտում։

Վարովհետև կառապանը կեր պիտի տար այստեղ ձիերին, ուստի առաջարկեց ժպիհնա վայելել յուր ճաշը առանց շտապելու։

— Արևն ես սարին թեքելուց՝ կալատկեն կլծենք ու սարինով (հովով) Դիլի դյուս կգանք, — հայտարարեց նա խորհրդատու յնդանակով։

— Ինչու՞ այդքան ուշ, — հարցրեց Պետրոսը։

— Ուշ չի, աղա, երկան ճամպա չենք նկել. հայվաններն էլ խեղճ են. մի քիչ կարմ (կեր) կուտեն, մի քիչ էլ կդինջանան. հլե՛ թե կուտեն, մի քիչ էլ դու կդինջանաս, ննդուց յեղը կլծենք կդնանք։

Վարովհետև յերիտասարդը շտապելու վոչինչ չուներ, ուստի չհակառակվեց։ Պատվիրելով, վոր պաշարի կապոցը տանեն կայարան, (վորից ինքը իրրև մասնավոր կառքով յեկող, հետու յեր իջած), ինքն ևս յուր քայլերն ուղղեց դեպի այն մենավոր տունը՝ վոր հովանավոր պատշգամ և շուրջը ծառերի տակեր ուներով, որևի այդ տաք ժամանակը դեպ իրեն եր քաշում խոնջ ուղևորին։

Կայարանի վերակացուն ձեռքը լրագիր առած կարդում եր, յերբ կամաքայանը մոտեցավ սանդուխներին։

— Կարելի՞ յե մի քանի վայրկյան հանդստանալ այստեղ, — հարցրեց նա առևտրին։

— Ինչու՞ չե, համեցեք, — պատասխանեց վերակացուն մաքուր հայերենով։

— Ա՛խ, ներողություն, դուք ուրեմն հայ եք։

— Այո՛, պարոն, զտարյուն հայ, — պատասխանեց ժպտալով վերակացուն, վոր միջահասակ, բարեդեմ և քաղաքավարի երևույթին, բարեխառն բնավորությամբ մի անձն եր։

— Որվա այս ժամին, վորքան անհաճո յե բաց ճանապարհը, նույնքան հաճելի յե ձեր այս պատշգամը, ուր վոչ միայն հովանի, այլև հանդստանալու լավ բազմոց ունիք... Այս ասելով

Կամսարյանը մոտեցավ վերակացուին և ողջունելով նրան, նրան մոտիկ դրված, կաշեծածկ ու հնատարազ բազմոցի ծայրին։

— Հրամանքդ, յերևի Դիլիջան եք գնում, — հարցրեց վերակացուն, — մի կողմ դնելով լրագիրը։

— Կարծեմ, ավելի հեռու։

— Ավելի հեռու։

— Թվում է թե՝ այո։

— Ինչպես թե թվում է, դուք չեք վորոշած թե ձեր եք գնում։

— Համարյա թե՝ չեմ վորոշած։

— Հասկանում եմ, ուրեմն ճանապարհորդում եք, առանց վորոշ դիտավորության։

— Չե, վորոշ դիտավորություն ունիմ։

— Ներեցեք, վոր հետաքրքրվում եմ... յեթե վորոշ դիտավորություն ունիք, ուրեմն պետք է վոր դիտենաք թե ձեր և ինչի համար եք գնում։

— Հենց բանն էլ այդ է, վոր ինչի համար գնալս դիտեմ, բայց ձեր գնալս չդիտեմ։

— Այդ հետաքրքրական է, — հարեց վերակացուն ծիծաղելով և բազմոցի մյուս ծայրին նստելով։

Այդ միջոցին տիրացու Մոսին բարձրացավ պատշգամը՝ բերելով յուր հետ պաշարի կապոցը և խորը գլուխ տալով վերակացուին, կանգնեց Կամսարյանի առաջ։

— Ոհո, տիրացու, դու էլ այստեղ, այդ վոնց է պատահել, — հարցրեց վերակացուն։

— Հա, յես էլ ըսաի յեմ, շնորհակալ եմ, աղան բերավ։

— Դե վոր յեկել ես, այ են սեղանը մոտ բեր, — հրամայեց վերակացուն։

Ծիրացուն ցույց տված սեղանը մոտեցնելով բազմոցին, բերած պաշարը դրեց վրան ու հեռացավ։

Կամսարյանը բացավ կապոցը և ունեցածը շարելով սեղանի վրա, խնդրեց վերակացուին մասնակցել յուր «համեստ» ճաշին։

— Շնորհակալ եմ, արդեն ճաշել եմ, — առարկեց վերակացուն։

— Ներում եմ, վորքան կարող եք. կամ դռնե մի բաժակ գինի... — այս ասելով, Կամսարյանը հանեց բաժակը և սրբելով այն, լցրեց գինով և դրեց վերակացուի առաջ։

Վերջինս, վոր կայարանում ապրելով, սովորած եր անխտիր ամեն ուղևորի ճաշին ու ընթրիքին մասնակցելու, յերկար չընդդիմացավ և, կամենալով, ինչպես ասում եր, յուր հյուրիախորժակը բանալ, վայելեց մի կտոր բան և գինու բաժակին զգուշությամբ կիսելով, վերսկսեց ընդհատված խոսակցությունը։

— Հա, այն եյի ասում, ձեր պատասխանն ինձ չափազանց հետաքրքրեց... այդ ինչպես և, վոր դուք վորոշ դիտավորությամբ գնում եք մի տեղ, բայց չգիտեք թե ու՞ր եք գնում։

— Իսկապես դիտեմ թե ու՞ր եմ գնում, վորովհետև գնում եմ մի վորևե հայ գյուղ, բայց թե վո՞ր գյուղ, ահա այդ մեկը չգիտեմ։

— Ներեցեք, խնդրում եմ, դարձյալ չեմ հասկանում։

Կամսարյանը ծիծաղեց և ապա սկսավ համառոտ կերպով բացատրել թե ինչ և յուր դիտավորությունը։

Վերակացուն, վոր նորեն ձեռքն եր առել բաժակը, վորպեսզի դինու ուշացրած վայրկեն, յերիտասարդի բացատրությունը լսելուց՝ իսկույն վայր դրեց այն և բազուկները դեպի վեր պարզելով՝ բացականչեց.

— Փառք քեզ, աստված, վերջապես գտնվեց մեկը, վոր մեր տրտունջը լսեց...— ապա դառնալով Կամսարյանին, ավելացրեց.— Դուք, ուրեմն միակ մեծ մարդն եք մինչև որս իրենց ուսումն ավարտած հայ յերիտասարդների մեջ։ Թույլ տվեք խմել ձեր պատվական կենացը։

Այս ասելով, նա լցրեց բաժակը և մի առանձին վոգևորությամբ պարպեց այն մինչվագ։

Կամսարյանին դյուր յեկավ վերակացուի գովասանքը, բայց կամենալով սրա ձի լինելն իմանալ, վորպեսզի ըստ այնմ վորոշե յուր ստացած գովասանքի արժեքը, նա հարցրեց.

— Դուք ել ուրեմն պատկանում եք ուսանողների դեմ տրտնջող հայերի թվին։

— Հապա։

— Ձեյի կարծիլ, թե այդ տրտունջը կարտահայտվի, նաև այսպիսի մի հետ ընկած կայարանում։

Վերակացուի դեմքի վրա դառը ժպիտ խաղաց։

— Ինչու՞ չեյիք կարծիլ, մթթե այսպիսի տեղերում ապրող հայ մարդը սիրտ ու զգացմունք չի՞ ունենալ։

— Վա՛յ, այդ չեյի ուզում ասել... շփոթվեց Կամսարյանը։

— Հասկանում եմ, ուզում եյիք ասել թե, այս յետ ընկած կայարանում, այս անմաքրությանց դեղերի կողքին, ձիանների ընկերության մեջ ապրող հայ մարդը, ինչու՞ պետք և տեղյակ լինի մեր ցավերին այնքան, վոր նույնիսկ տրտունջ հայտնե այդ ցավերին դարման տանել կարող, բայց չկամեցող յերիտասարդների դեմ։

— Այո՛, համարյա, այդ եյի ուզում ասել։

— Բայց յես, բարեկամ, ամենից ավելի իրավունք ունեմ տրտնջալու, վորովհետև հենց ինքս, մինն եմ յեղել այն մարդ-

կանցից, վորոնք սիրով նվիրվել են հայ շինականին, կամենալով սովորեցնել նրան խելքուբյան դեմ կռվելու և մարդավայել կերպով աղբելու յեղանակը... բայց իմ ունեցած կարողուբյունը հավասար չեր իմ ցանկուբյան, ուստի չհաջողեցա հասնել նպատակիս։

— Ինչպես, վող եր հարկավոր և չունեյիք։

— Վոչ, յես վարժապետ եյի դյուղում և հենց այդ պաշտոնի շնորհիվ ել մատ լինելով դյուղացուն, կարողանում եյի ազնել նրան յուր կարիքների ժամանակ, յերբեմն խորհրդով, յերբեմն գործակցուբյամբ, և յեթե յերկար ճնայի այնտեղ, դուցե կարողանայի վորոշ ազդա տալ։ Գոնե կկրթեյի մի ամբողջ սերունդ այնպես, ինչպես վոր պետք եր և այնուհետև այդ սերունդը ինքը կշարունակեր իմ գործը...

— Եհ, լավ, ինչու յերկար չմնացիք։

— Վորովհետև չեյի կարող։

— Պատճառը։

— Մեր ուսումնարանական կյանքում նոր փոփոխուբյուններ յեղան, նոր որենքներ հրատարակվեցան։ Վարժապետը պետք է ցենզ ունենար, իսկ յես չունեյի, վորովհետև թեմական դպրոցն եյի ավարտել։ Այդ պատճառով, ահա, ինձ պաշտոնից արձակեցին։

— Ցավ հետո։

— Հետո շատ դես ու դեն ընկնելից վերջը յեկա և այս կայարանում չորքոտանիների վարժապետ դարձա։

— Հասկանում եմ...

— Ուրախ եմ, վոր հասկանում եք. ուրեմն և իրավունք եք տալիս ինձ արտոնյալ այն յերիտասարդների դեմ, վորոնք բարձր կրթուբյուն ստանալով, կարողուբյուն են ձեռք բերում ժողովրդին ամեն կերպ ծառայելու, և սակայն այդ ծառայուբյունից վխխչում են վատաբար։

— Անշուշտ։

— Դեհ, հենց այդ իրավունքի հիման վրա յես ձեզ մեծ մարդ եմ անվանում, վորովհետև քաշուբյուն եք ունեցել կյանքն արհամարհելով, այդպիսի վտեմ նպատակի նվիրվել ձեզ։

— Շնորհակալ եմ, դուք ինձ քաջալերում եք. բայց յես դեռ վոչինչ չեմ արել, դեռ նոր եմ վորոշում անել։

— Այդքանն ել բավական է. գործի սկիզբը՝ գործի կեսն է։ Կամենալը՝ կարենալ է։

Կամարյանը, վոր մեծ հաճուբյամբ եր լսում այս խոսքերը, հանկարծ պահանջ զգաց վերակացուի բաժակը նորեն լցնելու և պաշարի ընտիր մասերից մի քանի նոր կտոր նրա առաջը դնելու։

— Նեղութիւն մի կրեք, յես շատ ուռուղներից չեմ,— ասաց վերակացուն և, միևնոյն ժամանակ, տապակած հավի մի չաղ կտոր աղ ու պղպեղով համեմելով՝ փաթաթեց լոշի մեջ, ախորժակով վայելեց, ապա լցված բաժակը մինչև վերջը դատարկելով, շարունակեց.— Ճիշտն ասած՝ զնգնցիկ ու բախտավոր միտք եք հղացել. ապրիք, յեղբայր, ապրիք։ Այդ որինակն, անշուշտ, շատերին կրերի ձեր յետևից... Բայց ասում եք, վոր դեռ չեք վորոշել թե՝ վոր գյուղում պիտի հաստատվիք։

— Այո, չեմ վորոշել։

— Բայց վատ միտք չէ այն վոր, ասում եք թե՝ կկամենայիք իմնել առաջին պատահած գյուղում։

— Ճշմարիտ։

— Այո, ինչ հարկ կա խորութիւն դնել գյուղերի մեջ. դրանցից ամեն մեկում ապրում են մեր յեղբայրներն ու քույրերը։ Ահա հենց բախտի բերմունքով ձեր ճանապարհի վրա գտնվող առաջին հայ գյուղը ամենից ավելի կարոտ է ձեր խնամքին։

— Վաքն և այդ գյուղը։

— Ջիրուխլուն, մեր հին ծանոթիկը։

— Այո, նրա մասին լսեցի յես տիրացուից։

— Գնաք և տեսնեք, յեղբայր, թե վիրքան բան կա այդպիսի մի խեղճ գյուղում անելու։ Հավատացած եմ, վոր շատ պիտի հուզվիք ու վշտանաք տեսնելով այնտեղ ձեր ազգակիցների դրութիւնը և միևնոյն ժամանակ հիշելով անտարբերութիւնն այն մարդկանց, վորոնք կարող էին ոգնել գյուղացուն յուր վիճակը բարվոքելու, բայց չարին, վորովհետև չկամեցան։

— Կարծում եմ, վոր այդ ամենը պիտի ցավեցնեն ինձ։

— Ցավ, միևնույն ժամանակ, վհուկրեն ու սուիպե գործել։

— Անշուշտ։

— Ցավ յերևակայեցեք թե՝ վորպիսի քաղցր յերանութիւն պիտի զգաք մի որ, յերբ ձեր աչքով տեսնեք այն ամենը, ինչ վոր ասել եք, յերբ տեսնեք ամային ձեր ձեռքով շենացած, ավերակը վերականգնած, խնդութիւնը խնամված, տգիտութիւնն ու նրանից հառաջացող չարիքները գյուղից հալածական... յերբ տեսնեք թե Քշլաո մի ժողովրդի մատաղ սերունդը ուսուցել ու կրթել եք այնքան, վոր նա այժմ կարողանում է սեփական աշխատութիւնով յուր վիճակը բարվոքել, յուր կանքն ու քրտինքը արդյունավոր գործադրել։

Այս յեղանակով յերկար խոսելով վերակացուն, այնպես եր քաջալերել ու վոգևորել Համասրյանին, վոր յերբ Մոսին յեկավ հայտնելու, թե կառքն արդեն լծված պատրաստ է, նա վեր թռավ

տեղից իսկույն և, կարծես, շտապելով, որ ժամ առաջ հասնի որոշված գյուղը և սկիզբ դնի յուր անունը վաստավորող մեծ գործինն, հարցրեց տիրացուին.

— Գիտեա՞ս, բարեկամ, որ ձեր գյուղն եմ գալիս։

— Չե, աղա, գիտում չեմ, — պատասխանեց տիրացուն։

— Այդ, գալիս եմ ձեր գյուղը և, գուցե՞ այնտեղ էլ ապրեմ։

— Վա՜ ե՜, — զարմացավ տիրացուն։

— Ի՞նչ վա ե՜, գյուղում ապրել չի՞ լինիլ. մեջ մտավ վերա-կացուն։

— Ա՛խ չի լսիլ, հրեն աշխարքի կեսը գեղումը չի ապրում. ամա դե, ասըմեմ, աղան քաղաքի սովոր մարդ ա, գեղումը վոնց կարա ապրիլ։

— Կարող եմ, ինչի՞ չեմ կարող, — հաստատեց Կամսարյանը։

— Դե որ կարող ես, էն ա լավ կլի էլի՛... միան ամեն չըլի հարցնիլը, խի չես ուզում գեղումն ապրիլ։

— Նրա համար, որ կարողանա ձեզ ոչնչել, ձեզ բախտավորաց-նել, — բացատրեց վերակացուն։

Տիրացուն թեպետ այս բացատրությունից էլ բան չհասկա-ցավ, բայց կամենալով մի քաղաքավարի խոսք ասել, ըբարով ա գալի, հազար բարով, ասաված Թող որթի խորհուրդը կատարի» ասաց ու հեռացավ։

— Ա՛ըդ մարդիկ... չեն ուզում հավատալ թե կզտնվին աշ-խարհում անձինք, որոնք յերբևիցե կհետաքրքրվին իրենց կյան-քի դառնություններով և կկամենան ոչնչել իրենց՝ առանց շահա-խնդրության, — ասաց Կամսարյանը զրեթե հուզված։

— Ճիվ իրավունք ունին, որ ովքեր կեղեքիչներից ու վաշ-խառուններից զատ, դեռ մինչև այսօր չեն տեսել վոչ վոքին իրենցմով հետաքրքրվելիս, — նկատեց վերակացուն։

— Վոր այդպես ե, մենք կփոխենք դրանց համոզումը և կստիպենք հավատալ, վոր չարերից զատ, կան աշխարհում նաև կարեկից մարդիկ։

— Գնացեք և համոզեցեք, ասաված Թող որհնե ձեր ճանա-պարհը, — ասաց վերակացուն և սեղմելով յերիտասարդի ձեռքը, ճանապարհ դրավ նրան մինչև կառքը։

Մի քանի վայրկենից Ովանեսի ձիերը Թռցնում էին Կամսար-յանին դեպի Դիլիջանի բարձրությունները։

Ը

Արևը մայր մտնելու մոտ՝ մեր ուղևորները հասան ամարա-նոցի հռչակ վայելող Դիլիջան ավանը։

Այստեղ Կամսարյանը, Ովանեսի ցուցմունքով, հյուրանոցի անուն կրող մի տան մեջ գիշերային հանդստարան պատրաստելուց հետո, յելավ փոքրիկ ավանը դիտելու։ Փոշոտ խճուղու աջ ու ձախ կողմերում կառուցած յերկու կարգ քարաշեն տները, վորոնք ավանի ամբողջությունն էին կազմում և վորոնց մեջ ապրում էին ամարանոց յեկողները, հաճելի տպավորություն չարին Կամսարյանի վրա։ Նա խնդույն հիշեց Բորժոմը յուր դեղեցիկ վիլլաներով, մաքուր փողոցներով, ընդարձակ պարկերով, ջրերի առատությամբ և առավել ևս բնակիչների փայլուն արտաքինով ու դրավիչ նիստ ու կացով և յեկավ այն համոզման, վոր Դիլիջանը միայն հասարակ մահկանացուների համար կարող է ամարանոց համարվիլ։

Բայց յերբ խճուղին յերկուստեք փակող շինություններից հեռանալով, բարձրացավ դեպի ավանի ձախակողմը, նրա առաջ բացվեցավ մի դեղանկար հորիզոն, վոր ամփոփում էր յուր մեջ Ագռաևի ձորահովիտը՝ յուր կարկաչահոս գետակով, դալար արոտներով, վոսկեփայլ արտերով, իսկ մի փոքր հեռվում, խաղաղ նիստ դյուղի միաշար տնակներով և նրանց առջև կարգով տարածվող կանաչազարդ բանջարանոցներով։ Ցուրը կանդ առած տեղից քիչ հեռու սկսվում էր յեղևնիների խիտ անտառ, վոր դնալով տարածվում էր դեպի հեռավոր լեռների կատարները, վորոնց այդ վայրկենին վոսկեզոծել էին արևի վերջին շողերը։ Ձորահովիտը յեղերող դիմացի բլուրներից, վորոնց յուրաքանչյուրը շուռտով պիտի թաքչեր արևը, փչում էր սեխորժ զեփյուռ՝ բերելով յուր հետ կենարար մի ղով, տոգորված լեռնային ողի, դալարի և ծաղիկների անուշ բուրմունքով։

Կամսարյանը սկսավ լիքը կրծքով շնչել լեռնային թարմ ողը և ինքն իրեն խոստովանել, վոր փոքր առաջ արած յուր համեմատաբար մեծ սխալ և գործել՝ Բորժոմը դերադասելով Դիլիջանից։ Վորովհետև նա այժմ տեսնում էր, վոր յերեք առաջինում արհեստականն և փարթամ, վերջինում, ընդհակառակը, գերազանց և բնականը։ Ցեվ այդ կարծիքի վրա նա հաստատվեց ավելի, յերբ լեռնալանջից իջնելով, մտավ նորեն ավանը և փոստային կայարանի առաջ բղխող հորդ ու սառն աղբյուրից յուր ծարավը հագեցրեց։ Այդպիսի անուշ ու բարեհամ ջուր Բորժոմն, ի հարկե, չեր տեսած յուր որում, ինչպես և նրա նեղ, կարծես պատնիշափակ, ցերեկը տոթով, իսկ գիշերը խոնավությամբ լի խորաձորը չեր շնչել յերբեք այն թեթև ու անուշ սողոսն ու հովերը, վորոնք գիշեր ու ցերեկ դուրդուրում էին Դիլիջանի առույգ լեռնալանջերը։

Բայց արի, տես, վոր հենց այս անմահական աղբյուրից քիչ հեռու, փոստային կայարանի և մատնավոր տների դնդի ձորահովիտը հանող բակերում, բլուրի պես դիղված հին տարիների ընթացքում հավաքված աղբն ու անմաքրությունը, վորոնց գարշահոտությունը ապականում եր ամբարանոցի շրջակա ոդը և դրա վրա վոչ վոք ուշադրություն չեր դարձնում։

— Ահա, թե վիրտեղ և հարկավոր մեր միջամտությունն ու ազդեցությունը... բնությունը գարդարել և մեր յերկիրը յուր լավագույն հարստությամբ, յուր քնքույշ դեղեցկություններով և սակայն մարդկային անճաշակ ոգիտությունը այլանդակել և նրան անխղճորեն։ Ժամանակ է, արդարև, վոր մենք մտնենք ամեն անկյուն և ոգիտության բուները ավերենք ամեն տեղ... մտածեց կամսարյանը և յուր նվիրումը ավելի ևս կշիռ ստացավ յուր աչքում։

Հետևյալ առավոտ, դեռ արևը չծագած, կամսարյանը նստած եր Ոլանեսի կառքում, վոր հանդիստ սուրում եր «Ցերևանյանց» խճուղիով։ Վերջինս Դիլիջանի հարավ-արևմտյան կողմից սկսելով, անցնում եր Շամլուղ գետակի ուղղությամբ, Մայմեխ լեռան ստորոտը ծածկող անտառների միջով և ապա հետզհետե լեռան լանջերը բարձրանալով, պիտի հասներ մինչև նրա կատարը։ Արևը դեռ նոր եր Մայմեխի բարձունքը վառում, յերբ մեր ուղևորները անցնում էին նրա ստորոտով։ Առավոտյան զնգյունը, վոր հով եր բերում սարի լանջերից, մեղմով շարժում եր անտառի ծառերը։ Նրանց խուլ շրշյունը խառնվելով Շամլուխի քաղցր խոխոջի և թռչնիկների այլածին ճվողյունի հետ, կազմում եր հաճոյական մի ներդաշնակություն, վոր խանգարվում եր յերբեմն կառքի կոշտ դղրդյունով։

Ցերբ ուղղակիր ծմակներն անցնելուց հետո, սկսան դեպի լեռնալանջը բարձրանալ և Շամլուխը ծածկվելով անտառի խորքում, սկսավ յուր խոխոջի խուլ ձայնով ուղեկցել ճանապարհորդներին, տիրացու Մոսին, վոր դարձյալ նստած եր կառապանի կողքին, անհրաժեշտ համարեց հիշեցնել «ալին» յուր յերեկվա պիտողությունը։

— Մխոդ ա են, վոր ասում ի թե Դիլիջանա դեսի ճամպեն ավելի սիրուն ա, քանդ դնինքը։ Դե հմի մաիկ տես, տես, քսկի քու սրումը ըսենց տեղեր տեհել ես։

Կամսարյանը, վոր արդեն դրավված եր շրջապատող տեսարաններով, տիրացուի «դե հմի մաիկ տես» խոսքի վրա յետ նայեց և տեսավ, արդարև, մի նոր, ակնապարար տեսարան։ — Իրենք այդ միջոցին գտնվում էին վորոշ բարձրության վրա,

խոկ տափարակի ծմակները մնացել էին վար։ Բարձրից նայողը տեսնում էր միայն նրանց կատարները, որոնց կանաչը վառվել էր արևից յերփներանգ գույներով։ Այդ վառվող մակերևույթը նմանում էր նույն վայրկենին լայնածավալ մի ծովակի, որի հզհզոցուկ ալիքները փոխարինում էին ծառերի հովից շարժվող կատարները։ Այդ տեսարանը այնքան էր սիրուն ու գրավիչ, որ կամաթյանը տեղը փոխելով, նստեց դիմացի նստարանի վրա, որպեսզի կարողանա ավելի դյուրությամբ նայել ու զմայլվել գեղեցիկ հեռանկարով։

Ջնայելով վար խճուղին սարի լանջովն էր բարձրանում, այսուամենայնիվ, ծառերը հովանավորում էին նրան։ Մեծ մասամբ նա անցնում էր բնական ծառուղիների միջով, որոնց, յերբեմն, փոխարինում էին նաև ժայռերի շարքեր։ Իսկ դրանց, յուր հերթում, հովանավորում էին զարձյալ հինավուրց ծառեր, որոնք բուսած լինելով ժայռերի վերևում, այդտեղից իրենց սաղարթախիտ վոստերը ձգում, տարածում էին ճանապարհի վրա, որը հաճախ անցնում էր և՛ սիռավետ բարձունքներով, ուսկից տեսարանները բացվում էին ավելի շքեղ ու ընդարձակ։ Այսպիսի դիրքերից յերևում էին Մեղտան լեռան անտառապատ լանջերը և նրա մերկ, ծառազուրկ կատարը, որ, սակայն, զատած էր բաց կանաչ թավիշով։ Նրան հետևում էին ուրիշ շատ լեռներ, որոնք զագաթների բարձրությամբ մեկը մյուսին դերազանցելով, հորիզոնը դարձնում էին վեմ ու փառահեղ։

— Հրեն Սիսիանա սարերը, — բացականչեց հանկարծ տիրացուն, չժուժալով, կարծես, որ ուսուցիչական մարդը այդ վեհափառ տեսարանների առաջից անցնում էր լուռ ու մունջ։

— Վիրոնք են, — հարցրեց կամաթյանը, նստելով նախկին տեղը։

— Հրեն, այ, են որ կատարնին մշուշակալած՝ լեյի թե (կարծես) լաղ են անում (ծաղրում են) մնացած սարերի վրա. տենում չե՞ս։

Այս խոսքերով ցույց տվավ տիրացուն Սյունյաց աշխարհի կապուտակ լեռները, որոնց կատարները, կարծես, ծրարվում էին ամպերի մեջ։

Կամաթյանը դիտում էր լեռներով ծածկված այդ հորիզոնը խորին հիացմունքով։

— Ինչ վախտից կեղը ես ա հավատրել տենք նրանց, չուն ես ճանապարհը բանդրանում ա Մայմեխը վեր տանըհինդ վերստ, — ավելացրեց տիրացուն։

Բայց նրա գինչ վախտը» շատ էլ շուտ չանցավ, անթիվ կեռմաններով վերելքը տևեց մոտ յերկու ժամ։

Ճեվ սակայն Մայմեխի ամենաբարձր լանջերին հասնելուց, արդարև, ուղևորներին թվում էր թե իրենք հավասարվել են Սյունյայց լեռների բարձրությանն։

— Տեսնում ես, աղա, հրես հավասարվեցինք։ Բա էլ Սիսիանը խի՞ա լաղ անում մեր Մայմեխի վրա, — զվարճախոսեց ուիրացուն։

— Չենք հավասարվել, քեզ այդպես է թվում, — պատասխանեց ղամաբյանը։

— Վիճեց թե հավասարվել չենք. հրես քիխս թուշովը (ուղղությամբ), վոր մոիկ եմ տալի, ասես, իմ գլուխն ու Սիսիանա գլուխը մի չվանի յեն դրած։

— Այդպես կերևա միշտ հեռվից, բայց յերե անցնես քո և դիմացի սարի մեջտեղը գտնվող տարածությունը, կտեսնես, վոր սարը հետզհետե բարձրանում է, — բացատրեց յերիտասարդը։

— Դհե (այդպես) բան էլ կա։

— Հապա։

— Բա եդ խի՞ դհենց ա ըլում, — հետաքրքրվեց ուիրացուն։

— Նրա համար, վոր յերկիրը կլոր է և այդ պատճառով էլ քանի սարը հեռու յի լինում, այնքան էլ նա փոքր է յերևում, վորովհետև հեռվից մենք տեսնում ենք միայն նրա վերին մասը։ Իսկ հետո վորքան մոտենում ենք, այնքան նա մեծանում է, վորովհետև հետզհետե տեսնում ենք նաև միջի և ապա վարի մասերը։

Տիրացուն այդ բացատրությունից վոչինչ չհասկացավ, բայց յերկրի կլոր լինելովը հետաքրքրվեց։

— Ասում ես յերկիրը կլոր ա։

— Հա։

— Ծանի (այսինքն) վիճեց ա կլոր, տափակ թաբախի (խան) նմանն, թի՞ կլոր ձմերուկի։

— Կոլոր ձմերուկի։

— Բա եդ վիճեց կըլի, — զարմացավ ուիրացուն։

— Այդպես է, — կրկնեց ղամաբյանը։

— Ա՛ խի՞, գիտեմ չես, վոր դհենց ա, — մեջ մտավ Ովանեսը։

Վերջինի միջամտությունը գրգռեց ուիրացուին։

— Սրան մոիկ տուր, լեյի ինքը գիտում ա, — նկատեց նա խեթ խեթ նայելով կառապանին։

— Բա գիտում չեմ, — վստահորեն հարցրեց Ովանեսը։

— Դե վոր գիտում ես, ասա տեսնեմ վիճեց ա կլոր։

— Հրեն աղան ասեց ըլի, ձմերուկի նման կլոր ա։

— Ա, շատ, ձմերուկի նման, վոր կլոր ըլի, բա թող չի՞ լիլ (չի՞ գլորվիլ) ծոլն ընկնի՞լ։

— Ցնս իմ... տարակուսանք Ովհաննսը, տեսնելով վոր նեղ տեղը լծվնցավ։

Կամսարյանը ծիծաղեց։

— Ախ յես ծիծաղում, աղա, սուտ եմ ասում, — դարձավ նրան տիրացուն։

— Ա՛յ տղա, դու կարող ես քո բերանի կամ աչքի մեջը ընկնել,— հարցրեց Պետրոսը։

— Բա վոնց կարամ ընկնել իմ բերանը։

— Հապա ծովերն ել դանվում են յերկրի վրա, յերկիրն ինչպես կարող է նրանց մեջն ընկնել։

— Յերկրի վրա ծովեր կան, պիտում եմ, հրես մինեն ել մեր առաջին, Սևանա ծովն ա, ամա դե յես եղ ծովերը չեմ ասում։

— Հապա վոնը։

— Աբմեն, աշխարհը վոր վերջանում ա, դենը շատ մենծ, անտակ ծով կա, վոր ըսկի ճանդ չունի (ծայր)։ Համի վոր ասում ես՝ աշխարհը կլոր ա, յես ել ասում եմ՝ բա խի չի թոլ ըլում եղ ծովը ընկնում։

Կամսարյանը նորեն ծիծաղեց և ապա տեսնելով, վոր տիրացուն տարակուսած նայում է իրեն, սկսեց մի քանի համառոտ տեղեկություններ տալ նրան յերկրի, լուսնի ու արևի կազմության և նրանց շարժումների մասին։

Մասին ուշադրությամբ լսում եր նրան և յերբեմն յերբեմն գլուխը շարժելով ասում.

— Հլե տես ինչքեր ա ըլել աշխարում ես... փառքդ շատ ըլի, ասածդ-չանի, բա ես խի մեզ ըսենց հայվան ես սեղծել։

— Ա՛ Մոս, յես ընենց եմ 'մացել թե դու եղ բաները չիմ (բոլորը) դիդում ես. բա ել ընչի վարժապետ ես, վոր բան չես 'մանում, — նկատեց կառապանը չարախնդությամբ։

— Ա, յես վիրդիան 'մանամ, յես հու խալխ (իսկական) վարժապետ չեմ, — խոստովանեց տիրացուն յուր տկարությունը։

— Բա խի յես ըսենց կարդացնում։

— Ընդուր վոր կարդացրածս իմանում եմ։

— Ի՞նչ ես կարդացնում, — հետաքրքրվեց Կամսարյանը։

— Ի՛նչ վոր ձեռք ա տալիս։

— Որինակ։

— Որինակ, Սաղմոս, Պարզև-Մանկանց, Մայրենի լեզու, Ավետարան, Ցեսերեմ-խոսրի...

— Առաջ վոնն ես կարդացնում։

— Առաջ «Այբ-բենի» տեսրը, յեղուց ով ինչ դիր բերում ա, նրանից ել սկսում եմ։

— Ինչպես, ամեն մեկը մի ջոկ դրքի վրա չե կարդում։

— Բա՝

— Ինչու ամենքին մի տեսակ դրքի վրա չես կարդացնում։

— Եղ վիճակ կըլի։ Ընենց մարդ կա, վոր տանը Սաղմոս ունի, ընենց մարդ էլ կա, վոր Պարզե-Մանկանց ունի, չա չէ, Ավետարան, չա Մայրենի լեզու. բերում ա հու տալիս. վարժապետ, քե մատաղ, բեզնին ես դիրը կարդացրու, հաղիր տանն ունենք, մին էլ վեր չկենամ գնամ Դիլի, չա Բևան, նոր մեկելանց դիր առնեմ. աղքատ մարդ եմ, կարա չեմ դրի փող տալ... Ցես էլ վեր եմ ունում են դիրը կարդացնում։

— Հապա քո աշակերտները վոչինչ չեն հարցնում քեղ յերկրի, ծովերի կամ այլ այդ տեսակ բաների մասին։

— Պատահում ա, վոր հարցնում են։

— Եհ, դու ինչ ես պատասխանում։

— Ինչ վոր 'մանում եմ։

— Իսկ դու բան չես իմանում։

— Դե չիմացած վախտն էլ տոդաշարով (քանոնով) գլխին տալիս եմ հու ասում. ջահել կըրի, դասդ սովրի, եղ քու ինչ 'մանալու բանն ա, վոր հարցնում ես. են ա խեղճն էլ գլուխը քաշ ա գցում, դիրը կարդում։

— Այ, քու հերը լիս դառնա, ասիլ վարժապետը դու չես, վոր կաս, — նկատեց Ովանեսը ծիծաղելով։

Բայց այս անգամ արդեն Կամսարյանը չծիծաղեց, նա սկսավ մտածել լսածների մասին և տեսավ, վոր դրանք շատ ցավալի չեն։ Այս առթիվ, դուցե, նա, մինչև անգամ, տխրեր, յեթե մի փոքր ավելի խորասուզվեր յուր մտածմունքների մեջ, յեթե խորհեր այն մասին, թե ինչ թշվառ դրության մեջ պիտի գտնվի մի ժողովուրդ, վորի առաջավոր մարդը — տիրացուն, կամ վարժապետը խարխափում է այս աստիճան տգիտության մեջ։ Բայց տեսարաններն հանկարծական փոփոխությունը նորեն գրավեց նրա ուշադրությունը։ Ովանեսի կառքը քերում էր այժմ Մայմեխի կառաջը և հին Գուզարաց սահմանն անցնելով, մտնում Սյունյաց գավառամասը։ Այստեղ արդեն հետզհետե նվազում էին անտառները և սպառում մացառուտը, իսկ դրանց փոխարինում էին սիզավետ լեռնադաշտեր և դեղեցիկ մարմանդներ, ուր խառը դուռնավորված յերփներանգ ծաղիկներով, ծածանում էր կանդիսակափ բարձրության։ Ձեռնային հովերը խաղում էին այդ դալարազարմ մարգերում քաղցր ու մեղմաշունչ. իսկ արևի շողերը վառկեղծում կանաչը, վոչ թե նրանց ջերմացնելու, այլ փայլեցնելու չափով։ Ցերեսասարդը յուր սրտում չէր տեսած այդպիսի ճոխ

ծաղիկ ու կանաչ։ Նա հիացած նայում էր աշ ու ձախ և ինքն իրեն մտածում.

— «Ախտոս, ինչու՞ բնությունը այսպիսի բարձրության վրա չի հանել այս հրաշալի արտասները։ Մթին գիշերվա հոտերն ու նախիրը կարող են յերբեմնից ոգեվել ներանցիցս։ Բայց հազիվ անցան մի քանի րոպեներ, և ահա նա տեսավ, որ հեռվում խոտը շարև շար հարել ու փռել են գնացին ցամաքեցնելու համար։

— «Ուրեմն այս բարձրության վրա յել մարդիկ են ապրում», — մտածեց նա և իսկույն հիշեց յուր աշխատասեր և ճակատի քրտինքով ապրող աղքատիկ ընկերներին։

Մի փոքր ել առաջանալով նա տեսավ խմբակներ մարդկանց ու կանանց, պատների և աղջկերանց, որոնցից վոմանք լեռնալանջերի վրա, մյուսները՝ լեռնահովտում, կամ ցամաքած խոռն հին հավաքում, կամ սայլերի վրա բարձում, իսկ ավելի փոքրիկները՝ խաղում ու վազվզում հին կանաչ արտասներում։

Ներխաստարդը հետաքրքրությամբ դիտում էր այդ շարժուն բազմությունը և աշխատում ծանոթանալ այդտեղի հայոց տիպերին։ Բայց վերջապես մեծ յեղավ նրա զարմանքը, յերբ տերացուն բացատրեց, որ դրանք հայեր չեն, այլ մալականներ — Սիմյոնովկա գյուղից։

Իրավ և, Գևորսոր գիտեր, որ Սիմյոնովկան առաջիկա կայարանն է և Սյունեաց սահմանակից այդ սարերի վրա կարելի յեր յերևակայել մի փոստային կայարան, բայց մալականի մի բազմամարդ գյուղ նա չէր սպասում տեսնել։ Ցավ ինչ հրաշալի հովիտներ, մարդեր ու մարմանդներ հին շրջապատում այդ գյուղացիներին. ինչ շքեղ արտասներ, ինչ հարդառատ աղբյուրներ, որոնց մասին պատմում էին Մոսին ու Ովանեսը։ Դա, արդարև, մի լեռնային դրախտ էր։

Ներխնդրանք հասան կայարանին, կամաթյանը հանձնելով սկսավ դիտել ավանը, որ աչքի յեր ընկնում յուր լայնադիր փողոցով և նրա ուղղությամբ շինված կոկիկ, մաքուր ու սպիտակ տնակներով։ Դրանցից շատերի առաջ դանվում էին փոքրիկ ծաղկոցներ, ուր նարգիսի ու նարնջածաղկի հետ միասին փթթում էր մայիսյան վարդ, թեպետ հունիսը վերջանալու վրա յեր։ Տներից քիչ հեռու ձգվում էին բանջարանոցներ, կազամբի և գետնախնձորի ցանքեր ու արևածաղկի ընդարձակ ածուներ։ Ավելի հեռուն տարածվում էին գյուղացիների հարուստ արտերը։ Ավանի բնակիչները շրջապատող բնության նման ուրախ, զվարթ և կենդանությամբ լի մարդիկ յերևացին։ Կամաթյանը սիրով պատասխանեց նրանցից մի քանիսի քաղաքավար վողջույնին և սիրով

եւ կխոսեր նրանց հետ, յետեւ Ովանեսն յուր ձիերի շնորհքը մալականներին ցույց տալու նպատակով, չթողներ նրանց գյուղի միջով, ինչպես արագաթեւ թռչուններին։

Ցեւ վրովհետեւ Պետրոսը փափագում եր Սևանը վայրկյան առաջ տեսնել, ուստի Ովանեսի յեռանդը չուղեց չափավորել։ Նա գոհ յեղավ Սիմյոնովկայի վրա մի վերջին հայացք ձգելով և ինքն իրեն մտածելով՝ «յետեւ սա յե գյուղ կոչվածը, ապա ուրեմն, կարելի յե թե ապրել և թե գործել սրա մեջ»։

Սիմյոնովկայից ճանապարհը սկսում եր փոքր ինչ ցածրանալ, իսկ բնության շքեղություններըը նվազում եյին։ Մի քանի կանգնակոտ բլրակներ անցնելուց հետո, յերևացին Զիբուխլուի աղքատիկ ցանքերը՝ հարուստ սևահողի վրա։ Դամասբյանը հենց նոր սկսել եր դիտել նրանց և զարմանալ այս տարօրինակ հակադրության վրա, յերբ մի նոր ու շքեղ տեսարան դրավեց նրա ուշադրությունը։ Նրա աչքերի առաջ բացվեցավ հանկարծ մի բացկապուտակ դաշտ, վորին նա սկզբում հորիզոնը փակող մշուշ կարծեց։ Սակայն տիրացուի «ահա ծովը» բացականչությունը սթափեցրեց նրան։ Նա, ուրեմն, հասել եր Հայաստանի բնության հրաշալիքներից մինին — պատմական Գեղամա ծովակին։ Ցեւ յետե սկզբում չկարողացավ դուշակել, թե յուր տեսածը, իրոք, Սևանն և, նա իրավունք ուներ, վորովհետեւ հեշտ չեր հավատալ, թե լեռների այդ բարձրության վրա կարող և գտնվիլ այսքան ընդարձակ մի լիճ, վորին, իրավմամբ, ծովակ անուն են տվել։ Իրավ և, Գեհարոսը աշխարհագրությունից դիտեր, վոր Անոյան լեռները, Ալպյան ու Զվիցարական բարձրավանդակները շատ այդպիսի դեղեցկություններ ունին, այսուամենայնիվ, նման շքեղություն յուր հայրենիքին հատկացնելը չափազանցություն կհամարեր։ Բայց այժմ, ահա, նա տեսնում և Սևանը յուր առաջ փռված, տարածված 6—7000 վոտք բարձրություն ունեցող լեռների վրա։ Ցեւ ինչպես չհրճվեր, ինչպես յուր հայացքը չհափշտակվեր նրանով... Դամասբյանը բարձրացավ յուր նստարանից և կառքի մեջ կանգնելով, սկսավ դիտել ծովակի սիրուն մակերևույթը, վորի կապուտակը շարունակ փոխվում եր՝ առնելով յերբեմն պարզ փիրուզի, իսկ յերբեմն գորշ մշուշի գույն, նայելով թե կառքն ինչ ուղղությամբ եր ընթանում։ Այսպես բավական տեղ նա կանգնած եր կառքում, մինչև վոր վերջին սկսավ մոտենալ Զիբուխլուին։ Այստեղից ել ծովակը թվում եր անշարժ և միապաղաղ։ Միայն նրա ալյծառ հայելու վրա նշմարվում եյին հետզհետե բացկապատուցն ժայռավեհներ, վորոնք հատնուտի սահմաններն եյին ակոսում։ Շուտով յերևաց և Սևանի կղզին, վորի

անոքը հնոլից թեղևա չոր ու ցամաք, այսուամենայնիվ, կամաորյանին հետաքրքրից հուզելու չափ, վորովհետև անցյալից հիշեցնց նրան դեպքեր, վորոնք կապ ունեյին Սևան անվան հետ և վորոնց մասին նա մտածել եր հաճախ։

Մինչդեռ յերիտասարդը սրտահույզ դիտում եր կղզյակին ու ծովը և նրանց շրջապատող լեռների տեսարանը, Ովանեսը կանչնեցրեց կառքը և հարցրեց.

— Ա՛ղա, վոր դի՛տես վեր գալ (իջնել)։

— Ինչպես թե վեր գալ,— զարմացավ կամաորյանը։

— Բա ըստի չե՞ս ճալու։

— Այստեղ ինչո՞ւ ճամ, Չիբուխլու պիտի գնանք։

— Սրանն լավ Չիբուխլու կըլի՛,— նկատեց կառապանը ծիծաղելով։

— Վո՞րը, սա՞,— հարցրեց կամաորյանը զարմացմամբ շուրջը նայելով։

— Հա՛, ապա՛, սա յե՛ մեր գեղը.— հաստատեց տիրացուն՝ ինքնագոհ ժպտալով։

Կամաորյանը հանկարծակի յեկածի նման մի վայրկյան ճաց անխոս, ապա նորեն սկսավ յուր շուրջը նայել, տեսնելու համար այն, ինչ վոր պյուղացին «գյուղ» եր անվանում։

Տեղն, ուր կանգ եր առել կառքը, շինամիջով անցնող խճուղին եր, վոր դեպի ստորոտույն ժապավենի նման ակոսում եր պյուղամիջի սևահողը։ Թվում եր, թե՝ դա միակ մաքուր տեղն և այն բոլոր տարածության վրա, վոր պյուղի շրջապիծն ամփոփում եր յուր մեջ։ Վանդի, մյուս բոլոր տեղերում, դետինը ծածկված եր աղբի շերտերով և աթարի (քակոր) փշուրներով, վորոնցից նա խանձվել, սև գույն եր առել։ Այդ ընդարձակ աղբյուսի վրա՝ փողոցների ոտնաբեմն, ընկած եյին ինչ վոր ծուռ ու մուռ անցքեր, իսկ դրանց յերկու կողմերում ցրված եյին անկարգ ու շեղ ուղղությամբ թմբաձև, հողածածկ բարձրություններ, վորոնց մի կողմերը կպած չինելով դետնին, մյուսները բարձրանում եյին խանձաքարերով շինված ցածուն պատերի վրա։ Դրանք պյուղացիների անասնակերն եյին, վորոնք սակայն չեյին նմանում մարդկային բնակարաններին։ Վորովհետև մեծ մասամբ դուրկ եյին պատուհաններից, իսկ յելումուտի համար ունեյին մի մի հատ նեղ, ցածուն դռնակներ, վորոնցից անցնելու համար պետք եր անշուշտ կորանալ։ Լուսան այդ անասնակերը ստանում եյին յերդիկներից, վորոնցից ամեն կուռքի վրա դռնվում եր մի հատ։ Այդ տուն համարվող խորշներից վոչ մեկի ատաջ չեր յերևում կանաչի նշույլ։ Իսկ պյուղի ամբողջ տարածության վրա չկար մի հատ ծառ և վոչ իսկ մի թուփ

Դրանց փոխարեն աչքի էյին ընկնում զարշահոտ քակորի բլրակները, վորոնցից ամեն առուն ուներ մի, կամ յերկու հատ՝ փառքով բաղմեցրած սեփական բակում, կամ կողքին գտնվող ազատ դետնի վրա։

Գյուղի ընդհանուր տեսարանը այնպիսի տխուր ու վհատեցուցիչ տպավորություն էր անում, վոր Կամսարյանը քիչ առաջ անցած Սիմյոնովկան սրա հետ համեմատելով չէր ուզում հավատալ թե ինքն իսկապես գտնվում է գյուղի մեջ, այն էլ Զիբուխլուի, վորի անունն այնքան անգամ լսել էր ճանապարհին։ Ուստի յուր տարակուսանքը փարատելու համար յերկրորդ անգամ հարցրեց թե՝ իրոք, սա յե Զիբուխլուն, թե վոչ։

— Սա ա, բա՝ Հրմն, չես տեսնում մեր Աստվածածինը. հին յեղյի ա, մի քիչ դեննն էլ մեր դերի (քահանայի) տունն ա. հրմն ինքն էլ մրոքը չալին տալեն ցան ա (աթար) դարսում։ Ես կուսինն էլ տանուտերինն ա։ Ըսոխան էլ մի քիչ վոր աշմիշ ըլնեք, շենի աղրյուրն ա, լավ ջուր ունի, շատ, Մարալինջի տակից ա գալիս։ Մի քիչ դեննն էլ Բալըղչայն ա։ Ծոքը էլ հու ամեն որ առաջին ա։ Մի խոսքով լավ գեղ ա. տեսնելու բաներ շատ ունի. հրեղ մեն կգաս կտեսնես։

Կամսարյանը լսում էր ուշադրությունն և աչքերը մեքենայաբար դարձնում դես ու դեն, առանց, սակայն, ուշադրություն դարձնելու Նրա ցույց տված տեղերի վրա։ Վերջապես այդ վայրկենին նրան զբաղեցնում էր այն միտքը թե՝ յերեթե, իրավ, ամի յե հայ գյուղացու բնակավայրը, ապա հաղիվ թե հնար լինի իրեն ապրել այդպիսի տեղ ու դործել։ Ճիվ սակայն, չնայելով այդ կանխահաս վհատությանն, նա վորոշեց մնալ այդ «գյուղ» կոչված ավերանոցը, դոնե, վորոշ չափով նրան ճանաչելու և ուսումնասիրելու համար։

Տիրացուի խորհրդով և Կամսարյանի համաձայնությամբ, Ովանեսը կառքը քշեց դեպի տանուտերի տունը։ Գյուղի շենքը, վորոնք սովոր էյին լուսթյամբ նայելու խճուղին անցնող ճանապարհորդներին, մեծ աղազակ բարձրացրին գյուղը մտնել համարձակող կառքի և ձիերի դեմ, համարելով այդ անսովոր մի բան։ Տիրացու Մոսին, իրրև ծանոթ անձն, յուր սաստող հրամաններն արձակեց շների դեմ, մի քանիսին, մինչև անգամ, հականե անվանե կանչելով։ Աղմկարարները կամաց-կամաց ցրվեցան և կառքը կանգ առավ տանուտերի տան առաջ։

Բ

— Աղջի, քյոխվեն տաննն ա,— հեղինակավոր ձայնով հարցրեց Մոսին՝ տարօրինակ հագուստներով և դլուխը փաթաթած մի կնոջ, վոր կանգնած եր բակում։

Վերջինս առանց ձայն հանելու ձեռքով հովանի արավ աչքերին, իրրև թե դիմքը ծածկել ուզելով, ապա յերեսը մի կողմը ծռած, շարժեց դլուխը բացասական կերպով, վոր կնշանակեր թե տանը չեն։

— Բա ձուր ա։

Կինը ձեռքի շարժումով ցույց տվավ դյուղի դուրսը, կամենալով հասկացնել, թե հանդումն են։ Բայց, միևնույն ժամանակ, դուշակելով վոր նորեկը, անշուշտ, հյուր պիտի լինի իրենց, մոտեցավ դռան առաջ խաղացող տղային և նրա բերանով խնդրեց, վոր «տաղանդ» շնորհ անե կառքից իջնելու, մինչև վոր ինքը մարդ կուղարկե ամուսնու յետևից։

Կամսարյանն իջավ։ Մսին ու Ովանեսը վար առին կառքից նրա իրեղենները։ Իսկ մինչև այդ, դեղձկուհին ներս վազեց տուն և բերելով այդտեղից մաքուր դորգ, փռեց սրահում դրված թախտի վրա։ Ապա Մսոու միջոցով խնդրելով հյուրին հանդստանալ, ինքն շտապեց հարևաններից մեկին յուր մարդու յետևից ուղարկելու։

Ներթատարդը մի վարկյան դյուղի՝ յուր վրա արած ապավոբությունը մոռանալով, սկսավ հետաքրքրվել նշանացի խոսող կնոջ անձնավորությամբ։ Նա նրան սկզբում համրի տեղ եր դրել։ Բայց հետո տեսնելով, վոր խոսում է տղայի և ապա Մսոու հետ, հարցրեց վերջինիս՝ այդ ինչպատակի պատճառը։

— Ջահիլ կնանիքը անխոս են ըլում ըստեղ, — պատասխանեց տիրացուն։

— Ի՞նչ և նշանակում անխոս լինելը։

— Նշանակում ա, վոր նրանք չպետք ա իրանցից մեծերի, յա գարիբ (ստոր) մարդկանց հետ խոսան։

— Ինչու։

— Ամոթ ա։

— Ինչպես թե ամոթ և, — զարմացավ Կամսարյանը։

— Բա ջահել կնիկը, վոր չանեն (ծնռոտը) ցցի իրանից մեծի հետ զրից անի, ամոթ չի։

— Զև, ինչու յև ամոթ։

— Ես յերկրումն ամոթ ա։

— Պատճառը։

— Ճես իմ, վազուցվա դրած ադաթ (սովորություն) ա։

— Իսկ քեզ հետ ինչու յեր խոսում։

— Ինձ, միթոմ, մեծի տեղ չի պցում, — պատասխանեց տիրացուն, կարծես վիրավորված։

— Ուրեմն կցանկանայիր, վոր քեզ հետ ել չխոսեր։

— Բա խի չի ցանկանալ, մարդ չի ուզիլ, վոր իրան պատիվ տանի։

— Դա պատիվ է։

— Պատիվ ա, բա։

Կամաբրյանը այս նորությունը լսում էր զարմանալով և չէր կարողանում հասկանալ, թե ինչպես կարելի չի, վոր մարդ արածը չէասե յուր նմանի հետ, կամ թե այդ խոսելը համարե ամոթ, պատիվ, կամ անպատվություն։ Այդպիսի ըմբռնումներ չէյին կարող ունենալ, նույնիսկ Աքրիկայի վայրենիները, իսկ սրանք հա, համեմատաբար, քաղաքակրթված յերկրի բնակիչներ էյին, հետևապես և պետք է ազատ լինեյին այդպիսի վայրենություններից։ Բայց և այնպես փաստը յուր առաջին էր։ Նա տեսնում էր մի կին, առողջ կազմվածքով, գործելու կարող, ընտանիքին պետական և, սակայն, զրկված ստատուս ստված մեծագույն բարիքից, — խոսելու աղատություններից և այդպիսի մի անհերքելի իրավունքը պաշտպանում էր գյուղի գրագետ մարդը։

Ցերեկասարդը դեռ զբաղված էր այս մտածություններով, յերբ վերջինս շնորհակալություն անելով նրան՝ իրեն արած բարության համար, առավ յուր աղքատիկ կապոցը և հեռացավ, խոստանալով գալ ձաղային կոչին, յերբ սա կհրամայեր։

Մի փոքր հետո ներկայացավ կառապան Ովանեսը և խնդրեց նրան արձակել իրեն։

— Ի՞նչ, դու վերադառնում ես, — հարցրեց Գևորսը։

— Հրամել ես, աղա։

— Մեղք չեն ձիերդ, ինչու չես հանդստացնում։

— Հրես գնամ Սիմոնովկումը կորմ կտամ, ընտեղ էլ կհանդստացնեմ։

— Ինչու այստեղ չես տալիս։

— Ըստեղ դժվար ա։

— Ինչու յե դժվար։

— Ապուռ չըկա (կերը), ելածն էլ քանդ ա։

— Իսկ այնտեղ ժամն է։

— Աժան ա, բա։

— Ինչու յե այդպես։

— Ընդուր, վոր ըստեղ հայեր են ապրում, ընտեղ՝ մալականներ։

— Այդ ինչ է նշանակում։

— Եգ են ա նշանակում, վոր հայերը աշիղ (ակար) մարդիկ են։ Ենքան են կարում վար ու ցանք անել, վոր մնանք իրանց ա հերիք գալի։ Նրանցից մինը, թե վոր ասոր ինձ մի կոդ (չափ) գալի

ծախի, եղուց ինքը պտի փող տա մալականիցն առնի։ Ամա դե մալականը դհն չի. նա համ փող ունի, համ դոչաղ ա, համ էլ բանի դայդան (յեղանակը) գիտում ա։ Վարն էլ ա շատ անում, խոտն էլ ա շատ հարում, նհննց (այնպես) վոր, իրան էլ ա հերիք գալի, ուրիշին էլ։

Կամսարյանի դաղափարը հայ գյուղացու արժանիքների մասին արդեն փոխված էր, կառապանի բացատրություններն էլ պակասը լրացրին։ Ուրիշ անգամ, դուցե, նա ուշադրություն չդարձներ այդպիսի խոսքերի վրա, բայց այս անգամ, նույնիսկ լուրջ մտածությանց առարկա դարձրեց նրանց։ — «Իրավ, յեթե մի գյուղ, յուր անտեսական կարողությամբ, այնքան և վոդորմելի, վոր մինչև իսկ մի կառապան դժվարանում և այդտեղ յուր ձիերը կերակրել, մթթե սա չի նշանակում, թե նրա բնակիչները այնքան են ծուլ, անհոգ ու անշնորհք, վոր նրանց մեջ ապրել ու գործելը վոչ միայն դժվար, այլ և աննհնարին է...»

Այսպես մտածից յերիտասարդը և յուր վերջին հետևությունը, փոխանակ նրան ախորժացնելու, ընդհակառակը, պատճառեց մի թաղուն հաճույք, վորը բղխում էր այն նորածին մտքից, թե դուցե անգլիան հանգամանքներն ստիպեն իրեն, հակառակ յուր կամքին, գրժել յուր ուխտին։ Այն ժամանակ, իհարկե, ինքն այդ բանում մեղավոր չէր լինիլ. չէ վոր ամած խոսքը նա արդեն կատարել և՝ հեռանալով քաղաքից և գյուղ գալով։ Այժմ ինչ անե, վոր գյուղն ինքն և աննհնար գարձնում այդտեղ մնալն ու գործելը... Այսպես մտածությունից առաջացած հաճույքը նա լիովին չվայելից, վախեննալով, թե մի դուցե ինքն սխալվում և՝ շատով այդպիսի կարծիք կազմելով, կամ թե դուցե հայ գյուղացին դեռ ունի համակրելի կողմեր, վորոնք տակավին անծանոթ են իրեն և վորոնց պատճառով թերևս, ինքն ազատ յուր առնչվի խղճից, յեթե այսոր կայացնե մի սխալ վորոշում։

Իսկ այդ «վորոշումը»... Վոչ, նա դրա համար դեռ չի մտածիլ, չե կարող մտածել... Ի՞նչ, դուք կարծում եք, թե նա աննհնարին գտնելով հայ գյուղում ապրելն ու գործելը, կորոշե ձգել ու հեռանալ. վոչ այդպիսի բան չի անիլ։ Դրա նման մի միտք, այո, անցավ նրա գլխով, յերբ կառապանը խոսում էր, բայց դա միայն մի ցոլք էր, մի չնչին ասուպ, վոր վայրկենաբար փայլեց յուր մտքի աշխարհի հորիզոնի վրա և անհետացավ։ Իսկ այնուհետև նրա հոգու աչքերը գարձյալ մեացին սևեռած այն լուսավոր կետին, վորի վրա գրված էր հայ գյուղացու բարօրության համար աշխատելու յուր հաստատուն վճիռը։ Ցեղ նա շարունակ կնայե այդ լուսին՝ ընտրած ճանապարհից չշեղվելու համար։ Իսկ առայժմ...

առայժմ կաշխատեր ճանաչել դյուղը, նորից լսել, քննել, հետազոտել... Անշուշտ նա դեռ շատ բան չդիտեր, և դուցե հենց այդ չդիտացածներն են, վորոնք նորից պիտի վոդեվորեն իրեն... Այսպես եր խոսում յերիտասարդ Կամսարյանի յերկու «յես»-երից մինը, մինչդեռ մյուսը՝ կարծես սիրով ապաստում եր, վոր նոր լսածն ու տեսածը, քննածն ու հետազոտածը հաստատեն դարձյալ այն, ինչ վոր կա, ինչ վոր մինչ այդ յերևան եր յեկել...

Այս պատճառով նա հանդիստ սրտով վճարեց կառապանին յուր հասանելիքը և ճանապարհ դրավ նրան։

Շուտով հասավ այստեղ և տանուտերը։ Դա միջահասակ, ամրակազմ, խոշոր դիմագծերով, խելացի աչքերով և բարեդեմ մի մարդ եր։ Տան պատին հենելով ձեռքն ունեցած փոցխին, վորավ հենց նոր խոտ եր հավաքել դաշտում, մտածեցավ հյուրին, քաղցրաժպիտ վողջունեց և, չնայելով վոր նրա ով և վերտեղից լինելը չդիտեր, այսուամենայնիվ, սկսավ հարցնել նրա առողջություն, ուղևորության հանգամանքներից և ընդ նմին հայտնել յուր շնորհակալությունը, վոր «աղաեն» պատիվ եր արել՝ յուր տանը հյուր լինելու։

Կամսարյանն յուր կողմից հարկ յեղածը պատասխանեց՝ հայտնելով նրան յուր ով և վերտեղացի լինելը և ապա բացատրեց, վոր ճանապարհորդելու նպատակով է, վոր գնում և այժմ Զիբուխլուում։

— Մեր գեղից շատերն են ընցնում՝ եթում Ցերևան, Հեղմիաձին, յա են տեղից գալում հիշնում Դիլիջան ու ուրիշ յաններ (կողմեր), համա ընկի մեկն էլ չի կայնում (մնում) ես գեղը։ Ես մե ջոկ պատիվ ա, վոր արել ես մեզի... խոսեց տանուտերը բայազեցվոց բարբառով։*

— Ինչու՞ չեն մնում, — հետաքրքրվեց յերիտասարդը։

— Ընդուր վոր մեր կուշտ (մոտ) տեղալու դատ չկա։

— Այո՛, ձեր դյուղը շատ խղճուկ բան է, — նկատեց Պետրոսը։

— Համեն (ամեն) գեղերն էլ հենց ին, — հարեց տանուտերը։

— Սխալվում եք։ Ինչ առաջ անցա Սեմյոնովկայի միջով և նա բոլորովին ուրիշ դյուղ յերևաց ինձ։ Այնտեղ կային սիրուն տներ, լայն և ուղիղ փողոց, ծառեր, բանջարանոցներ, իսկ ձեր դյուղն... այս ինչ է. կարծես շեն չէ, այլ ավերանոց։

— Ղորթ ա հրամանքդ, Սիմյոնովկում քո ասած համեն բան էլ կա, դե աթոր են մալակնի գեղ ա, ես խայի։

«Սա էլ նույն է ասում, ինչ վոր կառապանը» մտածեց կամ-

* Զբուխլուեցիները գաղթած են հին Բայազետի կողմերից (Արծափից)։

սարյանը մի առանձին դոհությամբ և ապա հարցրեց.— ուրեմն հայի դյուղը չի՞ կարող լավ լինել։

— Դե իմալ (ինչպես) ըլնի լավ. դեղ ա ելի. դեղ դհա (ուրիշ կերով) իմալ կըլնի։

— Հեր-որնուած, Սիմյոնովկան ել դյուղ չի՞։

— Հրամել եք, դեղ ա։

— Ես, նա ինչու յի լավ։

— Ասի ելի, ընդուր, վոր մալակնի դեղ ա։

— Ուրեմն, վոր հայի լիներ, պետք և վատ լիներ։

— Հալբաթ, վոր (իհարկե)։

— Ինչմե։

— Ընդուր, վոր խայն համմեն բանի մեջ անշնորք ա։

— Ուրեմն, հայոց դյուղերն ամեն տեղ ել նման են ձերինին։

— Ամա, եղնոց ա։

— Ամեն տեղ ել այսպես չի՞ր, ցամաք, ծուռումուռ փողոցներով, հազև տնակներով, կեղտոտ բակերով։

— Ամա, հրամել եք։

— Ցավ չի՞ դանվիլ հայ դյուղ, վոր ծառազարդ լինի. ուղիղ փողոցներ, սիրուն տներ, այդիներ, ծաղկանոցներ և այլ այս տեսակ բաներ ունենան։

— Ի՞նչ ասեմ. կըլնի վոր պատայի խաբխրի (հարյուրի) մեջ մե խատ, համա են ել հրամանքիդ ասածի նման չըլնի. ծուռումուռ բաներ շատ կըլնի։ Ի՞նչ ասեմ, կպատայի, վոր ըլնին ելի նենց դեղեր, վոր բակերի մեջ մե քանի խատ ծառ ըլնի, յա բոստան, յա մե պտղիկ բանջա, համա տներն ու քուչեքն ինենց կըլնի՝ իմալ մերն ա։ Ես շատ տեղեր եմ հելե, շատ խայի դեղեր եմ տեսե, մերնից փսերն (վատերը) ել շատ կան։

Այս տեղեկությունները կարծես դյուր եյին դալիս Կամարյանին, վորովհետև նա նրանց մեջ տեսնում եր հատատուբյունն յուր այն կարծիքի, թե անհնար և դյուղում ապրել ու դործել, ուստի շարունակեց հարցուփորձը։

— Այսուամենայնիվ, տյուր, դու դուցե կարողանաս ավելի ճիշտ պատճառն ասել, թե ինչմե մալականի դյուղը դեղեցիկ և մաքուր և լինում, իսկ հայինը տղեղ ու կեղտոտ։ Անհրելի յե, վոր դրա պատճառը հայի անշնորհքությունը լինի. մենք բոլոր դյուղերումն ել հայերն անշնորհք են։

Տանուտերը մի վարկյան մնաց լուռ և չդիտեր ինչ պատասխաններ։ Հետո կարծես նոր դյուտ անելով, բացականչեց.

— Ախպեր, խայի դեղն կեղտոտ չըլնի, իմալ ըլնի. խայի դեղցու ցավը, դարդը մե չե, յերկու չե, վոր Թորդի (Թողնե) ու հիսաակութենի

ցավը քաշի։ Ախար նա խակի անշնորք ել չե, թեկուզ եդ անունը ավի քեզ հառնի։ Նա մալակնից ել ա շնորքով, իրա մեկել տրվեցից ել իմայի գեղցու ցանկ են ա, վոր մենք մարդ չըկա, մենքին դայազ (նեցուկ) տվող չըկա. ինչ վոր աթաման, բաբաման (հոր-ըից, պապից) տեսե, սովրե, իննից ել անում ա, իննից ել ապրում ա։ Ծարճինի ծառ (վայրի տանձի) տեսած կլես, են վոր մե-շեն ա հլնում. են վոր Թորդեն (Նրան վոր Թոդնեն) խաբիր տարի կապրի, համեն վախտ ել պտիկ-պտիկ չոր ու ցամաք քարճին կըտա, համա թե մե բարի ձեռ նրա ճղերը կտրի ու վրեն պատվաստի մալաչի դալար շվիր (շյուղ) կանեաս մե երկու տարուց հետո, եդ քարճինի ծառը մալաչի տանձեր կբերա, խամով, խոտով ու կերածդ վախտն ել բերնիդ չուրը կերթա։ Մեր գեղցին ել վոր կա, մեչի ծառ ա, քոթուկը (բուն) խոստ, քոքերը (արմատները) դայիմ, համա բարը (պտուղը) քարճին ա. մե ուսատ ձեռ ա պետք, վոր ճղերը կտրի, վրեն պատվաստ անի, կուզես մեղրիկինի, կուզես դյուլաբի, են վախտն ել ընդու բարն ել են կըլնի, ինչ վոր պատվաստելիս, խամով, խոտով, սիրունութենով։ Մալականը վոր կա, պատվաստած ծառ ա, վերն ա ընդու պատվաստողն, չիմ գիննա, ամա տենում ենք բարը խամով ա։ Հենա Գյալու յանն ել նե-մեցներ կան, ընդոնք ել մալականներից են շնորքով, յերևում ա ընդոնք ել են պատվաստ արած, ընդուր վոր ընդոնց արած բա-ներն ել են գայդով (կարգին) լավ, ընդոնց գեղն ել ա քամուց-հես-տակ, ծառով լիքը, վարժատունը մեկները, ժամն (յեկեղեցի) ել պայծառ, բոստան ու բաղչեն դեմներն... Մեր գեղը ընդոնց բաներ չըկան... ընչի, ընդուր վոր են որ, վոր որվանից ասպված մե ծառ ա տնկե, անունը խայի շինական դրե, են որվանից դեսը եդ ծառի ճղերին մե ճղադող (հոտոց) չի դիպե, խազար տարի ումբր ա քաշե (ապրել ա), խազար տարվա բարը համեն վախտ քարճին ա հլնե ու քարճին։ Մալականը ինչ վախտ վոր ուզում ա գեղ քցի, յա թե չե իր խամար շենլիկ շինի, մեկ ել տենում ես համեն յանից մարդիկ են բսնում, ասում են, բարեկամ, ես ասենց շինա, են ընենց շինա, յա ծուռ ա դրբսած, են պտիկ ա ջոջացրու (մեծա-ցրու), մե խոսքով, խորհուրդ են տալում, խելքում-խրատում, գլխու քցում։ Մալականն ել բարի խրատն ընդունում ա, չըգիտ-ցածը սովրում, ու բանը անում իննից, վոր ասածուն ել ա դուր գալում բանտին (մարդկությանն) ել։ Համա խայի շինականը շեն-լիկ չե, թեկուզ ժամ ել քցի, ըսկի մե վախտ մե մարդի երես չի տենա, վոր մե բարի բան սովրցնի, մե դրուստ ճամբաղ նըշանց ասա, ծռի զարարը (ճյասը) ու դրբսած ոգուտը խասկցնի. եդու խամար ել իմալ հինքն կարցե, իննից ել արե, ինչ խելքն կտրե,

են եւ չինեն, եհ, ընդուբ դիտացածն եւ հնչե են ա, ինչ վոբ տեննում ես, ընդուբ իմալ մեղենք (մեղադրենք)։

Կամսարյանի դլխին, կարծես, չուբ մաղեցին։ Ցուբ հարցին նա չեր սպասում այդորինակ պատասխան։ Դա, իսկապես, դատապարտություն մի վճիռ եր, վոր տանուտերը կարդաց յուբ յերեսին։ Ախար չե վոր այն ամենը, ինչ այդ դյուղացին ասաց, հայտնի եյին իրեն վաղուց։ Չե վոր հենց իրենց ընկերական ժողովներում հաճախ այն միտքն եր արծարծվել թե հայ դյուղացին տգետ, հետամնաց, հետևապես և թշվառ և ճնում այն պատճառով, վոր բոլոր յուբ կյանքում դուբկ և ճնում առաջնորդից, սրտացավ խորհրդատուից, բարի օրինակից։ Լինելին դրանք և նա կազատվեր դարերի ընթացքում յուբ վրա բռնացող ճակատագրական թշվառություններից։ Արդ, ինքը յեկել եր այդ առաջնորդը, այդ խորհրդատուն լինելու։ Ինչու՞ յեր, ուրեմն, յերկար ու բարակ տանուտերին հարցուփորձում։ Չե՞ վոր նրա համար, վոր յուբ դրած ուխտն այժմյանից արդեն ծանր եր թվում իրեն և նա նրանցից կամենում եր խուսափել... Մ'թեև ամոթ չեր այդ։

Այս հետաքրքիր միտքը ձգեց յերիտասարդին վարանքի մեջ. խզեի մի թաղուն խայթ սկսավ անհանգստացնել նրան, ուստի դադարեց հարցեր առաջարկելուց։

Այդ միջոցին վերադարձավ տան տիրուհին, ձեռքին մի քանի նորաթուխ լոշեր։ Ըստ յերևույթին, նա այդ որը թաժա հաց չուներևալով, ըստ դյուղական սովորության, փոխ եր առել հարևանից, վորպեսզի նորեկ հյուրին ոթեկ հացով չկերակրեր։ Տանուտերը կնոջը տեսնելուն պես վեր թռավ տեղից, ինչպես մեծ հանցանք գործածին մեկը։

— Ներողություն, ախպա — ասաց նա, ախր դու ճամփից ես դալում, անոթի կլլնես. յես դինչ նստել եմ, քե խեթ դյալոշի (դրուշյ) իմ անուս։ Դե, Սալվի, շուտ արա, խոյի թաղարնք (պատրաստություն) տես, — դարձավ նա դեպի կինը, վոր արդեն մոտենում եր տուն։

— Մի նեղանաք, խնդրում եմ, յես քաղցած չեմ, ճանապարհին նախաճաշել եմ, — հանդստացրեց տանուտերին յերիտասարդը։ Բայց վերջինս, այսուամենայնիվ, կնոջ յեկեից մոտավ տուն, վորպեսզի հյուրին պատվասիրելու համար հարկ յեղած պատվերը տա կնոջը, կամ թե նրա հետ խորհուրդ անե։

Այսպիսով Կամսարյանը միայնակ ձեալով սկսեց լսածներն մասին լրջորեն մտածել։ Այս առիթով նա նորից հիշեց անցյալը, ուսանողական ժամանակի փայփայած մտքերը, յուր վոգևորությունը, խիստ վորոշումը և այդ ամենին հակադրելով իրակա-

նուիրյունը յեկավ այն յեղբայրացուիրյան, վոր ինքն սխալվել և, թեթև աչքով նայելով առաջադրյալ խնդրի վրա, կամ սպասելով, վոր գործը դյուրությամբ սկսվի և դյուրությամբ շարունակվի։

— «Այստեղ, հասատատուն կամքի հետ միասին, պետք է ունենալ, նաև մեծ համբերություն, — խոսեց նա ինքն իրեն. — ծառից՝ ծառատակը միշտ մոտ է յերևում, բայց յերբ թռչում ես այն ժամանակ է միայն տարածությունն իմացվում։ Մինչև այժմ յես դեռ թռչելու վորոշումն եմ արել և արդեն տարածությունն անհուն է թվում, ինչ կլինի յերբ սկսեմ թռչել... արդյոք ուժերս կհերեն. թևերս չեն թուլանալ...

Այս մտածության հետ միասին անսպաս տեղից ծնունդ առավ նրա սրտում պատվասիրության զգացումը. — «Ահ, ամոթ է, վերջապես փոքրոգի լինել այսքան և վախենալ կյանքի գալոց դրկանքներից... Այս գյուղացիներն էլ մարդիկ են և տհաս ապրում են դրկանքներով լի այդ կյանքով և չեն մեռնում։ Ինչու, ուրեմն, չըփորձեմ մի փոքր էլ ապրել նրանց հետ և նրանց նման, գուցե հենց այդ փորձի մեջ գտնում եմ յես հնարն իմ խոստման տեր հանալու։ Ինչու հուսահատվել դեռ վոչինչ չգործած, դեռ ուժերս չփորձած»...

Այսպես մտածեց Կամսարյանը տանուտերի խոսքերի թարմ ազդեցության տակ և վորոշեց անպատճառ «փորձել» յուր ուժերը։

Այդ վորոշումն անկեղծ եր. անձնասեր «յես»-ի ձայնը լռել եր նրա մեջ այդ րոպեին։

Բայց հենց այդպիսի հանդիսավոր վայրկենին սրահի առաստաղից թափվեց յերիտասարդի գլխին չոր հողի մի վիժակ։ Նա վեր թռավ տեղից և վազեց դեպի բակը, կարծելով թե առաստաղը փլչում է գլխին։ Սակայն այդպիսի բան չկար։ Հավերը կտրան քթուքթ եյին արել, վորով և հողի փխրուկ մասը շարժվելով իջել եր ներքև։ Կամսարյանը հանեց լայնեզր գլխարկը և տեսավ, վոր նա ամբողջապես ծածկված է փոշու հաստ շերտով, իսկ գլխարկի յեզրը պահել եր յուր վրա հողի մեծ քանակություն։

Մաքրասեր յերիտասարդը դժգոհ յեղավ այդ բանից։ Բայց ինչ արած, դեռ մի րոպե առաջ եր, վոր նա վորոշել եր փորձել ապրել գյուղացիների հետ։ Պետք եր ուրեմն համբերել։ Բայց վորովհետև համբերելուց անկախ, անհրաժեշտ եր մաքրել գլխարկը, նույնպես և վերնազգեստը, վորի ուսերը ևս ծածկված եյին փոշիով, ուստի նա վերադառնալով սրահը, կանչեց տանուտերին և խընդրեց նրան առաջնորդել իրեն դեպի ներսի տունը, վորպեսզի այդտեղ գտնվող յուր պայուսակից հանե խոզանակը՝ հագուստը մաքրելու համար։

— Ես ինչ ա, խոշոր ա թափն վրեդ... Եյ, Սալվի, ես ինչ ա, էլի նդ անիծուկ խավերը կտուր քըճքճում են, հիշկա (նայիր) աղի շորերն համմեն խարաբ են արե։

Սալբին դուրս վազեց դեպի կտուրը՝ հավերին հալածելու, իսկ յերիտասարդը ներս մտավ յուր պայուսակը վորոնելու։

Տունն, ուր նա մտավ տանտիրոջ առաջնորդությամբ, մի տարօրինակ շինք եր, վորի նմանը նա չեր տեսած վոչ մի տեղ։ Ծուռ քառակուսի ձևով նա նմանում եր մի սովորական ընդարձակ սենյակի, իսկ չորս այուների վրա բարձրացող դմբեթարդ առաստաղի պայտաձեն մասուռն։ Շենքը վոչ մի կողմից պատուհան չուներ և լույսն առնում եր առաստաղի վրա բացված յերեխկից։ Սակայն այդ լույսն էլ այնքան եր նվազ, վոր յերիտասարդը ներս մտնելուց չկարողացավ իսկույն վորոշել բնակարանի ձևն ու մեծությունը։ Միայն քիչ հետո, յերբ աչքերը վարժվեցան, սկսավ ամեն ինչ դիտել ուշադրությամբ։

Տան յեռանի պատն ամբողջապես, իսկ աջ ու ձախ կողմերինը, կիսով չափ կարված եյին հողից և այն այնչափ տգեղ ձևով, վոր շատ տեղերում յերևում եյին սակրի կամ բրի քաշած սկռտները։ Իսկ առջևի պատը և աջ ու ձախ կողմերինը մասամբ՝ շինված եյին կրաշաղախի և դետաքարերի անարվեստ դանդվածով։ Ինչպես տան չորս պատերը, նույնպես և առաստաղն ու նրան բռնող պայտե չորս այուները ծուխից սևացած եյին մեկ տասնհինգ, վոր շատ տեղ պայլում եյին լուսի առաջ։ Առաստաղի ամեն մութ խորշերը առատորեն բռնված եյին սարդի վոստայններով, վոր ապացուցնում եր, թե այդ տան մեջ չկար չար ձեռք, վոր վրդովեր այդտեղ ապրող միջատների խաղաղությունը։

Տան մեջ յեղած կարասիներն եյին. մի փայտե ծխահար ամբար, վորի մեջ ալյուր եր պահվում, մի մեծ, կավճածեփ կթոց, վոր ցորենի պահարանն եր, մի փայտյա խարխուլ և լայն մահճակալ, վոր ծառայում եր իբրև դարակ, թե տան մեջ դանվող արկղիկների և թե հնամաշ կոշիկքի ու սթոցների համար։ Պատերից մեկի տակ դանվում եյին յերկու հողե կուժեր, մի քանի սևացած պատուհներ, մի փոքր և մի մեծ տաշտակ և յերկու փայտյա խաներ։ Իսկ դրբանը հանդիպ դանվող պատի տակ, վոր ըստ յերևույթին, պատվավոր կողմն եր, շինված եր մի հողե բարձրություն՝ թախտի ձևով, չորս կողմից կավածեփ և ծածկված հնամաշ կապերտով։ Տան հատակը հողից եր, տեղ-տեղ փոս և ցեխոտ լինելու չափ թաց։ Հենց այդ հատակի վրա, ուղղակի յերդիկի տակ դանվում եր կրակարանը, ուր այդ մինչդեռ վառված աթարի վրա դրված եյին մի հողե պատուկ և մի պղնձե կաթսա, յերկուսն էլ այնպես

սև ու մրապատ, վոր կարծես ածուխից էլին շինված։ Ինչ էլին լինելու այդ սևակոլոլ ամաններում, հայտնի չէր, միայն թե կամաւոյանը նայելով նրանց վրա զգաց մի խոր ղժվանք և դրա հետ էլ յերկյուղ թե՝ մի գուցե նրանց մեջ պատրաստված կերակրով հյուրասիրեն իրեն։

Վարովհետև տան միջի ողը տոգորված եր աթարից առաջացող դարշահոտ ծուխի, այլ և խոնավության անախորժ հոտով, ուստի յերիտասարդը այդտեղ չքացավ պայուսակը, վորպեսզի առնված չլինի մի քանի վարկյան ավելի ծծելու ապականված ողը, այլ առնելով այն՝ տարավ դուրս։

Հանելով պայուսակից սպիտակամազ և արծաթե մեջքով շինած խոզանակը, վոր բնավ չեր հարմարում շրջապատող անմաքրությանց, նա սրբեց նախ գլխարկը և ապա հանեց վերնազգեստը։ Վերջինս մաքրելու ժամանակ գրպանից գտնին ընկավ յուր Note-երի հայտնի տետրակը։ Կամսարյանը վերցրեց այն այնպես շտապով, վոր կարծես զղջացած իր եր և պետք եր իսկույն թաղցնել։ Վարովհետև տետրակի տեսքը վայրկենաբար հիշեցրեց նրան այնպիսի բաներ, վոր նա կուզեր այժմ մոռանալ...

Ցերը յերիտասարդը բոլորովին մաքրվեցավ, յեկավ նստեց սրահում դրած թախտի մի ուրիշ կողմը, վոր յուր կարծիքով ապատ պիտի լիներ հողի իջվածքից և սկսավ խոսել տանուտերի հետ, այժմ արդեն մեծ սրտով։

— Ինչ առաջ ասում եյիք, թե հայ գյուղացին ինչ անի, միջումը մարդ չունի, մեջքումը դայակ չունի, բան սովրացնող չունի և այլն։ Ասացեք, խնդրեմ, այսպիսի մի պարզ բանի համար ձեզ ինչ սովորեցնող և հարկավոր։ Տեսնում եք, այս առաստաղի ձողերը շարել եք միմյանցից մի-մի թիզ հեռու, հետո վրան ցախ ու ցաք դնելով հող լցրել։ Մթթե չեյիք կարող նախ՝ այս ձողերի փոխարեն լայն տախտակներ շարել, յերկրորդ՝ յեթե ձողեր եյիք շարում, ընտրեյիք ուղիղ ձողեր և վոչ թե այս ծուռ ու մուռ ճաղերը, հետո նրանց տաշեյիք, միմյանց մոտեցնեյիք և ապա թե վրան հող լցնեյիք։ Այն ժամանակ հավ չէ, անասուն էլ, վոր մանդար կտրանը, հողը չեր թափվիլ։ Ախար սա այնքան պարզ բան է, վոր սրա համար վոչ սովորեցնող է հարկավոր, վոչ խորհրդատու։

— Շատ ղորթ ես հրամայում, աղա, — խոսել սկսավ տանուտերը. ղորթ վոր են ձողերի տեղ թե տախտակ հրլներ, շատ լավ կըլներ, համ խոզ չի թափվի, համ էլ հատիքը (առաստաղը) սիրուն կըլներ։ Համա մե բան կա, վոր դու չես գիտնա. շինականի համար մե մանեթը ենդրա աժի, ինչդրա քաղքցու համար խա-

բիր մանկիկը: Եղդա տեղը տախտակելու խոտոր յեռասուն մանկիկ խերիք չեր դա, համա յես ես համմենին չորս մանկիկ եմ ավել, ես էլ անջախ եմ ճարեմ: Զոզերն էլ, վոր մոտիկ-մոտիկ հլներ, խարիր հատ չեր խերիք դա, համա յես քառասուն խատով բանը յոլա եմ տարեմ: Մեկ էլ քե ենտնիք դուդեր (ուղիղները) հլնեին, մնշաբաղին (անտառապետը) յերկիք խատ ավելի փարա կուզեր, համա ևժան ա ավել: Ասենք իմ մե զաղախեցի բարեկամես ասեց քե՝ էդու վոր չորս մանկիկ փարա յես ավել բլեքին, իրավունք ունեյիր եդ բլեքով են ղդա դուդը ձողեր կտրել, ինչ ղդա ծառեն ես կտրեց. համա յես զեղցի ռամիկ մարդ եմ, իմանալ կանամ աբեղչիկի (անտառապահ) հատնչ ձեռ ձուռն խանեմ. ես քղթին հիշլում ու ասում ա. «Ես քուղթ ծառը փեսաների խամար ա, չըհիշլենաս (համաբձակվես) դդերը կտրելու: Ես էլ իմանալ ընդու հրամանն չանեմ: Բան ա, քե շշկիմ (սխալվեմ), յա հիշլենամ մե խատ դուդը փեսա կտրեմ, մենկ էլ ասենա բռաալով գալում ա վրես ու մե չափալախ (ագահ) քիթուբերնես դարկում... Հարամդադա, ասում ա, եդ իմալ հիշլեցար Թադավորական մեշի մենչ գահոնի դեմ բան բռնել. հես ա պրատակալ կանեմ, քեզի նարաքատ (բանտ) կտանեմ: Եդ վախտը անճարանում եմ, վոտ ու ձեռն ընկնում, ասում. Էաղա, ի սեր ասուծո բաշլի, ինձ բռնավոր մի անի, ճղերս ու ողլուշաղս (ընտանիքս) մնդք կենան: Ետուց հետո, վոր տենում եմ, չեմ կանում ազա աբեշչիկի սիրտը շահել, իլաճս կտրում ա, ջերս ելած մի քանի ագռաս ոսկի եմ դնում, գլուխս պրծցնում:

Տանուտերի պատմածներից Պետրոսը վրդովվեցավ, մանավանդ աբեշչիկի դյուղացուն ագահելն ու օրենքի անունով նրան հարստահարելը վառեցին յերտասարդի բոլոր իրավագիտական զայրույթը: Նա մոռացավ, վոր տանուտերը ընդդիմախոսում նր իրեն և վոչ թե պաշտպանությունն խնդրում, ուստի վրդովված պատասխանեց.

— Աբեշչիկը իրավունք չունի քեղ ագահելու կամ քեզանից ագռոխի փող առնելու. այդպիսի անկարգության համար նրան վոչ թե պաշտոնից կ'ղրկին, այլ և բանտ կ'նստացնեն: Որենքը իրավունք չի տալիս նրան նույնիսկ մեղավոր մարդու դեմ բռնություն գործ դնել, ձեր ինաց թե հանգիստ ու խաղաղ գյուղացու դեմ: Անտառի պահպանության վերաբերմամբ վոր և է մեկի կողմից անկարգություն տեսած ժամանակ, նա կարող և այդ մասին հայտնել վերակացուին կամ անտառապետին, բայց յուր ձեռքով դատաստան անել՝ նա բնավ իրավունք չունի:

— Կըլինի եդ համմեն դրուստ ես ասում, յես էլ դինամ որենքի խոչ անարթար բան չի ըլնի, համա մեղնից վոր մեկը ա որենք

խասկնում, յա թե չէ են դադը մեզնեն մեր ձենը ձվ ա հիմանում, մեր դանդաան ձվ ա լսում։ Բան ա, թե հուլաթ ենք անում (հակառակում), յա ահ տալում թե՝ կնթանք մեշաբակին դանդաա, են իր դոշի կպած դաաը նշանց ա տալում ու ասում. — ախ դնակը աննձում ես, ես համմեն մարդու չեն տալում, ինձի վոր տվել են ընդուր խամար ա վոր խմել ուզենամ ասում անիմ, թեկուզ սաղ աշխաարը քանդեմ, վոր կանա առաջս կանգնելը։ Հիմի ադա, յես վոր հաուչ ասեցի, վոր մեր մեջ մարդ չուննենք, մեջքնեբես դայադ տվող չուննինք, դու ինձի մեղ իր դնում. համա տենում ես, վոր քե նման մի խաա դրի սև ու սպիտակը ճանաչող, դիվան դադասաան խասկըցող մեր մեջ նստած հլնեը ու ինձի ասեր, որնքի մեջ դրած ա, վոր դու քո չորս մանեքով կարաս քաուսուն խաա դուղ ծառը կտրել, թե արեզնիկը իրավունք չունի քե զարկելու, պրաաակոլ շինելու, յա նաբախա դնելու, յես էլ են վախտ ասլան կ'դաանայի, մե արեզնիկը չե, թեկուզ տասն էլ, վոր վրես դայինն համմեն ջուղաբը (պատասխանը) կ'տայի։ Ա՛յ են վախտ իմ հաուքի վրա դուղը ձաղեր կըլնեն, համմեն էլ մոտիկ-մոտիկ շարած, դայխմցրած, խողն էլ վերևից չեր թափվի, յես էլ պատվական դոնաիի կուշտ սև երես չեյի ելնի։

Կամսարյանը լսեց այս ամենը ուշադրությամբ և այլևս դիտողություն չարավ։

ժ

Վերջապես տան տիրուհու ճաշը պատրաստ եր։ Նա շտապեց սեղան բանալ։ Մուրդ կապատուհն մի սփռոց, վոր բավական մաքուր եր, բայց վորն յուր գույնի ու հնության պատճառով կեղտոտ յերևաց հյուրին, նա փռեց տախտակի վրա և վրան դարաձց սպիտակ ու փափուկ լոշեր։ Ապա փայտյա, բոլորշի խանի մեջ, բերավ մի քանի ամաններ, վորոնց մեջ կային պանիր, կանաչ սոխ, մածուն և յեփած ձուեր։ Ցերեկրդ վերադարձին նա հանեց սեղանի վրա նոր պատրաստած կերակուրը, վոր եր՝ լոբիի բորանի և մի յեփած հավ։ Ծանուաեերն յուր կողմից բերավ դեղնած մի շշում գաղ և հողե դորակով դինի։

Կամսարյանն ուաել սկսելու փոխարեն սկսավ դիտել ամանները, վորոնցով տանտիկինը ցուցահանել եր ուաելիքը։ Նրանցից վեչ մինը նման չեր մյուսին։ Պանիրը դրված եր պղնձե, կլայեկած ամանում, մածունը՝ հողե դավաքում, ձուն՝ փայտեսե կաղալայ, հին ձևի մի ամանում, վորն ուղիղ չեր ձուում սեղանի վրա, վորովհետև կատորված լինելու պատճառով մի կողմից կապված և տակից կոծկված եր։ Իսկ այդ կոծիկը (կրի, ձուի և ծեծած

կանեփի շաղախ) այնքան հաստ եր քսված, վոր ամանն յուր հարթությունը կորցնելով հակվում եր մի կողմ։ Վերջապես բռնանին լցված եր հողե քեղանի մեջ, իսկ հավը՝ դրված ոչնձև ափսեյի վրա։

Հաղիվ ասնուտները ձեռք առավ ոդիի շիշը, վորպեսզի հյուրին հրամցնե, ահա սրահի մեջ բուսավ Տեր-Վանին, դյուղի քահանան։

Սա վաթսունն անցած մի մարդ եր, բարձրահասակ, բայց նիհար մարմնով նեղ ու յերկար դեմքով, խոր ընկած աչքերով, դուրս ցցված այտոսկրներով և, սակայն, հարուստա, ալեխառն մորուքով, վոր մեղմում եր դեմքի ոպղությունը և ծածկում յերկար, գեղնած պարանոցը, վորի վրա շուշակները զատվում եյին փողից ինչպես պինդ ձգված պարաններ։

— Բարի աշողում, — ասաց Նա խաղաղ ու մեկին արտասանությամբ և դավազանը գետնին խփելով, կանգ առավ, կարծես սպասելով քե ինչ ընդունելություն պիտի գտնե։

Տանուտերն իսկույն վեր կացավ տեղից։

— Որհնյա տեր, համեցիր, — ասաց Նա հարգանքով և յուր տեղն առաջարկեց քահանային։

— Նստիր տեղդ, յես քստեղ կնստեմ, — ասաց վերջինս դազախեցվոց բարբառով և դավազանը պատին հենելուց հետո, ձեռքը պարզեց Կամսարյանին. — բարով ես յեկել, հազար բարով։ Մոսին ասեց մի լավ դռնաղ եմ բերել տանուտերի համար՝ Թիֆլիղեցի ա։ Ասեմ, գնամ առնեմ ձի ա, կըլի վոր իմ բարեկամներից ըլի, չուն յես ել Թիֆլիղում լավ ծանոթներ ունեմ։

Կամսարյանն յուր ով լինելը հայտնեց քահանային։

— «Կամսարյանց. եղ ինչ լավ անուն ա. կըլի վոր հին ազդից ըլիք, չուն հայոց պատմությունումը ըղնից մի անուն աչքովս ա ընկել։

— Ճերևի Կամսարական։

— Հա, եդ ա, Կամսարական։ Դու ընդհնցից ես։

— Վոչ, ինքս ել չդիտեմ, քե ովքեր են իմ պապերը։

— Բա եդ վհնց կըլի։

— Իդա վերջ կխաբցնես, հլա նստե խաց կե, — Նկատեց տանուտերը։

— Նստել պտեմ, բա վհնց տեմ անիլ. հաղարանց մեկ մեր գեղը բանից պատվական հյուր և յեկել, վհնց կըլի, վոր մոտը չընստեմ, դրից չանեմ։ Ամա դե յես հաց եմ կերել, դուք ինձ մոիկ չըտաք, անուշ արեք։ Այս ասելով քահանան յուր շալե փարաջի փեշերն ամփոփելով ծալապատիկ նստեց թախտի վրա։

— Ջարար (վնաս) չէկա, մեղ խեռ եղ կուտես, — ասաց տանուտերը և աղի բաժակը լցնելով, առաջարկեց քահանային։

— Բա, արադ ես ասի. եղ հո իշատհա (ախորժակ) մեկ ել նորանց բաց կանի. ենչախը վենց կանենք, — ասաց քահանան ձիծաղելով։

— Իմամ պիտի անենք, ինչ վոր ասուած ասվե, համմեն հաւնիդ դնենք կուտես։

— Հալբաթ վոր ըղենց ա. «յեղիշիր դու դորավոր ուաել դրաբությունս յերկրիդ», ասել ա մարդարեն. կուտենք, բա ինչ կանենք, սրախոսեց քահանան։ Ապա առնելով բաժակը որհնեց հյուրին, տանուտերին և բարեմաղթելով, վոր վերջինի սեղանը լինի միշտ բաց ու առատ, դարձրկեց ողին մի ումպով։

Տանուտերը նորեն լցրեց բաժակը և առաջարկեց Կամսարյանին։ Բայց սա հրաժարվեց խմելուց, առարկելով թե՝ ողի չե դործածում։ Սակայն հրաժարվելու պատճառը վոչ թե այդ, այլ ողիի կես կարմիր կես դեղին գույնն եր, վոր Պետրոսի կարծիքով առաջացած պիտի լիներ շշի անմաքրությունից, կամ ողիի հնությունից։ Նույնիսկ յեթե ողին նոր ու մաքուր լիներ, դարձյալ նա չեր կարող բերանը տանել այն բաժակը, վորով իրենից առաջ մի ուրիշն եր խմել։ Հենց այս պատճառով էլ նա մի փոքր հետո հրաժարվեց նաև գինուց, վորովհետև սեղանի վրա միայն մի դավաթ եր դրված։ Տանուտերն, ի հարկե, այդպիսի նրբություններ չգիտեր։ «Բարի դալուստ» մաղթելով հյուրին և քահանային որհնության առնելով, նա առնեց լցված ողին և ապա խնդրեց հյուրին վայելել ասուծո տված։

Քահանան առաջարկության չեր սպասում։ Նա արդեն լոշերից մինն առած քաշելով, սկսել եր յուր հարձակումը նախ պանրի ու սոխի և ապա ձուերի վրա. մինչդեռ Կամսարյանը դեռ նոր եր մտածում թե՝ ինչ ուտեր, ժամ առաջ տեսած սևակոլոլ պատուհանը (վորոնց մեջ կերակուրներ եյին պատրաստվել) չեյին հեռացնում նրա աչքից։ Այդ պատճառով նա չուղեց ձեռք տալ հավին կամ բրանուն. ամենից վստահելին դարձյալ ձուաններն եյին, վորոնց պատյանը պատառ և պահում ներսը անմաքրությունից։ Ցերեկառարդն յուր ծոմը բացավ այդ ձուաններով։ Բայց վորովհետև կեղտած յերկու ձուն բավական չեյին յուր քաղցը հագեցնելու, ուստի պետք յեղավ նոր ընտրություն անել։ Այս անգամ վիճակն ընկավ մածնի վրա։ Սակայն ինչով ուտեր։ Մածնի մոտ, ճիշտ է, դրված եր մի փայտե դդալ, վորը շատ գործածությունից սևացել, աբանոսի գույն եր առել։ Այդ դդալը նա յուր բերանը չեր տանիլ և յեթե տաներ էլ, մյուսները ինչով ուտեյին։

Դեռ այս վարանման մեջ էր նա, երբ քահանան բորանիի մի մասը յուր ամանը փոխադրելուց հետո, միևնույն զդալով առավ նաև բաւականաչափ մածուն և սկսավ ուտել լոշի կտորներով նախապես նրանց կորացնելով և զդալի ձև տալով։ Ուտելու այդ յեղանակը դյուր յեկավ Կամսարյանին և նա նույն ձևով եվ սկսավ վայելել մածունը։ Ներխուժարդի սիրտը հետզհետե բացվում էր կամ դուցե նրա հետ կատարվում էր այն, ինչ վոր հայկական առածն և բնորոշում ել՝կակղես կուտեսը։ Այժմ նա ցանկանում էր ոդովել նաև հավից, վորի դերուքյունից ղեղնած տեսքը ցույց էր տալիս, վոր շատ համով պիտի լինի։ Այս պատճառով նա նախ աշխատեց համոզել իրեն, թե սնակոլոլ պատուկը միայն դրսից կարող էր կեղտոտ լինել, բայց վոչ, նաև, ներսից. և հետո թե՝ յեղած կեղտն, անշուշտ ջրի մեջը կ՝ինար և վոչ թե հավի ներսը կթափանցեր։ Հենց այս մտածուքյան վրա ամանուհերը պղնձե ափսեն մոտեցրեց հյուրին, յերևի վերջինի հավի վրա հառած հայացքից դուշակելով նրա ցանկուքյունը։

— Հա, սրանից կարող եմ մի փոքր ուտել, բայց այստեղ... դանակ ու պատառաքաղ չկա, — ասաց Գեորգը ժպտալով ու սեղանի շուրջը նայելով։

Տանուտերը ձեռքը տարավ դրպանը և հանեց յեղյուրի սև կոթով տեղական դարբնի շինած մի դանակ։ Բայց քահանան ժամանակ չտվավ նրան։ Հավն շտապով յուր առաջը քաշելով նա սպիտակ թևերը։

— Աղբեր, ես քաղաքացիք խիլ ուտելու թահրը պիտում չեն։ Բա ըսենց դեղին լալի (սպի) պես հավին երկաթ կ՝դիմիցնեին, սիրտս չի՛... հրես ատած դանակ ել ա տվել մեդ, չանդալ ել։ Այս ասելով նա ձեռքերով պատառ-պատառ արավ հավը և ափսեն մոտեցրեց հյուրին։ Բայց վերջինի համար նորեն ուտելու դժվարուքյուն առաջացավ։ Քահանայի ձեռքերի արած ծառայուքյունը փակեց նրա սիրտը, ուստի հավի ափսեն հեռացրեց իրենից։

Տանուտերն սկսավ թախանձել։ Իսկ քահանան զարմացավ, վոր յերիտասարդը մի փոքր առաջ ցանկուքյուն հայտնեց ուտելու, իսկ այժմ հրաժարվում է։ Նրանք չէին դուշակում հրաժարման պատճառը. և յերբ մինչև իսկ Գեորգը բացատրեր, նրանք կ՝զարմանային, վորովհետև հավը դանակով ու պատառաքաղով կտրելն ավելի անհաճո բան կ՝համարեին, քան թե ձեռքերով անդամահատելը։

Վերջապես Կամսարյանը չկարողացավ տանուտերի խնդիրը մերժել, առավ հավի մի կտորը, հանեց նախապես վրայի մորքը,

վորին կարող եր քահանայի ձեռքը դիպած չըլինել և խորելով կերավ։

— Ցես վոր քե նման հաց ուտեյի, համի վաղուց մեռած կ՛ըլյի,— նկատեց քահանան ժպտալով։

— Ինչու՞, — հարցրեց Գևորսը։

— Բա ըտենց հաց կուտեն. եդ հու ծամի նման ես ուտում։

— Ուտում եմ այնքան, վորքան կարողանում եմ։

— Կարողանալին ուր ես մոխիկ տալի, զոռով պտի ուտես։ Ամեն բան վարչիս (սովորություն) ա, քե վարչիս կանես, են ա շատ կուտես, քե չե, հալբաթ կերածդ ծամի վայ կըլի։

— Իսկ շատ ուտելն ինչ ոգուտ ունի.

— Վիրնց քե ինչ ոգուտ. բա աստած մեզ ընչի համար ա ստեղծել։

— Ըզգիտեմ, մերթե միայն ուտելու համար։

— Բա ել ընչի՞...

Գևորսը ծիծաղեց։

— Ես յես ծիծաղըմ, դե ասա տեննեմ ել ուրիշ ընչի համար ա ստեղծել։

— Կարծեմ ապրելու և գործելու համար։

— Հեր որհնած, բա ապրելու յա գործելու համար չըպտի ուտես. սոված փորով գործիլ կըլի։

— Պետք է ուտել, այո, բայց չափավոր։ Ով վոր շատ և ուտում, նա չի կարող շատ գործել։

— Ծանրլիշ ես (սխալվում ես), ով վոր շատ ա ուտըմ, նա ել շատ գործ ա շինըմ։ Ա՛յ, քե ըինակ եշը, ձին, յեզը, ընրանք վոր շատ չուտեն, կարեն բան անել։ Ցա չե հրես յես։ Որը իրեք անգամ վոր լավ, բարաթ չուտեմ, կարամ եսդաղա բան շինել։ Ետոր ըռավոտ յերփեմ վեկացել հա, ծեզը հլա ծեզած վոչ, մտել եմ ժամին ասել. յեզու գնացել եմ հանդը՝ իրեք սել խորան (խուրձ) հավաքել բիրել տուն, յեզու տիրակինի կտրած աթարը դարսել, հրեն սար եմ շինել, համի ել վոր ըստեղ յեկած չըլինի, մի ուրիշ բան կանի։ Համա դե, ասենք, — ըսել լավ դառավ. չուն յեկանք, համ քե ծանոթվեցինք, համ ել տանուտերի սեղանը պատվեցինք։

— Իսկ դուք շատ ուտելուց չեք հիվանդանում, — ժպտալով հարցրեց Կամսարյանը, վոր ըստ յերևութին ցանկանում եր քահանայի գրուցից յուր գործին պիտանի տեղեկություններ քաղել։

— Բա ինչ յես հիվընդանում, քիչ վոր ուտեմ, են չափը կը հիվանդանամ...

Այդ միջոցին Սալբին յեկավ սեղանը հավաքելու, վորովհետև ճաշը վերջացել եր։

Տեր-Հայրը, վոր սկզբում մոռացել եր սեղանն օրհնել, այս անգամ արդեն հիշեց յուր պարտքը և խոսքն ընդհատելով ելնում-էյուն սեղանուց անհատ և աննվաղ արասցեք... աղոթքը կցեց և ապա «Հայր մերն» ասելով յետ քաշվեցավ։

Ցերեկասարդը շնորհակալություն հայտնեց տանուտերին յուր հյուրասիրության համար, իսկ վերջինս համեստությամբ հարեց.

— Ավել պակասը բաշխես, աղա, գեղի տուն ա. համեն վախտ ապիղ (թանկագին) ղոնաղի արժան բան չըճարվիր։

— Այդպես մի ասեք, խնդրեմ, շատ շնորհակալ եմ,— ընդհատեց Գևորգը։

Իսկ քահանան, վոր չեր սիրում ճաշելուց հետո խոսույն հետանալ, վորպեսզի առավոտյան ժամանակ տա յուր մարտոցական գործողություններն սկսելու, կցեց ընդհատված խոսակցությունը, վորն նյութեր, յուր կարծիքով պետք և հետաքրքրում լիներ հասարյանին։

— Ասում ես շատ ուսելուց հիվընդանում էիս... ես ա վաթսուն տարեկան մարդ եմ, սառնակի անդաջը խուլ, հլա մի տեղ ցաված չիս Ղարթ ա, ջանով չպղ (դող) չեմ, համա ոսկորս ընենց դարյիմ (ամուր) ա, վոր ձեռս երկաթ տաս մեջից կծալեմ։ Ես դիֆ ներանից ա, վոր լավ ուտում եմ։ Հրես, տանուտերն էլ գիտում ա, թե վոր ուզեմ, երկու գաղան (գդինձ) կերակուրը մի նախասըմը (շնչումը) կուտեմ։ Անգաջը կանչենք Սուլտանն տարկավաղին։ Մի որ Սևանա վանքումը նստած ենք, ելի ըսենց ուսելի վրա խոսք վեր չեկավ։ Սոլտանն ինձ հարցրեց թե՝ «Այ երեց, քանի իշխան (իշխանաձուկ) կարաս մինհատանց (միանգամից) ուտելը։ Աբի, տարկավաղ, հինգը կուտեմ։ Աասմ կարալ չեմ։ Աբի մարջ (դրաց) գանք. տասմ՝ գանք։

Մարջ չեկանք են պայմանով, թե վոր չես հինգ իշխանն ուտեմ, հո ուտեմ, ինձ հալալ, թե չե, մին արծաթի բռնթամանն առնեմ տամ իրան։ Իմ բաղդից եղ որն էլ Ցեվնովկի գոլիցը (կողմից) խե լուլ (ստամ) իշխան ին գրկել վանքի համար։ Ամա իննչ իշխան. են գաշագ (մաքսանենդ) իշխաններից չըմանաս ե, վոր թիֆլիղ տեսել ես, են վոր մինը ըսկի երկու գրվանքա գալիս չի. սրանց մինը՝ չորս, յա հինգ գրվանքա կըլիր։ Հենց տարկավաղը հինգ մենծ մենծը չակեց, տվավ աշչուն (խոհարարին), տասվ.— Ադա, ես դիֆ կ'տանես մենծ գաղանումը կխաշես. յեդա սինումը (սկուտեղ) կդարսես կբերես։ Աասմ «աչքիս վրանց։ Բլբյուլյանց վանահայրն էլ, տասած կարդի, պատարագի պահի, խե լավ մարդ ա, ասեց, «աղա, աղը տեղն արա, անալի չըլի, թե չե տերտերի փորը կցավիր։ Ասեց «ըզդենց կանեմ, հայր սուրբ»։ Են ա ըսկի

մի սահաթ չըքաշեց, տենեմ դոչաղ աշչին հինդ իշխանն նփած սինումը դարսած, տաք-տաք, շալըը (պուլըշին) բանցրանալեն բերավ դրավ առաջև, հետո եղ չորս լավ փափուկ հացեր։ Որը ըսենց լավ որ եր, մենք եղ հայաթումը (բակում) ուռի ծառերի տակին, կանաչկոտումը նստոտած։ Միաբաններն եղ դիփ հվաքվել են դլխիս վոր տենան թե հինդ իշխանը վինց պտի ուտեմ։ Են ա հենց վոր աշչին սինին դրավ առաջև, երեսիս խըչըհանեցի, ու ասասված իմ, ի քեզ հուսացա, մի ամաչեցիս, և մի ծիծաղեսցին ղինև թշնամիք իմ... ասեցի հու կցեցի ուտիլը... Մինը կերա, երկուսը կերա, իրեքը կերա, չորսընչինումը ուղեցի նափաս (շունչ) քաշեմ։ Ռուբդ Գրիգոր վարդապետը 'ասավ՝ էյ տղա, բանդ բուբդ ա բևում». ասի չե, հայր սուրբ, յանղլիշ եա։ Իգնատիոս վարդապետն եղ, վոր հլա են վախտը սաղ եր, ասավ էյ երեց, ընենց արա վոր զազախեցուց երեսը սև չթողաս։ Աաի արխային կաց, հայր Սուրբը, երկու եաքան եղ վոր ըլնի, կուտեմ, միան թե կարաք մի քիչ դինի հասցրեք ինձ։ Ասավ էես սհաթինա, են ա լուսահոգին կանչեց փոքրավորին, ասեց. էաղա, գնա իմ դուլաբումը (պահարան) պտի կուլի (դորակ) մեջ դինի կա, բերա։ Փոքրավորը վազ տվավ, բերավ։ Եղ աղրաթըներ դինին դլխիս քաշեցի թե չե, մին եղ տենեմ, ինչ վոր կերել չի, քշեց տարավ, ընենց վոր ասես ըսկի բան չեմ կերել։ Ասի, Սոլոմոն սարկավագ, ես երկուսն եղ ուտիլու չեմ, համա սրանե բան չի լիր մի իրեքն եղ խաշիլ տու բեր։ Տենեմ սարկավագին ոանդ բուրդը գնաց։

— Եղ հլա կեր, խաշիլը հեշտ ա, ասավ։ Են ա չես նոր մեկելանց կցեցի ուտիլը։ Տասը մեուա չըքաշեց, քու արևը, երկու իշխանն եղ մաքրազարդեցի, ինչկլի դլխներըի դողերն եղ (ուղեղն) թամուղ ծծեցի, կուլի մեացած դինին եղ վրան քամեցի ու չեդ նստաւ։

— Ապրես, Տեր-Վանի, ապրես, կերածդ քե հալալ, — ասեց վարդահայրը։ Մնացած վարդապետանին եղ դուվեցին ինձ. ամա դե Սոլոմոնի սրտին վոր դանակ խփիր, արյուն չեր դուրս գալ, մին ընդյուր համր, վոր մարդը տանուլ եր տվել, մին եղ ընդյուր, վոր ինքը վանքի անտեսն եր, նըհաթ (իզուր) տեղը հինդ իշխան եր կորցրել, եղ վինց պտեր մուռանալ։ Ա՛յ եղ որվանից դեսն ա, վոր դիփ իմ հունարը ճանաչում են։

Կամսարյանը, վոր քիչ առաջ լսում եր քահանային հետաքրքրքրությամբ, հուսալով թե նրա դրուցից կարող է քաղել ռպիտանի տեղեկություններ, այժմ արդեն ձանձրացավ, տեսնելով վոր նա այդքան յերկար խոսում է միայն շատ ուտելու վրա, կամ դովում է յուր վորկրամոլությունը այնպիսի պարծանքով, ինչպես

մի ուրիշը կղզվեր յուր քաջութիւնը, կամ մեծ գործերը։ Այդ հանդամանքը, նոյնիսկ, շարժեց յերիտասարդի դժգոհութիւնը այն պատճառով, վոր նրա առաջ բացավ դարձյալ դյուղացու ցավերից մինը և հիշեցրեց նրան թե՝ վորքան անհրաժեշտ եր իրեն՝ հավատարիմ մնալ յուր ուխտին։ Ուստի նա կտրուկ և մի քիչ էլ կոշտ ձայնով հարցրեց։

— Տեր-հայր, դուք ուսելուց դատ ուրիշ բանի մասին չէք կարող խոսել։

Քահանան հասկացավ տրված հարցի վեչ-հարդական նշանակութիւնը և լուրջ կերպարանք առնելով, պատասխանեց.

— Ընչի՞ չեմ կարող, վորդի, հենց դրա համար չեմ յեկել ըստի։ Նվիրատ (քիչ առաջ) ասում եր թե են Թիֆլիզցի ազգն յեկել ա, վոր մեր շենքերը կենա. թե Թարսաչայի ըստ մասերիսները (վերակացուն) ասել ա, մինուհետ, դու յեկել ես ըստի ապրես ու մեր դեղացուց ոգնես, բաղդավորացնես։ Ասի՝ ասծու խեր խաբարը քե, ա Մոսի, եդ ընչի՞ լավ բան ես ասում. մեր գեղն հենց դհե (այդպիսի) մին մարդի ա կարոտ... ամա չլի՞ թե սխալվում ես, յա քե հետ զարաֆաթ (կատակ) են արած. ասավ՝ դիտում չեմ. լսածս եմ ասում։ Համի յես էլ յեկա, վոր իմանամ, թե եդ բանը դիրթ ա, թե սուտ։

Պետրոսը հանկարծակիի յեկավ, նա այդ տեսակ հարցի չեր սպասում, ուստի և չիմացավ ինչ պատասխանել։

Մինչդեռ տանուտերը, իբրև թե հյուրի դիտավորութիւնը լավ տեղյակ, շտապեց պատասխանել.

— Հալբաթ վոր զարաֆաթ են արե. քաղքցի ազա մարդ իմանել կանա գեղ նստիլ. են կուզա համմեն յաններ շուռ գալ, գեղեր, քաղաքներ տեսնալ, ընդյուր խաման էլ կայներ և միր գեղ։

— Դրուսան եդ կլի։ Ախար յես էլ ասըմ եմ՝ նա ըստի վռնց կարա ինալ, — հառաչեց քահանան, ապա դառնալով յերիտասարդին՝ հարցրեց. — ասել ա (հնչանակե), դու հմի ճամբորդութեն ես անում։

Կամաբրյանը գլխով հաստատութեան նշան արավ։

— Վռնց ա, մեր գեղին հմմնում ես։

Յերիտասարդը բացասեց, դարձյալ նշանով, չկամենալով կարծես խոսել։ Իսկ տանուտերը հարեց.

— Ազան մեր գեղ ըսկի չըխամխիր, համմեն գեղերեն փիսեն ես ա, — ասում ա։

— Հմ, բա եդ լավ չես հվանում, — հարցրեց քահանան։

— Սրա ինչը հավանեմ, սա հա գեղ չե, ավերանոց ե, — խոսեց վերջապես Կամաբրյանը։

Այս դիտողությունը քահանայի ինքնասիրությունը դրդեց. «Ինչ քե իմ հովված գյուղին ավերանոց անունը տաս, մտածեց նա յերևի և տաքացած ասաց, — տես հլա ինչ ա ասում... ա, որանե լավ գեղ կլի... Բա են արարած աշխարի տեր քաղավորը մեր Ջըրբլուին հավանել ա, եդ դու վինց չես հավանում։

— Վիր քաղավոր, — հարցրեց Պետրոսը։

— Հանգուցյալ Նիկոլայ Պավլիչը, բա 'մանում չես։

— Վինց ե հավանել, չեմ իմանում։

— Ընենց ա հավանել, վոր յեկել ա մի գիշեր ըստեղ կացել։

— Այդ յես չգիտեմ։

— Բա խի չես գիտում, հուսում վոր առնըմիք, ընենց բաներ կաբթըմ չեք։

— Այդ մեկը չեմ կարդացել։

— Դե հեն ա, ասա, մենծ բաներըը թաղնում եք, պուճուր բաները կաբթըմ լի, — նկատեց քահանան, իրը թե կամենալով ստացած վիրավորանքի փոխարենը հատուցանել։

— Դա մենծ բան չե, մի հասարակ տեղեկություն ե, — նկատեց յերիտասարդը։

— Բա վոր մենծ բան չի, խի հրեն Սևանա սուրբ Աստվածածնի յեղցու գավթումը գրած կպցրած ա թե՝ 1837 թվին, հոկտեմբերի 6 ին, չորեքշաբթի որը մեծազոր կայսր Նիկոլայ Պավլիչը յեկել ա մեր Ջըրբլուումը մին գիշեր կացել։

— Կարող ե պատահել։

— Վինց թե կարող ա պատահել, քե ասըմ եմ պատահել ա, բա հայելվար չեմ ասը՞մ։

— Հավատում եմ, ելի։

— Բա վոր հավատում ես, խի մեր գեղին հավան չես կենում կամաբրյանն այս անգամ չկարողացավ ծիծաղը զսպել և վեր կենալով տեղից, ասաց.

— Դե վոր այդպես լավ գեղ ունեք, տարեք ինձ ցույց տվեք։

— Լավ, գնանք, ասաց տեր-Վանին և վեր կացավ տեղից։ Ցանուտերը նույնպես ընկերացավ նրանց։

ԺԱ

Գյուղամիջից անցնելիս նրանք հանդիպեցին հիսունը անցած մի կարճահասակ, փոքրաթեմ, խուզած մորուքով, սուր հայացքով և գոտեպինդ հագնված մարդու, վոր չնայելով տարիքին, ճանապարհն ընթանում եր ժրությամբ։ Մոտենալով քահանային, նա հանեց մորթե գդակը, «Երկնյա տեր» ասաց և ապա նորեն գլուխը ծածկելով, բարևեց տանուտերին և նրա հյուրին.

— «Աստված օրհնեսցե, ուստա Պետի, եդ ձեր ես գնում,— հարցրեց քահանան։

— Ա՛դեր, ասըմ են Յոլան յեկել ա, հրամեն ա բերել, վոր են խեղճ Սայու տունը վեր գրի, գնըմ եմ տեղամ կանգամ խնդրեմ, աղաչեմ, բալքի Թե (գութ) մարդ ա, սիրտը ռահմ (գութ) ընկնի, մի քիչ էլ ա մոհլաթ (մինչև) տա։

— Ա՛ Պետ, յես Յոլին տեհա, դընում եր Սեմենովկա, ասեց եդուց եմ յեդ գալու,— հայտնեց քահանան։

— Հմ։

— Հա։

— Դե էն ա, տասա, գնացել ա պրիստավի յեդնից էլի, չուն պրիստավը երեկ ընդեղ եր... եդ հու բանը դժարացավ,— դուշակեց դյուդացին։

— Դե խի՞ ա դժվարանում. Թե մոհլաթ տալու ըլի, եդուց էլ կըտա,— հուսադրեց քահանան։

— Չե, ա դեր, պրիստավը վոր յեկավ, բանը խարաբ կըլի. ուստա մարդ ա, լյուդուն դիտում չենք, խոսքը հըրկանում չենք. «գալշոլ դուռսակ» ա ասելու հու խեղճի ելած չելածը փենչամի (կնքեն), նրա հետ մենք վոնց խոսանք։

— Ա՛, հրես խոսսդն ըտաի չի, տալանի տալ կանդնած, ուստի լյուդուն էլ դիդա, փոռանդինն էլ,— ասաց քահանան, ցույց տալով կամաբյանին։

— Հմ, դե ձեր ա, եդ հու ասծու ադըմուԹինը կըլի։

— Ի՞նչ բան է այդ,— հետաքրքրվեց յեղիտասարդը։

— Ըտանդ մի գեղացի ունենք, Յոլա Միրզին փող ա տալացուբ (պարտ). սա ուզում ա բարեխոսի, բալքի Թե Յոլան մի քիչ էլ ա մոհլաթ տա,— բացատրեց քահանան։

— Պարտականը, յերևի, դրա աղջականն է,— հետաքրքրվեց Պետրոսը.

— Չե, հնուս մարդ ա. ամա դե սրա համար դիփ էլ աղջական ենք. Ով վոր ես դեղըմը ՆեղուԹյան մեջ ըլի, սա պտի վազ տա քյոմակ անի (ապնե)։ Աստած օրհնի, լավ Ջան (հոգի) ա։ Ամա մին վես խոսյաԹ ունի. շատ ա ճշմարտախոս. (ասենք Ղաղախեցիք դիփ ըղնից են. սա էլ Ղազախիցն ա քեչած)։ Հարիր անգամ ասել եմ ա Պետ, խոսքն ընենց մարդու ճակատմեջին ես խփըմ, վոր նա շղկվում ա. ըղնից մ՛ անի, վորդի։ Ասում ա չե, ա դեր, դու դիտում չես, լավն հենց եդ ա։

— Ի հարկե, լավը նա յե, վոր մարդ ճշմարտախոս լինի և խոսքը ճակատին տանե,— հաստատեց Կամոբյանը։

— Բա, դու էլ ես ըղենց ասըմ. դե են ա, ասա, յերկուսդ մին դինի (հավատի) մարդիկ եք էլի։ Դե վոր ըղենց ա, յեկ, ծանոթ-վիր ես ուստին։ Ա՛ Գետ, գիտում ես սա հոմ ա, — դարձավ քահանան գյուղացուն։

— Չե, գիտում չեմ, — պատասխանեց վերջինս։

— Սա Թիֆլիզից ա յեկել, հուսումնական տղա ա. մեր մհալ-ները (դավառները) մեն ա գալիս, տենում ա, քննում ա. կըլի վոր եդ տեհած, քննածն էլ դիր շինի, յա՞ գաղեթ դցի։ Ամա դե մեր գեղին հավան չի կենում։ Վախում եմ մեզ վրա փիս բաններ գրի։ Հմի ես ա տանում եմ շենը մեն ածեմ, բալքի չըտեհածը տենա, հավնի։ Դու էլ մեզ հետ յեկ, ղոչաղ մարդ ես. կըլի մի-մի հետ էլ դու սրա ջուղաբը տաս, — ասաց քահանան ծիծաղելով։

— Լավ կըլի. գնանք, — համաձայնվեց գյուղացին։

— Տեր հայր, յես դիր շինող, կամ գաղեթ դցող չեմ. ինչու՞ այս մարդուն սխալ տեղեկություն ես տալիս, — նկատեց Համասարյանը ժպտալով։

— Դիփ մեկ ա, ասոր չըշինես, մեկել որը կըշինես. յա չե մին տարուց յեղը։ Հուսումնականներին յես լավ եմ ճանանչում։ Դա-լիս են ըսահեղբը մեն գալիս բաներ տենում, լսում, իմանում, յեդո գնում։ Անց ա կենում մին, երկու, իրեք, յա չե հինդ տարի։ Մին էլ տենում ես են բաները, վոր ըսահեղ տեհել, իմացել են, դիփ մին-մին դուրս են ավել գաղեթում։ Մարդ արմանում ա թե՝ աղաչեր, բա եդ մնաքանդնին ես հինդ տարվա միջումը, ըսկի մի բան էլ ա մտահան չարին։ Մի հետ ըսահեղ մի թեմական եր յեկել, հոգևոր Տերի հրամանովն ուզում եր ըրեխանց համար հու-սումնարան բանա, անունը Գոռշյանց եր, գիտում չեմ, ճանաչում ես թե չե։

— Ճանաչում եմ, — ասաց Գետրոսը։

— Հա, ուզում եր բանա։ Ղորթ ա ելլիկը (ժողովուրդը) փող չուներ, հուսումնարանի բանը գլուխ չեկավ, ամա դե ինքը խիլ լավ մարդ եր. հետը քաղցր գրից ինք անում։ Ջուն նրա մին գիրը Դիլի ձեռքս եր ընկել, կարդացել, գիտում ի, վոր լավ գրող աւ։ Մին որ հարցրի թե պարոն թեմական, եդ հին-հին բա-ները վերդից ես 'մացել, վոր գրել ես։ Ասալ ըրեխությունից։ Ախ՝ բա ետ վռնց ա, վոր քսան, երսուն տարումը մոռացել չես, գիր ընենց տարքին գրել ես։ Ասալ ընենց ա, մուռանալ չեմ։ Ախ՝ բա խիլ յես մոռանում եմ։ Ասալ ընդուր, վոր ասածդ քու գոզրեն ուրիշ թահր ա շինել, իմն ուրիշ։ Ախ՝ բա խիլ ըղենց շատ եք գրում. ախր մինը գըլմ եք, բոլ ա (բավական է), երկուսը գըլմ եք բոլ ա. խիլ վոր ճոնդը կցում եք, էլ բաց չեք թողնում։ Ասալ՝

ընենց ա, ճար չի լիլ, վոր չըդրնենք ջաննեքս մդմդդ (ցեց) կըընկնի։

— Բա ե՛, ասել ա հիվանդութին ա լի՛ — դարմացավ Պետին։

— Հիվանդութին ա, բա՛ Ձեռ տենում, մինը վոր մեր շենից գնամ արտը հունձի, ընտեղի դարտասուից (ճահճաջուր) խմում, գալիս ա ըսաի՝ ջերմը բազդիցն ա կենում։ Տաքութենի թյունդը վախտը տել ա տալի (դառանցում ե). ասում ա՝ «Հրեն սատանեն նկավ, հրեն գժոխքը բացվել ա, յա չե՝ հրեշտակնին կոխվ են տալի սատանոց հետ։ Ասըմ ես.՝ ա բալամ, ըսաի սատանա չկա, ըսաի գժոխք չկա, եդ խի դեռ բաներ ես խոսում։ Ասում ա՝ «Էրա քոռ ևք, տենում չեք են պուղպաւուր (յեղջուրավոր) մեծ սատանեն, վոր հաբին՝կուացրած, ալավի (բոցեղեն) ջիղան (նիզակ) ձեռքումը, կոքները (սատանները) դրեքցնելին հրես գալիս ա թե մեզ կիւլ տա։ Համ ասելա են ա թե՝ եդ հուսուաճականնին ել, ուղեն չուղեն, պտի գրեն. չուն հուսումը վոր առնըմ են, դեռ մին հիվանդութին մանըմ ա՝ մեջներըս։ Իրանք ել չեն գիտում թե՝ խի են գրում. ամա դե վոր չըդրեն, սրտներըս կճաքի, յա վոնց վոր թեմսկանն եր ասում, ջանըներըդ մդմդդ կընկնի։

Տեր-Վանին, վոր չեր մոռանում կամսարյանի՝ ջուռելուց մսին արած վերջին դիտողությունը, այժմ արդեն աշխատում եր վոչ միայն դատ խնդիրների, գրողների կամ ուսուցիչականների մասին խոսել, այլ և ընդունելով, վոր յերիտասարդը դրանցից մինն և (թեպետ և նա հերքեց) կծու ակնարկներ եր անում նրա հասցեին։

Պետրոսը, սակայն, դվարճանում եր տեր-հոր այդ ուշադիր ջանքը տեսնելով։

Ձերը հրանք իմ քանի ծուռ անցքեր անցնելով հասան մի բարձր տեղ, քահանան կանգ առավ և յերկար դեպի ծովակը դարձնելով, ասաց Կամսարյանին.

— Դե համ մաիկ տուր, տես, սրանն լավ դեղ կըլի։ Այ, դևսը մաիկ տուր, դևնը մաիկ տուր. ես վերևի կապիտը տես... այս ասելով նա ցույց եր տալիս շրջակա լեռներն, ծովակի և կղզու տեսարաններն ու գեղեցիկ հորիզոնը, վոր պարփակում եր յերկնքի պայծառ կապուտակը.

— Իրանք ձեր գյուղի առավելություններըը չեն, այլ թնության, — նկատեց Կամսարյանը. — այդպիսի առավելություններ ամեն տեղ կարելի յե գտնել։ Ինչ ունենք դուք ձեր գյուղում ձեր ձեռքով շինած, այն ցույց տվեք։

— Ինչ պտի ունենանք. այ ես տներն են, ես եկվաններըը, ես մարաքներըը... հա տենում եմ։

— Տեսնում եմ, բայց դրանք մեծ չեն, այլ սխտոնիկ, մարդ արտրածը չպետք է ապրի դրանց մեջ։

— Բա մենք խի՞ կենք ապրում։

— Հենց կես էլ դրա վրա կամ դարմանում, թե ինչպես եք կարողանում ապրել։

— Գիմաս ինչ կա, աղա, — մեջ մտավ ուստա Գեռին, — կես, զորք ա, հմի գնդլմե եմ ապրըմ, ամա շատ մանր կնկած, շատ աշխարհ տեսած մարդ եմ։ Ինձ վոր ուստա կեն ասըմ, նրա համար ա, վոր փեշակով (արհեստով) դյուլդյար (հյուսն) եմ, քաղաքներում շատ եմ բանել։ Բանն էլ եմ ըլել, Բաքու էլ, Թիֆլիզ էլ։ Վերջն ամեն տեղից զզվել՝ կնկել եմ ես գնդը մտել իմ շինած կռկալի (խրճիթի) տակը, թե ինչ ա, մի քիչ դինջ ապրեմ ես հալալ ու սայա (արդար և պարզ) մարդկանց հետ։

«Դու վոր ըրմանում (դարմանում) ես, թե մենք վրեց կենք կարում ես սխտոններումն ապրիլ, կես ըսկի ըրմանում չեմ քու ըրմանքի վրեն. չուն քաղքի սիրուն անկրումը ծնված, փափուկ ապրած, փափուկ մեծացած տղան վրեց կարա դիտա թե ես սխտոններումն էլ ապրիլ ա ըլում։ Ամա դե կես, վոր տենում եմ, թե դյուղացին վրեց ա գործ շինըմ, վրեց ա ըռավոտից ինչ կլի ըխկուն քար ու քոլին կպչում, հողի հետ կռիվ տալի, արևի տակ քրտնում. կես կարամ ասիլ, վոր են թահրնեղուքին քաշողի համր ես սխտոնին էլ շատ են։ Չուն վատտակած ջանը, թիլացած ոսկրներըը դինջացնելու համար, ամարաթ (ապարանք) չի պետք. բավական ա, վոր մի ծածկած քյունջ ըլի ու եդ քնջումը մարդ իրան փրտակի (ծածկի), միան ենքան ըլի, վոր թոռ ու թացը չնեղնեն, յա չե քամին քրտնած մեջքը չսառցնի։ Ըսառեղ վոնց վոր տղամարդը, ընենց էլ կինարմատը սաղ որը գործ են շինում, չուն ցավերնին շատ ա, կարիքնին մենծ, պտի անեն վոր ապրեն, ծերը ծերին հասցընեն, չանողը կմնա սոված, նրան վոչ աստած, վոչ էլ բանդան հաց կտա։ Դրա համար ա, վոր ըսառեղի մարդը տան սիրունութենին, յա կարդ ու սարդի վրա մտածում չի, չուն սոված փորի համար ամենից առաջ հաց ա հարկավոր, տկլոր չանին էլ մի կտոր կտավ։ Դե մարդ, վոր եդ երկու բանը զոռով ըլի ձեռք բերում, էլ ուրիշ բանի վրա վրեց կարա մտածիլ։

«Ա՛յ, ուրիշ ա ձեր քաղքի բանը. ընտեղ փողը չիր ա (չոր միրգ, այսինքն՝ առատ). ենքանը բիրդան (միանգամից) վրեց են հավաքում, դիտում չեմ, միան ես կա, վոր մինը թե աշխատում ա, տասը մուֆթա կեն ուտում, վրչ չափա կա, վոչ նեղութին։ Մեր տեղը թե վոր կնիկը մարդու դաշտը (չափ) չըքրտնի, տանը կնսը կմնա սոված. ամա ընդի կնանիքը դիփ պարապ են մանդալի։

Ջեր են Սադարի (փոխարքայի) տան ռաչի քուչեն չըկաճ, ընդհ-պով շատ եմ անցկացել։ Եդ քուչեն ըռավոտից ինչ կլի բիկուն մեն յեկողով լիքն ա ըլում. մարդ վոր մտիկ ա տալի, Ջեռւմ ա ըրմացած, թե բա ես մարդիկը բան ու գործ չունեին, ես խի ըսենց պարապ մեն են գալի։ Ցա չե եդ կինանիքը, եդ աղչկերքը յես հարիր ասեմ, դու հաղար ասա, դիփ հագված զարթարված, քարեզանների վրա, Թուրուն-Թուրուն (խումբ-խումբ) կռնափըռնուկ (թևանցուկ) ծիծաղելով, հռհռալով, բաշ-աշաղա, բաշ-յուխարի (գլխիվայր, գլխիվեր) գնում, գալիս են։ Մտածում ես, թե բա սրանք տուն չունեին, տեղ չունեին՝ քյուլփաթ (գավակներ) չունեին, կար ու կարկատան չունեին, հաց ու լվաց չունեին. եդ խի տանն բան թողած, ըսենց բոլթա յեն քաշում (ճմռւմ են)։

«Մի որ ես բաները հարցրի մեր Ծաչթառակցի վարժապետին, նա գլուխը ժաժ տվավ հու ասեց.—ունեին, բա չունեին, եդ կինանուց մեծ փայը մարդ ել ունեին, բեխերք ել, տուն ու տեղ ել, սամա դե դիփ վեր են ածում հու գալիս ըսենց բոլթա քաշում։ Ասած ասավ, հասատատ պահի թաղավորութինը բոլ (շատ) հուսուճաբաններ ա շինել, բեխերքը ըռավոտանց պրկում են ընտեղ, մարդիկն ել գնըմ են իրանց քյասիբութինին, եդ վախտը ենա կինանուց ասողը աչըլմիշ ա ըլում (բացվում է) շուտ են անըմ հագվում, դուզվում, պրթարվում, անուշ հոտերը վրան շաղ տալի, տունը ու տեղը Թողնում նոքարի արսվ (հուսով), Թե պատի բեխերք ել ունեն, նրանց ել ծծմների յա գարավաշի (աղախնի) վրեն վեր դցում ու իրանք դուրս պրծնում, գալիս ըսենց սկըր անում. մինն՝ իրա դոստի (բարեկամի), մեկելը սիրեկանի հետ, շատերն ել հենց մենակ չեն են յից արած՝ չափում, չափչըփում են քուչեքն ու մեյդաններն։ Ենեցներն ել կան, ասավ, վոր հվաքվում են իրանց մի Թայդաշի (ընկերուհու) տունը ու որը ցերեկով նստում, ինչկլի ճաշի վախտը դումար խաղում։ Ցեվի տղամարդի տուն գալու վախեն հասնում ա, գալիս, հետը հաց են ուտում ու նրա դուս գալուց յետը, ել մեկել նորից տուն տեղ Թողնում, գնըմ դումարբազխանեն... աստած վկա, ասեց վարժապետը, ես Թահրի կինանց հյոքմը (իրավունքը), վոր ինձ տան ե, գիփունանց մի Թոկով կկապեմ հու բերեմ Սևանն ածեմ։ Աի, ա բալամ, եդ խի եդ գիրկիները բերում Սևանն ես ածում, ու նրա անմահական ջուրը մուռատում, հազիր ես լղլղած Ջուան ածես պրծնեմ։

«Ըսենց երկանցնելիս միաքն են ա, վոր ասեմ Թե քաղաքումը, վոր դեռ շատ փող կա, հալբաթ մուֆթիա ապրողի ել շատ կըլինե։ Դե քե այան ա (հայտնի), վոր մուֆթիա ապրողի իշատհը համեշա

(միշտ) բաց կլի՞ս որ՞վոր մին կերակուր ա ուտում, եդուց՝ երկուսը, իրեքը, չոր չորսը կուզի. ասոր վոր բուրդ ա հագնում, եդուց աբրեշում, զառ ու զարբաթ կուզի, ասոր վոր մի եառաժանոց տան ե կենում, եդուց երկու չոր իրեք եառաժանոց կուզի. դհենցով (ջանը դուս գա աշխատողին), ուտիլն էլ կբոլանա, հագնիլն էլ կճխանա, տունն էլ կսարգվի, քաղաքն էլ կզրթարվի։ Ամա դե ըստեղ վոչ հեշտ աշխատիլ կա, վոչ մուֆտատ ուտիլ. դրա համար էլ կարում չեն սարդ ու կարգի յեղից ընկնիլ։ Այ, հրես ես կատւրն անցննենք, յեկ մտիկ տու տես, մեր կնանիքն ինչ են անում. տես ձերունք ըսկի սրանց քաշած նեղութենի հարիր փայից մինը կարանն քաշիլ...»

Այս ասելով, ուստա Գեռին ուղեկիցներին առաջնորդեց դեպի մոտիկ կալը, ուր այդ միջոցին մի մայր, յերկու հասակավոր և մի փոքր աղջիկ, ութամյա մի տղայի հետ, ղբաղված էին ցորեն կալսելով։ Մայրը յեղանը (հեծանոց) ձեռքին, պտտում եր կալի շուրջը և շարունակ հասկերը հավաքում կալամջի, ուր պտտում էին յերեք գույդ կամեր։ Դրանցից յերկուսը լծած գույդ յեզներով, վարում էին յերկու մեծ աղջիկները, իսկ յերրորդը, վորին լծած եր մի մատակ, վարում եր փոքրիկը, հեծնորդ յեղրոր ոգնությամբ։

Արևը թեպետ այրում եր վերևից, սակայն կալսողներն աշխատում էին ժրությամբ։ Յերկփեղկ կամները, վորոնց վրա ամուր կանգնած էին աղջիկները, պտտում էին կալում գույդը գույդի յետևից և իրենց կայծաքարե, սրածայր առամներով անտեսանելի կերպով ցողունը կտրտում, հասկերը տրորում և կալի հարթածածկ մակերևույթի վրա ցորենը փռում։ Փոքրիկ տղան շարունակ յերգելով, կամ ճչալով խրախուսում եր յուր ձին, վոր առաջնորդում եր յեղներին. մինչդեռ աղջիկները համեստ ու լուռ կաց, յերբեմն միայն հարվածում էին ամոլներին, յերբ սրանք ծանրացնում էին իրենց ընթացքը, կամ ցուկներն իջեցնում դեպի փափուկ հարդը, մի քանի ցողուն հափշտակելու հուսով։

— Տեսնում ես, — մատնացույց արավ Գեռին աշխատողների վրա, — սրանք Ավանանց բեխերն են։ Հերը՝ մեծն տղի հետ հրեն հանդումը ուրիշի հունձն ա անում, թե ինչ ա, կարա մի քանի շահի տուն բերել, ըստեղ էլ կնիկն ու աղջկերքը իրանց կալն են կալսում։ Զորան էլ կինարմատ են, են պատիկն ա տղա. ամա դե դիմի էլ տղամարդի բարեբար դուրս են շինում։ Հենց դիտում ես հեշտ բան ա ես կեծ արևի տակին սաղ օրը կաղնիլն ու պտիտ պտիտ անիլը։ Ձեր խանըմներից (տիկիններից) մինը, թե վոր հինգ հատ ես կամներից մեի վրեն հետ, դլուխը շուռ կատ, տափը

կալրանի (վայը կընկնի)։ Հրես դու ել տղամարդ ես, ամա կարում չես տաքին դիմանալ, ղոնդիկը բռնել ես, վոր արևով չընկնես։ Ամա են ջահել աղջկերքը, ամա, ըսկի այնումընին (հոդերնին) ա, ուրախ, դվարթ իրանց գործին են։ Ես ա, երկու ահաթից յեսը բանը քուքահ կանեն (կվերջացնեն), Ամանն ել տղի հետ հանդից կդառնա երկսով, յա իրեքով, յեղանը ձեռք կառնեն, դարմանը քամուն կ'տան, մուքը հլա չընկած, ցորենը տուն կբերեն, դարմանը մարաքը կածեն, իրանք ել կդնան ասծու ոլած մի կտոր հացը կուտեն ու կ'քնեն։ Էմի ասա տեսնեմ, ըտավոտից ինչ կլի բրիուն բանած, վատտակած եդ խալխի համար շատ հարկավոր ա, վոր ամաթաթ չունեն, յա չե փափուկ կողինք, վոր միշումը քնեն։ Ա՛յ, հենց ես կարանը, յա չե տանը տափի վրեն, մի խոխը են դցում հու պրանում. դժարն են ա, վոր աչքը հուփ կալան (փակեցին) ընենց դինջ քնում են, վոր ասես դրախտումն ենք։ Ամա ձեր տեղը, են ամարաթներնի միշումը, շատերը կարում չեն թե դշերը քնեն. փափուկ կողնքումը տաղտկատակ են դալի։ Եդ նրա համար ա, վոր դործ չեն շինում, Չանըներին ջահա (նեղություն) չեն տալի, թե ինչ ա, մի քիչ ել ա հոդնեն, անուշ քնի համ տեսնան։ Էմի դու կասես, թե ըսոնք ել եդ ա մինչա (մի հատ) կալ ունեն, ըսոր կպրծնեն, եդուց ելի պարապ են։ Ամա դե դհե չի՛ Ա՛յ, ըսոնց եդ համեցեք, ուրիշ բան շանց տամ։

Այս ասելով Պետին առաջնորդեց ուղեկիցներին դեպի մի ուրիշ կուռ և այդտեղից ցույց տվավ դիմացի տան սրահը, ուր մի քանի կանայք նստած բուրդ էյին դղում։

— Տեսնում ես, ըսոնց կալարանը վերջացել ա. ցորենը խրել են, դարմանը հվաքել. տան իրեք տղամարդից մինն են ա մալի (ապրանքի) հետ, մեկելը ձիանը առած, քրահտարություն ա անում, մինն ել մեշումը տախտակ ա քաշում։ Կնանիքն ել, տեսնում ես, պարապ չեն ըսկի. սանդերքը առաջներին՝ հայահայ (շտապ-շտապ) բուրդ են դղում։ Հրեն, են պառավը ել տեսնում ես, ճխարակի տակին. լուսինը չծեզած՝ նա ընտեղ նստած ճլվըռտացնում ա. հարսներն դղած բրդից քիար քիար (տեսակ-տեսակ) թել ա մանում. բարակը՝ շալի համր, միջնակը՝ դուլբի, մի քիչ հասը կարպետի, չվալի, յա խուրջինի. քոլքի (տականք) թելերն ել չվան են դործում, յա շարիդ (թոկ) հյորում։ Աահնք եդ բաները համ չեն անում։ Ես ա ամեռը վոր դա, ձյունը դուռը կտխի մեր կնանց ներսի դործը ըտենց բաներ ա ըլելու։ Ա՛յ, տեսնում ես, ես չուխեն (կապա) ու շալվարը. սրանց թելը մերս ա մանել, շալը կնիկս ա դործել։ Ենքան պինդ ա, վոր հինդ տարի կդիմանա. ես տոլաղներս (սրնապան) քվորս բանն ա. դուլպաներս իմ պատի

աղջիկն ա արել։ Ուզում եմ ասել, վոր մեր կնանիքը պարապ որ չունին. վարուցանից, հունձ ու կալից, չիր ու բլիթից յեղը, դալիս են բոլոնց բանները։ Հաց ու լվացը, կար ու կարկատանն էլ համեշա (միշտ) կա ու կա։

— Ա՛ Գևոի, բա խի քու բիբու (մորաքրոջ) վեստանը (վոստայն) շանց չես տալի. հրեն էյվանումը յերհանած, — մատնացույց արավ քահանան։

— Դե են ա, տենում ա ըլի, — նկատեց Գևոին։

— Տենում ա, հա, սմա դե մին ասա, թե են ինչ ա ե։

— Ի՞նչն և ինչ, — հարցրեց Գևորոը։

— Այ, են զորբա (զորեղ) սարը, — շարունակեց քահանան, ցույց տալով մեզնից մեկի սրահում կանգնեցրած զորքի վոստայնը. — նրա երդևնքը հինգ զաղ ա, լենքը՝ իրնք։ Են ա վոր գյործնեն ալրծնեն կարպետի երդևնքը տասը զաղ ա դառնալու։ Եղ սրա բիբու տունն ա. չորս տղա ունի, չորս էլ հարս։ Ենու գյորա (քսան այնմ) էլ աստոծ պահած, բոլ թոռներ, տղա ու աղջիկ։ Նրանց կեսը հունձ ու կալով ա ըլած (զբաղված), կեսն էլ հրեն շար են ընկել վեստանի ոջին, կարպետը գործում են։ Մին երկու ամսից յեղը պատրաստ ա ըլելու, հարիր մանեքն էլ ականջիցը կախ։

Կամաորյանը հետաքրքրվեց գորգի գործով և հարցրեց, թե արդյոք չի կարելի մոտ գնալ ու նայել։

— Բա խի չի կարելի, գնանք, — ասաց ուստա Գևոին և առաջ անցավ։

Տան սրահին մոտենալուց, վոստայնի առաջ նստող հարսներն ու աղջիկները վոտի կանգնեցին. նրանցից առաջիննները յերեսները սքողեցին, մինչդեռ վերջիննները հետաքրքիր աչքերով նայում էին յեկողներին։ Գորգի գործին նայելուց առաջ, կամաորյանի ուշադրությունը դրավեցին կանանց տարօրինակ հագուստները, վորոնք, իրենց տեսակով, ներկայացնում էին ազգության մի ուրույն տիպար։ Նրանք, իսկապես, վորոշ ձև չունեին, այլ կազմում էին դանազան տարազների աններդաշնակ մի խառնուրդ։ Կանանց գլուխներն, որինակ, կապված էին վիրակապի նմանությամբ, մինչդեռ բերանները ծածկված էին քնքշակալով, արցախեցվոց պես։ Հագուստներն եր կարճ զերիա, վորի տակից, մոտ յերկու թիզ յերկարությամբ յերևում եր, նուխեցի կանանց հագուկի, կարմիր ու լայն վարտիք. զերիայի վրայից կապած ունեին զոլոց, իսկ նրա վրայից հագած թաթար կանանց բաճկոնակ։ Այդպիսով այդ հագուստը, վոր մեծ մասամբ հին եր և պատառոտուն, առանում եր մի ազգ ձև, վոր ավելի ևս ազգագրում

եր կանանց կաղմվածքը, վորն, առանց այն էլ հեռի յեր գրավչությունից, Նրանց մեջքերնին հասա եր ու տափակ, փորերնին դեպի կուրծքը բարձրացած, դեմքերնին ոդեղ, բերաններն մեծ, իսկ մարքերնին արևահար։ Կանանց ձևով հագած էին և աղջիկները, միայն այն դանազանությամբ, վոր սրանց յերեսները բաց էին և միայն գլուխները ծածկված հասարակ չեթե աղլուխով։

Մինչդեռ Կամսարյանը գննում եր կանանց ոդեղ արտաքինը և հիշում Արովյանի «Վերք»-ում կարդացած նկարագիրը հայ գեղջկուհու մասին, ուսում Պետին մոտեցավ վոստայնին, բացատրություններ տվավ նրա կաղմությանն, թելերը հինելու, գործը գործելու և այն կտրելու, կամ վոստայնի վրայից հանելու մասին։ Ապա դառնալով հարսներին ասաց։

— Բի խոշ յեք կաղնել, հասեցեք բան արեք. ես գնում ղրը ճանապարհ ա, ուշում ա տեննալ վինց եք կարգեռ գործում։

Կանայք խիուչն իրենց տեղերը բռնեցին և գուլնդուչն թելերը նորեն ձեռք առնելով, սկսան արագ արագ գործել՝ յուրաքանչյուրն յուր բաժին հինվածքի վրա։

Այս անգամ արդեն Պետրոսը դիտում եր գեղջկուհիների գործը ճշմարիտ հետաքրքրությամբ, և զարմանում, թե ինչպես նրանք, առանց առաջները վորևե նկար ունենալու, թելերի այդ սարդ հինվածքի վրա հետդհետե հանում էին կանոնավոր գծերով գեղեցիկ նկարներ, կամ թե ինչպես մի քանի գուլդ ձեռքերի դատարտ գործվածքը վերջն առեղծում եր մի ամբողջ նկար։

— Ա՛յ, սա լավ բան եր, սրան հավանեցի, — ասաց Կամսարյանը, յերբ նրանք հեռացան գործ գործողներից։

— Ա՛, մեր վոր բանը չի լավ ե՞ղ հլա ինչ ես տեհել, — պատճեցավ տեր հայրը։

Այս խոսքի վրա նրանք անցնում էին մի ուրիշ տան բակով, ուր ընտանիքի մայրը և յուր յերեխաները զբաղված էին մի տարօրինակ աշխատությամբ։

Բակի մի անկյունում տղաներից յերկուսը, մերկ վոտքերով ու սրունքներով կռիվ էին տալիս մի ինչ վոր սև դանդված, վորի վրա յերբորդը, հետդհետե ցրում եր գոմաղբի ավելցուկը։ Մի փոքր հեռու, մայրը նույն դանդվածից մի մասն առանձին առած, մեծ ջանքով հունցում եր, իսկ միջահասակ մի աղջիկ, կռնքը սոթոած, այդ հունցվող մասից շինում եր բլիթներ և ուժով դարկում տան արևկողմեան պատին։ Այնպես վոր կրաշաղախով ծեփված այդ պատը, հետդհետե սևուկ բլիթներով ծածկվելով, առնում եր մի շատ ազատկի կերպարանք։

— Այդ ինչ են անում, — հարցրեց Կամսարյանը։

— Ճան են շինելում, — պատասխանեց տանուտերը։

— Ճան։

— Հա։

— Ի՞նչ բան է ցանը։

— Ճան չես դինալի, են վոր ասոր մեր ոջախ կվառեր։

— Ճանը սրանք աթարին են ասում. հրեն են, վոր ընդի ամբյուղ աված (դիզված) ա, — բացատրեց տեր հայրը, ցույց տալով Համասրյանին դիմացի բակում դանվող քակորի կույտը։

— Ինչից են պատրաստում, — հետաքրքրվեց Պետրոսը։

— Չես տենում ինչից ա, — հարցրեց քահանան։

— Տեսնում եմ միայն սև-կանաչ դույնի մի ցեխ. կարծեմ մեջը խառնված է տավարի...

— Վոչ թե խառնված ա, հենց ինքը տեղն ու տեղը տավարի Թրիք ա, — ընդհատեց քահանան և ապա կամենալով մի գիտական ծառայություն անել յերիտասարդին, սկսավ բացատրել, թե ինչպես են պատրաստում աթարը։ — Ես վոր կա ամենից լավ տեսակն ա, չուն տավարի անխառն Թրիք ա։ Սրան ես ա սրճենց թազա-թազա (Թարմ) հվաքում են, հետը դարման խառնում ու պատի վրեն բլիթում։ Ես վոր չուրանա, ընենց ա երիլու, վոնց վոր խաղալը (չոր տերև)։ Ամա են մեկելը, վոր ընդի դարսած ա, ըսենց չեն շինում։ Ցեփոր ձմեռը տավարը տանն ա ըլում, կյուղումը (գոմումը) բոլ (առատ) Թրքում ա. են Թրիքը հվաքում են դյուս բերում հայաթին (բակ) ածում, նրա հետ էլ շատ վախտ խառնում են ձիան Թրիք, յա վոչխարի կտիտ. ամա դե լավը են ա, վոր ըսկի չխառնեն, չուն նրանք լավ չեն երում։ Ցետո եդ հայաթի մեջ ածած Թրիքը մին ղոլից կոխ են տալի — մարդ Թե անասուն, մի ղոլից էլ վրեն ավելացնում։ Դարունքին յերբ վոր տավարը դյուս ա գալի չոլ, հայաթի Թրիքը շատ կոխ տալուց չուրացած ու տափակած ա ըլում։ Են ա, սկսում են բահով կտրիլ ու մեկել յերեսով արիվումը շարիլ։ Ցեփոր լավ չուրանում ա, սկսում են դարսիլ, դեղ շինիլ։ Վերջը եդ դեղի չորս ղոլը ցեխով ծեփում են, վոր անձրևից չքրջվի, յա արևից ցրիվ չգա։ Ում աթար էլ, վոր գարունքին չուրացած չի ըլում, նա էլ պահում ա, ամառը կարում։ Ըսենցով ամեն մարդ իրա վառելիքի պատրաստուԹինը տեսնում ա, վոր ձմեռը նեղուԹին չքաշի։

— Ցավ բոլոր տարին, ուրեմն դուք այդ դարշահոտ քամկորն եք այրում, — հարցրեց համասրյանը զզվանքից յերեսը ԹԹվացնելով։

— Ել խի՞ ա դարշահոտ. դու վոր սվոր չես, քե դեռ ա Թվում. ամա մեզ համար ամեթ չըլի տուրը, հըլա մի քիչ էլ անուշահոտ ա, — ասաց քահանան ու ծիծաղեց։

Կամսարյանի դեմքին խաղաց մի ժպիտ, որ արտահայտում էր խոր արհամարհանք։ Տեր-Հայրը, սակայն չըմբռնեց այդ ժպիտի նշանակությունը. մինչդեռ ուստա Պետին չկարողացավ լռել.

— Աղա, մեղ վրա տենում եմ, ծիծաղում ես. դե որ գիտես, մի ասա տեսնեմ վիճաց անենք. մեր հացն ընչով թխենք. կերակուրն ընչով եփենք, յա տունը ընչով տաքացնենք։

— Ինչով և յոխում կամ տաքացնում մալահանը։

— Փետուր։

— Դուք էլ փայտ վառեցեք։

— Բա որ փետ չունեինք։

— Ինչու՞ նա ունի։

— Մեջան նրանից մատ ա, մեղանից հեռու. համ էլ նրանք հարուստ են, մենք աղքատ ենք փողը որ պտի տանք փետի, տալիս ենք մի ուրիշ պակասութենի. որինակ մի ձի ենք առնում, որ մեղ համար բան անի, յա կով ենք ձեռք բերում, որ հրա կաթով բերանցը պահենք. յա չէ շորի, փալասի ենք տալի, որ մեր տանեցոց ակլորութինը ծածկենք. պակասութին շատ, յես վեր միննասամ ես, տավարի թրիքն էլ, որ ուրիշ դեղերում տան բանջին կիտում են, շենը հատացնում, մենք փետ ենք շինում, երում, բանից դեյրաթ (խնայողություն) անելին, յա նամուս պահելին խոի չես հավանում։

— Դա վոչ դեյրաթ անիլ և և վոչ նամուս պահիլ, այլ ուղղակի ծուլություն։ Ոգովում եք այն բանից, ինչ որ ունիք, ինչ որ պատրաստ կա, թեկուզ այդ պատրաստը լինի՝ կեղտ կամ տգեղանություն։

— Ուրեմն, քու ասիլով մենք ծյուլ մարդիկ ենք, էլի։

— Հա, ծուլ եք, ծուլ որ չլինեիք հիմա այս սարերը ծառերով ծածկել էիք, անտառը բերել, ձեզ մոտեցրել։ Ժամանակով յերեխ այս լանջերը ծածկված են յեղել ծառերով, ձեր պապերը նրանց անխնա կոտորել են, դուք էլ ահա, յեկել մի շիվ չեք թողնում, ճարնելդ կտրած, իհարկե, քանոր պիտի այրեք, ուրիշ ինչ անեք։

— Եդ քու ասիլով քանորը, որ փիս բան ա,— մեջ մտավ քահանան,— բա խոի աստվածաշնչումը մարգարեն ասում է՝ «Հան, յեսու քեղ քանոր արջառս... և նովավ արասցես դնաց քո...» Ուրեմն, աստծ էլ ա հրամայում, որ հացը քանորով թխենք։

— Եհ, տեր-հայր, դու էլ մի քանի բան ես բերան արել, տեղի անտեղի խարջում ես... խոսք եմ ասում, խոսքս լսիր,— նկատեց Կամսարյանը տաքանալով։

— Վճիռս թե մի քանի բան... ուզում ես սաղ Դավթի սաղմոսը, յա Առակաց դիրքը, յա Ժողովողին դլխից ինչ կլի տակը անդիր ասեմ, մդյար դու տեր Վանուն ընչիք տեղ ես դրել։

Կամաբրյանն այս անդամ նուչնիկ ուշադրություն չդարձրեց քահանայի խոսքերին և դառնալով Պետուն ասաց.

— Այո, բարեկամ, այս ժողովուրդը ծուլ ժողովուրդ է. նա վոր ծուլ չլինի, կաշխատի, մարդավարի կապրի. սա կյանք չե, վոր նա վարում է. սա դյուղ չե, ուր նա ապրում է. նայիր ե. մի կոտրված ձեռք չի գտնվել, այս ամբողջ շենի մեջ, վոր մի տեղ, գոնե մի հատ ծառ տնկե... սա խայտառակություն չե։

Այս ասելով նա դարձավ տանուտերին և ցանկություն հայտնեց տուն վերադառնալու, վորովհետև մանր դալուց արդեն հոգնել եր։ Քահանան ու Պետին բաժանվեցին նրանցից, իսկ տանուտերն յուր հյուրին առաջնորդեց դեպի տուն։

ԺԲ

Արևը մայր մտնելու մոտ, ծովակի կողմից, սկսել եր փչել դով քամի, վորին դյուղացիք սպասում էին ժամեժամ։ Նրա անելիք ծառայությունը մեծ եր։—Ցորենի խուրձերը կալսել, հասկերը տրորել էին, այդ քամին պիտի դար, վոր դարմանը դառեր։ Ցեվ ահա կալերի վրա, վորոնց մեծ մասը դանվում էին կտուրներին, սկսվել եր մեծ շարժում։ Ամեն տեղ ձեռքերը գործում էին ժրությամբ, յեղանները բարձրանում ու իջնում էին և իրենց հետ միասին ադի մեջ մրրկում հարդի փոշեխառն վիժակներ։ Դրանցից քամին դարմանը խլելով տանում, փռում եր կալի յեզերքին, իսկ ցորենը նորեն դեպին իջնելով, կաղմում եր մաքուր հատիկների կույտեր։

Կալերում սկսված այդ աշխատանքը դյուղի ոդը տոդորել եր դարմանի մղմղոց փոշիով։ Ցերիտասարդ Կամաբրյանը մի քանի տեղերից անցավ, դրեթե փախչելով, վորպեսզի ոդում փոթորկվող այդ փոշիից աղատե թե թոքերը և թե հագուստը։ Ցերը նա տուն հասավ, մի առանձին հաճույքյամբ նայեց սրահում դրված ինքնայեռին, վոր հակառակ սպասածին, բավական մաքուր եր և վորի մեջ ջուրը յեռում եր արդեն։ Տան տիկինը սպասում եր ամուսնուն, վոր սա գա թեյը պատրաստելու, ըստ վորում դյուղերում այդ վոչ սովորական զործողությունը կինը յուր ուժից և իրավունքից վեր բան և համարում։

Թեյ խմելու մեծ ցանկությունը հիշեցրեց Կամաբրյանին ճաշի պատրաստության բոլոր պատմությունը և դգուշացրեց նրան միջոցներ ձեռք առնել, մաքուր թեյ խմել կարենալու համար։

— Ցնս լավ Թեյ ունիմ, Թողնք նրանից դնեմ, — ասաց յերիտասարդը և առնելով Թեյնոցը, վոր հենց նոր տանուտերը տարել էր կնոջից, յուր ձեռքով լվացավ, մաքրեց հին կեղտերից և ապա տուն մտնելով, հանեց պայուսակից յուր Թանգանոց Թեյը, մի քանի պաղունց դրավ Թեյնոցի մեջ, յեռման ջրով մի անգամ վողողեց և ապա նորեն վրան ջուր լեցնելով, դրավ ինքնաեռի վրա։

— Եդ իմաձ ողողիր, չայի խամ կորսըվավ, — նկատեց տանուտերը։

— Չե, չի կորչիլ. չայի վրա մի անգամ պետք է քիչ ջուր լցնել, Թափել, վոր փոշիից մաքրվի և ապա նորից լցնել, — բացատրեց Կամսարյանը։

— Մե խնա պրիստավ եկավ մեր գեղ, մեզի գնդաղ եղավ. ինոր չայ ուղեցի քեզի պես վլամ (լվամ) են չըԹորդեց, ասավ խարար կեղնի։

— Պրիստավը չի հասկացել, — կարճ կտրեց Կամսարյանը։

Թեյը պատրաստելուց հետո, յերիտասարդն յուր ձեռքով լվացավ նաև բաժակները ու պնակները և սեփական սրբիչով սրբեց։ Ապա Թեյն ածելով. բաժակներից մինը դրավ տանուտերի և մյուսն յուր առաջ. Հետո հանեց նուշպես մաքուր քսակից շաքար և դրավ մեջտեղ։

Տանուտերը յուր բաժակն առնելով մի ումպ ճաշակեց և բացականչեց.

— Ոխ՞այ, ես ինչ անուշ ա. իմաձ մեր չայ խանց խոտ չի տալում. Երևում ա, մենք շինել չենք գիտնա։

— Չե, վոչ Թե շինել չգիտեք, այլ Թե ձեր չայը լավ տեսակից չի լինում. լավ տեսակը Թանգ է։

— Ծա, իդենց ա, — համաձայնվեց տանուտերը։

Բայց ինչպես յերևաց, վերջինս չար աչք եր ունեցել. յերիտասարդը դնե բաժակը բերանը չեր տարել, վոր նոր բարձրացած մի քամի, հարևան կալի կողմից, բերավ մանրամաղ դարմանի փոշին ու տանուտերի որահը լցրեց։ Պետրոսն իսկույն փակեց աչքերը փոշիից նրանց ազատելու համար։ Ապա յերբ քամին անցավ, առաջին բանը, վոր նա տեսավ, յուր Թեյի բաժակն եր, վոր ամբողջովին ծածկվել եր դարմանով ու փոշիով։

— Ծու, ի՞նչ խայտառակություն, — շշնջաց նա ինքն իրեն և բաժակն առնելով, Թեյը Թափեց գետին։

— Եդ իմաձ դեն ածիր. դարման ա, բան չկա՝ ախ, ձեռքով դուս խանեմ, համմենը կիամբղի, — ասաց տանուտերը և մատները խրելով յուր բաժակի մեջ սկսավ դարմանի փշուրները հանել և ապա խմել։

Կամաւորականը թթւած դէմքով նորէն լվացաւ բաժակը, նորէն լցրեց և այս անգամ արդէն զգուշութեան համար ալնակը դրաւ բաժակի քերանին, վորպեսզի մինչև առաւիլը փոշի-բան չընկնէ մէջը։

— Դժվար է, շատ դժվար է այստեղ ապրել, — նկատեց Կամաւորականը գլուխը շարժելով։

— Ա՜խ, քե նման աղա մարդու համար դժար ա, ամա մեղ համար խեղճ ա, — հարեց տանուտէրը և խոսակցութիւնը այս անգամ սրանով վերջացավ։

Մուրթը կոխելուց տանուտէրը կամենում եր ընթրիքի պատրաստութիւն տեսնել, բայց Գեարոսը ասաց, վոր չի պիտի ընթրէ, միայն խնդրեց, վոր իրեն քնելու տեղ ցույց տա, վորովհետև շատ հոգնած է և կամենում է հանգստանալ։

Տանուտէրն առաջարկեց քնել նեբսի տանը, ասելով վոր դրսում կարող է մրսել, վորովհետև դիշերը ծովի կողմից յերբեմն փչում է ցուրտ քամի։

Գեարոսն համաձայնվեց և նեբս գնաց, վոր տեսնէ թե վիճքան է այդ տունը հարմար, դնէ մի դիշեր քնելու համար։ Բայց ինչպես յերևկով, նուլնպես և այժմ, այդտեղ բուրում եր խոնավութեան ու ծուխի անախորժ հոտ։

— Այստեղ չեմ քնիլ, — ասաց նա և դուրս յեկավ։

— Ես մե սթախն էլ տես, քե խամխես, խստեղ քնա, — ասաց տանուտէրը և բաց արավ սրահի վրա գտնվող մի ուրիշ դուռ։

Գեարոսը նեբս մտավ։ Դա սենյակի նման բան եր, մինչից ցածր ցանկով կտրված։ Առաջին մասը փոքր ի շատե մաքուր եր և պատի տակն ուներ տախտակաշեն մի թախտ։ Միայն քե այստեղից էլ փչում եր Քրիքի չափազանց սուր հոտ։

— Այս հոտը վորտեղից է, — հարցրեց Գեարոսը քիթը վեր քաշելով։

— Ես մեկել յանը տավարի գոմն ա. խոտը նրանից ա. ամա տավար խստեղ չի, են դրսի յանն ա. մինակ ձին ա կապած։

— Դուք, ուրեմն, այստեղ նստում կամ քնում եք։

— Որամանք ես. ձմեռը շատ փայ եսոր մեջ ենք նստելում յա քնելում. ընդուր վոր տավար մեջն ա ըլում, եղ պատճառի էլ տաք ա ըլում.

Գեարոսը գլուխը շարժեց և դուրս գնաց։

— Այստեղ լավ է, այստեղ կքնեմ, — ասաց նա ցույց տալով սրահում դրած թախտը։

— Կամք խրամանքիդ ա, — պատասխանեց տանուտէրը և հրամայեց Սալբիին անկողին պատրաստել։

Մինչդեռ յերիտասարդին պաշարել եր այն միաքը, թե ինչ անկողին պիտի բերեն իրեն և թե արդյոք ինքը կարող պիտի լինի քնել նրա մեջ, տանտիկինը դուրս հանեց դուշակով կապած մի կապոց, որի մեջ խնամքով պահված եր մի ձեռք մաքուր անկողին։ Նա բացավ կապոցը, անկողինը պատրաստեց և հեռացավ։

Գնդապետը անկողնի մաքրությունը տեսնելով, հանգստացավ։ Բայց անհայտ անմաքրությունից ազատ լինելու համար ել նա կարևոր համարեց հանել պայուսակից յերկու մաքուր սավան, վարոնցից մինը փռեց ներքնակի վրա, իսկ մյուսը՝ վերմակի տակից։ Ցերը տանուտերը զրպարտի դիշերը մաղթելով հեռացավ, Գնդապետն խնդուն հանվեց ու պառկեց։ Հոգնածությունն ու դող դիշերը անուշ քուն բերին յերիտասարդի աչքերին։

Հետևյալ առավոտ նա աչքերը բացավ արշալուսից առաջ։ Ցավ վարվհետև այդ ժամին տանուտերի ամբողջ տունը վոտքի վրա յեր, ուստի ինքն ևս շտապով հագնվեցավ։ Կամենալով լվացվել աղբյուրի ոտրը ջրով, նա յուր հետ առավ լվացման պարագաները և հարցնելով աղբյուրի տեղն ու ճանապարհը, ուղղվեցավ այն կողմը։

Ուղին, վոր տանում եր դեպի ջուրը, անցնում եր մի թմբից, վորի առաջ այդ վայրկենին բացվում եր բնության դեղանկար մի պատկեր, վորի հանդիսարանը Գեղամա ծովակն եր։ Այդտեղից նայելուց յերևում եր նրա ընդարձակ դաշտը, վոր կարծես շրջակա լեռները յեին մղելով, ձգվում, տարածվում եր դեպի արևելյան հարավ, փայլելով առավոտյան վճիտ յերկնքի տակ գորշ-կապույտ դույնով։ Թեթև միանուններները հազիվ շարժում եյին խաղաղ մակերևույթը, վոր հեռվից թվում եր անշարժ ու միատարր։ Բանի դեռ արևելքը չեր բացավառում, յերկնքի վրա լողացող ամպերից, նրա հատանքներում անդրադառնում եյին սպիտակ ու մոխրագույն շերտեր։ Բայց յերբ նա շառագունեց, ծովակն սկսավ փոխել յուր պատկերը։ Շրջակա ափերը փայլփլում եյին վոսկու պես, մինչդեռ խոր հարավը հետզհետե ներկվում եր քրքումի դույնով։ Մի փոքր ևս, և ահա արևի սկավառակը փայլեց Մարալ-Դաղի կանաչազուրկ կատարին և յուր առաջին ճառագայթներով սկսավ վոսկեզոծել լճի արևմուտքը բռնող Զիչեկլիի և հարավը փակող Ցուչքափելերի լանջերը։ Այդ տեղերից հետզհետե նրա շողերն իջնելով վառում եյին Սևանի մենավոր կղզին և ապա ծովակի ընդարձակ մակերևույթը, փոխելով նրա գեղածուփ մկանունքները վոսկու կամ արծաթի, և փայլեցնելով նրանց բյուր ադամանդ աչերով։

Ցերկար դիտելով այդ գրավիչ տեսարանը, Համաբյանը հանկարծ չկա նայից դեպի դյուղը, տեսավ նրա գծուծ և տխուր պատկերը, հիշեց այն ամենը, ինչ վոր մի որում Նա այդտեղ տեսել ու քննել էր և նրա սրտից ակամա դուրս թռավ մի հառաչանք։

— Ա՛խ, չեթե կարողանայի, չեթե հնարավոր լիներ...

Այդ նրա բարի, դաղափարական «չեսց»-ի ձայնն էր, վոր ընութեյան հրաշափառ տեսարանի առաջ դարձյալ իշխեց հնչելու... Բայց անձնասիրութեյան «չեսց»-ն ևս քնած չէր այդ ժամանակ. Նա էլ յուր կողմից ջընջում էր յերիտասարդի հլու ականջին.

— Ի հարկե, չես կարող, ի հարկե, անհնար է... այս ժողովրդի կյանքն ու վիճակը քսանյերեք դար առաջ այսպես և նկարագրել Քսենոփոնը, քսան յերեք դար հետո էլի այսպես կնկարագրե մի ուրիշ Քսենոփոն... այստեղ դու վոչինչ փոխել չես կարող։

Ըստ յերևույթին այդ «չեսց»-ին էր վիճակված տանել հաղթութեյունը։ Վորովհետև, յերբ յերիտասարդն աղբյուրին հասնելով տեսավ նրա վիճակը,— մի հորդառատ ու վճիտ աղբյուր, վոր մարդկանց ծարավը հագեցնելու համար սողում, անցնում էր Այծենիասարի, ձվ դիտե քանի թագուն խորշերից և հասնելով այստեղ, փոխանակ սրբատաշ ավազանում ցայտելու, անարդ ու անպատիվ գետահեռում էր ընդարձակ տիղմի և անասունների արտաթորութեյանց միջով — նա դյուղը շարժեց և ասաց.

— Վոչ, անկարելի չե, մեր ուժերից վեր է... դա միայն ցնորք է և բանդագուշանք. չես իղուր եմ այստեղ ժամավաճառ լինում։

Այսպիսի վորոշման գալուց հետո, այսուամենայնիվ, աղբյուրի ականակիտ վիժակը հրապուրեց յերիտասարդին։ Նա տիղմի մեջ ընկած քարերը կոխելով մոտեցավ սառ ջրին, առատորեն լվացվեցավ և յերեսը սրբելով, վերադարձավ դյուղը։

Ինքնայերը դարձյալ յեռում էր։ Առաջին որվա յեղանակով Գևորսը պատրաստեց քեյֆը և հրավիրելով տանուտերին, սկսան խմել և դրա հետ միասին էլ վայելել լոշից, պանրից և խաշած ձուերից բաղկացած մի նախաճաշ։ Դրանից հետո տանուտերը հայտնեց հյուրին, վոր ինքը մի քանի ժամով մինակ պիտի ձգե նրան, վորովհետև հանդուեցն անհրաժեշտ գործ ունի։

— Իսկ յես կամենում եմ գնալ Սևանը տեսնել և հենց այսոր էլ վերադառնալ Դիլիջան,— ասաց յերիտասարդը, ինքն էլ զարմանալով, վոր կարողացավ այդպես շուտ յուր վորոշումը հայտնել ուրիշին։

— Ես մի որվա մեջ Սևան կերթալ, դառնալ ու հասիեն մին էլ Դիլիջան հիշնել դժվար ա. յես քե իննենց եմ խեյրաթ (խորհուրդ)

տալուս, վոր վանքն դառնաս, դիշերն հանցնես մեր կուշտ, յեդո ին բաշտան (առավոտանց) Սիմոնովկեն տրոյկը (սայլակ) առըպրինք նստես եթաս։

— Շատ լավ, այդպես կանենք,— համաձայնվեց յերիտասարդը, ուրախանալով վոր դործն այդպես հեշտ և վերջանում։ Հետո ուղեց իմանալ թե ինչով պետք է դյուղից դնալ մինչև Սևան։

— Իսանդից ձի կվեծնես մինչի են ճոճ թումբը, վոր մեր հասկն և. ինոր մոտ կհիշնաս ծովի ղրադ, ինտեղից թյուֆենկով ձեն կըտաս. դյամըչին կկյա, կառնի կատնի։

— Ձիու հետ միասին։

— Չե, ձին կթողնես ծովի ղրադ։

Կամսարյանը խնդրեց, վոր տանուտերը մնից յելնելուց առաջ, վարձն յուր համար ձի. այլ և մի ընկեր, վոր առաջնորդե իրեն մինչև կղզու հանդիպակաց ափը, թեպետ և այդ տարածությունը տասը վերստից ավելի չեր։

Կես ժամից հետո ամեն ինչ պատրաստ եր։ Յերիտասարդը թամբել տվավ ձին, յուր հետ բերած նոր թամբով, վոր շատ դեղեցիկ եր և դրավից մոտ յեղող դյուղացիների հիացմունքը։ Ապա մի ուսով կախեց դաշտային մեծիկ դիտակը, իսկ մյուսովից յուր նոր, դեղեցիկ հրացանը, վոր առաջին անդամն եր պատյանից հանում և հետո ձին աշտանակելով առաջ անցավ։ Առաջնորդ դյուղացին, վոր միևնույն ժամանակ ձիու տերն եր, դնալիք ճանապարհը ցույց տալուց հետո, հետևից «աղին» վոտքով։

ԺԳ

Յերկար չտևեց ճանապարհորդությունը, թեպետ կամսարյանը կցանկանար, վոր նա մի քիչ յերկարեր։ Վարժվեցավ յուր նոր թամբի և աշխույժ ձիու վրա նա այնքան եր իրեն յերջանիկ զդում և փայլուն հրացանը, վոր ուսից կախած եր, այնպիսի մի հարդարժան առավելություն եր տալիս իրեն, վոր նրան թվում եր, թե այդպիսի տրամադրությամբ ու պատրաստությամբ ուղևորություն կատարած ժամանակ, ինքն հոդվով ու սրտով ավելի յև ամենաննում, քան թե եր իսկապես, կամ ընդունակ դառնում կատարելու ամեն դործերը, վորոնց մասին նա առաջ այնքան շատ յերազում եր, իսկ այժմ վախենում մինչև իսկ մտածել... Յեթե յերիտասարդի այդ տրամադրության վրա ավելացնենք նաև հրաշալի յեղանակը, վորն արևի թեթև ամպերով ոքոդված լինելու պատճառով, դով եր ու դյուրեկան, այլև ճանապարհի հանդստությունը, ըստ վորում խճուղին վրչ խոչ ուներ վրչ խութ, նաև նրանց և լճակի անուշ հովերը, վորոնք իրենց

սույլի հետ բերում էին նաև դաշտային թռչունների ընկերկի յերգերի ձայները և վերջապես լճի սիրուն տեսարանը, նրա ալիքների ափնածիր ծփանքը, վորոնք հաճախ գալիս, վողողում էին խճուղու յեզերքն ու արահետը, այն ժամանակ հասկանալի կլինի թե ինչու կամաթյանը ցանկանում եր, վոր յուր ճանապարհը յերկարեր։ Բայց չնայելով այդ ցանկությանն, նա հասավ «ճամ թմբին» ավելի վաղ, քան սպասում եր։

Անցնելով այդ թումբն յեզերող ճանապարհը, նա, առաջնորդի ցուցմամբ, իջավ լճափը և մոտեցավ խճավազի մեջ ցցված ժայռերի մի շարի, վոր համարվում եր նավամատույց։ Լճափին կային նաև ուրիշ ուխտավորներ, վորոնք սպասում էին կղզուց գալիք նավակին։ Վորովհետև այդ կեսում, (չընայելով, վոր նա ավելի մոտ եր կղզուն, ուստի և ավելի էլ յեկվորներ եր գրավում) չկային վարձու նավակներ, ըստ վորում տեղը ամայի յեր և բնակություններից հեռու։ յեկողը պետք և հրացանով նշան տար, վորպեսզի կղզուց նավակ բերեին։ Բայց վորովհետև ուխտավորները հրացան չունեին, ուստի սպասում էին, վոր կամ կղզուց նշմարվին և կամ բաղդը իրենց մի հրացանավոր հասցնեն։ Վերջին ակնկալությունը կատարված եր։ Կամաթյանն շտապեց փորձել յուր յերկփողյա ամերիկականի զորությունը, դնելով նրա մեջ յերկու փամփուշտ և արձակելով նախ՝ աջ և ապա՝ ձախ փողերից։ Հրացանի ուժն, արդարև սաստիկ եր և վորոտն ահավոր։ Կղզեցիներն, անշուշտ, իմացան, վոր այդ ձայնը աղքատ դյուղացու հրացանի ձայն չե, վորովհետև յերկրորդ հարվածից հետո խկույն կղզու նավամատույցի վրա բուսան յերեք հոգի, վորոնք մանելով այնտեղ կապած նավակներից մինը, սկսան առաջանալ դեպի յեկվորները։

— Կըտեննա, բարեկամ, — խոսեց ուխտավորներից մինը յուր ընկերոջ հետ, քյասիբն ընդու խամար ա կորում, վոր քյասիբ ա։ Ես ճամ մարդ յեկած չըհյեր մեզի սաղ որ կթորգին ըստեղ... Ես խոքևորի արամբք ա։

— Ո՞վ և մեղավոր, վոր դուք հրացան չունեք, վորպեսզի նշան տաք, — մեջ մտավ կամաթյանը, տեսնելով վոր գյուղացին անիրավ տեղն և տրտնջում։

— Հրացան էլ ըլնի, գեղցուն էլի բանի տեղ չեն դնի, — առարկեց ուխտավորը։

— Ինչու։

— Ընդուր վոր գեղցին բան չունի նրանց տալու։

— Եհ, ամեն տեղ այդպես և, ով չի տալիս, նա չի էլ ստանում։

— Համմեն տեղն ուրիշ ա, վանքն ուրիշ. ես խոքևոր տուն ա, բյությունն էլ (բոլորը) իսաեղ խավասար չին, վոչ ճոճ պետք ա ըլնի, վոչ պատիկ։

— Բայց տեսնում ես վոր կա։

— Ես, տենում եմ. իմանլ չեմ տենում, ընդուր խամար էլ ասում եմ, ես վիս բան ա, ասծուն տուրեկան չի։

— Բայց սխալ առանց տալու էլ չի լինելի։ Ցեքե չես չաամ, դու չաաս, մեկելը չաա, վանքն ինչվի կառավարվի։

— Առաված խոքին լուսավորի խայոց թաղավորների, ենքանց մալ ու դովլաթ չին թողե վանքի խամար, ենքան մյուլքեր, գեղեր, վոր վանքն էլ ուսի, խայի քյասիբն էլ, ըսկի չի վերջնա մինչ դալուսան Քրիստոսի։ Համա լինչ անես, վոր քյասիբին հնչ հիշիզոզ չկա. ով վոր դոս ունի, ին առնում առնում ա։ Դյուն, երևում ա, դարիբ մարդ ես, վանքի ավհալ (դրություն) չես դիտա. սմա մենք մտոնիկ ենք. համմեն բանն էլ մեր հառեչն ա։ Իսաեղ մի սարիավոզ կա, քառասուն տարի ա վանքը կոխած ուտում ա. հնչ մինն էլ ա չասում՝ եդ իմանլ ես անում։ Ճոճ ուխտավոր, վոր գալում ա, պաշտում, պատվում ա, սմա քյասիբին՝ հնչ դսի տուննեն ներս էլ չի թորդում...։

Կամաբյանը, վոր մի առանձին ջերմեռանդությամբ եր մոտեցել Սևանին և սրտատրոփ ոպասում եր տեսնել ու համբուրել պատմական սրբավայրերը, ծանոթ չլինելով դյուղացիների բամբասասիրության, հալած յուղի տեղ ընդունեց դեղձուկի բոլոր խոսքերը։ Ցեվ համոզվելով, վոր, ուրեմն, հայոց սրբավայրերում իսկ անկարելի չի հանդիպել մելիքթարական յերևույթի, ճշմարտապես տխրեց և այդպես նախապաշարված էլ վոտք դրավ անապատ ու հնամեն նավակը, վոր արդեն մոտեցել եր ափին։

Ցերբ բոլոր այդտեղ դտնվողները, բացի ձիապանից, տեղավորվեցան նավակում, յերկու հուժկու թիավարներ սկսան առաջ տանել ծանրաշարժ մակույկը, իսկ յերրորդը դեկը բռնեց։

Հեռվից կղզու տեսքը դրավիչ վոչինչ չուներ։ Նա տխուր եր և մոայլ։ Արևը, կարծես, այրել, մրկել եր նրան։ Կանաչ ծառերի խումբը, վոր յերևում եր մասամբ յեղերքին և մասամբ անշուք շինությունների յեռեվում, այլև բարիների շարքը, վոր պատում եր կղզու հյուսիսային ջրափը, չէին մեղմում նրա կոշտացած պատկերը։ Կամաբյանին թվում եր, թե խիստ անհյուրընկալ մի տեղ է դա, ուր դարձյալ ոչխի հրե ծանր հիասթափություն։

Բայց յերբ նավակը մոտեցավ ափին և յերիտասարդը վոտք կոխեց գետին, տեսավ, վոր հեռվից չոր ու ցամաք և հոգիով բըրբակի չափ յերևացող այդ թումբը կանաչազարդ և բավական ըն-

դարձակ մի դեղավայր է, հինավուրց ուխտերով սրկագործված։ Կղզու դիրքը, հարավ արևմտյան կողմից, ներկայացնում էր լայնադիր մի տափարակ, սիրուն կանաչով ծածկված։ Այդ տափարակի վրա, լճակից քիչ հեռու, կարգով շինված էին ուխտավորների սենյակներ, որոնք իրենց կեսը դեպի հարավ, իսկ կեսը՝ արևմուտ ունեցած դիրքով, ներկայացնում էին կղզու ներսը փակող մի ուղիղ անկյուն և ծառայում այդ կողմից պաշտպանող պատվարի տեղ։ Այդ շինության մեջ բացված դռնից մտնելուց, կամարյանի առաջ բացվեցավ մի ընդարձակ ընդհանուր բակ, որի արևմտյան և հյուսիսային կողմը յերկարանալով ձգվում էր հեռու, մինչև լճափը և փակվում բարեհների և ուխտների շարքերով։ Իսկ հարավ-արևելյանը կազմում էր վանքի բուն բակը, հովանավորված հաստաբուն և սովերաշատ ուխտերով։ Այս մասի շրջունակության վրա գտնվում էին ս. Աստվածածնի սաղմոսեն յեկեղեցին և միաբանության բազմաթիվ խցերն ու կացարանները, իսկ դրանց յեռևից անմիջապես բարձրացող և բուն կղզին ներկայացնող բլրի վրա՝ Սևանի ուրիշ մատուռները։

Հենց վանքի բակում միաբանության անդամներից յերկու աբեղաներ սիրով ընդունեցին Թե յերիտասարդին և Թե մյուս ուխտավորներին և քաղաքավար հարձուփորձից հետո իմանալով, վոր առաջինը շուտ պիտի վերադառնա, իսկ վերջինները պիտի դիշերեն, հրամայեցին փակակալին սենյակ հատկացնել դյուղացիներին և նրանց հարկ յեղած պետքերը հոգալ, իսկ յերիտասարդին իրենց հետ առնելով սկսան պատեցնել կղզին։

Միաբանների քաղցր վարմունքը զեղջուկ ուխտավորների հետ մտածության առիթ տվին յերիտասարդին։ — Արդյոք հոգևոր հայրերը յուր՝ իբրև զարգացած հյուրի ներկայությամբ եր, վոր այդպես քաղցր ընդունեցին դյուղացիներին, Թե նրանք հենց միշտ այդպես էլ ընդունում են նրանց և, սակայն, դյուղացիները սիրում են զուր տեղը բամբասել։ Ցերթե այս վերջին յենթադրությունը ճիշտ եր, ապա պետք եր կարծել, վոր հայ դյուղացին, ուրիշ շատ Թերությունների հետ միասին ունի, նաև, սուտ հակումներ։

Ցերբ այս մասին հարց տվավ Համամարյանը աբեղաներին, նրանցից մինը պատասխանեց.

— Ծավար ու դիշին նկուղներում, ուր վոր արև չե Թափանցում, վխտում են միշտ ղեռուներ։ Դյուղերում այնպիսի խավար և սիրում և այնպիսի խոր տգիտություն, վոր ընավ չպիտի զարմանաք, յերթե տեսնեք, վոր դյուղացին բամբասանքից ու դրախտությունից զատ, վարակված է նաև ուրիշ չար սովերով։ Աբև է

հարկավոր, որ նրանց սուտ հոգին չկերմացնեն, նրանց մտքի անոթը լուսավորեն, այդ արևը չկա, չկրնաք չե ծագում. գյուղացին ինչ անե...

Կամսարյանը, որ եղ վարկենին մոռացել էր յուր ուխտը, կամ որին այնպես թվաց, թե հոգևորական չեղած տեղը աշխարհականը չկնաք և ժողովրդի վրա մտածե, մի անդուստ պահանջ ղրաց հիշեցնել հոգևոր հայրերին իրենց պարտականությունը։

— Ինձ թվում է, — ասաց նա, — որ հենց դուք ինքներդ կարող եյիք դառնալ այդ արևը և ցրել գյուղերում տիրող խավարը։ Ինչու՞ ուրեմն չեք անում։ Միթե, արդարև, ավելի լավ չե՞ մտնել ժողովրդի մեջ, ծանոթել նրա բարոյական ու մտավոր շահերին, քան թե ապարդյուն ճգնվիլ անապատում։

Աստղ արեղան չպատասխանեց, բայց նրա ընկերը, որ ավելի յերիտասարդ էր և ավելի աշխուժոտ, կանդ առավ հին մատուռի կիսավեր ավերակի առաջ, որի մոտով անցնում եյին, և ասաց.

— Ըդիմեմ դուք ինձ ճանաչում եք թե՞ ոչ, բայց ձեզ, պարոն Կամսարյան, յես լավ եմ ճանաչում։ Այն ժամանակ, յերբ դուք գիմնազիանն ավարտելով՝ գնացիք Պետերբուրգ, յես էլ Ներսիսյան դպրոցն ավարտած՝ սարկավագ եյի։ Հետո անցա Եջմիածին և վարդապետ ձեռնադրվեցա։ Իսկ այսոր, ինչպես տեսնում եք, ճգնվում եմ Սևանում։ Բայց չնայելով այս ճգնությանն, որ յուր ապարդյուն խոսությունները ունի, այսուամենայնիվ, չեն մարած սրտիս աշխուժն ու յեռանդը, ստպարեղ չեղած տեղը կարող եմ դարծնել, իսկ չեղած տեղը՝ դեռ ազատ խոսել։ Թուլլ տվեք, ուրեմն, որ ձեր հարցին պատասխանելուց առաջ, ինքս ձեզ տամ մի հարց, որ, միևնույն ժամանակ, կլինի նաև ձեր պատասխանը։

Կամսարյանը լարեց ուշադրությունը։

— Ասացեք խնդրեմ, — շարունակեց արեղան, — մինչև յերբ պետք է դուք նման պահանջներ անեք մեզնից՝ առանձին, թե հրապարակով և հավատաք թե արդար պահանջ եք անում։ Որ հոգևորականը աղոթելուց, մկրտելուց և թաղելուց զատ ուրիշ, շատ մեծ պարտավորություններ էլ ունի, այդ յես չեմ հերքում։ Հոգևորականն, այո, կարող և լինել հենց այն արևը, այն պայծառ լուսատուն, որ փարատում է ժողովրդի մտքի խավարը։ Նա յուր բարձր կոչման շնորհիվ մեծ էլ դյուրություն ունի այդ ժողովրդի ամեն խավերը մանելու, յուր հոտի ամեն մի անդամին մտերմանալու, նրա սրտի, հոգվո և զգացմունքների հետ խոսելու և այդպիսով էլ մեծ արդյունք առաջ բերելու։ Բայց վեր հոգևորականը կարող և այդ անել. միթե մենք, արդի հոգևորականներս, ցերբեք։ Մենք ինչացու յենք. ով և մեզ տվել այդպիսի

կարողությունից ով է մեզ պատրաստել դրա համար։ Մենք հո յերկրքնքից չենք իջել, այլ յելել ենք ձեր միջից. ինչ վոր դուք եք, նույնն էլ մենք. փշից չի խազող չենք քաղել, վոչ էլ առաստակից՝ քուղ տվել, վոր սառնաք, սերմեցիք՝ վոր հնձեք։ Մի դուցե կարծում եք Քե, հոգևոր կոչման հետ միասին, մենք սառնում ենք նաև խելք, գիտություն, դործելու շնորհ, կամ Քե դերբնական մի դորության շնորհիվ, ազատվում ենք մեր մարդկային, սովորական կրքերից, ցանկություններից...

Մթթե չդիտեք, վոր հոգևորականների մեծամասնությունը հոգևոր կոչումն առնում է յուր վրա միայն յուր դոյությունը պահպանել կարենալու համար...

Մթթե չդիտեք, վոր ծուլությունը, հեշտ ապրելու տենչը, արիության և աշխատասիրության պակասությունն է, վոր ծնել է մեր այսորվա հոգևոր պաշտոնյաների լեգեոնը և վոչ Քե անձնվիրության ու առաքելության վսեմ դաղափարը, վորի մասին նրանք, նույնիսկ հասկացողություն չունին։ Այո, դիտեք։ Դիտեք նույնպես, վոր հաղվագյուտ բացառություններ են նրանք, վորոնք այդ դաղափարով վոգեվորված, մտել են հոգևոր դինվորության մեջ, հուսալով կարենալ ոդտակար լինել ժողովրդին. բայց վորոնք իրենց սակավաթիվ լինելու պատճառով՝ խեղդվում, վոչընչանում են հոգևորականության ամբոխը կազմող մեծամասնության մեջ։ Այս այսպես լինելուց հետո, եկ վիրավեղ և ծնում ձեր իրավունքը՝ պահանջներ անելու հոգևորականությունից։ Պահանջներ անելու իրավունք դիտեք ովքեր ունին. — այն հոգևորականները, վորոնց յես բացառություն անվանեցի և վորոնք հաճախ կսկիծը սրտում և արտասուքն աչքերին դնում են վար, վորովհետև «Մեծավորը» հրամայում է «Ուս կմց. դու դիտում չես, առաջնորդը յես եմ, բակլան խաշած եմ ցանում։ Այո, այդ ճնշվածները, դործելու տենչով վառված, բայց միշտ իրավազուրկ դինվորագրյալներն են, վոր իրավունք ունին պահանջներ անելու... այն էլ դիտեք ուժից — ձեղնից, մտավոր ու նյութական հարստության չափով ժողովված յերիտասարդներից. նրանք են, վոր պիտի ձեզ ասեն. — պարոններ, դուք ամեն տարի տասնյակներով ավարտում և վերադառնում եք հայրենիք. ձեր մտավոր պատրաստության շնորհիվ դուք լավ ըմբռնում եք ժամանակի պահանջը և ճանաչում ժողովրդի ցավերն ու կարիքը. միևնույն ժամանակ, ձեր բազմաթիվ լինելու շնորհիվ, դուք պատկառելի ուժ եք կազմում և այդ ուժով կարող եք մեծ անհիշներ դարձնել։ Ինչու՞, ուրեմն, չեք դործում, կամ ինչու՞ չեք մտնում մեզ, սակավաթիվ դինվորներիս և մեզ հետ միասին դիմում դեպի այն ցանկալի բարձրությունը, ուր պետք է վառել ժողովրդի խավարը փարա-

տող արեք... Հայ արժանավոր հոգևորականը յերբեք չի ունեցել և այժմ էլ չունի վոչ առանձին շահ, վոչ ոչ միառնիներ։ Նա հնարավոր ապրել ու մեռնել և ազգի համար, այսոր էլ նույնը կանի, ուրեմն, մի բաժանեք նրան ձեղանից, արհեստական անջրպետ մի ստեղծեք և ակղևրականաց անունով մկրտելով զատ շահերի, զատ ձգտումների տեր մի հռչակեք նրան։ Այդպես և յեղել և, արդարև, կաթոլիկ հոգևորականությունը, վորի պատմությունը ուսանում եք դուք հոժարությամբ, բայց այդպես չե յեղել յերբեք հայ հոգևորականությունը, վորի պատմության, ավաղ, միացել եք միշտ անծանոթ։ Ցավ հենց այդ անծանոթությունն էլ յեղել է պատճառ, վոր հայ հոգևորականության արժանիքը չափել եք դուք միշնադարյան արհավիրներն ստեղծող և, այսոր խակ, ազդերի խաղաղությունը վերիվայր շրջող կաթոլիկ կղերի արարքներով։ Բայց դա մոլություն և և ճշմարտության անխիղճ հեղաշրջումն։ Ժամանակ և, վոր դուք այժմ ձգեք մոլորությունը և հայ հոգևորականության պատմությունը ուսանիք։ Ժամանակ և, վոր դուք միասնաք մեզ հետ և ձեռք ձեռքի տված մանենք ժողովրդի մեջ։ Դուք աջից, մենք՝ ձախից դպրծենք անընդհատ, քրտնենք, վաստակենք և այդ վաստակի աղնվական պտուղը — ստեղծած բարիքը մեր աչքով տեսնելու և մեր ձեռքով շոշափելու քաղցրությունը վայելենք միասին»։

Ցերեկասարդ արեգակն, վոր ըստ յերևույթին, յուր հիշած բացասական դիտողություններից մինն եր և, անշուշտ, քաղցր հույսով Սևանը մտնելով, հանդիպել եր զուցե դառն հիասթափության, վորթեկում եր, կարծես, վաղուց ի վեր յուր սրտում ամբարած ցավերը, առանց մտածելու թե՝ արդյոք պատշաճի դեմ չեր, առաջին իսկ ժամում, մեղադրության ճառ կարդալ ուխտավոր այցելուի յերեսին։

Սակայն նա լռեց, հենց վոր հեռվում նշմարեց ծերուկ վանահորը, վոր իրեն հասակակից մի ուրիշ վարդապետի հետ առաջնում եր դեպի այցելուն։

Կամսարյանը դեռ չեր տեսել նրանց, ուստի գլուխը խոնարհած ակնատիշ նայում եր առջևը զոնված ավերակի բեկորներին և իրրև հանցավոր, սպասում թե ուրիշ ել ինչ պիտի լսե խոսող արեգայից։

Հանկարծ հնչեց վանահոր թավ ձայնը.

— Հա, եղ ինչ եք առեղ կանդնել։

— Ուխտավոր և, հայ սուրբ... Պարոն Կամսարյան... Դուցե ճանաչում եք, — շտապեց հայտնել առաջին արեգան և ապա դառնալով Կամսարյանին, կամացուկ շշնջաց, — մեր այստեղի վանահայրն և։

— Աստված զգնական, — ասաց Կամսարյանը և մոտեցավ վանահոր ալյն առնելու։

— Աստված պահապան, վորդի, բարով ես յեկել. բա հեր ես եսառեղ կայնել։

— Գարանին ման ենք ածում. հայր սուրբ, — խոսեց յերիտասարդ աբեղան։

— Ման եք ածում... բա դուք ման ածիլն ինչ եք գիտում, — հեգնեց վանահայրն աբեղաներին և ապա մի առանձին լրջություն տալով դեմքին՝ — գնացեք, գնացեք, ճաշի ժամն* սկսել են, իմ հյուրին յես ման կածեմ, — ասաց և աբեղաները լուռ հեռացան դեպի ս. Աստվածածնի յեկեղեցին։

Կամսարյանին մի կողմից անսահման թվաց վանահոր անտակտ գիտողությունը, բայց մյուս կողմից ել գոհ յեղավ նա, վոր վերջինի միջամտությունը ազատեց իրեն դժվար կացությունից։

— Աստմա ջման ենք ածում, — խոսել սկսավ վանահայրը — սաղ սհաթ ա, ենտեղից մարիկ եմ տալի, տեսնում եմ հալա սուրբ Մինասի (քանդած մատուռի) մատ... ա ենտաշեներ, բա դա ման ածիլ ա, ախար ուխտավոր ա, յեկել ա, վոր բան տեսնի, իրա ուխտն անի, ինչ եք յախան (ձկքը) բռնել, ջոշ յեկել (շատախոսում)։

Այս ասելով վանահայրը սկսավ առաջնալ Կամսարյանի և մոտը յեղող վարդապետի հետ և, միևնույն ժամանակ, շարունակել յուր խոսքը։

— Այ, եդ ջահիլները դիվ ասենց են, թե վոր թողնես, խամ մարդ ճանդեն, առավոտից մինչ իրիկուն հետը խոսան. բայց թե բան ու գործ անեն, չեն։ Մենք ել ենք ջահել եղել, ամա դրանց պես չենք եղել։ Ողորմած հոգի Ոհաննես վարդապետը, վոր իմ ջահել վախտը վանահայր եր, շատ խիստ մարդ եր, հեչ թողել չեր, վոր մի բաբանը, ժամից դուրս գալուց յեղը, մի տեղ ել ա յերևա, գոնի իրա խուցը մտներ, սուրբ գիրք կարդար։ Մին ել են ա ճաշի վախտը կեթար սեղանատուն, իրա ճաշը կուտեր ու մեկ յեդ կմըտներ իրա ոթախը։ Ամա դե յես եղենց խիստ չեմ. ազատություն տալիս եմ. ինչ արած, վոր եդ ենտաքանդներդ իմ ուժած ազատությունը չարն են գործ դնում։ Տեսնում ես ես հեր-որհնածը (ցույց եր տալիս հետը յեղող վարդապետին), վանքի լուսարարն ա. ասիլ հոգևորական ա. քառասուն ու հինգ տարի ա ես վանքումը. հալա վոտը ըստեղից դուրս չի դրել։ Վոր հարցնես թե քաղաքն

---

* Սհանում ամեն որ կատարվում է չորս ժամերգություն — գիշերային, ճաշու, յերեկոյան և հանգստյան։

ինչ ա, պիտալ չի թե ինչ ա, չուն վոչ գնացել ա, վոչ տեսել։ Ամա եդ Ջահիլներին, վոր բաց Թողնես ամեն որ վաղ կտան Բևան յա Դիլիջան։ Դե եդենցով բան կըլի։ Ճես վոր իմ պաշտոնին հասնց արի ու դրատա չեյի ելել, կարող եյի եաքան բարեկարդություններ անել ևս վանքումը։ Տեսնում ես, շատ բան եստեղ իմ շինած ա։

Այս ասելով վանահայրը ցույց եր տալիս հեռվից վանքի շինութիւնները, յեկեղեցին, մատուռները, միաբանութեան կացարանները և համառոտ բացատրում թե վերը յերբ և ինչի համար և շինված։ Այսպես դրուցելով նրանք սկսան բարձրանալ դեպի կողուբլուբը, նրա լանջի վրա շինված կեռմաններով։ Ճանապարհին շարունակ վանահայրը պատմում եր, թե վորքան մեծ դործեր և կատարել Սևանում, թե վանքը վորքան յերախտապարտ և իրեն և թե նա յուր այժմյան «պայծառութիւնը» պարտական և յուր (վանահոր) քանհինդամյա վանահայրութեան։

Այս ասելով նա մտնում և ցույց եր տալիս բլրի արևելյան կողմը դանվող ս. Կարապետի մատուռը և հարավային կողմի ս. Առաքելոց յեկեղեցին, վորոնք վոչ միայն դուրկ եյին «պայծառութիւնից», այլև մութ, անշուք, իսկ առաջինը մինչև իսկ ճաքճքած պատերով, կիսախարխուլ դմբեթով, վայր իջած գավիթով։ Իսկ դրանց զարդերը վոչ այլ ինչ եյին, յեթե վոչ փայտե անդարդ խաչկալ, չքե վարդուբր, մի քանի հասարակ մոմակալներ և անարվեստ ու դեհիի պատկերներ, վորոնք, ոմ-դիտես, վեր գեղջուկի ձեռքով մոտակա բաղարներում դնված և նվիրաբերված եյին «հինավուրց Սևանին» — քան վերում նրանցից մի քանիսն ունեյին, մինչև իսկ, ուսսերեն մակագրութիւններ։

Այս ամենը յերիտասարդի վրա ծանր տպավորութիւն արին, սակայն նա լուռ եր, լսում եր միայն վանահորը և մեքենաբար նայում նրա ցույց տված տեղերին։

Բլրի դագաթին հասնելուց, վանահայրը մատնացույց արավ քառակուսի մի շինքի հակիլ մի կանդուն բարձրութեամբ վորմերի մնացորդը և հայտնեց, վոր դա Սևանի անդրանիկ յեկեղեցին, ս. Հարութեան տաճարն և, վոր հիմնել և ս. Գրիգոր Լուսավորիչը։

— Ցնեն այդպես և, դա մի պատկառելի հնութիւն և, — նկատեց յերիտասարդը։

— Հա, հնութիւն ա, — հաստատեց վանահայրը։

— Հապա ուր են ավերակի գլխավոր մասերը։ Անկարելի յե, վոր այդպիսի մի ընդարձակ տաճարից այսքան միայն մնար. մանավանդ վոր սա կղզու մեջն և և սրա քարերը չեյին կարող շրջակա բնակիչները հափշտակել, տանել։

— Ո՛վ ա գիտում, ձեր ա. հրեն ընդի մառան ա շինվել, վեռտառուն ա շինվել, ուխտավորի համար օթախներ են շինվել, ուրիշ տեղերից վոր քար կրեյին, վռնց կըլեր. հազիր եատեղ ելել ա· առել բանացրել են։

— Այդ հո բարբարոսություն է, — բացականչեց Կամսարյանը սաստիկ վրդովվելով։

— Ինչի՞ ա բարբարոսություն, վանքի համար վոր խնայողություն են արել, վռնց բան ա։

— Դա ինչ խնայողություն է, հինավուրց մի տաճարի ավերակը նորոգելու, կամ ինչպես, վոր կա սրբությամբ պահպանելու փոխարեն, դուք առնում, քանդում եք և ասում թե դա բարբարոսություն չի։

Վանահայրը զարմացած նայում եր յերիտասարդին և չեր կարողանում հասկանալ նրա զայրույթի պատճառը։

— Ցես հլա ասում եմ, հայ սուրբն եդ Ճեացածն էլ քանդիլ ա՝ա, տեղը թամըղի (մաքրի), — խոսեց լուսարարը։

— Ինչի՞, գրեթե սարսափով հարցրեց յերիտասարդը։

— Ինքը գիտում ա, կասի, — պատասխանեց վարդապետը, ձեռնըհաս չհամարելով իրեն բացատրություն տալու։

— Գիտե՞ս ինչ կա, — խոսել սկսավ վանահայրը, — առաջ եատեղ թամուղ եր, չուն յերևացող քարերը տարել, բանացրել հյին, Ճեացած պատերն էլ հողում թաղված՝ չեր յերևում։ Ես տեղ մի Մելքոն ճղնավոր կար, ասաված հոգին լուսավորի, վանքի վրան յերախտիք ունի, ես ճանապաներն էլ նա ա շինել, — ցույց տավավ վանահայրը բլուրը հանող կեռմանները, — նա յերբ իմանում ա, վոր Գրիգոր Լուսավորչի ձեռքով շինած ս. Հարության տաճարն եատեղ ա, սկսում ա իրա ձեռքով հողը քանդել ու կամաց-կամաց տաճարի հիմքերը բանալ։ Ցերկար ամիսներ մեն մենակ աշխատելով ես դիմք, ինչ վոր հիմա տեսնում ես, լուս աշխարհ ա հանում ու ենդուց յեդը մեռնում։ Մի որ եատեղ մեր վանքը մի ուսումնական եր յեկել։ Նա ես ավերակը վոր տեսավ, ասեց թե՝ պատմությունից երևում ա, վոր սա վոչ թե Գրիգոր Լուսավորչի ձեռքով շինած տաճարն ա, այլ թե հին, Սյունյաց ժամանակի կառուցը։ Ս. Հարության տաճարը, ասեց, պետք ա ուրիշ տեղ ելած ըլի, յա չե հենց են տեղումը, վորտեղ հիմի ս. Աստվածածինն ա շինված։ Ա՛յ, են որից դեսը մեր սիրտը շաք (կասկած) ա ընկել, ասում ենք՝ դորթ չըլի՞ սա կառուցն ա։ Ես միաբանն էլ հմի են ա ասում, թե դրուստ, վոր սա կառուցն ա, լավ կըլի, վոր մեջտեղից վերցնենք։

— Ի սեր աստծո, հայր սուրբ, այդպիսի բան մի մտածեք. — բացականչեց Կամսարյանը, դա պատմության ու դիտության դեմ հանցանք գործել և նշանակում Կատաուն չլինի, թնկուզ կրակատուն լինի, այս ավերակը դարձյալ սրբությամբ պիտի պահվի։

— Դե ձվ ա ասում չպահվի, վորդի, խոսքը տեղը յեկավ խոսեցինք։ Ինձ հարցնես, յես կասեմ Ձեզ. չուն դա, վոր հմի ավերակ ա, մյուս տաճարներին էլ ինչ ինաս կարա տալ։

Վանահայրը թնկնա առ յերես հակվեցավ յերիտասարդի կողմը, բայց այդ արավ լոկ դեպի քաղաքացի հաղանձ ունեցած ակնածությունից. ապա թե վոչ, նա մինչև վերջն էլ չհասկացավ թե այդ մարդն ինչու յե պահանջում, վոր կատաուն ավերակը պահվի։

Այժմ նրանք նորեն պիտի իջնեին վար՝ միաբանական կացարաններըը նայելու։ Բայց այդտեղից բացվում եր այնպիսի մի սիրուն ու գրավիչ տեսարան, վոր փոքր ինչ ավելի այնտեղ չկանգնեին ու այդ տեսարանով չհիանային՝ հանցանք գործել կնշանակեր։ Այդ պատճառով Կամսարյանը ցանկություն հայտնեց բլրի գլուխը բարձրանալու, վորպեսզի այնտեղից կարողանար կողմե-կողմ շրջապատը տեսնել, վորովհետև բլրի, մինչև գագաթ հասող լանջը, ծածկում եր յուր աչքից արևելյան լճամասն ու նրան պատող լեռնադաշտին։ Վանահայրն ու լուսարարը ընկերացան յերիտասարդին։

Տաճարի ավերակից մի քանի հայրուր քայլ դեպի արևելք բարձրանալով, նրանք կանգ առան բլրի կատարին։ Այդտեղից արդեն կողմակին յերևում եր վողջ շրջապատիկ և յուր թմբաձև, սապատավոր գլուքով՝ նմանում ծովային առաստղևական մի կենդանու, վոր մարմնի կեսը ալիքներից վեր հանած՝ ներս և շնչում ադի կարևոր պաշարը՝ նորեն շրի տակ սուզվելու համար։ Ծովակի կապույտ դաշտը, վոր պատում եր նրան չորս կողմից, սկսել եր հուզվիլ Սոդի* ընդհատ քամուց։ Փոքրիկ մկանունքները, վորոնք մինչև այն հաղիվ կնճռոտում եյին շրի յերեսը, տակավ առ տակավ փոխվում եյին ալիքների և իրար հրելով, կամ միմյանց թևակոխելով՝ մերթ ուռչում, բարձրանում եյին ու խուլ փշշոցով իրար վրա փլչում, մերթ դալիս, մոտենում բլրի ստորոտին և ուժգին շառաչով ժայռերին զարկում։ Իսկ ծովակի խորքերում այդ հուզումը հետզհետև յերևան եր հանում նորանոր պատկերներ. նա

* Սևանի վրա խաղացող քամիներից՝ արևելյանը կոչվում և այդ անունով՝ Սոդն գովածից փչելուն համար, արևմտյանը՝ դաշտի քամի, վորովհետև դալիս և Արարատյան դաշտից. հյուսիսայինը՝ քուչի քամի, վոր նշանակում և անտառային, ըստ վորում այդ կողմերն են Գուգարաց անտառները. իսկ հարավայինը՝ Զինդիլեր քամի, Վայոց ձորի նույնանուն դյուղի անունով։

մերթ արևից շողեր կորզելով՝ նրանցով փրփրուն ալիքներն ու վռակեզոծում, մերթ խուսափուկ ամպերից սավեր առնելով, լճի կապուտակը, սպիտակ կամ դարչ սավաններով էր ծածկում։ Մինչդեռ շուրջ պատող թումբերն ու լեռները, իրրև հանդիսատես հսկաներ, դիտում էին հեռվից ծովակի հուզումը, մերթ ժպտում ուրախ, յերբ բացվում էր արևը, մերթ հոնքերնին կիտում, յերբ ծածկվում էր նա և այդպիսով, կարծես, հայտնում իրենց դոհությունն ու դժդոհությունը, վորից և վողջ հովիտնը սառնում էր մերթ վեհ, մերթ ակնառարար տեսք։

Գեղեցիկ շրջանկարը դրավից յերիտասարդին։ Նա չդոհացավ սեփական աչքերով և դիմեց իսկույն դիտակի ոգնությանն։

Նրա առաջ, արևմտյան հարավից, բացվում էր մի լեռնադաշտ, վորի վրա ցրված էին մանր ու խոշոր բլուրներ՝ իրենց գլուխ ունենալով նախ՝ կրկնաթումբ Ղոշ-դարը, վորը տեղ-տեղ տակավին ծածկված էր կանաչով. ապա Գեղամա հարավյան լեռները՝ յեռակատար Ցուչ-թափան և Ահմանկանը, իրենց գորշկապույտ լանջերով. վերջն՝ Սպիտակ լեռը (Աղ-Դաղը), վորի կատարին դեռ նշմարվում էին ձյունի նուրբ շերտեր և հեռվից տալիս նրան մի հրապուրիչ գեղեցկություն։

Ուղիղ արևմուտքից յերևում էր պատմական Ծամաքաբերդը, վորի սակավաթիվ անակներն ու հյուղերը ցրված էին ջրապատ հրվանդանի վրա։ Վերջինի ծայրին բարձրացող բլրին նշմարվում էր ավերակը Կուսանաց վանքի, վոր կառուցել էին յերբեմն Սյունյաց Գայազատները և վորը, ինչ դիտես, վորքան սրատուչ անցքերի ու դեպքերի հանդիսատես էր յեղած...

Ծամաքաբերդից դեպի հյուսիս բարձրանում էին Բարաթա լեռը և Մաշտոցները կոչված բլուրները։

Արևմտյան հյուսիսից յերևում էր ամբողջապես չարաբաստիկ Զիբուխլուն յուր գեհենափոր տեղերով, հողածածկ խրճիթներով, աթաբի դեղերով և չոր ու ցամաք տեսքով։ Նրանից դեպի հյուսիս բարձրանում էր կանաչազուրկ Մարալիկյան կամ Այծեղջյուրսարը, վոր յուր չոր բազուկները ձգում, տարածում էր դեպի ծովակի արևելքը պարսպող Շահ-Դաղի լեռնագոտին, հյուրընկալելով յուր ձորակներում հազիվ մի քանի չքոտի մացառուտներ։

Նայելով դեպի արևելյան հարավ, թվում էր թե ծովակը չունի այլևս պատվար, ըստ վորում հեռավոր Գարա-արխաչի գոտին, ըստ սովորականին, ծածկված լինելով մշուշով, անտեսանելի յեր դարձնում այդ կողմի ցամաքը և կարծել տալիս թե յերկնակամարը համբուրվում է այդտեղ Գեղամա թագուհու հետ... և հենց այդ պատճառով, յեթե մի կողմից շրջակա լեռներն, իրենց լայնանիստ

լանջերով, մինդ դրկած պահում էին գեղանի թաղուհուն, մյուս կողմից էլ նրանց բարձրահասց կառարները անհանգիստ կատկածով նայում էին դեպի հարավ, ուր նա աղատ փռում, տարածում էր հևսուն յուր ջրածուխ դաշտը, կարծես սպառնալով այդ կողմի բացով փախչիլ, հեռանալ նախանձոտ պահանորդներից և միանալ յերկինքի ջինջ կապուտակին, վորի հարազատ մի կտորն էր ինքը...

Յերկար նայում էր կամաբրյանը այս գեղեցիկ տեսարաններին և նրանցով հիանում. յերբեմն էլ հարցեր տալիս վանահորը՝ իրեն անծանոթ այս ու այն տեղի, լեռան կամ բնակութեան մասին և լսում նրա բացատրութիւնները առանց, սակայն, աչքերից դիտակը հեռացնելու։

Նշմարելով լճակի հարավակողմում յերկու փոքրիկ կղզյակներ, վորոնց վրա չկային վոչ շինութեան հետքեր և վոչ էլ կանաչ, յերիտասարդը հարցրեց վանահորը թե ինչ բաներ են նրանք։

— Նրանք այս ծովակի «անառակ վորդիներն» են,— պատասխանեց վանահայրը ծիծաղելով։

— Անառակի, ինչու՞ այդ անունն եք տալիս նրանց։

— Ընդուր վոր չոր, ամայի բաներ են. վոչ ասունի յեն պետք, վոչ անասունի. դատարկ տեղից գլուխները վեր են ցցել, վոր ասեն թե՝ հա, մենք էլ կանք։ Եղ թահր մարդիկ էլ շատ կան աշխարհում։ Այ, հենց մեր ես պատհուր (փոքրիկ) Սևանը, վոր մեզ դաս, նրի միջումը մի քանի հատ կղզոնես. վրաները մոխիկ տաս, կասես վարդապետ են. ամա վոր մեջները պարես, կասես՝ ըսկի մարդ էլ չեն։

Վանահայրն, ըստ յերևութին, կամենում էր դարձյալ խոսքը բերել յերիտասարդ վարդապետանների վրա, վորովհետև այն կարծիքին էր, թե նրանք յուր մասին պետք է, վոր աննպատակ բաներ խոսած լինեին կամաբրյանի առաջ։ Այդ պատճառով աշխատում էր, վոր վերջինս հասկանա թե ինչ մարդկանց հետ է գործ ունեցել ինքը, վորպեսզի յուր մասին վատ գաղափար չունենա։

Բայց յերիտասարդը տրամադիր չէր նման զրույցներ լսելու, այդ պատճառով խնդրեց, վոր այժմ վանահայրը ցույց տա իրեն միաբանութեան կացարանները։

— Հա, լավ կըլի, գնանք։ Ա՛յ, հենց եստեղից էլ երևում ա. տեսնում ես ինչքան տեղ ա բռնած. հազար սաժին կըլի։

— Վիրը. յես վոչինչ չեմ տեսնում,— ասաց Պետրոսը, նայելով վանահոր ցույց տված կողմը։

— Ա՛յ են մեծ տափարակը, վոր ս. Առաքածոներին կոչած ա։

Ծերիտասարդը նորից նայեց և ոչինչ չտեսավ։ Բլրի բարձրությունից, արդարև, յերևում եր մի ինչ վոր ընդարձակ, բարձրկեկ տափարակ, վորի վրա տեղ-տեղ յերևում էին փոքրիկ ծխնելույզներ ու ցածր յերդիկներ, կիսով չափ ծածկված դեղնած խոտերի մեջ։ Վերևից Թվում եր, թե այդ տափարակը բակի մի մասն և։ Մինչդեռ վանահայրը բացատրեց թե հենց դա յե կազմում կռուրը միաբանական այն կացարաններին, վորոնց մեծ մասը ս. Առավածածնի հետ միասին շինված են Սյունյաց Մարիամ Տիկնոջ ձեռքով 877 Թվին։

— 877 Թվին. ուրեմն հազար տարվա հնություն ունին դրանք,— զարմացավ յերիտասարդը։

— Հազար տարուց ավելի ա, բայ — հաստատեց վանահայրը։

— Գնանք, ուրեմն, ջնանք։ Հետաքրքրական ե տեսնել այդ շենքերը, ուր հազար տարի շարունակ ապրել են ձեր նախորդները,— ասաց յերիտասարդը և առաջ անցավ։

Բլրի լանջին ակոսող կանոնավոր կեռմաններից դեպի տափարակն իջնելով, նրանք մտան մի դռնով, վոր բլրի սաորոտից հեռի յեր միայն մի քանի քայլով։ Այդ դուռը նրանց մի կարճ միջանցքով մտցրեց մի ուրիշ, ավելի յերկար, համեմատաբար լայն, բայց և խիտ մթին միջանցք, վորի յերկու կողմից, կրկնաշար ուղղությամբ շինված եյին միաբանական միահարկ խուցերն ու խցիկները։ Դրանց մուտքերը հազիվ նշմարվում եյին շնորհիվ մի նվաղ լույսի, վոր մտնում եր այդտեղ՝ յերկար միջանցքի յերկու հանդիպակաց դռներից, (վորոնցից մինը հանում եր ծովափը, իսկ մյուսը՝ բակի հեռավոր մի կողմը, ուր գտնվում եյին ուրիշ յերկրորդական շինություններ, ինչպես որինակ, փայտատուն, մաբաղ, ախոռ, դարբնոց և այլն)։ Այս ընդհանուր միջանցքի յերկու կողմից շինված կացարանների Թիվը մոտ յերեսուն եր։ Մի կարդի սենյակներում ապրում եյին վանահայրը, վարդապետները և միաբանության ուրիշ անդամները։ Այդ կարգում գտնվում եյին և վանքի գրատունը և հանդերձատունը։ Իսկ հանդիպակաց կարգում գտնվում եյին միաբանության ընդարձակ սեղանատունը, խոհանոցը, մառանը, հացատունը և մի քանի ուրիշ սենյակներ, վորոնք յերբեմն ծառայում եյին նաև իբրև իլևան ուխտավորների համար, յեթե դրսի սենյակները բռնված եյին լինում բոլորը։ Ընդհանուր միջանցքի վրա բացվում եյին նաև մի քանի ուրիշ, յերկրորդական միջանցքներ, վորոնցից յերկուսը տանում եյին դեպի զանազան ամբարանոցներ ու մառաններ, յերրորդը՝ դեպի բլուրը, իսկ չորրորդը՝ դեպի բակի կողմը և այլն։ Բոլոր այս խուցերը, կացարանները, ամբարներն ու միջանցքները ծածկված եյին

մի ընդհանուր միաձուլում կատարով, վորով և բոլորը միասին կազմում էին մի ծածկված ամբողջություն։ Այդ պատճառով մի կարգի խուցերը միայն ունեին նեղ-նեղ փոքրիկ պատուհաններ, վորոնցից վոմանք բացված էին դեպի բլրակի և վոմանք՝ բակի կողմը։ Մնացյալ բոլոր անելյակները լույսն առնում էին յերդիկներից։ Ինչ վերաբերում է միջանցքներին, նրանք այնքան մութ ու խավար էին, վոր կամաբյանին թվում էր թե ինքը կարող էր մոլորվել նրանց մեջ, յեթե միայնակ մտած լիներ այդտեղ։ Բոլոր շենքերն, առհասարակ, իրենց մուտքերով ու միջանցքներով, հին լաբյուրինթոսի նմանություն էին բերում, իսկ դրանց միջի ոդն այնքան էր ծանր, խոնավ ու գարշահոտ, վոր յերիտասարդը մի-մի անդամ, նույնիսկ դժվարությամբ էր շնչում։

Վանահոր անելյակը վոչնչով չէր տարբերվում մյուս միաբանների խուցերից, վոր ապացուցանում էր, թե հավասարության սկզբունքը հինուց անտի հարգված և յեղել այդտեղ։

Կամաբյանի հարցերին թե՝ ինչպես են կարողանում այս մութ ու դիմին անելյակներում ապրել, վանահայրը պատասխանեց։

— Համի դեռ հալա շատ լավ ենք ապրում։ Յերսուն տարի սրանից առաջ, յերբ յես դեռ վանահայր չէի, ես խուցերը վոչ թե մահճակալ, սկի տախտակի պոլ էլ չունեին. ամենքս էլ նամ գետնի վրան էինք նստում կամ պարկում։

— Յեվ այդպես ապրելով չե՞ իք հիվանդանում։

— Փառք աստուծո, հրես տեսնում ես. 49 տարի է ինչ եստեղ եմ, ես լուսաբար հայրս-սուրբն էլ, վոնց վոր ասեցի, 45 տարի յեր, վոր ապրում է մեղ հետ, ուրիշ միաբաններ էլ կան մեզ հասակակիցից, բոլորն էլ վողջ առողջ։ Սովորությունից ա կախված, վոնց վոր քեզ կսովորացնես, ենենց էլ կապրես։ Պաղաքներում մարդիկ շատ են կոտորվում նրա համար, վոր շատ են փափուկ ապրում։

Վանահայրն յուր հյուրին ամեն տեղ շրջեցնելուց հետո, առաջարկեց նրան տեսնել, նաև, գրադարանը, վոր նրա ասելով, բաբեկարգվել էր միայն յուր վանահայրության որով։

— Հենց եդ պատճառով էլ բանալին համաշա (միշտ) մատս եմ պահում, ով վոր դիրք ա ուզում, ինքս եմ դալիս, բանում, դիրքը տալիս ուզողին, ու էլ յեդ վակում, բանալին ջեբս դնում,— ասում էր վանահայրը։

Յերիտասարդը հետաքրքրությամբ մտավ այն խուցը, վորին վերջինս «գրադարան» անունն էր տվել՝ հուսալով գտնել այդտեղ հին դրչագիրների մի հարուստ դարան։ Բայց նա այստեղ տեսավ հազիվ յերկու հարյուրի չափ հին ու նոր հատորներ, վորոնց մի մասը վոչ շատ կարևոր դրչագրեր էին, իսկ մյուսը՝ վենետիկի հի-

նավուրց հրատարակութիւններ, դարսված փայտաշէն դարակների վրայ։

Ցերը յերիտասարդը հայտնեց յուր գործունքը՝ հինավուրց անտպատի այդ ստուիճան աղքատ դրատուն ունենալու մասին, վանահայրը բացատրեց, վոր յեղածն էլ յուր շնորհիվն է, վոր կա, ապա թե վոչ, այս վերջին 25 տարվա ընթացքում, յերբ յուր փոխարեն լիներ մի ուրիշ վանահայր, անշուշտ այդ յեղածն էլ կմատնվեր կորստյան, ինչպես վոր մատնվել են նրանից առաջ յեղած գրական գանձերը։ Եվ իրրև ապացույց նա պատմեց թե ինչպես Սիմյոն կաթողիկոսի որով, Հովհաննես անունով մի անարժան վանահայր, լսելով վոր կաթողիկոսը գալիս է այցելության Սևանա անապատին և իմանալով, վոր դրասեր Հայրը պիտի հետաքրքրվի վանքի դրատան վիճակով և տեսնելով այն անկարգ ու անխնամ (ըստ վորում յուր իսկ վանահոր անհոգությունից գրչագրերի մեծ մասը խոնավությունից փտել կամ ցեցակեր եյին դարձել), պիտի զայրանա յուր դեմ — նա բոլոր այդ տեսակ հնամաշ գրքերն ու հիշատակարանները հավաքել և տալիս քսակների մեջ և իրեն խորհրդակից ապիրատների ձեռքով թափել տալիս ծովը, վորպեսզի կաթողիկոսը, Սևան մտած ժամանակ, հին ու փչացած վոչինչ չտեսնե գրատանը։

— Ինչ զարհուրելի բարբարոսություն, — բացականչեց Կամսարյանը, սրտի խորքից վրդովվելով։

— Բարբարոսություն ասիր պրծար, անաստվածություն ասա, անխղճմտանքություն ասա, — ձայնակցեց վանահայրը յերիտասարդին։

— Ցերևակայում եմ, թե ինչպիսի թանկագին գանձեր են անհետացել այդ թշվառականի ձեռքով։

— Դրուստ վոր թշվառական. եդ տեսակ վանահոր հիշատակը պետք ա անիծվի սերունդից սերունդ, — հարեց վանահայրը։

— Դժբախտաբար անեծքը չի վերադարձնիլ մեր կորուստը։

— Ճշմարիտ ա չի վերադարձնիլ, սակա միացածներին կզգուշացնի, վոր եղենց անաստված թափրով վանքի գույքը չփչացնեն։

Գրադարանից յելնելուց, ծերուն վանահայրը հոգնած զգալով իրեն, խնդրեց յերիտասարդին միացած տեղերը շրջել լուսարարի հետ, մինչև վոր ինքը հոգնածությունն առնելով կգար յուր հետ միասին ճաշելու։

Լուսարարը մի առանձին հոգածությամբ առաջնորդեց Պետրոսին դեպի թանգարանը, վորի պահպանությունը հանձնված եր իրեն։

Այդ թանգարան կոչվածը վոչ այլ ինչ եր, յեթե վոչ մի հասարակ խուց, ուր պահվում եյին յեկեղեցական այնպիսի սպաս-

ներ, վորոնք թե թանկագնի և թե քիչ գործածական էին. ինչպես արինակ, արծաթեա բուրվառներ, խաչեր, սկիհներ, մեռոնի տուփեր, թագեր, սաղավարտներ, դավաղաններ և այլն։ Դրանց մեջ վեց միայն թանգարանի վայել «հնություններ» չկային, այլև շատերը «յարմուկից» ապրանք էին՝ պատրաստի գնված Նիժնայում, կամ Մոսկվայում։ Այդ ապացուցանում էին իրերից մի քանիսի շուրջը քանդակված ռուսերեն աղոթքներն ու մակագրություններն, վորոնք հեն դեմ կազմում էին հնօրյա, խայտառակ հակադրություն և կարծես ծաղրում Սևանի անապատում հին հիշատակները պարզորեին...

Այս մասին կամասրյանը մտածեց մի քանի վարկյան փբրև հմարիտ ուխտավոր և նրա շրթունքներին խաղաց դառը ժպիտ։

— Ինչու՞ այս խուցին թանգարան անուն եք տալիս, — հարցրեց նա լուսաբարին։

— Ի՞նչ կլինի վոր, — նկատեց վերջինս։

— Ախար «թանգարան» այն տեղին են ասում, ուր շատ հին ու թանկագին բաներ են պահվում. ձեր ունեցածը միայն յեկեղեցական սպասներ են։

— Մենք էլ ունենք շատ հին ու թանկագին բաներ, հիմա պիտի շանց տամ, վոր համբուրես. քե հենց դրա համար եմ բերել քեզնով, — ասաց վարդապետը մի առանձին վստահություն։ Ապա մոտենալով թախտի վրա դրված մի սնդուկի, բացավ նրա խուփը և մի ապրիք մրմնջալով՝ սկսավ հետղհետե դուրս հանել այդտեղից մետաքսյա թաշկինակներում փաթաթած վոսկեզոծ ու ակնազարդ խաչեր, նշխարատուփեր, արծաթակազմ ավետարաններ և այլ կերտվածներ և շարել նրան մի սեղանի վրա, ուր վաղորոք դրված եր մի պղնձե սափոր՝ արծաթեա փողերով ու թղթադրամներով։

— Սրա մեջ Հովհաննես-Մկրտչի մասունքն ա դրած, — բացատրեց վարդապետը, ցույց տալով մի ակնազարդ խաչ, վոր դրված եր արծաթյա յերկփեղկ պահարանում — սրա մեջ էլ՝ Պետրոս առաքյալի մասունքն ա, — ցույց եր տալիս մի ուրիշ, նույնպես ակնեղեն խաչ. — սրա կազմի մեջ էլ սուրբ Գևորգ Զորավարի նշխարն ա դրած, — այդ էլ արծաթագատ մի ավետարան եր. — ես մանանասուփուճն էլ ա. Կարապետի իրեք մանր նշխարներն են դրած։ Իսկ ես Չիբիխլի փոքրիկ խաչումը Կենաց փայտի կտորն ա։ Սրա մեջ էլ, — ցույց եր տալիս մի փոքրիկ արծաթե տուփ, — էլի ա. Գևորգի մասունքն ա։ Դե հմի մեկ-մեկ համբուրիր և ուխտդ արա։ Թող ես սուրբերը բարեխոս լինեն։ Առավոտ էլ լսող ու կատարող։

Կամաբյանը լսեց վարդապետի բացատրությունները և մեքենայաբար խոնարհելով համբուրեց մասունքները, առանց նկատում դիտելու հավատո կամ ներմուծանդուբյան վոր և է հուշում։ Միայն ափսեի մեջ դրված դրամներից դուշակելով, վոր այդ արարողության պիտի հաջորդե, նաև դրամական տուրք, ծոցից հանեց քսակը և մի կոպեկ տասնոց դրավ ափսեի մեջ։

Լուսաբարը, վոր յերևի վաղուց եր ինչ չեր տեսել այդպիսի առատ նվեր, որհնեց յերիտասարդին սրտաբուխ խոսքերով և ապա մի դգացված «պահպանիչ» ել տալով՝ ճանապարհ դրավ նրան դեպի միջանցքը։

— Ցեվ վորովհետև հենց թանգարանի դիմաց, ընդհանուր միջանցքի վրա բացվում եր մի դուռ, վոր հանում եր դեպի ս. Աստվածածնի յեկեղեցին, ուստի վարդապետը առաջարկեց Պետրոսին անցնել այդ դռնով, յերբ կամենում եր «տաճարը» տեսնել։ Իսկ ինքը յուր «ծառայությունը» կատարած համարելով, դարձավ նորեն դեպի թանգարանը, ցուցահանած մասունքներն ու ստացած նվերը իրենց տեղը ամփոփելու։

Ճաշու ժամն ավարտած, ժամերգուները դուրս եյին գալիս, յերբ յերիտասարդը մութ միջանցքից յելնելով, մտավ յեկեղեցու փայտաշեն գավիթը, իսկ այնտեղից՝ յեկեղեցին, ուր, ի միջի այլոց, նա հանդիպեց նորեն յերիտասարդ աբեղաներին։ Վերջիններս դարձյալ մոտեցան նրան, հարց ու փորձ արին տեսածների մասին և ապա սկսան բացատրություններ տալ նկատմամբ ս. Աստվածածնի յեկեղեցու, վոր, չնայելով յուր հազարամյա հնությանն, տակավին շեն եր և ամրակուռ։ Գալով բարեզարդության՝ սա ել աչքի ընկնող վոչինչ չուներ յուր մեջ — զարդերն ու սպասները աղքատ եյին, պատկերները՝ դեհին և անարվեստ։ Միակ արժանիք ունեցողը՝ սեղանի առաջ դրված Կոթա սուրբ Նշանն եր, վոր հայտնի յեր յուր բազմադարյան հնությամբ։ Դա պարզ յերկաթից շինած մի խաչ եր, կես կանգուն յերկարությամբ և թևերին ուներ մի-մի հատ վոչ մեծագին քարեր։ Աբեղաները բացատրեցին, վոր այդ խաչը, ըստ ավանդության, պահում և յուր մեջ մի կտորը այն յեկաթե տաշտի, վորի մեջ կույս Մարիամն լողացնում և յեղել մանուկ Հիսուսին և թե դա համարվում և Սևանա անապատի ամենամեծ սրբությունը։ Ապա յերիտասարդ աբեղան համաարյանի ուշադրությունը հրավիրեց ս. Աստվածածնի մի փոքրիկ պատկերի վրա, վորը կախված եր սեղանի աջ կողմը և վորը, չնայելով յուր ծխից ու հնությունից սևացած լինելուն, յերևում եր շնորհալի վրձինի արտադրություն։

— Սա այն պատկերն է, — ասաց արեղան, — վորի առաջ Մխիթար Սեբաստացին, Վենետկյան միաբանության հիմնադիրը աղոթում և լեզել, յերբ կույր աչքերով դանվում է յեղել Սևանում և վորի առաջ նա յուր հայտնի ուխտն է արել... Շատ ժամանակ չն, ինչ դիպվածով դտել են այս ս. Առաքելոց յեկեղեցու խորշերից մինում, անխնամ ընկած ու փոշոտված...

Ծերիտասարդը սկսավ ուշադրությամբ դիտել պատկերը։

— Ի՞նչ մաքեր է սա զարթեցնում ձեր մեջ, — հարցրեց արեղան, կարծես շտապելով, մի նոր բան ասելու, քանի դեռ վոչ վոք չեր խանգարում իրենց։

— Մտածում եմ թե, յերեն այսպիսի մի սիրուն գործը, վոր դարերից ի վեր դանվելով Սևանում, հոգածու խնամքի արժանանալու փոխարեն, ընկած է յեղել անհայտ խորշերում և յերևան և յեկել միայն դիպվածով, ինչ քանկագին հնություններ, ուրեմն, չեյին կարող անհետանալ այստեղ հոգատար սրտի և խնամող ձեռքերի պակասությունից։

— Այդ էլ պատշաճ մտածություն է, բայց յես կարծում եյի, թե այս պատկերը մի ուրիշ միտք կծննցներ ձեր մեջ։

— Այսինքն, ինչ։

— Այն թե՝ շուտով կլրանա յերկու հարյուր տարին այն սրից, ինչ այս պատկերի առաջ աղոթողը Սևանից հեռանալով, հիմնեց ուսար յերկրում միաբանական մի ուխտ։ Ձեզ հայտնի յե, թե ինչ ծառայություն արին այդ ուխտի անդամները հայ գրականությանը։ Մի կողմը թողնենք նրանց՝ աղքի մեջ կաթոլիկություն տարածելու և պատմական գրքերում՝ հայ յեկեղեցուն ու յեկեղեցականներին վերաբերյալ փաստերն հեղաշրջելու տխուր ջանքն ու ձգտումը։ Ամեն լույս ունի յուր ստվերը, ամեն մաքրություն՝ յուր բիծը։ Բայց անհերքելի յե այն, վոր Մխիթարյան միաբանությունը գնահատելի գործ կատարեց՝ հնության և անհայտության փոշիներից դուրս հանելով հայ լեզվի թանկագին արտադրությունները, նրա վոսկեղենիկ մատենադրությունը և նրա ընդհանրացնելովը սիրելի դարձրեց մեզ մեր նախնյաց լուսն ու անցյալը, ընդ նմին ստվերացնելով մեզ, ապրել և վոգևվորվիլ նրանցով... Սա, արդարև, մեծ գործ եր, արժանի հարգանքի և յերախտագիտության։ Այսպիսի մտածության, բնականաբար, հաջորդում է մի ուրիշը. — Մխե՞ն Սևանը ևս չեր կարող դառնալ մի ս. Ղազարու կղզի։ Մխե՞ն Սևանը չեր կարող արտադրել մի նոր Մխիթարյան ուխտ։ Սա, ի հարկե, չեր ունենալ ս. Ղազարի առավելությունները, վորովհետև չեր դանվում Ցևիզոտայի սըրտում, զարդացած ու բարեկիրթ ազգերի մեջ։ Բայց մենք էլ Սև-

վանից չէիր պահանջիլ այն, ինչ վոր ավավ Վենեաիկը, այլ դեռև նրա կեսը, թեկուզ կիսի կեսը։ Սևանը մի կողմից եվ այն առավելությունը կունենար, վոր ավածը կլիներ անխառն, հարատամ... Ճշմարիտ է, այն ժամանակ յերբ ս. Ղազարու հայրերը իրենց խուցերում խաղաղ նստած, հանդիստ աշխատում էին, վրչ հարձակման սպասելով, վրչ կողոպտվելուց վախենալով, Սևանը զանվում եր բարբարոս խանների դժոխային լուծի տակ, միշտ ահի ու սարսափի մեջ, սեփականության իրավունքից դուրկ և կեղեքիչների քմահաճության յենթակա. բայց չի վոր, ահա, յոթանասուն տարի յե, ինչ ռուսաց տիրապետության շնորհիվ այս յերկիրը խաղաղել, արհավիրքները վերացել են և այս վանքի միաբանությունը առացել և հանգիստ ու ապահով վիճակ։ Արդ, մթթե չեր կարելի այս յոթանասուն տարվա ընթացքում առեղծել այստեղ մի գործ, վոր յուր արժանիքով հավասար լիներ Վենեաիկցիների, գեթ հիսունամյա գործունեության։ Մթթե չեր կարելի հիմնել այստեղ ժառանգավորաց մի բարեկարգ դպրոց, վորի սանները աշխարհային աղմուկից ու ապականությունից հեռու, այս առողջարար ոդում, այս պայծառ յերկնքի տակ ապրելով և ուսանելով պատրաստվելին հասարակաց ծառայության համար... Մթթե չեր կարելի ժողովել այստեղ հմուտ, բանիբուն գիտությամբ ու առաքինությամբ հայտնի հոգևորականներ և կազմել նրանցից մի գիտնական կաճառ, վոր պարապեր հին դրականությունը մշակելով և նորը զարգացնելով։ Դուք հո ձեր աչքով տեսաք մեր այստեղի գրադարանը։ Վորքան աղքատ, խղճուկ... մինչև իսկ ամոթ է գրադարան անունը տալ նրան, մի քանի տասնյակ կիսամաշ ձեռագիրներ, մի յերկու հարյուր հնատիպ գրյանք... քաղաքներում տիրացուներ կան, վորոնք դրանցից ավելին ունին։ Բայց չի վոր Սևանը հնուկն հայտնի յեր յուր բազմահարուստ մատենադարանով, չի վոր շատ տեղերի գրական գանձերը այստեղ էին ամբարվում, կամ ավանդ դրվում։ Այժմ ուր են նրանք։ Բարբարոս թշնամիների ավերը, այո, շատ բան և կորզել Սևանից. նույնիսկ նրա գրադեսա միաբանությունը՝ անխիղճ կերպով և նրա գրական հարստությունը վատնել։ Բայց վորքան ավելի զրկանք են պատճառել նրանք, վորոնք այս յոթանասուն խաղաղ տարիների ընթացքում ձեռքերնին ծալած նստել են այստեղ և բավականացել միայն աղոթելով, կամ հսկումներ կատարելով... Ինչու՞ արդյոք Սևանը, վոր գտնվում է հայրենի հողի վրա, նրա սրտի ու հոգու մեջ, ինքը չէ տալիս վենեաիկին՝ այս հողին ու ջրին, սրա անցյալին ու ներկային վերաբերող ուսումնասիրությունները, սրա սրտին ու հոգուն հարազատ հուշերը և, ընդհա-

*կառակը, ինքն և նրանից մուրում։ Ինչո՞ւ... բայց այդ «ինչո՞ւ»-ները անթիվ են և դրանց բոլորի պատասխանը մեկ. այսինքն այն՝ որ այսքան տարիների ընթացքում, չի գտնվել մեր յերկրում մի մարդ, աշխարհական լինելը նա թե հոգևորական, որ վոգևորվեր Մխիթարի զգեցած վոգևորությամբ և վառեր Սևանում լուսո այն ճրագը, որ առաջին նվաղ վառեց Լուսավորիչ և վորն ապա տիտուբյունն ու խավարը հանդցրին... Այո, յեթե այդ մի հատ մարդը գտնված լիներ այստեղ, ապա դուք այսոր Սևանը չեյիք տեսնիլ այսքան անշուք, անփառունակ, չեյիք տեսնի նրա կյանքը այս աստիճան անշարժ, վոգին՝ մահամերձ... Իրրև նյութական ապացույց այստեղ ապրողների անշարժության, ահա այն կացարանները, որ դուք տեսել եք, վորոնց մեջ ապրել են նախկին միաբանությունները և վորոնց մեջ, ահա, ապրում ենք նաև մենք։ Այդ շինությունների կառուցումից մինչև այսոր՝ անցել են հազար յերկար տարիներ։ Ցավ սակայն նրանք մինչև այսոր էլ նույն խոնավ, բորբոսնած, հազածածկ կառուցով խցերն ու խցիկներն են, վորոնք ամենից առաջ մարմիններն իսկ մաշելով, մաշել ու ծյուրել են նաև նրանց հոգին և անընդունակ դարձրել մի ճշմարիտ ու եական բարիք ստեղծելու... Անշուշտ դուք անցաք այդ կացարանները իրար հետ միացնող բավղաձև անցքերից. տեսաք թե ինչպիսի խավար և սիրում նրանց մեջ... Հարկավոր չեր վոչ մեծ խելք, վոչ էլ ճարտարապետական տաղանդ, վոր մարդ իմանար, թե այդ միջանցքների վրայի կառուցը ծակելով և մի քանի տեղ, յեթե վոչ ապակե պատուհաններ, այլ գեթ հասարակ յերդիկներ դնելով, կարելի յեր բոլոր անցքերը միանգամից լուսավորել։ Սակայն հազար տարի այս խավարում խարխափող միաբանությունների մեջ, չի գտնվել մի գլուխ, վոր այդ հասարակ ճանապարհով առաջ տված լույսն այդ անցքերը մացնե և նրանց անթափանցելի խավարը փարատեր։ Ճիշտ այդ ձևով էլ խավար են մնացել այդ խուցերում ապրող մարդկանց վոգիները. արդյունքը յեղել է այն, ինչ վոր տեսնում եք այսոր...

Ցերեկասարդ արեգան յերեսի դեռ յերկար կճապաղոսներ, յեթե խմբին չմոտենար վանքի անտանը և վանահոր կոզմից չհրավիրեր հյուրին ճաշի։

Այդ հրավերը զգաստացրեց թե խոսողին և թե լսողներին. ուստի ամենքը միասին յելնելով յեկեղեցու գավթից, առաջացան գնալ բակի սիզավետ կողմը, ուր հովանավոր ուռիների տակ, բացված եր ընդհանուր սեղան, վորը և բոլորեցին նրանք, իրենց գլուխ ունենալով վանահորը։

Վերջինս սեղանն օրհնելով առաջարկեց հյուրին վայելել վանական «անպաճուճ» ճաշը, որի սկզբում բաղկացած էր պանրից, չորած ձուկերից և աղած կողակից, իսկ խորտիկը, որ հետևեցին, թանապուրից, նոր խաշած իշխաններից և ձավարով ու յուղով պատրաստած «քաշով»-ից։ Սեղանի վրա դրված էր միայն միսը, կամ նրանից պատրաստած կերակուրը։ Վանահայրը բացատրեց, որ վանական խստակեցության որենքը արգելում է իրենց դռի մսից զատ, ուրիշ միս ուտել, կամ դործածել այն կերակուրի մեջ։

Մի քիչ հետո, սակայն, կամաորյանը նկատեց, որ վանահայրը, չերևի, համեստությունն էր անում «անպաճուճ» անվանելով առաջարկված ճաշը, ապա թե ոչ, վերջինս վրդ միայն հեռի չէր անպաճուճ լինելուց, այլ և չէր կրում խստակեցության կնիք։

— Ձես «անպաճուճ» անվանեցի ձեր տեսակետից, իսկ մեզ համար սա մինչև անդամ փարթամ ճաշ ա, — բացատրեց վանահայրը ծիծաղելով։ Ապա կամենալով մի զաղափար տալ հյուրին իրենց խստակեցության մասին, ծանոթացրեց նրան Սևանա անապատում ընդունված պահեցողական կարգերին, որից չբևաց, որ նրանք տարվա մեծագույն մասը անցնում են պահքով։ Վարոհետև բացի հասարակ ու շաբաթական պասերը, նրանք պահում էին նաև չորեք «մեծ պասեր»։ Դրանցից առաջինը տարվա մեծ պասն էր, որ բուն բարեկենդանից սկսվելով, վերջանում էր զատկին, չերկրորդը՝ Հոդեգալուստից մինչև Վարդավառ, որ տևում էր ութ շաբաթ, չերրորդը՝ Վարագա խաչի տոնից՝ մինչև հինանակի պասը, որ դարձյալ ուներ ութ շաբաթ. — եղ բոլոր կարճ ու երկար պասերին, — շարունակեց վանահայրը, մեր միաբանության կերածն լինում ա ձեթ, լոբի, սիսեռ, վոսպ ու կանաչի։ Միայն ուտիքին ա որ յուղ, կաթ ու ձու կարող ենք ուտել, կամ բրինձ ու ձավար։ Ծովից հանած ձկներից էլ ի հարկե, անուշ ենք անում, որքան պատահում ա։

— Հեր օրհնած, էլ ուրիշ ինչ ես ուզում, — կամացուկ շշընջաց չերիտասարդ արեղան, որ նստած էր կամսարյանի կողքին։

Վերջինս ծիծաղեց։

— Ընչի չես ծիծաղում, — հարցրեց վանահայրը ժպտալով,

— Ոչինչ, մտածում եմ թե ինչ կանեի չես, չեթե ձեր միաբանը լիների։

— Ի՞նչ պըտի անեյիր. կապրեյիր ենենց, վոնց որ մենք ենք ապրում։ Ըստոնք էլ քեղ պես տղերք են ըլել, հա վարդապետ չեն ծնվել։ Այ, տեսնում ես, — ցույց էր տալիս վանահայրը արեզա-

Ներքին. — ամեն բան սովորել են, կարդի ու կանոնի վարժվել. համ սիրով ապրում ու ըսկի դժգոհում չեն։

Ճաշը վերջանալուց՝ կամսարյանն շտապեց յուր շնորհակալությունը հայտնելու վանահորը և բոլոր միաբանությանը՝ իրեն ցույց տված սիրալիր ընդունելության համար և ապա պատրաստվեց հեռանալ կղզուց։ Բայց վերջինս հենց այդ միջոցին հիշեց, որ բացի «Թանգարանին» տված նվերը, անհրաժեշտ է նաև միաբանության ոգին նվիրաբերել մի բան, ուստի խնդրեց վանահորը բերել տալ նվիրատվության մատյանը, որտեղ յուր տուրքն արձանագրեն այնտեղ։

Վանահայրը սկզբում չհասկացավ նրա ասածը, ապա յերբ յերիտասարդը յուր խնդիրը կրկնեց, նա ժպտալով նկատեց։

— Եհ, որդի, մեր վանքումն ինչ ա շինում մատյանը... մենք նահապետական մարդիկ ենք, ուխտավորը գալիս ա, իրա ուխտն անում, յեդո վանահոր աչն առնում, մի աջահամբույր տալիս, գնում։ Նրանից յեդը ել ով ա հարցնում քե ինչ տվավ, ինչ չտվավ, յա չի մեղանից ով պտի հաշիվ ուղի։ Եդ վոր աջահամբույրի համար ել դիր ու կիրակոս պահենք, ծերն ուր կերթա։

— Բայց յես կարծում եմ, վոր յերեք այդպիսի մի կարդ սահմաններից, այսինքն ամեն տուրք մատյանի մեջ արձանագրվեր, վատ չեր լինիլ։ Դա, մինչև անգամ, ապուռ կրներ վանքին։ Նախ՝ վոր այդ մատյանը կարելի կլիներ առաջարկել ամեն այցելուի, յերկրորդ, վոր վերջինս հատուտ դիտենալով քե յուր տված արձանագրվում և մի տեղ, և այն ել ի տես ուրիշ այցելուների, կնվիրաբերներ ավելի առատորեն։

— Եդ հաս ես չահիլների խոսքն ա. երևում ա դու ել ըսդոնցից ես լսել, — նկատեց վանահայրը, կարծես վիրավորվելով.

— Դա ինչ մի նոր բան և, վոր յես սրանցից լսեմ. բոլոր աշխարհում ընդունված, ամեն տեղ գործադրվող մի սովորական բան է։

— Չե վորդի, յես մատյան բան չեմ դիտում։ Միշտ ասել եմ, ես որ ել կասեմ. վանքի մատյանը նրա վանահայրն ա. ով նրան հավատում ա, նրա վրեն վստահ ա, թող տա, ինչ ուզում ա. ով չի հավատում տերը նրա հետ. եղենց մարդու տուրքն ել ըսկի վանքին պետք չի։

Կամսարյանին այլևս առարկելիք չեր մնում, նա շտապեց յուր սխալը ուղղել նրանով, վոր ջերմեռանդությամբ համբուրեց վանահոր աջը և մի ոսկեղեն դրամ նրա ձախում։

Վանահայրն, ի հարկե, հաշտվեց յուր սրտում յերիտասարդի հետ և քաղցր խոսքերով սրհնելով նրան, մաղթեց նաև բարի ճանապարհ։

Գևորոսը նորից յուր շնորհակալությունը հայտնեց միաբանության բոլոր անդամներին և բարեկամաբար նրանց ձեռքը սեղմելով, ճամբա բարև ասաց և հեռացավ։ Աբեղաներից մի քանիսը, նուշկաները և լուսարարը, ուղեկցեցին նրան մինչև լճափը։

Այստեղ նրանք հանդիպեցին վանքի յեկեմից կառավարիչ Սարկավագին, վոր հենց նոր եր վերադարձել ծամաքաբերդից, ուր գնացած եր վանքի «Դրսի տունը» այն և նրա անառակության արտաքին բաժանմունքը և ուր սա հաճախ յերթևեկում եր գործով։

Լուսարարը յերիտասարդին ծանոթացնելով նորեկի հետ, ցավ հայտնեց, վոր վերջինս վաղ չեր վերադարձել, ապա թե վոչ, ասաց — Նա ընենց պատիվ կտարքեղ, վոր քո որում Սևանը ըսկի չեիր մոռանա։

— Շնորհակալ եմ, դուք եղ լավ պատվեցիք, Սևանը դարձյալ չպիտի մոռանամ, — հարեց յերիտասարդը։

— Զե, մեր բանն ուրիշ ա, Սարկավագինն ուրիշ. սա բանի դյդան լավ ա գիտում, — կրկնեց լուսարարը ծիծաղելով։

Սարկավագի ասպիճանում գտնվողյանը տեսել եր միշտ մի յերիտասարդ, հաճախ աշխարհականի շորերով, բայց նորեկը վաթսունն անց մարդ եր, բարձրկեկ հասակով, առողջակազմ, միայն մի քիչ դալկադեմ։ Ուներ շեկ, ալեխառն մորուք և ծավի խորհայաց աչքեր։ Հպարտությունը վոչնչով չեր դանազանվում վարդապետների հպարտությից, վորովհետև բազկանում եր նույն մարդկապուչյա կտավե կապայից, շալե դաստառ, կոշտ բրդե փաբաջայից և խայտաբղետ դուլբաններից ու քոշերից։ Միայն թե վեցարի փոխարեն գլխին ծածկած եր գառան մորթու տափակ գդակ, վոր գարնբալդի կոչվածի ձևն ուներ և վորի մեջ այնպես խոր եր մացերը գլուխը, վոր ծածկել եր ճակատը՝ մինչև թավամազ հոնքերը։

Ծպիտը, վոր նա խաղացրեց շրթունքներին, հյուրին վաղջունելու ժամանակ, բնազդոսիկ եր և չեր հարմարում դեմքին, վոր կարծես առեղծված եր միշտ խիստ ու մտախոհ յերևալու համար։ Առաջին տպավորությունը, վոր նա արավ յերիտասարդի վրա, այն եր թե՝ նա բանի տեղ չեն դնում միաբանության անդամներին։ Վորովհետև մոտենալուց, նա վոչ միայն չնայեց վերջիններն վրա, այլև մինչև իսկ չտեսնելուն տվավ, իբրև այնպիսի մարդկանց, վորոնց հետ չուներ վորևե առնչություն, կամ վոքանց գոյությունը չեր հետաքրքրում իրեն, լոկ այն պատճառով, վոր գիտեր թե նրանցից վոչ մեկը չե կարող յուր հայտնի վիճակի վրա ունենալ լավ կամ վատ ազդեցություն։

Տպավորական քաղաքավարությամբ յերիտասարդի «քեֆը» հարցնելուց հետո, նա ցանկացավ իմանալ թե ինչու վերջինս չե ճանաչում իրանց մոտ մի քիչ ավելի։

— Ուրախությամբ կմնայի, բայց իմ ձիասպանն, ահա, նստած լճափին սպասում է ինձ, — առարկեց յերիտասարդը։

— Վնաս չունի, նրանք սովոր են սպասել, — նկատեց Սարկավագը այնպիսի մի յեղանակով, որ կարծես այդ ընդհանքը իսկի մարդիկ չեյին։

— Բայց միևնույն է, յես արդեն ձեր վանքում ամեն իշն տեսա, ամեն բանի ծանոթացա, ավելի մնալն այլևս միտք չունի։

— Հմ, դե որ եդպես ա, լավ ա։ Աստված շատ տեսնելու էլ բան չունենք, մեդարտակ վանք ա, մին էլ մի քանի սևադլուխներ. յեկողն ուրիշ ինչ պտի տեսնայ, — նկատեց Սարկավագը ժպտալով, ապա նայեց արեգաներին այնպիսի մի հայացքով, որով կարծես կամենում եր ասել՝ «չլինի թե սխալվիք ուրիշ կարծիք հայտնելդ»։

Նրա դիտողությունը, սակայն, ոչ մեք առավ ուշադրության, իսկ Պետրոսը շտապեց դեպի նավակը, որ սպասում եր իրեն։

Ծովակն անհանդիստ եր, թեպետ վրէ անտառ հուզված։ Ալիքները դեռ ևս խաղում եյին իրար հետ և կարծես ղպուշանում միմյանց ընդհարվելուց, որպեսզի ծովակի ժպտուն դեմքը չխռովեն։

Կամսարյանի հարցին թե՝ արդյոք ջրի անհանգստությունը վտանգ չի սպառնում, Սարկավագը պատասխանեց.

— Եդ տեսակ անհանգստությունից հնչ վտանգ չկա. ուրիշ ա, որ քիչ հետո քամին սաստկանա, բայց մինչև են վախտը դու կլինես Զիրուխլուսում։

Մինչդեռ ուղեկցող արեգաներից մինը, որ մեր ծանոթ բազաքարկուն եր, յերիտասարդին ավելի միամտացնելու համար, պատրաստակամություն հայտնեց ուղեկցել նրան մինչև դիմացի ափը։

Կամսարյանը սիրով ընդունեց այդ առաջարկությունը և նրանք միասին մտան նավակը, որ իսկույն էլ առաջացավ դեպի խորը։

Սակայն այստեղ ալիքները թվում եյին հետզհետե ավելի անհանգիստ և, հետևապես, ավելի ահարկու։ Թեպետ թիավարների հմուտ բազուկների շնորհիվ հնարավորապես նավակը սուրում եր արագ, այսուամենայնիվ ծփանքը նրան այնպես եր տատանում, որ թվում եր թե ահա, ուր որ է մի հորձանք կխուժե նավակի խորը և լցնելով այն՝ ուղևորների հետ միասին կինջնէն հատակը։

Յերիտասարդ արեգան տեսնելով, որ Կամսարյանը յերկյուղ է կրում, սկսավ նախ նրան հանգստացնել, ասելով որ ծովակի ավելի հուզված ժամանակն իսկ ամենքը նրա վրա յերթևեկում են

անյարկյուղ, ըստ վորում մինչև այսօր դեռ վոչ վոք այդպես վտանգի չէ հանդիպել։ Իսկ հասյա նրա ուշադրությունը ուրիշ բանի վրա դարձնելու համար, սկսավ նորեն խոսել վանքի տվիրից։

— Դիտեք բարեկամ, յես շատ ուրախացա, յերբ դուք վանահորից նվիրատվության մասյան պահանջեցիք։ Թեպետ ցավալի յեր, վոր նա կարծեց թե դուք մեր խոսքն եք կրկնում և վոչ թե ձեր սեփական ցանկությունը հայտնում, այսուամենայնիվ, լավ յեղավ, վոր այդ բանն արիք, վորովհետև դրանով մեր դատին ուժ տվիք։ Ցերանի թե ամեն այցելու այդպիսի մի պահանջ անե նրանից։ Այն ժամանակ նա կիմանա, վոր համեստության պակասությունը կամ ըմբռստությունը չե պատճառ, վոր մենք ևս հաճախ նման պահանջներ ենք անում, այլ մեր դիտակից պարտաճանաչությունը, վորին իրավունք չունինք դավաճանելու լռելով այնտեղ, ուր պետք է խոսել։ Դուք նվիրատվության մասյանն եք ասում՝ մի հարցրեք թե ուրիշ վորևե մասյան ունի՞ մեր վանքը։ Տեսաք դուք այդ սարկավագին, վոր նոր վերադարձավ։ Ուշադրության արժանի անձնավորություն է դա։ Ով վոր կամենում է մեր մի կարդ գործերի անհաջողության դաղտնիքը լուծել, նա պետք է ուսումնասիրե այդ տեսակ անձանց, վորոնք չնայելով իրենց վոչնչության, այսուամենայնիվ մեծ դեր են խաղում մեր բաղդը տնօրինելու կարևոր գործում։ Սևանում, որինակ, այդ մարդը վայելում է մեծ իրավունքներ։ Չեմ սխալվիլ, յեթե ասեմ թե դա յե մինչև անդամ մեր ամենի գլխավորը և վոչ թե վանահայրը, վոր վոչ այլ ինչ է, յեթե վոչ մի խեղճ ու տգետ մարդ։ Վերջինս, իսկապես, մեզ չե սիրում նրա համար, վոր իրենից հաճախ անում ենք այնպիսի պահանջներ, վորոնց խորհուրդը նա չե հասկանում։ Մյուս կողմից ել նրան լարում են մեզ դեմ յուր մտերիմները և մանավանդ սարկավագը, վորին նա հավատում է միամտաբար, կամ, դուցե, հարկից ստիպված։ Ո՞վ է, սակայն սարկավագը, վոր այսքան ուժ ունի.— մի տգետ ու դեհեկ մարդ, վոր անհիշատակ ժամանակներից դոնվելով այս անապատում, յուր ժրությամբ և ճարպկությամբ չնորհիվ արժանացել է վանքերևույթ կարգադրիչների ուշադրության և նրանց ջանքերով ել ժվերևից կարգվել վանահոր ոգնական։ Նրա պաշտոնն է, իբրև վանքի գործակատար հսկել նրա կալվածներին, ժողովել յեկամուտը, և յերբեմնապես դնալ մտերի քաղաքները, թե այդ տեղերի կալվածոց արդյունքը դանձելու և թե միաբանության համար հագուստ կամ այլ պիտույք հայթայթելու։ Բայց նա յուր պաշտոնը կատարում է վոչ թե իբրև գործակատար, այլ իբրև վանքի տեր ու իշխեցող։ Ցեկա-

մուտ ձևոք բերելու դժվարին մասը նա, իհարկե հանձնում է վարդապետներին, սրանք են, որինակ, հավաքում միաբանության հասանելիք ռոճոի բաժինը—վոչխարը, պանիրը, ձեթը, ցորենը և այլն։ Այս առիթով խեղճերը սարերն են բարձրանում, ձորերն են իջնում դաշտերն ու դյուղերն են չափում և սակայն այդ ամենը վանքը մանելուց հետո, յենթարկվում է սարկավագի միահեծան իշխանության։ Ինչ վերաբերվում է դրամական գործերին, դրանք արդեն նրա ձեռքումն են։ Ի՞նչ մուտք ունի վանքը և ինչ յելք այդ մենք չդիտենք, բայց գիտեմ սարկավագը և յերեք հարկ լինի վերևս հաշիվ տալ մեկին, այդ կ՚տրվի այնպես, ինչպես վոր սարկավագը կուզե, և վոչ թե այնպես, ինչպես, վոր իրոք կա։ Այսօր կզրկեն մանելուց դուք խոսեցիք դյուղացիների տուրունջի մասին, վորը, սակայն, ընկերս համարեց դրախոսություն, բայց նա սխալվում էր։ Դյուղացվոց տուրունջն էլ ունի յուր հիմքը։ Մեր գործերն, առհասարակ այնպես են ընթանում, վոր հեռվից նայողը պիտի կարծե թե, այս անտեր հայոց աղքում վոչ մեծ կա, վոչ փոքր, վոչ ուր կա, վոչ տիրական, այլ կան մի-մի սարկավագներ, վորոնք հենված իրենց պաշտպան ռույժերինց, գործում են, ինչ կամենում են և վոչ վոք նրանց չե իշխում խանգարել։ Ծեվ հենց այդպես էլ է, յերե յերբեմն մարդիկ համբերությունից յելնելով սկսում են տրտնջալ, կամ ուր հարկն է բողոքել, այդ ամենի արդյունքը լինում է այն, վոր սարկավագը կատարում է մի փոքրիկ հանդապարհորդություն, համբուրում է հանյերևույթ կարգադրիչների ձեռքը և վերադառնում դարձյալ յուր պաշտոնով ու իրավունքներով։ Այնուհետև ջուրը դարձյալ հոսում է յուր հին համպով և մարդիկ հոգնած հաշտվում են այդ դրության հետ։ Այս է խնդալես պատճառը, վոր վանահայրն ամեն բանում համակերպվում է սարկավագին։ Նրա մեջ այլևս մեռել է տրտնջող ու բողոքող հոգին և միացել է միայն մի փոքրիկ փառասիրություն, վոր գոհ է, դեթ նրանով, վոր ինքն աշխարհի առաջ համարվում է «վանահայր»։ Իսկ թե այնուհետև ինչ է կատարվում շուրջը, այդ ամենի համար նա կարող է աչք գոցել, վորպեսզի «հանյերևույթ» պաշտպանները չդրդռվին։ Այս կերպով են վարվում մեր գործերը շատ տեղ և «հոհմամ» մարդիկ չեն վրդովվում այդ դրությամբ, վորովհետև հավատացած են թե վոչինչ այլևս չե կարելի փոխել։ Բայց մի՞թե այդպես է։ Մի՞թե այդ ձևով պիտի մտածենք նաև մենք, վոր մտել ենք հոգևոր գինվորության մեջ գաղափարով վոգևորված... Ի՞նչպես թե մի տգետ ու դռեհիկ գեղջուկ միահեծան տեր լինի այս հինավուրց անապատին... Ի՞նչպես թե այդ պաշտոնը նա գնե այնպիսիներից, վորոնց մի պուդ

աղած կողակի նվերը ավելի յի դրաղեցնում, քան թե Սևանի շուրջն ապրող ժողովրդի ցավերն ու կարիքները... Ցավ յերբ այս մասին մտածում ես, յերբ յերևակայում ես թե ինչ կարող եր լինել պատմական Սևանը, ինչեր կարող եյին լինել հռչակավոր Տաթևը, Սանահինն ու Հաղպատը, Գանձասարն ու Ամարասը և ուրիշ շատերը, վորոնք, սակայն, այսոր վոչ այլ ինչ են, յեթե վոչ ավերանոցներ, դայրույթից քիչ և ետում վոր խելագարվիս... Ահա, այսպիսի դեպքերում ես, պարոն Կամսարյան, վոր մենք հիշում ենք ձեզ, դարդացած ու կարող յերիտասարդներիդ և կարոտում ձեր ազնությանը...

Վերջին բացականչությունը նեղը պիտի լծեր Կամսարյանին, յեթե նրա բաղդից նավակը չհասներ ափին։ Բայց նա վոչ միայն հասել, այլև կողն արդեն դեմ եր արել ժայռին։ Պետք և ուրեմն յելնելը։ Այս դեպքում, իհարկե, պատշաճից դեմ չեր, վոր յերիտասարդը, իրեն ուղղված սրտառուչ դիմումին հարմար և վայել պատասխան չտալով, շատացավ միայն արեզայի յեռանդը մի քանի խոսքով դովելով։ Հետո բարեկամաբար նրա ձեռքը սեղմելով, շնորհակալություն հայտնեց սիրալիր ուղեկցության համար և հատկապես խնդրեց, վոր հայր-սուրբը հաճի վստահորեն դիմել իրեն, յերբ հարկ լինի հանձնել իրեն վորևե պատվեր կատարելու։

— Պատվերներ տալ ձեզ՝ չեմ համարձակվիլ, բայց դուցե խնդրեմ, վոր յերբեմն ինձ համար նոր դրքեր դրկեք, դրանով դուք ինձ շնորհապարտ կ'կացուցանեք, — ասաց արեզան։

— Ամենայն սիրով և ուրախությամբ, հարեց յերիտասարդը և մակուկավարներին առատորեն վարձատրելով, դուրս յելավ ափը։

Մի քանի րոպեյից հետո նավակը հեռանում եր առնելով յուր հետ բողոքարկու արեզային, իսկ Կամսարյանն յուր ձին խրախուսելով, դիմում եր դեպի Ջիբուխլու։

ԺԴ

Դեռ բավական եր կար, վոր Պետրոսը հասավ դյուղ։ Տաննուտերը տանը չեր. նրան դիմավորեց տանտիրուհին, վորի հետ խոսել նա չեր կարող։ Ինչպես անցցնել ուրեմն որվա մնացորդը, կամ ուր գնալ, մտածեց յերիտասարդը և իսկույն էլ մտաբերեց տիրացու Մոսեսին։ — Այցելեմ նրա դպրոցը, այս կարող և ուրախացնել տիրացուին, խոսեց նա ինքն իրեն և դուրս գնաց։

Առաջին պատահող անցորդը ցույց տվավ նրան տիրացուի տեղը, դեպի ուր և ուղղեց յուր քայլերը։

Տնակն, ուր ապրում եր Մոսին, գտնվում եր դյուղի ծայրում և բաղկացած եր մի հատ յերդիկավոր միհդուռն ոդայից և ցա-

ծուն, բայց լայնադիր սրահից, որի առաջ դանվում էր նաև փոքրիկ բակ, կիսով չափ պարապած դետաքարերի անշաղախ պատով։ Հովանավոր սրահում, այլ և բակի այն մասում, որի վրա հարևանի աթարի դեղը տարածել էր լայն տակեր, անկարդ ու խառն ի խուռն նստատած էին մոտ յերկու տասնյակ տղաներ, վոմանք կտավի փոքրիկ մինդարներին, կամ հին կապերտի կտորներին, վոմանք պատերի տակ ընկած սալաքարերին, իսկ ուրիշներն՝ ուղղակի հողի վրա։ Նրանք ձեռքերնին մի-մի դիրք առած կարդում էին, յերբեմն կամացուկ, յերբեմն մռմռալով, իսկ հաճախ բարձրաձայն, առանց մեկը մյուսին նայելու, վորից և բակի ու սրահի մեջ բարձրացել էր աղմուկ ու ժխոր։

Տիրացուն, վոր Կամսարյանին հանդիպած ժամանակ յերևում էր կորաքամակ, այսօրեղ, աշակերտների առաջ ճմռում էր ձգված ու բարձրացրել։ Մինչև անգամ մորթե գդակը, վոր նա ճանապարհին քաշել էր ղլխին մինչև ականջները, այժմ վոչ միայն բարձր էր՝ ճակատը յերևալու չափ, այլ և քեզ (ծուռ) դրված, վորով նրա դեմքը առանում էր համարձակ ու ինքնավստահ արտահայտություն, Նա ձեռքին ուներ հաստաբուն փայտից շինած մի յերկար քանոն, վոր նմանում էր վորմնադրի գդալի և վորը շարունակ աջ ու ձախ ճոճելով, մռնչում էր մերթ այս, մերթ այն աշակերտին և փոխանակ խոսքով դիտողություն անելու, նրա ծայրով բոթում էր կամ մեկի կրծքին՝ կամ նրանով ուղիղ նստեցնել նրան, կամ մյուսի ղլխին՝ վորպեսզի սա շատ չկորացնի այն, իսկ հաճախ զարկում սրա ու նրա գրքին, վորպեսզի ծնկների վրա դնելու փոխարեն ձեռքերնին առնեն նրանց։

Հեռվում՝ ձայնը մի աշակերտի, վոր կարդում էր կանգնած, հապճում էր ընդհատուբ ժխորին։ Այդ նշանակում էր թե նա դաս է ասում։

— Ի՞նչ է պատահել, վոր դու... կարդում էր աշակերտը մայրենի լեզվից։

— Պատահը չի, ա լակոտ. պատահն ասա, — ուղղում էր տիրացուն։

— Պատահը, վոր դու տպչես...

— Ա հայվան, տպչելը վերն ա. մի շանց տու տեղեմ, — ասում էր տիրացուն և քանոնը ճոճելով խոյանում դեպի աշակերտը։

Վերջինս, մեկ ճոճող քանոնին, մեկ գրքին նայելով, շփոթված պատասում էր տպչելը։

— Ո՞ւր ա, դե շանց տու տեղեմ. շանց տու, շուտ, — կրկնում էր տիրացուն անհանդուրժողությամբ։

Աշակերտը վերջապես գտավ աղպեսը և ցույց տվավ։

— Ապա, եղի ծեք, բա եդ աղպես ա, ես «չո»-ին տենում չես. աչքդ քոռ ա. համ թխեմ դրուստ քոռացնեմ, — ասում էր վարժապետը և ապտ ուղղում, — ասի՝ այդպես։

— Այդպես։

— Չոռ... դե համ միտդ պահի։

— Այդպես ուրախ ծիծաղում ես... շարունակեց աշակերտը։

Կամաորյանը, վոր մի քանի վայրկյան ցանկապատի յետևը կանգնած տեսնում ու լսում էր այս ամենը, վերջապես մտավ բակը։

Ծիրացուն հենց վոր նշմարեց նրան, ձեռքը ընազդաբար դեպի գլուխը տարավ, և դպակի դիրքը ուղղելով, շտապ-շտապ մոտեցավ յերխտասարդին։

— Բարով ես յեկել, ադա, հազար բարով, ես վոր խաչից ա մեզ միտդ ես ըցել, — ասաց նա ժպտալով և սև ու կոշտ ձեռքը Կամաորյանին ուղղելով։

— Ցնկել եմ քո ուսումնարանը տեսնելու, — պատասխանեց վերջինս և թեթևակի ու կես անուշադիր սեղմեց Մոսու ձեռքը։

— Շնորհակալ եմ... Աստծ ել քե մհալ ըցի (ուշադիր լինի), վոնց վոր դու մեզ մհալ ես ըցում... ամա դե կրախշես, քու տեսնելու լայխդ հուսումարան չունեմ։

— Հոդ չէ, ինչ ունես այն կտեսնենք։

— Լավ կըլի, — համաձայնվեց ծիրացուն և դառնալով աշակերտներին՝ կես բարձր ու կես խեղդված ձայնով, հրամայեց, — ադա վե կացեք, աղին գլուխ տվեք։

Աշակերտները մեկը մյուսի յետևից վեր կացան տեղերից ու չվարած ու յերկչոտ հայացքով սկսան դիտել «աղին»։

Նրանց արտաքինը չափազանց տխուր ազդեցություն էր անում։ Մոտ յերկու տասնյակ աշակերտների մեջ հազիվ մի յերկուսը հագնված էին որինավոր, այսինքն ունեին չմաշված շոր և կոշիկ վոտնամաններ։ Մյուսները դրեթե ցնցոտիների մեջ էին, վոմանք մինչև իսկ կիսամերկ և բոկոտն, կային և այնպիսիները, վորոնք արխալուխի (բաճկոն) տակ շապիկ չունեյին, կամ յեթե ունեյին, այնքան էր կեղտոտ, վոր կտավի ինչ դույն լինելը չէր վորոշվում։

— Ապա ձեզ ասըմ չեմ գլուխ տվեք, — կրկնեց ծիրացուն յուր հրամանը։

Աշակերտներից մի քանիսը գլուխ իջեցրին. ավելի վոգբները դեռ նայում էին. ապա ընկերներին հետևելով, նրանք էլ գլուխ տվին, առանց իմանալու թե ինչու յեն այդպես անում։

Մի փոքրիկ դալկադեմ աղա, վոր դեռ քարի վրա նստած յուր մեծ-մեծ սիրուն աչքերը հառել եր ջաղինդ և չեր մտածում վոտքի յևյնել, դրդռդ տիրացուի դայրույքը։

— Ա. լսիտա, խի չես վե կենում, — խուլ ձայնով ճչաց նա և յուր բարկացայտ աչքերը սևեռեց յերեխայի վրա։

Վերջինս վեր թռավ, իրրև ոձահար և յերկչոտ հայացքը սկսավ պատեցնել մերթ ջաղիդ մերթ վարժապետի վրա։

Հին պատահառուն հադուստը, վոր շատ տեղ, նույնիսկ չեր ծածկում տղայի նիհար մերկությունը, անմեղ ու տխուր հայացքը, վոր մի առանձին դրավչություն եր ստացել դդացած յերկյուղի աղդեցության շնորհիվ, այնպես հուդեցին Կամսարյանի սիրտը, վոր նա չկարողանալով յուր դժդոհությունը դսպել, ծանր դիտողություն արավ վարժապետին, վոր նա կոպտաբար և վարվում յերեխաների հետ։

— Վոր դեռ չանես, սրանք մարդ չեն դառնալ։ Դու դիտում չես քե ինչ թաներ թայփա (ցեղ) են։ Ախպեր չեն մերոնք (ղազախեցիք), ընդհանրում խելք կա, շնորհք կա, ըստոնք ջլիդ (բոլորովին) հայտան են, — առարկեց տիրացուն։

— Դեհ լավ, բավական է. աշակերտներին չեն հայհոյիլ, — կամացուկ նկատեց Կամսարյանը և սկսա մոտենալով տղաներին, սկսավ նրանց խոսեցնել, հարցափորձել, մեկին կամ մյուսին կարդացնել, կամ նրանց դրքերին ու տետրակներին նայել։

Տղաներից վոչ մեկը, նույնիսկ մեծերից, վորոնք ձեռքերնին ավետարան ունեյին, կանոնավոր կարդալ չեր իմանում։ Դրելու մեջ, մանավանդ, յետ եյին մնացած բոլորը։ Մի յերեխայի տետրակի վրա նա տեսավ վարժապետի դրած մի քանի տող օրինակը, վոր անկանոն ձևով դրված լինելուց զատ, լի յեր նաև տառասխալներով։

— Ենթե սա յի վարժապետը, ինչ կլինի աշակերտը, — մտածեց Կամսարյանը և դլուխը շարժեց։

— Տեսնում եմ, վոր հավանում չես իմ հուսումարանին, — ժպտալով և միևնույն ժամանակ, քաշվելով նկատեց տիրացուն, յերբ Կամսարյանը յուր հարց ու փորձը ավարտելով, կամենում եր հեռանալ։

— Ինչ ասեմ, Մոսի, լավ կլիներ, վոր դու այս դասումնարանը փակեյիր, — ասաց յերեխատաորդը։

— Ընչի համար, — զարմացավ տիրացուն։

— Նրա համար, վոր դու վոչինչ չես սովորեցնում այս յերեխաներին։

— Ցանի վոնց չեմ սովորցնում։ Բա դու քու աչքով տեհնար վոչ՝ վոնց են կարդում, յա անգիր ասում։

— Տեսա, բայց թե կարդացածներդ և թե անգիր ասածներդ, բոլորն էլ սխալ էին ու անկանոն։

— Դե վոր դրանից լավ կարում չենք սովորցնենք...

— Այն ժամանակ ավելի լավ է, վոր իսկի չսովորեցնես։

Այս դիտողությունը տիրացուի ինքնասիրությանը դիպավ։ ուստի նա համարձակություն առավ խոսելու։

— Դիտես ինչ կա, աղա, որինակի համար ասենք. մի մարդ կա, վոր քաղցած ա, ընենց քաղցած, վոր ուղում ա թիլանա, ինչ արած, ցորեն հաց չկա, վոր տանք իրան ուտի։ Ցես ասըմ եմ ըսաի մի կատը ճաթ (կորկահաց) կա, բերենք տանք իրան. դու ասըմ ես՝ չէ, ճաթը դժար կմարսի։ Հեր որհնած, մարդը սոված թիլանում ա, ցորեն հացը վոր չկա, ճաթն էլ ա տանք, վոր ուտի չմեռնի, ե... Համի մեր ես բեխերքն են։ Լավ, ասալ, մի բան սովորցնում ենք։ Աստւմ չեմ՝ քերականությին յա ճարտասանությին եմ սովորցնում, ըղոնք սկի յես էլ չեմ կարդացել։ Ամա դե մի քիչ գրաճանաչ ենք անում, վոր թղթի սևն ու սպիտակը ջոկեն, յա հարկավոր վախտը՝ մի բարովպիր, յա սանադ (մուրհակ) գրեն, յա չէ, սուդը (դատարան) կանչած վախտը՝ իրանց անունն ու փամիլան կարան ձևոք քաշիլ։

— Ախար յեթե դու այս ուսուցիչարանը չունենաս, գյուղացիք կտեսնեն, վոր իրենց յերեխաները մնում են անուսում, կհավաքվեն, կմտածեն և իրենց համար մի կանոնավոր ուսուցիչարան կհիմնեն։

Տիրացուն ծիծաղեց։

— Ինչու՞ յես ծիծաղում, — հարցրեց Կամսարյանը։

— Բա վռնց չծիծաղեմ, խաչն իմն ա, զորուքինը յես եմ դիտում։ Մեր ժողովուրդը ընենց ժողովուրդ ա, վոր իրանից մի բան ունի։ Հրես ամեն մի բեխին ամսեկան իրեք շահի, յա մին արասի փող դեն տալ, սկի են էլ տալիս չեն, պահում, դցում են կալավախին, թե ինչ ա, փողի տեղ ցորեն, յա գարի տան։ Ես էլ թե տարին առատ ա ըլում, տալիս են, թե չէ, ասում են գյալաչախ (գալ տարի) կտանք։ Ընենց մարդ էլ կա փողի տեղ ձու, ճուտ, յա հավ ա բերում. շատ վախտ էլ բերում չի։ Այ, տենում ես են պուճուր տղեն, վոր հմի քարիցը վեր չեր կենում, նա յեթիմ (վորը) ա, մի ըրբևերի (այրի) մեր ունի։ Ասավ՝ ըրեխա կարդացու, ամսեկան մի ջուխտ դուլպա կտամ։ Ցես էլ ես ա ոխտն ամիս ա կարդացնում եմ։ Ամա դե մի ամսվա համար մի ջուխտ բերել ա ու ընդուցը յերդը էլ բերում չի։ Աստւմ եմ.—ա Նանե (մայրիկ), բա խի պարտքդ տալիս չես. ասում ա.— վարժապետ, դուրբան ըլեմ քե, բուրդ չունեմ թե մանեմ՝ մի քիչ մոհլաթ տուր,

նա ա դնալ դեմ Նորաատուղ, իմ քվոր տունը. ընտեղից բուրդ կբերնեմ, թել կմանեմ ու դուլբնքդ կպտրծնեմ, կըտամ։ Ցնա եղ տենում եմ, վոր խեղճ հնիկ ա, ըսկի հաց չունի թե բերնին կուշտ փորով ուտացնի, բուրդ վիթդիան դի գտնիլ վոր թել մանի։ Ըսենցով սիրտս ցավում ա. ասում եմ նանի ջան, փիքը մի անիլ (մի մտածիլ), ցնա քու բերնին մուքատա (ձրի) կկարդացնեմ։ Ես ա, նա յել ուրախանում ու որհնում ա ինձ։ Սրանով բանը քուքահ ա ըլում (վերջանում է)։

«Համի քե եմ հարցնում. ամիսը իրեք շահի, յա մին աբասի տալով, կալափայ, ձու, ճուտ, յա փողի տեղ՝ որհնութին հվաքելով ժողովուրդը կարա հուսուսիաբան բանալ... Ա՛յ, ուրիշ բան եր ին, վոր դալիս վախտը ճամային ասում իր ինձ թե, չեքե մի մարդ իրա ծախքովը ուզի հուսուսիաբան բանալ, դեղացիք հո չէն հիասակիլ։ Ցնա եղ ասեցի՝ բա խալ չեն հիասակում. մարդ իրա աչքը քոռ կուզի։ Համի թե վոր ըղենց մի բարի մարդ դտնվի, են չախը հա, հիասատամ, վոր մի բան կըլի. թե չե ժողովրդին, վոր ինդնես, ինքն իրանից բան չի շինիլ։

Կամսարյանը զարմացավ, տեսնելով վոր այնքան դեհիկ յերեվացող այդ տիրացուն կարողանում է յուր (Կամսարյանի) առարկությունները հիմնավոր կերպով ջրել. ուստի հանցանքի մեջ բռնված մարդու նման չիմացավ ինչ պատասխանել։ Մի քանի վայրկյան լուռ մտածելուց հետո, ասաց։

— Դու ել իրավունք ունիս։

— Հարկ է վոր ունիմ. ինչ կլի բանը չիմանամ, յես սկի կխոսեմ, — սրտավորվեց տիրացուն։

Ցնրիտասարդն ուրիշ առարկություն չարավ և միայն բարև տեվով, հեռացավ։

Ճանապարհին, սակայն, նա մտածում եր։ Դպրափարական «յես»-ը դարձյալ շշնջաց նրա ականջին։ Նա հիշեցնում եր տիրացուի խոսքերը, բացատրությունները, նրա կարեկից վերմունքը՝ աղքատ այրեի հետ։ «Այս չքավոր ու կիսակիրթ տիրացուն, յուր վողորմելի պատրաստությամբ, ավելի շատ է դործում և ավելի շատ աշխատում խեղճ ժողովրդին, քանի քե մենք, դարդացածներս, մեր բարձր դիտությամբ, մեր ունեցած հարստությամբ», — ասում եր այդ «յես»-ը և յերիտասարդը լսելով նրան, քե համոզվում և քե գայլանում եր։

— Ցած ու ատոր արտածներ ենք և ուրիշ վոչինչ, — բացականչեց նա հանկարծ և քայլերն արագացրեց։

Ճանապարհի կիսում նա հանդիպեց ուստա Գևոնին, վոր շատ շատ դալիս եր իրեն դտնելու։

— Ազա. ախր յես քե չեմ ման գալի (պարտում), նաոր երկու հետ (անգամ) գնացել եմ տանուտերի տունը՝ Սալբուն հարցրել. ասել ա՝ հլա Սևանից չեկել չի։ Քե մատաղ, աղա, քե կարասը չափա (նեղությունը) քաշի, յեկ ին մարդին մի բանով ոդնի, խեղճ, ա տունը քանդվում ա։

— Ինչ մարդ, չեմ հասկանում, — հարցրեց Կամսարյանը, սկզբում չիմանալով քե վերի մասին է խոսքը։

— Մեր են խեղճ Սային... բա երեկ չասի քե՝ Ոսկան հրաման ա բերել, վոր նրա ելած չելածը ծախի։ Այ, համ պրիստավը վե կալած չեկել ա, խեղճի դուռը կտրել։ Քանի մարդիկ մեջ ընկան, խնդրեցին, աղաչեցին քե մի քիչ ել ա մոհլաթ տա, ասավ՝ տալ չեմ. փողս բերեք տվեք, պրիստավին վեր ունեմ դնամ. քե չե ինչ ունի չունի, պաի վեր դրեմ, ինչ կլի կնկանը շորերն ել... Դե, մենք փող վերդիան դրա-նենք ես սհաթին. դեղականի չանուսը հանել ա Աստցել վոր հվաքի տա։

— Գնանք, գնանք, ուրախությամբ կոդնեմ, յեթե հնար լինի,— ասաց Կամսարյանը, դոհ լինելով, վոր քիչ առաջ հուզված յուր խիղճը պիտի հանգստացնե մի բարի գործով։

— Հնար կըլի, խի չի ըլիլ։ Հենց վոր դու ռուսեվար պրիստավին հասկացնես, քե ախար ես մարդը Ոսկին պարտ ա լել քսան մանեթ, եդ խի քսանը հարիր երասուն ա դառել, են ա նա ել Սայուն զոռիլ չի։

— Ուրեմն Սայու պարտքը 20 մանեթ է յեղել և հիմա նա 130 է ուղում, — հարցրեց յերիտասարդը։

— Բա։

— Քանի տարի յե։

— Չորս։

— Ճշմարիտ։

— Սաղ գեղին ա հայտնի։

— Գնանք, գնանք, դա հետաքրքրական է, — ասաց յերիտասարդը և շտապեց։

Գյուղերում արտաքո կարգի մի դեպք պատահած ժամանակ, ուրախության աոիթով լինի այդ, քե տխրության, գյուղացիք սովոր են խռնվիլ այն տան բակը, ուր դեպքն է պատահել և հետաքրքրվիլ նրանով իբրև սեփական գործով։ Սայու բակն ել այդ վայրկենին լիքն եր ժողովրդով։

Պրիստավը, վոր մոտ քառասնամյա, բարձրահասակ շիկահեր և բարեդեմ մարդ եր, կանգնած խոսում եր մի քանիսի հետ, իսկ Ոսկա Միրզան, վոր պարտատեր լինելուց զատ թարգմանչի դեր

ել եր կատարում, ձեռքերին ու վոտքերին անելով բացատրում եր պրիստավի խոսքերը։

Յոզին արտաքինով, անշուշտ և ներքինով պրիստավի հակապատկերն էր։ Դա մի դիրուկ, կարճահասակ մարդ եր, արևահար դեմքով, մանր ու շարժուն աչքերով, վորոնց կոպերը՝ արտահայտություններից դուրկ լինելուց զատ. խիստ կարմիր էյին և նրա հայացքին տալիս էյին վոչ միայն խորամանկ, այլ և լպիրշ արտահայտություն։ Կարճ, քիչ ջարդված քիթը, վոր անշուշտ յուր անցյալ պատմություններն ուներ և սուր կզակի վրա, տեղ-տեղ միայն բուսած, նոսր ու գորշ մորուքը, լրացնում էյին նրա դեմքի տգեղությունը, վոր յուր մեջ ուներ նաև մի ժանտ գիծ, վորից ամեն-ակամա պիտի վախենար։

Պրիստավը խոսում եր այնպիսի մարդկանց հետ, վորոնք չեկել էյին Սայու համար նրա պաշտությունը հայցելու, դրանց թվումն եր և տանուտերը։

Մինչդեռ պարտապան Սային, վոր աղքատ հագնված, նիհար, և ինչպես ասում են, մաղն յերևին չորացած մի ծերուկ եր, մորթե գդակը կռան տակն առած և մեջքը սրտին այնպես հենած խեղճ ու կրակ նայում եր մեկ պաշտոնյային, մեկ խոսող մարդկանց, առանց մի բառ արտասանել կարողանալու և ապա հայացքը ձգում յուր վերջին հույս ու ապավեն ձիուն ու մի հատ կովին, վոր գոմից դուրս հանած, պատրաստվում էյին առաջինը վեր պրել, իբրև արժեքավոր իրեր։

Սայու կինը ցնցոտիների մեջ փաթաթված, ձեռքերը խաչած, կանգնած եր կովի մոտ, իսկ նորա կողքին դանվում էյին յուր մեռած վորդու յերկու մանկահասակ, նիհար, կիսամերկ և բակտեն վորբուկները, մի աղա և մի աղջիկ, վորոնք վախեցած աչքերով և մանկական հետաքրքրությամբ նայում էյին մերթ խոսող պաշտոնյային, մերթ պարտատեր Յոզինը, վոր յուր ժանտ դեմքով, սրածայր գդակով և մահուդից կարած յերկար կապայով նրբանց աչքին, այդ րոպեին, թվում եր իրեն մինչև այն դևերից, վորոնց մասին իրենք լսել էյին հեքյաթներ՝ պատից կամ տատից։

Մանելով Սայու բակը, Կամսարյանն ուղղակի դիմեց պրիստավին և հայտնելով նրա յուր անունն ու աղքանունը, խնդրեց ծանոթանալ։

Վերջինս սիրով ընդունեց այդ ծանոթությունը և ուրախությունն հայտնեց, վոր Զիրուխլուլի նման մի հետ ընկած անկյունում պատահում և պարոնի նման մի յերիտասարդի, ուստի խոսակիցներից հեռանալով, սկսավ զրուցել վերջինի հետ։

Գեորգը առանց ուշացնելու, հայտնեց պաշտոնյային յուր նպատակը, վոր եր ոգնել գյուղացուն, դժվար կացութիւնից յել-նելու։

— Դուք, յերևի, կամենում եք նրա պարտքն առնել ձեզ վրա,— հարցրեց պաշտոնյան, լավ չըմբռնելով Կամսարյանի խոսածը։

— Վոչ, յես իմացա, վոր պարտատիրոջ պահանջն անարդար է, այդ պատճառով կամենում եմ, վոր մասնավոր կերպով քննութիյան առնենք այդ խնդիրը։

— Այդպիսի քննութիյան յես, դժբախտաբար, չեմ կարող մասնակցել և դա գործնական հետևանք էլ չի ունենալ։ Վորովհետև պարտատերը ներկայացրել է ինձ դատարանից առած որինավոր հրամանագիր (կատարողական թերթ) և հայտնելով, վոր պարտապանը հոժարութիյամբ չէ վճարում յուր պարտքը, պահանջում է վեր դրել նրա ստացվածքը և աճուրդով վաճառել. յես չեմ կարող որենքի հրամանը չկատարել։

— Ցես ինքս իրավաբան եմ, և այդ ամենը գիտեմ։ Որենքի հակառակ վոչինչ չեմ առաջարկիլ։ Այս մեկն եմ միայն խնդրում, վոր ժամանակ տաք ինձ այս մարդու հետ խոսելու։ Սրա պահանջը հիմնված է հայտնի խարդախութիյան վրա, վորի համար քրեական պատժական որենքը սպառնում է հանցավորին իրավունքների զրկանք և բանտարկութիյուն։

— Ի՞նչ խարդախութիյուն կարող է լինել, նա դատարանին ներկայացրել է 131 ռուբլու որինավոր մուրհակ և այդքան դրամբի էլ հրամանագիր առել։

— Բայց գյուղացին պարտ չէ նրան այդքան։

— Գուցե, այսուամենայնիվ, յես իրավունք չունեմ այդ իմանալու։

— Բայց յես խոսում եմ ձեզ հետ, վոչ իբրև պաշտոնական անձի, այլ իբրև ճշմարտութիյան նախանձախնդիր բարեկամի հետ։

— Համեցեք, յես ձեզ լսում եմ։

— Գյուղացին այս մարդուց չորս տարի առաջ առացել է միայն 20 ռուբլի։ Այդ քսան ռուբլին այսոր դարձել է 131։ Այս հանելուկը չի հետաքրքրում ձեզ։

— Ձափազանց։ 20 ռուբլին ինչպես կարող է չորս տարվա ընթացքում դառնալ 131։

— Այ, հենց յես էլ այդ եմ ուզում հարցնել պարտատերից։

— Հարցրեք, իմացեք, դա հետաքրքրական է։

Յոլան, վոր մի փոքր հեռու կանգնած դիտում եր խոսակիցներին և վատ բան դուշակում վարժ ռուսերեն խոսող յերիտասարդի ներկայութիյունից, իբրև իրավաբեր շտապեց միջամտել,

ձայնը բարձրացնելով դիմաց պաշտոնյային և յուր աղջատած ուսանելիներով ասաց.

— Դասապատին պրիստաւ, դեն կոնչիլա, իդի, պիշի, դու։

Ուզում էր ասել, պարոն պրիստաւ, որը մինում է, արի, վեր պրի վերջացրու։

Պաշտոնյան չպատասխանեց և նրա փոխարեն կամաբյանն ասաջանալով հարցրեց։

— Ի՞նչ է քո պահանջը այս մարդուց։

— Իմ պահանջն ինչ վոր ա, են ա դրած ա սպրնիլիստուվը, — պատասխանեց Յոլան փորձառու դատախազի հավակնությամբ։

— Այնտեղ գրված է, վոր սա պարտ է քեզ 131 րուբլի։ Բայց մերին ճիշտ է այդ։

— Բա վոր ճիշտ չըլինի կըրնի, քո ասիլով դատարանը սուտ ա խոսում, — նկատեց Յոլան, չարաբնդիր մարդու նենգամտությամբ։

— Դատարանը սուտ չի խոսիլ, բայց դու ձյն ասա, այս մարդուն 131 ռուբլի՞ յես տվիլ։

— Բա չէմ տվիլ։

— Յոլա՝ քե դուբրան, իմանլ դյուզը չես ասելի. տյուն ինձի մինակ քսան մանեթ ես տվի, — միջամտեց Սայինն հուսահատ ձայնով։

— Բա չան չըկա, մյուդաթ չըկա, — բարկացավ Յոլան։

— Հա, իդինց ասա, մյուդաթ հալբաթ վոր կա... համաձայնվեց Սայինն՝ ձայնը ցածրացնելով։

— Ինչի՞ տարի յես, վոր քսան մանեթ ես տվել սրան, — հարցրեց կամաբյանը։

— Ի՞նչ գիտամ, շետ...

— Ելի. մի ասա։

— Ձորս տարի ա, ախպա, — պատասխանեց Սայինն։

— Այնպես է, չորս տարի յե, — հարցրեց Պետրոսը Յոլին, բայց նա չպատասխանեց։

— Ձորս տարի ա, չորս, հաստատեցին դյուզացիները ամեն կողմից։

— Ինչիսի՞վ ես շահ հաշվել, վոր 20 մանեթը չորս տարուվը դարձել է 131 մանեթ։

— Նդ իմ բանն ա, քե ինչ, յա դու ձվ ես, վոր իմ դործովը խառնվում ես, — նկատեց Յոլան կոշտ կերպով, կամենալով այդպիսով վիրավորել և հեռացնել անսպաս միջամտողին։ Ապա դառնալով պրիստավին, ասաց. — դնազադին պրիստաւ, պաժալուստա իդի կոնչի, մինե վաժնի դելը յեստ, դոլգի նե մադու իզդես սե-

դեթ, համենուս եր ասել՝ պարոն պրիստաւ, խնդրում եմ, յեկ, վերջացրու, կարևոր գործ ունիմ, չեմ կարող այստեղ յերկար մնալ։

Պրիստաւը մոտեցաւ։

— Գիտեք ինչ կա, Վասիլ Իվանիչ, — դարձաւ Գևորսը վերջինիս. այս մարդը չորս տարի առաջ 20 ռուբլի յե ավել յուր պարտապանին և այժմ նրանից պահանջում է 131 ռուբլի։ Ցնս հետաքրքրվում եմ իմանալ թե՝ քանիսով և տոկոս հաշվել, բայց նա չի ուզում պատասխանել։

— Сколько процентов считали? — հարցրեց պրիստաւը ծիծաղելով։

— Կակոյ տերն դելը. իսպոլնի լիստ շատ դավարիա, տակ նադը դելայտ, — պատասխանեց Խոջան, կամենալով ասել՝ «Ինչ ինչ, հրամանագիրն ինչ ասում է, դու այն պետք է անես»։

— Հիմա դուք պատասխանեցեք, — ասաց պրիստաւը կամասրյանին և ժպտալով հեռացաւ։

— Այդպես կանե, մի վախենար. միայն թե ասա, քանիսով ես տոկոս հաշվել, — հարցրեց յերիտասարդը։

— Ամեներ քե ինչ. յես հո քեղանից չեմ փող ուզում։

— Ինձ ինչ. այ ասեմ քեզ։ Ցնս պատարան մարդ եմ։ Փաստաբանը դիտես ինչ է. — առակաւ Ա՛յն դատավորը, վոր քեզ իսպոլնիտելնի լիստ է տվել, ինձանից ավել չէ որենք իմանում։ Իսկ իմ իմացած որենքների մեջ գրված է թե՝ ով վոր իրա պարտապանից հարյուրին 12 տոկոսից ավելով շահ առնե, նրան պետք է պատժել՝ զրկելով ամեն իրավունքներից և բանտ նստացնելով։ Ա՛յ, հիմի դու այսքան մարդկանց մեջ այս խեղճ Սայուցը 20 մանեթի համար 111 ռուբլի շահ ես առնում։ Ցնս կարող եմ Սայու գործը հանձն առնել, այս մարդկանցն էլ վկա դրել ու քեզ քաշ տալ դատարան, իսկ այնտեղից ուղղակի զրկել եշի գլուխը. հասկանում ես։

Այս խոսքերն ասվեցան այնպիսի մի խիստ յեղանակով, վոր Խոջան յերկյուղից քաջութիւնը կորցրեց։

— Աղբեր, ախար դու լավ մարդ ես երևում, ինչ ունես զալմաղալում. ինձանից դու հո առնելիք տալիք չունես. ես մարդը փող ա պարտ, իմ փողն ուզում եմ, դու խի յես մեջ ընկնում։

— Չե, պիտի ասես, քանի՞ տոկոս ես հաշվել,

— Մանեթին մի շահի, — ասաց Խոջան, տեսնելով վոր գատվախտից գլխնում չըկա։

— Ռուբլուն 6 կոպեկ, — գլմմացավ կամասրյանը։

— Հա։

— Իննսուն ա, մանեքին մի շահի չինք խոսե,— հառաչեց Սային։

— Տեսնում ես, հինց դիտաս, սուտ եմ ասում,—նկատեց Ոսկան։

— Սպասիր, սպասիր։ Դու ուրիշն 5 կոպեկ ես ասում, չէ, դե չես 10 կոպեկ կհաշվեմ. տեսնենք վիրքան է լինում։

Այս ասելով Կամսարյանը հանեց հուշատետրը, որն այժմ յուր աչքին առելի չէր երևում և նրա մի աղատ էրեսի վրա, սկսավ մատիտով հաշվել։

— 20 րուբլին հարյուրին 10-ով մի տարումը կըտա 2 ուրբլի։ Այս 22 ուրբլին յերկրորդ տարումը կըերի 2 ո. 20 կոպեկ, ուրեմն բոլորը 24 ո. 20 կոպեկ։ Սա էլ յերրորդ տարումը տոկոս կըերի 2 ո. 42 կոպ. միասին կանե՝ 26 ո. 62 կոպ։ Այս 26 ո. 62 կոպեկն էլ չորրորդ տարում կտա 2ո. 66 կոպեկ։ Ուրեմն չորս տարուց հետո քո տված 20 ուրբլին կդառնա 28 ո. 28 կոպեկ, վորից 8 ուրբլի 28 կոպեկը յուր արդար շահն ես։ Ցերեկ մինչև անդամ հարյուրին 12 տոկոս հաշվինք, բոլոր դումարը կլինի 31 ուրբլի և մի քանի կոպեկ։ Հապա մնացած հարյուրը վիրտեղից ես դուրս բերել։

Պարտապան Սային, վոր սկզբում մեծ հավատ ուներ յերիտասարդի համուրյան վրա և հույս ևր տածում թե նա մի բանով կթեթևացնե յուր ծանր դրուրյունը, տեսնելով այժմ վոր նա տոկոսը չափազանց շատ պակասըրեց, յեկավ այն յեզրակացուրյան թե այդ տղան ուրեմն բան չե հասկանում, ուստի սկսավ վհատվիլ։ Նույն կարծիքին եյին և ուսուցչ Պետրոն ու տանուտերը։

— Հինց այդ պատճառով էլ Ոսկան կարծես վոդի առավ։

— Եդ դու վինց ես հաշվում, վոր իմ առնելիքը շուր ես կտրացնում... Հաշիվ անելը, վոր մանում չես, խի՞ չես բանի մեջ խառնվում,—նկատեց նա մեծ սրտով։

— Ինչպես չեմ խմանում։ Դու չես ասում թե մանեքին 5 կոպեկ։

— Հա։

— Դե չես 10, 12 եմ հաշվում և այդպես ե դուրս գալիս։ Ուրիշ կերպ լինել չե կարող։

— Վինց չի կարող. դե համի չես հաշվիմ դու մտիկ արա։

Այս ասելով Ոսկան հանեց ծոցից մի փոքրիկ, խաղալիքի պես համարիչ և հատ ու հատ մատերով նրա համիկները դես ու դեն անելով, սկսավ հաշվել.

— Մի մանեքին, վոր 5 կոպեկ ըլի ամսումը, մի տարումը կըլի 12 հետ 5 կոպեկ, չուն տարին 12 ամիս ա։ Ես քե 60 կոպեկ։ Համի դուն ես իմ աղեն, մանեքը վոր մի տարումը 60 կոպեկ բերի,

10 մանեթը կբերի 6 մանեթ. 20 մանեթին էլ կբերի 12 մանեթ. Ե՛, հմի իմ 20 մանեթը, մի տարուց չեզը դառավ 32 մանեթ...

— Սպասիր, սպասիր, ուրեմն դու ռուբլուն 5 կոպեկ հաշվում ես միայն մի ամսումը, — հարցրեց կամսարյանը զարմանալով։

— Բա մի տարումը։ Ախ, փող եմ դառել, թե գլխիս ձի ա քացի տվել... Հրեն ուրիշները մի ամսումը մանեթին 10, յա 12 կոպեկ են առնում. յես 5 եմ հաշվել. սրանն էլել խղճմտանքով բան կըլի։

Կամսարյանն ապշած նայում եր Մոջայի կարմիր կապիճներում պլպլացող աչքերին և մի քանի վայրկյան վոչինչ չեր խոսում։ Ապա դառնալով պրիստավին, ժպտալով ասաց.

— Վասիլ Իվանիչ, դիտեք այս մարդը քանիսով և հաշվել տոկոսը։

— Քանիսով, — հետաքրքրվեց պաշտոնյան։

— Հապա դուշակեցեք։

— Քսանով, քսան հինգով...

— Ի՞նչ քսան, ինչ յերեսուն, վրէ ավել և վրէ պակաս՝ հարյուրին վաթսուն։

— Անկարելի յա։

— Հավատացեք։

— Ո՛, ռ... բացականչեց պրիստավը։

— Ըշտո, պետ կոպեկ ծոգի, (ինչ, հինգ կոպեկը շատ ե), — շփոթված հարցրեց Մոջան։

— Պյոտր Եվրլիչ, սա հինգ կոպեկ և ասում, — դարձավ պրիստավը յերիտասարդին։

— Այո, 5 կոպեկ. բայց ռուբլուն 5 կոպեկ մի ամսումը։ Ուրեմն մի տարում 12 անգամ 5 կոպեկ, վոր կանե 60։

— Ախչեա ե, — հարցրեց պաշտոնյան Մոջային։

— Դա, դա, վերնը (այո, այո, ճիշտ ե), — հաստատեց Մոջան։

— О, это ух черезчур! բացականչեց Վասիլ Իվանիչը։

— Դուք, պարոն պրիստավ, խնդրեմ իբրև դատարանի պաշտոնյա, վկա լինիք, վոր այս մարդը, ձեր և ժողովրդի ներկայությամբ ասաց և հաստատեց, վոր ինքը հարյուրին տասնում և վաթսուն տոկոս։

— Ուրախությամբ, ուրախությամբ, — համաձայնվեց պաշտոնյան։

— Եդ ինչ ա ե, խե չեք թողնում, վոր եդ մարդը իրա գործը վերջացնի, — հարցրեց Մոջան, դուշակելով, վոր մի ինչ վոր վատ բան և պատրաստվում իրա համար։

— Ինչ և. այ խոկույն կասեմ։ Բայց թող մի յես էլ քո ասած ձեռվ հաշվեմ ու տեսնեմ թե արդյոք մանեթին հինգ կոպեկ և գալիս, թե ավել...

— Դրուստ ա, աղբեր, դրուստ. յես խաբող մարդ չեմ. ես սաղ մնալը դիտա թե Աոջա Միրզան ինչ մարդ ա։

— Հա, ոմ ինչ և ասում. բայց թող մի հաշվենք... Այս ասելով Կամսարյանն սկսավ հաշվել։ 20 ռուբլին 60 կոպեկով մի տարումը կրերի 12 ռուբլի։ Ճիշտ և։ 12 և 20 կլինի 32։ Այդ 32 ռուբլին մյուս տարումը կրերի 19 ռ. 20 կոպեկ։ Ուրեմն յերկու տարումը քո փողը կդառնա 51 ռ. 20 կոպ։ Ճիշտ և։ Այդ 51 ռ. 20 կոպեկն էլ յերրորդ տարումը կրերի շահ 30 ռ. 72 կ. յերկուսը միասին՝ կլինին 81 ռ. 72 կ.։ Բարի։ Այդ 81 ռ. 72 կոպեկը չորրորդ տարում կտան տոկոս 49 ռ. 15 կոպեկ։ Ուրեմն բոլորը միասին 131 ռ. 7 կոպեկ։ Շատ ճիշտ և, Աոջա, — ասաց Կամսարյանը հեզնելով։

— Բա վոր ասում եմ, — պատճեցավ Աոջան յուր ճշտությամբ և մեջքն ուղղելով հանգիստ շունչ առավ։

Սայու և յուր պաշտպաններուի վրա կատճես ջուր մաղվեց։

— Բայց դիտես ինչ կա, — նորեն խոսեց Կամսարյանը։

— Ինչ։

— Ահա պրիստավի և բոլոր ժողովրդի ներկայությամբ հաստատվեց, վոր դու պարտական ես անխիղճ վաշխառությամբ, այսինքն ժողովրդից առնում ես այնպիսի մեծ տոկոս, վորն օրենքը արգիլելով արգելում է։ 100-ին 60 կոպեկ շահ առնելը այնպիսի հանցանք է, վոր օրենքը դրա համար կպատժե քեզ՝ զրկելով վորոշ իրավունքներից և բանտարկելով մեկից մինչև յերկու տարի։ Հիմի դու կարող ես, յեթե ուզում ես, վեր գրել տալ այս մարդու կոլը ու ձին, բայց յես թույլ չեմ տալ, վոր դու նրանց ծախես։ Ահա, հենց այսօր յես խնդիր կդրեմ Սայու կողմից և իմ ձեռքով կհասցնեմ պրոկուրորին։ Գործը կերթա դատարան։ Ձես այնտեղ կպաշտպանեմ Սայու իրավունքը, իսկ պրոկուրորը կմեղադրե քեզ։ Սային յուր կոլը ու ձին հետ կտանեն, իսկ դու կնստես բանտում։ Այնու հետև հազարներ էլ վոր ծախես, չես կարող ազատվել։—Այդպես և, թե վոչ, Վասիլ Իվանիչ, դարձավ պաշտոնյային։

Վերջինս, վոր վոչինչ չեր հասկացել Գևորոսի հայերեն խոսածներից, հարցրեց։

— Ի՞նչն և այդպես։

— Կամսարյանը կրկնեց յուր խոսածները ռուսերեն։

— Այո, այդպես և. օրենքը ծանր պատիժ և տալիս վաշխառուներին, իսկ ձերը նույնպես վաշխառություն և, — հաստատեց պաշտոնյան։

Հովհաննեսի դուռը բերկրությից թռավ։ Նա ձայնը ցածրացնելով ասաց.

— Աղբեր. ընչի՞ եք ուզում ինձ ինչպես տալ։ Ախար չես լավություն եմ արել, վատություն հո չեմ արել։ Մարդը սոված ա եղել. փող եմ տվել, սերմացու ա առել, ցանել ա, հնձել ա, չորս տարի աղրել ա...

— Սերմացուի փող ես տվել, որ հիմա գաս կոպեկ ու ձին հափշտակես, — ընդհատեց Պետրոսը զայրացած. — ախար քո տված ձից ու նրա տոկոսից ավել արժե հենց միայն այս կովը, հապա ձին ու նրա տոկոսից ավել արժե հենց միայն այս կովը, հապա ձին ու էրա տոկոսը։

— Դե ձեր ա, որ տանում եմ, ասում եք, չես էլ թողիլ չեմ որ վեր գրի. բերեք իմ փողը տվեք, անց կենամ գնամ։

— Չե, դու փող չես տանելու։ Քոնն այս կոպեկ ու ձին են, վեր գրել տուր տար, էնքան կարող ես։ Մենք էլ հետո մեր գնացածը կանենք։

— Չեմ ուզում, աղբեր, էրեսուն մանեթը բաշխում եմ, իմ հարյուր մանեթը տվեք, վեր կենամ, գնամ։

— Քեզ հասանելիքը 28 ռուբլի չե, էնքան ուզում ես, առացիր և գործը վերջացրու, էնքան վոչ պատրաստվիր, որ տարի ու էս բերդումը նստես։

— Աղբեր, խի՞ եք տունս քանդում, բա չես մեղք չե՞մ... ախար չես էլ մարդ եմ, տուն ունեմ, տեղ ունեմ, աղլուշաղ ու երեխեք ունեմ... Առած վեր չունիլ, որ իմ հալալ աշխատած փողը ձեռքից խլում եք... աղաչավոր ձայնով խոսում էր Հովհան և պատրաստվում կարծես լաց լինելու։

— Ի՞նչ և պատահել, — հարցրեց պրիստավը, տեսնելով, որ Հովհան խոսում և լալագին։

— Վչինչ, վաշխառուն այժմ էլ դերասանություն և անում, — բացատրեց Համազասպյանը։

— Հա, հիմա ինչ ես ասում, վեր գրեմ թե վոչ, ուշանում ենք, — դիմեց պրիստավը Հովհաննին։

— Վոչ, վոչ, չես հաշտությամբ եմ ուզում վերջացնել, ուզում եմ լավություն անել, — շտապով հայտարարեց Հովհան, համոզված լինելով, որ բացված խարդախությունը կարող և ցավ բերել յուր գլխին։

Մի թաղուն ուրախություն, որից դեռ անբաժան էր էրկյուղի զգացմունքը, պաշարեց Սայուն։ Մինչդեռ ուստա Գևոին ու տանուտերը Հովհաննի նվազած ձայնից արդեն դուշակելով, որ նրա բանը վերծուկ և, սկսան շտապեցնել վաճառքը, ամեն կողմից համոզելով, որ Հովհան յուր ասած լավությունն անե, վերջացնե։

Բայց կամաթյանը թուլլ չտվավ, վոր վերջինս մինչև իսկ գլուխ յուր անելուց պատրվակով գործն ավարտելու մխիթարությունն ունենա։

— Այդպես մի խոսք և մի սխալեցնենք ձեզ լսողներին,— ասաց նա Գևառն և մյուսներին։ Այս մարդը լավ չե անում։ Եկեք մենք համաձայնվենք, վոր սա 28 ռուբլին առանալով գործը խաղաղությամբ վերջացնե, այն ժամանակ մենք ենք լավություն անում սրան և վոչ թե ինքը մեզ։ Այդ պետք և սա իմանա, շնորհակալ լինի և խոստանա, վոր այսուհետև ձեռք պիտի վերցնե յուր այս անպիտան ու ընտանեկար արհեստից։ Հակառակ դեպքում, չես հենց այս րոպեիս կդրեմ իմ բողոքը և կուղարկեմ պրոկուրորին։

Մի քանի թեր և դեմ խոսքերից հետո, վերջապես Մոջան համաձայնվեց առնալ 28 ռուբլին, վորից տասն ուներ Սային, ութը Գևառն պարտք տված, իսկ մնացորդ տասը նվիրեց կամաթյանը։

Ցերը Մոջան ու պրիստավը հեռացան, իսկ տանուտերը գնաց ճանապարհ դնելու նրանց, Սայու կինը վազեց, ընկավ Գևառոսի վոտքերը և ուրախության արտասուքն աչքերին, սկսավ համբուրել նրա ծնկները և սրտնեղ նրան սրտաշարժ խոսքերով։

Հազիվ յերիտասարդը բարձրացրեց կնոջը, մոտեցավ ծերուկ Սային, վոր ուրախությունից համրացած չեր կարողանում խոսել, բայց դողդողուն ձեռքերը բարձրացնելով աշխատում եր յերիտասարդի գլուխը բռնել և համբուրել։

Կովի մոտ կանգնած վոքրիկ աղջիկը, մեծերի աղմուկին չըմասնակցելով, դրկել եր հեղիկ կննդանու գլուխը և շարունակ նրա աչերն ու դունչը համբուրելով, ասում եր ուրախ, ուրախ.

— Հիշկա, մարալ ջան, ել քո չեն տանելում. տյուն կացիր մեր կուշտ, քո հորթն ել քո կուշտ... ոխմեյ ինչ լավ և...

Իսկ յեղբայրը, վոր մինչ այն, ձիու կապը ձեռքին, կանգնած եր այդտեղ, այժմ ուրախությունից մյուս մարդկանց չեռնահլուվ, ճչում եր անընդհատ.

— Ձոճ պապ, ճոճ պապ, ձին իմիլ անեմ, խառեղ պախեմ, թե թսրդեմ եքա խոսին...

Կամաթյանին մյուս կողմից շրջապատել եյին դյուղացիները և շնորհակալության տարափ եր, վոր այս ու այն կողմից տեղում եյին նրա գլխին։ Ցերիտասարդը շտապեց հեռանալ, փախչելով, համարյա, անվերջ շնորհակալիքներից։

Սակայն կատարված իրազության լուրը տարածվել եր դյուղում կայծակի արագությամբ. ուստի վեր կողմից եվ անցնում

եր յերիտասարդը, կանայք ու աղամարդիկ, կուրծքերի վրայից թե ցանկերի յետևից, որհնում ու գովում էին նրան։

Արդեն մութ եր, յերբ Գևորսը տանուտերին պատահելով, նրա հետ միասին վերադարձավ տուն։ Վերջինս ամենից շատ եր ուրախ, վորովհետև յուր տան հյուրն եր, վոր գյուղացիներից մինին այդպիսի մեծ բարիք եր արել այսոր։ Անկարելի յեր, վոր այդ գեղքը չդոյներ նրա պատվասիրությունը։ Այդ եր պատճառը, վոր նա այսոր մի առանձին հոգածությամբ եր թախանձում, վոր յերիտասարդը հրաման տա Սալբինին՝ ընթրիք պատրաստելու։ Բայց Գևորսը մերժեց և բավականանալով միայն յերկու բաժակ թեյով, խնդրեց, վոր յուր համար անկողին պատրաստեն, քանի վորում հոգնած եր և ցանկանում եր վաղ քնել։

Ցավ, սակայն, մինչև վոր անկողինը կպատրաստեին, նա բարձրացավ տան կուրը, մի քանի վայրկյան ինքն յուր հետ այնտեղ առանձին մնալու և որվա ընթացքում պատահածների մասին խորհելու համար։ — Արդեն պարտապան գյուղացուն ծանր պատուհասից ազատելն ու նրան հետևող անվերջ որհնություններն ու շնորհակալությունները լսելը, այնքան եր հուզել ու ցնցել նրա հոգին, վոր նա չեր կարող հանդիստ քնել, յեթե այդ ամենի առիթով հետզհետե յուր գլխում ծագող հարցերին պատշաճ լուծում ու պատասխան չգտներ։

Ինչպես ամրողջ որը, նույնպես և այժմ ամպերը շարունակ բաց խփուկ էին անում յերկնքի յերեսին, վորից լուսինը մերթ պայծառ բացվում, լուսավորում եր ազքատիկ գյուղն ու նրա խղճուկ տները և ծովակն ու կղզին՝ շրջապատող դաշտերով, թմբերով ու լեռներով. մերթ լողում, ոսւզում եր ամպերի յեռանը և հրապուրիչ տեսարաններըը խավարով ծածկում։ Սակայն հորիզոնի արևելյան հյուսիսը ծածկված եր թանձր, կապարի պես սև և միապաղաղ թուխպերով, վորոնք, թվում եր թե պիտի վրդովեին գիշերվա խաղաղությունը։

Բայց Գամսարյանը չեր հետաքրքրվում այժմ բնության յերևույթներով։ Վորքան շատ բան եր տեսել նա այսոր, վորքան նորություններ իմացել. դրանց մասին եր մտածում։

Նա դեռ յերեկ այն կարծիքին եր, թե վոչինչ չե կարելի անել գյուղում, թե ամեն բան այնպես սառած ու քարացած է այստեղ, վոր յուր նման մարդկանց ձեռքերը, վորքան էլ նրանք զինված լինին զորեղ գործիքներով, չեն կարող վոչ հին սառույցը հալել, վոչ էլ քարացած կոշտերը մաղել։ Բայց այսոր, ահա, նա կատարեց մի գործ, վորն յուրմով լուծեց մահու և կյանքի խնդիր։ Նա վերահաս կործանումից ազատեց մի տուն. վերջնական ան-

կումից փրկենք մի ընտանիք և դրա համար շատ քիչ, կամ գրեթե ոչինչ աշխատություն դործ դրավ...

Ցավ սակայն վերքերն շատ կային այդպիսի թողած ու լքված տներ և ընտանիքներ. վերքերն շատ բան կարելի չեր անել դրանց համար։ Ցավ նա չերևակայեց, թե ինչ կլիներ այսոր խեղճ Սայու դրությունը, չեթե ինքը, բաղդի բերմամբ, չհանդիպեր այստեղ, չղտներ Աջայի ավարառության տեղը, չպաշտպաներ անդոր, անոդնական դյուղացուն... Ապա նա հիշեց տիրացուի դպրոցը, չերեխաներ կրթելու և ուսուցանելու վայրերի չեղանակը և միևնույն ժամանակ, Մոսու իրավացի դիտողությունը թե «չերը ցորեն հաց չկա, պետք եր քաղցածին տալ գոնե ճաթ, վորպեսզի նա առվից չմեռնի»։ Վերջը նա մտքով փոխադրվեց Սևան, հիշեց նրա անշարժ ու քարացած դրությունը, արեզակի բաղաքը, նրա չերկար դրույցները, հայտնած ցանկությունները և անապատը վերակազմելու ու պայծառացնելու նկատմամբ նրա առաջարկած միջոցները։

Այս ամենը հիշելուց և դրանց վերաբերմամբ չերկար մտածելուց հետո, չերիտասարդը չեկավ այն չեղրակացության թե անհրաժեշտ և աշխատել՝ հնարավոր դարձնել գյուղում ապրելն ու դործելը...

Այդ վայրկենին նորեն լուսինը բացվեցավ և պայծառ լուսով չերկիրը վողողելով, չերևան հանեց դեղեցիկ ծովակն ու շրջակա լեռները և դրանց հետ միասին... Զիբուխլուի չոր, գծուծ պատկերը, յուր գեմին կպած աներով, յուր աթարի դեղերով...

Ցերիտասարդը նայեց յուր շուրջը, զգաց դարձյալ մի անհաճո անհանգստություն և չկամենալով այլևս դրա մասին մտածել, իջավ ներքև։

Մի քառորդ ժամից նա Մորփեոսի գրկումն եր։

ԺԵ

Կես գիշեր եր։ Ուր ու քաղցը քնի մեջ Գևորոսն ի հարկե չեք տեսել թե ինչպես հորիզոնը փակող սև ամպերը բարդ-բարդ վերանալով լուսինը ծածկեցին և ապա հետզհետե քանձր մառախուղը չերկրի չերեսը պատեց։ Ինչ հետո սկսավ շաղել թեթև անձրև, վորն ապա գնալով սաստկացավ ու հորդացավ և մեծ աղմուկով սկսավ բաց դետինն ու տան կտուրը ծեծել։ Հովը, վոր չերեկոյան մեղմ եր ու քնարեր, այժմ զորացել, փոխվել եր քամու և ուժգին շառաչելով փոթորկում եր անձրևը և հաճախ նրա հոսանքն ուղղում դեպի սրահն, ուր թախտի վրա, քաղցը քնի մեջ հանդչում եր այդ վայրկենին քաղաքացի հյուրը։

Ցերկար անձրևը ծեծում եր դուրսը, չերկար ողի մեջ շառաչում քամին, և սակայն Գևորոսը քնած եր հանգիստ և չեր զգում,

Նուչնիկ ցրտությունը ցողի, վոր քամին հաճախ շաղում եր յուր դեմքին։ Բայց, ահա, հանկարծ ճայթեց մի վորոտ. Մարալինջի և Անմանկան բարձունքը դողդողացին և անձրևի շառաչը, կարծես, կրկնապատկվեց։ Ցերեկասարդը վեր թռավ և սարսափով տեսավ վոչ միայն ողի մեջ մրրկող հեղեղը, այլ և այն, վոր յուր անկողնի յերեսը քրջված և բոլորովին։ Բացի այդ, նրա վրա տեղ-տեղ կտուրից ծորում և անձրևաջուր։

Անակնկալ պատահարից շփոթված՝ Պետրոսը վեր կացավ տեղից և կամենում եր տան դուռը ծեծել նրա մտնելու համար։ Բայց մտածելով, թե այդտեղ տանուտերը քնած և, հնոջ և յերեխայոց հետ, անհարմար տեսավ զարթեցնել նրանց։ Բայց ինչ անել. չե վոր անհնար եր դիշերն անցցնել անձրևի տակ։ Իսկույն նա մտաբերեց փոքրիկ սենյակը, վոր կից եր ախոռին և առանց յերկար մտածելու, բացավ դուռը և անկողինը հավաքելով մտավ նրա։

Ախոռի տաք, անախորժ հոտը, տոգորված ավելի ևս անախորժ ջերմությամբ դիպավ նրա քթին. բայց այժմ արդեն ժամանակը չեր թերություններ քննելու։ Պետրոսին հարկավոր եր մի ծածկարան անձրևից պատսպարվելու համար և նա, ահա, դռել եր այն։ Շտապ-շտապ փռելով անկողինը այդտեղ դանվող թախտի վրա, նա դուռը փակեց ու պարկեց, կարծելով թե գիտի քնել։ Բայց չանցավ քառորդ ժամ և ախոռից փչող հոտը սկսավ անհանգստացնել նրան։ Նա բացավ սենյակի դուռը և նորից պառկեց։ Այժմ վորովհետև դրսից յեկող թարմ ողը շոյում եր նրա դեմքը, ուրեմն, կարող եր քնել։ Ցերեկասարդը փակեց աչքերը և աշխատեց մտածություններըը հեռացնել իրանից, լավ իմանալով, վոր քնել կարողանալու համար, ամենից առաջ ուղեղը պետք է քնացնել։ Բայց այդ ել չոգնեց։ Վորովհետև չեր անցել դեռ կես ժամ, վոր նրան սկսան անհանգստացնել լվանները, վորոնք հոդե հատակ ունեցող և, մանավանդ, փակ պահվող այդպիսի տեղերում վխտում են մեծ մասով։ Ցերեկասարդն սկսավ շուռ ու մուռ գալ, աջ կողմի վրա պառկել, ձախի վրա փոխել, յերբեմն ել անկողնից յելնելով՝ շապիկը հանել ու թափ տալ, բայց իզուր։ Արյան ծարավի այդ լվանները, վորոնք տավարը դոմից հեռացնելուց հետո ղրկված եյին բավարար կերակրից, վաղուց-ի-ցատ վաղուց սպասում եյին այսպիսի մի համեղ վորսի, այն ել ինչ վորս... քաղաքացի, մաքրակենցաղ... Լվանները, իհարկե, չգիտեյին, վոր Կամսարյանը հոգեպատրանական և և իրավաբան. այդ պատճառով ծծում եյին նրա արյունը անդիմաբար, առանց դատավորից կամ դատաստանից վախենալու։

Այսպես անցան մի քանի ժամեր, բայց ոչինչ ժամեր... պետք էր Համասարյանի տեղը լինել՝ հասկանալ կարենալու համար թե, վորպիսի տանջանքի ու նահատակության ժամեր էին դրանք։ Ցնծ լեթեն դուք, ով համալսարանական ընկերներ, վորոնք վոգևորվող Համասարյանի խոսումը լսելուց, նրան ծափահարել և ձեր ձեռքերի վրա ոդն էիք բաթբացրել, դանվում լինեիք այդ վայրկենին նույն հոտած ախոռին կից սենյակում և տեաննեիք նրա անելուբ տանջանքը, անպատճառ կասեիք.— Թող, չեղբայր, ոչինչ ևս տանջում քեզ... վեր կաց, հավաքիր իրերդ, դնա այնտեղ, ուր մարդիկ ապրում են իսկական մարդու և վոչ անասունի նման։

Բայց թե ոչինչ էր խոսում ու մտածում այդ միջոցին ինքը Համասարյանը, այդ մասին լավ և լուել, վորպեսզի չեթե չերբևիցե նման վոգևորությամբ վառվին ուրիշ չերիտասարդներ, նրանց անծանոթ ևս առաջին վոգևորվողի հուսահատ արտունջը։

Անտանելի ժամերի հետ միասին, վերջապես անցավ և անձրևը, դաղարեց քամին և աղոթարանն սկսավ հետզհետե պարզվիլ ու բացվիլ։

Համասարյանը վորոշեց դուրս դալ յուր տանջարանից։ Բայց վարվհետե սրտի առաստաղից դեռ կաթկթում էր ջուրը և, հետևապես, նրա տակ պատկել անհնարին էր, ուստի կիսով չափ հագնվելով, նա դուրս չեկավ սրտնը և այդտեղ դրված թախտը մի կերպ քաշքշելով տարավ բակը, ուր ոդը թարմ և մաքուր էր։ Ապա անկողինն ել ներսից հավաքելով, մի լավ թափ տվավ, վորպեսզի անտանի լվերին հալածե և նորեն փռելով թախտի վրա, մենքը մտավ ու պատկեց։ Դրսի թարմ ոդն ու կրած նեղությունները ներից դգացած հոգնությունը շուտով քուն բերին չերիտասարդի աչքերին։

Աղաղության հրեշտակը շատ անգամ անգործությունից, թե վորոշ նպատակով, յուր խնամքին հանձնված մահկանացուների հետ կատակներ և անում։ Նա ծանր ու զարհուրելի չերազներ և տալիս նրանց, վորոնք արթնության ժամանակ շրջապատված են լինում կյանքի դյուրություններով և ընդհակառակը հեշտալի ու քաղցր չերազներով դգվում և նրանց, վորոնք արթնության միջոցին դանվում են ծանր ու անհամբույր վիճակում։

Մեր Համասարյանին ել նա անուշ քուն տալուց հետո, տարավ հանկարծ Բորժոմ։

Ո՜հ, ոչինչ չերջանիկ հակադրություն։ Առավոտ ու Փառաշեն վիլլայի պատուհանները վողողված են արևի պայծառ շողերով. բայց բայ կանաչ մետաքսյա վարագույրը չե թողնում, վոր

նրանք թափանցեն ննջարանը, ուր այդ վայրկենին Գևորս կամասրյանը՝ անկողնի մեջ նստած, առավոտյան թեյն է վայելում։ Նա այդպես սիրում էր անել, յերբ որը կյուրակի յեր և յուր գործը վոչ այլ ինչ, յեթե վոչ հագնվել և ժամը 12-ի մոտ յելնել այցելության։ Կանաչ վարագույրի ստեղծած փափուկ ու քնքույշ լույսը դպվում է ննջարանի հարուստ զարդարանքը այնպիսի գույներով, վոր կարծես թե նրանց վրա նայում ես յերփնեղանդ ծիածանի միջից։ Ամեն տեղ պերճություն, թավիշ ու կերպասամեն տեղ ընտիր ճաշակի նրբություն... Իսկ յերիտասարդի անկողինը. դա կամֆորտի վերջին խոսքն է։ Մահճակալն ամբողջապես ձուլված է բրոնզից և զարդարված վոսկեքանդակ փղոսկրով։ Նրա հատակին ուռցրել են փափուկ, փետրալից ոթոցներ, վորոնք ծածկված են ձյունի պես սպիտակ սավանով, իսկ գեղեցիկ վանդակազարդ սնարը՝ կիսով չափ փակում են ազվափետրով լի բարձեր՝ ծածկված նուրբ կտավով և զարդարված ծակոտկեն ժանյակներով (կրուժևա)։ Թեթև բևեղից կարած և շքեղ մետաքսով յերեսած վերմակը, վոր այժմ կիսածալ ընկած է մի կողմ, լրացնում է կազմվածքը հարուստ անկողնի, վորի մեջ նստած է յերիտասարդը՝ ճենապակյա վոսկեզոծ գավաթը ձեռին։ Մահճի առաջ գրված փոքրիկ նգուշրի վրա գտնվում են սեր, կարագ, ընտիր շաքարահացեր։ Յերիտասարդը վայելում է, և միևնույն ժամանակ, խոսում յուր մոր հետ այն մասին թե ինչպես ինքը հիմարություն եր արել «հուռների» յերկիրը գնալով և այնտեղ անլուր տանջանքների յենթարկվելով։ Լիդիա Գավրիլյան կաթկթում եր վորդուն և, միևնույն ժամանակ, աշխատում, վոր յուր քնքույշ հոգատարությամբ մոռացնել տա նրան կրած նեղություննները։

Բայց տեսարանը փոխվում է։ Բնության ու արհեստի շքեղություններով զարդարած «Հանքային» պարկում, կարկաչահոս Բորժոմկայի ափին, ծառերով հովանավոր մարմանդի վրա խմբված և ամարոցաբնակ տիկնանց, յերիտասարդների ու յերիտասարդուհիների մի փայլուն բազմություն, վորի մի մասը կրակետ է խաղում, մյուսը զվարճախոսում է, իսկ, իրեն կամաբայանին շրջապատողները, ճաշում են բարձրի, դեղեցկի և վսեմի մասին... Հանկարծ մի սիրուն, արծաթահնչյուն ձայն առաջարկում է բազմությանը՝ թողնել խաղերն ու զրույցը և կատարել մի զբոսանք, անցնելով Բորժոմկայի յոթ կամուրջները։ Ամենքն համաձայնվում են, վորովհետև առաջարկողը դեղանի Ադելինան է, փայլուն բազմության այդ վայրկենի թագուհին... Ցեվ խմբակն իսկույն բաժանվում է զույգ-զույգ, յերկակ կամ քառյակ մասերի, վորպեսզի ալլեաներով ու նեղ կամուրջներով անցնելու ժամանակ իրար չխանգարեն։

Կամաթյանն, ի հարկե, յուր թևն և առել չքնաղ Ադելինային, վոր այդ վայրկենին քնքուշ ևր ավելի քան դարձյան վարդը, դրամիչ ու քաղցրաբուր, քան ծաղկոցի շուշանը և սիրահոս ու դևդաճայն, քան այգածին սոխակը։

Ամբաւի մասերը դիմում էին առաջ խոսելով, ճչալով, կամ ուրախ կարկաչելով, յերբեմն իրար միանալով, իսկ հաճախ անշառ քայլելով։ Զարմանքդ թե հինգերգող կամուրջն էին անցնում, յերիտասարդը չևր հիշում և ահա խիտ ծառերի մի սիրուն բուլյակ շրջապատեց նրանց։ Մի վայրկյան նրանք տեսան իրենց միայնակ և կանդ առին հովանավոր ծածկարանի մեջ։

Ինդյանի կուսի լուսավառ հայացքը սևեռվեց յերիտասարդի սիրահույզ աչքերին և վարդադույն շուրթերը՝ ժպտի աննման ծիածանի մեջից, շշնջացին կիսաձայն.

— Ինչու այդքան ուշացար... Ցնծե դիտենայիր թե վորքան անձկությամբ եյի սպասում քեզ... վորպիսի կարոտով իմ որերն անցնում...

Ցնվ շուշան բաղուկները պատեցին խնդուն պարանոցը յերիտասարդի, վոր դրկեց նրան քնքշաբար և սեղմեց կրծքին մեղմով... Հրատապ շուրթերը հանդիպեցան իրար և արքայությունը մի վայրկյան իջավ յերկրի վրա...

Հանկարծ մի ահավոր դռռոց շրջապատը թնդացրեց, Յերիտասարդը վեր թռավ։ Առաջին բանը, վոր աչքին զարկավ, աթարի դևղն ևր, վորի շուրջն անձրևը դոյացրել ևր ուղմի ընդարձակ ճահիճ... Սա ուրեմն դարձյալ Չիրուքեզուն ևր։ Բայց ինչ դռռոց ևր այն, վոր զարթնեցրեց յերիտասարդին յուր անուշ քնից ու յերազի արքայությունը վոխեց իրական դժոխքի։ Դա խանդակաթ բառաչն ևր տանուտերի այն կովի, վորին Սալբին կթելուց հետո, բաց ևր թողել յուր հորթին մոտենալու համար. իսկ անմիտ անասունը չհամբերելով այնքան, վոր հասնեն հորթուկին, շտապել ևլ ճամփի կիսից յուր դվարթ ձայնով ավետել նրան յուր դալուստը, առանց մտածելու, թե այդտեղ քնած է կամաքյանը, վոր անուշ յերազ և տեսնում։

— Фу, что за безобразие,— բացականչեց յերիտասարդը, այս անդամ արդեն ռուսերեն և բարձրանալով տեղից, սկսավ շուռ-շուռ հանվիլ։ Ցնցրեք դյուղն ու դյուղացին այնքան դղվելի չեյին յերևացել Գևորսի աչքում, վորքան այս վայրկենին։ Այդ պատճառով հենց վոր տանուտերը յերևաց, նա դիմեց նրան դժդհությամբ.

— Ի սեր աստուծո, տանուտեր, մարդ դրկիր Սիմյոնովկա, վոր շուտ արույկա բերեն (սայլակ), յես մինչև յերկու ժամը պիտի հանապարհվեմ անպատճառ։

— Տրոյկը ուր վոր ա, ես ա կվառանի, չես իրիկվան եմ ապըսպրե... ասաց տանուտերը և սկսավ հարցափորձել թե ինչպես և պատահել, վոր նա գնելու թախտը դուրս և բերել բակը, կամ թե անձրևի ժամանակ վիրտեղ և պատսպարվել։

Գևորոսը պատմեց յուր գլխին կեկածը՝ դժգոհությամբ լի խոսքերով, վորոնք ծանր աղեցություն արին տանուտերի վրա։ Սա անկեղծ ցավ հայտնեց, վոր չև իմացել անձրևի գալը, ապա թե վոչ կարող եր հենց ներսի տանը քնելու տեղ պատրաստել յերիտասարդի համար։ Շատ բարկացավ նաև Սալբիի վրա, վոր բաց եր թողել «անիծուկ կովը», իսկ սա յուր բառաչով խանգարել եր «աղիս» անուշիկ քունը։

Հենց այս զրուցի և բացատրությանց ժամանակ լսվեցավ հեռվում փոստային սայլակի զանգի ղողանջը։

— Հրեն տրոյկը գալում ա. — ավետեց տանուտերը։

— Այդպես շուտ, — զարմացավ Կամսարյանը և ուրախանալով, վոր վերջապես ազատվում և նեղություններից, յուր սրտում հաշվեցավ բոլոր անցածի հետ, մոռանալով թե անձրևը, թե լվանները և թե կովի բառաչը։

Շուտով հասավ սայլակը՝ յեռալույծ ձիաներով։

— Տոնականն, դու ես յեկել, — հարցրեց տանուտերը, ծանոթ կառապանին։

— Ցես եմ յեկել բա, ըսկի կիմողնամ, վոր իմ աղին ուրիշ մարդ տանի, — ասաց կառապանը վստահությամբ, չնայելով վոր տանելիք աղին առաջին անգամն եր տեսնում յուր կյանքում։

— Ինչպես և, վոր այդպես վաղ ես յեկել, — հարցրեց յերիտասարդը։

— Բա ըսկի կյեղանամ։ Ծողա Միրզեն 6 շահի բախշեց. ասավ՝ Տոնականն, գնե տեսնամ, ռավոտը ծեգը ծեգին Զբխլվում։

— Ծողան ինչ ունի այս գործում, — զարմացավ Գևորոսը։

— Ինենց ա. իրիգվան Ծողի խետն եմ ապսպրե, — բացատրեց տանուտերը։

— Ցեվ նա քեզ վեց շահի բախշեց, — հեռաքրքրվեցավ յերիտասարդը։

— Բախշեց, բա։ Ասավ, Տոնականն, ընենց արա, վոր ես որ ճաշի վախտը աղին հասցնես Դիլի։ Ռևում ա լավ բարեկամդ ա, քե համար հոգում ա։

Յերիտասարդը չպատասխանեց։ Նա մտածում եր այն մասին թե ինչպես ժլատ ու գծուծ վաշխառուն սիրով զրկվել և յուր 30 կոպեկից, միայն այն պատճառով, վոր իրեն (Կամսարյանին) իբրև ջնասակար մարդու, մի փոքր ավելի վաղ հեռացնե գյուղից։

Այս մտածմունքը, սակայն, փոխոխություն չառաջացրեց յերիտասարդի վարմունքի մեջ։ Նա սիրով սկսավ յուր իրեղեններըը կապկպել, վորի ժամանակ մի փոքր տարակուսանք միայն բերած գրքերի մասին, չիմանալով թե՝ ինչ անե նրանց, վորովհետև տեսնում եր թե անոգուտ և այլևս այդ ծանրոցքը տանել թիֆլիս և այս, դուցե այն պատճառով, վոր չեր ուզում այնտեղ, յուր աչքի առաջ ունենալ այնպիսի իրեր, վորոնք հիշեցնելին նրան յուր «առաքելության» պատմության։

Շուտով մի դեղեցիկ միտք փարատեց նաև այդ մտմտուքը։ Նա հիշեց, վոր բողոքարկու արևդան գրքեր եր խնդրել իրենից։— «Աբե այս կապոցը գրկեմ նրան և սա կլինի մի դեղեցիկ նվեր» մտածեց յերիտասարդը և գրքերի կապոցն առանձնացնելով, թողնելով առնուտեղին, հավատարիմ դնացողի ձեռքով հասցնել այն արևդային։ Թե ինչ ոգուտ ստիմ քաղեր վերջինս Маркс-ի „Полный курс охоты“ և Освальд-ի „Ляговая собака“ գրքերից Սևանի տակլոր կղզում, դրա համար Գևորսը ավելորդ համարեց մտածել։

Մի ժամից արդեն ամեն ինչ պատրաստ եր։ Յերիտասարդը կամեցավ վարձատրել մի բանով հյուրասեր տանուտերին, բայց վերջինս բացե իրաց մերժեց ընդունել վորևե վարձատրություն, ասելով թե՝ յուր պարտքն եր պատվել աստուծո հյուրին, յեթե նույնիսկ ամիսներով նա ապրեր յուր տանը։ Միայն շատ յեկար թախանձելուց հետո, Գևորսը կարողացավ մի թղթադրամ թողել հյուրընկալի ձեռքը, իբրև հատուցում նվեր Սալբիի և յերեխայոց համար։

Արևը մի չվան բարձրացել եր Մարալինջից, յերբ կամաբյանն յուր արտադին շնորհակալությունը հայտնելով տանուտերին և նրա կնոջը, վողջունեց նրանց վերջին անգամ և բարձրացավ սայլակը։ Ծնողականը մի դորավոր բացականչությամբ թարթատանց ձիերին և նրանք աշխուժով սլացան դեպի խճուղին։

Այստեղից Սևմյոնովկա և այնտեղից՝ Դիլիջան՝ ուղևորությունն անցավ հաջող և առանց պատահարների։ Գիշերվա հորդ անձրևից հետո յեղանակը հրաշալի յեր, ոդը թեթև ու կաղդուրիչ, իսկ բուսականությունը՝ դվարթ և փայլուն։ Կամաբյանին թվում եր թե Սևմյոնովկայից մինչև Դիլիջան տանող ճանապարհը, անշուշտ, յուր կյանքի վրա, ստիմ ավելացնեն մի ավելորդ տարի։ Վանդի այդ հավաշունչ ժամերին Մայմեխի թավշապատ լանջերի վրա, նրա թավուտների և անտառների մեջ խաղում եյին այնպիսի հովեր ու սոխներ, տոգորված կանաչի և ծաղկանց բուրմունքով, վոր ամեն անգամ շունչ քաշելիս, նրան թվում եր թե շունչի

հետ միասին մտնում է յուր թոքերը վոչ թե ոդի ալիք, այլ կենսատու պլազման...

Դեռ կես որ չէր, վոր Կամսարյանը հասավ Դիլիջան։ Մինչև այստեղ նա շարունակ աշխատել էր չմտածել այն ամենի մասին, ինչ վոր կարող էր յուր տրամադրությունը խանգարել։ Նա ջանացել էր, մանավանդ վոր զղջալիարական «յեսը» չարթնանա և հիմար բաներ չըշշնջա յուր ականջին, — «Այսպես պիտի լիներ... ուրիշ կերպ չէր լինի... վորովհետև հնար չկա...» այս դարձվածներով էր որորել նա այդ «յես»-ին և նրա խիղճը քնացրել։ Բայց Դիլիջանում նա հիշեց հանկարծ Թարսաչայի կայարանի վերակացուին, հայց նախկին «յուղական ուսուցչին» և արդի «էնըքսատանիների վարժապետին»։

«Ի՞նչ պատասխան պիտի տամ նրան, յեթե հարցնե թե ինչու՞ վերադարձա»... մտածեց Կամսարյանը և տեսավ, վոր հարցը բավական լուրջ է։

Ավելի լավ է թողնել փոստի սայլակը և գնալ մանավոր կառքով... մտածեց նա և այդպես էլ արավ։ Փոստի կայարանում ճանապարհորդներին դյուրություն տալու համար հարմարեցված էր ճաշարանի նման մի բան։ Այդտեղ յերիտասարդը կուշտ նախաճաշ արավ և տպա մանավոր մի կառք վարձելով, շարունակեց յուր ուղին։

Այժմ նա դարձյալ վոչինչի մասին չէր մտածում և զբաղված էր դիտելով ճանապարհի նոր հանդիպող տեղերը, կամ լեռների ու ձորերի այն տեսարաններըը, վոր կարծում էր թե դալիս ժամանակը չէր նկատած։ Միայն թե Ազատևի կամուրջին մոտեցած ժամանակ նա մի վայրկյան մտածեց այն մասին, թե յերբ կառքը կմոտենա Թարսաչային ինքը կհրամայե կառապանին, այնպես արագ անցնել կայարանի առջևից, վոր էնըքսատանիների վարժապետը մինչև իսկ չի վորոշիլ թե՝ ինչ է նստած կառքում։ Եվ այս մտածմունքի մեջ նա ձեռքը տարավ ծոցը, վորպեսզի գրքաչիզարը հանե. սակայն նրա փոխարեն դուրս յելավ դարձյալ չտրաստատ Note-երի տետրը, վորն այս անգամ, արդեն, տանելի լիներ։ Չափ անհաճո յերևաց Նրան։ Առանց յերկար մտածելու՝ յերիտասարդը շպրտեց այն կամուրջի վրայից դեպի շտապող գետը։

Վոսկեզոծ տետրակը փայլեց մի վայրկյան արևի առաջ և անհետացավ Ազատևի տիրակարկաչ ալիքներում...

ԺԶ

Թիֆլիս հասնելով Կամսարյանը զարմացավ, յերբ ծառան հայտնեց թե Կիրիլ Կարապետը մի որ առաջ գնացել էր Բորժոմ։ Իրրև սկզբունքի տեր վաճառականը, նա յուր արևը չէր զոհում զվար-

ճության։ Ի՞նչն էր ուրեմն պատճառը, որ նա այս անգամ բացատություն էր արել.— «Մի գուցե մերոնցից մեկը հիվանդացել եւ մտածել Պետրոսը անհանգստությամբ։ Բայց չէրը ծառան հայտնեց թե՝ գաղան գնացել է եւ նրա համար, որ եգուց, աղջիկ պարոնի ծնունդին ճաշով լինիս չերիտասարդը թե ուրախացավ եւ թե չխոթվեց։

— Իրոք, վազը մայրիկի ծնունդն է... Ինչպես կայի մոռացել... Բայց ելի լավ եմ հասել... մտածեց նա ինքն իրեն եւ շտապելով դեպի յուր սենյակը, հանեց դրոցից ու պահարանից յուր նոր շորերը, արդ ու զարդի պատկանելիքը եւ մյն ամենը, ինչ որ կարող էր պետք գալ ամարանոցում թե ղրոսանքի եւ թե հանդեսների ժամանակ։ Ելի այս ամենը դգուշությամբ ու կարգով ճամպրուկում տեղավորելուց հետո շտապեց առաջնակարգ վարսավիրոյի մոտ յուր գլխի արտաքինը կանոնավորելու, այն է՝ խուզվելու եւ ածիլվելու։

Ճաշկոյան մեկ ժամից մի քանի րոպե անց Բաքում ճանապարհվող գնացքը առավ յուր հետ նաև Համասարյանին, յուր ճամպրուկով ու կապոցներով եւ մի քանի ժամից հասցրեց նրան Միխայլովո։ Այստեղից մինչև Բաքոմ պետք էր ճանապարհը շարունակել կառքով, վասնզի այդ ժամանակ դեռ չէր շինված երկաթուղու Բաքոմ տանող դիծը։

Պայծառ լուսնկա գիշեր էր։ Հարթ ու վողորկ խճուղին, որի նմանը չկար Կովկասի վոչ մի կողմը, աներժելի դարձուց նաև այս ուղեորությունը։

Կես գիշերից անցած, չերիտասարդը հասավ անտառապատ ձորի մեջ փակված Բաքոմը եւ փոքանակ ուղղակի իրենց վիլլան գնալու, դիմեց հյուրանոց, այն պատճառով, որ նախ՝ գիշեր ժամանակ ուշն մտնելով անհանգիստ չանե յուրայիններին եւ չերկրպղի, որ հետևյալ առավոտ մաքուր հագնված ու վայելուչ կերպով գնա մայրիկին շնորհավորելու եւ նրան այդպիսով մի հաճելի անակնկալ (սյուրպրիզ) անելու։ Այս նպատակով նա խնդրեց նաև հյուրանոցի տերոջը՝ կանխավ պատրաստել տալ մատակարարին՝ ամենաընտիր ծաղիկներից մի թանկագին փունջ սիրելի մայրիկին տանելու համար։

Հետևյալ որը վաղ՝ Լիդիա Պավլովնան զբաղված էր գալիք հյուրերի համար սուրճ ու շոկոլադ պատրաստելով, կամ սեղանատունը՝ շաքարահացերի եւ այլ ուտելիքներեի սեղանն ու սպասը կարգավորելով։ Նա թեպետ ուրախ էր, որ յուր ծննդյան հիսուն չերկուերորդ տարեդարձը կատարում է հարուստ ու բազդավոր, շրջապատված դեռ ևս սիրելի ամուսնով, առողջ զավակներով, բայց մի

մեծ պակաս ուներ յուր ուրախության մեջ. դա սիրելի Գեհիայի բացակայությունն եր, որը հնար չկար վոչնչով փոխարինելու... Ո՛, ինչպես կատարյալ կ'լիներ նրա ուրախությունը, յեթե այսօր Գեհիան գտնվում լիներ այն փայլուն հյուրերի հետ, որոնք շնորհավորության գալուց հետո, սիրտ հրավիրվելին ճաշի Վարանցովի պարկում...

Դեռ այս մտածմունքների հետ եր Լիդիա Պավլովնան, յերբ յերեխաները մի շշուկ բարձրացրին վիլլայի ծագկանոցում, որ գտնվում եր պետական փողոցի վրա։ Նա դուրս թռավ իսկույն վարագույրներով զարդարուն փոքրիկ պատշգամը և այդտեղից լսացավ անակնկալ նորությունը։

— Իմ սիրելի Գեհիան, իմ աննման վորդին չի մոռացել յուր մոր ծննդյան որը. նա գործը թողել, շտապել, յեկել և մայրիկին շնորհավորելու... մտածեց իսկույն Լիդիա Պավլովնան և ուրախության արցունքը նրա աչքերը թրջեցին։

Գեհրոսը դիմեց դեպի մայրը ուրախության ու գոհության ժպիտը յերեսին և գրկելով ու համբուրելով նրան, շնորհավորեց ծննդյան տարեդարձը։ Լիդիա Պավլովնան վորդու բերած փունջը գտավ հրաշալի և դուշակեց վոր վոչ վոք տպատգա շնորհավորողներից կարող և նմանը նվիրաբերել իրեն։

Գեհրոսի գալով Կամսարյաննների վիլլան նոր փայլ ու շուք ստացավ։ Մեծ գոհունակությամբ լսեց այդ լուրը նաև Կիրիլ Կարպիչը, վոր դահլիճի մի կողմը նստած՝ նարդ եր խաղում յուր հին բարեկամ Մարկ Իվանովիչ Մարկոզովի հետ։ Վերջինս, վոր ծաղրում եր եահիկաի որենքները, վաղ առավոտից եր յեկել տիկնոջը շնորհավորելու և տեսնելով նրան դեռ ևս պեներաարի մեջ, ասել եր, վոր այդ շորը նրան ավելի յեր սազում, վորովհետև նրա մեջ տիկինը ավելի յե «թմփլիկ, կլորիկ»։

— Գուդեր, բաս չեը գա... կոռնետի մատ հո չեր ցնա, — նկատեց նա Լիդա Պավլովնային, վոր յեկել եր ամուսնուն վորդու գալուստն ավետելու։

— Ցավ տես քե՝ ինչ որ և յեկել ես, հենց իմ ծննդյան որը...

— Բանիդ կաց... ծնունդ ել վոր չեր ելել, ելի կուգեր... շաշ ու չհար, Կիրիլ Կարպիչ, քարդ դիր... շարունակեց խաղը Մարկ Իվանիչը, վոր ուրախ բնության տեր ու կատակասեր մեկն եր։

Մի յերկու ժամից արդեն բարեկամներն ու բարեկամուհիները գալիս եյին շնորհավորելու։ Կանայք ու աղամարդիկ, սրիորդներ ու յերիտասարդներ, վոմանք դատ-դատ, վոմանք խմբովին, հաջորդհաև լցնում եյին վիլլայի դահլիճն ու նրան կից վերանդան, վոր զարդարված եր շքեղ վարագույրներով։ Հաճելի աղմուկով

Ներս ու դուրս կյին անում, մանավանդ, յերիտասարդուհիները, վորոնց դրուցի մեծ մասն, առհասարակ, բաղկացած եր լինում ձայնարկուβյուններից ու բացականչուβյուններից։

Լիդիա Պավլովնան յուր դրուβը կկորցներ, յեթե յերիտասարդ վորդին, վոր քաջ կենցաղագետ եր, կարդով կանոնով ամենքին չընդունեներ, հարկ յեղած տեղը սիրով չժպտար, կամ ուր վոր պետք եր, հաճոյախոսուβյուն չաներ։

Ձիշտ հարմար ժամին, այսինքն ընդունելուβյան տաք միջոցին, վիլլայի առաջ կանգ առավ Մարկոսյանների կառքը, վորից սիկինն իջավ նաղելով և, անպատճառ, ոպասավորի ոգնուβյամբ, մինչդեռ Ադելինան ներքև թռավ թեթև թռչունի պես։

Տեսնելով Պետրոսին դահլեի դռան առաջ, ուր նա յեկել եր իրենց դիմավորելու, սրիորդը բացականչեց։

— Դուք այստեղ... այս հրաշք է, և ներա ձայնի արծաβյա հնչյունը ալիքներ տալով՝ անցավ-դահլեի մի ծայրից մյուսը։

— Հրաշքեմեն քիչ պակաս և... են էլ ասեր կու թամամինք... նկատեց հայրը բարձրաձայն ծիծաղելով։

— Աստուծով,—հարեց Կիրիլ Կարպիչը, բայց այնպես ցած, վոր միայն ինքը և խաղընկերը լսեցին։

— Ուրեմն դուք այստեղ եք,—նորեն կրկնեց սրիորդը, սեղմելով յերիտասարդի ձեռքը։

— Ինչպես տեսնում եք,—պատասխանեց վերջինս,—ժպտող հայացքը Ադելինի սիրուն աչքերին ուղղելով։

— Չեյի կարող հավատալ, վոչ վոք չեր սպասում...

— Ցնս սպասում եյի... Ինչպես կարող և մարդ յուր մոր ծննըդյան որը մոռանալ,—նկատեց սիկին Մարկոսյանը, իբր թե աղջկա սխալն ուղղելով։

— Աբա մի ասա, թե ասուածդ կու սիրես, քու մերը յերբ և ծնվել,—հարցրեց Մարկ Իվանիչը կնոջը այնպիսի մի յեղանակով, վոր ամբողջ դահլիճը ծիծաղից թուլացավ։

— Ցերանի իմանամ քեղ ում և խոսեցնում,—նկատեց սիկինը նույնպես ծիծաղով և դեպի Լիդիա Պավլովնան առաջանալով։

— Այստեղ համեցեք, այստեղ,—խնդրեց վերջինս,—ցույց տալով թավշյա փափուկ բազմոցը։

— Հա, յես այդտեղ կնստեմ. սիրում եմ, յերբ իմ տեղը լայն և լինում ու արձակ։

— Մեռելոցիք ել դրուստ եղենց ին ասում, տամ վոր խեղճեբուն վաչով չի լսում,—հարեց Մարկ Իվանիչը։

— Տո, շեշդ դիր, շեշդ, ինչ ես մարդկանց խանդարում,—նկատեց Կիրիլ Կարպիչը յուր խաղընկերին։

— Ես էլ իմ շեղը. լեքը՝ չունիմ։

— Չհար ու դուս... խաղը շարունակվում էր։

— Ասում եք վոր վոչ վոք չէր սպասում ինձ, — խորհրդավոր ժպիտով հարցրեց Պետրոսը Ազելինային։

— Վոչ, այդ չեյի ուզում ասել... Բայց... ինչպես և հայերեն... Ուզում եյի ասել, թե վոչ վոք հույս չուներ, թե կարող կլինեյք թողնել ձեր գործը և գալ, հասկանում եք — ուղղեց որիորդն յուր սխալը, վորից, սակայն, նրա այտերը թեթև շառագունեցան։

— Հասկանում եմ, վոչ վոք հույս չուներ։ Բայց յես ահա յեկա։

— Ինչպես լավ է, վոր յեկաք. յեթե դիտեյնաք, թե վորքան պետք ունինք ձեզ։

— Ցեթե կարող եմ մի բանով ծառայել որիորդին...

— Վոչ, հասարակությանը։

— Հարկավ, ձեր հրամանով։

— Այդպես ընդունեցեք, յեթե կամենում եք, — ասաց որիորդը քնքշաբար ժպտալով։

— Այդպես եմ ընդունում, — հաճեցեք հրամայել։

— Այսօր ճաշին մենք ձեզ հետ ենք, վարանցովի պարիսում... Այնպես է, Լիդիա Պավլովնա, — դարձավ որիորդը տիկնոջը։

— Այո, սիրելիս, բոլոր հյուրերին հայտնված է։

— Իսկ յերեկոյան մենք կունենանք նվագահանդես։

— Բարեգործական նպատակով։

— Այո, և հարուստ ծրագրով։

— Ցեվ մենք ուրեմն պատիվ կունենանք ձեր հրաշալի ձայնն ու դաշնամուրի նվագը լսելու։

— Այսինքն պատիվ կանեք մեզ լսելու։

— Ցեվ ինչ կատարներ կերգեք կամ կնվագեք։

— Այդ կիմանաք աֆիշայից, բայց բանն այդ չէ։

— Հասկամ։

— Նվագահանդեսից հետո, մենք կունենանք պարահանդես։

— Գոսիլիոնով... ճշտց դահլիճի մյուս կողմից Ազելինայի ընկերուհիներից մինը։

— Այդ էլ լավ է։

— Լավ է այն պատճառով, վոր դուք այստեղ եք։

— Այդ ինչ է նշանակում, — ժպտաց յերիտասարդը։

— Ցերևակայեցեք, վոր մինչև այժմ մենք դեռ չդիտեյինք թե ով պիտի լինի մեր dirigeur-ը, վորովհետև չենք ընտրած։ Այստեղի յերիտասարդների մեջ, ճշմարիտը խոստովանած, շնորհքով մեկը չկա։

— Ինձ կու ջոկվիք ելի. — կատակեց դարձյալ Մարկ Իվանիչը, որ այժմ տարած քարերն էր համարում։

— Դահլիճում նորեն ծիծաղ բարձրացավ.

— Ձեք կարող յերևակայել թե վերքան ուրախ եմ։ Դուք, ի հարկե կկատավարեք մեր պարերը։ Այժմ արդեն պարահանդեսը կլինի իսկական պարահանդես։

— Իսկ յեթե յես խնդրեյի, որ ինձ պատեք այդ պաշտոնից։

— Ցնվ վոչ մի խոսք այդ մասին. — հարեց որիորդը վճռաբար։

— Այո, այո, վոչ մի խոսք. — դուք հրաշալի dirigeur եք, — դուք չի պիտի մերժեք, — խոսեցին այս ու այն կողմից Աղելինայի ընկերուհիները։

— Բան և, թե վուր Պիտեր Կիրիլիչը իրիկվան առկաղ արավ, յես հարիր եմ, ձիլ եննենց լաղաթով պար ածիմ, վոր ասիք — մաշալլա Մարկ Իվանիչ... դվարճախոսեց Աղելինայի հայրը և ծիծաղը նորից ընդհանրացավ։

Ցերեկվա յերրորդ ժամին կամաբրյաններն հյուրերը հետզհետե հավաքվում եյին Վարանցովի պարկը, որ գտնվում էր Բոբժոմի գեղեցկությունը կազմող անտառապատ բարձունքներից մեկի վրա։ Գեղուղեշ ծառերի հաճելի հովանու տակ բացված էր ընդարձակ սեղան՝ զարդարված կանաչով, ծաղկափնջերով և հրուտա ակրատի բազմատեսակությամբ։

Ճաշը նշանակված էր տասերականից վաղ, որպեսզի յերեկույթ կազմող որիորդները թե հացկերույթին մասնակցելին և թե ժամանակ ունենային հանդիսի համար պատրաստվելու։

Ընտիր խորտիկները և ընտրելագույն գինին, միացած ընտիր յերաժշտության հետ, որի արձագանքը թնդում էր անտառի հեռավոր ծմակներում, շուտով առեղծեցին Վարանցովի պարկում եպիկուրյան հայացքների յերկրպագու մի ամբոխ, հարած յերկու զատ, բայց միմյանց հետ սերտ կապ ունեցող տեսությանց։ Տարիքավորները համակերպելով մեր ծանոթ Տեր-Վանու կարծիքին, ընդունում եյին, որ այս անցավոր աշխարհում, կա միայն մի բան, որի համար արժե ապրել. այն է՝ լավ ուտել։ Մինչդեռ յերիտասարդները այդ մի ակ բանը գտնում եյին լավ սիրելու մեջ։

Այս պատճառով էլ, յեթե առաջիններն իրենց տվել եյին համեղ խորտիկներն ու անուշ գինին ուշադիր ջանքով և գիտակցաբար վայելելու դժվարին աշխատության, վերջիններն, ընդհակառակը, զբաղված եյին քնքուշ ժպիտների, կրակոտ հայացքների և խորհրդավոր ակնարկների փոխանակության։ Սիրո և մտերմության այդ հրապուրիչ տուրևառում զբաղանցում եյին

բոլորին Գևորան ու Ադելինան, վորոնք պատահաբար նստած էին իրար մոտ... Ճաշը վերջանալու վրա նրանք ասել, վերջացրել էին այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ եր յերկու սիրող սրտերին՝ իրենց ղգացածը միմյանց հասկացնելու համար — թեպետ և այդ անելիս՝ նրանք չէին արտասանել և մի պարզ խոսք։

Հասավ յերեկոն։ Հանքային պարկի ռատոնդան լուսավորված եր շքեղորեն։ Գուլդզուլդ լապտերները, վորոնք կախված էին պատշգամի սյուներարերն ու մոտակա ծառերը միմյանց հետ կապող կանաչահյուս ժապավեններից, մագական խորհրդավորություն էին տալիս կյանքով ու լուսով վողողված այն կետին, վոր ամփոփված եր անտառապատ բարձրավանդակներով պարըսպված ձորակի մեջ։ Կարգադրիչներն ամեն կերպ աշխատել էին դրավիչ ու հետաքրքրական դարձնելու պարկի այդ մասը, ուր ռատոնդան եր և ուր նվագահանդեսն ու պարերը պիտի տեղի ունենային, վորպեսզի ժողովուրդը ցանկալի չափով մասնակցեր հանդեսներին և բարեգործական յեկամուտը մեծացներ։ Այդ պատճառով հանդիսի ընդարձակ դահլիճը, դեռ ուրիշ առաջ, լցված եր յերկսեռ բազմություլամբ։ Իսկ նվագահանդեսն սկսելուց, վոչ միայն չկար պարապ աթոռ, այլ և դռների ու պատուհանների առաջ խռնված եր մեծ բազմություն, վոր փող եր վճարել, դեթ մոտիկ կանգնելու իրավունք ունենալու համար։

Գեղեցիկ վարագույրներով ու արևադարձային ծաղիկներով զարդարված բեմի վրա, առաջին անգամ յերևաց Ադելինան յուր ընկերուհու հետ։ Նա հագած եր մետաքսյա նուրբ, ձյունափայլ շոր, հոլանի թևերով ու կրծքով, վոր զարդարված եր մարգարտածաղկի և շուշանների հյուսերով։ Գիսաթաց կրծքին, ուր հանգչում եր սպիտակ վարդի մի վոստ, այլ և հարուստ մազերում, վորոնք սանրված էին à la moderne, ասպղերի պես փայլում էին հարուստ ադամանդներ։ Անմեղության խորհուրդն ամփոփող սպիտակ հագուստներում և մանավանդ լամպի այլակերպող լույսի առաջ, դեղանի Ադելինան զարձել եր, դրեթե, յերկնային։

Ցերբ ընդունելության ծափերը դադարեցին, որխորդն ու ընկերուհին, վոր նույնպես դրավիչ եր իլլյուզյայի շնորհիվ, սկսան դաշնամուրի ձայնակցությամբ յերգել մի սրտաշարժ duo, վոր հարուցեց դահլճի մեջ ծափահարությունների և bis-երի վորոտընդոստ աղմուկ, վորից ստիպված՝ նրանք յերգը կրկնեցին։

Հետևյալ համարը պատկանում եր մի յերիտասարդի, վոր չուքակի վրա նվագեց յուր բաժինը և, ինչպես սիրող, արժանացավ գարձյալ ծափահարությունների։

Ցերրորդ համարը Մոցարտի VI-րդ սոնատն էր, որ Ադելինան և մի ուրիշ արիորդ նվագեցին դաշնամուրի վրա։

Չորրորդին դուրս էկավ Ադելինան միայնակ և նվագեց նույն հեղինակի Roudoalla Turca-ն, որ յուր արևելյան ճաշակի նուրբ ու քնքուշ մելամաղձոտությամբ սրտաշարժ ազդեցություն ունեցավ հանդիսականների վրա։

Վորտաալից ծափահարությունների աղմուկով փակվեցավ նվագահանդեսի առաջին բաժինը։

Ցերկրորդին և յերրորդին մասնակցեցին նոր մարդիկ — մի վիոլոնչելիստ, մի սրնգահար, մի solo յերգիչ. սուտ յերգչուհիներ, վորոնց մի trio-ին միացավ դարձյալ Ադելինան։ Բացի այդ նա յերկրորդ ու յերրորդ մասերում հանձն առավ լուրջ մասնակցություն՝ մեջ ընդ մեջ նվագելով դաշնամուրի վրա Բեթհովենի Quasi una fantasia սոնատը։ Շուման Warum-ը, նրա կարնավալի խոստովանանքը և Շոպենի Nocturnus-ը, վորով, համարյա, ներկայացավ նվագահանդեսի գլխավոր տիրապետուհին, վոչ միայն յուր դեղեցկությամբ ու շնորհաշուք շարժվածքով, այլ և այն արժանիքով, վոր ցույց տվավ նա յերաժշտական մասում ունեցած յուր համառությամբ։

Կամաթյանը, վոր բոլոր ժամանակ հոգեցած դիտում եր զնդանի արիորդին ու լսում նրա շնորհալի յերգը կամ դաշնամուրի նվագները և ընդ նմին ականջում ժողովրդի գովությունները, հետզհետե սկսում եր զարմանալ յուր հիմարության վրա, վոր մինչև իսկ մի վայրկյան թուլ եր տվել իրեն մտածել թե կարելի յեր յերբևիցե ձեռքից թողնել այդ դանձը... Ցավ այդ իսկ պատճառով, վորպեսզի նորոգված մտերմությունը վոչնչով չխուլանա, նա յուրաքանչյուր խաղամիջոցին վազում եր բեմի յեռանը և հիացած բացականչություններով Ադելինային գրվատում։

— Ձեր յերգը, արիորդ, դյուքիչ եր և հրաշալի... ձեր սոնատն աննման եր... ձեր Rondo-ն ինձ լացացրեց... ասում եր նա։ Իսկ դահլիճը վերադառնալուց սկսում եր արիորդին համեմատել իրեն հետ և գանում, վոր նա, արդարև, արժանի յե յուր կենակիցը լինելու։ Հենց այս պատճառով էլ տեսնելով, վոր Ադելինան տիրում է հանդիսի վրա, ցանկացավ, վոր ինքն էլ աչքի ընկնի մի բանով, ուստի վորոշեց ընդունել դիրիժորի պաշտոնը, վոր դեռ առավոտը կամենում եր մերժել։

Ցավ վորովհետև դիտեր թե ամեն մարդու բան չե պարերը կատարվել այնպես, վոր ընդհանուր գոհությանն և կենդանության հետ միասին դահլիճում տիրե նաև կատարյալ կարգ ու ներդաշնակություն, ուստի առաջուց հայտարանում եր, վոր ինքը

պիտի կարենա լիուլի ցույց տալ այդ բանում իւր հաղվագիւտ շնորհքը։ Այս պատճառով նա շտապեց ոտքովին վերջին խաղամիջոցից և հենց նստած տեղը կազմել tour-երի ընդհանուր ծրագիրը, վոր շատ էլ հեշտ բան չէր։

Նվագահանդեսը վերջացավ մի քվարտետով, վորին մասնակցեցին՝ ջութակահարը, վիոլոնչելիստը, արնդահարը և trio յերգող յերեք օրիորդները, վորոնցից մինն էր Ադելինան։

Ծափահարութիւնները յերկար դղրդեցնում էին դահլիճը և յերևի զարմացնում մոտակա անտառներում թառած թռչուններին, վորոնք յեթե խորհելու դիշ սովորութիւն ունենային, անշուշտ շատ աննպատակ բաներ կմտածեյին մարդ արարածի մասին։

Շուտով ծառաները դահլիճի միջից դուրս հանեցին ավելորդ աթոռները, վորպեսզի պարերի համար հրապարակ բացվի։ Ադելինան և յուր ընկերուհիները, վորոնք չեյին կասկածում թե լավ dirigeur ունին, յեկան մի անգամ էլ ստուգելու թե՝ արդյոք յերիտասարդը հո չե պնդում մերժման վրա։ Եւ դոհ յեղան տեսնելով, վոր վերջինս արդեն յուր դերի մեջ ե և հրամաններ և տալիս վոչ միայն ծառաներին՝ դահլիճը կարգավորելու, այլ և յերաժիշտներին, պարերգի յեղանակները դասավորելու այնպես, ինչպես ինքը ծրագրել եր արդեն։

— Տեսնում եք, օրիորդներ, ամեն, ինչ վոր նախորոք ինքներդ պիտի կազմեյիք, այն էլ պարոնն և շտապել կազմելու, — նկատեց նորատի մի տիկին, աչքի անցնելով tour-երի ցանկը, վոր գծել եր Կամսարյանը յուր այցեստոմի վրա։

— Մի՞թե չդիտեիք թե՝ ինչու յենք պարոնին dirigeur ընտրում, — վրա բերավ Ադելինան քաղցր ժպտալով։

— Ինձ թվում է, թե ով հանճն է առնում մի պաշտոն, նա ինքն էլ պիտի հոգա նրա անթերի կատարման համար, — պաշտպանեց օրիորդին Կամսարյանը, կարող մարդու հավակնութեյամբ։

— Այո, բայց աշխատանքի բաժանումը հեշտացնում է գործը, — ավելացրեց տիկինը։

— Ո՛, և մի՞թե սա գործ է. այսպիսի գործերում յես ինձ դղում եմ...

— Ինչպես ձուկը՝ ջրում, այնպես չէ, — ընդհատեց Ադելինան, ծիծաղելով։

— Այո, միայն այն զանազանութեյամբ, վոր ձուկը լողում է անխոս, մինչդեռ մեր դիրիժյորը պիտի լողա այսօր շարունակ բարբառելով, — կատակեց մի ուրիշը։

— Բայց դուք այսպես ժամավաճառ եք լինում. առեք այս ցանկը և յերկու թերթերի վրա օրինակելով՝ փակցրեք դահլիճի

պատերին, վորպեսզի պարողները ծանոթանան tour-երի կարգին,— խոսեց նորատի տիկինը, վոր, ըստ յերևույթին, շատուշատ եր վայրկյան առաջ սուրալ դահլիճի միջուկն հատակի վրա։

— Անհանդիստ մի լինիք, դրա մասին էլ յես կհոգամ,— ասաց Կամսարյանը և ներողություն խնդրելով հեռացավ խմբակից։

Քիչ ժամանակից հետո բոլոր պարող տիկիններն ու որիորդները իրենց ձեռքում ունեյին զիրիժյորի այցետոմսը՝ tour-երի ցանկով։

Պարահանդեսն սկսվեց Valse générale-ով, վորի ժամանակ հայտնըվեցավ, վոր նվագահանդիսի նախկին թաղուհին, այժմ պիտի դառնա զիրիժյորի յեռանդը վառող անբաժան վոգին։ Ցնծ դրանք յերկուսն, արդարև, այդ վայրկյանին արժանի եյին իրար՝ իրենց զնգուն ուրախությամբ, համաչափ հատակով, շնորհալի շարժումներով, յերիտասարդական զվարթությամբ և, համառնավանդ, աշխուժի ու յեռանդի բացարձակ դեղումով, վոր վարակում եր նաև յերեսփոխանական աթոռներին, մացնելով նրանց մեջ կենդանության նոր դրդիռ։

Վարովհետև այդ ժամանակ դեռ ֆրանսիական քաղրիլը իրրև հնություն չեր հանված ընդհանուր պարերի ցանկից, ուստի նա հետևեց Valse générale-ին։ Դրանից էլ, իսկապես, սկսվեց Կամսարյանի սիրապետական փայլը։

Առաջնորդն ու տիկիններն իրար ընտրելուց հետո, ընտրել եյին նաև իրենց աթոռները և կապել նրանց թաշկինակներով, վորպեսզի շուրջ խռնվող հասարակությունը չըքաշե նրանց դես ու դեն։

— Avancez... passez... retournez à vos places... Վարսաց զիրիժյոր Կամսարյանի ձայնը, ինչպես զորապետի մի խրոխտ հրամանն և դահլճի ամուռ հրապարակը վայրկենապես ծածկվեցավ պարողների բազմությամբ։ Ամիտակ կերպասը, փրփուր բաճիոսը, ծպտիկն ու աղամանդը խառնվելով իրար, առեղծեցին այդտեղ զարնան թիթեռների խայտաբղետ մի պար, վորի մեջ տղամարդիկ, իրենց սև զգեստներով՝ հիշեցնում եյին բզեզների ու մեղուների խառնուրդը։

— Les dames, avancez... reculez... avancez et balancez vos cavaliers vis-à-vis... հնչում եր Պետրոսի ձայնը հետդհետե առաջանալով։

— Ինչպես եք հավանում մեր զորապետին... հարցրեց Ադելյան յուր vis-à-vis աղջկանն՝ balance-ի ժամանակ։

— Հրաշալի և,— պատասխանեց վերջինս և ժպտալով անցավ։

— Avancez et balancez vos cavaliers premiers...

— Ձեզ համար ասում են, որ հրաշալի dirigeur եք, — շշնջաց Ադելինան Գեորգոսի հետ պատելիս։

— Բայց չէի՞ն ասում, որ ուրուհուս արժանի չերկրպագուս չեմ — նկատեց կամաորյանը ինքնագոհ ժպիտով։

— Ձախողանց համեստ եք։

— Ասացեք՝ ճշմարտախոս... Messiuers, avancez, reculez... avancez et balancez vos dames vis-á-vis:

— Ասացեք Ադելինային, որ շատ չքրքրվի, — ապսպրեց կատակով կամաորյանի հետ պատող vis-á-vis որիորդը։

— Ձեր ընկերուհին պաշտելի չե, մի դրպարտեք նրան... նկատեց դիրիժյորը և շարունակեց... avancez et balancez vos dames premieres:

— Ի՞նչ եր ասում ձեզ Իդան, — հարցրեց Ադելինան Գեորգոսին, չերբ նա figure-ն ավարտելուց հետո նստեց յուր կողքին։

— Ձեմ կարող ասել։

— Ինդրում եմ։

— Հարցրեք, հարցրեք, — հորդորեց որիորդը դիմացի շարքից։

— Դե՛հ, այժմ ասացեք. ի՞նչ եր ասում նա, — սիրեց Ադելինան զվարթ հետաքրքրությամբ։

— Ասում եր՝ իբր թե դուք շատ քրքրվում եք։

Ադելինան նայեց յուր ընկերուհուն և ժպտալով ասաց.

— Ինքներդ դատեցեք, մի՞թե իրավունք չունիմ... Հապա, համեմատեցեք... Ճիվ այս ասելով՝ նա մատնացույց արավ ընկերուհուն՝ նրա ասպետը, որ ճաղատ գլխով, ոչ դեղեցկադեմ մի դրոշ եր։

— Մի վիճեք, յելնենք։ Messieurs, avancez. Chaine, les dames á la main... գոչեց դիրիժյորը և պարը շարունակվեց։

Այս ձևով իրար հաջորդում եյին figure-ները մինչև վեցերորդը. բոլոր այդ ժամանակ կամաորյանը հանդիստ սիրախոսում եր Ադելինայի հետ։ Բայց galop-ի ժամանակ նա արդեն դարձավ մարմնացյալ յեռանդ, որովհետև հրամաններըը պետք և տար զգուշությամբ, վորպեսզի grand rond-ի վախճանը լիներ թե սահուն և թե հաղթական։

Բարեբազդաբար այս լուրջ խնդիրն էլ լուծվեցավ հաջողությամբ։ Ցերբ corbeile-ից հետո վերջին անգամ հնչեց դիրիժյորի ձայնը՝ Remerciez vos damesl ամենքն արդեն գիտեյին, որ կարգադրիչ պարոնի շնորհիվ սխալ քայլ չեյին արած։ Այդ պատճառով շնորհակալությունները յերկուստեք էլ սրտագին եյին։

Քաղցրիլից հետո սկսվեցան ազատ պարերը, որոնց ժամանակ Ադելինան, հակառակ, նույնիսկ bon-ton-ի պահանջին, համախ

անբաժան եր չնորհալի դիրիժյորից։ Դուցե և այս այն գիտակցությամբ, թե հյուրերից շատերն, արդեն ծանոթ են յուր ղդացմունքներին, հետևապես խոսապահանջ չեյին լինիլ դեթ այս անգամ։ Ցավ իրավ նրանց յերկուսի համաչափ ու ներդաշնակ շարժուձևերից արդեն դիտող աչքը կարող եր վորոշել չափն այն համակրության, վոր յերիտասարդ սրտերը տածում եյին դեպ իրար։ Ցեթե պարից բան հասկացող հանդիսականը ծաղրում եր այնպիսիներին, վորոնք պարելու փոխարեն քաշկրտվում եյին կամ իրենց կոր մեջքով և դռնիկ pas-երով ատելամ իրենց dame-երին, ընդհակառակն, հոգեկան մեծ հաճույք եր զդում նայելով Կամսարյանի և Ադելինայի վրա, վորոնք իրենց թեթև ու շնորհալի քայլերով և հանդիստ ու ճոճուն պտույտներով դրեթե միշտ իրենցից կազմում եյին մի անձն, վոր յուր շարժուձևերով միաժամանակ փայլեցնում եր վորքան շնորհք, նուինչափ և արվեստ։

Պարերը, սակայն, շարունակվում եյին յերկար, վասնզի յերեքյերիտասարդները չեյին հոգնում, իսկ սիկիննեներն ու որիորդները պատրաստ եյին, նույնիսկ, առաջիկա ցերեկը փոխել դիշերի, միայն թե կարենային անվերջ պտտել ու սուրալ՝ յերաժշտության հաճելի ազդեցությամբ արբած...

Բայց հասակավոր հայրերն ու մայրերը սկսում եյին հոգնել. շատերն էլ սոսմաքի որոտունդն եյին լսում։ Այդ պատճառով սկսան հիշեցնել «ջահիլներին» թե՝ ժամանակ է արդեն իրենց յեսանդը չափավորելու։ Այդ հուշարարների թվին պատկանում եյին, նաև, Կամսարյան ու Մարկոսյան ամուսիններըե, վորոնց խորհրդին, սակայն, հետևեց իսկույն ինքը դիրիժյորը, սկսելով Cotillon-ը իրրև վերջապար։

Բայց վորպեսզի սիկիննների ու որիորդների հաճույքը ևս կարողանար դրավել, նա Cotillon-ը փոխանակ քաղցրիլի ու մաղուրկայի պարող խառնուրդով վերջացնելու, աշխատեց բարդել վայելի ու պոլկայի յերկարատև tour-երով։ Ցավ թեպետ նա խոստացյամբ հետևում եր արշավին և հարմոնյան վոչնչով չխանգարելու համար աշխատում, վոր զույգերը ձեռքից չտան իրենց հերթը, այսուամենայնիվ, վերջում յերևեցավ, վոր բոլոր ասպետներից ավելի շքանշան ինքն և ստացել։

Ցերբ promenade-ն ու petit-rond-ը ավարտելով դիրիժյորը գոչեց՝ — Voyagez á quatre coins á la isvostchikl, նա ձեռքին ուներ մետաքսյա սանձերը յերեք դեղեցկուհիների, վորոնցից միշինը չքնաղ Ադելինան եր և՝ վորոնք՝ իրենց ջերմությունից շիկնած վարդագույն դեմքերով՝ հիշեցնում եյին

Ապոլոնի հրաշունչ նժույգները՝ Արշալուսի բացած դռներով յելնելիս...

— Trois en avant! դոչում էր յերիտասարդը և յուր նժույգներով պատում ու սուրում դահլճի շուրջը։ Նրան հետևում էին ուրիշները, բայց հակառակ կազմվածքով. — շատ տիկիններ ու որիորդներ լծել էին յերիտասարդներին և վարում էին նրանց՝ ինչպես Դիանաները՝ իրենց եղեներին։

— Այ, դրուստն ես ա, չուն համիկվա վախտը՝ աղջկերքն են տղերանցը լծում։ Ամա են ինչքի քու տղեն իմ աղջկանն ա լծել, սաբաքն քինչ ա, — հաշցրեց ծիծաղելով հայր Մարկոսյանը՝ իրենից անբաժան կիրիլ կարպիչին։

— Մարկ Իվանիչ, եղենց էլ ա լինում. խան մեկն ա լծում, խան մեկելը. դու ասա ճամպեն դրուստ գնան, չվերննդնեն, թե չե լծելուց քինչ վինաս... այլաբանական հարցին, այլաբանորեն պատասխանեց հայր Կամսարյանը։

Ցերը Գևորոն ու Աղելինան քե քեվի տված մոտեցան ծնողներին, Մարկ Իվանիչը կատակով նկատեց.

— Աբա մի ասա, Գյոտր կիրիլիչ, կ ո ւ ն ե ր ի յերկրումը, վոր ճնացել եյիր, քիզ ձվ կուտար ես դադա մեդալներիր ու խաչիր... Տես ե՛, իսաակ պոլկոնիկ իս դառի։

Աղելինան ու շրջապատողները ուրախ ուրախ ծիծաղեցին, մինչդեռ Գևորոսը կեղծեց քե ծիծաղում է, վորովհետև Մարկոսյանի արած դիտողությունը մի տեսակ ցուրտ փչեց յուր ջերմացած սրտին։

Այսուամենայնիվ, պարկի ծառազարդ մի անկյունում ընթրիքի համար բացված սեղանը, վորի վրա դրված արծաթ ու քրիստալ սպասները փայլում էին առատ լուսի առաջ, իսկ տեսակ-տեսակ ակրատան ու գինին դրդռում նույնիսկ կուշտ մարդու ախորժակը, ցրեցին նաև յերիտասարդ Կամսարյանի տխրության հովերը և հավատացրին նրան քե ավելի լավ է վայելել քան քե մտածել...

Այդ բանին, մանավանդ, լավագես ոգնեց Մարկ Իվանիչը, վոր սեղանը բոլորող փոքրիկ հասարակության խնդրանոք դարձավ կառավարիչ։ Առաջարկած կենացները նա համեմում էր զվարթ կատակներով և յերբեմն, մինչև իսկ, հաջող սրախոսություններով. այնպես, վոր ընթրողներն ավելի ծիծաղում, քան ուտում էին։ Զարմանալի էլ չեր, վոր այսպիսի ընդունակ կառավարչի շնորհիվ, դեռ յերկրորդ կերակուրը չբերած՝ շիշերի գինին կիսից ցած լիներ, իսկ յերրորդն սկսելուց՝ արդեն վերջացած։ Այս կշռադատիը քեպես մեծ քան չեր ելավ խմողի համար, բայց Բորժոմի պար-

կում ընթրողին՝ պատշաճ չէր դրանից ավելին վայելել, ուստի պետք է ընդունել, որ այդքանով էլ մեր հյուրերն արդեն գվարթացած էլին։

Բաղցրեղենը բերելու ժամանակ ընթրողների զրամադրությունը այնքան էր քնքշացել, որ կարծես թե ահա, ուր որ է այդ բոլորը պիտի ձուլվին մի սրտի և մի հոգու մեջ։ Այսպիսի հաջող զրամադրությունից ոգևավելով, Լիդիա Պավլովնան, որ բոլոր ժամանակ գվարճանում էր Պետրոսի և Ադելինայի միմյանց հետ փոխանակող քաղցր ժպիտներն ու հայացքները դիտելով, կամ նրանց գաղտնիկ սիրախոսությունը լսելով, իրրև թե արդեն համբերությունից յելած, ժպտալով բացականչեց.

— Դե վերջ ավեք, ելի...

— Դրուստ ա ասում, վերջ ավեք... հարեց խնկույն Մարկ Իվանիչը և քահ-քահ ծիծաղեց։

Ցնծ վորովհետև բոլորի համար պարզ էր թե ինչի՞ մասին և խոսքը, ուստի Կիրիլ Կարպիչը, որ ամեն բանի մեջ սիրում էր հանդիսավորություն, բարձրանալով տեղից բռնեց վորդու ձեռքը և տալով Մարկ Իվանիչին, ասաց.

— Ահա քու ժեանա։

Տիկին Մարկոսյանը հետևելով նրան, առավ աղջկա ձեռքը և տալով Կիրիլ Կարպիչին, հարեց.

— Ես էլ քու հարսը...

Թե Պետրոսի և թե Ադելինայի դեմքին խաղացին լուռ յերանական ժպիտներ։ Դրանով նրանք իրենց համաձայնությունն էլին տալիս ծնողների արածին։

— Շնորհավոր, շնորհավոր, — դոչեցին այս ու այն կողմից։

— Մատանին տուր, խնամի, մատանին, — բացականչեց Մարկ Իվանիչը, իրրև գործնական հայր։

Լիդիա Պավլովնան ընտրեց յուր մատի մատանիներից ամենագնահատելին ու թանկագինը և հագցնելով Ադելինայի մատին, համբուրեց նրան և ասաց.

— Սա թող լինի մեր ղ ա դ ա ւ կ ա ն (առհավատչյան)։

— Ցնս էլ համ իմ փեսին, — ասաց տիկին Մարկոսյանը և չիփ չափ համբուրվեցավ Պետրոսի հետ։

— Շնորհավոր, շնորհավոր, — կրկնեցին ձայները։

— Շամպայն, շուտ. ես գինիքը դուս տարեք, — հրամայեց Կիրիլ Կարպիչը և ծառաները մի ակնթարթում անհետացրին սեղանի վրայից նորոգված շիշերի ճեացորդը (վոր մի քիչ հետո իրենց պիտի հարկավորվեր) և նրանց փոխարեն շարեցին Roederer-ի շամպայնը։

Շնորհավորանքներն ու բարեմաղթություններն ընդհանրացան, նույնիսկ հարևան սեղաններից բարեկամ մարդիկ մոտեցան և շնորհավորեցին հանդիսարասից տեղի ունեցած նշանադրությունը։

Ցեվ սակայն այս ամենը կատարվեց այնքան տարօրինակ կերպով, որ ոչ ոք համաձայնություն։ Ցեվ յերբ այս մասին մի հոռետես իր դիտողությունն արավ, Մարկ Իվանիչը հրամայեց, որ Գեորգոն ու Աղևլինան պատասխանեն նրան խնդույն։

Ցերիտասարդն ու աղիորդը հասկացան տրված հրամանի նշանակությունը և քաղցրաժպիտ մոտենալով իրար՝ ջերմագին համբուրվեցան։

Ուրախության բացականչությունները սկսվեցան նոր ուժով և շամպայնը նորոգեց յուր շրջանառությունը։

Մինչև այստեղ վոր հասանք, ել հույս ունիմ իմ ընթերցողները չեն պահանջիլ, վոր յես իմ պատմությունը շարունակեմ։ Վորովհետև լավ գիտեմ թե այսպիսի մի նշանադրության ինչ և հետևում. — հարկավ պսակադրություն, շքեղ հարսանիք և մեղբայրանի ճանապարհորդություն... իսկ այնուհետև գալիս և ամուսնական խաղաղ ու քաղցր կենակցությունը, մինչև ցնոր կարգադրություն...

— Իսկ Զիբուխլուն... Սևանը...

— Նրանք դարձյալ ինացին իրենց տեղն անշարժ, անփոփոխ, ինչպես հարատատ մասունք անփոփոխելի հավիտենականության...

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ
ՄԻԱՆԶՆՈՒՀԻ
1889

Ամեն ամեն առաք ձեզ, եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ։

Աւետ. Հովհ.

Ամենավաթիթ դաստիարակութիւնըն իսկ, որ անձնուրացութիւն և սովորեցնում, լավագույն է, քան այն դաստիարակութիւնը, որ անձնուրացութիւնից զատ ամեն բան սովորեցնում է։

Ջոն Ստերլին

Այժմ չես կարող եմ այդ կնոջ մասին խոսել, վորովհետև նա այլևս չկա... Տարիներ են անցել այն որից, վոր նա իր վերջին բարևը տվավ այս աշխարհին, թողնելով յուր հիշատակն անծանոթության մեջ։ Նրա գերեզմանը վաղուց ծածկվել և կանաչով և շուրջ անկված աւերնինները մեծացել, աւերացել են և իրենց քաղցր սոսափյունով որհնաբանում են մրմնջում նրա արդար հոգվո համար։

Մեր այս ինքնատաշաշ ժամանակում, յերբ անձնվիրությունը դարձել և անգյուտ, քան վորում մարդիկ նրա պաշտամունքը հատկացրել են անձնասիրությանն, այդ կինն յուր սեռի մեջ միակն եր ու առաջինը, վոր հասարակաց բարվույն նվիրվելու ծանրագույն խաչն առանձնաց, առանց սակայն աշխարհում ձայն ու պսակ հանելու։ Նրա պատմությունը մեծ չէ, բայց արժանի յե ուշադրության. դրան ծանոթանալու համար բավ և, վոր դուք թերթեք այս հիշատակարանը, վոր յես դնում եմ ձեր առաջ այն քաղցր մտածությամբ թե՝ յեթե ձեղանից վորևե մեկին վիճակված և ժառանգել այս միանձնուհվո հոգին, ապա իմ հիշատակարանը կարող և նրան սիրելի և մանավանդ կազդուրել, յեթե բարձած խաչի ծանրությունը հաղնեցնե այդ խաչակրին։

---

188 Մայիս 25, X քաղաք

Մայիսը վերջանում է։ Արևի ճառագայթները ջերմացնելու փոխարեն սկսել են այրել. քաղաքի ոդը դժնալուվ քանձրանում և ապականվում է։ Բժիշկը խորհուրդ է տալիս ինձ հեռանալ ամբոխից, վորովհետև նա յել դիտե, վոր դեռ կամենում եմ ապրել։

Մեր ամարանոցները, վոչ այլ ինչ են, յեթե վոչ մեր գավառի հովահար գյուղերը, կլած լեռների կանաչ լանջերին, կամ թառած բլուրների կատարների վրա, ուր ոդը զվարթաբար, ջուրը անապակ և կյանքը խաղաղ է միշտ։

Այդ գյուղերից մինը յես պիտի ինձ համար ընտրեմ ամարանոց։ Բարեկամներից վոմանք խորհուրդ են տալիս ինձ շատ չհեռանալ քաղաքից, վորպեսզի քիչ իրենք միջոց ունենան ինձ այցելելու և քիչ իմ որերը միօրինակ չանցնեն։ Բայց յես վորոշել եմ հեռանալ այնպիսի գյուղ, վոր քաղաքից կորված լինի շատ ու շատ լեռներով։ Ճանկանում եմ ապրել այնպիսի մի տեղ, ուր մարդկանց հետ միասին ապրում է նաև նահապետականությունը, ուր կյանքի պարզությանն հետ պահպանվում է նաև բարքի մաքրությունը, սրտի անկեղծությունը։ Յես հաղնել ձանձրացել եմ սովորական կյանքից, սովորական մարդկանցից և, մանավանդ քե, սովորական բարեկամությունից, վորն յուր մեջ ինձ համար չունի այլևս վոչինչ նոր ու ջերմացնող։ Այժմ արդեն պարում եմ նախկին մարդն ու նրա անխարդախ և, թեկուզ, կիսով չափ վայրենի ընկերակցությունը։

Գուցե այս ել նյարդային հիվանդության քմահաճույք է, ինչպես բժիշկն է նկատում, չգիտեմ, միայն ինձ թվում է թե՝ այդ տեսակ ընկերակցության մեջ իմ սիրտը հանգիստ և հոգիս խաղաղ պիտի լինի։ Այստեղ ել, ճիշտ է, վոչ վոք չէ վշտացնում ինձ, ամենքն աշխատում են իմ սիրտն ուրախացնել, ինձ հաճո լինել, բայց այդ նպատակի համար դործ դրած յեղանակն իսկ տհաճություն է պատճառում ինձ։ Զգիտեմ շրջապատիս մեջ և անկեղծությունը պակասում, քե իմ մեջ հավատը. այսքանը միայն կա, վոր քաղաքում ամեն ինչ ձանձրացնում է ինձ։ Յես կարծում եմ թե միայն ազատ բնությունն է, վոր անհաճո վոչինչ չունի յուր մեջ։ Այժմ կփորձեմ ապրել նրա գրկում։

Հունիս 1, Դ. գյուղ

Այսոր առավոտ ժամը 6-ին դուրս յեկանք քաղաքից ձիով։ Ինձ ընկերակցում է Գևոռ անունով մի գյուղացի յերիտասարդ, վոր, միևնույն ժամանակ, իմ առաջնորդն ու Դա մի բարի տղա յե,

առողջ կազմվածքով և հաճելի դիմագծերով։ Նա ճարպիկ է, թեթևաշարժ և, ըստ երևույթին, քաջասիրտ։ Բայց սիրում է շատախոսել, մանավանդ, երբ կարդը գալիս է յուր քաջագործությունները պատմելուն։ Ուրիշների քաջությանն մասին էլ չէ զլանում երկարել, բայց միայն ինքը մասնակից է եղել նրանց գործերին։ Ցերկու գնդքապետն էլ համբերությամբ լսում եմ, վերահաս առնում եմ, որ լավ ընկեր է և փորձված առաջնորդ։ Իսկ այդպիսի մարդկանց արժե երբեմն վճարել համբերության մի թեթև հարկ։

Արդեն մի քանի վարսախ հեռացել էինք քաղաքից, երբ չոր ու ցամաք խճուղուց ազատվեցանք։ Իրավ որ հաճելի չէ ձիով ճանապարհորդել այդ կոշտ ու փոշոտ ճանապարհների վրա։ Ինձ թվում է թե նույնիսկ ձիաներն ուրախանում են, երբ դուրս են գալիս կարծր ճանապարհից։ Կանաչով ու թուփերով եղերված արահետը նրանք անցնում են ավելի աշխույժով։

Այստեղից մեր առաջ տարածվում են ցորենի ընդարձակ արտերներ։ Ամարայինն հովը փչում և հանդարտ. բարձրահասակ հասկերը խոնարհում են նրա առաջ վոսկեփայլ ալուխները և կարծես մի զորեղ հրամանից ազդված՝ միմյանց հրելով վազում են առաջ։

— Տեսնում ես, արտը գալիս է հորանց, — ասում է ինձ Գևոռն ժողովրդի առեղծած այլաբանությամբ։

Արդարև, թվում է թե՝ արտը շարժվում է, գնում դեպի առաջ, և նրա այդ խաղաղ, մեղմաշարժ հոսանքը հանգստացնում է նյարդերս, ազդելով հոգուս հույզերից ազատ մի առույգ կենդանություն։ Ինչ հետո արդեն ճանապարհն անցնում է այդ արտերի մեջով։ Ազահ երկրագործն երկու կողմից հերկելով այնքան է նեղացրել անցուդարձի ուղին, վոր մենք շատ տեղ ստիպված ենք միմյանց յետևից գնալու, վորպեսզի միահավասար ձիավարելուց՝ արտերը չկոխոտենք, վոր ըստինքյան հանցանք և վատնդի յենթ ամեն ճանապարհորդ մի քանի հատ պակասցնան, դրանով արդեն գյուղացին կղրկվի մի քանի խուրձերից։

Հեռվից, լեռան կրծքին կպած յերևում է Ղ... գյուղը, ուր մենք այս գիշեր պիտի իջևանենք։ Բայց մինչև այնտեղ հասնելը դեռ բավական ճանապարհ կա։ Դաշտերի վերջանալով սպառվում են նաև արտերը և մենք այնուհետև բարձրանում ենք դեպի վեր։ Ճանապարհն այժմ անցնում է ընդարձակ մացառուտի միջով և վերահետև ձիերը դանդաղ են գնում, ուստի Գևոռն սկսել է մի պատմություն, վորի նյութը վերաբերում է հենց այդտեղ կատարված մի սպանության։ Ճանապարհորդության ժամանակ հաճելի չի լինում պատմություններ լսելը, մանավանդ երբ առիթ-

ված ես ձիերի կամքով առաջ գնալ։ Ճես էլ լսում եմ Գեռոյին բայց նրա պատմությունը հետաքրքրական չէ։ Նա սովորական դեպքերից մինն է։ — Ցերկու թուրք Ղշլաղ գյուղից մի ձի չեն գողանում, ղշլաղեցի չերկու հայ ընկնում են նրանց յետևից, թուրքերը փախչում են, հայերը հետևում են, թուրքերը հասնելով այս մացառուտին՝ թաքնվում են թփերում, հայերը հասնելով մինչև սպանում՝ մյուսին փախցնում են, իսկ ձին վերադարձնում։ Բոլոր պատմությունը այս եր, բայց Գեռոն պատմեց մի ամբողջ ժամ, այնպես վոր նրա պատմության հետ մացառուտն էլ վերջացավ և մենք սկսանք իջնել դեպի մի խորաձոր։

Արդեն կես որ եր, արևը կանդնած եր մեր գլխին։ Բավական ճանապարհ եյինք կորել, պետք եր մի փոքր հանգստանալ, մի փոքր ճաշել և մի փոքր էլ կեր ու հանդիստ տալ ձիերին։ Այդպես էլ արինք։

Գեռոն առաջնորդեց ինձ դեպի ձորամեջը, անցավ այդտեղ հոսող առվակի վրայից և նրա ուղղությամբ դեպի խորն առաջանալով՝ կանգ առավ մի բարձր և սավերաշատ կաղնու տակ։ Ցերը իջնանք ձիերից, այդ ժամանակ միայն նշմարեցի վճիտ ու հորդ աղբյուրը, վոր բղխում եր կաղնին պատող ժայռերի տակից և հեղասահ մրմունջով հոսում դեպի ձորամեջը։

— Ահ, ինչ հրաշալի տեղ բերիր ինձ, Գեռո, — բացականչեցի հիացած, այստեղ կարելի յե ամբողջ որերով Ճալ։

— Այստեղ կարելի յե միայն լվացվել, ճաշել և մի ժամ քնել, — նկատեց Գեռոն։

— Ուրիշ վոչինչ, — հարցրի յես։

— Մեկ էլ ինձ ու քեզ նման քաջերին թալանել, — պատասխանեց նա և սկսավ ծիծաղել։

Ցես էլ ծիծաղեցի, բայց վոչ Գեռոյի չափ սրտանց։ Նրա կատակի մեջ կար մի եշմարտություն, վոր չափավորեց իմ ծիծաղը։ Այդ տեղն, արդարև, բանաստեղծական գեղավայր եր, բայց զուրկ չեր նաև գլուխներ թռցնելու հարմարությունից։ Իսկ գլուխ թռցնողներ, մանավանդ ամրան ամիսներին, յերբ թափառական ցեղերը դաշտերից չվում են լեռները, վխտում եյին ամեն տեղ։ Իմ ուրախ տրամադրությունը փոխվեցավ, բայց վոչ նրա համար, վոր ավազակներից վախեցա, այլ վորովհետև սկսա մտածել թե այս յերկրի խաղաղակյաց և աշխատասեր ժողովուրդը յուր վեր մեղքերի համար և դատապարտվել ավազակ ու մարդասպան դրացիների հետ կենակցելու։

Այս մտածմունքներն, արդարև, կնճռեցին իմ ճակատը, բայց յես անձնատուր չեղա նրանց, վորովհետև հիշեցի բժշկիս խոսքը

քե՝ մի մտածիր այն ցավերի մասին, որոնց դարմանելը վեր է քո ուժից։ Ուստի մոռանալով ակնահաճ աղբյուրին, առատորեն լվացվեցա նրա ասոր ջրով և ապա պայուսակս բանալով, հանեցի պաշարի կապոցը և անդան պատրաստեցի։ Պետրն, որ ձիերը տարել էր արտաի կապելու, վերադարձավ և մենք նստանք ճաշի։

Վորպեսզի արամադրությունները նորեն զվարթանար, չես դուռ ավի բարերար դինուն և սխալ չարի։ Կես ժամից հետո մենք վոչ միայն ուրախ ծիծաղում, այլ և յերգում էինք։ Ամեն մտածմունք մոռացվել էր։ Ցնծ ինչը չի մոռացվում աշխարհում... վորքան շշվաս կլինեինք մենք, յեթե մոռանալու ունակություն չունենայինք։ Արդարև, կան ցավեր, վորոնց չպետք է մոռանալ. բայց վորքան շատ են և այն վշտերը, վորոնց յեթե չմոռանայինք, կյանքը մեզ համար կդառնար դժոխք։

Ճաշը վերջանալուց հետո չես քաշվեցա կաղնու առավել առատաշատ կողմը։ Պետրն այծենակաճը (յափնջի) փռեցի խոտերի վրա և պայուսակս բարձի փոխարեն դլխիս տակն առնելով՝ քաղցր քուն մտա։

Ի՞նչ արավ ինձանից հետո Պետրն, չդիտեմ, միայն յերբ ինձ զարթեցրեց, արդեն ժամի չորսն էր և արևը հակված դեպի արևմուտք։ Ցերեկույի զովը փչում էր ախորժ, իսկ ձորալանջին յերգում էին սարյակները՝ մի թուփից մյուսի վրա թռչկոտելով։

Ամեն բան պատրաստ էր։ Ցես կրկին մոռեցա հորդահոս աղբյուրին, նայեցի մի րոպե նրա վճիտ ալիժակին, ախորժանք լվացվեցա և ապա ձիերը նստելով, շարունակեցինք ճանապարհը, վոր ձորից սկսած բարձրանում էր դեպի վեր։

Անցնելով մի մեծ թավուտ, վոր տարածվում էր մինչև հանդիպակած սարահարթը, այստեղ նորեն մեր առաջ բացվում էին ցորենի և դարու արտեր, վորոնք սակայն մեծ մասամբ դեռ կանաչ էին՝ բարձր ու հովահար դիրք ունենալու պատճառով։ Դալարի անուշ բույրը զգվում էր այստեղ մեր հատատելիքը մի առանձին քնքշությամբ։ Ցնծ չնայելով վոր արևը տաքացնում էր դեռ, այստեղ էլ, յուրաքանչյուրիս, ցուրտը զգալի էր սարահարթում։

Ցերկու ժամաչափ ճանապարհորդելուց հետո, մենք պատահեցինք դյուղի հարուստ նախերին, վոր վերադառնում էր արտից։ Տավարածները ուրախ և անհոգ, կատակներ անելով ու յերգելով առաջ էին դնում, չշտապելով բնավ, վոր շուտ հասնեն տուն, վորովհետև ամեն տեղ նրանց նույն յերկինքը և նույն հանգստությունն էր սպասում։ Ցեթե ավազակների յերկյուղը չլիներ, յերբեք էլ չէին վերադառնալ դաշտից, վորովհետև դյուղում վոչինչ չէր ավելանում նրանց, ինչպես և դաշտում չէր պակասում վոչինչ։

Մի փոքր ժամանակ տավարածներին ընկերանալուց և նրանց անմեղ կատակներով զվարճանալուց հետո, առաջ վարեցինք մեր ձիերը և արևը մայր մտնելու մոտ, հասանք գյուղի աղբյուրին, որ գտնվում էր շենից ներքև, կաղամախիներով հովանավորված մի ձորակի մեջ։ Աղբյուրի առաջ դրված էր ահագին կոճղից փորած նավակ, որ անասուններին ըմպանակն էր։ Այդ իսկ ժամին, սափորները ձեռքերին, շրջապատած հին նավակը բազմաթիվ հարս ու աղջիկներ, որոնցից յուրաքանչյուրը սպասում էր յուր հերթին առանց ձանձրանալու։ Վորովհետև գեղջկուհիների ազատ տեսակցության տեղը միայն աղբյուրն է, ուր կարողանում են նրանք լսել վորևե նորություն, կամ հաղորդել այդպիսին ընկեր-հարևանի, այդ իսկ պատճառով, նրանցից ամեն մեկը սիրով ոգևորում էր հերթին սպասելու համար սահմանված րոպեներից։

Ցերը մենք մոտեցանք փորածո նավակին մեր ձիերը ջրելու, իսկույն հարսները մի կողմ քաշվեցան՝ յերեսները դեպի կաղամախիներն, իսկ թիկունքները դեպի մեզ դարձնելով, բայց աղջիկները չհեռացան, նրանք հետաքրքիր աչքերով դիտում էին, մանավանդ ինձ, վոր յերևի իբրև քաղաքացի, մի բանով արժանանում էի նրանց հետաքրքրության։

Ցերը ձիերը հագեցան, գետն առաջնորդեց ինձ դեպի տանուտեր Ակոբի տունը։ Բայց մինչև այդտեղ հասնելը բավական թվով շներ թափեցան մեզ վրա և սկսան իրենց անընդհատ հաջյունով հետևել մեզ։ Նրանցից սրտոտները գնում էին առաջից, աշխատելով իրենց ազմուկով ձիերի ընթացքը կասեցնել, իսկ թուլերը գալիս էին յետևից և ծուլաբար վոռնում։ Թվում էր, թե դյուղում տղամարդ չկա։ Տների սրահներում (էյվան) յերևում էին միայն կանայք, վորոնք կամ ճախարակն էին հավաքում, կամ հավերը տուն անում և կամ վառած թոնրի ու ճախի շուրջը պատում։ Իսկ բակերում և կտուրների վրա խաղում ու վազվզում էին բոկոտն ու կիսամերկ յերեխաներ։

Բոլորովին անսպաս տեղից դուրս յեկավ գյուղի դպիրը, վոր յուր հոնի յերկար մահակով հավաքված շներն այս ու այն կողմը ցրելով, ազատեց մեզ նրանց անախորժ յերաժշտությունից։

Ցավ ահա այժմ մենք տանուտեր Ակոբի տանն ենք։ Մեր հյուրընկալը մի բարի, անկեղծ և ուրախ մարդ է։ Թեյից հետո, վորը մեծ ախորժակով խմեցինք, նա պատրաստել տվավ մեզ համար հարուստ ընթրիք, վոր բաղկացած էր յուր տան մեջ գտնված բարիքներից։ Դրա հետ միասին նա հյուրասիրեց մեզ պատվական գինով, վորն յուր ասելով պահում էր պրիստավի համար։—

Քրայց հոդ չէ, դու յել պրիստավից պակաս մարդ չէսդ, — ասում էր նա պարոնությամբ և բաժակները լցնում։

Տանուտերը միայն մի մաքուր սենյակ ուներ, որ պահում էր քաղաքացի հյուրերի համար։ Այդտեղ, փայտյա մահճակալի վրա, նա պատրաստել տվավ մաքուր անկողին և հրավիրեց ինձ հանգստանալու։ Ցավ ինչ հաճելի հրավեր էր այդ, յերբեք այդպիսի հոգնեմայլությամբ չէյի մտել իմ քնարանը, ինչպես այս գիշեր հավատում էյի, որ աչքերս պիտի բանամ արշալուսի հետ, այնքան մարմինս հոգնած ու թուլացած էր։

Հունիս 2, Ն. գյուղ

Առավոտը արի մարդ է, արշալույսը դեռ չշառագունած՝ զարթեցրել է ինձ։ Կարծում էյի թե գյուղում յես ու Պետոն ենք միայն արթուն, բայց դուրս եմ գալիս տեսնում, որ ամեն տեղ էլ շարժուն սկսված են։ Տավարածն յուր նախիրը տանում է արտ, խոտհարը գերանդին ուսին՝ դուրս է գնում դաշտ. սայլորդը յեղները լծած՝ վարում է անտառ. հարս ու աղջիկներ կուժերը ուսին՝ գնում են ջրի, կամ դառնում աղբյուրից. հյուրընկալիս մայրը վաղուց նստած նվիանում, շիլա դոշակի վրա վղղացնում է ճախարակը, իսկ հարսը մեզ համար պաշար և պատրաստում։ Ինչ վերաբերում է տանուտեր Ակոբին, նա ծալապատիկ նստած սրահի թախտի վրա, ինքնայեռը կողքին, բաժակները մաքուր սրբած՝ սպասում է գյուղացուն հպարտացնող թեյով մեզ հյուրասիրելու։

Ցավ իմ կողմից, իհարկե, սպասել չտվի, ծալապատիկ նստած հյուրընկալիս մոտ և սկսա վայելել նրա սրտեռանդն հյուրասիրությունը։ Մենք կաթով թեյ խմեցինք, նոր կտրած մեղրով սեր ու կարագ կերանք և վերջը մի համեղ ձուածեղ սպասելով վեր կացանք։ Տանտիկինը պատրաստած ճանապարհի պաշարը հանձնեց Պետոյին, որ դրավ յուր պայուսակում։

Ցերբ ամեն ինչ վերջացավ, շնորհակալություն արինք տանուտեր Ակոբին և նրա ամուսնուն, մեզ ցույց տված քաղցր հյուրասիրության համար, և ճանապարհ ընկանք։

Մի քանի վարսախ հեռացել էյինք գյուղից, յերբ արեգակը մշուշով ծածկված լեռների յեռանից յուր հրափայլ դունդը հանեց և խառնիչ ճառագայթները սկսեց կանաչազարդ բլուրների և արտերով ծածկված դաշտերի վրա։ Ինչ հրաշալի յեր այդ ժամանակ Այուդյաց յերկրի բնությունը, նա կարծես նոր էր մարմին առնում արարչագործի ձեռքից։ Հրաշալի յեր, մանավանդ, այն վայրկյանին, յերբ ադամ մշուշը տեղի տալով արևի պայծառ շողերին, երևան էր հանում գեղեցիկ լեռները, բլուրները ու հովիտները,

վորոնք ասես խնդում, ծիծաղում էին։ Քաղցրաշունչ զեփյուռը, վոր հեռվից թռչելով քերում էր բուրաստիններն ու կանաչ մարմանդները, գալիս շփվում էր դեմքիս այնպես մեղմ ու անուշ, վոր նրան լիովին վայելելու համար ցանկանում էի ձիուս ընթացքը կասեցնել։

Ցերը դյուղի սահմաններն անցնելով սկսանք առաջին լեռնալանջը բարձրանալ, առաջնորդս հայտնեց, վոր այդտեղից սկսում են Ն. գյուղի դժվարացնաց ճանապարհները, վորոնք շարունակ անցնում են սարերի, ձորերի և գետերի վրայով։ Մենք ուրեմն մտնում էինք Սյունյաց յերկրի լեռնային թագավորությունը, վորի սահմանն սկսվում էր հանդիպակած լեռան բազուկներից։

Ճանապարհը, վորով բարձրանում էինք, կոշտ առապար էր, ուստի ձիերը մեծ նեղություն կրեցին, մինչև հասան սարի բալշոյ այդ տեղից ահա մեր առաջ բացվեցավ փառավոր աննկարագրելի մի ակնապարար տեսարան։ — Դա լեռների, բլուրների և սարահարթերի մի լայնածավալ տարածություն էր, վորի միջից մի ընդարձակ խորաձոր, տեղ-տեղ անտառապատ, ձգվում էր հյուսիսից դեպի հարավ՝ անսահման յերկարությամբ։ Նրա լայնադիր խորքերը դեռ բռնված էին ծուխի պես թանձր մշուշով, վորով և խորաձորը ջրապարփակ ծովածոցի նմանություն էր բերում։ Հետզհետե առաջանալով՝ մենք տեսնում էինք հեռվում արևով վողողված հովիտներ, մարգեր ու մարմանդներ, վորոնց վրա ճապաղում էին վոչխարի հոտերն ինչպես միջօրեյի սպիտակ ամպեր՝ լողացող կապուտակ յերկնակամարի վրա։ Դրանց հաջորդում էին բազմաթիվ թումբեր ու բլուրներ, վորոնցից մոտիկները կանաչով, իսկ հեռավորները՝ մշուշով ծածկված։ ապա շղթայաշար լեռներ, վորոնք կոնաձավեա բարձրություններով հաջորդում էին միմյանց մերթ ահարկու և պարեխավոր՝ մերթ անտառապատ և դեղատեսիլ դագաթներով։

Մեր ճանապարհն առժամանակ սարի բալոյին էր անցնում։ Ապա իջանք ձորի յեղերքը, ուր մի նեղ կածան գնալով հակվում էր դեպի անդունդը։ Ձիերը այդտեղով քայլում էին զգուշությամբ, վորովհետև ամենափոքր տատանումը կարող էր գլորել նրանց դեպի ահարկու գառիվայրը, վորի ստորոտը անտեսանելի էր վերևից։ Ինչ ժամանակից հետո նորեն սկսանք բարձրանալ, բայց այժմ արդեն չոր բլրակի կողերով, վորոնց վրա բարձրից հոսող հեղեղները պատռվածքներ բանալով աննշմարելի էին կացուցել ճանապարհի հետքերը։ Ձիերը շարունակ սահում էին այդ գառիվայրի վրա, վորովհետև հողը փխրուն լինելով փշրվում էր նրանց սմբակների տակ։

Բարեբախտաբար անախորժ ճանապարհը կարճ եր։ Բլրակը անցնելուց հետո, մենք մտնում էինք մի կանաչ թավուտ, որին ապա հաջորդում եր դեղեցիկ անտառ։ Այստեղ արահետը թեպետ անհարթ ու մանրվածապատ, սակայն հետզհետե հավանավորվում եր սաղարթախիտ ծառերով։ Արևի ճառագայթները չէին թափանցում և մենք շարունակ դնում էինք բնական ծառուղիների միջով։ Ոդը թեթև ու ախորժելի էր և տաղտկած նուրբ բուրմունքով։ Փոքրիկ դեղյուրը, որի շունչը չեր լսվում բաց ճանապարհի վրա, այստեղ, ծառերի մեջ մի ախորժալուր շշյուն եր հանում։ Ջնայելով որ այս ուղղությամբ մենք բավական ճանապարհ անցանք, այսուամենայնիվ, անտառը դեռ չեր վերջանում և ծառերն անընդհատ հավանավորում էին մեզ։ Այդպիսով մենք անցնում էինք մեծ ու փոքր ձորակներ, մանր ու խոշոր բլրակներ, քեռում էինք սարերի կողերը, թեքվում աջ, թեքվում ձախ և սակայն շարունակ անտառի միջով։ Անշուշտ արևը այրում եր դըրսում, մանդի թռչուններըը ձայն չէին հանում, բոլորը դարել, դադարել էին բունիկների մեջ։ Միայն անհանգիստ ճնճղուկներն էին, որոնք չրթչրթում էին արեգընդդեմ մացառներում, կամ մի քանի սարյակներ, որոնք մի ծառից մյուսի վրա թըռչկռտելով՝ լսեցնում էին մեղ իրենց փափուկ շվշվոցը։

Շատուռ հասանք մի տեղ, ուր ընդարձակ տարածության վրա ծառերի փոխարեն, շեղջակույտ դարսված էին հսկայաձև ժայռեր ու խոշոր ամբարտակներ։ Ինձ թվում եր, թե անտառն այդտեղ վերջացավ։ Բայց Գեռան բացատրեց, որ տարիներ առաջ այդ տեղը նույնպես ծածկված եր ծառերով, սակայն մի սաստիկ յերկրաշարժի ժամանակ լեռան կողերից իջած այդ փլվածքը ծածկել և անտառի ծառատարդ մասը և նրա հետ միասին անհետացրել մի հորդ աղբյուր, որ բղխում եր հենց նույն փլած տեղի վրա։ Ցնվ, իրոք, յերբ այդ քարակարկատն անցնելով՝ խոտաբլնիկը դեպի ստի աջակողմը, տեսանք որ իսկապես այստեղից և սկսվում իսկական անտառը, ուր սակայն ծառերը խիտ չէին այնպես, ինչպես մինչև այժմ։ Այստեղ մի ծառի բունը հետու յեր մյուսից հինգ կամ տասը քայլով, բայց և այդ ծառերը մի-մի բուրգեր էին։ Մի տեղ հինավուրց կաղնին յուր հսկա բունով և ահագին ճյուղերով գրավում եր դեռևի մի ընդարձակ շրջապատ, ճընշելով յուր հովանու տակ փոքրիկ ու նիհար ծառերը։ Մի ուրիշ տեղ հաճարաւկն յուր անվոտ բնով ձգվել, բարձրացել եր ինչպես արբատան տաճարի սյուները և պատկառելի կատարը մատնել հոդմերին։ Ներանցից հետու խրոխտաբար կանգնած եր հաստատմամբ հոյին, հաստաբուն ճյուղերով և մանր ու սուր տերևներով։ Սրան մրցա-

կից եր մեծափառ սոսին, բրգաձև բունով, և լայնատարած վոստերով։ Մի փոքր հեռու տատանում էին ուղղաբերձ կաղամախը, սպառերև նոճին և այլ բազմազան ծառեր, վորոնք տասնյակ հազարներով ծածկում էին սյունյաց այդ դժվարանցանց լեռները, ձորերը և լանջերը։

Այդ միջոցին, իսկապես, մենք գտնվում էինք ամենաբարձր լեռներից մեկի լանջին, վորտեղից ծառերի միջով դեպի վար նայելուց յերևում էին մեզ այն բլուրները ու ձորերը, վորոնց վրայով քիչ առաջ անցել էինք. զարմանում էի, վոր այժմ գրտնվում ենք այդպիսի բարձրության վրա, ուր հասել էինք դրեթե անդգալի կերպով։ Ոդը սակայն այստեղ խոնավ եր և ցուրտ, հողմի շունչը նույնպես ավելի զգալի, իսկ գետինը՝ արևի պակասության պատճառով կանաչազուրկ և թաց։ Անտառի լուռության մեջ, վոր զգալի յեր լինում հողմի վայրկենական դադարից հետո, տարբրինակ ձայներ էին հանում մեր ձիերի քայլվածքը, նամանավանդ ցեխոտ տեղերում, ուր թվում եր թե չարաճճի ոգիներ լճակի ափին կանչում, քարեր էին ճղիացնում նրա խաղաղ ջրի մեջ։

Կես որից քիչ անցած՝ հասանք մի հորդ աղբյուրի, վոր բըղխում եր մամոսապատ ժայռերի միջից և կարկաչելով թափվում դեպի ձորակը տանող զառիվայրը։ Նրա մոտ իջանք ձիերից, լվացվեցանք և նստելով մի կնձնեու հովանում, բացինք տանուտերի կնոջ մեզ համար պատրաստած պաշարը, վոր բաղկացած եր տապակած վառեկներից, յեփած ձուերից, պանրից և մի քանի հատ նոր թխած հացերից։ Ցավ վորովհետև այսոր յերեկվա ժամանակից ուշ էինք ճաշում, այդ պատճառով էլ ավելի քաղցած էինք։ Ցավ չնայելով, վոր գինին քիչ եր և նրա պակասը ստիպված էինք աղբյուրի սառը ջրով լրացնել, այսուամենայնիվ, ճաշն արինք մեծ աքորժակով։

Մի փոքր հանգստանալուց հետո, յերբ պատրաստվում էինք մեր ճանապարհը շարունակել, նկատեցինք վոր ամպերը հյուսիսը ծածկեցին և կամաց-կամաց առաջանալով տարածվում են արդեն մեր գլխի վրա։

— Անձրև պիտի սւտենք, — նկատեց առաջնորդս։

— Կարծում ես, վոր կանձրևե, — հարցրի յես։

— Փառք պիտի տանք յեթե միայն անձրևե. յես փոթորկից եմ վախենում, — պատասխանեց Գեռոն հոնքերը կիտելով։

Ցես չեյի հավատում նրա գուշակության, վորովհետև փոթորկի նշան դեռ չեյի տեսնում, այդ պատճառով էլ շատ չանհանգստացա։ Մենք հեծանք ձիերը և շարունակեցինք ճանապարհը։

Հաղիվ անցավ քառորդ ժամ և ահա հյուսիսը սկսավ փչել և քամու հետ միասին ցրվել ալ ու ձախ անձրևի խոշոր կաթիլներ։

— Այս նշան է, վոր փոթորիկը հեռու չէ, — ասաց Պետոն և սկսավ փութաթիվիլ յուր այծենակաճի մեջ, վոր դյուղացու միակ պահպանակն է ցրտի և անձրևի դեմ։

Ցեխ էլ իմ խժե վերարկուն հագա և գլխիս քաշեցի նույն խժե կտորից շինված վեղարը, վորոնք ջրից անթափանց լինելով, հարմար պահպանակներ են անձրևի ժամանակ։

— Պատահել ես յերբևիցե փոթորկի, — հարցրեց ինձ Պետոն։

— Ինչմե՜ւ չե՜. աշխարհում չեմ ապրում, — նկատեցի յես։

— Ծովագնի մեջ չեմ ասում, այլ անտառում, կամ լեռան վրա։

— Վա՛չ, — պատասխանեցի յես։

— Ըհ, լավ, հիմա կտեսնես և կծանոթանաս մի քիչ մեր քաշած սրերին։

Կարծես Ցեխովսը Պետոյի վերջին խոսքին եր սպասում. ողջ կամաց կամաց սկսավ մըրկիլ, անձրևը աստակացավ և մի կատաղի քամի շառաչեց հանկարծ անտառի մեջ այնպիսի սաստկությամբ, վոր հինավուրց ծառերը արմատից սկսան տատանվել։

Ցեխ ցնցվեցա ձիու վրա և հանկարծակի յեկածի նման սկսա յերերվել թամբի մեջ։

— Պինդ սեղմիր վոտքերդ ձիու կողերին, յեթե չե վրայից կըրող ես գլորվել, — ղուշացրեց ինձ Պետոն և ուղի մեջ ծածանող յուր այծենակաճը սկսավ ամփոփել և քղանցքները սեղմել ծնկների տակ։

— Անհոդ կաց, պինդ եմ նստած, — ասացի նրան կեղծ հանդգնությամբ, բայց ներքուստ դողում եյի, վասնզի բնության տարերքների այդպիսի հանկարծական խռովության դեռ չեյի պատահած։

Քամին շարունակում եր շառաչել նույն սաստկությամբ. ծառերի բարձր դագաթները ուժգին ընդհարվելով միմյանց, հանում եյին ահեղ սոսափյուն, վորի արձագանքը զարնանադայր հեղեղի նման մռնչում եր անտառի խորքերում։ Ցերկինքը նույնպես սկսավ փայլատակել և վորոտալ՝ սկզբում մեղմ և ապա այնպես սաստիկ, վոր կարծես յերկնակամարը պիտի փլչեր մեր գլխին։ Մենք շարունակ փութաթիվում եյինք մեր պահպանակների մեջ և կծկվում ձիերի վրա, վորովհետև քամին այնքան սաստիկ եր, վոր քիչ եր մնում վայր գլորեր մեզ ձիերի հետ միասին։ Իսկ անձրևը ասես թե, աշխարհը վողողելու համար եր սկսված, նա գնալով զորանում և հեղեղի յեր փոխվում, կարծես յերկնքի սահանքները պատռվել եյին։ Մի քանի րոպե չանցած անտառն վողողվեց

ամբողջապես, նրա զառիվայրերից սկսան հոսել գետեր և առուներ, ճանապարհի հետքը կորավ բոլորովին։

Ցես հետևում էի Գեռոյին քայլ առ քայլ և ամեն րոպե սպասում մի դժբախտության, վորովհետև շարունակ իջնում էինք ներքև, իսկ ձիերի ամբակները դեռևս չէին բռնում, նրանք շուռ-շուռ սահում և գրեթե մեծ մասը փորի վրա էին սուրում։ Իսկ անտառը, վոր արև ժամանակն արդեն սովերաշատ եր, փոթորկի պատճառով համարյա, մթնել եր, միայն թուխ ամպերի մեջ շուռ-շուռ փայլատակող կայծակն եր, վոր ընդհատ լույս եր սփռում նրա մեջ և ապա ահեղ վորոտմունքով ծմակի խորքերը դղրդեցնում։ Այս դրության մեջ շարունակեցինք ճանապարհը գրեթե մի ժամ։

Ապա քամին քիչ-քիչ դադարեց, փայլակն սկսավ շողալ մերթ ընդ մերթ և վորոտը լսվում եր յերկնքում ավելի խուլ։ Այդ նշան եր, վոր փոթորիկը անցել և հեռու կողմեր։ Բայց անձրևը տեղում եր նույն ուժով։ Նրա ձայնը, վոր այժմ չեր ընդհատվում վոչ քամու մռնչյունով և վոչ ամպերի գոռոցով լսվում եր անտառի մեջ ինչպես վարարած գետի խոխոջ, կամ բարձրից հոսող ջրվեժի շառաչ։ Շարունակելով ճանապարհը շուտով հասանք մի հեղեղատի, վորից պիտի անցնեյինք Ուղուն-Դարա կոչված կիրճը մտնելու համար։ Բայց այդտեղից արդեն հոսում եր գետի չափ ջուր, վորի մեջ մտնելն հանդգնություն եյի համարում, ուստի խորհուրդ տվի առաջնորդիս մի առժամանակ սպասել, մինչև վոր հեղեղը դադարեր և ապա թե անցնեյինք։

— Ցեթե քո խորհրդին հետևեմ այս գիշեր պիտի անտառում քնեմ, — նկատեց Գեռոն հեգնությամբ, — այս ջուրը գնալով պիտի մեծանա, ուստի վորքան շուտ անցնենք, այնքան մեր ոգուտն է։ Այս ասելով նա մտրակեց ձին և անյերկյուղ մտավ հեղեղատը։

Ցես ևս, կամ ավելի ճիշտն ասած՝ իմ աշխուժատ ձին հետևեց նրա որինակին և մենք հաջողությամբ դուրս յեկանք ճորակի հանդիպակացը։ Անցնելով այդ լանջի վերը և հետո մի ուրիշ բարձրավանդակ, այդտեղից ապա իջնում եյինք մի կանաչազարդ հովիտ, վոր Ուղուն-Դարայի բերանն եր համարվում։

Այստեղ արդեն անձրևը հետզհետե դադարեց և քամին սկսավ յերկնքի վրա կուտակված ամպերը ցրել։ Ցեղ տեղ յերևաց և պայծառ կապուտակը՝ արևելյան շքեղ փիրուզի գունով։ Արևի ճառագայթները ամպերի արանքից շեղակի թափանցելով վոսկեզոծեցին անձրևից լվացված լեռներն ու ապրերը, իսկ ներանց կոհակավոր բարձրությունների վրա հրաշալի ծիածանն յուր կամարը կապեց։

Մինչդեռ յես հիացած նայում էի Նրան և հիշում ատածո ուխտը Նոյի հետ՝ «Զաղջդն իմ յեղից յամպս և յեղիցի ինչանակ հաւիտենական ուխտին ընդ իս և ընդ ամենայն յերկիրս. Գեռոն պլխարիկը հանած խաչահանում էր և աղոթում՝

— Ինչ ես աղոթում, Գեռս,— հարցրի Նրան։

— Դոհանում եմ ատուածուց, որ փոթորկից ազատվեցանք։

— Ազատված՝ ինչ պիտի լինեյինք։

— Այն, ինչ որ ուրիշները։

— Այսինքն։

— Կայծակահար... ամեն տարի քանիսին և խփում այդ կրակը հենց այս տարածում։

Ցես նոր սկսա խորհել դլխավոր վտանգի մասին, որ էր փոթորկի ժամանակ ամպրոպները այդ հայրենիքում դոնվելը։ Բայց ավելի, յես աղոթել չկարողացա։ Ինձ պակասում էր Գեռոյի հավատքն ու ջերմեռանդությունը։ Ցեվ հենց այդ պատճառով սկսա մտածել թե՝ մեր դեպքումն և մարդ ավելի յերջանիկ. արդյոք այն, յերբ հաստատ գիտե թե՝ ինչուե յե անձրևից հետո ծիածան կապում. թե այն, յերբ հիշում և ատուածո ուխտը Նոյի հետ և հավատով աղոթում...

Ավելի առաջ դնալով մենք մոռանում էինք դրեթե նոր աշխարհ։ Ոչն այստեղ ավելի պայծառ, արևն ավելի փայլուն, իսկ աղոթները փչում էին անուշ։ Ցեթե հեռվից չերևային այն անտառապատ լեռները, վորոնցից մենք նոր էինք իջել և վորոնց վրա ամեր-ամեն, թանձր ծուխի պես դեռ նստած էր մառախուղը, մենք փոքր առաջ կրած մեր նեղությունը յերազ կկարծեյինք։ Սակայն այսպես և Սյունյաց դեղեցիկ յերկիրը։ Մի տեղ սիրում և անձրև տվմուկ ու փոթորիկ, մյուս տեղ պայծառ արև, ջինջ կապուտակ և քաղցր հովեր։

Արևը դնալով տաքանում և մեր թրջված շորերը ցամաքեցնում էր։

Ահա վերջապես և Ուղուն-Դարան (յերկայն ձոր)։ Նա ձգվում էր յերկու կողմից բարձրացող շղթայաշար լեռների միջով, մի քանի փարսախ յերկարությամբ, յերբեմն ուղղաձիգ և յերբեմն աջ ու ձախ խոտորելով։ Նրան ակոսում է մի փոքրիկ դետակ, վորը սակայն ահարկու և անանցանելի յե դառնում գարնան վերջերում, յերբ սարերի ձյուները հալչելով, աղբյուրանում են դեպի ցած։ Մեր անցնելու ժամանակ նուշնախս նա հոդ էր և հորեկ անձրևից պղտորած, իսկ նրա խոխոջը կրճի մի քանի տեղերում փոխվում էր խուլ վորոտման։

Ճանապարհն անցնում էր այդ գետակի յերկարությամբ, այլ և յերբեմն նրա յերկու կողմից բարձրացող սարերի դժվարադնաց լանջերով։ Տեղ տեղ այդ հանդիպակաց սարերն այնպես էին միմյանց մոտենում, վոր կարծես հսկայական պատվարներ էին իրար դեմ կանգնած և նրանց ահարկու ու միապաղաղ ժայռերը, վորոնք կախված էին ոդի մեջ, սարսափեցնում էին տեղին անծանոթ անցորդին։ Ուրիշ տեղ, ժայռերի փոխարեն, կախվում էին կրճի բարձրությունների վրա հինավուրց ծառեր, կորացած ու մամռապատ բուներով և նրանց մերկ ու բազմաճյուղ արմատները ժայռերի վրա ճապաղելով, գալիս հասնում էին մինչև ճանապարհի յեզերքը և կամ նրա միջից անցնելով՝ թաղվում գետակի մեջ։ Շատ տեղ էլ կրճի լանջերը ծածկված էին ահարկու և անմատչելի անտառներով, վորոնք ձգվում, սարածվում էին մինչև սարերի ամենաբարձր կատարները։ Այդ անտառների անծանոթ խորշերից խոխոջալով իջնում էին հարյուրավոր առուներ՝ յերբեմն սիզավետ մարգերի վրա գետահեղեղելով, իսկ հաճախ ժայռերի բարձրությունից մեծաշառաչ դեզի ձորերը գահավիժելով։

Շարունակելով մեր ճանապարհը բնությանն այդ շքեղ հանդիսարանի միջով, հետզհետե հանդիպում էինք նորանոր դեղեցկություններին։— Մի տեղ մեզ հյացնում էր հսկահասակ մի սոսի, վորի բունը յոթ մարդու ձրկաչափ էին ասում և վորն յուր խոռոչի մեջ տեղատարափի ժամանակ պատսպարում էր մի քանի զույգ ուղևորներ։ Այդ խոռոչը մի փոքրիկ խրճիթի չափ ընդարձակ էր և կամարակապ մատուռի նմանություն էր բերում։ Սակայն նրա վրա սավառնում էին դեռ հաստաբուն ճյուղեր — առատորեն պսակված սաղարթախիտ վոստերով, վորոնք, անշուշտ, մեծ հողմերի ժամանակ մաքառում էին նրանց հետ իննչպես բազուկները զորավոր հսկայի։— Մի ուրիշ տեղ, գետի ափին, ուղղաձիգ տնկված և միապաղաղ մի քարաժայռ, մի քանի կանգուն բարձրությամբ, իննչպես փոքրիկ մի աշտարակ։ Նա արձանագրություններ չուներ, նա վայրենի յեր, իննչպես այն լեռը, վորի կըրծքից պոկվել ու գլորվել է, բայց նա ավելի գիտե, քան մեր ազատությունները, նա այդ լեռնային աշխարհի յերջանիկ և դժբախտ օրերի հավիտենական վկան է։ Ցավ թե կարողանար խոսել վորքան հիշատակից արժանի դեպքեր կպատմեր մեզ, դեպքեր, վորոնց հիշատակն այսոր կորել, անհետացել է... կպատմեր թե՝ քանի-քանի բանակներ, վորոնց մասին չէ խոսել պատմությունը, մերթ խնդագին և մերթ հուսահատ յեկել, անցել են յուր մոտից հայրենի սահմաններին վրա կռվելու համար. քանիսը հաղթական վերադարձել, քանիսը սպառ-ըսպառ ընկճվել... թե վոր-

քան ժողովուրդ, Թշնամու յերեսից հալածական, Սյունյաց ամրությունները ապահովելու համար, իրար Թևակոխելով, անցել են յուր մոտից. Թե վորքան հալածանքների ու կոտորածների հանդիսատես և յեղել ինքը և վորքան վողբացել հայրենի յերկրի ավերմունքների համար... Կամ դուցե, պատմեր մխիթարական դեպքեր, վորոնք սովորեցնելին մեզ դեն ձգել մեղանից հուսահատությունը և շարունակ մեր անշարժությունը դատապարտող հոռետեսությունը և խրախուսվել լավագույն մարդկանց փառավոր օրինակներով... Մի յերրորդ տեղ պատահում է հրաշալի ջրվեժ, վոր ահագին ազմուկով Թափվում է լեռան բարձրությունից և ամբողջ ձորը վորոտումով լցնում։ Նրա շառաչման արձագանքը անլսելի յերաժշտության նման հնչում և մինչև անգամ հեռու լեռներում կանգնելով ջրվեժի առաջ և վայելելով անուշ գովը, վոր ուժգին հոսանքը սփռում է յերեսից, ընդ նմին ցողելով վրաց ջրի մղող փոշին, ցավում ես, վոր միայնակ ես, վոր զվարճարական դեղեցկությանց սիրահարները չեն ընկերանում քեզ, վորպեսզի քո հայրենիքի բնական դեղեցկություններով զարմանայիր նրանց առաջ... — Վերջապես մի չորրորդ տեղ դու ակամա կանգնում, նայում ես կրճի յերկու կողմից ոդի մեջ կախված միակառույց ամբարտակներին, վորոնք կենդանակերպերի նման գնալով մոտենում են միմյանց և այդպիսով հորինում մի բնական կամարջ՝ կրճի անդունդում վորոտացող գետակի վրա։ Զվարճությամբ լսում ես այն առասպելները, վոր գյուղացին համոզմունքով պատմում և այդ կամրջի մասին, աշխատելով հավատացնել քեզ, Թե այդ հրաշալիքը սատանաներն են շինել մեղավոր հոգիներին դրա վրայով դնալի դժոխքը առաջնորդելու համար։

Արևը մայր մտնելու մոտ դուրս յեկանք Ուզուն-Դարայից և սկսանք բարձրանալ դեպի Ն. գյուղի բարձրությունները, վորոնք հետզհետե մացառուտից ազատվելով ծածկվում էին նոր դեղեցիկ արտերով։ Ճանապարհը գնալով լայնանում և արահետ եր դառնում։ Մեզ պատահում էին գյուղացիներ, վոմանք լծած սայլերով, վոմանք բեռնաբարձ ձիերով ու ավանակներով, իսկ շատերը՝ միայնակ, մի ցուլ ձեռքերին կամ մի պարկ շալակած։ Այդ բոլորից արդեն յերևում եր, վոր մենք հեռու չենք այն գյուղից, վոր իմ ամառային կայանն եր լինելու։

Հունիս 3.

Մութը կոխել եր։ Լուսնի արծաթափայլ սկավառակը հուշիկ բարձրանում եր լեռների յետևից և ազոտ լուսով սար ու ձոր լուսավորում։ Շրջակա գառիվայրերը հետզհետե ծածկվում էին

արոտից վերադարձող նախիրներով ու հոտերով։ Կովերի բառաչը, մաքիների մայունը, տավարածի հաճ-հճ-ները և հովվական սրնդի մելամաղձիկ յերգը, վոր հնչում էր մթագնած ձորամիջում, խառնվելով միմյանց, մի հաճելի աննկարագրելի ուրախություն էին կազմում։ Ձորքան մոտենում էինք գյուղին, այնքան աղմուկն ու շշուկը ավելանում էր։ Ն. գյուղը հասնելով՝ մենք իջանք սեղական քահանայի տանը։

Հայոց գյուղերում յերկու տուն կա, ուր ճանապարհորդը վրտահություն և առանց հարց ու փորձի կարող է իջևանել։ Առաջինը՝ տանուտերի տունը, վոր ավելի պաշտոնական մարդկանց և հյուրընկալում, յերկրորդը՝ քահանայի, ուր ամեն բարի հայ սիրով և ընդունվում։ Թեպետ հասարակ գյուղացին էլ յուր հյուրասիրությամբ յետ չի մնում այդ յերկուսից, այսուամենայնիվ, ճանապարհորդը միշտ չի վստահանում մոտենալ նրան, դժուշանալով ավելորդ նեղություն պատճառելուց։

Ցերը ներս մտանք քահանայի տան բակը, մեզ իսկույն դիմավորեց մի բարձրահասակ և բարեկազմ յերիտասարդ, վոր ուրախ ժպիտով մեզ վողջունելուց հետո, մոտեցավ ինձ ոգնելու, վոր ձիուց իջնեմ։ Ցես ի հարկե նեղություն չտվի նրան և իսկույն իջնելով, սեղմեցի ձեռը, վոր նա կանխավ ուղղել էր ինձ առանց ոգնելու, վոր ուղեկիցս հայտնե նրան իմ ով լինելը։

Դա, ինչպես հետո իմացա, քահանայի ամուսնացած վորդին էր։

Ցերիտասարդի հրամանով մի ծառա սկսավ մեր ձիերը պատեցնել մինչև վոր նրանց քրտինքը ցամաքեր և ապա ախոռը տանել։ Իսկ մենք, հյուրընկալի առաջնորդությամբ մտանք սրահը, ուր յերիտասարդի ամուսինը մի ակնթարթում արդեն ընդարձակ քախտի վրա փռել էր մաքուր դորգ և վրան էլ ոթոց։

Քահանան տանը չէր։ Իմ հարցին թե՝ ձուր է նա, յերիտասարդը պատասխանեց թե՝ դեռ յեկեղեցուց չէ վերադարձել։

— Մեքե այստեղ այդպես ուշ են սկսում ժամերգությունը,— հարցրի յես։

— Միայն շաբաթ յերեկոները, վորպեսզի հանդից վերադարձողը կարողանա յեկեղեցի գնալ։

«Դեղեցիկ կարգ է», մտածեցի յես և հենց պատրաստվում էի հարցնել թե՝ արդյոք հին սովորություն է դա, թե Ցեր հայրն ինքն է սահմանել, մեկ էլ տեսա, վոր վերջինս բակը մտավ։

Դա բարձրահասակ, առողջակազմ, ալեխառն մորուքով և քաղցրադեմ մի քահանա յեր, վոր առաջին վայրկյանից իսկ ակնոցի ապավորություն արավ ինձ վրա։ Ներան տեսնելուն պես յես

վոտքի յկա և հառաջանալով, համաձայն դյուղի սովորութեյան, աչքը համբուրեց։

Տեր հայրը շատ սիրով ընդունեց ինձ և ձևս բռնած բերավ իմ տեղը նստացրեց։ Շուտով մենք ծանոթացանք միմյանց։ Ցես իմ ով, վիրտեղացի լինելը և ինչ նպատակով իրենց դյուղը գալս հայտնեցի. իսկ ինքը, մանրամասն տեղեկութեյուններով, ծանոթացրեց ինձ յուր անձին ու ընտանիքին։

Տեր Հովսեի հայրը, ինչպես ինքն ասաց, հիսուն և վեց տարեկան եր և քահանայի որդին։ Ձեռնադրված եր 1859 թվականին Դեվորգ յեպիսկոպոս Վահանեյանից։ Մարիամ տիրուհին 8 տարով իրենից փոքր եր և նուչպես քաղաքողջ մի կին, որ Տեր-հոր գալուց հետո միայն յեկավ և բարևեց ինձ։ Նրանք ունեյին յերկու որդի, որոնցից մեծը, Սարգիս անունով, մեզ ծանոթ յերիտասարդն եր և 28 տարեկան լինելով՝ արդեն ամուսնացած և մի տղայի յել տեր եր։ Հարսի անունը Հերիքնազ եր, որ Տեր-հոր հրամանով յեկավ ինձ բարևելու և, դյուղական սովորութեյան համաձայն, կամենում եր ձևս համբուրել, բայց յես թույլ չտվի և միայն բարեկամարար ձևը սեղմեցի։ Գեղեցիկ եր թե որ, չիմացա, որովհետև յերեսն ամբողջապես ծածկված եր չարշաֆով — թեպետ տեղական սովորութեյան համաձայն, իրրև յերեխա ունեցող կին, նա իրավունք ուներ արդեն յերեսը կիսով չափ բանալու։ Տեր-հայրը գովում եր, որ նա ժրաջանութեամբ և աշխատասեր կին եր։ Քահանայի կրտսեր որդին, Հակոբը 25 տարեկան եր։ Նրան նոր եյին նշանել, այդ պատճառով էլ այդ որը տանը չերևաց, որովհետև մեծ ձկա դյուղը՝ անելոջ տուն եր գնացել։

Տիրուհին ամենից առաջ շտապեց մեզ համար պատրաստել թեյ, որ վաստակած ճանապարհորդի համար ամենագյուրեկան ըմպելին է լինում։ Ցետացրեց նուչպես նոր կթած կաթ և դրա հետ միասին բերավ նոր թխած դաթա, որն յուր ասելով, նորահարսի համար այդ որը պատրաստած և դրված «պաշարից» եր։

Մենք վայելում եյինք տիրուհու պատրաստած բարիքը և շարունակ խոսում։ Տեր-հայրը խիստ հետաքրքրում եր ինձ յուր խոսակցութեյամբ և հայտնած կարծիքներով։ Դրանցից մի քանիսը լսելուց հետո, յես յեկա այն յեզրակացութեյան, որ նա զուտիկ քահանաներին թվին չե պատկանում։ Իրրև դյուղական քահանա, նա մինչև անգամ ավելի բան գիտեր, քան սպասելի յեր։ Ինձ շատ զարմացրեց մանավանդ այն, որ նուչնիսկ որվա խնդրի մասին, որ այդ ժամանակ կաթոդիկոսական ընտրութեյուններ եր, նա նորութեյուններ գիտեր և հայտնում եր բանավոր կարծիքներ։ Նա ծանոթ եր ոչ միայն Ներսես պատրիարգի, Յերիմյան

Հայբիկի և Մելքիսեդեք սրբազանի անուններին, այլև նրանց գործերին, անձնական արժանիքներին և կենսագրությանը։ Նա հարցնում էր ինձանից նաև բացատրություններ, նկատմամբ լրագրական այնպիսի ակնարկությունների, վորոնք յուր ուշադրությունից չէին վրիպել։ Իմ տարակուսանքն ի հարկե փարատվեց, յերբ իմացա, վոր Տեր-Հայրը ստանում է Թիֆլիսում հրատարակվող հայոց թերթերը։ Հասկանալի չէ, վոր լրագիրը շատ բան կսովրեցներ նրան։ Բայց և այնպես այդ մեկուսացած լեռների մեջ այսպիսի մի քահանա տեսնելն ինձ համար մի հաճելի անակնկալ էր։

— Ինչպես տեսնում եք, մենք բոլորովին կտրված ենք աշխարհից, — ասում էր Տեր-Հայրը. որհնվի լրագիր հնարողը, այս հեռու անկյունում, ուր տարիներով քաղաքացու յերես չենք տեսնում, մեր միակ մխիթարությունը լրագիրներն են։ Այնքան անձկությամբ ենք սպասում նրանց, վոր յերե վորոշյալ ժամանակից ուշանում են, իսկույն ձի յեմ նստում և նրանց յեռևից, կես սրվա ճանապարհ — մինչև վանքը գնում։ Քաղաքից կռնսխտորը վանահոր անվամբ և ղրկում թերթերը, իսկ հայր-սուրբը շատ անգամ ուշադիր չէ լինում ժամանակին հասցնելուն։

Իմ հարցին թե՝ այդ լրագիրներից միայն ինքը ասր հմայրն և ոգովում, թե ժողովրդին էլ մասն և հանում, նա պատասխանեց.

— Ինքս էլ շատ տարի չէ, ինչ սկսել եմ լրագիր կարդալ։ Որհնվի մեր կույսը, նա վազուց էր թերթ ստանում և հաճախ կարդում ինձ մոտ, աշխատելով սիրելի անել ինձ յուր կարդացածները։ Ճիվ իրավ, մի տարուց հետո, յես այնքան սիրեցի լրագիրը, վոր կարևոր համարեցի ինքս ստանալ և անձամբ կարդալ, վորպեսզի կույսին միշտ նեղությունն չպատճառեմ։ Փառք աստուծո, յես նյութապես ապահով եմ և հեշտությամբ էլ վճարում եմ լրագրի գինը։ Ցերբ լրագիր կարդալն ու հասկանալը ինձ համար հեշտացավ, մեր կույսը խորհուրդ տվավ ինձ հետաքրքրական և հեշտ հասկանալի կտորները կարդալ և հասկացնել նաև իմ ժողովրդին։ Ցես հետևեցի նրա խորհրդին և մի կիրակի, ճաշից հետո, յերբ պյուղի դպրավորները հավաքվել էին ինձ մոտ, կարդացի նրանց առաջ լրագրի մի քանի կտորներ և բացատրեցի։ Այդ նորությունն այնքան դյուր յեկավ նրանց, վոր այդ օրից սկսած, ամեն կիրակի, ճաշից հետո հավաքվում է մեր բակը բաղմաթիվ ժողովուրդ և սիրով լսում է իմ ընթերցումն ու բացատրությունները։

Տեր-հոր հաղորդածները ինձ համար հաճելի նորություններ էին։ Այդպիսի քահանայի հովվության հանձնված գյուղում, ան-

կարելի չեր, որ նաև դպրոց չլիներ։ Ուստի ցանկացա իմանալ՝ ունէին թէ ոչ։

— Ինչպես չեն և ինչ հրաշալի դպրոց,— բացականչեց տեր-հայրը հպարտութեամբ, յետեն տեսնենք կհամոզուիք։ Որովհետև մեր կուլտը, նա չի հիմնադրը, ինքն ալ կառավարում է։

Այս քանիերորդ անգամն եր, որ «կուլտ» անունը լսում էր Տեր-Հարից, ուստի հետաքրքրվեցա իմանալ թէ ո՞վ է այդ կուլտը, արդյոք վարժուհի չե, թէ որևէ անապատի հավատացող կինը։

— Այդ կուլտը քուլր-Աննան է, մենք չենք ճանաչում,— հարցրեց ինձ Տեր-հայրը։

— Վա՛յ, չեմ ճանաչում,— պատասխանեցի չեմ։

— Ամբողջ Սյունիքը ճանաչում է մեր կուլտին, ամենքին հայտնի չի նրա անունը, այդ ինչպես է, որ դուք չեք ճանաչում։

— Այդպես է, Տեր-հայր, չեմ ճանաչում. անունն անգամ չեմ լսել։

— Ճշմարիտ եք ասում,— հարցրեց քահանան զարմանալով։

— Ի հարկե, ճշմարիտ, ինչպես կարող եմ ասել,— նկատեցի չեմ։

Տեր-հայրը սկսավ մտածել, հետո ինքն իրեն մի քանի բառ շշնջաց և ապա դառնալով ինձ, շարունակեց.

— Իրավունք ունիք, վորովհետև մեր այս կտրած անկյունից ոչ է ձեզ համար լուր բերում։ Ասենք թէ շատ էլ բերին, ինչ նշանակություն ունին ձեզ համար դյուղի նորութիւնները։ Քուլր-Աննան և նրա գործերը մեր, դյուղացիներիս աչքում են մեծ բաներ յերևում, ապա թէ ոչ, դուք այնքան նշանավոր մարդիկ ու գործեր ունիք, վոր մեր հսկաները թղուկներ կերևան ձեզ։

— Ասենք այդտեղ սխալվում եք. մենք ոչ նշանավոր մարդիկ ունինք, ոչ նշանավոր գործեր։ Բայց թողնենք այդ հարցը։ Կարծեք եք կուլտ-Աննայի ով լինելն ինձ հայտնել։

— Ի՞նչպես չե,— ասացի վոր նա մեր դյուղական դպրոցի հիմնադիրն և և կառավարողը, այժմ ավելացնեմ, դասատուն էլ ինքն եւ Նա մի բարի, աշխույժ, առաքինի կին է, ուղիղ ասած և ինչ ասելի չի, վոր դժվում է մեր դյուղում։ Իմ ճանաչողությունից վեց ասելի հետո յեկավ այստեղ։ Այդ ժամանակ ոչ դիտեր թէ ինչ բան է դյուղական կանոնավոր դպրոցը։ Ցես եչի մի քանի տղաներ գլխիս հավաքել և լավ-վատ կարդացնում եչի։ Բայց յերբ կուլտ-Աննան յեկավ, նա յուր ծախքով և, ի հարկե, նաև մեր ոգնությամբ շինեց դպրոցական տուն, վոր անշուշտ կտեսնեք։

Նա հավաքեց յուր մոտ թե տղա թե աղջիկ յերեխաները և սկսավ կարդացնել։ Այժմ մեր գյուղում քիչ յերիտասարդ կա, վոր հայերեն դրել, կարդալ չիմանա։ Այս բոլեյին էլ դպրոցը մոտ հարյուր հիսուն աշակերտ և աշակերտուհի ունի՝ ժողովված թե մեր և թե շրջակա գյուղերից։ Դրանք բոլորն էլ կարդում են ձրիաբար։ Ցեղ դեռ պետք է դիտենալ թե կույսի դպրոցն վորքան դրամ դեռևս եր տվել մեր գավառին այսքան տարվա ընթացքում, ճըշմարիտն ասած այդ կույսը մեր բարերարուհին է, մենք բոլորս պաշտում ենք նրան։ Իմ ու տանուտերի խոսքից ավելի նրա խոսքն ունի արժեք գյուղացու համար. բոլորը նրան լսում են ինչպես իրենց իմաստուն մորը։ Ցեղ ի պատիվ նրա պետք է ասել, վոր մոր նման էլ խնամք է տանում գյուղացիների վրա. ազնում է կարոտյալին, այցելում է հիվանդին, պաշտպանում է այրիներին, անդոր վորբուկներին, չես վոր մեկն ասեմ։ Սկսած այն որից, վոր կույսը մեր գյուղումն է, դրեթե վոչ մի տան, կամ ընտանիքում խռովություն կամ դժտություն չե պատահել։ Հենց վոր լսում է թե մի տեղ անհամաձայնություն, վեճ կամ կռիվ կա, իսկույն դիմում է այնտեղ և խաղաղության հրեշտակի պես ամենքին հաշտեցնում, յերբեմն խրատելով, յերբեմն հանդիմանելով, բայց շատ անգամ էլ քաղցրությամբ համոզելով։ Իսկ ով համարձակվում է քույր-Աննային ընդդիմանալ կամ նրա խրատները արհամարհել, նրա հետ այլևս վոչ վոք չե խոսում, մինչև վոր վերջինս համոզվելով՝ թողություն չե խնդրում։ Մեր գյուղական գործերի մեջ նույնպես քույր-Աննան ազնում է մեղ յուր իմաստուն խորհուրդներով և առհասարակ այն գործը, վոր նրա ցույց տված ճանապարհովն ենք սկսել և շարունակել միշտ հաջողությամբ և պսակվել։ Բացի այս, դուք մեղ մոտ կտեսնեք գեղեցիկ կարգեր ու սովորություններ, վորոնք մյուս գյուղերում չկան, դրանք բոլորը նույնպես քույր-Աննային ենք պարտական։ Միայն բանիվ, այդ կույսը մեր բարերարը և խնամակալուհին է, վորին, կխնդրեմ [illegible]աստծուն, պարգևել յերկար կյանք և առողջություն։

Տեր-հոր պատմածները վերին աստիճանի գրգռեցին իմ հետաքրքրությունը։

— Բայց ձվ է վերջապես այդ կինը, վիր տեղացի չե, վիրի աղջիկն է, վիրտեղ է սովորել,— հարցրի չես շտապով։

— Նա միանձնուհի չե,— պատասխանեց քահանան միամտաբար։

— Բայց վիրտեղից, վիր քաղաքի կուսանոցից։

Տեր-հայրը ձեռց կանգնած՝ նա չեր կարողանում վերջ պատասխան տալ, ուստի մի փոքր մտածելուց հետո, ասաց.

— Ճշմարիտը խոստովանած չդիտեմ։

— Բայց մեր այսքան տարիների ընթացքում մենք չհետաքրքրվեցինք իմանալ թե վերեկից և նա լույս ընկել այս լեռների մեջ։

— Ինչ մեղքս ծածկեմ, չեմ հարցրել, այսքանը միայն գիտեմ, որ նա միանձնուհի էր և գալով մեր գյուղը հավանել և նրան և վճռել ապրել այստեղ և ոգտավետ լինել մեզ։

— Իսկ նա հասակավո՞ր է, թե չերիտասարդ։

— Նրա տարիքը քառասունից ավելի չէ։

— Ուրեմն այդքան միայն գիտեք նրա մասին։

— Այո, միայն այսքան։

Այժմ կես տեսա, որ Տեր-Հովսեփս ինքնիրեն բուսած մի ծառ չէ, այլ, անշուշտ, այդ խորհրդավոր կնոջ ստեղծագործածն է։ Տեր-հոր այն խոստովանությունը թե այսքան տարիների ընթացքում չէ հետաքրքրվել այդ կնոջ ով լինելն իմանալու, ինձ անկեղծ երեում, ուսաի նրա վարկը վորոշ չափով նվազեցավ իմ աչքում, վորովհետև, այդպիսի մի անտարբերությունը հանցանքի չափ ծանր էր երեում իմ աչքում։ Բայց հետո մտածեցի թե գուցե այդ կինը ինքն և փախուստ տվել քահանայի հետաքրքրությունից, ուսիի չտալով նրան այդպիսի հարցերի դիմելու։ Թևպետ այն էլ դիտեի, վոր հեշտ չեր գյուղում այսքան տարի ապրել և աղատ մնալ գյուղացիների հարցասիրությունից։ Սակայն բոլոր այս մտածություններն ուղղակի լարելուց զատ ուրիշ մի ներգործություն չեին բերում։ Մնում եր, վոր ինքս ծանոթանայի այդ կնոջը և նրա մեղ և թե՞չ անձնավորություն լինելը ստուգելի անձամբ։

— Ցերբ կարող եք ծանոթացնել ինձ ձեր միանձնուհուն, — հարցրի Տեր-հորը։

— Ցերբ կամենաք,—ասաց նա,—վաղը կյուրակի է, ես պատարագ ունիմ. կգաք եկեղեցի, նոր կլինիք պատարագին և ցերբ ժամերգությունը կավարտի, ես ձեզ կծանոթացնեմ նրան։

— Շատ լավ, ասացի ես և վորովհետև ընթրիքն արդեն պատրաստ եր, ուսաի շուտով սեղան նստանք։

Տեր-հայրը բոլոր ջանքը գործ եր դնում ամենալավ կերպով ինձ հյուրասիրելու։ Ցեվ թևպետ յուր գինին արժանիքով սուղ եր տանուտեր Ալորի գինուց, այսուամենայնիվ մենք նրանով էլ մի քանի կենաց բաժակներ պատարկեցինք։

Տեր-հոր հյուրասիրությունում ինձ համար քննելու տեղ պատրաստեցին, ուր և տառնձնացա խաղաղությամբ հրնշատակին հանձնվելու համար։

Հունիսի 4.

Զնայելով որ ամբողջ նախընթաց օրը ճանապարհորդել էի, այսուամենայնիվ, յերեկ շատ վաղ զարթեցայ։ Գյուղը, կարծես, ինքն է զարթեցնում քեզ։ Մարդ այստեղ ամաչում է, յեթե չաննք ասպասում, առավոտյան դով ժամերը քնին նվիրելու։ Ցերը դուրս յեկա բակն, արշալույսը դեռ նոր էր շառագունում, բայց Տեր-հայրն արդեն գնում էր յեկեղեցի։

— Մեթե այսքան վաղ պիտի սկսեք ժամերգությունը, — հարցրի յես։

— Վաչ, դեռ սաղմոս պիտի քաղեմ, դուք կարող եք կես ժամով ուշ գալ, — պատասխանեց նա։

Ցես վորովհետև յեկեղեցում յերկար կանգնել չեյի կարողանում, ուստի վորոշեցի ոդուստ քաղել ժամանակից և բարձրանալով գյուղի վերնակողմը՝ նրա ընդհանուր դիրքը և շրջապատը տեսնել, վորպեսզի հավատիանամ թե՝ վիրքան հարմար ամրապնոց եմ ընտրել։

Բակի մի անկյունում Տիրուհին և յուր հարսը կթում էին կովերը, վորպեսզի նախիրը արոտ ուղարկեն։ Սարդիսը մոտ կանգնած ոչնում էր նրանց՝ առաջ բերելով կովերը։ Վարպետի նոթի տանից դուրս չդայի, մոտեցա նրանց և մի բաժակ կաթ խնդրեցի։ Հերիքնազն իսկույն վայր դրեց կովկիթը և վազելով տուն բերավ մի մեծ բաժակ և յուր ձեռքով կթելով կաթը նրա մեջ, ավավ ամուսնուն և վերջինս՝ ինձ։ Ցես աճորժանոք դատարկեցի անուշահամ ըմպելիքը և խնդրեցի յերկրորդը, վորը նույն հոգածությամբ դարձյալ լցվեցավ և նույն ճանապարհով հանձնվեցավ ինձ։ Իմ նախաճաշը վերջացել էր, վորի համար շնորհակալություն անելով հարցրի Սարդիսից գյուղի վերին կողմերն անցնելու ճանապարհը և հեռացա։

Ցես գնում եյի մանվածապատ, նեղ և զառիվեր փողոցներով, վորոնցից շատերը կազմում եյին պարտեզների շրջապատ ցանկերը։ Ուրախ եյի, վոր վոչ մի տեղ շներ չպատահեցին՝ իրենց աղմուկով ինձ ուղեկցելու համար։ Ցերը գյուղի վերին ծայրը հասա, արևի առաջին ճառագայթներն ընկան մոտիկ բլրի վրա, վոր ծածկված էր դեղեցիկ անտառակով։ Հասնելով այդ բլրին, սկսա նրա վերին կողմից դիտել գյուղը և նրա շրջապատը։

Ն. գյուղը, վոր զուտ հայաբնակ է, գտնվում էր մի դեղեցկադիր և արեգընդդեմ լեռնալանջի վրա, վորի շարունակությունը դեպի լեռը՝ ծածկված էր ամբողջապես անտառով։ Գյուղի դիրքը մասամբ սարահարթ և մասամբ զառիվայր էր։ Տները, վորոնց

թիվը յերկուհարյուրից ավելի պիտի լիներ, շինված էին խառն ի խուռն և, մեծ մասամբ, յեռեի կողմից զետնին հավասար։ Գետնի մակերևույթից բարձր մնաը, առանձնապես, գանվում էին գյուղի այն մասում, վորի դիրքը սարահարթ էր։ Գյուղն ըստ ամենայնի, նման էր մյուս բոլոր հայաբնակ գյուղերին, միայն այն առավելությամբ, վոր այստեղ ամեն տուն ուներ յուր մեծ կամ փոքր պարտեզը և սարերից իջնող ջրերն այնքան էին առատ, վոր դրեթե ամեն տուն առու ուներ յուր բակում։ Գյուղի վերջին ծայրում, մի կանաչազարդ բարձրավանդակի վրա, կառուցած էր յեկեղեցին, վոր հեռվից բավական կոկիկ և գեղեցիկ էր յերևում։ Նրա մոտ կար միահարկ, բայց ընդարձակ և սիրուն ծառերով շրջապատված մի ուրիշ շինություն, վոր անշուշտ ուսումնարանը պիտի լիներ։ Գյուղի ընդհանուր պատկերն առաջին անգամ ինձ վրա մեծ տպավորություն արավ։ Սակայն ավելի գեղեցիկ էին նրա շրջակա տեսարանները։ Գյուղի առաջնը ընկած էր ընդարձակ և անտառախիտ խորաձոր, վորի միջից խոխոջալով անցնում էր մի գետակ։ Նրանից այն կողմը, ինչպես և գյուղի յեռեից, բարձրանում էին վիթխարի լեռներ, վրատեղ զագաթներով, վորոնցից մի քանիսի վրա դեռ նշմարվում էին հին դարերում տղրող Սյունեցիների դղրությյան ու մեծագործության հետքերը — կիսավեր բերդերի ճեպորշներ։ Գյուղի աջ կողմից սկսվում էր մի հովտաձև սարահարթ, վոր գնալով լայնանում ու պարզանում էր և վորի վրա տարածվում էին գյուղացիների արտերը։

Այս բոլորը տեսնելուց և զննելուց հետո՝ յես կամաց-կամաց իջա գյուղը, բռնելով այնպիսի ուղղություն, վոր ինձ պիտի տաներ յեկեղեցին։

Զարմանալի շարժում էր տիրում այդ ժամանակ գյուղի փողոցներում։ Կարծես բնակիչները մի հրաշք տեսնելու կամ հրդեհ հանգցնելու համար էին շտապում։ Կին, աղամարդ, ծեր և յերիտասարդ աճապարում էին դեպի յեկեղեցին, նրանք գնում էին աղոթելու։

Այս տեսարանը վորքան ուրախացնում, նույնքան և զարմացնում էր ինձ և այդ զարմանքը կրկնապատկվեց, յերբ ուրիշների հետ յես ևս յեկեղեցին հասնելով՝ տեսա այդտեղ հավաքված ժողովրդի բազմությունը։ Ճիշ հայոց շատ գյուղերում էլի յեղել, բայց վոչ մի տեղ ժողովրդի մեջ այսքան ջերմեռանդություն չեմ նկատել։ Սա ինձ հիշեցնում էր Կովկասի գերմանական մի գաղթավայրը, ուր հաճախ գանվել և միշտ հիացել եմ գերման ժողովրդի յեկեղեցասիրության վրա և տխրել, վոր մեր գյուղերում,

ընդհակառակը, ժողովուրդն որ ըստ օրեն առնում է յեկեղեցուց, առանց սակայն մի ուրիշ հոգեշահ գործի մոռեռնալու։

Գրեթե զորով ներս մտա յեկեղեցին և զորով ել առաջ անցա, վորովհետև խռնված բազմութիւնն յուր միջից անցնելու ճանապարհ չեր թողել։

Եկեղեցում, ամեներից առաջ, ուշադրութիւնս գրավողը բազմախումբ գալիրների յերգեցողութիւնն եր, վորին յես յերբեք չեյի սպասում։ Ավելի հառաջանալով ավելի ևս զարմացա, տեսնելով վոր մոտ 20 հոգուց բաղկացած խմբի մեջ, տղաների հետ միասին կանգնած եյին և հասակակից աղջիկներ, վորոնց բոլորի դպրապետութիւն եր անում բարձրահասակ, դլուխը սև շղարշով փաթաթած և մթագույն շալիկ հագած մի կույս, հար և նման մեր կուսանոցի միանձնուհիներին։

Իսկույն հիշեցի Տեր-Հովսեփի կույս Աննան և չերկմտեցի, վոր իմ առաջ կանգնած դպրապետուհին նա ինքն եւ Բայց նախ քան կույսի անձով հետաքրքրվելը, իմ լսելիքը գրավեց Սրբասացութեան խորհրդավոր յերգը, վոր նա հրաշալի ձայնով սկսավ յերգել։ Բայց ինչ յերգ, ինչ ձայն եր այն։ Վոչ մի յեկեղեցում նմանը չեյի լսած։ Մի քանի րոպե ինձ այնպես թվաց, թե հնչող ձայնը վոչ թե մարդկային կրծքից, այլ մի կաթարդական սրնդից կամ յերգեհոնի միջից է բղխում, այնքան հնչեղ և, միևնույն ժամանակ, դողդրիկ ու ախորժալուր եր նա։ Յերգչուհու ձայնը, նայելով յերգի աստիճաններին, գնալով զորանում ու զվարթանում եր, յեկեղեցու կամարները կարծես ձայնակցում եյին նրան դյութական հնչյուններով։ Ես հիացա, հափշտակվեցա և դյուղական յեկեղեցում դտնվելս մոռացա։ Ես ամբողջապես լսելիք եյի դարձել, նույնն եր և ժողովուրդը. վոչ ձայն, վոչ շշուկ, բոլորն ել հափշտակված լսում եյին հրաշալի մեղեդին և ջերմեռանդութեամբ աղոթում։ Ես վրքան սեր, վրքան հավատ այդ ծնկաչոք և ձեռնամբարձ պաղատողների մեջ... չդիտեմ ինչպես, յես ել արդեն չոքել եյի խոնավ գետնի վրա (վորն ուրիշ տեղ չեյի անում) և դյուղացիների հետ միասին աղոթում եյի... Ես իմ յերիտասարդական կյանքի մեջ դա առաջին ջերմեռանդ աղոթքն եր...

Շուտով խումբն ել սկսավ դաշնակցել դպրապետուհուն։ Յերգեցողութիւնը հորդոր, բայց ներդաշնակ կերպարանք առավ։ Այս բոլորը լսում եյի հրճվախառն հիացմունքով և զդում, վոր այդ դյուղական յեկեղեցում կատարյալ քրիստոնյա յեմ դարձել՝ նման այն բարեպաշտ քրիստոնյաներին, վորոնք պատում եյին այդ սքանչագան կրոնի հալածանքների դարերում, յերբ իշխանն ու ստրուկը, ասկետն ու աղախինը, միևնույն մթին գետնափորում, միասին

պաշտում, և աղոթում նրա քրիստոնեության հիմնադրին և մեկնում սեղանի վրա՝ հաղորդվում Նրա կենարար մարմնին և արյանը։

Քաղաքի եկեղեցիներում, խոստովանում եմ, խորշում էի, փոքր ի շատե դծուծ հագնված մի մարդու մոտ կանգնելուց, վախենալով շորերս կեղտոտել... բայց այստեղ, ճշ, ինչպիսի սիրով վողջունեցի յես մի աղքատ, կորաքամակ և կոշտ հագուստներով ծերուկ դյուղացու, յերբ սարկավագի «Վողջույն ասւք միմյանց ի համբույր սրբութեյան...» խոսքերը լսեցի։ Յես պատրաստ էի իմ վողջունի հետ միասին նույնիսկ համբուրել ծերուկին... — Ի՞նչ հեղափոխություն եր այս, վոր կատարվում եր իմ մեջ. չգիտեյի։ Ո՞ւր էին այն թերահավատ մտածմունքները, վորոնք ճնշում էին ուղղակ մեր եկեղեցիներում. չկային, անհետացել էին։ Արդյոք հրաշալի յերդչուհու և նրա խմբի ներդաշնակ ու վողևորող յերդեցողությունը չեր իմ մեջ կատարվող այս հեղափոխության պատճառը։

Ամենամեծ հաճույքյամբ լսեցի պատարագի ընացորդ յերգեցողությունը, շարունակ հիանալով դալրաղեստուհու դյութական ձայնի վրա։ Սակայն քանիցս փորձ փորձեցի տեսնել նաև նրա դեմքը, բայց այդ չհաջողեց ինձ, վորովհետև նա յուր դեմքը վոչ մի կողմ չեր դարձնում, իսկ իմ կանգնած տեղից առաջ գնալ չէյի կարող։ Բոլոր ժողովուրդը սպասեց մինչև վերջին «Որհնյալ յեղերութ»-ը, յես ևս նրանց հետ, առանց մի վայրկյան ձանձրանալու։

Դուրս գալով յեկեղեցուց, սկսա նրա շուրջը պտտել և ապա ուսուցիչարանի կողմն անցա, բայց աչքս միշտ յեկեղեցու դռանը, վորպեսզի կուսի յելնելը տեսնեյի։

Եկեղեցին թեպետ հնաշեն ու պարզ, բայց բավական ընդարձակ եր, տղիտակ ներկած թե դրսից և թե ներսից։ Եկեղեցու ներքին զարդարանքն այնքան եր, վորքան մի դյուղական յեկեղեցի կարող եր ունենալ՝ առանց ժողովրդին ավելորդ ծախքի յենթարկելու։ Նա ուներ նաև մի փոքրիկ դանդակատուն յերկու հին դանդակներով և մի յերկաթե սևացած խաչով։ Իսկ ուսուցիչարանը՝ յերեք ընդարձակ և լուսավոր և յերկու յել փոքրիկ սենյակներից բաղկացած մի տուն եր, նույնպես ընդարձակ և լայնադիր պատշգամով։ Ուսուցիչարանի չորս կողմը տնկված եյին մի քանի կարգ դեղեցիկ ծառեր, վորոնք ամբողջ շենքի շուրջը կազմում եյին կանոնավոր ծառուղիներ։ Ընդհանրապես, թե յեկեղեցու և թե դպրոցի շուրջը գտնվող ծառերից ազատ տեղերը ծածկված եյին կանաչ ածուներով և ծաղիկների թփերով, վորոնց բոլորի վրա, յերե-

վում եր, վոր հակում է մի հոդատար ձեռք։ Այս բոլորը, սակայն, մի հայ գյուղի վերաբերմամբ այնքան անբնական, կամ, գոնե, անսպաս բաներ եյին, վոր յես ինձ զգում եյի մի ինչ վոր անհատականալի դրության մեջ և անհանգիստ սպասում այս դրությունը առեղծող հանելուկների լուծման։

Դեռ գրասնում եյի յեկեղեցու բակում, յերբ Տեր-Հայրն ու կույս-Աննան յեկեղեցուց դուրս գալով՝ ուղղվեցան դեպի ինձ։ Յես ևս իմ կողմից առաջացա դեպի նրանց։

Բայց, ասվածի իմ, այս կինը ինձ հանդիպող հանելուկների մեծագույնն եր։ Այս յես ընկած հայ գյուղում, այս վայրենի լեռներում գիմում եր դեպի ինձ Համլետաթի Հքույրը Թերեզանն։ Նույն գեղեցիկ հասակը, նույն սիրագեմ դնացքը, նույն ազնվական սիպաբը, վոր յես Թատրոնի բեմի վրա, կուսանոցի պատերում քույր-Թերեզայի մեջ եյի տեսել, այդ բոլորը ճշտությամբ դանում եյի այստեղ՝ ինձ մոտեցող կնոջ մեջ։ Կարդ եյի մի քանի զարմանքս չափավորել և ապուշի կերպարանք չառնել։

Իմ բախտից ժամավոր կանանցից մինը, հենց ճանապարհի կիսում, կանգնեցրեց յերկուսին և ինչ վոր բան եր հարցնում, կամ հազորդում նրանց։ Յես ժամանակ ունեցա զգաստանալու և, մինչև անգամ, խոսելու նյութ ընտրելու։

Յերբ իրար մոտեցանք, վողջունեցի Տեր-Հորը և կույս-Աննային ասելով.

— Այսոր յես այստեղ յերկու խիստ ուրախացնող անակնկալների հանդիպեցա. առաջին՝ ձեր յեկեղեցու հրաշալի յերգեցողությունը, վորի նմանը, խոստովանում եմ, լսած չեյի վոչ մի տեղ և յերկրորդ՝ այս գեղեցիկ դպրոցական շենքին, վորի գոյությունն, այսպիսի մի հեռավոր գյուղում, չեյի կարող յերևակայել։

— Այդ բոլորը, ահա, մենք այս քրոջն ենք պարտական. նրան պետք է շնորհակալ լինել։ Այս ասելով՝ Տեր-Հայրը ծանոթացրեց ինձ կույս-Աննայինին, հայտնելով իմ մասին, վոր ուրախ լինելս և ինչ նպատակով իրենց գյուղն այցելելս։

— Շատ ուրախ եմ, վոր յերկար պիտի վայելենք ձեր ընկերակցությունը, — ասաց միանձնուհին, — վաղուց և քաղաքացի հյուր չենք ունեցել։ Իսկ այս գյուղն, — ավելացրեց նա, — առողջարար է, կարող եք հուսալ, վոր կատարյալ առողջություն կդտնեք։

— Ուրախ կլինիմ, յեթե ձեր զուշակությունը կատարվի, — ասացի, — բայց յեթե չկատարվի խոկ, զարձյալ յես գոհ եմ, վոր այս գյուղն այցելելով, ձեզ ու ձեր գեղեցիկ գործերին ծանոթացա, այս արդեն մեծ բախտ եմ համարում ինձ համար։

— Ձեր խոսքերը պետք է ընդունեմ իբրև խրախուսանք, ապա թե վոչ չես այդքան էլ դովության արժանի գործեր չունիմ,— նկատեց կուլյոը ժպտալով, իմ կողմից կցանկանամ, վոր մեր լեռները ձեղ պարզևեն կատարյալ առողջություն, վորովհետև առանց դրան՝ մարդն անկարող է, նույն իսկ բարին ու գեղեցիկը տեսնել կամ սիրել։

— Անշուշտ, անշուշտ, դուք իննամից ավելի կառողջանաք, մեր դյուղը Քշնամի չի ամեն տեսակ տկարության,— հարեց Տեր-հայրը։

Այսպես խոսելով մենք առաջ անցանք։ Այժմ մեզ ուղեկից միանձնուհուն դիտելու։

Ձնահյուսով ասրիքին, վոր, Տեր-հոր ասելով, քառասունից ավելի չեր, այդ կինը տակավին մի կատարյալ գեղեցկուհի չեր։ Նա ուներ բարձր ու բարեկազմ հասակ, վոր մի առանձին շուք ու վեհություն եր տալիս նրա տխուր հանդերձին, գեղեցիկ ու սեդ դլուխ, վոր պսպղած եր միանձնուհու սևաթույր շղարշով, դեղար ու աղնվական դեմք, ուր կարծես վարդադույնը թալկանում եր սպիտակ մարմարիոնի վրա և մեծ մեծ, սևորակ աչեր, վորոնց մեջ վառվում եր մի դյութող կրակ՝ անբաժան՝ սակայն սրբազան կայծերից։ Ցերկայնատակ արտևանունքներ յեղերում էին նրա այդ լուսե լիճերը և գեղակամար հոնքեր՝ հոլանավորում նրանց։ Նուրբ, վոդորկ քիթը և փոքրիկ սիրուն բերանը՝ հաղիվ դունավոր շրթունքներով՝ լրացնում էին նրա կլասիկական գեղեցկությունը։ Միայն մի անույշ տխրություն մեղմում եր նրա աչքերի կրակը և նվաղեցնում դեմքի դյութական աշխույժը։ Սակայն դրանց փոխարեն նրա թախանձող հայացքի մեջ վայելում եր խելք և առաքինություն, իսկ դեմքի վրա աղնվական վեհություն։

Առաջին վայրկենից իսկ այդ կինը մի հզոր պատկառանք ազդեց ինձ վրա և յես, չդիտեմ ինչու, սկսա ճնշվիլ նրա առաջ և չդիտեյի թե ուրիշ ինչ նյութի վրա խոսեմ։ Նա ինքն էլ կարծես զդալով յուր՝ ինձ վրա արած ազդեցությունը, սկսավ շարունակել խոսակցությունը, հարցնելով ինձանից տեղեկություններ մեր քաղաքի, նրա ուսումնարանների և աղջկային մի քանի հաստատությունների մասին, վորոնք այդ ժամանակ առաջ եկին։ Ցես դիտցածս հարցերում եյի նրան։

Ցերբ այսպես խոսակցելով դյուղամեջը հասանք, միանձնուհին ներողություն խնդրեց, վոր մեզ պիտի թողնե, մոտիկ մի հիվանդի այցելելու համար։ Տեր-հայրն առաջարկեց գալ մեզ մոտ ճաշելու, բայց նա հրաժարվեց, առարկելով թե՝ այդ խոսաումն արած և ուրիշին։

Ցես իհարկե շատ ցավեցի, վորովհետև ցանկանում էի խոսել նրա հետ յերկար։ Բայց յերբ իմ ցավը հայտնեցի Տեր-հորը, նա ասաց.

— Հոգ չե էլի կտեսնվինք, նա հաճախ գալիս է մեր տունը։ Իսկ այժմ յերևի անկարող եր ընդունել իմ խնդիրը, վոր մերժեց։ Յերբ քույր-Աննան ասում է մի խոսք, այդ խոսքը պետք է ընդունել այնպես, ինչպես վոր լսում եք, վորովհետև նրա այն այն յե, և վոչն՝ վոչ։

Հասանք քահանայի տունը, ուր ճաշի սեղանը պատրաստած՝ սպասում էին մեզ։

Այստեղ ծանոթացա Տեր-հոր կրտսեր վորդու Հակոբին, վորն իմանալով թե իրենք հյուր ունին, շտապել եր աներոջ անից վերադառնալու, վորպեսզի յուր բացակայությունը տան հյուրի աչքին չզարներ։ Սա նույնպես բարեկազմ, առույգ, բայց ըստ յերևույթին ավելի կրակոտ մի յերիտասարդ եր։ Իմ հարցին թե յեկեղեցական եյիք, նա համարձակ նկատեց։

— Կարելի յե մերթե կիրակի որն յեկեղեցուց յետ մնալ։

Բայց յերբ յուր հարևնացուի վորպիսությյան մասին հարցրի, նա գլուխը խոնարհեց և միայն մի քանի անլսելի բառեր շշնջաց։

— Եհ, սիրելիս, Հակոբի համար դեռ վաղ է յուր նշանածի մասին խոսելը,— նկատեց Տեր-հայրն, ոգնությյան հասնելով վորդուն, նա ինքն էլ մեզանից է տեղեկություններ հարցնում։

Ցես ծիծաղեցի, բայց իհարկե յերիտասարդի ներկայությամբ հակառակ կարծիք չհայտնեցի, մտածելով, վոր պարկեշտությունն ու ամոթխածությյունը միշտ չեն բերել նրան այս դեպքում։

Տեր-հոր յերկու վորդիներն էլ քույր-Աննայի աշակերտներն եյին։ Ճաշի նստելով մենք բոլոր ժամանակ դարձյալ խոսում եյինք նրա մասին։ Յերբ յես կրկին անդամ իմ դոհությյունը հայտնելով յեկեղեցում տեսածս կարգապահության և գեղեցիկ ու նորդաշնակ յերգեցողության մասին հարեցի թե՝ Ջարդարև, շատ քաղաքների յեկեղեցիներ կարող են նախանձել ձեր գյուղական յեկեղեցուն, Տեր-հայրը պատասխանեց։

— Շատերը կնախանձեն մեր գյուղին, նաև նրա ուրիշ առավելությունների համար, վոր դուք իհարկե ձեր աչքով կտեսնեք և վորոնց բոլորի սկզբնապատճառն այդ միանձնուհին եւ Այն, մենք նրան շատ ենք պարտական. այդ գիտե ինքը, մեր ժողովուրդը։ Ցեվ յեթե նրան այժմ հարցնես թե՝ քույր Աննայից կուզես գրկվիլ, թե քո ստացվածքից, նա ուրախությամբ վերջին գրկանքը կընտրեր, վորովհետև վստահ գիտե թե՝ վոր ասպիճան բարի, առաքինի և ամբողջ գյուղի համար ցավող ու հոգացող կին

և նաև Հաղար անդամ մենք ինքներս մեզ հարցրել ենք թե՝ ասա-ված մեր վեր բարի դործի համար և այս բարերար հրեշտակն ուղարկել մեզ։

Այս բոլորը թեպետ ավելի և ավելի դրդում էին իմ հետաքրքրությունը կույս-Աննայի վերաբերմամբ, այսուամենայնիվ, այն րոպեյից, որ յես Տեր-Հորից իմացա թե՝ նա չդիտե այդ ինոջ մասին և վիրտեղացի լինելը, յես այլևս այդ մասին վոչինչ չէյի հարցնում նրան, ինձ վերապահելով յերբևիցե այդ զաղտնիքը պարզելու նախաձեռնությունը։ Բայց և այնպես իմ հետաքրքրությունը աճում էր ժամերով։

Ճաշից հետո, յերբ առանձնացա հանգստանալու, իմ մտածմունքը դարձյալ կույս-Աննայի մասին էր։ Շարունակ ինքս ինձ հարցնում էյի թե՝ արդյոք ինչն և առիթել այդ ինոջը՝ հեռանալ աշխարհից և քաշվել իրեն անծանոթ և հեռավոր մի գյուղի անկյունը։ Նրա թե արտաքինից, թե խոսքերից և թե շարժմունքից պարդ յերևում էր, վոր հասարակ կին չէ. հետևապես, չէր կարող լոկ բարեպաշտական դգացմունքից դրդված դալ միանձնուհի լինելու դժվարին վարոյման։ Մեր ժամանակում, յերբ կյանքն յուր բազմակողմանի հրապույրներով այնքան և սիրելի դարձրել աշխարհը, վոր մարդիկ ամենաթանկագին սրբություններն անդամ զոհ են բերում նրա սիրուն, տարօրինակ է, վոր սիրելու և սիրվելու բոլոր բարեմասնություններով ոժտված մի կին փախչում և այդ սիրաղվարճ աշխարհից և վակում իրեն մի հեռավոր և անծանոթ անկյունում, գյուղական կոշտ ու կիսավայրենի ժողովրդի մեջ՝ լոկ Ներան ծառայելու պաշտոնը առանձնելով։

Այս ամենն ինձ համար առեղծվածներ էյին, վորոնց պարզելու համար, պակասում էր միջոց։ Յես անհամբերությամբ սպասում էյի մեր յերկրորդ տեսակցության, հավատացած լինելով թե՝ այդ ժամանակ արդեն կհաջողվի ինձ լուծել այս տարօրինակ հանելուկը։

Հունիս 6.

Հետևյալ որը, վաղ առավոտից, գրոսնում էյի յեկեղեցուն մոտ գտնվող անտառակում։ Սքանչելի յեղանակ էր։ Ցանկանում էյի մի քանի ժամ անցցնել այդտեղ, բայց դպրոցական զանգի ձայնը լսելով՝ շտապեցի այն կողմը։

Գտա դամի վրա պատահեցի կույս-Աննային, վոր քաղցր ժպիտով իմ վողջույնն ընդունեց։

— Ներեցեք, վոր այսքան վաղ եմ այցելում ձեր դպրոցը,— ասացի յես,— վորովհետև ցանկանում եմ արվա բոլոր պարապմունքին ներկա գտնվել։

— Շնորհ արեք, խնդրեմ, դուք մեծ հաճույք կպատճառեք ինձ, հրամեցեք, լսեցեք, հարցաքննեցեք, — պատասխանեց քույր-Աննան ուրախ պատրաստակամությամբ։

— Հարցաքննել, վե՛չ մի խոսքով անդամ չեմ խանգարի ձեր պարապմունքը, միայն կլսեմ, — ասացի յես, — և մենք միասին մտանք դպրոցի առաջին դասատունը։

Մաքուր և ընդարձակ սենյակի մեջ, մի քանի կարգ կոկիկ նստարանների վրա, շարված էին աշակերտները մեկ՝ և աշակերտուհիները՝ մյուս կողմից։ Ցերը ներս մտանք, բոլորը համեստությամբ վոտքի յելան, վողջունեցին մեզ և վարժուհու հրամանով սկսան յերգել առավոտյան աղոթքը, վոր յեկեղեցում լսածս յերգեցողության չափ քաղցր եր և ներդաշնակ։

Աղոթքից հետո սկսվեց դասը, վոր հայոց լեզվից եր։ Դասատվերքն եր ավետարան, վորից աշակերտները կարդում, թարգմանում և գրատախտակի վրա գրում էին։ Վարժուհին սիրով ու աշխուժով բոլորին հարցնում, լսում, ուղղում և բացատրում եր։ Իրենք աշակերտներն էլ Սյունյաց յերկրի ծնունդ լինելով՝ մեծ մասամբ ընդունակ և սրամիտ յերևացին ինձ. պատասխանողներից վոչ մինը դժգոհություն չպատճառեց վարժուհուն։

Հետո քույր Աննան սկսավ խոսել նոր դասը՝ կարդալով ավետարանից մի ուրիշ գլուխ և թարգմանելով։ Դժվարիմաց բառերն ու մտքերը նա ուշադիր հոգածությամբ բացատրում և հասկացնում եր, կրկնել տալով նույնը թուլլ աշակերտներին։ Նրա բացատրություններն, առհասարակ, այնքան պարզ և դյուրըմբռնելի էին, վոր ինքս էլ լսում էի մեծ հաճույքով, ինձ համար անհնարելի չանցավ այն, վոր նրա բոլոր դասավանդության ժամանակ, յես լսում էի վոչ թե պաշտոնական վարժուհու, այլ դպրովաղուց մոր ձայնը և յերևի այդ եր պատճառը, վոր նրա աշակերտների մեջ համեստության հավասար ցոլանում եր և հոգվո արիություն։

Դասն ավարտելուց հետո դուրս յեկանք պատշգամ, իսկ աշակերտներն ու աշակերտուհիները բակն իջան խաղալու։

Վերջիններից մի մասը, գեղկուհիներին հատուկ համակրությամբ, հավաքվեց ծառատան մի անկյունը և չեր մասնակցում վոքրիկների խաղին։ Այդ հանգամանքը իմ աչքին զարկավ։

— Գեղկուհին միշտ գեղկուհի յե՛ մնում, — նկատեցի յես, — ինչու՞ այդ աղջիկները չեն խաղում, նրանք այնքան մեծահասակ չեն, վոր մեզանից քաշվելին։ Մի՞թե դպրոցական կյանքը վոչինչ հեղափոխություն չե մտցրել նրանց մեջ։

— Այդ դեպքում՝ վճռ և յես չեմ ցանկանում այդ, — պատասխանեց քուրդ-Աննան լրջորեն։ Ես պահանջում եմ մինչև անդամ, որ դեղկուհին միշտ դեղկուհի մնա։ Ես չեյի ցանկանալ, որ դպրոցը կապտեր նրանցից այն թանկագին հարստութիւնը, որ նա հնուս չեր կարող վերադարձնել առանց ծանրագին աշխատութեան։ Ուսքս վերաբերում է այն ցեղային պարկեշտութեան, որը մեր դեղկուհիներն ունին։ Ես իհարկե սովորեցնում եմ նրանց կարդալ և գրել, ավանդում եմ՝ ինչ որ ուսման համար կարևոր և իրենց անձին օգտակար է, աշխատում եմ, որ նրանց մտքերի հետ միասին կրթվին և ազնվանան նրանց հոգիները, հաստատում և ամրապնդում եմ նրանց կրոնական դգացմունքները, միով բանիվ, ամեն ջանք գործ եմ դնում, որ նրանցից պատրաստվին վորոշ չափով կրթված հայ գյուղացիներ, բայց, միևնույն ժամանակ, դգուշանում եմ, որ իմ ներշնչած այդ նորութիւնները չխեղդեն նրանց մեջ գյուղացու այն հատկութիւնները, որոնք նրանց բարոյականի հաստատուն հիմունքներն են կազմում և որոնք իմ ավանդած սահմանափակ ուսումովը չեյին արմատանալ նրանց մեջ, չնեն նրանք այդ չժառանգեյին ծնողներից, գյուղական անարատ միջավայրում։ Ուրեն մենք յեղած հինը քանդելով, կարողանայինք նրա տեղ նորը, բայց լավագույնը հաստատել, այն ժամանակ այդ հինը անյերկյուղ կքանդեյինք։ Բայց քանի որ ցանկալի ույժն ու միջոցները չունինք, անհրաժեշտ է, որ յեղած լավ հատկութիւնները խնամենք և պահպանենք՝ նույնիսկ իրենց հին կերպարանքի մեջ։ Այդ հատկութիւններն են՝ դեղկուկի ամոթխածութիւնը, բարեպաշտութիւնը, պարզասիրութիւնը և աշխատասիրութիւնը։ Ես մեծ խնամքով եմ վերաբերվում այդ դեղեցիկ հատկութիւններին՝ աշխատելով իհարկե, որ նրանցից մի քանիսը ծայրահեղութեան չհասնեն. օրինակ, որ նրանց ամոթխածութիւնը չհավասարվի երկչոտութեան, իսկ բարեպաշտութիւնը՝ չդառնան նախապաշարմունքով։ Վերջին դեպքում ևս դգուշութեամբ եմ վարվում, որովհետև դեղկուկի կրոնականը նման է հնադարյան մի սրբազան շինութեան, որի վրա, հարկավ, դարերի ընթացքում նաև և՛ փոշի և՛ անմաքրութիւն. բայց նրան այդ փոշիներից մաքրելու համար դգուշաբար պիտի վարվի մեծագրել դիտցող հնագետը, որպեսզի սխալմամբ դեղեցիկ քանդակներից մեկը չփշրե, կամ ընդհակառակը մյուսներից մեկը չնշմարե։ Ահա այդպիսի դգուշութեամբ եմ վարվում և յես իմ աշակերտների ու նրանց ծնողների հետ, երբ հարկավոր է լինում նրանց վրան կրոնական նախապաշարման դիմաբանել։

— Իսկ դուք կարծում եք, որ այդքան համր ընթանալով շատ աննշան հառաջադիմություն կանեք,— նկատեցի ես։

— Ձեր կարծիքը մասամբ իրավացի է,— պատասխանեց կույրը. բայց վճռն է ավելի լավ, քիչ հառաջադիմելը, քան դեպի կորուստ փութալը։

— Իհարկե առաջինը,— ասացի ես։

— Ահա այդ պատճառով էլ դուք համր, բայց ուղիղ ընթանալու կողմն եմ, որովհետև գեղջուկն ու նրա զավակը մեր քայլերով ընթանալ չեն կարող։ Նրանք նման են նոր վոտքի դնված մանուկների, որոնց դեթե շոտպեցնես, կսայթաքեն և կդլորվեն ճանապարհի վրա։ Վորդեսզի և հասկացող մայրը, որքան էլ առողջ վոտքեր ունեննա, այսուամենայնիվ, նա դուք դեռևից քաշ չի տալ մանուկին, այլ, ընդհակառակը, կհարմարեցնեն դուք քայլերը տղայի. դողդողջուն քայլիկներին, մինչև որ այդպիսով նրան կանոնավոր քայլել սովորեցնեն։

— Իսկ ինչ վերաբերում է գեղջուկի բնական աշխատասիրության ու պարզասիրության,— շարունակեց կույրը,— ես աշխատում եմ ավելի և ավելի զարդացնել նրա մեջ այդ հատկություններըս Ես գովում ու խրախուսում եմ աշակերտին կամ աշակերտուհուն, երբ պատահում եմ մինին, դասից ազատ միջոցին անտառից փայտ բերելիս, մյուսին՝ խոտ հավելիս, յերրորդին՝ ջրի սափորով վերադառնալիս, չորրորդին՝ այգում քաղհան անելիս և այլն։ Այդ իսկ պատճառով ես սկզբից արդեն սահմանել եմ, որ իմ աշակերտներն ու աշակերտուհիները իրենց մյուս որվա դասերը պատրաստեն դպրոցում՝ իմ հսկողության ներքո, վորպեսզի տուն վերադառնալուց թե ազատ լինեն դասերի ճնշումից և թե կարողանան ընտանեկան գործերում ուշնել իրենց ծնողներին։ Այդ տեսակ ազատ պարապմունքը կծառայե նրանց նաև իբրև մարմնամարզություն, որի պատւրը վաղուց ճանաչված է։

— Միևնույն ձևով ես հոգում եմ, որ պարզասիրությունն արյուն ու մարմին դառնա նրանց մեջ,— շարունակում եր միանձնուհին։ Ես անպայման առեցող եմ ցույց տալիս ինձ հարուստ ու շքեղ հագնվելուն, թեպետ մաքրասիրությունը պահում եմ։ Գաատահել է, որ իմ աշակերտներից մինը, հարուստ ծնողների զավակ լինելուն համար, դյուղում գործած շալի փոխարեն մահուդ է հագել, կամ աշակերտուհիներից մինին յուր ծնողները բամբակե շիլայի փոխարեն մետաքսե դանակուղից շապիկ են հագցրել։ Ես այդպիսիներին, բոլոր աշակերտների ներկայությամբ, քաղցրությամբ հանդիմանել եմ և իսկույն յեռ գրկել ուն, պատվիրելով որ նախկին, կոպիտ շորերը դերադասեն այդ

թանկագին հպատակներին, վորովհետև ասել եմ, դրանք դյուղացու համար անվայել հպատակներ են։ Բայց, միևնույն ժամանակ չեմ մոռացել նախատել, և այն աշակերտին, վոր հերթաձակ, ցնխոտ վիշերով, կամ կեղտոտ ոճիքով համարձակվել է մտնել դասատուն։ Այս բոլորից արդեն կարող եք մակաբերել թե ես ինչ աչքով եմ նայում դյուղացու կրթությանը և վորքան հակառակ եմ, վոր դյուղացին յուր մտնավոր ուսումն ու կրթությունը սահմանելուց հետո, դյուղացի լինելու փոխարեն, ձգտի լինել մի ուրիշ բան։

Մինչդեռ ես ուշադրությամբ լսում եյի քուչը-Աննային, դանդաղակը հնչեց և աշակերտները կարդով սկսան հավաքվել դասարանները։ Այդ ժամանակ միայն նկատեցի աշակերտների բազմությունը և հարցնելով տեղեկացա, վոր դպրոցը կազմված է յերկու նախակրթական և մի առաջին դասարաններից։ Իմ հարցին թե ձիքեր են դասախոսում նախակրթարաններում, քուչը-Աննան ժպտալով պատասխանեց։

— Իմ պատրաստած վարժապետն ու վարժուհին։

— Ո՞ւր են նրանք, — հարցրի ես հետաքրքրությամբ։

— Ահա վարժապետը, ահա վարժուհին, — ցույց տվավ նա պարզ հագնված մի դյուղացի պատանի և նուշնոլիսի հպատակով մի պատանեկուհի, վորոնք աշակերտների յեռանից մանում եյին դասատուն։

— Դրանց ես սովորողների տեղ եյի ընդունում, այնքան մանկամարդ են, — նկատեցի ես։

— Վե՛չ, դրանք իմ ռչնական դասատուներն են. հաճեցեք նեղիկ լինել նրանց դասերին, յերթե կցանկանաք, հուսով եմ, կհավանեք։

— Շնորհակալ եմ, մեծ ուրախությամբ, — ասացի ես և չկամենալով այլևս ուշացնել քուչը-Աննային, ինքս առաջինն ուղղվեցա դեպի այն դասարանը, ուր յերիտասարդը պիտի դասախոսեր։

Նուշնոլիսի հարգանքով ընդունեցին ինձ և այստեղ։ Գեղջուկ վարժապետը քաղաքավարությամբ աթոռ առաջարկեց ինձ. ես նստա և սկսա լսել։

Հարցնելու և ուղղելու միևնույն ձևը, դասախոսելու և բացատրելու նույն յեղանակը, ինչ վոր քուչը-Աննայի՝ նույնն և այս յերիտասարդի մեջ նկատեցի. սա նրա հարտպատ պատճեն եր։ Զարմանում եյի այս դեղեցիկ նմանության և առավել ևս այն համբերության վրա, վոր նորատի յերիտասարդն ուներ։ Վորպիսի քաղցրությամբ և վորքան հանդիստ սրտով ուղղում եր նա մի

յերկու, ըստ յերևույթին՝ բացառություն կազմող, աշակերտների շարունակ կրկնվող միևնույն սխալները վերչ միայն բարկանալ, այլ և կոշտ խոսելը, կարծես, հանցանք եր համարում. մի հատկություն, վոր ճրագով ենք վորոնում մեր վարժապետների մեջ։ Սիրով լսեցի յերիտասարդ ուսուցչի ամբողջ ժամվա դասախոսությունը, վոր ըստ ամենայնի գոհություն պատճառեց ինձ։

Բոլորովին ուրիշ ազդեցություն գործեց ինձ վրա դեղջուկ վարժուհին, յերբ յերրորդ դասին նրա դասատուն մատ։ Նրան տեսնելուց և մի փոքր լսելուց հետո, յես նմանեցրի նրան այն քանկագին գոհարին, վոր դեռ նոր հողի միջից հանված, իր անողորկ տեսքի պատճառով թվում է մի աննշան ապակի, բայց հմուտ ակնագործը դուշակում է թե՝ վոր թափուհու ճակատը կարող է նա զարդարել, յեթե ինչպես հարկն է հղկվի ու կոկվի։

Ցավոք հազուստով նա չեր զանազանվում աշակերտուհիներից։ Հագած եր հասարակ չիթից պրխալուղ, կարմիր շիլայից յերկար շապիկ, նույն կտորից կապած մի դռան պատում եր մեջքը, իսկ մի փոքրիկ, կանաչ չարդախ ծածկում եր գլուխը։ Ահա, այս եր վարժուհու բոլոր հանդերձանքը։ Ցերեկ յես պատահեցի նրան աղբյուրի վրա, ջրի սափորն ուսին, վոչնչով չեյի զանազանի մյուս դեղջկուհիներից։ Բայց այժմ նա իմ առաջ կանգնած դաս եր խոսում մաքուր հայերեն լեզվով և այն վորքան համուհյամբ, շնորհքով, քաղցր ու դրավիչ ձայնով։ Մի քիչ չպետք և զարմանայի ու հիանայի։ Ցես այնքան զգացվել, վոգեվորվել եյի, վոր յերբ դասը վերջացավ և յես դուրս դալով պատշգամ պատահեցի քույր-Աննային, կամենում եյի առնել նրա ձեռքերը և ջերմագին, անվերջ համբույրներով ծածկել ի նշան՝ իմ սրտանռանդ շնորհակալության։ Բայց ավաղ, չեյի կարող այդ անել և չգիտեյի ինչպես զեղանել նրա առաջ իմ անկեղծ զգացմունքները։ — Ձեր գործը գովելու համար յես լեզու չունիմ, ասացի նրան, ընդունեցեք, գոնե, իմ ջերմագին շնորհակալությունը, իբրև իմ ներքին գոհունակության և, առավել ևս, իմ մեծագույն զարմացման մի տկար առհավատչյա։

— Շնորհակալ եմ, դուք ինձ քաջալերում եք, յերևում է վոր հավանել եք թե վարժապետիս և թե վարժուհուս, — պատասխանեց քույր-Աննան քաղցր ժպտալով։

— Այո, սրանցից լավը յես չեմ տեսել, գոնե, մեր քաղաքի դպրոցներում։

— Ցես դրանց պատրաստել եմ այն չափով, վոր աղատ կարող են սովորեցնել նախակրթարանում, ընդունելով իհարկե, վոր նախակրթարանի ուսուցչից ևս պահանջվում է վորոշ չափով

համաձայնություն, իսկ քիչ ժամանակից հետո, նրանք պատրաստ կլինեին այդ քայլին, որ կկարողանան իմ տեղը բռնել։

— Ինչպես, մի՞թե դուք մտադիր եք յերբ և իցե թողնել այս պյուղը, — հարցրի յես։

— Թողնել, յերբեք, — պատասխանեց միանձնուհին. բայց ով կարող է յերաշխավորել թե վաղքան կարող եմ ապրել։ Ցես այն կարծիքին եմ թե, մի գործ մշանջենավոր անելու համար, անհրաժեշտ է, որ սկսող մարդը գործի գոյությունը իր գոյության հետ չկապե։ Հակառակ դեպքում գործը մեռնում է, յերբեմն մեռնում, կամ հետանում է գործի հիմնադիրը։ Մեր մեջ, առհասարակ, շատ ազատվեա գործեր վաչնչանում են նույնիսկ իրենց հիմնադիրների փառամոլության շնորհիվ։ Վորովհետև քիչ չեն թիվը այն մարդկանց, վորոնք մի հասարակական բարի գործ սկսում և առաջ են տանում վոչ թե նրա համար, որ հասարակությանն ոչնչեն, այլ որ նրա մեջ յերևան և նրանից փառք ու պատիվ վայելեն։ Այդպիսիները, մինչև անդամ, չեն ցավում, յերբ իրենց հետանալուց հետո ընկնում, վաչնչանում և գործը, վորովհետև այդ ատիթ և տալիս նրանց ապացուցանելու թե իրենք հայտնի ուժեր են և թե իրենց չեղած տեղն յերկիրը չի կարող խոտ բուսցնել... Այդպիսիներն իմ աչքում նույն վճռադործներն են, վորոնք իրենց անձի դյուրության համար անշնչացնում են միանգամ ընդ միշտ ապրել գործի կենդանության համար, իսկ յերբ հարկը պահանջե մեռնել, վորպեսզի ազատվեա գործն ապրի, այդ ղոնն էլ պետք է բերել առանց տրտնջալու։

«Ցես սիրում եմ իմ սկսած գործը, ցանկանում եմ, որ նա հավիտյան ապրի, վորովհետև հավատում եմ նրա մեծության ու ինքնարար ուժին՝ ապագայի նկատմամբ։ Այդ պատճառով էլ աշխատում եմ այնպիսի հիմքերի վրա դնել այդ գործը, որ իմ մեռնելուց հետո նա չկարանա, որ հղմերն ու հղեղը չսասանեն նրան։ Այժմյանից արդեն յես արժանավոր և գոնե ինձանից ավելի լավ գործող հաջորդներ եմ պատրաստում և յերդմամբ պիտի պարտավորեցնեմ նրանց՝ նույնն անել վորդվոց վորդի։ Ցեվ վորովհետև յես վստահ եմ իմ ներշնչած վստուն, ուստի և կարող եմ հանդիստ սրտով մեռնել»։

Ցես ուշադիր լսում եյի քույր-Աննային և սրտանց ցանկանում, որ նա ավելի խոսեր։ Վոգևորվում եյի նրա ղրույցներով, ուստի և փափագում չարունակ լսել նրան... Բայց աշակերտներն արձակվեցան. ժամանակ եր և ինձ հեռանալ։ Միայն խնդրեցի, որ նա պաշտոնապես ծանոթացնե ինձ յուր վարժապետին ու

վարժուհուն։ Քույր-Աննան կատարեց խնդիրս սիրով։ Իմացա, որ վարժապետի անունը Պետրոս է, Կովիկյան ազգանունով, իսկ վարժուհունը՝ Մանիշակ Սահակյան։ Մի քանի խոսք ևս դրանց հետ փոխանակեցի, որի ժամանակ նորատի վարժուհին շարունակ շիկնում էր։ Հետո կրկին անգամ շնորհակալություն արի քույր-Աննայիին, վողջունեցի նրա յերիտասարդ ոգնականներին և հեռացա՝ քայլերս ուղղելով դեպի իմ հյուրընկալ Տեր-Հովսեփի տունը։

Հունիսի 7.

Անցյալ որը քույր-Աննայից հեռանալով՝ բավական մտածում էի իմ տեսած ու լսածների վրա։ Ինձ զբաղեցնում էին միանձնուհու հայտնած կարծիքներն ու հայացքները, յերկար վորոճում էի նրա դեղեցիկ խոսքերը և վերջը դալիս այն յեզրակացության թե՝ արդարև այդ բոլորը յերազներ չեն և գոյություն ունին։ Բայց նախկին մտածմունքը դարձյալ տանջում էր ինձ. — «Ո՞վ է վերջապես այդ կինը...» Ես անպատճառ ցանկանում էի խոսնալ, նման այն մանրակրկիտ հետաքրքրին, վոր արհեստի մի հրաշալիք տեսնելուց, չէ բավականանում նրա վրա նայելով ու զվարճանալով, այլ և հետամուտ է լինում նրա առեղծագործության դաղանիքն իմանալու։

Արդեն վորոշել էի դիմել քույր Աննային և առանց այլևայլության խոսել նրա հետ, ինձ մտատանջություն պատճառող հարցի մասին։ «Յերբ մի կին այս աստիճանի հետաքրքրում է ինձ յուր հասարակական որինակելի գործունեությամբ, հանցանք չէ, վոր յես փափագում նրա անձին ու անցյալին ճշմարտապես ծանոթանալու. այստեղ քաշվելու բան չկա»,—մտածում էի յես։

Այդ իսկ պատճառով յերեկ, դեռ առավոտվանից, դարձյալ դրպրոցումն էի։ Տեսնվեցա քույր Աննայի հետ, լսեցի նրա դասերը, խոսեցինք զանազան նյութերի վրա, բայց և այնպես չկարողացա մոռենալ իմ նպատակին։

Զարմանալի և տարորինակ մի կին է այդ միանձնուհին։ Յերեսին այնքան մեղմ, քաղցր ու հեզահամբույր է, վոր մարդ կարծում է, թե նրա ամբողջ գոյությունը կարող է առնել իր ամի մեջ, իսկ յերբեմն այնքան լուրջ, սառն և բարձրահոն, վոր յես համարձակ չեմ կարողանում նայել յերեսին։

Այսուամենայնիվ, յերեկ ճաշից հետո դարձյալ գնացի նրա մոտ, վճռած լինելով իմ մտքում հայտնել նրան իմ ցանկությունը առանց տատանվելու։

Քույր-Աննային պատահեցի ուսուցիչարանի բակում որիորդ Մանիշակի հետ։ Նրանք զբաղված էին իրենց ծաղիկներով։ Կույսն

ինձ տեսնելով Թողեց գործը, մոտեցավ և բարևեց, ապա տիրոջ ներ բերել տալով՝ առաջարկեց նստել հովանավոր նշդարիների տակ։

Սկսանք խոսել Մի քանի թեթև հարցեր շոշափելուց հետո, ես աշխատեցի մեր զրույցը դարձնել այնպիսի խնդիրների վրա, որոնց միջոցով կարելի լիներ պարզել իմ հայացքներն այս կամ այն հարցի վերաբերմամբ և այդ ճանապարհով ծանոթացնել քույր-Աննային իմ ներքին աշխարհին, համոզմունքներին և գաղափարներին, որպեսզի զրանով նրա հոգեկան մոերմությունը վաստակեի։ Եվ որովհետև ես այն կարծիքին եի, թե վոչ մի արտաքին հանդամանք այնպես շուտ չի գրավիլ կնոջ բարեկամությունն ու մոերմությունը (խոսքս իհարկե լրջամիտ և զգայական կյանքով չապրող կնոջ մասին է), որքան ներքին համոզմունքների և գաղափարների միությունը, ուստի անչափ զոհ յեղա, երբ տեսա, որ նա շատ հարցերի նկատմամբ՝ համամիտ ու գաղափարակից և ինձ Ուրեմն կարելի յեր հուսալ թե շուտով պիտի հասնեմ նպատակիս։ Վորովհետև մի անգամ ինձ ճանաչելուց հետո՝ հեշտ կլիներ նրան այնուհետև բացվել իմ առաջ։ Այդ իսկ պատճառով այժմ էլ սկսա խոսել այնպիսի հարցերից, որոնք առիթ պիտի տային ինձ ուղղակի ցանկացածս խնդրին դիմելուս

Սակայն այդ միջոցն ևս ապարդյուն անցավ։ Քույր-Աննան, կարծես, գուշակելով իմ դիտավորությունը, հաճախ մի խոսքի կամ լոկ մի բառի բացատրությամբ այնպես անսպաս ընդհատում եր խոսքի ձևը, կամ զրույցի ընթացքը փոխում, որ ես ինքս եի կանդնած հենց նույն տեղը, որտեղից սկսել եի։ Ես նորից փորձ եի անում, նորից նմանորինակ նյութի վրա խոսում և այդ ժամանակ, երբ մոտենում եի թե ահա հասել եմ նպատակիս, դարձյալ նրա բոլորովին նոր հարցով կամ դիտողությամբ ստիպված եի լինում ճանապարհս կորցնել և յուր յեսևից գնալ։ Հուսահատությունը սիրում եր ինձ։ Ես նմանում եի ծովամույն յեղող մի մարդու, որ ալիքների հետ կռվելով աշխատում և ափին մոտենալ և հենց այն րոպեին, որ ձգում և ձեռը ժայռերից բռնելու, ահա մի կոհակ գալիս, խփում և նրան և հեղձամղձուկ անելով, կրկին ծովի խորը նետում. նա նորից փորձ և անում նորից մոտենում ափին և դարձյալ ալիքներից մղվում դեպի ծովի խորքերը։

Քույր-Աննան այժմ յերևում եր ինձ իբրև մի անմատչելի աշտարակ, որի վրա պետք եր նայել հեռվից և նրա արտաքինով միայն գլխարձանալ, առանց իրավունք ունենալու ներքինը դիտելու։ Այժմ յես այլևս չեյի մեղադրում Տեր-Հովսեփին յուր ան-

տարբերութեան համար, վորովհետև տեսա, վոր նա այդ կետում հանցանք չուներ։ Կյանքումս առաջին անգամ եմի պատահում մի կնոջ այդքան զերազանց ուժով։

Առանց մի բավարար յեղրակացու թեան դալու մեր բոլոր խոսակցութեունից՝ վերադարձա տուն, դրեթե հուսահատ։

Հունիս 10.

Ճերեք որ եր, վոր չեմի տեսել քուլը Աննային։ Այդ բոլոր ժամանակը շրջում եմի դյուղի մոտակա անտառներն ու լեռները Տեր-Հոր կրտսեր վորդու Հակոբի հետ։ Մենք վորսում էինք։ Այդ զբաղմունքը այնքան եր ինձ զբավել, վոր յես վորոշել եմի այսոր ևս լեռներում անցցնել՝ դնալով ավելի հեռավոր կողմեր։ Բայց Հակոբը չկամեցավ ինձ ընկերանալ՝ առարկելով թե կյուրակի լինելու պատճառով, չե կարող դյուղից հեռանալ։ «Պետք է յեկեղեցի դնանք, պատարագ լսենք», — ասում եր նա։ Իսկ յես այդ որվա կյուրակի լինելը մոռացել եմի։

Հարկ չկա ասել, վոր յուր ժամանակին յեկեղեցումն եմի։ Ի՞նչ զվարճութեուն կարող եր զերակշռել քուլը Աննայի և նրա խմբի հրաշալի յերգեցողութեունը լսելու հաճույքին։

Պատարագը վերջանալուց հետո, դուրս յեկա յեկեղեցու բակն, ուր պատահեցի վարժապետ Գեորգին։ Ինձ վողջունելուց հետո, նա հայտնեց թե, քուլը Աննան մի քանի ռաչամ հարցրել և իմ մասին և անհանգիստ է յեղել, վոր այսքան ժամանակ չեմ յերևվացել։ Ես կարծում եր թե հիվանդ եք, շարունակեց Գեորգը, բայց յես յեկա և Տեր-Հորից իմացա, վոր վորսորդութեան եք դնացել։

— Այո, կամենում եմի ծանոթանալ ձեր լեռներին, — ասացի յես, բայց ինչպես է քուլը Աննայի առողջութեունը։

— Փառք աստուծո, նա միշտ առողջ է և այդ մեղ շատ է ուրախացնում, — պատասխանեց Գեորգը այնպիսի մի յեղանակով, վոր կարծես ամենասիրելի մոր համար եր խոսում։

Մենք զրուցելով առաջացանք դեպի ուսուցչարանի բակը, ուր Գեորգը ներողութեուն խնդրելով, բաժանվեց ինձանից, վորովհետև աշակերտները յեկեղեցուց յեկել եմին ուսուցչարան, պետք եր արձակել նրանց։

Շուտով յերևաց և քուլը-Աննան, վոր սիրով ու մտերմաբար ինձ վողջունելուց հետո, մեղադրեց վոր իմ պարտքը չեմ կատարում՝ այցելելով իրեն ամեն որ։

— Գիտեք, չի վայելիլ, վոր յես ձեզ պարեմ, — նկատեց նա անկեղծորեն. — դուք յերիտասարդ եք և ավելի ազատ, դուք պետք

և դաք մեղ մոռ։ Ցեվ յես սպասում եմ ձեղ իրավունքով, վորով-հետև միայն մի յերկու ամիս եք այստեղ, իսկ ձեր հեռանալուց հետո, դուցե յերկար ժամանակ ձեղ նման հյուր այլևս չունենանք։

Ցես ներողություն խնդրեցի քույր Աննայից, հայտնելով, վոր յերևք որ իրեն չայցելելուս պատճառն վորսորդական դրոսանքներս եյին, վորոնց իսկապես ձեռնարկեցի նրա համար, ավելացրի յես, վոր չեյի ցանկանում իմ հաճախակի այցելություններով յուր պարապմունքը խանգարել։

— Ո՛, դրա համար մի մտածեք, պյուդում այնքան էլ քանկ չեն ժամանակը, — նկատեց քույր Աննան ժպտալով. բայց քանկագին և հազվադյուտ են մարդիկ, վորոնց կարելի լիներ լսել։ Մինչև կարծում եք թե՝ հեշտ բան է սահմանված լինել միշտ խոսել, միշտ լսողներ ունենալ, բայց անկարող լինել յերբևիցե լսել մի ուրիշին, կարծիքներ իմանալ, մտքեր փոխանակել...

Քույր Աննան այնպիսի մի մտերմական յեղանակով արտասանեց այս խոսքերը, վոր յես դժացվեցա։

«Արդարև, սալրել շարունակ պյուդում, տեսնել շուրջդ միայն պյուդացին և նրա միօրինակ կյանքը, չտանել նրանից վոչինչ նոր, վոչինչ թարմացնող և սահմված լինել սպասել նրա համար ինչ վոր ունիս պաշարած, սա դժվար կացություն է։ Պետք է մարդ այս դեպքում հոգու ներաղնց ուժ և կորով ունենա ձանձրույթից բոլորովին չվհատվելու համար...»։

Այս մտածմունքը բոլորապես անցավ իմ գլխով և յես, չդիտեմ ինչպես, համարձակություն առի՝ այնքան շատ ինձ մտատանջություն պատճառող հարցի մասին ուղղակի խոսել։

— Հասկանում եմ ձեր ասածը և զղում ձեր դրության բոլոր ծանրությունը, պատասխանեցի յես, բայց չեմ հասկանում մի բան, վոր ինձ շատ է մտածել տալիս։

— Ի՞նչ, — հարցրեց քույր-Աննան հետաքրքրությամբ։

— Այն թե՝ նախախնամության վճռակիսի անորինությամբն եք դանվում դուք այս լեռների մեջ։

Քույր Աննան լուրջ կերպարանք առավ. նա անշուշտ չեր սպասում այս հարցին և, կարծես, պատրաստվում եր նկատել թե ինչու յես այդքան համարձակություն առի։ Բայց յես նրան խոսելու ժամանակ չտվի։

— Մի վշտանաք իմ հարցից, հարգելի քույր, — ասացի նրան, ձեր այս բոլոր դործերը տեսնելուց հետո, դործեր, վորոնք արդյունք են մեծ անձնազոհության և վորոնք ժողովրդի բախտն են կառավարում, յես, իբրև հայ մարդ, իբրև իմ արյունակիցներին ուրախության ու վշտերին բաժանորդ, բնական է, վոր հետաքրքր-

քրվեմ ձեր անցյալով, վոչ իբրև մասնավոր անձի, այլ իբրև հասարակական անձնավեր գործչի։ Ծանր է ինձ, արդարև, ծանոթ լինել ձեր անվանը և ստեղծած գործերին և, միևնույն ժամանակ, չիմանալ թե դուք ով եք կամ վոր աշխարհի ծնունդ... Ներեցեք, վոր յես պահանջում եմ ավելին, քան դուցե այժմ թույլատրելի է ինձ, բայց հավատացեք, վոր յես չեմ ներել ինձ, յեթե հետաքրքրությամբ, ինչ վոր ունիմ ձեր մասին։

Գուլբ Աննան մի ներողամիտ հայացք ձգեց վրաս և ժպտաց։ Այդ ժպիտը նոր վստահություն ներշնչեց ինձ. յես ավելացրի։

— Ուրեմն, մի մերժեք ինձ, խնդրում եմ, պատմեցեք ձեր մասին մի քանի բան, ծանոթացրեք ինձ ձեր անցյալին, վորքան այդ հնարավոր է և դա կլինի ամենամեծ շնորհը, վոր դուք կանեք ինձ։

— Իմ անցյալին... հավատացեք, վոր նա հետաքրքրական վոչինչ չունի յուր մեջ։

— Թող այդպես լինի, այսուամենայնիվ, յես ցանկանում եմ լսել ձեզ և այս ցանկությունից յես կկենամ միայն այն ժամանակ, յերբ կասեք թե՝ անհաճո յե ձեզ ծանոթացնել ինձ այդ անցյալին, վորն, հավատացած եմ, նույնպիսի հետաքրքրություն պիտի պատճառե ինձ, վորպիսին պատճառում է ներկան։

— Ի՞նչ կկամենայիք, որինակ, վոր յես պատմեի ձեզ,— նույն մեղմ ժպիտով հարցրեց ինձ գուլբ Աննան։

— Որինակ թե՝ ինչ դիպվածներ ստիպեցին ձեզ հեռանալ մեր սիրելի աշխարհից և ապաստանել այս հեռավոր լեռներին։

— Մթթե այս լեռները ձեր աշխարհում չեն գտնվում,—հարցրեց նա ծիծաղելով։

— Վոչ, ինչպես և մի ան ձ ն ու հ ի ն ե ր ը չեն ապրում մեր աշխարհում։

— Հասկանում եմ, բայց ասացեք խնդրեմ, կամ ձեր աշխարհում ավելի քաղցր ու սիրելի մի կյանք, քան ինչ վոր այստեղ վայելում եմ յես։

— Զկա, այդ ճշմարիտ է, բայց այդ կյանքի քաղցրությունը ճանաչել կարողանալու համար, շատ փոքր պիտի լիներ այն հասակը, վոր ունեցել եք դուք այստեղ գալու ժամանակ։ Յես իմացա, վոր քսան տարուց ավելի յե, ինչ գործում եք այստեղ։

— Ընդունեցեք ուրեմն, վոր այստեղ գալու ժամանակ ել քսան տարեկան եյի։ Եվ մթթե այդ հասակը բավական չեր, վոր յես ճանաչեյի սիրած աշխարհի վոչնչությունը և նրա մեջ ինձ համար գրավիչ վոչինչ չգտնելով՝ հեռանայի նրանից՝ ավելի բարձր կյանքի նվիրվելու համար։

— Անկարելի չե,— բացականչեցի ես,— աշխարհը վորքան էլ վոչինչ, վորքան էլ ունայն լինի, դարձյալ մի քանամյա չբիտասարդ աղջկա համար շատ հրապույրներ ունի յուր մեջ։ Անկեղծ չեղիք ինձ հետ, ապաչում եմ և խելամուտ արեք ինձ ձշմարտությանը։ Դուք, ուրեմն, մեզ բոլորովին անհայտ մի աշխարհի ծնունդ եք, վոր այդ հասակում կարողացել եք անձնվիրության մասին մտածել։ Մեր չերկրում այդպիսի բույսեր չեն աճում; դուցե և նրա համար, վոր սերմանող չկա։ Բայց ինձ, վոր պաշտում եմ ձեր մեջ այդ մեծ առաքինությունը, թույլ տվեք հետաքրքրվել և սովորել ձեր ինչպես և նա մարմնացել ձեր մեջ։ Հավատացեք, վոր չես ձեր հայտնությունների և ղեցմանքների ամենահավատարիմ ավանդապահը կլինեմ։

Գույր-Աննան վոչինչ չպատասխանեց, նա յուր աչքերը հառեց իմ աչքերին, կարծես կամենալով կարդալ նրանց մեջ իմ խոսքերի անկեղծությունը։ Բայց այդ հայացքը այնքան զորեղ եր, վոր չես ակամա փախցրի իմ աչքերը նրանից։ Կարճ լռությունից հետո սկսավ խոսել.

— Ես կրկնում եմ, վոր իմ անցյալի պատմությունը չի վարող ձեզ հետաքրքրել. Կան դրություններ, վորոնց պատճառած հաճույքն ու վիշտը զգալու համար, պետք է անպատճառ այդ դրություններին յենթարկվել։ Հետևապես, նա, վոր միայն այդ դրությունների նկարագիրն է լսում և բնականաբար չի բաժանելու դրանց պատճառած հաճույքն ու վիշտը, կարող է սակայն ցավ պատճառել նկարագրողին։ Թույլ տվեք ուրեմն, վոր չես այդ մասին վոչինչ չխոսեմ։

— Ձեմ կարծում, թե դուք կամենում եք ինձ վիրավորել, բայց հավատում եմ, վոր զգալու և հասկանալու ընդունակ չեք համարում ինձ, այդ դեպքում ինձ մնում է չես առնել իմ խընդիրը,— վշտացած նկատեց չես։

— Վարպետի ապացուցանեմ, թե դուք սխալվում եք, չես կիատարեմ ձեր խնդիրը,— ասաց քույր Աննան քաղցրությամբ. բայց չես այդ կանեմ վոչ այս րոպեին։ Ինձ ժամանակ պիտի տաք ամփոփելու հիշողությանս մեջ քսան տարի առաջ տեղի ունեցած անցքերի պատմությունը։

— Շնորհակալ եմ, դուք ինձ ամենամեծ պատիվն եք տանում, ուրեմն չերեկոյան դեմ շնորհ կունենամ ձեզ լսելու,— ասացի չես։

— Այդքան շուտ, նկատեց քույր Աննան ժպտալով,— դուք ուրեմն կխնդրեիք ձեր պարտապաններին, յեթե նրանք պայմանաժամը չհարգեին։

— Այս գեղքում, անպատճառ, — պատասխանեցի յես ծիծաղելով. ձեր պարտքը այնքան մեծ արժեք ունի իմ աչքում, որ յես ժամ առաջ կկամենայի գանձել այն։

— Թող այդպես լինի, — ասաց քույր-Աննան և յես շնորհակալութիւն հայտնելով հեռացայ։

Հունիսի 11.

Նշանակած ժամին դարոցումն էի, բայց քույր-Աննային տանը չգտայ։ Ուսուցիչարանի ազախինն ասաց թե՝ նա հենց նոր սրիտը Մանիշակի հետ իշավ փոքրիկ անտառակը, որ գտնվում է յեկեղեցուց ներքև։ Ես ևս այն կողմն իջա, պարեցի նրանց, բայց չկարողացա գտնել։ Մոտիկ հասող առվակի ափին, հովանավոր լաստենու տակ, շինված եր մի տախտակե նստարան, որի վրա նստա և սպասեցի։ Ուր որ էլ լինեյին, տուն վերադառնալու համար, նրանք այդտեղից պիտի անցնեյին։

Ամարային այն գեղեցիկ յերեկոներից միններ եր, որ բնութիւնը միայն այս լեռներին և պարգևում։ Արևը թեպետ անցել եր անտառապատ սարերի յետևը, բայց նրա ճառագայթները դեռ վառում էին դյուղի հանդիպակաց լեռան դագաթը։ Միջանցուկ ձորը՝ յուր խիտ անտառներով՝ առվերի մեջ եր և զովարար գնփյուռը դուրդուրում եր այդտեղ ծաղիկն ու խոտը, մացառն ու ծառը, փչելով մերթ թույլ, մերթ զորեղ շունչով։ Անտառային թռչունները յերգում էին հատ ընդ հատ, մինչդեռ ճնճղուկները ամփոում ոչը իրենց ճռվողյունով։ Կողքիս հասող առվակը խոխոջում եր մեղմաձայն և վարսագեղ ափերը հանդարտ քերելով՝ սահում գեղի խորունկ ձորի լանջի վերը և ամփոում այնտեղ տիրող լռութիւնը։ Ես նստած սպասում էի և անտառի քաղցրարույր հովը վայելում։

Ցավ ահա քույր Աննան յերևաց ծառերի մեջ։ Նա առաջանում եր դեպի ինձ լուռ և մտախոհ։ Այդ վայրկենին նա այնքան եր վեհ ու գեղեցիկ, որ յես ակամա հայացքս սևեռելով՝ սկսա դիտել նրան անհագ հիացմունքով։ Հոյակապ հասակը, սիրաճեմ գնացքը և ազնվաշուք դեմքը նմանեցնում էին նրան անտառային մի գիցուհու, կամ հայոց պաշտած սուրբ կուլսերից միններին։ Պակասում եր միայն մի լուսապսակ, որ յուր մեջ ամփոփելով այդ հոգեսահեծ արարածին, զարձներ նրան յերկնային — այնքան գեղանի ու վեհաշուք եր նա, չնայելով որ տարիքը անցած եր քառասունից...

Մոտենալով առվակին, նա նշմարեց ինձ նստարանի վրա և ժպտաց։

— Անշուշտ չեք բարկանում, որ ես ճշտությամբ հետևում եմ պարտականիս. — ասացի ծիծաղելով և վոտքի կելա։

— Ի հարկե վոչ, ես էլ իմ պարտքը չեմ մոռացել։ Բայց իմ որիորդին ճանապարհ դնելու համար այս կողմն անցա. նա գնում է իրենց գործի տունը, որ մոտ է այս տեղից։

Մենք միասին բարձրացանք դեպի ուսուցիչարանը և նստանք բակում դանվող ծառերի տակ, ուր արդեն աթոռներ կային։ Բուլր-Աննան հրամայեց աղախնին թեյ բերել մեզ, իսկ մինչև այդ նա լուռ մտածում էր, անշուշտ կամենալով անցյալը, կարելություն չտալ, կենդանացնել հիշողության մեջ։ Քառորդ ժամից հետո նա սկսավ խոսել։

ՔՈՒՅՐ ԱՆՆԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՈՐ

— Թե քանչափես են անցել իմ մանկության որերը, չեմ հիշում, բայց այն որից, որ սկսա դիտակցաբար ապրել, դրեթե վոչինչ, նույնիսկ մի աննշան դեպք, չես չեմ մոռացել։ Տասներկու տարեկան աղջիկ էի, երբ հայրս, որ Շ. քաղաքում պաշտոնական անձն էր, ինձ կարդացնելու վորոշումն արավ։ Այդ ժամանակ աղջիկ կարդացնելը մի հազվագյուտ և միայն հարուստ տներին վայել սովորություն էր։ Լավ հիշում եմ թե այդ որը քանի մեծ տոն էր ինձ համար։ Հայրս, մինչև անգամ, մի փոքրիկ հացկերույթ էր սարքել հյուրասիրելու ինձ համար նշանակված վարժապետին, որ մեր քաղաքի ամենագիտնական քահանան էր։ Նա առաջին անգամ իմ ձեռքը տվավ մի պատկերազարդ այբբենարան։ Առաջին դասս սկսա «Ծնող ոգնյա» ինձ բառերով, բառեր, որոնց չես այդ ժամանակ թուքակի պես արտասանեցի, բայց որոնք հետո իմ դժվարաստար որերի միակ մխիթարիչ հառաչանքները դարձան...

Ես սկսա սովորել յեռանդով։ Քերականը ավարտելուց հետո, աղոթքն ու ուսուցչինը միասին սկսա։ Ցնկու տարուց հետո, իմ հոր կարծիքով, չես հայերենն արդեն ավարտել էի, որովհետև տվետարանը կարդում և թարգմանում էի, ցանկացածս նամակը գրում էի, կրոնից էլ արդեն գիտեի մի փոքր բան. ուրեմն դրանից ավել սովորելիք չեր մնում։ Այդպես եր ասում դոնե հայրս, որի հեղինակությունը մեծ եր իմ աչքում։ Բայց ուսուցիչնը դեռ չերկար պիտի շարունակեի, մինչև որ այդ լեզվով ազատ խոսելն ու անսխալ գրելը սովորեի, որպեսզի հարկավոր դեպքում,

հոբս չամաչացնելի յուր պաշտոնակիցների առաջ։ Բայց վորովհետև իմ վարժապետ քահանայի ուսերին լեզվի պաշարը մեծ չեր, ուստի հարկավոր էղավ արքունական դպրոցի ուսուցիչներից մինին վարձել։ Վերջինս, թեպետ, ծերուկ, բայց յնտանդուվ եր պարապում ինձ հետ, այնպես վոր կարճ ժամանակի մեջ, հոբս սպասածից ավելի առաջադիմություն ցույց տվի ռուսերենում։ Ես վոչ միայն ազատ խոսում ու գրում էյի, այլ և կարող էյի մանավոր վարժուհու պաշտոն կատարել։

Այնուհետև ինձ համար բացվում եր ասպարեզ համարձակ մտնելու այն շրջանները, ուր մեր քաղաքի գարգացած մարդիկ, կանայք և որիորդներն էյին լինում։ Գավառական քաղաքներում, առհասարակ, բարձր շրջանը կազմում են մի քանի պաշտոնական տներ և պաշտոնական անձանց ընտանիքներ։ Ես և՛ պաշտոնական և՛ պաշտոնական մարդու աղջիկ էյի։ Իմ հայրը, Սիմոն-բեկը, քաղաքի գավառապետի տղնականն եր։ Այդ մի մեծ պաշտոն եր այն ժամանակ։ Նա շինք ու շնորհքով մարդ եր և բավական աղդեցիկ։ Բացի այդ նա յուր բարի և միշտ ոգնող բնավորությամբ սիրելի յեր ամենին, մեծից սկսած մինչև փոքրին։

Ինչպես մեր, նույնպես և մեր շրջանին պատկանող ընտանիքներում, հաճախ տեղի էյին ունենում խնճույքներ, հացկերույթներ և պարահանդեսներ, ուր հրավիրված եր լինում քաղաքի ընտիր հասարակությունը։ Ես իմ ծնողների հետ գնում էյի անխտիր ամեն տեղ։ Սիրում էյի պարել, խոսել, ծիծաղել, ուրախանալ և ուրախացնել։ Ամենքը սիրում էյին ինձ, յես էլ սիրում էյի շատերին։ Ի՞նչ եր մտածմունքը, ինչ եր տխրությունը, չգիտեյի։ Բոլոր ժամանակ, վոր նստած էյի լինում տանը, յես զբաղվում էյի միայն մի հարցով. — ով և յերբ պիտի այցելե մեզ. ում և յերբ պիտի այցելենք մենք, ով ունի խնջույք, ով պարահանդես. յերբ պիտի պարենք, յերբ ուրախանանք... Ես մի անհոգ, անմեղ և միշտ հրճվող թռչնիկ էյի։ Նույնիսկ ծնողներս, վորոնց միամոր աղջիկն էյի յես, վոչինչ չէյին խնայում ինձ ուրախացնելու և զվարճացնելու համար։ Նրանք շրջապատում էյին ինձ ամեն տեսակ զգվանքներով։

Այսպես անցավ կյանքս մինչև իմ տասն և վեցերորդ տարին։ Իսկ այնուհետև արդեն դիպչում էյին ականջիս նոր բառեր, նոր խոսքեր։ Ասում էյին, վոր յես արդեն հարսնացու յեմ, վոր ինձ համար այս ու այն յերիտասարդը առաջարկություն է անում, վոր յես շատ գեղեցիկ եմ... Իմ ընկերուհիները նախանձով էյին նայում վրաս։ Ասում էյին ես յես գրավել, կաշկանդել եմ յերիտասարդներին, ես նրանք ամեն տեղ միայն իմ մասին են խո-

սում։ Այս խոսքերից շատերը չես չեյի հասկանում, բայց աշխատում եյի հասկանալ։

Շատ ժամանակ չեր ինչ այս նորութեյունները սկսել եյին ինձ դրագնչել, երբ անսպասե մի հանդամանք մոռացնել տվավ նրանց և իմ կյանքի ընթացքը բոլորովին փոխեց։

1864 թվականն եր։ Մեր քաղաքի հայոց հոդևոր դպրոցի համար նոր տեսուչ և նոր վարժապետներ եյին յեկել։ Ինչ մարդիկ եյին նրանք, չդիտեյի. միայն թե նրանց գալե ու սկսած գործերը մեծ աղմուկ եյին հանել քաղաքում։ Ամեն տեղ նրանց մասին եյին պատմում, խոսում և վիճում։ Այդ առիթով մեր տանը նույնես սկսան խոսել։ Մեզ մոտ հաճախող բարեկամների ու ծանոթների դրուցքն էլ այդ մարդկանցն եր վերաբերում։ Ինչ տուն կամ բնտանիք, որ մանում եյի, այնտեղ էլ նրանց մասին խոսք կար։ Ես այդ ժամանակ միայն հայոց հոդևոր դպրոցի ինչ լինելն իմացա և զարմանում եյի թե ինչից մինչև այն վոչինչ չեյի լսել նրա մասին։

Բոլոր խոսք ու դրուցքներից հայտնվում եր, որ հայոց հոդևոր դպրոցի նախկին տեսուչն ու վարժապետները հեռացված և նրանց փոխարեն նորերն են կարգված։ Այդ պատճառով քաղաքի մեջ յերկու կուսակցութեյուն եր կազմվել. մեկը՝ հին խմբի պաշտպան և նորերին թշնամի, մյուսը՝ նորերին պաշտպան և հներին թշնամի։ Հայրս, իբրև հառաջադեմ խմբի կուսակից, վերջիններիի կողմն եր և յուր աղդեցիկ ձայնով մեծապես նպաստում եր նոր խմբի ձեռնարկութեյուններին հաջողութեյան։

Անդրադառնս յես էլ սկսա այդ նորութեյուններով հետաքրքրվել։ Ամեն որ, յերբ հայրս վերադառնում եր տուն, անպատճառ մի նոր և ինձ հասկրդնելու արժանի նորութեյուն եր բերում։ Այս պատճառով նրա գալստյան յես սպասում եյի այժմ մի առանձին հետաքրքրութեյամբ։

Մի յերեկո մեր տունը հավաքվեցան քաղաքում ձայն ու կշիռ ունեցող մի խումբ մարդիկ, վորոնց հետ և նորեկ վարժապետներից մի քանիսը։ Առանձին սենյակում փակված նրանք յերկար խորհրդակցում եյին։ Շատ սպասեցի, վոր խորհուրդը վերջանար և յես իմ հարից խորհրդի ինչ լինելն իմանայի. բայց այն շուտ չվերջացավ և յես քնեցի։

Հետևյալ առավոտ հայրս հայտնեց, վոր արդեն վորոշել են մեր քաղաքում բանալ հայոց արիորդական դպրոց. (վոր առաջին փորձն եր) թե հարուստներից մինն արդեն յուր տան մի հարկը ձրիաբար դրել և ապագա դպրոցի տրամադրութեյան տվեր և թե շատ շուտով դպրոցական պարագաները պիտի պատրաստվին,

վորպեսզի աշակերտուհիների ընդունելությունն սկսվի։ — Ժիու յել, սիրելիս, կշաբունակես այդտեղ քո ուսումը, ավելացրեց հայրս, քեզ դեռ շատ բան է պակասում։

Հորս վերջին խոսքն ինձ զարմացրեց։ Ես արդեն ուսումնավարտ աղջիկ էյի համարում ինձ, իսկ նա դեռ նոր էր ասում, թե շատ բան է պակասում ինձ։

— Ի՞նչ պիտի սովորեմ այնտեղ, — հարցրի յես հեգնական ժպիտով։

— Հայերեն, սիրելիս, հայերեն, այդ բանում դու շատ յես յես ետացել։

Ես բոլորովին զարմացա։

— Բայց չէ՞ վոր դու ասում էյիր թե հայերենի համար ավետարան կարդալ ու թարգմանելը և մի փոքր էլ նամակ գրելը բավական է, — հարցրի յես տարակուսած։

— Այո, բայց այն ժամանակ քո առողջությունը թույլ էր, յես չէյի կամենում, վոր յերկու առարկայի դասերով ծանրաբեռնվես։ Բայց այժմ, վոր բավական առողջ ես, ուսմանդ պակասը պիտի լրացնես, — պատասխանեց նա։

Սակայն բուն պատճառը ուրիշ էր։ Հայրս թեպետ շատ բարի, բայց սեվեռական կարծիք ու համոզմունք ասած բաները չուներ։ Ամեն մի զորեղ լեզու կարող էր նրան իր գերին դարձնել։ Առաջ նրան այնպես էյին հասկացրել, վոր հայերեն շատ սովորել հարկավոր չէ, ուստի ինքն էլ նույնն էր կրկնել։ Այժմ հակառակն էր լսել և կամենում էր ըստ այնմ գործել։ Ես նրա այդ պահանջի դեմ, յես իսկապես վոչինչ չունեյի։ Մինչև անգամ ուրախ էյի կատարել այն, վորովհետև հետաքրքրվում էյի տեսնել թե ինչ բան է «բորիորգականը» կոչվող դպրոցը և ինչպես պիտի հավաքվին այդտեղ բազմաթիվ աղջիկներ՝ միասին սովորելու համար։

Մի անգամ հայրս հացկերույթ սարքեց և հրավիրեց հայոց ուսումնարանի տեսչին յուր վարժապետական խմբով և դրանց հետ միասին յուր կուսակցության պատկանող, քաղաքի առաջավոր անձերից շատերին, այլ և մեր շրջանի տիկիններից նրանց, վորոնք վերջին անցքերով հետաքրքրվողներ էյին։

Այդ օրը մեր տան մեջ բոլորովին անսովոր կերպարանք առավ հացկերույթը։ Չկային առաջվա հասարակ ձևի զրուցները, աննպատակ վիճաբանությունները, անհամ կատակները, անտեղի յերգ ու պարը։ Այստեղ քչերն էյին խոսում և գլխավորապես, վարժապետական խումբը։ Իսկ ետացածներն ուշադիր լսում էյին, կամ մերթ ընդ մերթ մի նկատողություն անում։ Բոլորի կերպարանքն

եղ, թեպետ ուրախ ու զվարթ, բայց աքողված եր մի ինչ վոր լրջությամբ։

Տեղի ունեցող ընդհանուր խոսակցությունը թեպետ իմ ականջներին անսովոր, այսուամենայնիվ, հետզհետե գրավում եր ինձ. յես լսում եյի այն ուշադրությամբ։ Դործ դրված բառերն ու էքսքերը մի տեսակ մռութի, ընտանի եյին թվում սրտիս։ Այդ տեսակ խոսակցությունն, հիշում եյի, վոր յերբեմն ունենում եր հոքս հետ նաև իմ դասատու քահանան, բայց հայրս արհամարանքով և հեդնությամբ եր վերաբերում նրան. ուստի վերջինս դադարեցնում եր յերկրորդ անդամ խոսելուց, վորովհետև բավական քաջություն չուներ հոքս համոզելու։

Իսկ այժմ յես բոլորովին զարմանում եյի թե ինչպես նույն հայրս, այն արհամարող, հեդնող և վոչ վոքին իրենից բարձր չհամարող մարդը խորին ակնածությամբ, աչքերը ճառախոս տեսչին հառած՝ լսում եր նրան և նրա ամեն մի խոսքին հավանություն նշան անում գլխով։

Վարքան հիշում եմ, այդ օրից արդեն արթնացավ իմ մեջ ազատ խորհելու և ազատ դործելու բնական յեռանդը։ Վորովհետև հոքս, վորին յես մինչև այն ինձ առաջնորդ և իմ կյանքի դեկավար եյի ընդունում, տեսնում եյի արդեն թափուր այն ուժից, վորը յես նրա մեջ յերևակայել եյի։ Այժմ կարծես մի նոր, մի զորեղ հեղինակություն եյի վորոնում, վորին կարողանայի հպատակվել և վորը կարողանար առաջնորդել ինձ դեպի լավագույնը, դեպի կատարյալը։ Վորովհետև բոլոր այդտեղ խոսածներից, բոլոր իմ լսածներից ու հասկացածներից յես յեկա այն յեղրակացության, թե վարքան փոքր ու չնչին արարած եմ յես, թե դեռ վարքանն շատ և պահանջում ինձ փոքր ի շատե կատարյալ լինելու համար։

Ցերբ նորից յեղող հյուրերին առաջարկվեց խմել հայոց դրպրոցների հովանավորության «կենացը», վարժապետներից մինը, վորի համար հայոց լեզվի ու պատմության դասատու եյին ասում, բարեկազմ, գրավիչ դեմքով և կրակոտ աչքերով մի յերիտասարդ, բաժակը ձեռքն առնելով սկսավ խոսել։ Նա բացատրում եր թե ինչ ազգ և դպրոցը և թե ինչ կարող և անել նա։ Այդ պատճառով խոսում եր հայոց հին անցյալից — Մեսրովպի և Սահակա դարերից. պատմում եր նրանց սկսած և կատարած գործերը, խոսում եր մեր հին վանքերի մասին և մյն գերազանց վոգվու զգացմանց համար, վոր այդ վանքերը ներշնչել եյին ուսանող յերիտասարդությանը. խոսում եր յերկար և վերջը գալիս այն յեղրակացության, թե մեր յեկեղեցին և ուսումնարանը այն անբաժան

ու սրբազան հաստատություններն են, վորոնցից ներշնչված ուժով միայն մենք պիտի մաքառենք ագիտության և խավարի բռնության դեմ։ Այո, նա խոսում եր յերկար. բայց ինչպես եր խոսում. կարդդ եք միթե յերևակայել։ Նրա խոսքերը նմանում եյին մի հորդահոս աղբյուրի, վոր խոխոջալով բղխում և անսպառ ակունքներից և դեռահասիկով մարդերի ու մարմանդների վրա՝ վռռոգում յուր ականակիտ և զվարթարար ջրով խոտ, բույս, թուփ, ծառ և ամենը, ինչ վոր պատահում և նրան ճանապարհին՝ արևի կիզիչ ճառագայթներից պաստպած ու թառամած...

Ես հիացած ու ակնկառույց նայում եյի այդ յերիտասարդին. Նայում եյի և չեյի կշտանում։ Նրա դեմքի վրա վառվում եր մի սուրբ, մի աղնվական կրակ, վորի կայծերը թափանցում եյին իմ սրտի խորքը առանց վոր յես կամենայի։ Զգիտեմ ինչու, բայց յես հետևում եյի հափշտակել նրա հայացքը, վորի մեջ այնքան կյանք ու կենդանություն եյին ցոլանում։ Նրա խոսքերը կարծես հրաշեկ յերկաթով դրոշմվում եյին իմ սրտին, յես կամենում եյի, վոր նա անվերջ խոսեր, վոր յես շարունակ լսեյի նրան... Պատահել և ձեզ յերբ և իցե դրավվիլ այնպիսի յերջով, վորը ցանկանայիք շարունակ ու անվերջ լսել և վորի լուռը ցավ պատճառեր ձեր սրտին... Ահա այդպիսի մի յերջ եր յերիտասարդի բանախոսությունը, վորի վախճանը յես չեյի ուզում տեսնել։ Բայց նա ավարտեց և դահլիճը թնդաց յերկարատև ու անլռելի ծափահարությամբ։

Այդ յերիտասարդի անունը Գարեգին եր։

Մի քանի որից հետո յես կրկին պատահեցի յերիտասարդ ուսուցչին մեր բարեկամներից մեկի տանը, ուր դարձյալ հրավիրված եր վարժապետական խումբը։ Հացկերույթն այստեղ էլ նույն բնավորությունն ուներ, ինչ վոր մեզ մոտ։ Այստեղ էլ խոսքը, զրույցը, վիճաբանության նյութը հասարակական հարցերն եյին և գլխավոր խոսողները՝ տեսուչն ու վարժապետները։ Բայց ամենին դարձյալ դերազանցեց յերիտասարդ Գարեգնի ճառը, վորը նա խոսեց նոր բացվելիք որիորդական դպրոցի մասին։ Նա մատնացույց արավ մեր որիորդների դաստիարակության անհրաժեշտությունը և հրավիրեց ներկա յեղող կանանց աշակցել այդ սուրբ գործի հաջողությանը։ Մինչև այժմ էլ դեռ կենդանի յեն հիշողությանս մեջ նրա խնամատալից խոսքերը, վորոնք դեռ այն ժամանակներից գրված են իմ հիշատակարանում և վորոնց յես այսոր մի անգամ էլ կարդացի. վորովհետև կամենում եյի անցյալը նորոգել հիշողությանս մեջ։ — «Մեր կոչումը մեծ է և սուրբ, — ասում եր նա, — վորովհետև նախախնամությունը·

նրան և հանձնել մարդկային աղքի բախտը, նրա ձեռքումն է դանվում և յեկող սերնդի ապագան։ Հետևապես մայրերը կարող են յերջանիկ անել այդ սերունդը, կամ մատնել կորստյան։ Մայրն է, վոր խնամում է այն մանկությունը, վոր կրում է յուր մեջ կատարյալ հասակի արմատները։ Յեթե այդ արմատներն առողջ են, յեթե նրանք ապահանված ջրով և ջերմակար հյութերով չեն սնվել, ապա ուրեմն ծառը հատատուն և պտուղները բարի կլինին։ Զգնաք և տարակուսել այն սերնդի առաքինության վրա, վորին դաստիարակում են առաքինի մայրեր։ Այլասերներն ապվանների կաթ չեն ջամբում և վոչ էլ դյուցազնուհիները կահճաներ են անուցանում։ Ավելի մեծ և այն ազգը, վոր արժանավոր մայրերով է հարուստ, քան այն ազգը, վոր յուր թշդանթներով է պարծենում։ Հին պատմությունից մի որինակ ավելի յուլ է ապացուցում այս ճշմարտությունը։ — Հռոմայեցիների զորքերը փախուստ տվին հայրենակից Կորիոլանի յերեսից, վորն յուր հայրենիքի դեմ ապստամբվելով, հարձակվել եր Հռոմի վրա, Թշնամի Վալսկաց զորքերով։ Քաղաքը սարսափի մեջ եր. ծերակուտի խնդիրն ու աղաչանքը արհամարվեցան, Կորիոլանը անդրդվելի յեր. նա սպառնում եր Հռոմը կործանել... Բայց յերբ քաղաքի պարիսպներից դուրս յերևաց Կորիոլանի մայրը, Պատավ Վետուրիան և վորդին դիմեց նրան դրկախառնվելու, մայրը բացականչեց. — «Հեռու խնամից... Թող տեսնեմ վորդու մոտ եմ դալիս, թե Թշնամու. դերի յեմ քո բանակում, թե մայր... Մինչև յերկար ապրեցի նրա համար, վոր քեզ տեսնեմ ապստամբ ու Թշնամի։ Ի՞նչպես համարձակվեցար ավերել այն յերկիրը, վոր ծնեց քեզ, ի՞նչպես չթուլացավ քո զայրույթը, յերբ հայրենիքի սահմանները մտար. ի՞նչպես կարողացար հեռվից տեսնել Հռոմը և չհիշել, վոր այնտեղ բնակում են մայրդ, կինդ և զավակներդ... Յեթե յես քեզ չծնեյի, Հռոմը չեր վտանգվիլ այս կողմից, յեթե յես վորդի չունենայի, ապատ կմեռնեյի իմ ապատ հայրենիքում...» Մոր խոսքերը ապստամբ վորդու սիրտը շանթահարեցին. Կորիոլանի զայրույթն իջավ. նրա վոտքերը թուլացան և մոր դիրկն ընկնելով բացականչեց. — «Մայր իմ, հայրենիքդ փրկեցիր, բայց վորդիդ կորուսիր...» և Վալսկաց ձեռքը մատնվելով, համաձայն յուր դաշինքին, սրախողող յեղավ։ Տեսեք ուրեմն թե ում և մայրը, տեսեք թե վորի դաստիարակության համար և, վոր մենք պիտի դոհներ ամեն բան։ Կանայք, վոգևորված բացականչում եր յերիտասարդը, հանեցեք ձեր զարդերը, տվեք մեզ ձեր մատանիները, ձեր գինդերը, ձեր ապարանջանները, մինչ վոր վոսկի հորթ ձուլենք ձեզ համար, այլ վոր ձեր աղջիկների կրթության և դաս-

ախարակուբյան համար հիմնենք տաճար ու սրբարան, վոր ապագայում լուսավոր, առաքինի և ձեր անվանը փառք ու պատիվ բերող վորդիք ու թոռներ պիտի շնորհե ձեզ։ Դուք, հայ կանայք, վոր մինչև այսոր օրինակելի առաքինուբյամբ ապրելով, հայ ընտանիքի սրբուբյան ու հաստատուբյան խարիսխն եյիք կազմում, իմացեք, վոր ձեզանից հետո, նուլնը լինել չեն կարող ձեր վորդինները, յեթե միայն ձեր չափով լուսավորվեն. վորովհետև դարը փոխվում է, կյանքը այլակերպվում, ապականուբյունը զորանում և առաքինուբյունը նվազում... Գնաք և այդ չարիքներին դեմ թումբեր հաստատել, այդ թումբերն են հիմնավոր ուսումը և ճշմարիտ լուսավորուբյունը։ Դրանց տարածելու համար մենք կարոտում ենք ձեր աշակցուբյան և որհնուբյանդ։

Մեր տանը յեղած ժամանակ յես հարմարուբյուն ու միջոց չունեցա ավելի մոտ ծանոթանալու այդ վարժապետին։ Բայց այստեղ դպքն ինքն իրեն ներկայացավ։ Ճաշից վերջը նա մոտենալով, ինձ և ընկերուհիներիս, տեղեկուբյուններ հարցրեց մեր ուսման ու պարապմունքի մասին։ Ցերը կարդը հասավ ինձ և յես իմ սովորածների հաշիվը տվի, նա ասաց.

— Դուք դարձյալ պիտի շարունակեք սովորել և յեթե յեռանդ ու ցանկուբյուն ունենաք, կարող եք պատրաստվիլ վարժուհի մեր նոր բացվելիք դպրոցի համար։ Կգա մի որ, յերբ մենք չենք լինիլ և դուք պատրաստված լինելով՝ մեր սկսածը կշարունակեք։ Ծուրաքանչյուր մարդու վրա, կին լինի նա, թե տղամարդ, սրբազան պարտք կա վորոշ չափով հասարակուբյան ծառայելու։ Ի հարկե, շատ ունեցողը շատ կտա, քիչ ունեցողը քիչ, բայց այդ պարտքից ազատ չե վոչ վոք։ Զգուշացեք որիորդներ, ասում եր նա, դառնալով բոլորիս, վոր ձեր ծոլկող հասակին ապարդյուն չանցնի նման բարտի ծառին, վոր ուռճանում, բարձրանում է մինչև ամպերը, բայց վոչ հովանի յե տալիս արևակեղ անցորդին և վոչ ել պտուղ՝ անկող մշակին։ Այժմյանից արդեն պիտի սովրեք, ապառվեստ լինել այն հասարակուբյան, վորին ձեր հարազատան եք անվանում։ Մի նվիրեք ձեր սիրտը վաղանցուկ հրապուրներին և վոչ ել շլացեք փայլուն յերևույթներով։ Դրանք ապուպներ են, վորոնք միվ այրկյան վառվելով յերկնակամարի վրա, ապա հանդչում, անհետանում են մթուբյան մեջ։ Հետևելով դրանց դուք կմոլորվիք և իզուր կվատնեք ձեր թանկագին հարստուբյունը, այն է՝ յերիտասարդական հասակի աննման յեռանդն ու կորովը և այդպիսով ձեր ժառանգները կմատնեք բարոյական աղքատուբյան։ Մի որ յետ կնայեք, և կտեսնեք, թե վորքան դատարկ, վորքան ապարդյուն է անցել ձեր կյանքը, բայց այն ժա-

մանակ արդեն ուշ կլինեի։ Փափուկ և անդորը ապրողից ավելի յերջանիկ և այն մարդը, վոր կյանքը նվիրում է իր նմաններին ոգնելուն, մանավանդ բարոյական ձեռնտվությամբ։ Սովորեցեք ապրել այդ կյանքով, սովորեցրեք նուրնը և նրանց, վորոնց առաջնորդ պիտի լինիք։ Այդպիսով դուք ապագա սերունդը կբաղդավորացնեք և ասվածն ու մարդիկ կորհնեն ձեզ։

Այս և սրա նման շատ բաներ եր խոսում յերիտասարդը։ Նա կարծես հետևում եր հին առաքյալներին, նպատակ ունենալով՝ Քարոզել և ուսուցանել ուր և լիներ, դպրոցում թե յեկեղեցում, ընտանիքներում, թե հրապարակում։ Նա միշտ զգացված, միշտ վոգևորված եր։ Նրա խոսքերն աղբյուրանում էին վոչ իրրև հասարակ դրույց, այլ իրրև հրահանգիչք, վոր կրակված ծորում ու թափանցում և կպպպարի ամենաթաքուն խորշերը...

Ցնվ վորքան հիացմունքով, վորպիսի հափշտակությամբ էինք լսում մենք նրա քարոզները։

Մի շաբաթ անցավ այն որից և այդ բոլոր ժամանակ յես մտածում էի յերիտասարդ վարժապետի վրա։ Նրա բոլոր խոսածները կենդանի էին դեռ իմ լսողության մեջ։ յես շարունակ վորոճում, քննում էի նրանց, կամ աշխատում բացատրել ինչվոր ինձ համար մութ ու անհասկանալի յեր մնացել։ Ցնս նկատում էի, վոր իմ մեջ սկսվում և մի ինչ վոր հնդափոխություն, մի ուժգին ձգտումն՝ լինելու այն, ինչ վոր յերիտասարդ ուսուցիչն եր կամենում։ Նա շատ լավ տպավորություն եր թողել և ծնողների վրա, վորոնք շարունակ նրա մասին էին խոսում։ Այս բանը ինձ մեծ հաճույք եր պատճառում։ Ի՞նչ տարորինակ համակրություն եր այս, վոր յես տածում էի դեպի յերիտասարդ վարժապետը, չգիտեմ, միայն թե ցանկանում էի լսել նրա մասին շարունակ։ Գարեգին անունն իսկ, յերբ արտասանում էին, քաղցր եր հնչում իմ ականջին։ Բոլորովին նոր, բոլորովին աննման բնկերության մի զգացմունք եր այս, վորպիսին յես, արդարև, չեի տածել յերբեք դեպի վոչ մի իմ ծանոթին ու ընկերուհին։ Ցանկանում էի, վոր նա իմ յեղբայրը լիներ, վոր մեր տան մեջ, մեզ հետ միասին ապրեր, վոր յես շարունակ առիթ ունենայի նրան տեսնելու, նրա դրավիչ և վոգևորող խոսքերը լսելու։ Ցերբ պատահում էի իմ ընկերուհիներից մինին, մեր խոսակցության առարկան անպատճառ Գարեգին վարժապետն եր։ Մենք բոլորս էլ համաձայն էինք նոր բացվելիք որիորդական դպրոցում նորից աշակերտելու, յեթե միայն մեր ուսուցիչը Գարեգինը լիներ։

Շատ չանցավ դպրոցի բացման որն էլ հասավ։ Ընդարձակ և գրգռարուն դահլիճի մեջ հավաքվել եր խուռն բազմություն։ Այդ-

տեղ եր սրբազանը՝ յուր քահանաներով, տեսուչն՝ յուր վարժապետական խմբով, ընդունված աշակերտուհիներն՝ իրենց ծնողների և բարեկամների հետ, դպրոցի բացման նպաստող պատվավոր քաղաքացիներն ու նրանց կանայք — դպրոցի նորընտիր խնամակալուհիները, վորոնցից մինն եր և մայրս, ապա ուսանողներ, արհեստավորներ և ուրիշ շատեր։

Ցես ել իմ ընկերուհիների հետ, առանձին կանդնած, հետաքրքրությամբ դիտում եյի հանդեսը, վոր բացվեց սրբազանի մի փոքրիկ ճառով, կաթողիկոսի կոնդակի ընթերցումով և քահանաների հոգևոր յերգերով։ Ապա դեղեցիկ և աղդու բանախոսություն արավ տեսուչը, նյութ առնելով իրեն կանանց աղդեցությունն ընդհանուր մարդկության վրա և, հետևաբար, նրանց կրթության ու զարդացման նշանակությունը՝ ընտանիքների յերջանկության և աղգերի հառաջադիմության համար։ Մեր նոր սերունդը, վոր շատ և խոսում այժմ հայ կնոջ կրթության մասին, չի հետաքրքրվում սակայն մեր մեջ սկսված այդ գործի ուսանելի անցյալով։ Ցեվ այդ և պատճառը, վոր այդ գործի հիմնադիր նա համարում և միայն վերջին ժամանակի այս ու այն գործչին, անտես անելով այդպիսով պատմական ճշմարտությունը։ Ցեթե դուք չեք պատկանում անցյալի ուսումնասիրությունից խորշող յերիտասարդների թվին, ապա ուրեմն կարդացած կլինիք տեսչի այդ բանախոսությունը 64 թվականի «Մեղու»-ի համարներում, կամ 71 թվականի «Սիոն» ամսաթերթում։ (Ցես խոստովանեցի իմ անծանոթ լինելը հիշված թվականների թերթերին)։ Հուդ չի, շարունակեց քույր-Աննան, յես ունիմ «Սիոն»-ի համարը և կատմ ձեզ կարդալու այդ ճառը, վոր կանանց լուսավորության գործի մի հրաշալի ներբողն է, վորի նմանը չեմ հիշում, թե՝ լույս տեսած լինի յերբեք հայ լրագրության մեջ և վորը մեծ նշանակություն ունի, մանավանդ այն պատճառով, վոր արտասանվել է քառորդ դար մեղանից առաջ։ Արժեր, վոր այսոր ել այդ գրվածքը կարդային ամեն տեղ և յուրաքանչյուր հայ ծնող յուր աղջիկը դաստիարակելու գործում առաջնորդվեր նրա մեջ արտահայտված մտքերով։

Բայց յես դառնամ իմ պատմության։ — Տեսուչն, վոր յուր վեհ ու պատկառելի կերպարանքով դրեթե սուրբի տպավորություն եր անում մեղ վրա, յուր այդ ճառով այնպես վառեց ու բորբոքեց ներկա յեղողներին, վոր բացի առաջ նվերներն, վոր առորդրեցին նրանք անդրանիկ դպրոցի ոգուն, այլ և քառասունից ավելի տիկնայք վորդեգրեցին աղքատներից մի-մի վորդեգրուհի՝ խոստանալով հոգալ նրանց մտավոր ու նյութական բոլոր պետությքը։

Նուիրեալ առաջնորդը հետևեց կանոնց որինակին՝ վորդեզրելով յերկու աղջիկներ։ Այսպիսով ծնունդ առավ մեր քաղաքի անդրանիկ որիորդական դպրոցն, վոր կնքվեցավ Ս. Մարիամյան անունով։

Իմ ուրախության չափ չկար, յերբ մի քանի որից հետո, հայրս առուն վերադառնալով հայտնեց, թե որիորդական դպրոցում արդեն բացվում և այն դասարանը, ուր յես և իմ ընկերուհիներս իբրև հասակավորներ, առանձին պիտի հայերեն սովորենք Գաբրիելին վարժապետի մոտ։ Ո՜հ, ինչ հրճվանքով, ինչպիսի բերկրությամբ լսեցի յես այդ լուրը և ինչպես պինդ սեղմեցի հորս իմ կրծքին։

Հասավ ցանկալի որը։ Վեց աշակերտուհիներ, բոլորս էլ համարյա մի ասպիճանի զարգացումով, հավաքված որիորդական դպրոցի մեզ համար նշանակված դասարանը, ուրախ-ուրախ խոսում և պատմում էինք միմյանց հազար և մի դպրոցական նորություններ և սպասում մեր սիրելի ուսուցչին։

Վերջապես նա յեկավ և վոզնունեց մեզ մի սրտաշարժ ճառով, ապա բաժանելով յուրաքանչյուրիս մի մի ավետարան ու Ցեղիշե ասաց. «այս յերկու դրքերը կլինեն ձեր ուսման սկիզբը և վերջը»։

Մեզանից վոչ վոք, իհարկե, չմրմնջեց իսկույն այդ խոսքերի իմաստը։ Ցես, մինչև անգամ, դժգոհ յեղա, վոր դեռ նոր պետք և ավետարան կարդամ, մի դիրք, վոր արդեն քահանա վարժապետիս մոտ կարդացել, վերջացրել էի։ Ինձ վրա, նուիրեալ, մի տեսակ հիասթափություն յեկավ։ Ցես ինչքեր էի յերազել, թե պիտի սովորեմ Գաբրիելի մոտ և այժմ ինչ դրքեր և նա մեր ձեռքը տալիս։

Բայց անցավ մի քանի դաս և յես ղոլացի իմ դժգոհությանը վրա, վորովհետև տեսա թե՝ վորքան մեծ և վորքան բարձր ուսում և յեղել այդ՝ ինձ մի զհասարակ դիրք յերևացող ավետարանի մեջ, ուսում, վորն ըմբռնելու և յուրացնելու համար հարկավոր եր մեզ դեռ յերկար աշխատություն։ Անշուշտ, նուիրեալ կլիներ և Ցեղիշեյի դիրքը, վորի մասին, իհարկե, յես չեյի կարող դեռ կարծիք հայտնել, բայց ավետարանի վրա առածս դասերից դատելով արդեն հավատում եյի իմ ուսուցչի արժանավոր ընտրությանը։

Այսուհետև մենք ուսանում էինք կրոն՝ ավետարանի վրա, լեզու՝ Ցեղիշեյի վրա, և աղգային պատմություն՝ վարժապետի բերանացի պատմածներով։

Կրոնի դասերն, իհարկե, չեյին նմանում այն դասերին, վոր մի ժամանակ ավանդում եր ինձ քահանան. չոր ու ցամաք աղոթքների փոխարեն ուսուցչին այժմ ծանոթացնում եր մեզ ավետա-

բանի վարդապետությանն, բացատրելով Քրիստոսի պատվիրանները, պարզ և դյուրըմբռնելի ոճով։ Ջկրանը, — ասում էր նա, — սովորեցնում է մեզ սիրել բարին, ճշմարիտը և ընկերը և հեռանալ այն ամենից, ինչ վոր արգելք է լինում այդ սիրո աճելությանը։ Այսպես սահմանելով կրոնը, նա աշխատում էր զարթեցնել մեր սրտերում սիրո գեղեցիկ զգացումը։ Եվ նրա աշխատությունը ապարդյուն չէր անցնում։ Գոնե իմ վերաբերմամբ կարող եմ ասել թե յուրաքանչյուր դասից հետո յես ինձ զգում եյի մի տեսակ փոխված, մի ինչ վոր թեթև ու բարձր մթնոլորտում, ինձ թվում էր, թե այդ միջոցին յես ավելի յեմ սիրում ինձ շրջապատողներին, ավելի քաղցր ու ներող աչքով նայում նրանց թերություններին։ Ինչ վերաբերում է ազգային պատմության, դա արդեն վոգևորության անսպառ աղբյուր էր մեզ համար։ Ուսուցիչն այդ առարկան ավանդում էր մեզ վեչ իբրև դաս, այլ իբրև հոգի, կենդանացնելով մեր առաջ անցյալը և սովորեցնելով, ներկայի համար, նրանից ոգտվելու ճանապարհը։

Պետք է ասել, վոր իմ ընկերուհիների մեջ ամենից ավելի յեռանդով սովորում եյի յես։ Ուսուցչիս արտասանած ամեն մի բառը, խոսքը, պատմածը հափշտակում եյի ագահությամբ։ Իսկ դրանից հետո ել վոչ մի գործ կամ զբաղմունք չեյին կարողանում հեռացնել ինձ ստացածս դասերը պատրաստելուց։ Իմ ուրախությանը չափ չէր լինում, յերբ առանց ամենաչնչոքը սխալի և դժվարության պատասխանում եյի դասերս։ Ուսուցիչը գովում էր ինձ հաճախ, բայց յես չեյի կամենում, վոր նա գովեր ինձ իմ ընկերուհիների ներկայությամբ. դրա համար ամենափոքր ինքնասիրություն անգամ չունեյի։ Յես կամենում եյի, վոր նա միայն ինքը հասկանար, թե յուր սիրած դասերը չեյի կարող չսովորել, վոր իմ միակ ուրախությունն ու ցանկությունը իրեն գոհություն պատճառելն էր։

Մի քանի ամսից հետո հայրս հայտնեց ինձ, թե ուսուցիչս խորհուրդ է տվել իրեն, հանել ինձ դպրոցից։ Յես բոլորովին զարմացա. սա անսպասելի նորություն էր։

— Ինչպես, — բացականչեցի յես. — մի՞թե նա իմ մեջ պակասություն է նշմարել։

— Վոչ, սիրելիս, նա կամենում է քեզ հետ մեր տանը պարապել, — ասաց հայրս մեղմով ժպտալով։

— Բայց պատճառը։

— Պատճառը հարգելի յե. նա ասում է թե՝ ձեր աղջիկը չափազանց ընդունակ է և սրամտիր արագ հասկացողության, բայց յուր ընկերուհիները խանգարում են նրան իրենց համր ըն-

թացքով. պետք է ձեր աղջկան ազատ ասպարեզ տաք առաջ դնալուն։

— Իսկ դու, հայրիկ, մերթե համաձայն չես,— այժմ արդեն սրտատրոփ հարցրի յես։

— Ցես կանեմ այն՝ ինչ վոր դու կցանկանաս, սիրելի աղջիկս,— ասաց նա դժվանքով և յես ուրախությունից խելագարված նրա պիրկը թռա։

— Այո, հայրիկ, յես կամենում եմ, վոր նա այստեղ, մեր տանը դասախոսե,— ասացի յես։ Իրավ վոր իմ ընկերուհիները խանդավառում են ինձ. նրանք սովորելու մեծ յեռանդ, և մեզ ցանկություն ունին։ Առաջին որերը միայն վոգևորված էյին, իսկ այժմ, ահ, յես համոզում եմ նրանց տեղ, գրեթե վոչինչ չեն սովորում։ Հենց վոր վարժապետը դասախոսում և, նրանք դարձյալ վոգևորվում են, բայց տանն վերադառնալուց՝ կրկին նույն սառն ու անդգա աղջիկներն են դառնում, ինչ վոր են իսկապես։

— Թող ցանկացածդ լինի,— ասաց հայրս,— յես կխնդրեմ Գաբրիելինին, վոր վազվանից դա մեզ մոտ։

Ահ, ինչ ուրախություն, ինչ ավետիք եր այս ինձ համար։ Ցնծի վորպիսի սիրով, վորքան խանդաղատանքով գրկեցի յես նորին իմ բարի հորը. ինչպես նրան այժմ ջերմությամբ էյի սիրում։ Ցնծի իրավ, իմ ընկերուհիները խանդարում էյին ինձ։ «Այժմ յես ասպետապատիկ ավելի յեռանդով կսովորեմ, մտածում էյի յես, իմ քանկագին ժամանակին էլ չեմ դոհիլ իմ ընկերուհիների անհնազանդ շաղակրատությանը... այժմ արդեն արագ կհառաջադիմեմ։ Ցնծի իմ յենթադրությունները սխալ չէյին։

Սկսած այն որից, վոր Գաբրիելինն յեկավ մեր տանը դասախոսելու, յես հետզհետե մեծ հառաջադիմություն արի։ Մի քանի ամսվա մեջ հայերենից արդեն բավական բան էյի սովորել, պատմությունը կիսել և կրոնի ուսմունքը գրեթե ավարտում էյի։ Այժմ իմ ուսանելի առարկաների թվին ավելացրեց ուսուցիչս և հայոց գրականության յեկեղեցական պատմության դասեր։ Հետո տալիս եր ինձ մեր մատենադրությունների ամենանշանավորները՝ շարունակ կարդալու։ Ցերբեմն ժամերով նստած՝ նա խոսում եր ինձ այնպիսի դասեր, վոր յես վոչ մի գրքում չեյի կարող կարդալ, և այդպիսի հոգեշունչ դասերին հաճախ ներկա էյին լինում հայրս, մայրս և մոտիկ աղգականները, վորոնք բոլորն էլ հիանում և մխիթարվում էյին։

Այսպես առաջ եր գնում ուսմանս գործը, վորին յես նվիրվել էյի հոգվով ու սրտով։

ՑԵՐԿՐՈՐԴ ՈՐ

Այժմ պետք է պատմեմ ձեզ իմ կյանքի, այսպես ասած, հոգևոր կողմի պատմությունը, որը իմ վերաբերմամբ բավական ախուր եղեր է պարունակում։

Իհարկե, չեմ քանդ և մի չորկար տարիներ անցած չլինելին այն ժամանակի վրա, որին պատկանում է այս պատմությունը և չեմ չես արդեն սիրով ու համոզմամբ հաշտված չլինելի այն դրության հետ, որի մեջ գտնվում եմ այժմ, ինձ համար վոչ միայն ծանր, այլ զուգև և անհնարին լիներ այդ պատմությունն անել, ինչպես և վոչ մեկին չեմ արել մինչև այսօր։ Բայց ժամանակը, որ ամեն ինչ մաշում է, հնացրել է արդեն և իմ վերքերը, թեպետ բոլորովին չեն բուժել նրանց։ Ուստի այժմ հանդիստ և առանց հուզվելու կարող եմ պատմել ձեզ բոլորը, ընդունելով, թե չես էլ այս աշխարհում ունեցա մի որ մի չեղբայր, որին կարողացա բանալ իմ սիրտը՝ անցյալի վերաբերմամբ։

Բայց տարին լրանալու մոտ, չես մի տարօրինակ փոփոխություն էր նշմարում իմ մեջ։ Մի ինչ վոր անձուկ ճնշում եր սիրտս և անհանգստացնում հոգիս։ Ինձ այլևս չէին գոհացնում սովացած դասերի հաջող պատրաստությունը և ուսուցչիս այդ առթիվ հայտնած շնորհակալությունը։ Ցերը նստում էի դաս պատրաստելու, դեռ կեսը չանցած, միաքս թռչում եր ուրիշ տեղ, աչքերս սևեռվում էին մի առարկայի վրա և չերբեմն ժամերով մնում էի այդպես, կես քուն, կես արթուն։ Ինքս էլ չգիտեի ինչու չեմ նստել անդործ, ինչի՞ վրա չեմ մտածում... Ցեվ չերբ ուշաբերելով, նորեն սկսում էի կարդալ, տեսնում էի, որ սովորածս արդեն մոռացել եմ։ Շատ անդամ փախչում էի իմ ծնողների ընկերակցությունից, քաշվում էի սենյակս, կեղծելով, իբր թե, գիրք եմ կարդում և սակայն այդտեղ անձնատուր էի լինում մտածությանն։ Ի՞նչն եր իսկապես իմ մտածմունքի առարկան, չգիտեի, կամ զուցե թվում եր ինձ թե՝ չգիտեմ... Այսքանը ճիշտ եր, որ չերևակայությանս առաջ հաճախ պատկերանում եր իմ ուսուցիչը։ Ցես նայում էի նրան կարծես զողունի հայացքով, դիտում էի նրա զվարթ և վստահ պատկերը, նրա կյանքով և կրակով լի աչքերը, լսում էի կարծես նրա քաղցրահնչյուն ձայնը, հոգևորական խոսքերը, լարատեսականները... և հանկարծ սթափվելով բարկանում էի ինձ վրա, խանդարում չերևակայությանս թռիչքը, ցրում մտածություններս և ինքս ինձանից կամենում էի փախչել, ինչպես մի մարդ, որ հալածվում է յուր խղճից՝ մի հանցանք գործած լինելուն համար։ Ցեվ սակայն խղճը չեր, որ հալածում եր ինձ,

այլ բանականություններ, որ սրտիս հետ միասին՝ փորձում եր մեղադիր լինել իմ անպատրաստ խղճին... Շատ անգամ իմ մեջ զարթնում եին հակասական զգացումներ, միմյանց հակասող հուզմունքներ։ Ներքևից մի հատարակ մտածմունք, որ կապ ուներ իմ բուռն ցանկությունների հետ, այնպիսի ուրախություն եր պատճառում ինձ, որ չես կամենում եի չորդել, խաղալ, թռչկոտել։ Իսկ չերբևիկ, դարձյալ, մի չնչին պատճառից՝ տրտմություն ու թախիծը պաշարում եին ինձ, մաքերս մոլորվում և չես ուր դանվիլս անդիտանում եի։

Մի քանի անգամ փորձեցի սոխալել ինձ, նախկին զգաստությամբ և աշխատասիրությամբ պարապել իմ դասերով, կամ առաջնին զարծերով Պատահում եր, նույնիսկ, հաղթահարում եի ինձ և շարունակում գործս ուշադիր լրջությամբ, բայց այդ լինում եր մի քանի րոպե Փոքրիկ առիթ պատահած ժամանակ մտածմունքներն ու հուզմունքը նորեն պաշարում եին ինձ։

Ցերբ ուսուցչես գալու ժամը մոտենում եր, չես, փոխանակ դասերիս ընթերցումը շարունակելու, գնում, կանգնում եի այն պատուհանի մոտ, վորտեղից նրա գալը կարող եի տեսնել։ Ցեվ չերբ նա չերևում եր, սկսում եի դիտել նրան հեռվից, քննել նրա շարժվածքը, քալվածքը և, չեթե կարելի չեր, նույնիսկ դեմքն ու հայացքը, մինչև վոր նա գալիս մոտենում եր բակը և սկսում անդադարեսալ բարձրանալ Այնուհետև չես փոքրիկ չարաճճի աշակերտի նման վազում, հավաքում եի գրքերս և նստում իմ սովորական տեղը։ Բայց սիրտս այդ միջոցին արոիում եր անհանդիստ, կուրծքս բարձրանում և իջնում. չես սկսում եի կասկածել ինձ շրջապատող առարկաներից, կարծես հավատալով թե՝ նրանք կմատնեն ինձ... Ցերբևին շփոթվելուց, մինչև անգամ, տեղիցս չեի բարձրանում՝ չերբ մտնում եր ուսուցիչս. չերբեմն ել դժվարանում եի ուղիղ նայել չերեսին։ Բայց նա ծանրությամբ նստում եր չուր տեղը, սովորական կերպով հարցնում կամ դասախոսում և առանց ամենամոքը ուշադրություն դարձնելու իմ շփոթությունների վրա՝ հեռանում։ Ուսուցչես իհարկե, չես ճանապարհ եի գնում մինչև սանդուխքը, հետո պատշգամի վրա կանգնած՝ հետևում նրան չերկար, անթարթ աչքերով, մինչև վոր նա հեռանում, ծածկվում եր իմ աչքից։ Պատահում եր նաև վոր չես ամբողջ ժամով մնում եի այդտեղ կանգնած և աչքս հառած այն կետին, վորտեղից անհետացել եր նրա չերևույթը և այդ հաիշտակված դրությունից հանում եր ինձ կամ հայրս, վոր ծառայությունից վերադառնալով՝ չերևում եր հեռվից, կամ ձայնը իմ մոր, վոր խոսում եր աղախնի կամ ծառաների հետ։

Շատ անգամ ինքս ինձ մտածում եմ թե՝ ինչ պիտի լինի իմ այս տարտամ և անհանգիստ դրության վերջը։ Ցերեկն վորոշում եմ թողնել պարապմունքս, բավական համարելով արդեն սովորածներս, վորովհետև կարծում եմ թե՝ ուսուցչիս յերկար բացակայությունը կրժշկի իմ այս հիվանդության նմանող այլայլությունը։ Բայց յերբ մտածում եմ թե այդպիսով կարող եմ զրկվիլ նրան տեսնելու, լսելու, հետը խոսելու անհուն հաճույքից, յերկյուղով շղնջում եմ — «անկարելի յե, անկարելի յե, նա յերբեք չի պիտի հեռանա ինձանից...»

Բայց ինչ տարօրինակ և անծանոթ բարեկամության մի անձուկ է այս, վոր պատել, պաշարել է ինձ, մտածում եմ յերբեմն. յես կորցրել եմ իմ հոգու խաղաղությունը, սրտիս անդորրությունը. ել ուրիշ վոչնչի վրա չեմ ուզում մտածել, ամեն ընկերություն ինձ նեղացնում, ամեն ուրախություն՝ տատակացնում է. միայն լուռ ու մութ անկյուններն են, վորոնք քաշում են ինձ դեպի իրենց և ուր խորհում, մտորում եմ միայն և միայն նրա համար... ինչ է արդյոք այս փոփոխության անունը. մթթե յես սիրում եմ նրան...

«Սիրում եմ». այս յերկու բառերն իսկ կապում, կաշկանդում էին լեզուս. յես կամենում էի արտասանել նրանց հաճախ, բայց ինքս ինձանից քաշվում էի։

Վերջին ժամանակներն ավելի ու ավելի սկսա անձնատուր լինել իմ թափուն մտածմունքներին։ Առողջությունս հետզհետե խանգարվում եր, յերեսս՝ գունդը նետում, ախորժակս փոխվում և մի ընդհանուր թուլություն սիրում եր վրաս։ Մտաղներս սկսան անհանգստանալ. — «ինչ է պատահել քեզ, ինչու գունատ ես, ինչու տխուր ես», շարունակ հարցնում էին և անհանգստացնում ինձ, սակայն յես չգիտեի ինչ պատասխանել։ «Վոչինչ», «վոչինչ»,— այս եր իմ միակ պատասխանը։

Այսուամենայնիվ յես արդեն հաշտվել էի այն մտքի հետ, թե սիրում եմ յերիտասարդ Գարեգինին... Եվ այս սերը նոր չեր, և վոչ էլ որերի կամ շաբաթների ծնունդ. նա դարբնվել եր իմ սրտում ամբողջ տարվա ընթացքում մի-մի կայծերով, վորոնք առ առակավ միանալով՝ այժմ վառում էին այդտեղ անշիջանելի հնոց սիրո և հիացման... Եվ այդ կրակն, հարկավ, յես չեյի կարող մարել. նա պետք է վառեր, բորբոքեր իմ սիրտը, գուցե նա լափեր, սպառեր իմ գոյությունը. այդ ճակատագրից այլևս անկարող էի ազատվել։ Միայն թե մի բան անհրաժեշտ եր այդ դեպքում. այն է՝ աշխատել, վորքան հնար եր, յերևալ արտաքուստ նուրնը և մշտականը, վորպեսզի ծնողներիս հետապնդությունից

ազատվելի. վորովհետև ներքին ճնշումից ավելի վատ եր ազդում վրաս արտաքին այդ ճնշումը։ Այս պատճառով հետզհետե սովորում եի ոչ միայն քողարկել զգացմունքներս, թաքցնել հուզմունքս, այլև կեղծել ուրախություն, աշխատելով նույնիսկ խաղալ, յերգել պրպեցնել շրջապատողներիս և այս ամենը նրա համար, վոր իմ ներքին աշխարհը անտեսանելի կացուցանեմ ոտար աչքերից... իսկ այս դեպքում՝ ոտար եի համարում յես ամենքին, նույնիսկ ծնողներիս։ Այսուամենայնիվ, այս դրությունն ել յերկար չտևեց։ Կեղծելն, վոր առաջ հետաքրքրությունից ազատվելու միջոց եի համարում, շուտով դարձավ ինձ անտանելի, յես սկսա ամաչել նույնիսկ ինձանից և իմ ցավը դարմանելու համար աշխատեցի՝ դիմել ապնիվ միջոցի — Ինչո՞ւ համար եմ ստորացնում ինձ, մտածում եի յես. մի՞թե արդարև հանցանք եմ գործում՝ սիրելով յերիտասարդներից ամենաազնվին և արժանավորին. ինչո՞ւ այս բանը չհայտնեմ ծնողներիս, ինչո՞ւ որն ի բուն զուր տեղը տառապեմ. մի՞թե նրանք սիրտ չունեին, զգալ չգիտեին, կամ յերբեք չե՞ն սիրել...

Հագիվ այս մտածմունքը հանգստացնում եր սիրտս, կամ միքը ինչ հանգստրում ինձ, և ահա մի ուրիշը գալիս, վոչնչացնում եր նրա ազդեցությունը... Ի՞նչ եմ ասում. մի՞թե խելագարվել եմ... հնարավոր բան և արդյոք հոգս նման մի խիստ մարդուն այսպիսի անելուը, անորինակ նորություն հայտնել։ Ո՞վ և այդ բանն արել այս քաղաքում, վորին կարող են հիշել ծերունիները... Ցավ մի՞թե սա կայծակի մի հարված չի լինել իմ պատվասեր հոգ համար, վորն այնքան բարի և ապնիվ սրտով ընդունեց յուր տան մեջ ոտար յերիտասարդին։ Կարող եր մի՞թե նա յերևակայել, թե յուր պարկեշտ, ամոթխած Աննան, այսօրինակ համարձակ ընթրությամբ ամոթահար կանե իրեն՝ յուր բարեհիշների առաջ... Ցավ մի՞թե Սիմոն-բևիկը, քաղաքի առաջնակարգ, պատվավոր և հարուստ մարդը կկապե յուր միամոր աղջիկա բաղդը մի վարժապետի հետ...

Բայց յերբ նորին առաջ դատողությունը հաղորդում եր իմ նախապաշարմունքներին, յես ինձ հարցնում եի. — Ի՞նչեր եմ խոսում, ծիքեր են այդ պատվավոր քաղաքացիները, ինչո՞վ են նրանք ավելի բարձր ու ապնիվ անձնվեր հայ ուսուցչից. մի՞թե իրենց դիրքով, իրենց հարստությամբ, կամ այն համոզմունքով, վոր իրենք իրենց համար կազմել են տգիտաբար։ Բանի փող արժե այն դիրքը, այն հարստությունը, վոր միայն իրենց անձին և գոյությանը դյուրություն տալուն և ծառայում։ Մի՞թե բարձրը և ապնվագույնը սիրել դիտցող սիրտը պիտի ակնածե այդ անկնա-

դան կուռքերից։ Ի՞նչ պետք է ինձ նրանց հայեցակետը, քանի վոր չես իմ սեփականն ունիմ։ Գարեգինն ամբողջ գլխով բարձր է իրեն շրջապատող հասարակութեյունից. այդ հարուստ ու պատվավոր մարդիկ գլուխ պիտի խոնարհեցնեն նրա աղնիվ սրտի և հայրենասեր հոգու առաջ...»

Ցեվ այսպիսի ժամանակ, չես մտածում եյի, թե սիրում եմ նրան, վորի վրա բոլոր աչքերը նայում են սիրով ու հափշտակութեյամբ, մի ներքին հպարտութեյուն լցնում եր հոգիս և չես հասատատես վճռում եյի տանել ամեն նեղութեյուն ու զրկանք, բայց յերբեք չհրաժարվել սիրածս անձից։

Սակայն այսպիսի վորոշումով ղեպացածս ուրախութեյունը դարձյալ թունավորվում եր մի ուրիշ մտածմունքով. — մի՞թե ամուլ չե այս սերը, հարցնում եյի ինքս ինձ. ինչպես իմանամ թե Գարեգինը նուչնպես կսիրե ինձ, թե նա կրաժանե իմ հրատապ ղեպացմունքը... Մի՞թե նրա վեհ, բարձրաթռիչ հոգին կարող և յերբեմեց դեպերել յեսասիրութեյան այն նեղ մթնոլորտում, ուր ապրում և իմ հոգին։ Կամ իմ մեջ մի արժանիք, վոր նրա արժանիքներից փոքրագույնին հավասարեր կամ մի ձիրք, վոր նրա հիացումը գրավեր։ Հասարակ մի աղջիկ, վողորմելի զարդացումով և ավելի ևս վողորմելի ձգտումներով, մի՞թե յես իրավունք ունիմ սիրել նրան կամ հուսալ՝ նրանից սիրվելու... Ո՜հ, վոչ, սա տգեղական մի ցնորք է, վորին իզուր հետևում է իմ թուլլ ու անզոր սիրտը։ Ավելի լավ է զգաստանամ և աշխատեմ մոռանալ նրան...» վորոշում եյի յես վերջապես և սակայն այդ վորոշումը ևս թողնում անգործադիր։

Ցեվ այսպես օրերն անցնում եյին, իսկ իմ դրութեյունը մնում եր նույնը կամ գնալով վատթարանում։ Այժմ արդեն ծնողներս պարզ կերպով հետևում եյին իմ քայլերին, աշխատելով վորսալ իմ բերանից բառեր, կամ խոսքեր, վորոնք հարկավոր եյին նրանց իմ գաղտնիքներին հասու լինելու համար։ Այդ պատճառով յես հետզհետե դառնում եյի ավելի զգաստ և խորագետ, փախուստ եյի տալիս նրանց նպատակավոր զրույցներից, կամ աշխատում շփոթել այդ զրույցները խնդրին չվերաբերող հարցերով։ Ցեվ յես, վոր առաջ ատիք եյին փնտրում միշտ Գարեգնի մասին խոսելու, կամ նրա անունը հեղհեղելու, այժմ զգուշանում եյի մինչև անգամ այդ անունն արտասանելուց։ Գուցե և իմ այսքան զգուշավոր լինելն ավելորդ եր, բայց ուրիշ կերպ հանգիստ լինել չեյի կարող։

Մի որ մենք հրավիրված եյինք մեր բարեկամներից մեկի տունը։ Գիտենալով, վոր ծնողներս անպատճառ պիտի գնան այնտեղ, վո-

բովհաև խոստացած եյին, յես հայտնեցի թե դլխացավ ունիմ, ուստի չեմ կարող ընկերանալ իրենց։ Մնողներս առանց դժվարության թողնելին ինձ տանը, աղախնի հետ, և իրենք գնացին։

Մի ժամից հետո Դարեդինը ալիսի գալ դասի։ Իմ դլխում մի հանդուգն միտք հղացավ, այն է՝ բանալ նրա առաջ իմ սիրտը և անկեղծությամբ խոստովանել դեպի իրեն ունեցած չնմաստին սերը։ — «Ինչ ալիսի անե նա ինձ, մտածում եյի յես յերկչոտ սրտին հատուկ դղրդությամբ. շատ, շատ, գուցե, մի նախատինք, կամ հանդիմանություն լսեմ նրանից. այն ժամանակ ավելի լավ, յես կրժշկվիմ այս մաշող ցավից, կվերադառնամ իմ նախկին, խաղաղ դրությանը։ Իսկ յեթե նա կասե թե բաժանում է իմ դգացումը, ճշ, այն ժամանակ, հետո ինձանից թախիծ ու մտածմունք, այն ժամանակ արդեն յես ամենայերջանիկ աղջիկը կլինիմ աշխարհում և նույնիսկ այդ յերջանկությամբ զորացած կվոչնչացնեմ իմ ճանապարհը փակող արդելքները. կմեղմեմ նույնիսկ, իմ հոր խոստաբանությունը և կսառնամ մորս սրհնությունը։

Ցեվ այս մտածմունքով վոգևորված՝ սպասում եյի իմ սիրելի ուսուցչին։

Առաջին անդամ, յերբ նրա վոդջույնը լսեցի, սիրտս մի հանկարծական վոսոյուն արավ, վորին հաջորդեց անհանդիստ և յերկարատև բարախում։ Այդ ժամանակ աչքս ընկավ հանդիպակաց հայելուն և յես տեսա թե ինչպես շատացել եմ։ Իմ այս որինակ հուդմունքից սաստիկ ամաչեցի։

Դաս ասելու ժամանակ յես զբաղվել սլսլալված եյի, մաքերս չեյի կարողանում ամփոփել, սովորածս մոռացել եյի։ Տեսնելով, վոր այլայլությունս գնալով ավելանում է, «ներեցեք ինձ, խընդրեմ, ասացի ուսուցչին, այսօր դաս ասել չեմ կարող, սաստիկ հուդված եմ»... Այս ասելով սկսա դրքերս ժողովել։

Իմ այս տարօրինակ վարմունքը զարմացրեց Դարեդինին։ Մի քանի րոպե նա լուռ մնաց հայացքն իմ աչքերին և ապա հարցրեց.

— Ի՞նչ և պատահել ձեզ, որիորդ, միայն այսօր չե՞ վոր հուդված եք դուք, վազուց և ինչ յես նշմարում եմ ձեր մեջ մի տարօրինակ վոփոխություն... վե՞չ դեպի լավը։ Դուք չունեք այլևս սովորելու այն աշխուժը, վոր դոհություն եր պատճառում ինձ. ձեր ընդունակությունը, կարծես, կիսով չափ կորցրել եք։ Արդյոք վորևե տկարություն ունի՞ք։

Ցես աչքերս դետնին հառած չեյի պատասխանում, բայց սիրտս անհանդիստ տրսփում եր։

— Խնդրում եմ ասացեք, ունի՞ք վորևե հիվանդություն, — հարցրեց նա նորեն։

— Վոչ, — պատասխանեցի յես կիսաձայն։

— Ուրեմն առողջ եք։

— Թէթևաբար, վոչ...

Գարեգինը ծիծաղեց...

— Այդ ինչ և նշանակում, հիվանդութիւն չունիք և միևնոյն ժամանակ առողջ չեք։

— Այդ նշանակում է թէ... Ես չկարողացա շարունակել։

— Ինչ է նշանակում. խոսեցեք, ինչու յեք լռում։

— Այդ նշանակում է թէ իմ հիվանդութիւնը այն տեսակներից է, վոր աչքի ղարնել չի կարող։

— Այսուամենայնիվ հայտնեցեք մեզ ձեր ցաւը, ցույց տվեք նրա տեղը, դուցե կարողանանք տեսնել և բժշկել, — նկատեց նա ժպտալով։

— Ո՛չ, նա շատ խորն է... այնտեղ ուր մարդկային աչքը թափանցել չի կարող, — ասացի յես ջերմութեամբ և հետզհետե սիրտ առնելով։

— Ձեր խոսքերը չեմ հասկանում, — նկատեց ուսուցիչս։

— Ուրեմն ավելի պարզ ասեմ, իմ հիվանդութիւնը գտնվում է իմ սրտի, իմ հոգու մեջ...

Գարեգինը մի անհանգիստ շարժում արավ և լռեց։

— Դուք հարցնելու այլևս վոչինչ չունիք, — նկատեցի յես, աչքերս դեռևին հառած։

— Ել ուրիշ ինչ հարցնեմ, ասում եք ձեր հոգին է հիվանդ, դրա համար բժիշկ չկա, դուք ինքներդ պիտի բժշկեք ձեզ։

— Բայց քանի վոր չեմ կարողանում...

— Դիմել եք դուք ձեր ծնողներին։

— Վոչ։

— Ուրեմն հանձնեցեք ձեզ նրանց խնամքին և վստահ յեղեք նրանց բարութեան և դեպի ձեզ ունեցած սիրույն վրա։ Նրանք կարող են ձեզ ոգնել և, յեթե հնար է, նաև բժշկել։

— Բայց յեթե յես դիմեյի ուղղակի նրան, ով վոր այս հիվանդութիւնը պատճառել է ինձ, մի՞թե նա չեր կարող բժշկել, — հարցրի յես ջերմութեամբ և դողացող ձայնով։

Ուսուցիչս թափանցել եր սրտի խորքը։

— Որիորդ, յես ակամա ինձ չդնվերաբերյալ խոսակցութեան մեջ մտա, — նկատեց նա, — յեթե ձեր ծնողներն այստեղ լինեյին, յես հարկ չեղածը նրանց հետ կխոսեյի և դուցե, կարողանայի իմ աված խորհուրդներով ոգնել նրանց ձեզ ապաքինելու։ Բայց քանի վոր նրանք բացակա յեն, թուլլ ավեք, վոր այս հարցի մասին ուրիշ անգամ խոսվի...

Ցնա կամենում էլի լռել, բայց մի ներքին ձայն դրդեց ինձ խոսել։

— Այսուամենայնիվ, դուք հենց այժմ կարող եք ինձ ասել թե իմ հոգուն այս հիվանդությունը պատճառող մարդուն կթե դիմեմ, կարող եր նա ինձ բժշկել, — հարցրի կրկին, աչքերս միշտ խոնարհած։

— Չգիտեմ, կթե դուք կարծում եք թե նա կարող է բժշկել, դիմեցեք, — պատասխանեց նա անփույթ կեղանակով։

— Ուրեմն բժշկեցեք իմ հոգին. դուք եք նրան հիվանդացրել. կես ձեզ եմ դիմում, — բացականչեցի հուզված և այնպիսի համարձակությամբ, որ ճնշման դեմ ապստամբող հոգիներին և հասուկ։

Ցերիտասարդը միայց շվարած։ Ըստ երևույթին նա չեր սպասում այս դիմումին, ուստի և չգիտեր ինչ պատասխանել։ Իսկ իմ մեջ յուսադրը հետզհետե ավելանում և յերկյուղը տեղի յեր տալիս անկեղծությանն, կես, զրեթե ինձ մոռացած, շարունակեցի։

— Լսեցեք, սիրում եմ ձեզ... սիրում եմ ջերմ, սրտագին և անվերջ սիրով և կես հանցավոր չեմ... դուք վառեցիք իմ մեջ այս կրակը, — և այս խոսքերի հետ միասին, զրեթե հաշիշահարվով, առի նրա ձեռքը և սեղմեցի իմ շրթունքներին։

Մի թույլ, անլսելի հառաչանք դուրս թռավ յերիտասարդի սրտից, նա նայեց ինձ հրացայտ աչքերով և ձեռքը քնքշությամբ հետ քաշելով, տեղից բարձրացավ։

— Ցես կաշխատեմ ոչնչել ձեզ վրա տպավորիչը ձեր հիվանդությունից, դուցե և բոլորովին մոռանաք այն, — ասաց նա լուրջ և սառը յեղանակով, տպա «Միայք բարով» ասելով դուրս գնաց։

— Ո՞, վախ, նա ինձ չե սիրում, նա չե կարող սիրել, նա արհամարհում և ինձ... դուշեցի յես արտասուքից խեղդվող ձայնով և սրտաբեկ ու հուսահատ ընկնելով բազկաթոռի վրա սկսա դառնապես լալ։

Հետևյալ որը մեծ տպավորի մեջ եյի։ Իմ համարձակ վարվուշն անհայտ յելք եր առացել։ Իսկապես չգիտեյի թե ինչպես պիտի բացատրեյի Գարեգինի խորհրդավոր խոսքերը. — «յես կաշխատեմ ոչնչել ձեզ, վոր տպավորիչը ձեր հիվանդությունից, դուցե և բոլորովին մոռանաք այն», ասաց նա։ Ի՞նչ եր նշանակում այդ։ Ա՞րդյոք մերժման խոսքեր եյին դրանք։ Ցե վոր մոռացումը հետևանք և լինում անհույս սիրույն... Ցեթե այդպես և, ինչու՞ ուրեմն այս անմիտ քայլն արի. ինչու՞ նվաստացա նրա առաջ... Մթթե մի համեստ և որինավոր աղջիկան կվայելեր այդպիսի հանդուգն վարմունք, մտածում եյի յես ու տանջվում։ Ապա ցանկանում եյի, վոր նա այդ որը չգար, վորովհետև յերեկվա

անցքից հետո յես քաղաքացուն չէի ուշադրում նրա յերեսը յեր-նելու։ Մյուս կողմից ել մտածում եմ լավ կլիներ վոր դար, վոր-պեսզի նրա հայացքից ու խոսքերից կարողանայի վերջնականապես իմ ճակատագիրը վորոշել։ Ճիշտ է, սկզբում ծանր կլիներ ինձ դեմ առ դեմ խոսել հետը, բայց դրանով հետո իմ տանջանքը կին-վազեր։

Վորքան ուժ ունեյի, ժողովեցի դաս պատրաստելու, վորպեսզի դանե այսօր կարողանամ մի բան պատասխանել։ Կարդացի, դրեցի, բայց առանց վոչինչ հասկանալու և մեքենայաբար։ Հետո նստա իմ սովորական տեղը, պատուհանի առաջ և սպասեցի նրան։ Ժամը տասներկուսը զարկեց։ Ուր վոր է նա պիտի յերևար. այս նրա զբաղման ժամն եր։ Սիրտս սկսավ անհանգիստ տրոփել։ Շարու-նակ մտածում եյի թե ինչպես պիտի նրա դեմը յելնեմ։ Մտքիս մեջ խոսքեր, դարձվածներ եյի պատրաստում, վորպեսզի հար-կավոր դեպքում պատշաճավոր պատասխան տամ։ Մինչև անգամ մտածում եյի թե՝ դեմքի ինչ արտահայտությամբ պիտի վողջու-նեմ նրան կամ նրա վողջույնն առնեմ։

Սակայն անցավ քառորդ ժամ, անցավ կես ժամ և նա չկար։ Այսուամենայնիվ, յես սպասում եյի։ Գնում եմ մի անակնկալ դեպք ուշացրել է նրան, նա անպատճառ կգա» մտածում եյի յես։ Բայց անցավ ամբողջ ժամ և նա դարձյալ չկար։ Սա չորոշություն նշան եր, վորովհետև Դարեգինը, բոլորների հակառակ իսկ ճշտա-պահ եր։ — Գլինի թե ինձանից հեռացել է բոլորովին, մտածեցի յես և մի զարհուրելի յերկյուղ իմ սիրտը ճմլեց։ Վայրկյանները սլանում եյին և ինչպես արագ, ինչպես սրընթաց։ Վերջապես յերկ-րորդ ժամը զարկեց։ Ինձ հրավիրեցին ճաշի և յես մտա սեղանա-տուն։

— Այս ինչ է, վարժապետդ այսօր չեկավ, — հարցրեց հայրս։

— Վախ, յերևի մի անակնկալ դեպք արգելել է նրան, — պա-տասխանեցի յես, ինքս իմ խոսքերից վախենալով։

— Բոլորովին անսպասելի յեր, — հարեց մայրս, — ամբողջ տարվա մեջ նա յերբեք չէ բացակայել, չլինի հիվանդ է։

— Կարող է պատահել, յերևի կիմանանք, — ավելացրեց հայրս և սրանով հարցը փակվեց։

Բայց նրա «յերևի կիմանանք» խոսքը դող հանեց սիրտս։ Ցես զուշակում եյի նրա չգալու պատճառը և չդիտեյի ինչ անել ամբողջապես լինելուց ազատվելու համար։

Մեծ տանջանք կրեցի ծնողներիս հետ ճաշի ժամին անցնելու համար. ախորժակ չունեյի, բայց պետք է ուտեյի, խոսելս չեր գալիս, պետք է խոսեյի, ախորժությունը սիրտս ճմլում եր, պետք

և զվարթ յերևայիլ։ Ուրիշ անդամ, դուցե, այդքան չաշխատեյի ծնողներիս ուշադրությունն ինձանից հեռացնելու, բայց այդ որեն, ինձ թվում եր թե իմ լուրթյան ու տխրության ամեն մի վայրկյանը կարող եր ինձ մատնել։ Ո՜հ, ինչպես ծանր և կեղծել, ինչպես ծանր և ծածկել... Մթթե յես այդ բանների համար եյի ստեղծված։ Ցավ սակայն հարկը ինչ բաների չե վարժեցնում մարդուն։

Սկզբնից հեռանալս և իմ սենյակում փակվելս մեկ յեղավ Աղախնին պատվիրեցի վոչ վոքի չթողնել ինձ մոտ մտնելու, առարկելով թե կարևոր պարապմունք ունեմ։

Մտնելով սենյակս, սկսա դարձյալ անձնատուր լինել իմ մտածմունքներին։ Բայց տեսնելով, վոր դրանով միայն ուղեղս եմ լրում և ուժերս սպառում, վորովհետև տանջվելուց դատ ուրիշ բան չեյի առաջացնում, աշխատեցի քնել։ Դա միակ միջոցն և մաշող մտմտուքից զերծ մի քանի ժամ ազատվելու համար, յերեք միայն հաջողվի բարեբախտաբար քնելն ինձ հաջողում եր։

Հետևյալ որը նուշնակս Դարեդինը չերևաց։ Իմ մեջ այլևս կասկած չմնաց, վոր յերիտասարդն իր մշտական բացակայությամբն և կամենում իմ հիվանդությունը բուժելը։ Դա մի սարսափելի հշմարտություն եր ինձ համար։ — «Այս ինչ արի, ինչ չարիք բերի իմ գլխին, մտածում եյի յես, դրանև առաջ ամեն որ տեսնում եյի նրան, խոսում եյի հետը մի ժամ, իսկ այժմ ինչ և իմ դրությունը...»

Այս ամենի վրա ավելացավ և շուտով ամբողջապես լինելու յերկյուղն, յերբ յերևեկյան գեմ հայրս գնաց հողերը զբոսնացրու, ուր բնակում եր Դարեդինը, նրա բացակայության պատճառն իմանալու։

Տեր ասածած, վորքան հոգեկան տանջանք կրեցի յես այդ մի ժամվա մեջ... Արդյոք ինչ պիտի ասեր նա հորս, ինչ պատճառ պիտի բերեր, չե՞ վոր իմ խոստովանության պատմությունը պիտի աներ... իսկ իմ հայրը... ո՜հ, խելագարվում եյի. վորպեսզի ամոթով, վորքան ճնշվելով պիտի լսեր նրանից յուր պարկեշտ, ամոթխած ճանաչված աղջկա անլուր, անպատկառ արարքը... ո՜հ, ինչպես ծանր, ինչպես անտանելի յեր այդ, սիրտս ուժգին բաբախելուց, ասես թե, կամենում եր դուրս թռչել, գլուխս այրվում եր, մի վայրկյան հանդիստ չեյի գտնում. մերթ նստում, մտածում եյի, մերթ նորեն վեր թռչում տեղիցս. չգիտեյի ուր գնալ, ուր դիմել, նուշնակն իսկ սենյակները հալածում եյին ինձ. իմ պարտավորության սեղանը, իմ գրքերը՝ բոլորն էլ այդ վայրկենին զարձել եյին առելի, վոչնչով զբաղվել, վոչնչով իմ մտքերը ցրել չեյի կարողանում։

Վերջապես որհասական վայրկյանը հասավ, հայրս յերևաց բակում։ Բայց, ախ ղարմանք, հենց այդ րոպեին էլ իմ հուզմունքը դադարեց, հուսահատությանս ու յերկյուղիս հաջորդեց քոլորովին ուրիշ, ինձ անծանոթ մի զգացմունք. իմ հոգին նոր ուժ ու կորով սացավ, նա կարծես պատրաստվում եր ապստամբվելու իրեն ճնշող, կաշկանդող ուժերի դեմ։ — Այո, սիրում եմ, այդպես էլ կասեմ, յես հանցանք չեմ գործում, ուրեմն վախենալու յել վոչինչ չունիմ...» ասացի ինքս ինձ և աներկյուղ սպասեցի հորս ներս գալուն։

— Վարժապետդ շատ ավարտելու դրելիք և ունեցել, այդ պատճառով չե յեկել. շատ ներողություն եր խնդրում. յես ասացի — վոչինչ, մի նեղանաք։ Բայց վաղվանից կդա, — ասաց հայրս սենյակը մտնելով։

Ցես միացի ապշած, չեյի կամենում հավատալ ականջներիս, ուրախությունը կարծես չեր դորում մտնենալ իմ կծկված սրտին... «Մի թե այս ճշմարիտ է. մի թե նա ճշմարիտը խոսեց...» մտածում եյի յես։

Բայց վորովհետև հայրս ուրիշ վոչինչ չասաց և հանգիստ սրտով մտավ սեղանատունը քեյֆ խմելու, ուստի իմ մեջ այլևս կասկած չմնաց, վոր անցյալ որվա պատմությունից նա վոչինչ չգիտե։ Վասնզի հայրս չեր այն մարդկանցից, վորոնք առանձին շնորհք են ունենում ամեն տեսակ զաղտնիք իրենց սրտում ծածկելու, իսկ դեմքի վրա հակառակ զգացմունք արտահայտելու։ Ցեթե նա ունենար մի զաղտնիք և ստիպված լիներ ծածկել, այնքան անշնորհք ձևով կաներ այդ, վոր ամեն վոք կզուշակեր յուր զաղտնիք ունենալը։

— «Ազնիվ և առաքինի յերիտասարդ, այժմ ավելի քան յերբեք սիրում եմ քեզ... բացականչեցի յես, յերբ միացի միայն իմ զգացմունքների հետ. այսուհետև այլևս տխրությունն ու մտածմունքը թող չհուզեն ինձ. յես լուռ, անմռունչ կսիրեմ քեզ և յեթե դու չբաժանես իմ զգացմունքը, գոնե չես արգելիլ սիրել քեզ... ինձ այնքանն էլ բավ է, վոր ամեն որ քեզ տեսնելու, քեզ հետ խոսելու բաղդը ունենամ...»

Հետևյալ որը Գարեգինն յեկավ յուր ժամանակին։ Նա նույն հանգիստ ու զվարթ դեմքով վողջունեց ինձ, ինչպես և առաջ։ Հարկ չկա ասելու, վոր ամբողջ դասի ժամանակ յես չեյի համաձակվում աչքերս բարձրացնել։ Բայց յերեկվանից արդեն յերբ հուզմունքներս անցել եր, յես բավական դաս եյի պատրաստել, բավական գրել եյի և այս եր, վոր մի փոքր անզգալի յեր դարձնում մեր այդ որվա տեսակցության ազդեցության ծանրությունը։

Գարեգինն ուրախ տրամադրությամբ հետևյալ դասերը խոսեց, կարդալու համար նոր գիրք նշանակեց, գրելու նյութ տվավ և քաղցրությամբ վողջունելով դուրս գնաց։

Ցերեկը այնպես հանգիստ, այնպես ուրախ չէյի զգացել ինձ, ինչպես այժմ։

Սրանից հետո մի շաբաթ ևս նա շարունակեց յուր այցելությունները։ Բայց այդ բոլոր ժամանակ նա կարծես յուր աված դասերի ու սովորեցրածների վերջաբանն էր կազմում, նշանակելով միայն կարդալու հատվածներ և տալով շարադրության նյութեր։ Մի մի անգամ էլ հիշեցնում էր թե այսուհետև ավելի առաջ գնալու համար ինձ հետում էր միայն շարունակ կարդալ և կարդացածից ոգտվել, այնպես վոր յուր գալը, գրեթե, ավելորդ էր։

Վերջին ուրբաթ նա միայն շարադրելու մի նյութ տվավ, այն է՝ գրել «մարդկային պարտուց» վրա, պատվիրելով՝ բաժանել իմ շարադրությունը յերեք մասերի և բացատրել նրանց մեջ թե, վիրն և մարդկային պարտքը առ աստված, առ ընկերն և առ անձն։

— Այդ գրությամբ դուք պիտի ազատվացանեք, վոր իմ այսքան ժամանակվա աշխատությունն ազարդյուն չե անցել,—ասաց նա, յես կամենում եմ իմանալ թե վիր աստիճան իրավունք ունիմ այսուհետև պարծենալ ձեղմով ուրիշների առաջ։

Այս խոսքերն արդեն բավական էյին նույնիսկ բանաստեղծական ավյուն ներշնչելու ինձ։ Ես ամբողջ որը և գիշերվա կեսն աշխատեցի իմ շարադրության վրա։ «Մարդկային պարտքն առ աստված» շարադրելուց հետո, յես յերկար կանգ առի «մարդկային պարտքն առ ընկերն» մտքի վրա։ Ծողովեցի իմ յերևակայության առաջ պատմության նշանավոր հերոսներըը, հայտնի հայրենասերները, ժողովրդի նահատակները, թվեցի նրանց գործերը, դրվատեցի անձնազոհության դաղափարական բարձրությունը, առաջ բերի Քրիստոսի այն մեծախորհուրդ խոսքը թե՝ «ամեն ամեն ասեմ ձեզ, յեթե վոչ հատն ցորենոց անկյալ յերկիր մեռանիցի՝ ինքն միայն կա, ապա յեթե մեռանիցի, բազում արդյունս առնե» և իմ բացատրություններն ու մակաբերությունը կցեցի նրանց։ Շատ քիչ գրեցի սակայն «մարդկային պարքն առ անձն» մտքի մասին, բավականանալով միայն բացատրությամբ այն խորհուրդների, վոր կրոնը տալիս և մեզ «աստուծո պատկերի և նմանության» հետ վարվելու համար։

Իմ շարադրությունը շատ հաջող դուրս յեկավ և յես գոհ սրտով գնացի պահելու։ Ինձ յես, դեռ չգիտեյի թե, վորքան ծանր ու դժվարին և գործով կատարել այն, ինչ այնքան հափշտակությամբ դովել դրվատել եյի... Ցեթե մարդիկ լավ գործերը նախ

կատարելին և ապա նրանց մասին գրելին, որքան քիչ բան կունենայինք այդ առթիվ կարդալու...

Հետևյալ օրը Գարեգինը վաղշյալ ժամանակից ուշացավ։ Հայրս արդեն ծառայությունից վերադարձել եր և մենք նստած հենց Գարեգնի վրա էինք խոսում, յերբ նա ներս մտավ։ Հետո իմացա, որ նա դիտմամբ եր ուշացել։

— Շատ ուրախ եմ, որ ծնողներդ էլ այստեղ են, — ասաց նա, նրանք էլ ձեր շարադրության ընթերցումը կլսեն. հապա, բերեք, կարդացեք։

Ցես ուրախությամբ վերցրի սեղանի վրայից իմ յերեք թերթից բաղկացած շարադրությունը և սկսա սարդ ու մեկին առոգանությամբ կարդալ։

Կարդացի, յերկար կարդացի։ Գարեգինը մերթ ընդ մերթ ընդհատում եր ինձ «հեցցիք», «ապրիք», «շատ դեղեցիկ» խոսքերով։ Ցերբ յես ավարտեցի, նա սկսավ խոսել.

— Իմ ուրախության չափ չկա, բոլոր աշխատությունս վարձատրված եմ տեսնում այսօր. յես գոհ եմ, — ասաց նա և ի նշան շնորհակալության իմ ձեռքը սեղմեց։ Ապա դառնալով ծնողներիս՝ շարունակեց. — Այսուհետև որիորդ Աննան ինքը կարող և առաջ գնալ, որքան և ցանկանա։ Նա հայերեն լավ գիտե, պատմությունն սովորել և, ուսուցչենին տեղյակ եմ. նրան ճնում և կարդալ և միշտ կարդալ։ Բայց այդ էլ, իհարկե, զգուշավոր ընտրությամբ։ Վոչինչ այնպես չի խանգարում կանոնավոր զարգացումն, ինչպես խակ մտքերով և մոլար վարդապետությամբ առդրված գրքերը կամ լրագիրները։ Այդ պատճառով յես ինքս կարող եմ միշտ ընտրել ընթերցանության համար ալիտանի գրքերն և ուղարկել որիորդին կարդալու։ Ինչ վերաբերում է ինձ, յես իհարկե այսօրվանից որիորդի նկատմամբ հանձն առածս պաշտոնը կատարած վերջացրած եմ համարում, հետևապես և ձեզ ամեն որ այցելելու պատիվը չեմ ունենալ։

Վերջին հայտարարությունը կարծես ինձ հարվածեց և բոլոր աուսը գլխիս շուռ բերավ. բայց յես ջանք արի պահել ինձ զորով։

Ծնողներս յերկար և ջերմաջերմ շնորհակալություն արին ուսուցչիս, խնդրելով նրան հաճախ այցելել իրենց։ Ցես ևս իմ շփոթությունը հայտնի չկացուցանելու համար, վերկացա տեղից և հանդիսավոր ձևով ասացի.

— Ձեր յերախտիքն այնքան մեծ է ինձ վրա, որ յես վոչնչով չեմ կարող փոխարինել։ Այդ պարտքի ծանրությունը ինձ անզգալի անելու համար, պետք է որ դուք պաշտոնական բա-

բնակամ լինելուց դադարեք։ Իմ ծնողները ձեզ կընդունեն իրենց սիրելի զավակ, իսկ ես՝ իմ հարազատ քեռորը տեղ։ Այցելեցեք մեզ, խնդրում եմ, կարելություն չափ հաճախ։ Մենք միշտ սիրով պիտի սպասենք ձեզ։

— Այո, այո, խնդրում ենք, շատ ենք խնդրում, դուք մեր զավակին, մեր ընտանիքի անդամն եք, — գրեթե միաբերան ասացին ծնողները։

Գարեգինը շնորհակալություն հայտնեց և խոստանալով, որ կարողացածին չափ կաշխատեն մեզ այցելել, զողջունեց և դուրս դնաց։

Ճիշտ հետևեցի նրան մինչև բակի դուռը։ Ճիշտ յերբ նա այդ տեղից դուրս գալիս պարզեց ինձ ձեռը վերջին «մնաք բարովը» ասելու, յես ջերմությամբ առի այն իմ ձեռքի մեջ և նկատեցի.— այսուամենայնիվ, պարոն Գարեգին, մնաց դարձյալ մի դառ, որ չպիտի ուսանելու...

— Վերն է այդ դասը, — հարցրեց նա ժպտալով։

— Ա՛յն է թե՝ ինչ պետք է անել խեղճ որիորդը, որի սրտում վառված սուրբ սիրո կրակն անարգվում է, նուվնիսկ սրբությանը պաշտպանից։

— Դուք այդ դասը սովորելու կարիք չունիք, որիորդ, — պատասխանեց յերիտասարդը ծանրությամբ, որովհետև սրբությունը չի կարող անարգվիլ յուր յերկրպագուից...

Ճիշտ նա մի քաղցր հայացք ձգելով վրաս, ջերմությամբ սեղմեց ձեռս և հեռացավ։

ՑԵՐԲՈՐԴ ՈՐ

Վարքին մատաղությունների պատճառ դարձան ինձ համար Գարեգինի բաժանման րոպեին արտասանած վերջին, խորհրդավոր խոսքերը։ «Սրբությունը չի կարող անարգվիլ յուր յերկրպագուից» ասաց նա։ Ո՞վ եր արդյոք այդ «յերկրպագուն», կարող եյի միթե հուսալ թե նա ինքն է, իսկ դրա համար ունիյի յես ապացույց, դեթ մի թուլլ փաստ, ավելի, և վոչ միւ Ճիշտ նա բաժանում լիներ իմ զգացումներն, ինչու՞ ապա դիտմամբ պիտի հեռանար ինձանից։ Նա ամենալավ պատրվակն ուներ մեզ մոտ հաճախելու, միշտ ինձ հետ տեսնվելու, վորովհետև նա իմ ուսուցիչն եր... Բայց նա, վոչ միայն այդ պաշտոնից չհամեցավ ոգտվիլ, այլ և ինձանից բոլորովին հեռանալու համար կիսատ թողեց ուսմանս գործը։ Միթե, արդարև, յես այլևս սովորելու վոչինչ չունեյի... Բայց չե, նա չհամեցավ, յուր հաճախակի այցելություն-

ներով առավել ևս բորբոքել մի անգամ արդեն վառված կրակը։ Անարգանք եր այս, ուղղված իմ անկեղծ խոստովանությանը, քո բարձրագույն սիրո ապացույց՝ դի չկամեցավ յուր բարոյական խնամքին և դաստիրակության հանձնված մի որբուհի թուլությունից ոգուտ քաղել,— ճիշտը չդիտեցի, միայն յես հակված եյի դեպի վեր՝ Չին կարծիքը։

Անցավ մի ամբողջ շաբաթ և յես Գարեգինին տեսնել չկարողացա։ Նա մեզ մոտ չեկավ, իսկ յես պատրաստ չեյի կարող։ Մի քանի անգամ մտադրվեցա այցելել որիորդաց դպրոցը, նրան այնտեղ պատահելու հուսով, բայց ամեն անգամ ել պատվաստությանն զգացումը թույլ չտվավ ինձ այդ անել։

— Ինչու՞ այդ աստիճան սառրանալ,— մտածում եյի յես,— յերթե նա պատճառներ և սեղմում ինձանից հեռու մնալու, մինչև կվայելի, որ յես յերթամ նրան պարելու։ ի հարկե, վե՛չ։ Դուցե հենց այդ վարմունքով նա կամեցել և զգալ տալ ինձ թե՝ իմ մասին նա բնավ չե մտածում։ Ինչու՞ ուրեմն քաղաքավարություն չունենալ մոտացության տալ նրան...» Ցավ յես այնուհետև վորոշում եյի աշխատել մոռանալ նրան։

Բայց մինչև այդ հնարավոր եր, մինչև յես այդ կարող եյի անել։ Այդ տեսակ վորոշումներն վոչ այլ ինչ եյին, յերթե վոչ քանի փորձեր ներքին հրդեհի ուժը մի քանի ժամերով միայն թուլացնելու։ Անցնում եյին այդ ժամերն և ահա հրդեհը զարձյալ բորբոքվում, զարձյալ նոր ուժով յերևան եր գալիս, մանավանդ, յերբ մտածում եյի թե իմ առաջ բերած պատճառներն աննշան հյուլեներ են, համեմատած այն արժանիքների հետ, վորոնցով զարդարված եր յերիտասարդն և վորոնք իմ մեջ վառել եյին սիրո այս չարաբաստ կրակն։

Ինձ ինում եր լուռ և անտրտունջ տանել իմ հոգեկան տանջանքը, առանց շրջապատողներիս մեջ վորևե կասկած հարուցանելու։

Վորքան զարմացա և ուրախացա, յերբ յերկրորդ կիրակի այցելության յեկավ մեզ Գարեգինը։ Ինչպես սիրտս հրճվանքից սկսավ բաբախել, վորքան հուզվեցա... Դեռ նա սենյակ չեր մտել, վոր մայրս նկատեց ինձ՝ ինչու՞ յես շառագունեցա։ Նայեցի հայելուն և ամաչելուց ավելի ևս շիկնեցի. այդպիսի դեմքով չեր կարելի դիմավորել նրան. յես քաշվեցա իմ սենյակը՝ լվացվելու։ Մի քառորդ ժամից, յերբ հուզմունքս քիչ անցավ, յեկա իմ բանկագին հյուրի մոտ։ Նա խոսում եր արդեն ծնողներիս հետ։ Տեսնելով ինձ վերկացավ տեղից, շատ սիրով վողջունեց, բայց այդ վողջունի մեջ, հակառակ սպասածիս, յես չերմ ու սիրաշունչ

վոչինչ չդառա։ Այդ բանը սիրտս կտրեց։ Այսուամենայնիվ պետք է դոհ լինելի, վոր նա այժմ ինձ մոտ, իմ առաջ նստած եր։

Ձերը դժդոհությունս հայտնելի այդ մասին քե նա շատ ուշ է մեղ այցելում, Խարևդինը պատասխանեց.

— Իմ ծառայ ընտանիքներուն մեջ չկա մեկը, վորին այնքան սիրով և հաճույքով կամենայի այցելել, վորքան ձերն, որիորդ։ Բայց իմ դրադումներն այնքան շատացել, այնքան ծանրացել են, վոր ստիպված եմ այդ հաճույքից ևս զրկել ինձ։ Ներևակայեցեք շաբաթվա մեջ քսան և չորս դաս, տղայոց կամ աղջկանց դպրոցում. այնուհետև դպրոցական մի քանի դործերի վրա անմիջական հսկողություն, հետո ուսուցչական ժողովներ. ապա արձանագրություններուն կազմությունը. այդ բոլորն այնքան ժամանակ են խլում ինձանից, վոր բարեկամներիս այցելելու համար, դրեթե, ժամանակ չե մնում ինձ։ Ներքեմ յերեկոյան դեմ, մի կամ յերկու ժամ ազատ ժամանակ եմ ունենում, բայց այդ ել դործ եմ դնում ավագ դասատուն աշակերտներին ինձ մոտ հավաքելով և նրանց հետ խոսելով։ Գիտեք, շատ բան կա դասից դուրս նրանց հետ խոսելու։ Ամեն այցելություն, ամեն դվարճություն պետք և դոհել այդ սուղ ժամանակը շահավոր կերպով դործադրելուն։ Վարժապետներիս վրա ծանր պարտք կա, քե՛ ներկայի և քե՛ ապագայի վերաբերմամբ։ Բավական չե վարձկան մշակի պես նշանակած ժամերին դասախոսել և հեռանալ։ պետք և անձնվիրությամբ աշխատել, պետք և դործին շունչ ու հոգի տալ, վորովհետև նոր սերնդի՝ ապագայում արած սխալ քայլերի պատասխանատուն մենք ենք...

Հետո նա պատմեց մի քանի անախորժ նորություններ այն մասին, քե ինչպես քաղաքում հակառակ կուսակցության մարդիկ աշխատում են իրենց, այնքան սիրով ու յեռանդով սկսած դպրոցական դործը դանազան մեքենայություններով խանգարել։ Ծավ հայտնեց, վոր այդ չարագործության հեղինակներն՝ վոչ քե հասարակ, ուսումից ու կրթությունից դուրկ մարդիկ են, այլ նրանք, վորոնց մի անդամ հանձնված և յեղել դպրոցի դեկն ու բաղդը։ Ելի այդ հսկացող ու դարգացած մարդիկ, դպրոցի դեմ նյութում եյին խարդավանանք միայն այն պատճառով, վոր տուիք ունենան պարծենալու քե իրենք կարողացան քանդել այն, ինչ վոր ուրիշները կամենում եյին շինել...

Վարքան ել քաղցր եր ինձ յերկար լսել իմ սիրած յերիտասարդին, այսուամենայնիվ, նա այդ հաճույքը ինձ չպատճառեց։ Հաղիվ մի ժամ միասց մեղ մոտ և այդ մի ժամը ինձ համար անցավ մի քանի բոպեների պես։ Ներողություն խնդրելով, վոր ավելի ուշանալ չե

կարող, վոչնչանց մեղ և հեռացավ, խոստանալով դարձյալ այցելել, յերբ ժամանակ կգտնե։

Բայց այդ ժամանակը նա շատ ուշ գտավ, կամ գուցե չկամեցավ շուտ գտնել։ Ցես սպասեցի նրան յերկար։ Անցավ առաջին կյուրակին, անցավ յերկրորդը, յերրորդը և սակայն նա չերևաց մեր տանը։ Այդ բոլոր ժամանակի ընթացքում, յես մի անգամ միայն պատահեցի նրան յեկեղեցում, ուր նա դարձյալ սիրով ու ժպտադեմ վոչնչանց ինձ և հեռացավ...

Դրանից հետո իմ սերը նրան ավելացավ. յես նորին սկսա անձնատուր լինել իմ թափուր մտածմունքներին։ Ընտանեկան գործերով չեյի պարապում և բոլոր որը, համարյա, հիվանդ եյի հոգվով ու մարմնով։

Մայրս, վոր, ինչպես հետո իմացա, վաղուց հետևելիս և յեղել իմ քայլերին, մի որ կանչեց ինձ առանձին ու ասաց.

— Սիրելի Աննա, հինգ ամսից ավելի յե, ինչ յես մի տարօրինակ փոփոխություն եմ նշմարում քո մեջ։ Դու այլևս առաջվա աղջիկը չես, այլ զվարթ, ուրախ, միշտ յերգող, ծիծաղող աղջիկը։ Ամեն որ տխուր ես, ամեն որ մտածմունքների մեջ, մի տեսակ վերացած... անշուշտ մի ցավ ունես, վորի մասին շարունակ մտածում ես։ Ասա, հոգիս, ինչ ցավ, ինչ հոգս և այդ, ասա, մորիցդ մի ծածկիր. քո սրտի ցանկությունը կատարելու համար յես ամեն բան կանեմ, ամեն ինչ կզոհեմ, միայն թե դու անկեղծ յեղիր, խոստովանիր ինձ ամեն բան ճշմարիտ, առանց ամաչելու ու քաշվելու։

— Վոչ մի ցավ չունեմ, — պատասխանեցի յես։

— Անկարելի յե, ցավ չունեցողը տխուր չի լինել և վոչ էլ ամբողջ որը մտածմունքների մեջ։ Խոստովանիր, ասում եմ, ինչ վոր սրտումդ կա, յեթե քո ցավը մորդ չհայտնես, ուրիշ էլ ում կարող ես հայտնել։

Ցես կամենում եյի բանալ նրան իմ սիրտը, կամենում եյի խոստովանել իմ գաղտնիքը, մանավանդ վոր նա այնքան մտերմարար սկսավ խոսել հետս, բայց լեզուս չեր հնազանդվում կամքիս, չեյի կարողանում խոսել։ Ցես միացի լուռ։

— Աննա, սիրելիս, հայտնիր ինձ ցավդ, պատմիր մորդ քո սրտի գաղտնիքը, — թախանձեց կրկին մայրս։

Բայց յես լուռ եյի։

— Կկամենաս վոր ինքս ասեմ, — հարցրեց նա ժպտալով։

— Ի՞նչ, — զարմացա յես։

— Թե ինչու՞ տխուր ու շարունակ մտածմունքի մեջ ես։

— Ասա, յեթե այդպիսի բան գիտես, — պատասխանեցի յես անհանդստությամբ։

— Դու սիրում ես Դարեջնին և նրա մասին ես այդքան շատ մտածում։

Ես ինացի ապշած և աչքերս լայն բանալով՝ հարցրի.

— Այդ ո՞վ ասաց քեզ։

— Դու ինքդ, սիրելիս, դու ինքդ։

— Ինչպե՞ս թե ես ինքս, ես այդպիսի բան ասած չունեմ. խոսքդ չեմ հասկանում, — նկատեցի ես։

— Արթուն ժամանակ դու վոչինչ չես ասել, բայց քնած ժամանակ շատ բան ես հայտնել։ Դու դրեթե միշտ զառանցում ես, բոլոր ժամանակ քո յերազներում խոսում ես Դարեջնի մասին, կանչում ես Դարեջնին... ինչու՞ համար են ուրեմն այս բոլորը։

— Ա՜խ մայր իմ, մայր իմ, դու արդեն բոլորը գիտես... բացատրեցի ես և հեկեկալով նրա գիրկն ընկա։ Արտասուքն ակամայ վարել աղբյուրի պես։ Նա ջերմությամբ սեղմեց ինձ կրծքին և սկսավ համբույրներով ջլուխս ու յերեսս ծածկել։

Մայրական սիրելի կրծքի վրա յերկար ջլուխս դրած լաց եյի լինում։ Նա չեր խանգարում իմ սրտի դեղումը, կարծես զուշակելով վոր թափվող արտասուքը մի մխիթարություն, մի պատասխան եր՝ այնքան յերկար ինձ տանջող ու տոչորող ցավերի համար։

Ցերբ մի փոքր հանդստացա, մայրս սրբեց իմ աչքերը, համբուրեց նրանց և կրկին անգամ ինձ յուր կրծքին սեղմելով խանդակաթ ձայնով ասաց.

— Իմ սիրելի, իմ անուշիկ Աննա, իզուր ես քեզ այդքան յերկար տանջել, իզուր ես և այժմ այդքան վրդովվում։ Քո սրտի ցանկությունը կատարելու համար վոչ մի դժվարություն չկա։ Ելնեն դու սիրում ես այդ յերիտասարդին և այդքան ել նրա համար այրվում ու տոչորվում, նա կլինի, ուրեմն, քո փեսան, քո ամուսինը։ Վաղվանից արդեն յես ամեն բան կպատմեմ հորդ և մենք, յերկուսս միասին կտնօրինենք ամեն ինչ այնպես, վոր քո սրտի ցանկությունը անթերի կատարվի։

Ուրիշ ինչ ուրախություն կարող եր հավասարվիլ այդ րոպեին զգացած իմ ուրախությանն։ Ես գրկեցի մորս, սեղմեցի ջերմեռանդությամբ կրծքիս և առանց շնորհակալության մի բառ արտասանել կարողանալու՝ ջերմագին համբույրներով նրա յերեսն ու ձեռքերը ծածկեցի։

Այդ րոպեին արդարև, յես ամենայերջանիկ աղջիկն եյի...

Հանկարծ առավոտ հայրս մտավ ինձ մոտ և յուր սովորական անկեղծությամբ ու ծիծաղով ասաց.

— Այդ ինչ և, Աննիկս, առանց իմ գիտության փեսամ յես ընտրել

Ես ժպտացի ու գլուխս խոնարհեցի. ղուռմ էլի, վոր յերևաս այրվում ես։

— Մի ամաչիր, հոգիս,—շարունակեց նա՝ մոտենալով և գլուխս շոյելով.—յես ամեն բան գիտեմ, մայրդ արդեն պատմեց. ընտրությունդ վատ չէ. սիրածդ յերիտասարդը միակն է բոլոր քաղաքի մեջ, ամենից խելոք, ամենից ազնիվ։ Ի հարկե, մի փոքր դժվար է ինձ համար՝ ազջիկս տալ մի աղքատ վարժապետի, մինչդեռ շատ հարուստ ու անվանի յերիտասարդների յես մերժել եմ։ Բայց քանի վոր դու նրան ես սիրում, յես դրա դեմ վոչինչ չունեմ։ Դու փոքր չես, քո չարն ու բարին ինքդ կարող ես հասկանալ. վոր քո ընտրածը հարուստ չէ, այդ էլ, ասենք, վոչինչ, փողով հարուստ ու խելքով աղքատ մարդն էլ բանի պետք չէ։ Ինչ վոր մենք ունինք, այն բավական կլինի ձեր յերկուսին։ Դու մեր միակ վորդին ես, նա յել թող յերկրորդը դառնա։ Վաղվանից յես արդեն ամեն ինչ կհանձնեմ այնպես, վոր քո սրտի ցանկությունը կատարվի շատ շուտով։ Ուրեմն և հանգիստ յեղիր, սիրելի Աննիկս և այլևս մի մտածիր վոչնչի վրա, քո փափաքը կատարելը իմ առաջին ցանկությունն է։ Այս ասելով՝ նա ջերմությամբ համբուրեց ինձ ու դուրս գնաց։

Բոլորովին հարց չեղավ թե՝ արդյոք յերիտասարդն էլ սիրում է ինձ և համաձայն կլինեը յուր բաղդն ինձ հետ կապելուս։ Մտաղնեբս այն կարծիքի էին, վոր յեթե իրանք համաձայնվին այդ շնորհը նրան անելու, այնուհետև վերջինիս ճիշտ եր միայն՝ շնորհակալ լինել իրենց հավիտյանս հավիտենից։

Պետք է խոստովանել, վոր յես ևս նույն կարծիքին էի։ Ես, մինչև անգամ հավատացած էի, թե Գարեգինը սիրում է ինձ նույն չափով, վոր չափով վոր յես իրան (Քեպետ տանջող մտածմունքների ժամանակ հակառակն էի կարծում) իսկ նրա շարունակ՝ իրեն սառն ու ինձանից հեռու պահելը վերագրում էի յուր զգուշավոր ազնվությյան, այն մտքով թե հույս չունենալով յերբևիցե հասնել ցանկալի նպատակին, նա աշխատում է աստիճանաբար նվազեցնել և ի վերջո մարել մի անգամ արդեն վառված սիրո կրակը։

Իսկ այժմ, յերբ արդեն կասկածն ու տարակուսանքը անցել էին, յերբ ծնողական համաձայնությունն, վոր առաջին և վերջին արգելքը կարող եր լինել, ստացվել եր, ուրիշ ինչ ույժ կարող եր խափանել իմ յերջանկությյան ճանապարհը, հարկավ և վոչ մի։ Ինձ ճիշտ եր ուրախանալ, հրճվել, ծիծաղել, համոզվել թե արդեն քաղդավոր եմ, արդեն յերջանիկ եմ. թե վերջապես հասել եմ այնքան ժամանակից ի վեր իմ դուրդուրած նպատակին...

Բայց ինչու՞, չդիտեմ, հենց այդպիսի ուրախության ժամանակ մի անախորժ կասկած, մի գաղտնի կերկյուղ զարձյալ ճնշում եր սիրտս և թունավորում իմ զգացած ուրախությունը։ Ուրիշ ինչ տխուր նորություն պիտի բացվեր ինձ համար. զուշակել չեյի կարողանում, բայց, կարծես, սպասում եյի նրան... կարծես մեկը շշնջում եր իմ ականջին թե՝ «այդպես շուտ և այդքան շատ մի ուրախանար, դու չես կարող ժառանգել նրան»։

Հետևյալ որն արդեն, վոր կյուրակի յեր, ծնողներս հայտնեցին թե՝ հյուրեր պիտի ունենանք, ուստի և պատվիրեցին ուշադիր լինել սենյակների կարգ ու սարքին։ Ինձ համար անակընկալ մի հրավեր եր այդ, բայց իրենք յերևի, նախընթաց որվանից եյին դրա մասին հոգացել։ Ցերը հարցրի թե «ովքեր պիտի լինեն մեզ մոտ», նրանք ծիծաղելով պատասխանեցին՝ «միայն քո և մեր բարեկամները»։

Ցես ուրիշ վոչինչ չհարցրի, վորովհետև ստացած պատասխանի յեղանակն ղգուշացնում եր ինձ ավելին չխոսել։ Սակայն սիրտս զգում եր, վոր ծնողներս ուղում են մի ինչ վոր անսովոր գործ կատարել։

Այսուամենայնիվ, յես նրանց ցանկության արգելք լինել չեյի կարող, յեթե մինչև անգամ կատարելիք գործի ինքնակարությունը պիտենայի։ Վորովհետև հայրս սիրում եր, վոր, նույնիսկ չնչին գործերում, յուր հղինակությունը հարգվի։

Ժամը 2-ին մեր տուն յեկան պարոն տեսուչը և Գարեգինը։ Ցերը նրանց մոտ մոտ, հայրս ծիծաղելով ասաց. — ահա այսօրվա մեր միակ քանկագին հյուրերը։

Ցես սիրալիր հարգանքով վողջունեցի յերկուսին. իսկ հայրս բացատրեց նրանց յուր տարօրինակ հայտարարության պատճառը։

— Սա իմ քմահաճույքն է. շատ եմ սիրում իմ Աննային անսպասելի ուրախություններ պատճառել։ Քեր գալու մասին յես նրան ավելի վաղ չհայտնեցի նրա համար, վոր յուր ուրախությունը հանկարծահաս լիներ։

Հյուրերը իրավունք ավին հորս նման հաճույքներով զվարճանալու։

Ձնայելով վոր ճաշի վրա միայն հինգ հոգի եյինք, այսինքն՝ յերեք մենք և յերկու՝ մեր հյուրերը, այսուամենայնիվ, ուրախ և զվարճալի անցավ այդ ընտանեկան հացկերույթը։ Ցերը բաժակները մի քանի անգամ դատարկվեցան, հայրս մինչև անգամ յուր խոպոպ ու կերկեր ձայնով յերգեց մի հին յերգ, վորին անմիջապես հետևեց Գարեգինը յուր մի ախորժալուր և հոգեշունչ յերգով։

Շատ սրտագին բարեմաղթություններ լեզան մեր կենացների վրա։ Մինչև անգամ տեսուչն ու Գարեգինը զգացված բանախոսություններ արին։ Ամեն հայի տուն ու ընտանիք վոգևորում եր այդ զլորոցական առաքյալներին, իսկ մեզ մոտ, նրանք արդեն, իրենց զգում էլին հարազատների մեջ։ Այդ իհարկե անկեղծ ուրախություն եր պատճառում թե ինձ և թե իմ ծնողներին։

Բայց մի բան ինձ զարմացնում եր։ Ցես վոր մինչև այն՝ այնքան անձկությամբ, այնքան տենչանքով փափագում էլի Գարեգինին տեսնել, այժմ, յերբ նա իմ առաջ նստած խոսում, յերգում, զվարճանում եր, չէլի կարողանում նրանով ուրախանալ, նրա ներկայության քաղցրությունը վայելել... Ցես, մինչև անգամ, չէլի կամենում, վոր նա այդ րոպեին մեր տանը լիներ. սիրտս անհանգիստ եր, ինչպես սիրտը մի զգրավագության մոտ, վոր վորդու հետ միասին հանկարծահաս մի ազեռի պատանած լինելով, մոտենում է յուր անձը և միայն սիրելիի ազատության համար մտածում... Ցեվ ինչպես լավ զուշակում եր իմ հոգին։

Ճաշից վերջը, յերբ կրկին ինձ համար կենաց առաջարկվեց, հայրս բաժակը ձեռքն առնելով ի մեծ զարմացումն իմ, անշուշտ և հյուրերի, հետևյալ անսպաս բանախոսությունն արավ.

— Ձեզ հայտնի չէ, վոր յես միայն մի աղջիկ ունիմ. սա չէ թե իմ և թե յուր մոր միակ ուրախությունը բոլոր աշխարհում։ Արդեն տեսնում եք նա զեղեցիկ է ինչպես հրեշտակ, իսկ նրա սիրտն ու հոգին զեղեցիկ են ավելի, քան յուր պատկերը։ Նրան ուսում ու կրթություն տալու համար յես վոչինչ չեմ խնայել։ Մեր քաղաքում գտնված ամենալավ ուսյալներից հետո յես հանձնեցի նրան մեր լավագույն վարժապետի, մեր ամենից սիրելի Գարեգինի խնամքին։ Ի՞նչ սովորեցրեց նա նրան, չգիտեմ, բայց վոր ի՛ քեզ, վարժապետ գոհ է յուր աշակերտուհուց, այդ ինձ համար շատ բան է նշանակում։ Կարող եմ հանգիստ լինել ուրեմն, վոր իբրև հայր, իմ դատեր վերաբերմամբ, իմ պարտականության մեծագույն մասը կատարել եմ։ Մնում է ամենափոքրը, այն է՝ ընտրել նրա համար մի արժանավոր ամուսին։ Այդ արժանիքն, իմ համոզմամբ, չէ կայանում յերիտասարդի վիճ հարստության, վիճ կալվածների և վիճ համբավի մեջ, վորովհետև աստուծո վողորմությամբ, յես այդ քան հարստություն ու ստացվածք ունիմ, վոր կարող է իմ այդ յերկու վորդիներին էլ բավել շատ յերկար տարիներ։ Ցես ցանկանում եմ միայն, վոր յերիտասարդը լինի աղնվամիտ, բարեբարո, աշխատասեր և լուսավոր։ Ահա հենց այդպիսի յերիտասարդ էլ յես դտել եմ, վորին նաև իմ դուստրը սիրելով սիրում է։ Դա ամենից սիրելի, մեր առաջ նստած Գարեգինն է։ Ցես նրան եմ հանձնում իմ

Անոնցի ձեռքը՝ հայրական վերջին պարտքից սիրով ազատվելու համար...

Վերջացնելով խոսքը, հայրս բաժակը դատարկեց։ Բայց չես ամոթից շփոթվել, շառագունել եյի, քրտինքը առուներով խաղում էր մարմնիս վրա, չգիտեյի թե, վոր կողմ դարձնեմ աչքերս վոչ վոքին չնայելու, վոչ վոքին չտեսնելու համար։

Տեսուչը դարմացած աչքերով նայում էր մերթ հորս, մերթ ինձ և մերթ Գարեգինի վրա։ Իսկ վերջինս միայն մի անդամ արավ անհանգիստ շարժում և ապա անվրդով հորս ամենավերջին խոսքին սպասեց։ Այդ սպասող վայրկյանին իմ հուշյան սրդին կործանեց... մի ձայն կարծես շշնջաց իմ ականջին թե՝ երթ դուշակությունը մարմին առավ...»

Ներս հայրս ավարտեց, վերկացավ Գարեգինը։ Նախկին զվարթությունը տեղի յեր ավել նրա մեջ մի տեսակ վեհ և պատկառելի թախծություն։ Ինչու, չգիտեմ, ինձ այնպես թվաց թե՝ նա այդ բոլորին կանդնած և դլխատման բեմի առաջ և, իբրև արի հանատակ, պատրաստվում և յուր հավատո հանգանակը փառաբանելու։ Նա մեղմ ու աղդու ձայնով սկսավ խոսել։

— Իմ կյանքը, սիրելի բարեկամներս, թեպետ հասակավոր չե, բայց նա հոծ և լի յե փոթձերով ու պատահարներով։ Ես բավական շատ ապրել եմ աշխարհում, շատ չար ու բարի յեմ տեսել, շատ տեսակ անձանց ու ընտանիքների յեմ ծանոթացել, բայց այդ իմ բոլոր կյանքի մեջ, իմ տեսած ու ապրած աշխարհի մեջ՝ յես միայն մի արիսրդի պատահեցի, վոր յուր աննման արժանիքներով կարողացավ գրավել ինձ այնքան, վոր քիչ եր մնում թե՝ դնեի իմ սրբազան ուխտն ու յերդումն ունեցածս հավատարմությունը սասանեցնեի։ Այդ աղջիկը, հարգելի բարեկամ, ձեր դուստրը և իմ աշակերտուհին եր։

«Վորովհետև դուք շատ անկեղծությամբ ու պարզությամբ խոսեցիք, թույլ տվեք, վոր յես էլ նույն ձևով շարունակեմ և ավարտեմ իմ խոսքը։

«Ամենամեծ պատիվը, վոր ինձ նման մի մարդու կարող եյին առաջարկել, այդ ձեր առաջարկածն և, հարգելի բարեկամ։ Ձեր աղջիկն արժանի յե վոչ թե ինձ նման մի հասարակ, ոչնչությունից դուրկ, մի վորոշ անուն ու համբավ չունեցող հայ վարժապետի, այլ ինձանից թե՛ զարգացմամբ, թե՛ կարողությամբ և թե՛ արժանավոր համբավով շատ ավելի բարձր մի յերիտասարդի ամուսնությունը լինելու։ Ձեքն յես, յերբևիցե, մտադիր լինեյի ամուսնական ընկերակցությամբ ինձ յերջանիկ անելու, արդարև, ձեր պատվարեր առաջարկությունը կընդունեյի՝ իբրև յերկնքից ինձ ուղիված մի շնորհ, մի պարգև։ Վորովհետև դոնե ձեր

դառեր նկատմամբ, ճանաչել ու գնահատել դիտցող յերիտասարդը կարող է վստահությամբ ասել՝ ահա կին, վոր պիտի յերջանկացնի յուր ընտանիքը...

«Սակայն ցավելով պիտի խոստովանիմ, վոր անկարող եմ ձեր առաջարկությունն ընդունել, վորովհետև յես ուխտել ու յերդվել եմ նվիրել իմ անձը վերջ թե սուկ մի ընտանիքի, այլ իմ ամբողջ ազգին և այս ուխտը սուրբ է յեղել ինձ համար պատանեկական տարիքից սկսած մինչև այսոր։ Աշխարհային վերջ մի բարիք, վերջ մի փառք և վերջ մի հրապույրը չէ գայթակղեցրել ինձ. յես հավատարիմ եմ մնացել իմ ուխտին և այսուհետև էլ հավատարիմ պիտի մնամ նրան, յերեք, մինչև անդամ, յերկրի բոլոր բարիքները համահավաք նվիրեն ինձ։

«Ո՞վ կարող է հերքել, վոր աշխարհում, ճշմարիտ յերջանկություն ձեռք բերելու համար, անհրաժեշտ է ամուսնանալ։ Ընտանիքը, մանավանդ սիրո առաքինության և աշխատասիրության հիմունքների վրա հաստատված ընտանիքն, այն կենարար աղբյուրն է, վորից բղխում է մարդկային կյանքի յերանավետություն, ամենքիս անհրաժեշտ յերջանկությունը։

«Սակայն կա և մի ուրիշ մարմին, վոր ավելի սիրելի, ավելի պաշտելի բան է, քան մեր սեփականը։ — Այդ մարմինը հայրենիքն է։ Յես ուխտել եմ իմ անձը նրան նվիրել, նրա սիրուց զատ՝ աշխարհում ուրիշ սեր չճանաչել, նրա ցավերից զատ՝ ուրիշ ցավերով չվշտանալ։ Նրա բաղդավորությունից զատ՝ ուրիշ բաղդավորություն չհնդրկել... Իմ ուժերը միանգամայն մի ընտանիքի, կամ վորոշ թիվ մարդկանց բախտին նվիրելու, յես ուխտել եմ բոլոր ազգին նվիրել։

«Այդպիսի մի մեծ մարմնի բարիքներին ծառայելու համար, արդարև, իմ ուժն ու ցանկությունը փոքր են ու աննշան, սակայն ծոլն էլ կազմված է կաթիլներից։ Յես ավելի լավ եմ համարում կաթիլներից մինը լինել և ծովի հատակն իջնել, քան ծովի գոյության համար դառնալ անոգուտ գերան և լողալ նրա յերեսին...

«Ներեցեք ինձ, ուրեմն, աղաչում եմ ձեզ, վոր հրաժարվում եմ ձեր ինձ առաջարկած այդ գերազանց պատվից։ Վորքան և ինձ համար, իբրև մահկանացուի, մեծ և այս զոհը, մանավանդ վոր յես հոգվով չափ սիրում եմ ձեր աղջկան, սակայն անհրաժեշտ է, վոր յես բերեմ այդ զոհը, վորովհետև իմ սրբազան ուխտին և յերդմանը դրժել չեմ կարող...»

Հայրս զարմանալի սառնասրտությամբ լսեց այս խոստովանությունը և ծածկելու համար իր ներքին վիրավորանքը, վոր բավական կենդանի ցոլանում եր դեմքի վրա, հարցրեց.

— Մթին գիշերն ոչնչով համար անպատճառ պիտի ամուրի մնաս և ամուսնանալով հանդերձ չես կարող նրա ոգուին աշխատել։

— Վա՛յ, — պատասխանեց Գարնդինը. վորովհետև դեղեցիկ և ասված. «Վա՛յ վոք կարե յերկուց տերանց ծառայել. կամ զմինն ատիցե և զմյուսն սիրիցե, կամ զմինն մեծարիցե և զմյուսն արհամարհիցե»... Ով վոր կամենում է բոլորանվեր կերպով ծառայել աղքին, նա չպետք է ամուսնանա։ Վորովհետև ամուսնությունն ինքը ունի յուր վորոշ պարտքերը, վորոնց ամեն մի որինավոր ամուսին պարտավոր է անթերի կատարել։

Այդ միջոցին ահա, հոբս առաջարկությամբ, մեր հյուրերը սեղանատնից հյուրասենյակը քաշվեցան, իսկ յես դուրս գնալով փակվեցա իմ ննջարանումս։ Այստեղ արդեն միայնակ տեսնելով ինձ՝ սրտաուռքս սկսավ հեղեղի պես հոսել, ընկա մահճակալի վրա, ծածկեցի յերեսս բարձերի մեջ և յերկար, շատ յերկար իմ դառն ու հուսահատ վիճակը վողբացի։

Թե այնուհետև քանի խոսեց հայրս հյուրերի հետ, չիմացա, միայն նրանց հեռանալուց հետո, նա մտավ սենյակս, յերևի ինձ մխիթարելու համար։ Տեսնելով վոր լալիս եմ, նա մոտեցավ ինձ, քնքշաբար սեղմեց յուր կրծքին և ասաց.

— Մի լար, իմ սիրելի, իմ անուշիկ Աննա, յեթե քո սիրած յերիտասարդը մերժեց քեզ, յես ել իմ կողմից քո վրեժը կլուծեմ։ Թո հայրը մեռած պիտի լինի, վոր նա այսուհետև հանդստություն պահե... յես չարաչար կհալածեմ նրան, տանջանքներ կպատճառեմ և վերջը կվոչնչացնեմ...

— Ի՞նչ, դու պիտի սպանես նրան, — ճչացի յես սարսափահար։

— Այո, բայց վա՛յ իմ ձեռքով, — պատասխանեց նա այնպիսի մի յեղանակով, վոր կարծես վրեժխնդրությանն ղեն եր խոսում յուր մեջ։

Յես մի կողմ հրեցի հոբս և ձեռքս կրծքիս դնելով դայրույթից դողացող ձայնով ասացի.

— Առաջին գնդակն այստեղ ուղղել տուր, իսկ յերկրորդը նրա վրա, հեռացիր, դու իմ հայրը չես...

Իմ հանկարծական դրդումը զարմացրեց հոբս. նա ինաց շվարած և չդիտեր ինչ պատասխանել։ Մեզ մարդ, ամեն տեսակ դժբաղդությանի վրա յել հայում եր պատվասիրության տեսակետից։ Նա այնպես եր կարծում թե՝ սիրածս յերիտասարդի մերժումը՝ դայրույթ կամ առելություն պիտի ծնեցներ իմ մեջ. նա չդիտեր վոր ճշմարիտ սերն՝ առելության չի փոխվիլ, վոր մերժումը կա-

բող և ճնշել, կամ խոցոտել այդ սերը, բայց սպանել նրան՝ չեր-քեք... Ցերկար նայեց նա ինձ վրա, սևեռեց հայացքն ուղիղ իմ աչքերին, ցանկացավ կերևի, որ նրանք տեղի տային յուր հզոր հայացքին, բայց նրանք անքթիթ՝ արտահայտում էին իմ ցասումը...

Վերջապես նա մեղմանալով՝ մոտեցավ ինձ և այս անգամ ավելի քնքուշ ձայնով հարցրեց.

— Ուրեմն, դեռ ելի սիրում եմ նրան։

— Այո. և չես նրան իմ մահվան որը կմոռանամ, — պատասխանեցի չերմությամբ։

— Բայց նա քո հորն անպատվեց, քեզ անպատվեց...

— Նա չանպատվեց և վաչ մեկին։ Պետք է բավական բարձր և ազնիվ լինել նրան հասկանալ կարենալու համար։ Նրա խոստովանությունն անկեղծ եր. նրա ուխտը սուրբ եւ Մինչև այժմ չես սիրում էի նրան, իսկ այսուհետև՝ պիտի պաշտեմ...

— Ուրեմն չես թշնամի չի՞ պիտի լինեմ այդ մարդուն, — հարցրեց նա։

— Ցերբեք, — պատասխանեցի չես։

— Բայց կարող եմ չլինել. թույլ կտա՞ ինձ այդ իմ պատիվը։

— Ցեղիր ուրեմն և իմ թշնամին, չեթե այդ հաճելի չե քեզ, — ասացի չես։

Հայրս վոչինչ չպատասխանեց և դուրս գնաց։

ՁՈՐՐՈՐԴ ՈՐ

Հարկ չկա ասելու, վոր այս բոլորից հետո իմ դրությունն ավելի վատթարացավ։ Տերությունը տիրեց ինձ բոլորովին, ծիծաղ ու խնդում չքացան ինձ համար. տուն ու ընտանիք ունենալս մոռացա. ինձ հետ խոսողներին կամ չէի լսում, կամ չեթե լսում էի չէի հասկանում։ Փախչում էի բոլորից և փակվում իմ սենյակում, կամ մեր պարտեզի մի անկյունն առանձնանում՝ անձնատուր լինելով խորին մտածությանն։ Իմ հիշողությունը բթացել, անդգայացել եր ամեն բանի համար, բայց չեր մոռանում միայն Գարեգնին և այն բոլորը, ինչ վոր կապ ուներ Գարեգինի անվան հետ։ Մտածում և չերանում էի այն անցյալին, չերբ նա իմ կողքին նստած՝ այնքան մոտ, վոր չես նրա շնչառությունն էի լսում, դաս եր խոսում ինձ։ Ցես լսում ու նայում էի նրան անսահման սիրով, անհուն ցանկությամբ... հիանում էի, չերբ նա ամբողջապես ղրացմունք դարձած՝ խոսում ու քարոզում եր ինձ, կամ չերբ վոգևորությունը վառում եր նրա աչքերում աշխուժի

կրակը։ Ներանում էի այն ժամերին, երբ չես սրտատրոփ սպասում էի նրան, կամ երբ նրա սիրալիր այցելությամբ արդեն դո ճանապարհում էի նրան՝ հուսալով մի որից կրկին տեսնելու... Երբ հպարտացած նրան սիրելով, մտածում էի քե՝ նա ինն և հավիտյան, քե վոչ վոք ինձանից չե կարող խլել նրան... Ներանում էի նույնիսկ իմ տխրության այն որերին, երբ նա, թեպետ ինձանից հեռացած, բայց դարձյալ նվազ հույս եր ներշնչում քե՝ այսոր չե, վաղը, մի քանի որից, կամ դուցե մի շաբթից՝ կգա ինձ տեսնելու։

Իսկ այժմ... այժմ ամեն հույս կորել, անհետացել եր։ Գարեդինն այլևս իմը չեր, նրան այլևս չէիտի ժառանգեի.. Ո՛, ինչպես ծանր եր մտածել այդ մասին... Հանկարծ չունենալ այլևս նրան, վորին մի որ առաջ ունեիր, վորը քո մտածության, քո քաղցր յերազների, քո ապագա յերջանկության անուցիչն եր, վորը քեզ կյանք և ուրախություն եր բերում, քեզ շունչ, սիրտ և հոգի յեր տալիս... վորի համար դու կամենում եիր աղրել, վորի համար գործում, աշխատում, հառաջադիմում եիր, վորի հաջողությունը քեզ ուրախացնում և հաղթանակը հպարտացնում եր... Եվ հանկարծ դառնալ, նայել շուրջդ, տեսնել, վոր նա այլևս չկա, վոր դու միայն ես, վոր քեզ պատում և անպարտնակ դատապարտություն...

Մայրս, վոր դրեթե նույնչափ վշտահար եր այս դժբախտ պեպքի պատճառով, հնարներ եր վորոնում իմ թախիծը անցնելու և տխրությունս մեղմելու։ Տեսնելով վոր յուր խորհուրդներն ու մխիթարականները չեն կարողանում ինձ մաշող մտածմունքները ցրել, սկսավ դրեթե ամեն որ հրավիրել իմ նախկին ընկերուհիներից մինին, կամ մյուսին ինձ զբաղեցնելու և մտահոգությունս ցրելու համար։ Ընկերուհիներս գալիս եիին։ Նրանց սկզբում եր հասկացրել մայրս քե՝ յես տխրելու հիվանդություն ունիմ, ուստի և պետք և ուրախացնեն ինձ։ Ընկերուհիներս, իհարկե, աշխատում եիին այդ նպատակով, բայց առանց մեծ հաջողության։ Միայն քե նրանց բերած նորություններն սկսում եիին հետզհետե հետաքրքրել ինձ։

Այսպիսով յես նրանցից իմացա, վոր հոգևոր դպրանոցի վարժապետական հին խմբի և նրանց պաշտպանների լարած մեքենայությունները վերջապես հաջողվել են, վորով և նոր խումբը ճնշել և նեղ դրության մեջ, վոր հակառակորդներից ու դավադիրներից կազմակերպված բանակը կարողացել և ժողովրդի ամեն խավերում տարածել և շատ շատերին համոզել քե՝ վարժապետական նոր խումբը բողոքականություն և քարոզում աշակերտնե-

բին, անբարոյականացնում է նրանց, կամ թե ծնողների դեմ ապստամբեցնում։

Այս անխիղճ զրպարտություններն, որոնք միշտ անպղնիվ մարդկանց գլխներն են յեղած պղնիվ հակառակորդների դեմ, վոտքի եյին հանել քաղաքում սինկլքոր խուժանը, վոր առանց ճշմարտության հասու լինել կամենալու՝ հրապարակներում հավաքված գոռում ու գոչում եր թե՝ «էհաչ հանեցեք դրանց»։

Մի փոքր հետո իմացա, վոր այս զրպարտության ու խառնակության ձայներն Եջմիածին հասնելով՝ համոզել եյին նաև Մատթեոս կաթողիկոսին՝ կոնդակով հրամայել հոգևոր դպրանոցի հոգաբարձության՝ արձակել տեսչին յուր վարժապետներով։ Պատմում եյին թե վերոլիսյ աղիողորմ տեսարան եր ներկայացնում այդ ժամանակ՝ հալիվ բարեկարգ դրության հասած այդ ուսումնարանը, վորին նորեն սպառնում եր ավերումն։ Աշակերտներն լալիս ու փարում եյին վարժապետներին, աղաչելով նրանց՝ չթողնել իրենց վարձկան մշակների հուսով, չհանձնել դպրոցը գռեհագիտ գայլերին... Բայց ինչ կարող եյին անել վարժապետները. նրանց վերևից հրամայում եյին հեռանալ, ուրեմն և պիտի հեռանային և իրենց նոր վարած ու ցանած բուրաստանը թողնեյին ճանապարհի շահամոլ անցորդներին։

Այսուամենայնիվ տեսուչը բարեկամների խորհրդով դիմեց մի վերջին միջոցի։ Հանձնելով դպրոցը յուր հավատարիմներին, նա առավ յուր հետ Գարեգինին և պատվավոր հոգաբարձուներից մինին ու գնաց Եջմիածին իրերի դրությանը Մատթեոս կաթողիկոսին ծանոթացնելու համար։ Բայց նրա առաքելությունն ապարդյուն անցավ, ուստի և հուսահատ ու վշտահար վերադարձավ նա Թիֆլիս՝ յուր հայրենիքը։ Մինչդեռ Գարեգինը նորեն յեկավ մեր քաղաքը՝ յուր սիրելի դպրոցն ու «բուրաստանը», (ինչպես սիրում եր նա անվանել դպրոցը) վերջին անգամ տեսնելու և յուր ձեռնասուն աշակերտներին վերջին հրաժեշտի վողջույնը տալու։

Մեծ յեղավ իմ ուրախությունը, յերբ նրա վերադարձն իմացա։ Կարծում եյի թե նա յեկել և նորից մեր քաղաքում մնալու և յուր սիրած դպրոցում պաշտոնավարելու։ Ուստի գոհ եյի վոր այժմ, գեթ հեռվից, յերբեմն, յերբեմն նրան տեսնելու բաղդը պիտի ունենամ։

Մի առավոտ միայնակ զբոսնում եյի մեր պարտիզում և, իհարկե, դարձյալ Գարեգինի վրա մտածում։ Սպասուհիս մոտենալով հայտնեց, վոր մի կին կամենում է ինձ տեսնել։ Հրամայեցի կանչել նրան։ Մա որիորդական դպրոցի աղախինն եր, վոր մոտենալով՝ մի նամակ հանձնեց ինձ։ Դեռ չհարցրած թե ումից է

Նամակը, նա անհետացավ։ Բանալով ծրարը, զարմացա, տեսնելով, որ գրողը Գաբեղինն էր։ Սիրտս թունդ բաբախ ու սկսավ սաստիկ տրոփել։ Ինչ և գրում նա ինձ, ինչ կարող և գրել... մտածեցի յես վայրկենապես և ապա շտապով սկսա կարդալ նամակը, որ մոտավորապես հետևյալ բովանդակությունն ուներ։

ՎԱԳԻԼ ՈՐԻՈՐԴ.

«Բարի մարդկանց մեքենայությունների շնորհիվ ստիպված եմ հեռանալ ձեր հայրենի քաղաքից, որի հետ սիրտս կապված և ամենաքաղցր հիշատակներով։ Սակայն այստեղից հեռանալուց առաջ, փափագելով փափագում եմ տեսնել և իմ հրաժեշտի վոդջույնը տալ ձեզ։ Բայց վորովհետև ձեր տուն մտնելն անհնար է ինձ՝ այն ակամա վիրավորանքի պատճառով, որ յես ստիպված հասցրի ձեր ծնողներին, ուստի խնդրում եմ, յեթե ձեզ նույնպես ցանկալի չե, գնք վերջին անգամ տեսնվել ինձ հետ, բարեհաճեք այսօր ևեթ մի քանի վայրկյանով մտնել արիորդական դպրոցն, ուր գտնվում եմ այժմ և ուր կսպասեմ ձեզ մինչև ժամի տասն յերկուսը։ ստորագրված եր՝ Ձեզ նամանավիշտ Գաբեղին։

Ինչ յեղա յես այդ րոպեին, չեմ կարող ասել։ Մի քանի տեսակ զգացմունքներ միասին թունդ յեյան իմ սրտում և՛ ուրախություն, և՛ վարանք, և՛ յերկյուղ, և՛ տխրություն... բոլորը միմյանց հակասելով, մինը մյուսին յես կամ առաջ մղելով... Ուրախանում և հրճվում եյի՝ մտածելով, որ ուրեմն խաբված չեմ որ Գաբեղինն ևս սիրում և ինձ, կամենում և տեսնել, յուր հրաժեշտի վոդջույնը տալ ինձ։ Այդ պատճառով ուզում եյի իսկույն ևեթ թռչել նրա մոտ, մի անգամ ել տեսնել, մի անգամ ել լսել նրան... Բայց վարանում եյի իմ վորոշման մեջ՝ մտածելով թե արդյոք դա պատշաճից դեմ, կամ նույնիսկ վիրավորական չի լինել իմ ծնողների պատվի համար։ Բայց յեթե չտեսնեյի նրան, յեթե նա հավիտյան հեռանար ինձանից՝ առանց յուր վերջին խոսքն ինձ ասելու... ե, ինչ կանեյի յես այն ժամանակ. կարող եյի ներել ինձ այդ հանցանքը։ Ցավ յերբ հանկարծ մտածում եյի թե՝ նա արդեն հեռանում և, թե նրա նամակը մի ճշմարիտ, բայց և չարաղուշակ լուր և բերել ինձ, թե յես, ուրեմն ընդմիշտ զրկվում եմ նրանից... գլուխս ուղղակի այրվում, սիրտս փոթորկում եր և կամենում կարծես դուրս թռչել յուր տեղից։

Բայց և այնպես պետք և սպասել գնացքից։ Վերջին անգամ իմ սիրելուն տեսնելու համար ինձ մնում եր միայն մի յերկու

ժամ։ Ուսաի շտապով վերադարձա սենյակս, հագնվեցա և ապատեղից հետս առնելով դիմեցի դեպի սրիորդական դպրոցը։

Այստեղ պատահեցի Գարեգինին այն սենյակում, ուր նա հաճախ առանձնանում էր դասից ազատ միջոցներին։ Նա զբաղված էր մի ինչ որ գրութեամբ։ Տեսնելով ինձ, իսկույն բարձրացավ տեղից և յուր մշտածիծաղ ժպիտով ողջունելով ինձ, խնդրեց նստել։

— Ուրախ եմ որ տեսաք,—սկսավ նա խոսել՝ իմ հանդեպ նըստելով։ — Մի քանի օրից, սիրելի օրիորդ, դես հեռանում եմ այստեղից և, հավանական է, որ այլևս չվերադառնամ։ Մեր սիրած դպրոցներն ևս թողնում եմ, դրեթե անտեր, որովհետև նրանք, որոնք սոիպեցին մեզ բաժանվել դրանցից և որոնք մեր գործի շարունակողը պիտի լինին, ոչ այլ ինչ են, եթե ոչ անսիրտ վարձկաններ։ Վշտահար սրտով հեռացավ մեր աղնվոգի տեառչը, նուշնպիսի սրտով էլ հեռանում եմ դես, որովհետև մեր հույսերն ոդը ցնդեցան, իսկ ծրագիրները խեղդվեցան յերկունքում... Ի՞նչ արած, յերևի այս յերկրի դժբախտ մանուկներին այսքանն էր վիճակված։

«Սակայն այդ վշտերի հետ միասին ծանրանում է իմ սրտի վրա և մի ուրիշ մեծ վիշտ, որըն ամենից ավելի պիտի տանջեր ինձ, եթե դես չմտածեյի թեթևացնել այն որևէ միջոցով։

«Այդ վիշտը, որիորդ, ձեր առ իս ունեցած չարաբաղդ սիրո պատճառած վիշտն է։

«Դրա պատմությունը հայտնի չե ձեզ այնպես, ինչպես և ինձ. այն նորոգելու, իհարկե, կարիք չկա։ Բայց դես ցանկանում եմ մի քանի խոսք ասել նկատմամբ մի հանդամանքի, որըին անծանոթ եք դուք և որը վերաբերում է ձեր հարգելի հոր ինձ արած առաջարկությանն։ Այդ առաջարկությունը, սիրելի օրիորդ, որքան էլ զերազանց և ինձ պատվաբեր, այսուամենայնիվ մեծ վիշտ պատճառեց սրտիս նրա համար, որ այդ յեղավ ձեր ներկայությամբ և որ դես ձեր ներկայությամբ էլ ստիպվեցա մերժել այն, շատերին ցանկալի, մեծագին պատիվը։

«Թանի որ դուք գիտեք այն ամենը, ինչ իմ մերժման է վերաբերում, դես կամենում եմ դնալուց առաջ, իմացնել ձեզ, նաև այն, ինչ որ դեռ չգիտեք, որպեսզի դրանով հանգստություն տամ մի փոքր իմ չարատանջ սրտին։

«Իմ մերժումը լսելով դուք անշուշտ համոզվեցաք թե՝ շնորհներից քաղցրագույնը այսքան կոպտությամբ մերժող մարդու մեջ ոչ սիրտ կարող է լինել և ոչ զգացմունք և դուցե անիծեցիք այն տուրը, բոցավառ սերը, որ տածել եք ինձ համար։

— Ցերբեք, յերբեք, — ընդհատեցի յես ջերմությամբ, — այդպիսի աննպատակ կարծիք ձեր նկատմամբ չեմ ունեցել, յես մինչև անգամ հաստատ հավատում եմ...

— Վերջացրեք, որիորդ, դուք ուրիշն հաստատ հավատում եք թե՝ յես նույպես սիրում եմ ձեզ:

— Այո:

— Շնորհակալ եմ, անչափ շնորհակալ, դուք ինձ մխիթարեցիք. այժմ յես հանգիստ եմ, — ասաց Գարեգինը մի առանձին խնդությամբ և ապա շարունակեց. — այժմ լսեցեք: Ցես վաղուց արդեն անտարբեր չեյի դեպի ձեզ: Ցես չկարողացա փակել իմ աչքերը՝ ձեր գրավիչ գեղեցկությունն ու կախարդող հայացքը չտեսնելու համար, բթացնել իմացականությունս՝ ձեր ներքին արժանիքն ու փայլուն բարեմասնությունները չճանաչելու համար կամ խեղդել զգացմունքս՝ ձեզ չսիրելու և չպաշտելու համար... Գիտեք, մինչև ձեր ինձ սեր խոստովանելու որն իմ հոգին բյուր անգամ խոստովանել և ձեզ այն՝ լսիկ և անձայն...

«Սակայն մեզ, ուսուցանող յերիտասարդներիս վրա սրբազան պարտք կա՝ ջերմեռանդությամբ պատկառ մնալ ուսանող աշակերտուհու առաքինության: Ինձ համար, իբրև ուսուցչի, անհնար և նույնիսկ ամոթ եր ամենաթույլ ակնարկով իսկ ձեր զգացմունքը քաջալերել: Թեպետ սերը նույն ինքն առաքինությունն է, սակայն ժամանակն ու հանգամանքները հաղիվ են նրան յուր սկզբնական կամ վոր նույնն և՝ առաքինական սահմաններում պահում: Այդ իսկ պատճառով յես պարտավոր եյի ամեն ջանք գործ դնել, իմ սրտի հնոցը սառուցի կեղևով պատելու: Ցեվ յեթե յես մինչև անգամ այդ չձնեյի իբրև ուսուցիչ, դոնե իբրև կուսակրոնության ուխտյալ՝ պարտավոր եյի անել: Վորովհետև, յեթե իրով յես պատրաստվում եյի նվիրել ինձ մի սուրբ կոչման, ուրիշն և պիտի սովորեյի արժանապես ծառայել այդ կոչմանը, պիտի վարժեցնեյի ինձ զրկանքների, անձնվիրության: Գոնվելով այսպիսի պայմաններում, հարկավ, ինձ մնում եր տակավ առ տակավ մարել բնության ձեռքով իմ մեջ վառած կրակը, մարել այն մինչև վերջին աոկայծումը: Սակայն, ավաղ, հաղիվ կարողացել եյի թուլացնել իմ մեջ վառվող այդ հրդեհն, յերբ ձեր սիրավառ խոստովանությունը բորբոքեց այն կրկին: Այո, այն համբույրը, վոր դուք դրոշմեցիք իմ ձեռքին, թափանցեց սիրտս ինչպես մի կայծակ, վոր ամպերի միջից անսասին դարնելով՝ այրում, փաղաղում և հանդիպող ծառերը և նրանցով մայրիի մեջ անջիջանելի հրդեհ բորբոքում: Կարող եք յերևակայել թե քանի քաշեցի յես այն յերկու որը, յերբ

դիմամբ հեռու Ձեզնից վորքան ուշ գործ դրի յես՝ մինչև վոր յերբորդ որը կարողացա առհասարակ ոթյամբ վոտք դնել ձեր տանը և քաղաքավարություն ունենալ՝ վողջունելու ձեզ սովորական ժպիտով։ Այնուհետև յես արագ արագ ավարտեցի ուսանդ գործը, միայն ձեր և իմ անձից փախչելու համար...

«Ձերկրորդ և առավել գորեղ հարվածը ձեր հոր առաջարկությունն եր, վոր կարող եր տապալել իմ հաստատակամությունը և դրժել տալ ինձ իմ ուխտին ու յերդմանը. մտավանդ վոր այդ ժամանակ դուք նստած եյիք իմ հանդեպ՝ դիմվորված ձեր բոլոր հրապուրչներով, բայց յես ոգությանս կանչեցի ինձ՝ հայրենիքի բարձրագույն սերը և նրա գորությամբ հաղթահարեցի սպառնացող վտանգը։

«Ձերը վերջին անգամ, իբրև ուսուցիչ յես հեռանում եյի ձեզնից, դուք քաջ գիտենալով վոր յես փախուստ եմ տալիս ձեր աչքից, ծանր դիտողություն արիք ինձ ասելով, վոր յես անարգում եմ ձեր սրտում վառված սիրո սուրբ կրակը, մինչդեռ պաշտպան պիտի լինեյի նրան։ Դուք, անշուշտ հիշում եք, վոր յես պատասխանեցի Ձեզ՝ սրբությունը չի տարբվիլ իր յերկրպագուից։ Դրանով կամենում եյի ասել, Ձեզ, յես ձեր սրբազգաց սիրո յերկրպագուն եմ, ցավ ինձ մշտական վիշտ պիտի պատճառեր մյն մտածմունքը Ձեզ յես հեռացա ձեզնից առանց իմ զգացմունքներին ձեզ ծանոթացնելու։

«Այժմ դուք արդեն բոլորը գիտեք և յես հանդիստ եմ։

«Մնում է միայն մի հարց. — Արդյոք ներում եք դուք ինձ այս վարմունքս։ Վորովհետև այս դեպքում յես իրավունք ունեմ միայն իմ սերը խեղդելու, բայց վո՛չ նաև ձերը։

— Ներում եմ այդ վարմունքդ, — պատասխանեցի յես, — վորովհետև նա սուրբ է, վորովհետև նա ավելի բարձրագույն սիրո համար է։ Վորքան էլ ծանր լի ի իմ գրկանքը, այսուամենայնիվ, յես նրա մեջ ունիմ այն մխիթարությունը Ձեզ՝ դուք հեռանում եք ինձանից վո՛չ Ձեզ մի ուրիշ կնոջ, այլ հայրենիքին ձեր սիրտը նվիրելու։

— Շնորհակալ եմ. այդպես էլ հավատում եյի իմ ներշնչած վոգուն. գիտեյի վոր նա կարդարացնե իմ հույսը, — ասաց Դարեդինը կարծես հրճվելով և սեղմեց ձեռս ի նշան շնորհակալության։ Ապա կրկին դառնալով ինձ՝ ավելացրեց. — իսկ այժմ, որիորդ, դուք ազատ եք, աշխատեցեք սիրել ձեր առաքինության արժանի մի յերիտասարդ, ամուսնացեք նրա հետ և յերջանիկ յեղեք։ Ընտանեկան քաղցրությունը, վոր ինձ վիճակված չեր ճա-

շակել, անշուշտ մի դերապուչն բարիք և, որ այնքան շատ յերջ-վել և քանատեղծներից...

— Ձեզանից հետո սիրել մի ուրիշին... մերթ դուք ինձ ընդու-նակ եք համարում այդ բանին, — հարցրի յես հուզվելով:

— Ժամանակը մոռացնել կտա ամեն ինչ, — հարեց նա և այդ անհրաժեշտ է: Մի լավ մայր լինել, կնշանակե ամեն բան լինել:

— Ցերթեք, յերթեք, իմ կյանքում միայն յես ձեզ սիրեցի և այդ սերն էլ ինձ հետ դերեզման կտանեմ, — ասացի յես ջերմու-թյամբ:

— Դուք այդ չեք անիլ և չեք կարող անել:

— Ցերդվում եմ իմ այս անդրանիկ սիրով. յերդվում եմ և չեմ դրժի յերդմանս:

— Ի՞նչ պիտի անեք ուրեմն:

— Ա՛յն, ինչ վոր դուք:

— Մի յերիտասարդ կարող և վարդապետ լինել, իսկ մի աղջիկ...

— Միանձնուհի:

— Թողեք, ի սեր աստուծո, այդ ցնորքը: Ի՞նչ պիտի անեք կուսանոցի բարբոսնած պատերի մեջ: Ի՞նչու այդ պայծառ կյան-քը խավարեցնել, մտածելու ընդունակ ուղեղը բթացնել, գործելու կարող աշխույժը մարել, սիրելու ընդունակ սիրտը սպանել... ինչու, վերջապես, կենդանի թաղվել դերեզմանում այն ժամա-նակ, յերբ ուրիշներն ապրում ու վայելում են աստուծո լույսն ու արևը, դալ վոր կարող ես նույնն անել և դու, բայց սիրտդ անդնելով՝ դրկվիլ այդ հաճույքից...

— Բայց յես չեմ դրժիլ յերդմանս, չեմ սիրիլ վոչ վոքին. ցույց տվեք ինձ ուրեմն այս աշխարհից փախչելու մի ուրիշ ճա-նապարհ, ապա թե վոչ, ձեր հետանալուց հետո յես կսպանեմ ինձ, — ասացի հաստատ ձայնով:

Դարեդինը նայեց ինձ մի վայրկյան սուր և խորախորհուրդ և ապա քաղցրությամբ նկատեց. — անձնասպանության մասին մտածելը փոքրոգություն է. աշխատեցեք չլինել փոքրոգի: Ով վոր չե ուզում ապրել և դեպի մարդիկ ունեցած յուր պարտքը կա-տարել, նա մի դասալիք է, վոր թշնամու զորությունից վախե-նալով՝ թողնում է ընկերներին կռվի դաշտում և ինքը փախչում: Այդպիսի ճանապարհով ձեռք բերած փրկությունը՝ մահերից անարդն է. այդպիսի փրկության մի ձգտիք յերբեք:

— Ի՞նչ անեմ ուրեմն... ցույց տվեք ինձ պատուության մի ուրիշ ճանապարհ. այս աշխարհում, այս միջնադարում, յես այլևս չեմ ապրիլ, դի ձեզանից հետո՝ նա ինձ համար պիտի դառնա կատարյալ դժոխք...

Գարեգինը մի քանի րոպե ճնշոց լուռ և աչքերը գետնին հառած՝ մտածում էր։ Ապա դառնալով ինձ, հարցրեց.

— Ունե՞ք բավական ուժ ձեր ուխտին հաստատ մնալու։

— Կարող եմ պարծենալ, — պատասխանեցի ես։

— Ուրեմն համաձայն եմ, ուխտեցնեք «միանձնուհի» լինել։

— Ինչպե՞ս, — վարանելով հարցրի ես, չե՞ վոր դուք այդ կոչումը դատապարտեցիք։

— Այո, բայց այն ժամանակ իմ խոսքը անգործության մեջ իրեն սպանող միանձնուհու մասին էր։ Հեռացեք աշխարհից, բայց մի մտնեք կուսանոց։ Գնացեք հեռու, հեռու, դեպի կորած հայ գյուղերը, դեպի այն ժողովուրդը, վորին մոռացել են մեր գործողները. վորի մեջ որ ըստ որե նվազում, հանդչում և կենդանության ուժը։ Գնացեք այնտեղ, ուր տգիտությունը բռնացած՝ քանդում, ավերում է, ինչ վոր պատմական ժամանակներից մնացել է գեղեցիկ և հարգելի։ Մտեք այդ ժողովրդի մեջ, նվիրեցեք ձեզ նրա բարոյության և նրա մանկանց կրթության գործին։ Սովորեցրեք նրանց ճանաչել յուր անցյալը, բարվոքել ներկան և գործել ապագայի համար։ Ուսուցեք նրան՝ հարգել իրեն, սիրել ընկերին և պաշտպանել նրան յերբ հարկը պահանջե։ Ցեղ ահա այդ ժամանակ ձեր ուխտը սուրբ և նվիրումը պաշտելի կլինի։

Ցես ուրախությունից վեր թռա տեղից, բռնեցի Գարեգինի ձեռքը և ջերմությամբ սեղմելով այն, բացականչեցի։

— Շնորհակալ եմ, իմ ազնիվ, իմ միակ սիրելի Գարեգին, շնորհակալ եմ այդ գեղեցիկ խորհրդի համար, վորով սովորեցնում եք ինձ առավել բարձրագույն սիրո հետ փոխանակել ձեզ համար զգացածս անվախճան սերը։ Ցես հիացած եմ և պատրաստ այս րոպեին իսկ թռչելու դեպի այդ կորած անկյունները։ Ուխտում եմ ձեր առաջ և յերդվում եմ ձեր սիրով, վոր յես «միանձնուհու» կոչումը կառնեմ վրաս և կնվիրեմ ինձ այդ սրբազան գործին։ Այժմ յես ձեր քույրն եմ, համբուրեցեք ինձ ջերմ, յեղբայրական սիրով և այդ համբույրը թող որհնե իմ ճանապարհը։

Գարեգինը վոտքի յելավ, քնքշությամբ դրկեց ինձ և հուշիկ յուր կրծքին սեղմելով դրոշմեց իմ ճակատին մի ջերմ և անուշ համբույր, գլուխը յերեսիս արտասուքի կաթիլներ։

— Գնա, սիրեցյալ քույրիկ, յես որհնում եմ քեզ, որհնում եմ քո ճանապարհը. գնա, Թող աստված լինի քեզ հետ... ասաց նա դրեթե արտասուքից խեղդվող ձայնով։

Ցես հեկեկացի և նրա գիրկն ընկա. մի քանի րոպե մենք այս դրության մեջ արտասվեցինք, ապա ջերմագին համբուրվելով բաժանվեցինք միմյանցից հավիտյան...

Վերջին խոսքերը արտասանելիս՝ քույր Աննայի շրթունքները ջղաձգաբար դողացին, նա հառաչեց և գնդանի աչքերում արցունքներ փայլեցին... Բառն յերկար տարիները դեռ չեյին մարել ուրնին միրտ սրբազան կրակը, նա դեռ մխում, առկայծում եր...

Բայց յես, վորպեսզի քույր Աննայի թախիծը փարատվեր, խնդրեցի նրան յուր պրույցը շարունակել։

— Դարեդնի հեռանալուց հետո, — խոսել սկսավ նա, — յես, դրնեն շարունակ դրաղված լեյի այն մտածությամբ, թե ինչպես պիտի իրագործեմ այն նշանավոր միտքը, վոր նա ներշնչեց ինձ՝ ելնելու դործող միանձնուհի։ Այդ բանի վրա մտածելն իսկ մոռացնել եր տալիս ինձ Դարեդնից հեռու և բաժանված լինելս, մանավանդ, յերբ հիշում լեյի թե՝ այդ նրա առեղծած միտքն և, նրա սիրած ու դուրդուբած դաղափարը՝ — մոռանալ ամեն ինչ և նվիրվել հասարակաց բարվույին։ Հետևապես, յեթե յես կարողանայի իրագործել այդ միտքը այն ճանապարհով, վորը նա գծեց ինձ համար, յես ամենաբաղդավոր կլինեի աշխարհում։

Ծնողներս, ի հարկե զարմանում լեյին՝ տեսնելով վոր Դարեդնի հեռանալուց հետո, հակառակ իրենց սպասածին, յես վոչ միայն ախորժ չեյի, այլ և առաջվա նման իրենց հետ ուրախ խոսում, ծիծաղում և ժամանակ լեյի անցցնում։

— Այդպես կլինի, անփորձ աղջիկ է, — ասում եր մի անգամ հայրս, մայր հետ առանձին խոսելիս, — յերիտասարդը վոր հեռացել է, ինքն էլ հետզհետե կսառչի և կմոռանա նրան։

Ցավ ուրախանալով վոր գործն այսքան դյուրությամբ և առանց ծանր հետևանքների վերջացավ, նոր խորհուրդներ ու ծրագրեր լեյին կազմում՝ ինձ համար նոր փեսացու ընտրելու։

Բայց նրանց ուրախությունը յերկար չտևեց։ Վորովհետև շուտով յերևան յեկավ մեր քաղաքի հարուստ և, իմ ծնողների կարծիքով, շատ հարմար մի յերիտասարդի ինձ փեսայանալու առաջարկությունը, վորի մասին նրանք խոսեցին ինձ հետ։

— Իմ ձեռքը մեկին, կամ մյուսին տալու համար այդ առաջին ու վերջին առաջարկությունը լինի, վոր անում եք, — ասացի յես նրանց հաստատ ու վճռական ձայնով։ Դարեդնից բաժանվելուց հետո մի կարծեք թե իմ ձեռքը կհամաձայնվիմ տալ մի ուրիշին, թեկուզ այդ ուրիշը իդեալ լինի յերկնքից. յերբեք։ Ցավ ուխտել ու յերդվել եմ՝ բնավ չամուսնանալ և այս ուխտից չեն կարող դարձնել ինձ վոչ ձեր խնդիրները, վոչ պատճառները և վոչ սպառնալիքները։ Այս իմ առաջին ու վերջին խոսքն է։

Ծնողներս իհարկե, շատ վշտացան իմ այս պատասխանի վրա, յերկար խոսեցին, խնդրեցին, թախանձեցին, բայց անդութ ես

դարձել էր նրանց համար անգծելի մի քարաժայռ։ Նունեիկ իմ մոր արտասուքները, վոր նա հաճախ թափում էր իմ առաջ, չկարողացան իմ սիրտը մեղմել։ Ցես հափշտակված, վոգևորված էի այն մեծ ու վեհ մտքով, վոր հղացրել էր իմ դյուրամիտ ուսուցիչը։ Իմ հոգին հպարտանում և սիրտս լցվում էր մի անսպառ ուրախությամբ, յերբ մտածում էի թե՝ կարող եմ մի որ այդ միտքն իրագործել, այն է՝ լինել «ժխանձնուհի» և այն՝ յուր տեսակում առաջինը։

Մի տարուց հետո հայրս մի փոքրիկ ճանապարհորդությունից վերադառնալով՝ հիվանդացավ սուր ջերմախտով։ Չնայելով վոր ամեն միջոց գործ դրինք նրան առողջացնելու, բայց անոգուտ։ Նա մեռավ, թողնելով մեզ և ինձ անմխիթար դրության մեջ։

Ցերբ այս ծանր վշտի առաջին ամիսներն անցան, մեր մտերիմ ազգականները խորհուրդ տվին մեզ՝ մեր վիշտը մեղմելու և հանապազորյա մտատանջությունները ցրվելու համար դուրս գալ քաղաքից և ամառն անցցնել գյուղերը շրջելով։

Իմ ուխտն իհարկե յես չեյի մոռացել, ուստի և այս ճանապարհորդությունը շատ հարմար եյի տեսնում իմ նպատակների իրագործման համար։ Այս պատճառով յես էլ իմ կողմից համոզեցի մոր՝ ընդունել ազգականների տված խորհուրդը։

Մայրս չընդդիմացավ և մենք մեր յերկու ազգականների ընկերակցությամբ ճանապարհորդեցինք 1866-ի ամբողջ ամառը։ Այդ առիթով մենք դրեթե այս բոլոր նահանգը պատեցինք, շատ գյուղեր անցանք, վանքեր, ուխտատեղիներ այցելեցինք և բերդեր ու ավերակներ տեսանք։ Ինչ գյուղ կամ ավան, վոր մտնում եյինք, յես խնդրում եյի մորս միայն այդտեղ մի քանի որ և այդ բոլոր ժամանակ ուշի ուշով դիտում եյի գյուղի դիրքն ու շրջականները, տեղեկություններ եյի հավաքում բնակիչների նիստ ու կացի, սովորության, բնավորության և, մանավանդ, նրանց մատվոր ու բարոյական կարողության մասին, իմանալու համար թե՝ վոր գյուղը կամ ավանը ավելի հարմարություն ունի իմ ազատ գործունեության կենտրոնատեղին լինելու։

Հաստնելով այս գյուղը մենք շատ հավանեցինք սրա թե դիրքին, թե ոդին, թե ջրին և թե բնության գեղեցիկ տեսարաններին, վորոնց նմանը արդարև ուրիշ տեղ չեյինք տեսած։ Մյուս կողմից էլ՝ քաղաքից շատ հեռու լինելու պատճառով, սա ամենից ավելի մոռացված, աչքաթող յեղած և մտավոր ու բարոյական ոգնականությունից զուրկ էր։ Նույն դրության մեջ եյին և այն յոթ-ութ հայաբնակ ավաններն, վորոնք գտնվում են սրա շրջականերում և վորոնց նույնպես մենք այցելեցինք։

Այստեղ մնացինք մի ամբողջ շաբաթ։ Արդեն յերկրորդ քե յերրորդ որվանից վորոշել եյի, վոր այս գյուղն ե իմ ընտրածը։ Այդ պատճառով ել հետամուտ յեղա, վորքան կարելի յեր, մանրամասն տեղեկություններ հավաքելու քե սրա և քե շրջակա գյուղերի մասին։ Այդ ժամանակ Տեր-Հովսեփը մի յերկու տարվա ձեռնադրած քահանա յեր, բայց նրան այստեղ տեսնել չկարողացա, վորովհետև մեր տեղս յեկած որերը նա գնացել եր քաղաք։ Ստիպված եյի իմ տեղեկությունները հավաքել գյուղացիներից և, գլխավորապես, մեր հյուրընկալից։

Մի առավոտ, յերբ այս սիրավետ սարահարթի վրա ղրոսնում եյինք, մայրս աքանչանալով և կարծես մարգարեանալով բացականչեց. — Ցերանի՛ նրան, ով այստեղ ապրում, այստեղ մեռնում և այս զեղեցիկ տեսարանների մեջ թաղվում ե...

Ողուա քաղելով դեպքից, յես խնդուն հարեցի. — Մայրի՛կ, արի՛ հետանանք քաղաքից և գանք այստեղ հաստատվենք մեր բնակությունը։ Իրավ, ել ի՞նչ ունինք մենք այն խառնիճաղանճ մարդկանց բազմությանն մեջ։ Հետանանք բոլորից, ապրենք այս զեղեցիկ լեռներում, այս պարզ ու բարի գյուղացիների մեջ։

— Ե՛հ, վորդի, մի՞թե կարելի յե, — պատասխանեց մայրս հառաչելով. այնտեղ տուն ունինք, տեղ ունինք և վերջապես ինչպես կարող ենք քո հոր զերեզմանը թողնել... այս խոսքի վրա սկսավ արտասվել։

Ցնս մխիթարեցի նրան և այնուհետև այլևս այդ հարցին չվերադարձա։ Բայց իմ մտքում արդեն վորոշել եյի հաստատապես թե այս գյուղը պիտի լինի իմ ապագա գործունեության միջավայրը։

Ցերբ մեր ճանապարհորդության շրջանը լրացավ, վերադարձանք քաղաք, արդարև հոգնած և մարմնով բավական կազդուրված։

Այնուհետև յես շարունակ ղրաղված եյի իմ ծրագրով և մըտքումս դրել եյի, վոր մի վորոշ ժամանակ անցնելուց հետո, յերբ մորս սիրտը բավական կամրանար, առնեյի նրան և վերադառնայի ընտրածս գյուղը։

Սակայն ճակատագիրը ուրիշ կերպ տնօրինեց իմ վիճակը։ Քաղաք վերադառնալուց հետո՝ հազիվ անցան մի քանի ամիսներ և ահա կրկին ամուսնական առաջարկություններ նորոգվեցան։ Մայրս տարօրինակ թախանձանքով սկսավ ստիպել ինձ ընդունել այդ առաջարկություններից մինը, վորն ել յես կցանկանայի, վորովհետև ինքը բոլորն ել հարմար և արժանավոր եր տեսնում։

— Հայրդ չկա, ուրիշ մեկը չունինք, վոր մեր փակ դուռը բանա, թող զոնե փեսա ունենալու ուրախությունը, մեռնելուց

առաջ, մի քանի որ վայելեմ, — ասում էր նա և խնդրում, աղերսում ու արտասուքն աղբյուրի պես աչքերից հոսում։

Ցես լսում ու տեսնում էի այդ բոլորը, սիրտս ճմլվում էր, վրդովեհաև մորս սիրում էի, ուստի և ցանկանում նրա կամքը կատարել։ Բայց իմ ուխտին ու յերդմանը նուիրական չէի կարող դրժել։ Մնում էր ինձ բացե ի բաց մորս խնդիրը մերժել, վորովհետև այդ ավելի հեշտ էր, քան ուխտից դառնալը։ Ավելի ծանր ազդեցություն արին մորս վրա իմ նպատակի մասին արածս հայտնությունները։

— Վայ ինձ, ուրեմն դու միանձնուհի պիտի լինիս, — ասում էր նա լալով. — Թեև նրա համար պահեցի, պաշտեցի քեզ, նրա համար այդ հասակին հասցրի, վոր դու սնապուխնների վանքը մտնես... Ինձ կինը չէր հասկանում իմ իսկական նպատակը, թեպետ և յես բացատրում էի ու աշխատում հասկացնել։ Նա տեսել էր վանքի մեջ փակված միանձնուհիներ, լսել էր շատ բան նրանց կրած հոգեկան զրկանքների մասին, զրկանքներ, վոր նրանք չեն կամենում քաղցրացնել մի ուրիշ, հոգեկան բարձր գործերով, այդ պատճառով էլ շարունակ իմ սեև որդն ու սեև բաղդն էր լալիս։

Ամուսնու կորուստի վրա մայրս արդեն անմխիթար էր, իմ այս անդարձ վճիռն էլ վերջին հարվածը տվավ։ Նա որ ըստ որե սկսավ մաշվել, տխուր մտածմունքներն ուժասպառ արին նրան և մի քանի ամիս շարունակ նա ծառայեց անկողնին։ Ցես պարզ տեսնում էի թե՝ ինչպես մայրս հետզհետե նվազում, մտեղնում և գերեզմանին, սիրտս կսկծում էր, ցավում, վշտանում էի, պիտեյի, վոր յեթե յուր կամքը կատարեմ, զուցե նրան մեռելությունից դեպի կյանք վերակոչեմ։ Բայց յերբ հիշում էի և Գարեգինի առաջ արած իմ հանդիսավոր ուխտն ու յերդումը, յերբ մտածում էի թե մահվան ճիրաններից մի մայր ազատելով, մեծ գործ արած չեմ լինիլ, մինչդեռ իմ ուխտին հավատարիմ մնալով, զուցե շատերին կարողանամ կոչել դեպի բարոյական կենդանություն, կրկին արիություն եր գալիս վրաս և վշտերս փոխվում էին ուրախության։ — «Ըրանք իմ բառնալիք խաչի թեթև ծանրություններն են, մտածում էի յես, թող պատրաստվիմ այսուհետև ավելի ծանրագունին հանդիպելուն»։

1867 թիվ մայիս ամսում մայրս վախճանվեց։

Ծանր, շատ ծանր կորուստ եր սա ինձ համար։ Աշխարհում այլևս յես ինձ մնում էի միայնակ... Ցերբ չամուսնացած աղջիկը չունի ծնողներ, յեղբայր կամ քույր, նա դրեթե այլևս վոչ վոք ունի աշխարհում... Այդ միայնությունը յես ավելի զգացի, յերբ մորս մահվան պատճառով մեր տուն հավաքված բարեկամներն հետզհետե սկսան իրենց տները քաշվիլ։ Մորս կողմից յես մոտիկ

և, մանավանդ, սրտացավ աղջկան չունեյի։ Ինձ մոտ միայն հոբարեբույրս յուր մի աղջիկ հետ, վորոնք և խնամում եյին ինձ քնքույշ հոգատարությամբ։

Ցերը իմ նորադուն վշտի առաջին շաբաթներն անցան, յես նորին սկսա իմ ուխտի մասին մտածել։ Ցեվ զարմանալի յե քե վորքան մխիթարություն եր բերում ինձ լոկ այդ մտածմունքը։ Մինչև անդամ սիրտս լցվում եր մի տեսակ գաղտնի ուրախությամբ, յերբ յերևակայում եյի մեծությունն այն գործի, վոր յես պիտի հիմնեյի և վորին ամբողջովին պիտի նվիրվեյի։

Ոդուտ քաղելով իմ կատարյալ ազատությունից, յես դրեթե ամբողջ տարին ղբաղվեցա իմ ապագա գործունեյության ծրագրների կազմությամբ և ուսումնասիրությամբ։ Ցեվ յերբ մոտս մահվան տարեդարձը կատարեցի, սկսա այնուհետև այդ ծրագրների սկզբնական գործադրությունը։

Ինձ հավատարիմ մի աղջկեյի ողնությամբ՝ վաճառեցի իմ ծնողներից ինձ ժառանգություն մնացած տունը, կալվածները, տան տարբ ու կարդը, նույնիսկ իմ ունեցած զարդերն ու հագուստները և այլ ամենը, ինչ վոր դյուղ տանել, կամ դյուղում գործադրել չեյի կարող և բոլոր գումարված փողը ավանդ տվի իմ հիշյալ աղջկանին, վոր վերին աստիճանի աղնիվ ու վստահելի լինելուց զատ, չափազանց համակիր եր նաև իմ գաղափարներին։

Ցերբ ամեն բան պատրաստել եյի դյուղը քաշվելու համար, հենց այդ ժամանակ իմացա, վոր իմ սիրելի ուսուցիչն արդեն վարդապետական կոչումն և առացել Ցերուսաղեմում, ուր նա խույս եր տվել ճակատագրի հալածանքից ազատվելու համար։ Այս լուրն անսահման ուրախություն պատճառեց ինձ։ Ուրեմն մենք յերկուսս նվիրվում եյինք մեր ուխտին դրեթե միաժամանակ։

Գործերս կարգի բերելուց հետո յես միայն մի քանի շաբաթ մնացի բարեկամներիս հետ։ Ապա պատրաստել տվի ինձ համար միանձնուհու սև աքեմ և այդ աքեմով էլ դուրս յեկա քաղաքից։

Վերջին անդամ իմ ծնողաց գերեզմանին այցելելով և վերջին անդամ նրանց շիրիմները համբուրելով՝ յես ճանապարհվեցա դեպի այս դյուղը՝ ընկերակցությամբ մի դյուղացու, վոր առաջին անդամ հանդիպելուց ինձ՝ ճանաչեց իբրև միանձնուհի, կամ ինչ պես ինքն եր ասում «ապաշխարող»։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՈՐ

Ցերբ այստեղ մտա, ինձ դրեթե վոչ վոք չճանաչեց, չընայելով վոր յերկու տարի առաջ այս դյուղումն եյի յեղած մոտս հետ։ Իմ առաջնորդի նման՝ դյուղացիներն ևս ընդունեցին ինձ իբրև

իսկական միանձնուհու և սկզբից արդեն վերաբերվեցան ինձ հարգանքով։

Առաջին ծանոթս Տեր-Հովսեփին էր, որի տանն էլ իջևանեցի։ Բայց մինչև մի վորոշ գործի ձեռք գարնելս, վոչ վոքին վոչինչ չհայտնեցի իմ դիտավորության մասին։ Այժմյան յեկեղեցուց վոչ հեռի՝ վարձեցի մի սենյակ և սկսա ապրել այնտեղ իբրև մի ճշմարիտ ճապաշխարող։ Իմ բնակարանը թեպետ դյուղի մնջ յեղածներից լավագույնը, սակայն նա վոչ այլ ինչ եր, յեթե վոչ խոնավ, մութ, փոքրիկ պատուհաններով մի խցիկ։ Դուրս գալ քաղաքի փառավոր տանից և ապրել դյուղի այդ տեսակ մի հյուղում, դա արդարև չափազանց զգալի էր ինձ համար։ Ցես դժվարությամբ էլի շնչում այդտեղի խեղդված ոդը և առավել ևս դժվարությամբ ընտելանում ինձ շրջապատող աղքատության։ Ցերբեմն մինչև անգամ զղջման նման մի բան կարծես կամենում եր իմ կամքի հաստատությունը սասանել։ Բայց յերբ մտածում էի, վոր այս ամենը դեռ ոսկիզբն է յերկանցք, վոր իմ ուխտին հավատարիմ մնալու համար դեռ պետք է սրբիչ շատ նեղություններ հանդիպեմ և վոր վերջապես այս բոլորն այն մեծ ու սուրբ գործի համար է, վորին նվիրվել է և իմ սիրելի ուսուցիչը և վորն անշուշտ նստած է այդ րոպեին նուխնալիսի մի խուցում, այն ժամանակ նորեն արիություն եր գալիս վրաս, յես սկսում էի սիրել իմ մութ, աղքատիկ բնակարանը, իմ սև և տխուր աքեմը, իմ մենավոր անպատճառ կյանքը։

Ավելի շատ մխիթարվում էի, յերբ դուրս գալով իմ անակից, մտնում էի դյուղական խղճուկ յեկեղեցին աղոթելու և տպա պատահելով դյուղացիներին ու գեղկուհիներին՝ խոսակցում էի նրանց հետ իրենց ցավերի ու կարոտությունների մասին։ Նրանց պարզ ու անկեղծիք բնավորությունը, մտերմական, բայց համեստ ղրուցները, անմեղ և շատ անգամ նախանձաշարժունքով լի դատողությունները ինձ և՛ հիացնում և՛ զվարճացնում էին։ Մի քանի ամիս շարունակ յես ուշադրությամբ դիտում և ուսումնասիրում էի դյուղացիների բնավորությունը, նիստ ու կացը, սովորությունները, ընտանեկան հարաբերությունները։ Հետո կամաց կամաց սկսա մտնել ընտանիքների մեջ և աշխատել կապել նրանց ինձ հետ, ոգնելով յուրաքանչյուրին յերբեմն խորհուրդներով, իսկ հաճախ գործով։

Ամենից առաջ յես ուշադրություն դարձրի դյուղի աղքատ և անոգնական ընտանիքների վրա և նրանցից յուրաքանչյուրի կարոտության չափն իմանալուց հետո, հորդորեցի հարուստ դյուղացիներին ոգնել նրանց ինչ բանով վոր կարող էին։ Ցեվ

վարժվեանք դյուղացու համար որինակն ամեն խոսքից դորավոր է, ուստի ամենից առաջ չենք սկսա ոգնել կարտաներին։ Իմ սեփական միջոցներով գնեցի կովեր, այծեր և դյուղացուն պիտանի ուրիշ պարագաներ և բաժանելով այդ ամենից ավելի կարիք ունեցողներին, նույնը անել հորդորեցի և հարուստ դյուղացիներին, այն է՝ իրենց ավելորդից մի-մի բան հատկացնել չունեևոր դրացուն։

Մեծ յեղավ իմ ուրախությունը յերբ տեսա թե՝ իմ որինակն ու հորդորը ապարդյուն չանցան։ Դյուղացիների մեջ դարձնեց զեղեցիկ նախանձավորություն՝ միմյանց ոգնելու։ Ցավ այդ նորությունը վոչ միայն հեռացնեաև դյուղի միջից հալածեց աղքատությունը, այլ և դյուղացիների մեջ հաստատեց սեր և բարեկամություն, սովորեցնելով ընկերին՝ սիրել ընկերոջն և ոգնել նրան։

Իմ յերկրորդ գործն յեղավ մի կանոնավոր ուսումնարանի բացումը։ Տեր-Հավսեփը, ճշմարիտ և, ուներ յուր տան մեջ փոքրիկ դպրոց, ուր նահապետական ձևով մի քանի տղաներ եր կարդացնում, բայց յես համոզեցի նրան ընդարձակել այդ գործը։

Քահանան, առ հասարակ, հեղինակություն ունի դյուղում։ Նա ժողովրդյան հոգևոր առաջնորդը լինելով, և միևնույն ժամանակ և նրա համոզմունքի կառավարը։ Մի ոգտավետ գործ առաջ տանելու համար, պետք և աշխատել ամենից առաջ քահանայի հաճությունը վաստակել և, յեթե կարելի յե, նույնիսկ գործի սկսող և հեղինակ նրան հռչակել։ Այդ բանը դժվում և քահանայի ինքնասիրությունը և նա փոխանակ գործին խափան դառնալու, ինքն և նրա հաջողության ճանապարհը հարթում։ Մեր թերթերում շատ անգամ կարդում ենք դյուղական վարժապետի և քահանայի մեջ ունեցած ընդհարումների մասին լուրեր կամ հոդվածներ։ Ո՞վ և լինում արդար և ճիշ մեղավոր, այդ շատ անգամ չի պարզվում, բայց ինձ համար դոնե մի բան ևնում և պարզ. այն է՝ վոր դյուղերում ծառայող մեր յերիտասարդները, վորոնք անշուշտ սիրում են իրենց գործը, չեն կամենում նույնիսկ ի սեր այդ գործին, իրենց փառասիրության մի փոքրիկ մասը զոհել։ Նրանք կամենում են հեղինակություններ ճանաչվել դյուղում, նույնը ցանկանում և և՛ քահանան։ Յերկուսի շահերն ընդհարվում են միմյանց և այդ ընդհարման ժամանակ գործը վնասվում և։ Բայց այդպես չպետք և լինի։ Մեր վարժապետները, քանի վոր առիթ ունեն գործել դյուղերում վոչ ավելի լավ, քան ինչ վոր ունենք քահանաների հետ, պարտավոր են ի սեր գործի հաջողության՝ զոհել իրենց ինքնասիրությունը, նույնիսկ ազնիվ փառասիրու-

թյունը։ Թող գործի հեղինակ համարվի քահանան, թող նա վայելե հաջողության փառքը, նա լինի գործյալ գյուղի առաջին հարգելին, միայն թե գործը հառաջադիմե։ Հակառակելով քահանային և աշխատելով ձգել նրա վարկը ժողովրդի աչքում, դրանով վոչ միայն գպրոցական գործի հաջողությանն ենք վնասում, այլ և գործում աննպատակ հանցանք, սառեցնելով գյուղացու կրոնական ջերմեռանդությունը, վորն և պատճառ և դառնում նրա բարոյականի քայքայման։ Իսկ յերբ տգետ գյուղացու մեջ մեռնում է բարոյականը, այնուհետև նա վոչ այլ ինչ է, յեթե վոչ մարդակերպ մի հրեշ, վորի խոսքերը ղղվանք և գործերը սարսափ են բերում մարդու վրա։

Վորպեսզի Տեր-Հովսեփն իմ դիտավորության մեջ յուր սկսած գործի խափանումը չնկատեր, յես նրան հանձնեցի ուսումնարանն ընդարձակելու հոգսը։ Հարկ չկա ասել, վոր կարևոր խորհուրդներն ու հրահանգները յես եյի տալիս, իսկ ժողովրդի առաջ միայն ինքն եր յերևում։

Մեր ժամանակավոր ուսումնարանը քահանայի ընդարձակ ներքնատան մեջ եր, ուր ամեն կրակ եր վառվում նույն նահապետական ոջախում և ծուխը բարձրանում նույն վաղեմի յերդիկով։ Բայց նորությունն ղգալի յեր աշակերտների թվի մեջ, վոր տասնևհնդից հասել եր յոթանասունի. տեսակի մեջ ըստ վորում տղերանց հետ միասին, սովորում եյին և աղջիկներ, նույնպես դասավանդության յեղանակի և առարկաների մեջ, վորոնց մեծ մասը յես եյի ավանդում։

Առաջիկա գարնան ահա, այս ուսումնարանի շինության հիմքը դրինք, վորն և դրեթե նույն տարվա մեջ ավարտվեց։ Ճշմարիտ և, դյուղավոր և կշիռ ունեցող ծախսը յես արի, բայց գյուղացիներին էլ հորդորեցի մասնակցել գործին իրենց նպաստներով։ Ցավ այդ՝ վոչ թե նրա համար, վոր իմ նյութական ուժը չեր բավում ամբողջ շինությունն ավարտելու, այլ վորպեսզի նրանք հասարակական գործի համար զոհաբերության ունենք սովորեցին։ Այդ առաքինությունը, մանավանդ, անծանոթ եր այն ժամանակ այս գյուղացիներին, գանե այն չափով, վորպիսին յես եյի պահանջում։ Բայց բարի օրինակը վարակիչ գործավ։ Զարմանալի յեռանդով ու վոգևորությամբ ձեռք զարկեցին նրանք գործին, ինչպես այդ անում են, առհասարակ, յեկեղեցու շինության համար և շուտով ավարտեցին այն։

Ուսումնարանի շինությունն ավարտելուց և ուսման գործը կանոնավոր ընթացքի մեջ դնելուց հետո, յես քահանայի հետ շրջեցի մոտակա գյուղերը և ամեն տեղից էլ աշակերտներ հավա-

քնցի, վորպեսզի մեր դպրոցից միայն այս դյուղը չոգտվեր, այլ ուրիշներն ևս շահվեյին։ Այսպիսով մեր գործը հեռահնաև ընդարձակվելով չեկավ հասավ նախանձելի դրուԹյան։ Այնուհետև աշխատանցի ուրիշ դյուղերից բերած մի քանի ուշիմ աշակերտներից ուսուցիչներ պատրաստել և նուիրելով իրենց դյուղերում փոքրիկ դպրոցներ հիմնելով նրանց կառավարուԹյան հանձնել, հարկավ իմ անմիջական հսկողուԹյան ներքո։ Այդ գործն ևս, ահա քանի տարի չե, շարունակվում և արդյունավոր կերպով։

Ցերբ դպրոցական գործը հաստատուն հողի վրա դրվեցավ, չես ուշադրուԹյուն դարձրի դյուղական չեկեղեցու բարեկարգուԹյան վրա։ Վոչ մի հաստատուԹյուն այնքան մոռիկ չե դեղջուկի սրտին, վորքան չեկեղեցին և վոչինչ այնքան չե վառում, բորբոքում նրա սիրտն ու հոգին, մեղմում բարքի կոշտուԹյունը, սանձում կրքերը և ընդհանուր դարձնում նրան բարիք գործելու, վորքան ախորժալուր չերեկոյուԹյունը, հանդիսավոր պատարագը և մըշտամրմունջ աղոթքները։ Նրանք, վորոնք այս ժողովրդին վայրենի չեն համարում և ընդհանուր բարվո և դեղեցկի արժանիքը հասկանալու, չարաչար սխալվում են։ Դյուղացին, ճիշտ է, լեզու չունի յուր դդացածն արտահայտելու և վոչ էլ շնորհք՝ նուիրիսկ հիացման և հափշտակուԹյան ժամանակ յուր դեմքին քննարկը արտահայտելու տալու, բայց նա բարվո և դեղեցկի սերուկն է. նրա վոգևորուԹյունը անդրադա չե անցնում, նրա դդացածը հեշտուԹյամբ չե մոռացվում։ Իմ առաջարկուԹյուններից շատերն չես արել եմ այդ դյուղացիներին՝ մի հանդիսավոր պատարագից, կամ ժամասացուԹյունից հետո, նրանց դդացված և վոգևորված միջոցին։ Ցեվ այդ առաջարկուԹյունները, վորքան էլ վորոշ դժվարուԹյուններով հետ լծորդված, այսուամենայնիվ, ուրախուԹյամբ ընդունել և անարատունջ կատարել և ժողովրդի դոնե մեծագույն մասը, համոզված լինելով թե՝ ինչ վոր հաստատուԹյան համար է անում, այն և յուր անձի համար է։ Այս իսկ պատճառով չեկեղեցու պայծառուԹյունը դպրոցական գործի հաստատուԹյան հավասար ոգտակար ճանաչելով՝ չես աշխատեցի, վորքան ուժերս ներում էին, առաջ տանել նրան և հասցնել այն դրուԹյան, վորին ծանոթ եք արդեն։

Հետո կարդը գալիս եր դյուղացիների թե ներքին ընտանեկան կյանքի և թե նրանց դաշտային աշխատուԹյան մեջ մի քանի նորուԹյուններ մտցնելուն։

Հետևից դիտողն այնպես և կարծում թե դյուղացին սովորած լինելով պարզ ու անպաճուճ կյանքի, շատ աննշան էլ կարիքներ ունի, թե նա միշտ գոհ և յուր վիճակից է թե, առհասարակ,

նրան շատ քիչ բան է պակասում։ Մի բան ճշմարիտ է. այն, որ գյուղացին որոնելու և ամեն անցորդի յուր ցավերը պատմելու սովորություն չունի։ Նա գլխակոր և անմռունչ աշխատում է՝ ինչպես և յուր անասունը։ Բայց նա ամբողջապես կաղմված է կարիքներից... Այժ, պետք է ապրել նրա ընտանիքում, տեսնել և շոշափել նրա աղքատությունը. ներկա լինել դաշտում նրա կրած տանջանքներին և չափել այդ տանջանքների դնով ձեռք բերած արդյունքի չնչին արժեքը, որպեսզի կարող լինի մարդ գաղափար կաղմել գյուղացու կարողությունների մասին։

Իսկ այդ կարողությունները մեզնե կարծում եք թե՝ միայն նյութական ոգնությամբ են վերացվում։ Վաչէ Նյութականը, հարկավ, ավելի մեծ և ավելի արագ գործ է կատարում։ Բայց վերտեղից ձեռք բերել այնքան նյութական ոգնություն, որով ամեն գյուղացի կարողանա ապահովվել։ Եզդածը, հարկավ, կլինի ժամանակավոր նպաստ, վերջինի պակասելուց՝ կարողությունը դարձյալ յերևան կգա նոր ուժով և այն լցնելու համար՝ գյուղացին դարձյալ կստիպվի խնդրել։

Բայց կա արդարև գյուղացուն մշտապես կարողությունից զրկող ապահով միջոց. այն է՝ սովորեցնել նրան ինքնոգնության, որ կայանում է յուր աշխատությունը և ստացած արդյունքը անտեսելու և խելացի կերպով գործադրելու մեջ։ Այս միջոցն արդարև, շուտով չե լցնում գյուղացու կարողությունը, բայց լինում է հաստատ և տևական։ Մի անգամ արդեն զարթեց տկար մարդու մեջ ինքն իրեն ոգնելու գիտակցությունը, նա այնուհետև ապահովված է ամեն տեսակ կարողությանց դեմ։ Միակ, փոքրիկ դժվարությունը՝ գյուղացուն այդ բանին վարժեցնելն է։

Ցեղ ահա այդ նպատակով յես շարունակ աշխատեցի, ժողովները կաղմեցի, խոսեցի, բացատրեցի, նույնը նաև հաճախ քարոզել տվի Տեր-Հովսեփին, մինչև որ վերջի-վերջո հասա նպատակիս։ Այժմ մենք ունինք այստեղ մի «հասարակաց շտեմարան», որին յուրաքանչյուր գյուղացի, տարվա մեջ ստացած յուր արդյունքից տալիս է տասանորդ—ցորեն, գարի կամ կորյակ, նայելով թե՝ ինչ արմաիք ունի ինքը։ Իսկ կարողության ժամանակ՝ նա անարգել ոգուտ է քաղում այդ շտեմարանից փոխատաբար, այն պայմանով, որ պարտքը վերադարձնե որոշ տոկոսի հետ։ Այդ շտեմարանին տասանորդ չեն վճարում միայն չունևորները, բայց կարիքի ժամանակ նրանք ել համահավասար իրավունքով ոգտվում են նրանից։

Մենք ունինք նույնպես «հասարակաց նպաստ», որին ամեն մի ունևոր տարվա մեջ նվիրում է մի կամ յերկու հորթ, նայելով

թե ասուած մորքին և պարզևել իրեն։ Այդ նախերը գնալով հաստատուում է և մենք նրանից լցնուում ենք դարձյալ չուներոր ընտանիքների կարոտութիւնը՝ մեկին մի կամ յերկու կով նվիրելով, մոր նրանց կաթով յուր յերեխաները կերակրէ, մյուսի դաշտը ձրիաբար հերկելով, յերրորդի խոտն ու խուրձերը հանդից տուն բերելով, չորրորդի կալը կալսելով և այլն։

Ունենք նաև մի փոքրիկ «Բոխատու դանձարան», որի հիմնական դրամագլուխը ինքս եմ հոդացել, դարձնելով այն գյուղական հասարակութեան սեփականութիւն։ Այդ դանձարանից ահա, հավասարապես ոգուտ են քաղում թե այս և թե շրջակա գյուղերի բնակիչները իրենց կարոտութեան ժամանակ, կարողը մի թեթև տոկոս վճարելով, իսկ աղքատը՝ առանց տոկոսի փոխառնելով։ Այս փոքրիկ, քան եյութեան աննշան հաստատութիւնը, որի նմանը հարյուրներով կարող են հիմնել մեր հարուստները գյուղերում, բացի գյուղացու կարիքը ժամանակին լցնելուց և նրա աշխատող ձեռքերին աղատութիւն տալուց, փրկում է նրան, նաև, վաշխառուների ճանկերից։ Վերջիններս՝ վաղուց է ինչ հալածական են այս կողմերից։

Այս ամենը կատարելու հետ միասին, դեռևս յեր լինում մի կարիք, որ լցուցանելու համար, դժբախտաբար, յես բավական պատրաստութիւն չունեցի. այն է՝ սովորեցնել գյուղացուն յուր աշխատութիւնից առավել շահավոր յեղանակով ոգտվելու ճանապարհը։

Այդ նպատակին մասամբ հասնելու համար յես բերել տվի գյուղատնտեսական գրքեր, յերկրագործութեան, անասնապահութեան, հավաբուծութեան, մեղվապահութեան և կաթնային տնտեսութեան վերաբերյալ և շարունակ կարդալով ու ուսումնասիրելով նրանց, սկսա գործադրութեան հարմար յեղածները սովորեցնել գյուղացիներին։ Այդ նպատակով յես ձմեռ ժամանակ, դասից աղատ միջոցներին, հրավիրում եմ գյուղացիներին ուսումնարանի դահլիճը և գրքերից ուսածները պատմում և հասկացնում նրանց։ Հաճախ եմ հաճախ և գեղջկուհիներին և տնային տնտեսութեան վերաբերյալ հասկանալի դասեր խոսում նրանց։ Այս նորութիւնները բոլորին էլ հավասարապես ուրախութիւն և գոհութիւն եյին պատճառում։

Շատ անգամ անձամբ ներկա եյի լինում տանը՝ գեղջկուհու և հանդում գյուղացու արած փորձերին. նրանց չհասկացածները յես նորեն կրկնում, նորեն բացատրում եյի և յերբ փորձերից մինն անհաջող եր անցնում, քաջալերում, խրախուսում եյի և փորձը նորեն կրկնել տալիս, մինչև որ հաջողութիւնը ձեռք եյինք բերում։

Այսպիսով ըստ իմովսանին, պետում էլի պյուղացուն յուր դժվարաքրտին աշխատությունը բարվոք գործադրելու ճամ վորավհամա այստեղի ժողովուրդն ինքն ի բնե ուշիմ և ընդունակ և, ուստի իմ սովորեցրածները յուր ունեցած փորձառության հետ միացնելով, կարողանում է հին ժամանակներից ավելի ոգուտ քաղել յուր աշխատությունից։

Գաղաքներում ապրող մեր գործողներն, առհասարակ, մեզ կալծիքի չեն, թե պյուղում գործելու ասպարեզ չկա, թե ձանձրույքն ու պարապությունը կարող են այստեղ մարդուն խեղդել։ Մինչդեռ յես, չդիտեմ թե վորքան ժամանակ էլ պիտի ապրեմ, վոր պյուղական ժողովրդի մեջ կատարելիք կարևորագույն գործերի դեթ մի մասը կարողանամ կատարել։ Գաղաքներին կյանք մատակարարողը պյուղն է, ինչպես և ազգի կենդանության ուժ ու ոզորը՝ պյուղացին։ Ով վոր կամենում է ազգի կենդանությունը զորացնել, նա պիտի պյուղը դա գործելու, ղի ծառը ջրելու և ուռճացնելու համար, նախ նրա արմատները պետք է հաղեցնել...

Բուր-Աննան յուր պատմությունը դրեթե ավարտել եր։ Այժմ յես պիտեյի թե այնքան շատ ինձ հետաքրքրող «միանձնուհին» ովկեր։ Սակայն մնում եր իմանալ էլի մի բան, այսինքն այն, թե յուր թված բոլոր այս դեղեցիկ գործերը, վորոնցից ավելին ինքս ամեն որ տեսնում էի իմ աչքով, արդյոք նա առանց դժվարության և արգելքների չեր սկսել և դլուխ հանել, թե հանդիպել եր նաև խոչնդոտների։ Ճիվ յեթե այս վերջիններըը չեղել էլին, ապա իրնչպես նա, մի տկար կին, կարողացել եր կռվիտ պյուղացու առեղծած արգելքների դեմ կռվել։ Իմ այդ հարցին նա պատասխանեց։

— Աշխարհում յես չդիտեմ դեռ մի գործ, վորի կատարման ադատ լիներ արգելքներից։ Գոնե իմ փորձերից սովորած, յես կարող եմ ասել թե, նույնիսկ ամենադյուրին համարված գործը, կապ ունի միշտ մի արգելքի հետ։ Սակայն այդ արգելքները՝ կարծում եմ, միշտ էլ ըստսակար չեն։ Ընդհակառակը՝ դրանք սովորեցնում են գործողին՝ յուր գործը դնել հաստատ հիմքի վրա, կամ ապադա չարիքների դեմ դարձնել այն աննկուն ու զորավոր։

Արգելքների մասին եք հարցնում, ճ, յես նրանց շատ եմ հանդիպել, թեպետ իմ պատմության ընթացքում և վոչ մինը հիշեցի։ Ճեթե իմ նվիրման գործում, զգացածս ուրախությունը թունավորվել և յերբեմն այդ պատահել և հենց արգելքներից զգրաստունին հանդիպածս ժամանակ, մանավանդ, յերբ դրանց դեմ կըռ-

վելու համար իմ ուշքը նվաղ և քաղաքականն անբավարար եմ դառել։ Բայց համբերությունն ու անվհատ աշխատությունը վճռիչացնում են, նույնիսկ, ամենադժվարին արգելքները։ Այդ ճշմարտության չես հասու լեզա, դժբախտաբար, մի փոքր ուշ, վերամիևնոյն համբերությունն էլ սովորեցնում է մարդուն փորձառությունը, որից չես զուրկ էլի իմ առաջին ձեռնարկությունների ժամանակ։

Դժվար չէ ձեզ յերևակայել թե վերքան մեծ եր լինում իմ անհանգստությունը, յերբ մի ոգտավետ գործ սկսելու համար ամեն ինչ մտածած, կշռած և կարևոր ծրագիրը կազմած, ուրախ ու հուսալիր դիմում էի դյուղացիներին և առաջարկում նրանց ոգնել ինձ այդ գործն սկսելու, հանդիպում էի սառն ու անտարբեր ընդունելության։ Ճշմարիտ է, նրանք ինձ հարգում էին, ուսաի և լսում ինձ հոժարությամբ, շատ անգամ էլ նույնիսկ գլուխները շարժում ի նշան համաձայնության, բայց դրանով էլ վերջանում եր նրանց ձեռնտվությունը։ Ամեն վոք անտարբեր դնում եր յուր գործին և չես գործյալ մնում էլի միայնակ իմ մտածմունքներին և ծրագիրների հետ։

Դրանից հետո, ասենք, չես գլխում էլի քահանային, խոսում էլի նրա հետ ամբողջ ժամերով։ Նա նույնպես ուշադրությամբ լսում եր ինձ և, մինչև անգամ, համոզվում, վոր չես հասարակության համար ոգտավետ գործ եմ առաջարկում։ Սակայն մի բան արգելում եր նրան համաձայնվել ինձ հետ։ Ի՞նչ բան եր այդ, չդիտեի, միայն ինձ թվում եր թե նա չեր կամենում այս դեպքում յուր խելքին հավատալ, նա վախենում եր, թե մի գուցե յուր համաձայնությունից կամ առաջարկած գործից մի վնաս հասնեն իրեն։

Նույն ձևով եր վարվում և ատենապետը, յերբ խոսում էլի նրա հետ և սկսելիք գործի կարևորությունը բացատրում իրեն մատչելի օրինակներով։ Նա ինձ հասկանալով և իմ խոսքերից համոզվելով հանդերձ խնդրում եր թողնել գործը մի ուրիշ անգամի, կամ գալ տալիան։ Ամենչն այն ժամանակ, գուցե գյուղացիներին կարոզանամ համոզել», ասում եր նա և սակայն այնուհետև գյուղացիների հետ վոչինչ չեր խոսում, կամ յեթե խոսում եր, հարցն այն ձևով եր դնում, վոր լսողները վոչ հետաքրքրվում և վոչ էլ ուշադրության էլին առնում այն։

Վոչ մի բանից այնքան չեր խորշում գյուղացին, վորքան այն նորություններից, վորոնք հակառակում են գյուղի նահապետական սովորություններին։ Գյուղացու այդ հատկությունը հարգելի չի արդարև յուր ունեցած առաքինությունների ու խնամ

բարոյականի նկատմամբ. բայց նույն հատկությունն անպայման ընտանում է նրան, յերբ խնդիրը գալիս է յուր աշխատությունը արդյունագործելու հին յեղանակը բարեփոխելու, կամ դյուղի մեջ հանրոգուտ մի հաստատություն հիմնելուն: Նա դրանց դեմ էլ համարյա, նույն ուժգին և կովում, ինչ ուժով վոր կկովեր՝ յերե մինը համարձակվեր ձեռնամուխ լինել յուր բարոյականը խախտելուն: Ուզեցի ծանոթությունն, առհասարակ, թաղավորում և դյուղերում և այդ և պատճառը, վոր դյուղացին խորշում և միշտ սկսել այն ինչ վոր չեն սկսել յուր հայրը կամ պապը:

«Այսպիսի դեպքերում յես վերադառնում էի իմ խուցը տխուր և շատ անգամ հուսահատ: — Ի՞նչ պիտի կարողանամ անել այս ժողովրդի համար, քանի վոր նա ինքը չե կամենում յուր բարին, մտածում էի յես. — մի որ, այո, այն կարծիքին էի թե ամեն ինչ կարող եմ անել, ամեն արդելքների կարող եմ հաղթել, բավական և, վոր հաստատ կամք և գործելու յեռանդ ունենամ... բայց այժմ, ահա տեսնում եմ, վոր բարիք գործելու համար էլ բավական չե գործողի կամքը, այլ նրան պիտի միանա նաև բարիք ստացողի ցանկությունը: Այսպես էի մտածում այո, բայց հետո տեսնում, վոր մտածելով վոչինչ չեր առաջանում, պետք եր գործել: Ցեվ յես դարձյալ մտնում էի դյուղը, խոսում էի, հորդորում էի, վորին էլ պատահում էի, ուր վոր էլ նստում էի: Այդպիսով հետևում էի Քրիստոսի խոսած ջաստավորի և այրուձ առակին: Ցես դարձել էի այրին, իսկ դյուղն՝ իմ դաստավորը. յես հանդիստ չէի տալիս նրան: Ցեվ պետք է ասել, վոր այդպիսի վարմունքս բավական ոգնում եր գործերի հաջողության: Հավատացեք, վոր նույնիսկ ուսուցիչարան մտցնելու նպատակով մի վորևե տանից մի ավելորդ յերեխա դուրս բերելս մեծ նեղություն եր նստում ինձ: — «Մեր տանից մինը սովորում է, այդ էլ բավական է, ասում եր մայրը, սրանք էլ պետք է տանը ճնան, վոր մեզ ոգնենան: Իսկ այդ «սրանքը» շատ անգամ հինգ կամ վեց հոգի էին լինում: Կարելի յեր միթե այդքան յերեխաներն անփութությամբ թողնել տգիտության մեջ: Իսկ ինչ աղջիկներին և վերաբերում, մինչև վոր նրանցից մի քանիսը մեր ուսուցիչարանը մտցրի, դրեթե տասը տարով պատավեցա: Մեռնողը վոչ մի կերպ չէին կարողանում հաշտվել այն մտքի հետ թե՝ աղջիկը կարող է կարդալ: Զարմանում էին, և հաճախ նույնիսկ ծիծաղում ինձ վրա. — «Ինչիմն է պետք աղջկան կարդալը, հապա հասկացրեք մեզ», ասում էին նրանք: Իսկ դյուղացուն այդ հասկացնելն այնքան էլ հեշտ չեր լինում: Ամբողջ ժամերով խոսում, բացատրում էի և այն բոլորին, վոր կարծում էի թե, հա, այժմ հասկացել ու

համոզվել և, նա գլուխը շարժում և անտարբերությամբ — լեհ, ասում ես ելի...» նկատում ու հեռանում եր։ Ցես մնում եյի աղշած նրա յետևից նայելիս։

Ուրիշ մի հասարակական գործ հիմնելու համար առաջ եյինք գալիս այլ տեսակ արգելքներ։ Այսօր, որինակ, հավաքել եմ գյուղացիներին և խոսում եմ նրանց հետ սկսելիք գործի ոգտակարության և անհրաժեշտության մասին։ Ներկացից շատերն, ասենք, խոսքերս հասկացել և գործն սկսելու համար համաձայնում են ինձ հետ։ Մյուսները, նույնպես, համաձայն են և գործի դեմ խոսքեր վոչինչ չունեին։ Բայց վորովհետև առաջին համաձայնվողների հետ մի հակառակություն կամ թշնամություն ունեին, հետևապես հակառակում են, նաև, իմ առաջարկած գործին։ Մեկ ել տեսար մի գյուղացի բարձրացավ տեղից և մի անմիտ առարկություն արավ առաջարկությանդ դեմ։ Մի հինգ, տասը հոգի յել իրենց կողմից են սկսում ավելի անմտագույն առարկություններ անել առանց վոր այդ առարկությունները կազ ունենային իրար հետ։ Ցնել ահա բարձրանում և աղմուկը, գոռում, դոչում են գյուղացու առողջ ու զվարթ ձայներով և առանց միմյանց հասկանալու, սկսում նախատինք ու լուտանք թափել իրար վերա։ Այնուհետև յես ամեն խնդիր մոռացած, զբաղվում եմ քահանայի ոգնությամբ նրանց հանդստացնելով և ժողովը ցրելով։

Դրանից հետո, ասենք, գալիս և ինձ մոտ հակառակ կուսակցությունը և յուր պատրաստակամությունը հայտնում առաջարկությունն կատարելու։ Բայց յես զգուշանում եյի նրա պատրաստականությունից ոգտվել, վորովհետև դրանով գլխի գցելի մյուս կուսակցության զայրույթը և մշտական թշնամի դարձնելի նրան իմ բոլոր ձեռնարկություններին։ Գյուղերում, մանավանդ, պետք և զգուշանալ այդպիսի բաժանումներ առեղծելուց։ Վորովհետև յեթե քաղաքներում իսկ համեմատաբար ավելի հասկացող և զարգացած կուսակցությունը, կրքից կուրացած, չեն կարողանում հակառակորդ կուսակցության գործերի մեջ լավը տեսնել և խոստովանել, ինչ կարող և լինել գյուղերում, ուր ժողովուրդն ավելի ազնա, ավելի նեղհայաց, հետևապես և ավելի յեսառ եւ

Այս պատճառով իսկ հաճախ իմ առաջարկած կարևոր գործը յետաձգելով՝ զբաղվում եյի այս ու այն մարդու միմյանց հետ ունեցած թշնամության պատճառները հարցնելով ու քննելով և հետո ամեն հնար գործ դնում նրանց հաշտեցնելու, դժություն կրճիմը մեջտեղից բառնալու, համոզված լինելով, վոր դա ևս մի ոգտավետ ծառայություն և և, մանավանդ թե, անհրաժեշտ։ Վո-

բովհետև հակառակությունը մեջտեղից վերցվելուց հետո, գործի ճանապարհը հարթվում է ինքն իրեն։

Բայց յերբ մի քանի տարի անցան և դյուղացիներն իրենց աչքով տեսան իմ առաջարկած ու սկսած գործերի շուշափելի ոգուտները, այնուհետև նրանք իմ հյուս հպատակները դարձան։ Ել կարիք չեր լինում նրանց հետ յերկար խոսելու կամ համոզելու։ Այժմ նրանք ինձ հավատում էին կուրորեն և վստահ էին իրենց հառաջադիմության նկատմամբ ունեցածս սիրո վրա։ Այնուհետև յես վոչ թե խնդրում, այլ պատվիրում էի և իմ պատվերները կատարում էին ճշտությամբ։

Ով վոր կոչված է դյուղում գործելու, նա պետք է իմանա, վոր գործ ունի քմահաճ մի յերեխայի հետ։ Ինչպես վոր հոգատար դաստիարակը համբերությամբ և առանց հուզվելու տանում է յերեխայի քմահաճությունները, չհրաժարվելով, սակայն, շարունակ նրան ուղղելու անհրաժեշտ միջոցներից և նրա ընդունակությանն չափով, նրան բարին ու աղնիվը ներշնչելու պարտավորությունից, այդպես էլ պիտի վարվի դյուղի մեջ գործողը։ Նա չպետք է նույնիսկ ինքնասիրություն ունենա կամ հուզվի ու վրդովվի, յեթե այդ ինքնասիրությունը կոպտությամբ վիրավորվի։ Նա ավելի առաքյալի, քան հասարակ գործողի դեր պիտի կատարի։ Դյուղում հնձելու վոչինչ չկա. դա մի խորթացած, խոպանած յերկիր է. պետք է հերկել, արորադրել այն. պետք է մշակել, պարարտացնել հողը և ապա թե սերմանել։ Այդքանն է միայն մեր ժամանակի մշակների գործը։ Իսկ այդ գործի աղնիվ պատրաստության հունձը ուրիշ և ավելի բազդավոր ժամանակի մշակներ կանեն, որհնելով անշուշտ այն անձնվեր նախորդներին, վորոնք համառությամբ մշակեցին յերկիրը և ջանքանեցին դներմն բարի...»

— Վորովհետև արգելքների մասին է խոսքը, — շարունակեց քույր-Աննան, — յես կարծում եմ, դրանց թվում պետք է դասել և այն արգելքները, վորոնք յերբեմն հանդիպում էին ինձ վրչ թե արտաքուստ, այսինքն դիմացի մարդկանցից, այլ նույնիսկ ինձանից։ Կարող եք այդպիսի արգելքներ յերևակայել։

— Զգիտեմ, չեմ հասկանում ձեր խոսքը, — պատասխանեցի յես։

— Այո, այդպիսի արգելքներ գոյություն ունեին և կարողանում էին յերբեմն խանգարել ինձ, — շարունակեց նա։ Մի քիչ կարծում եք, թե հնարավոր է ապրել աշխարհում մոտ քսան տարի, սովորել կյանքի հրապույրներին, ի վերջո՝ չկրմագին սիրել — և այս ամենը միանգամից մոռանալ... Ով վոր չի փորձել, նա գուցե հասարակ աչքով նայե այդ բոլորի վրա։ Բայց յես ասում եմ, վոր դրանք մարդկային կյանքի ծանրագույն փորձերն են և դրանց

բավից անվտանգ անցնելու համար պետք է ունենալ ավելի ուժ, ավելի քաջություն, քան վարքան այս դեպքում չենթադրելի էր։

Պատահել և շատ անգամ, մանավանդ, արտաքին արգելքների հանդիպածս ժամանակ, վոր իմ ուխտը լեռան չափ ծանրացել և սրտիս վրա։ Այդպիսի ժամանակները փափագելով փափագել եմ գնովիլ կրկին իմ նախկին ընկերուհիների շրջանում, այն անհոգ, միշտ ուրախ և միշտ ծիծաղող հասարակության մեջ, ուր սխրություններ չեն կենում ճակատս, ուր ամենքը սիրում, դրադնցնում էին ինձ, ուր կյանքը հրապուրիչ լի՝ ծիծաղում եր ինձ...

Պատահել և, վոր յես անձկությամբ ցանկացել եմ տեսնել իմ ծնողներին, մի անգամ էլ լսել նրանց քաղցր ձայները, նրանց սիրալիսաար, անուշ խոսքերը, վայելել նրանց ջերմ գրկախառնություններ, սիրաշունչ համբույրը... Բայց նրանք չկային, այնպես չեն։ Գուցե մի անգամ շրխիմները տեսնեն և իմ արտասուքով թրջեն նրանց... Պատահել և, վոր յես հիվանդացել եմ. ինձ սիրով այցելել, ինձ համար հոգացել են դյուղացի կանայք, նույնպես և իմ սիրելի աշակերտուհիները։ Բայց դրանց բոլորի մեջ հոգիս անձկությամբ պարել և իմ հարազատ մորը։ Ես կամեցել եմ լսել նրա ձայնը, զգալ նրա ձեռքերի շոշափը իմ այրվող ճակատի վրա... Հիշել եմ այն յերջանիկ ժամանակները, յերբ յես հիվանդանում եյի և նա անհանգիստ, արտադող և շունչը բռնած, պատում եր անկողնիս շուրջը, սիրով ու խանդով լի աչքերը դարձնում վրաս, ճակատս քնքշությամբ շոյում, ձեռքերս ափերի մեջ ճմլում և անդադար «Ինչպես ես այժմ, իմ անուշիկ Աննա...» հարցնում ինձ այնպիսի մի քնքույշ, խանդակաթ ձայնով, վոր այժմ էլ հիշելուց սիրտս թուլանում է...

Իսկ ինչ ասեմ յես նկատմամբ Գարեգնի, վոր իմ կյանքի մեջ այս դժվարատար հեղափոխությունը մտցրեց։ Մեքեն կարող եյի նրան մոռանալ, նրան, վոր իմ բոլոր մաքերի, խարհուրդների և դարծների հեղինակն եր, վորին այնքան ուժգին, այնքան ջերմությամբ սիրեցի, բայց վորն այժմ հազարավոր մղոն հեռի յեր ինձանից։ Ներքնին ժամերով նստած մտածում եյի նրա համար։ Նախկին կրակը բուռն կերպով արծարծվում եր իմ մեջ, փափագում եյի տեսնել նրան մի անգամ, լսել նրան մի անգամ... հիշում եյի մեր վերջին տեսակցությունը և նրա վերջին հրաժեշտի խոսքերը, «Գնա, սիրեցյալ քույրիկ, յես որհնում եմ քեզ, որհնում եմ քո ճանապարհը, գնա, թող աստված լինի քեզ հետ», ասաց նա։ Ես յեկա և մարմնացրի նրա ցանկությունը։ Բայց ափսո և նա ինքը։ Ցանկանում եյի, վոր նա տեսներ, թե ինչպես հավատարիմ մնացի իմ ուխտին, թե ինչպես յուր սիրո պատճառով, կնոջ համար ծանր

բազուկն խաչը չես բարձի... բայց նա չկար, չէր կարող տեսնել. գնաց իմանալի թե նա մտածում է իմ մասին, հիշում է նա ինձ, թե մոռացել է խաղաո... Ցավ այս վերջին միտքը առնում էր հոգիս։

Այսպես, ուրեմն, թե այս մտածություններըն և թե նորոգվող զգացումները նույնպես արգելքներ էին իմ ձեռնարկած գործին և մինչև իսկ, յերբեմն, զորեղ արգելքներ։ Հաճախ իմ հոգին թուլանում, ընկճվում էր դրանց ազդեցությունից, իմ աշխույժը նվազում և գործելու յեռանդը հանգչում էր, վորովհետև աշխարհային կյանքը դեռ ամբողջապես չէր մեռել իմ մեջ. նա որհասական կռիվ էր մղում այն բարձր ու սրբազան կյանքի դեմ, վոր պատրաստվում էր շուտով իմ գոյությունը տիրել։

Սակայն այս հոգեկան կռիվներն իմ մեջ կատարվում էին, իհարկե, իմ նվիրված առաջին տարիներում, յերբ մի կողմից էլ, ինչպես ասացի, արտաքին նեղությունները էին պաշարում ինձ։ Ես սովորություն ունեի այդպիսի ճգնաժամերում կարդալ իմ հիշատակարանը և գլխավորապես նրա այն էջերը, ուր իմ սիրելի ուսուցչի խոսքերն էին գրված։ Նրանք ինձ մխիթարում ու քաջալերում էին։ Մի անգամ այդպիսի մի հուզված ժամանակ, յես պատահեցի նրա այն խոսքերին, վոր ասել էր հորս իմ ձեռքը մերժելու ժամին. — «Կա մի ուրիշ մարմին, վոր ավելի սիրելի և ավելի պաշտելի յե, քան մեր սեփականը. — այդ մարմինը Հայրենիքն է։ Ես ուխտել եմ իմ անձը նրան նվիրել, նրա սիրուց զատ աշխարհում ուրիշ սեր չճանաչել՝ նրա ցավերից զատ՝ ուրիշ ցավերով չվշտանալ, նրա բաղդավորությունից զատ՝ ուրիշ բաղդավորություն չփնդրել...» Ցավ այս խոսքերը մեծ մեծ տառերով տախտակի վրա որինակելով՝ կախեցի իմ սենյակի ճակատին։ Այնուհետև ամեն որ կարդում էի նրանց և հոգեպես կազդուրված՝ իմ գործը շարունակում։

Բայց հետո, իհարկե, տարիները հոլովվելով՝ վաղեմի զգացումներն էլ հետզհետե քուլացան մանավանդ վոր յես շարունակ ճնշում էի նրանց։ Իմ սկսած գործը գնալով մեծացավ, բարգավաճեց և իմ բոլոր հոգսերն ու մտածմունքը գրավեց։ Այնուհետև շարունակ յես գրաղված էի այդ գործերով և իմ ուշքը մինչև անգամ չէր բավում բոլորին։ Ցավ ստիպված էի շատ բան թողնելու մեր քահանային, նախապես նրան գործելու յեղանակը սովորեցնելով։ Ցավ Տեր-Հայրը, պետք է խոստովանել, ամենահավատարիմ հետևողը դարձավ իմ որինակին։

Իսկ այժմ, յերբ յես դառնում, նայում եմ իմ այս քսանամյա գործունեության վրա, տեսնում եմ թե ինչպես մի տկար կնոջ

կամքը կարողացել է այսքան գործ կատարել, հրճվում, մխիթարվում եմ և շարունակ որհնում իմ սիրելի և իմաստուն ուսուցչին, որ յուր հոգեշունչ խոսքերով վառեց, բորբոքեց իմ սիրտը և ուխտել տվավ ինձ այս սրբազան ուխտը։ «Հեռացեք աշխարհից, բայց մի մոռնաք կուսանաց,— ասաց նա ինձ.—գնացեք հեռու-հեռու դեպի կորած հայ գյուղերը, դեպի այն ժողովուրդը, որին մոռացել են մեր գործողները, որի մեջ որ քան որե նվաղում, հանգչում և կենդանության ոյժը, գնացեք այնտեղ, ուր տգիտությունը բռնացած՝ քանդում, ավերում է ինչ որ պատմական ժամանակներից մնացել և դեղեցիկ և հարգելի։ Մոնք այդ ժողովրդի մեջ. նվիրեցեք ձեզ նրա բարեբուելյան և նրա մանկանց կրթության գործին։ Սովորեցրեք նրան ճանաչել յուր անցյալը, բարվոքել ներկան և գործել ապագայի համար։ Ուսուցեք նրան հարգել իրեն, սիրել ընկերին և պաշտպանել նրան, յերբ հարկը պահանջե... Ցես լսեցի իմ ուսուցչին և հեռացա աշխարհից.— ահա իմ բոլոր պատմությունը...։

Սնպտեմբեր 15, X քաղաք

Ցերեք ամիս շարունակ մնացի Ն. գյուղում և անցուցի այդտեղ ամենաքաղցր և հիշատակի արժանի որեր։ Բացի մենավոր և վարսորդական գրասանքներս, վորոնք հարուստ բնության ծոցում լինելուն համար մեծ հաճույք եյին պատճառում՝ ինձ, չես բաղդավոր եյի նաև նրանով, վոր շարունակ վայելում եյի քույր-Անանայի սիրելի և անդուլական ընկերակցությունը։ Թեպետ չես արդեն դադարել եյի նրա գեղեցիկ առեղծվածներով հիանալուց, քան վորում նրանց պատահում եյի դրեթե ամեն քայլափոխում, այսուամենայնիվ, դեռ նրա գրույցներն ու կարծիքները լսելու ծարավ եյի։ Այս պատճառով կցանկայի յերկար ապրել այդ գյուղում և յերկար վայելել ազնիվ կուսի ընկերակցությունը։ Գլխավորապես ոգտատեր վերջանում եր և չես պետք է վերադառնայի քաղաք, վորովհետև անձնական գործերս չեյին նեղում ավելի ուշանալու։ Գրեթե այս միակ պատճառով իմ հյուրընկալ Տեր-Հովսեփը, ցանկանալով արտաքո կարգի մի պատիվ անել ինձ, վորոշից յուր վորդու՝ Հակոբի հարսանիքը իմ ներկայությամբ կատարել։

— Գյուղացիներս, առհասարակ, ձմեռն ենք աղատ,— ասաց նա ինձ մի որ — և մեր հարսանիքները, գլխավորապես, այդ ժամանակն ենք անում։ Բայց վորովհետև ցանկանում եմ, վոր դուք

իմ վորդու հարսանիքը տեսնեք, այդ պատճառով վորոշեցի այս ամսում կատարել։

Ձես իհարկե շնորհակալությունն արի Տեր-հորը՝ ինձ արած պատվի համար, վորից չեյի կարող հրաժարվել, յերեք մինչև իսկ կամենայի, վորովհետև դրանով վիրավորած կլինեյի քահանային։ Այդ հարսանիքը տեղի ունեցավ Հակոբի հյուրերի հետ, վորոնք բաղկացած եյին գյուղի յերիտասարդներից, յես ել գնացի մոտակա շենը, ուսկից և քերինք նրա նորատի և դեղեցիկ հարսնացուն։ Դեղեցիկ եմ ասում նրա համար, վոր ճանապարհին հաջողվեց ինձ մի վայրկյան տեսնել նրա յերեսը, վոր ծածկված եր քողնի, կարմիր քողով։ Հարսանիքը, հակառակ իմ սպասածին, կատարվեց շատ պարզ և անպաճուճ ձևով։ Ուրիշ գյուղերում տեսել եյի, վոր նա տևում է յերեք կամ չորս որ և այդ բոլոր ժամանակ ամբողջ գյուղն ուրախության և զվարճության մեջ է լինում։ Գովեր ու յեղներ են մորթում, գինին ու օղին ջրի պես է հոսում, իսկ հրավիրյալները հարսանիքատան ներսն ու դուրսը լցված՝ ուտում, խմում են, մանավանդ, յերբ հարսանիքը գյուղի հարստին է պատկանում։ Բայց այստեղ Տեր-հայրը միայն մի որ ուներ հացկերույթ և այն՝ շատ պարզ պատրաստությամբ։

Իմ հարցին թե՝ ինչու՞ այստեղի գյուղացիք ուրախանալ չգիտեն, քույր-Աննան պատասխանեց.

— Գյուղացիք ամեն տեղ ել նույնն են։ Մանավանդ այստեղացիք ավելի շքեղ տոներ կատարել գիտեն։ Իմ նոր յեկած տարիները յես այստեղ յոթ որ շարունակ հարսանիք եմ տեսել և սարսափել, վորովհետև այդ ուրախությանն մեջ գյուղացու տան խնկական ավերումն եմ նկատել, մանավանդ յերբ իմացել եմ վոր դրանցից շատերը պարքերով են այդ ուրախությունը կատարում։ Ծուր չնչին վատասիրությունը գոհացնելու համար, գյուղացին քաղաքում պարտք և վերցնում տոկոսով և յերկու յերեք տարվա մեջ փոխ առածն սպառելով՝ հավիտյան տրուկ և ճնում վաշխառուի ձեռքին։ Այնուհետև նրա տունը, տեղը, անասունը, այլին վաշխառուի սեփականություն են։ Պարտապան գյուղացին դողալով և յուր պարտատիրոջ յերեսը յեկնում։ Նրա տարած ընծաները՝ կաթ, ձու, մածուն, կարագ կամ հավ, վոր նա շարունակ յուր յերեխաների բերանից և խլում, վաշխառուն ընդունում և իբրև իրեն հասանելի յեկամուտ, սակայն առանց գյուղացու պարտքից մի սև փող իջեցնելու։ Ձեվ ինչու՞ համար այդ բոլորը — միայն մի քանի որ զվարճանալու և հարևաններին զվարճացնելու համար։

«Սակայն շատ տարիներ են, ինչ գյուղում այդ շռայլությունները վերացել են։ Գյուղացին, առհասարակ, ինքն ել ուրախ և

լինում, որ այդ ծանրութեան տակ չմանեն, միայն թե ընկեր-հարևանից և ամաչում։ Պետք է մինը լինի, որ ամենքին հավասարապես հորդորև այդ կորստաբեր ճանապարհից հեռանալ։ Ցեվ նրանք կլսեն նրան։ Ահա այդ դերն էլ չես հանձն առի, ժամանակին խոսեցի, բացատրեցի, նույնիսկ քահանային քարոզել ասի չկկզեցում, որից հետո դյուղացիներն իրենք արդեն չկան և մեր ներկայութեամբ համախոսական ստորագրելով՝ որոշեցին վերացնեն իրենց միջից ամեն ավելորդ ծախք, որը սովորութիւն ունեցին նրանք անելու թե ուրախութեան և թե տրտմութեան ժամանակ։ Հակառակ վարվողը՝ տուգանք պիտի վճարեր դյուղական դանձարանին։ Այդպիսի տուգանք իհարկե դեռ մինչև այսօր չեն մտել մեր դանձարանը, որ ապացուցանում է թե դյուղացին ինքը շատ զոհ է այդ վորոշումից։ Այսօրից օրինակ են վերցրել և հարևան դյուղերը. հուսս ունեմ թե ուրիշ հեռու տեղեր էլ կհետևեն այս բարի սովորութեան։

Կարող եմ միթե չհամակերպել քուր-Աննայի այս մտքերին, որոնք, որքան էլ պարզ և հասարակ յերևային, այսուամենայնիվ, ամփոփում էին իրենց մեջ դյուղական ընտանիքի հաստատութեան պայմանները։

Հակոբի հարսանիքից մի քանի որ հետո, քուր-Աննան հայտնեց ինձ ուրիշ նորութիւն, այն է՝ թե շուտով պիտի կատարել տա յուր ձեռնասուն վարժուհու և վարժապետի պսակը։

— Ցեթե Տեր-հայրը յուր վորդու հարսանիքով կամեցավ պատվել ձեղ, յես էլ իմ վորդեպիրների հարսանիքով կպատվեմ, — ասաց քուր-Աննան ժպտալով։ Կցանկանայի նաև, որ դուք լինեիք նրանց խաչ-յեղբայրը, այդ մեծ ուրախութիւն կպատճառեր իմ վորդեպիրներին. բայց դյուղական սրբագործված սովորութեան դեմ չկամաք և մեղանչել։ Նրանց ծնողներն արդեն ունին իրենց հին կնքահայրը, վորի ընտանիքի անդամներն, նույնիսկ վորդուց վորդի, պիտի կատարեն այդ պաշտոնը փոխադարձաբար։ Մենք ուրեմն չենք խառնվիլ նրանց իրավունքներին։ Դուք կլինեիք հարսյեղբայր։

Ցետ ուրախութեամբ ընդունեցի քուր-Աննայի առաջարկութիւնը և հարցրի թե՝ արդյոք վաղուց են նրանք նշանված։

— Նրանք վաղուց սիրում էին միմյանց, — պատասխանեց քուր-Աննան ժպտալով, — այդ յես նկատեցի դեռ մի քանի տարի սրանից առաջ, յերբ նրանք տակավին ուսանում էին։ Այդ ատեն, իհարկե, արտայայտվում էր լոկ քնքուշ, մանկական բարեկամութեամբ։ Ցետ վորովհետև յերկուսն էլ չափից դուրս ուշիմ յերեխաներ էին, ուստի իմ առանձին հոգածութեան առարկան դար-

ձրի նրանց, նպատակ ունենալով, ինչպես առաջներն էլ ասացի, պատրաստել նրանցից իմ գործը շարունակող հաջորդներ։

«Պետք է հիշեմ նաև, որ Մանիշակը՝ այդ յերիտասարդ գյուղացու աղջիկն է, որ առաջին անգամ ինձ, իբրև «միանձնուհի» այս գյուղը բերավ։ Նա ամուսնացավ իմ գալուց մի քանի տարի հետո և սա նրա առաջին զավակն է։ Իսկ Պետրոսը վորդի չի մի այնպիսի մարդու, որ շարունակ իմ ձեռնարկություններին արգելք ել լինում։ Սակայն չես նրա տան միջից պատրաստեցի ինձ համար հավատարիմ ոգնական։

Նշանակված որը յերիտասարդ զույգի պսակը կատարվեց։ Ցեկղեցում ներկա եյին քույր-Աննայի հետ միասին և յուր գյուղացի աշակերտներն ու աշակերտուհիները, վորոնց առանձին խնամքով հյուրասիրեց Պետրոսի հայրը յուր գեղեցիկ պարտիզում։ Քույր-Աննան, պսակված զույգը և յես այդ փոքրիկ հյուրերի հետ եյինք, իսկ գյուղացի հրավիրյալները ուրախանում եյին մեզանից հեռու գտնվող մի ուրիշ այգում, իրենց գյուղի ունեցավ Տեր-Հովսեփին։ Այսպես ել կարգադրել ինքը, քույր-Աննան, վորպեսզի յուր սաներները հանդիսատես չլինեյին մեծերի աղաղ զվարճությանը։

Այս տոնախմբություններին հետ միասին ոգտատոն ել վերջացավ Քույր-Աննայի գուշակության համաձայն յես բոլորովին կազդուրվել եյի։ Պետք ել այժմ վերադառնալ քաղաք, ուսկից ամբողջ յերեք ամիս բացակա եյի։ Այս վերադարձն իհարկե, ծանր չեր ինձ համար, բացի անձնական գործով զբաղվելու անհրաժեշտությունը, վաղուց ել ինչ հեռու եյի մորիցս ու քույրերից, բոլեկամ ու ծանոթ չեյի տեսել, շատ մի նորություններից զուրկ եյի և վորքան ել դեպի քաղաքի կյանքն անհամակիր, այսուամենայնիվ, այժմ փափագում եյի վերադառնալ։

Բայց իմ գյուղացի բարեկամների, մանավանդ քույր-Աննայի համար, դժալի յեր իմ հեռանալը։ Վերջինս, մինչև անգամ, ցավում ել, վոր սովորել և իմ ընկերակցություն։

— Գոնե չգտնեյի ձեր մեջ իմ գաղափարների ու համոզմանց համակիր մեկը, այն ժամանակ ավելի հեշտ կլիներ մոռանալ ձեզ, — ասում ել նա պարզությամբ. բայց բաղդի բերմունքով դուք ել նույն գավառությունն ունիք մեր ճակատագրի մասին, ինչ վոր յես, այդ պատճառով ձեր բաժանումը՝ իբր իմ մխիթարության գրկանք եմ նկատում։

Քույր-Աննայի խոստովանությունն անկեղծ ել, սակայն յես պիտի խոնարհեյի հարկի առաջ։ Սեպտեմբերի 2-ին, կյուրակի առավոտ գնացի նրան իմ հրաժեշտի վողջույնը տալու։

— Ես հեռանում եմ այստեղից, բայց տանում եմ ինձ հետ ամենաթանկագին հիշատակները՝ ձեր բարեկամության ու գործերի, — ասացի նրան։ Ցեղն իր աղքը հաղորդ չես կրկին կվերադառնամ այստեղ՝ վայելելու համար բնության և ձեր ձեռքով այս դյուրում պատրաստված բարիքները, որոնք մեծագին կին ինձ, մանավանդ, ձեր անզուգական բարեկամությամբ համեմված լինելուն համար։ Իսկ չեմ անկարող լինիմ այդ փափագին հասնել, այն ժամանակ կմխիթարվիմ գեթ այն քաղցր մտածությամբ թե մի անգամ գանե, վայելեցի չես այդ բոլորը։

— Բարի ճանապարհ, — ասաց քուչը-Աննան, — աշխատեցեք ձեր խոստումը կատարել, իսկ չեքե չկարողանաք, գոնե մի մոռանաք մեզ։ Աշխատեցեք յերբեմն-յերբեմն նամակ գրել ինձ և տեղեկություն տալ այն ամենի մասին, ինչ վոր դիտեք թե պիտի հետաքրքրե ինձ և ինչ վոր լրացրում անկարող եմ կարդալ։ Ի վերջո կատարեցեք իմ մի խնդիրը — վեչ մի տեղ և վեչ վոքի մոտ մի խոսք իմ մասին և մի հիշեք իմ գործերից վոչինչ։

— Ինչու, — զարմացմամբ հարցրի չես. չե՞ վոր բարի գործերը արժանի չեն ամեն տեղ գովության հանդիպելու և դա ավելի ուրախ, քան թե չարիք կարող և բերել գործին։

— Վոչ, չես չեմ կամենում, վոր իմ գործությունը հայտնի լինի աշխարհին. անհայտության մեջ ապրել անհայտության մեջ մեռնել, այդ և իմ ցանկությունը։ Ցեղ դրա համար չես ունիմ հարկելի պատճառներ։

— Արդյոք չեյիք կարող խնդրանքս անել ինձ այդ պատճառներից մեկին, հարցրի չես ժպտալով։

— Մի բան միայն կարող եմ ասել։ Ով վոր գործում և և դրա համար ել փող փչել տալիս հրապարակում, նա հրավիրում և մարդկանց՝ դալ և քանդել յուր գործը։ Թողնք վոր չես ցորենի մի հատ լինիմ, այս յերկրի մեջ մեռած... իսկ յերբ այդ ցորենը կվերբնձյուղե, յերբ նրա հասկերը կլցվին և մարդիկ պատուղը կվայելեն, այն ժամանակ թող հիշեն նաև մեռած ցորենը, վոր կյանք տվավ հասկերին և վորին այլևս հափշտակիչ թռչուններըը չեն կարող փորել և հողից հանել... Իսկ առ այժմ կամենում եմ անծանոթ մնալ աշխարհին, քանի դեռ նրա ուժի համար եմ վատահում։ Այո, չեմ կամենում փառավորվիլ մարդկանցից՝ մի բարի և ուրախալի գործ քանդելու պետվ։ Ահա ինչ վոր կարող եմ ասել ձեզ...

«Վորքան սեր դեպի հասարակաց բարին և վորքան համեստություն, մտածեցի չես, — չեքե այս հոգվով վարված մի քանի տասնյակ գործիչներ ունենայինք, լեռներ կշարժեյինք, գետերի ընթացքը կկասեցնեյինք... բայց ուր են այդ գործիչները։

Ցես խոստացա քույր-Աննային ճշտությամբ կատարել յուր պատվերը և ջերմությամբ համբուրելով նրա սուրբ ձեռքը՝ հեռացա։

Տեր-հայրը, յուր վորդիները և Պետրոս վարժապետը, վորոնք ձի հեծած ապասում էին ինձ գյուղի ծայրում, ճանապարհ ձգեցին ինձ բավական հեռու։

Այնուհետև իջա դեպի Ուղուն-Դարայի կրճերը, իմ նախկին առաջնորդ Պետոյի հետ։ Այս անգամ մեր ճանապարհորդությունն անցավ առանց պատահարների։ Ցերկու որից հետո յես արդեն քաղաքումն էի։

1887 Հունիս 5, Թիֆլիս

Հայրենի քաղաքից հեռանալուց հետ, այսոր առաջին անգամն եմ ձեռք առնում իմ հիշատակարանը, վոր ծածկված մնացել էր իմ պահարանի մի անկյունում։ Ցես նորից կարդացի այն և անցյալի քաղցր հիշատակները հուզեցին հոգիս։ Այդ հուզմունքը, սակայն, ուրախություն չէր, այլ անդարձ կորուստի կսկիծ և հառաչանք...

Ուղիղ յերեք տարի յե անցել այն յերջանիկ որից, յերբ յես Ն. գյուղում քույր-Աննային ծանոթացա, սակայն այդքան ժամանակի ընթացքում յես դեռ իմ հիշատակարանում նրա անձին վերաբերյալ պատմությունը չավարտեցի։ Տխուր ժամանակը և ախտագույն դեպքերը վազուց իմ գրիչը դատապարտել էին անգործության և լռությունն ինձ համար դարձել էր հաճելի հիվանդություն։ — Բայց հիվանդությունն, ինչպիսին էլ վոր լինի, անբնական կացություն է և ինքնաբեր, մանավանդ, հոգվո առողջության. հետևապես, պետք է ազատվել նրանից, յեթե կամենում ենք դեռ ապրել, մտածեցի յես և նորից ձեռք առի գրիչս։ Ինձ մնում էր ավելացնել իմ հիշատակարանում դարձյալ մի քանի յերես և դրանով իմ ջերմերդավոր միանձնուհուն պատմությունը կվերջանար։ Այդ էլ ահա անում եմ այժմ, մտածելով թե՝ իրավունք չունիմ անհայտության մեջ թողնելու հիշատակն այն աննման կուսի, վորին յուր առաքինության մեջ ճանաչեցի, վորի արդյունավոր գործունեությունը տեսա, վորի անզուգական առաքինությամբ հիացա։ Ցեթե հարյուր ընթերցողից դեթ մեկը վոգևորվի իմ ջմիանձնուհուն ուխտով, այդ վոգևորությունն իսկ ապարդյուն չի անցնիլ, նա բարիք կարատարե, իսկ բարվույն ամեն տեղ կդիմավորեն դրկաբաց։

Ն. գյուղից վերադառնալով, յես աշունն ու ձմեռը անցուցի մեր քաղաքում, իսկ 85 թվականի սկզբում արդեն Թիֆլիսումն էի անձնական գործով։ Մինչև այստեղ գալս մի քանի նամակներ

ունեյի դրած քույր-Աննային և պատասխաններն ստացած, իսկ այստեղ հասնելուց հետո, ավելի ևս հաճախ սկսա գրել, վորովհետև 85 թվականի առաջին քառորդը մեզ համար հարուստ ու հետաքրքրական եր ընդհանրական մի խնդրի, այն է կաթոլիկոսական ընտրության վերաբերյալ տեղեկություններով։ Ցեվ վորովհետև հայ խմբագրություններից մեկին մոտ եյի յես, ուստի կարողանում եյի իմ բարեկամուհուն, դրեթե ամեն շաբաթ, նորանոր տեղեկություններ հաղորդել՝ նկատմամբ այն անձի և նրա հետ կապված խնդրի, վորոնք այնքան մոտ ու սիրելի եյին յուր սրտին և վորոնց մասին մենք դյուղում խոսում եյինք շարունակ։ Իմ տված տեղեկությունները, նայելով ժամանակի կուսակցական վրդովմունքի և հանդամանքների փոփոխության, լինում եյին յերբեմն ուրախ և յերբեմն տխուր։ Սակայն մոտալուտ յերջանկության մի հույս թևատարում եր մեր շուրջը։ Ամենքս սպասում եյինք թե վորոշյալ օրն ու ժամին պիտի ավետենք միմյանց ջերմագին հաղթանակներ ընտրության մի անձի, վորի մասին դիվուքյամբ եյին խոսում հայոց թեր-թերը և վորի վրա մեծ հույս ու վստահություն ունեյին հայրենասերները։ Սպասում եյին տեսնել նրան բարձրացած վեհապետական այն գահին, դնալի վորն ամեն հայ հառում եր յուր աչքը սիրով ու հավատով, ջերմեռանդ ակնածությամբ, վորն յուր մեջ ամփոփում եր հազար վեց հարյուր տարվա հայության հոգևոր կյանքի իղձերն ու մխիթարությունները։ Այդ սրբազան պաշտոնին արժանի համարված անձը, քույր-Աննայի անդուլ ուսուցիչը, հայրենասեր Գարեգինն եր, վորը վաղուց արդեն յեպիսկոպոսական աստիճանին հասած, այժմ արդեն նշանավոր մի թեմի սրբված ու մեծարված առաջնորդն եր։

Ցեվ ահա, արդարև, նույն տարվա սպրիլին յես կարողացա մի ավետավոր հեռագիր հասցնել քույր-Աննային, վորին մի շաբաթից հետո իրր պատասխան հեռևյալ նամակն ստացա.

«Ազգիվ բարեկամ.

«Ձեր հեռագիրը լցրեց իմ սիրտը անսահման բերկրությամբ։ Զգիտեմ ինչպես արտահայտեմ իմ շնորհակալությունը Ձեզ, վոր այդքան սիրելաբար փութացել եք ինձ ուրախացնելու։ Ջնայելով Ձեր հավատիացումներին, յես, այնուամենայնիվ, հույս չեյի տածում թե մեր ժամանակակիցները կկարողանան այդպես իմաստասիրաբար գնահատել արժանիքը։ Որևէյալ լինելն նրանք, վորոնք սուրբ գործի համար միացան ի մի սիրտ և զգացմունք գրաբինա։ Ցեթե ճշմարտությունը հաղթանակում է, ուրեմն նրա

զինվորները կարող են պարծենալ և քաջալերվիլ։ Ձեվ սա կըրկնակի բարիք է մեզ համար։ Այսուրվանից արդեն դործելու նոր յեռանդ և վառվում իմ մեջ։ Ձես վոր մինչև այսոր ես փոքուն յեղե հավատարիմ, այսուհետև պետք աշխատությունս կրկնապատկեմ. քանի վորում կա մեկը, վոր կարող է մեզ ես վերա բաղմաց կացուցանելը։

Վաղջ յեղեք, ազնիվ բարեկամ և ընդունեցեք իմ սրտագին շնորհակալության և անկեղծ հարգանաց հավաստիքը, վորով ալիտ ձեամ միշտ

Ձեր խոնարհ աղախին՝ Աննա Ձե...յան։

Այդ որից հետո անցան յերկու հուսալիր ամիսներ։ Ձես կրկին նամակներ գրեցի քույր-Աննային, միշտ ուրախ նորություններ հաղորդելով նրան և նուիրնպիսի պատասխաններ էլ ստացա։ Բայց վորովհետև հուլիս և ոգոստոս ամիսներում Թիֆլիսից յելած ճանապարհորդում եյի, ուստի քույր-Աննային նոր նամակ գրելու առիթ չունեցա։ Ձերը ամրան վերջը վերադարձա քաղաք, այստեղ իմացա, վոր ամեն բան արդեն փոխվել եր և մեր հույսերն ու իղձերը իսպառ վոչնչացել... Այդ նորությունը շատ ծանր ազդեցություն արավ վրաս։ Բոլոր առօրյա խնդիրների հետ միասին յես մոռացա նաև քույր-Աննային։ Բայց նա ինքը ինձ չեր մոռացել։ Անդետ լինելով իմ բացակայության, նա կարծում ես թե յես նամակ չեմ գրում իրեն այն պատճառով, վոր վաղուց տեղյակ լինելով տխուր նորությանը, սիրտ չեմ անում այդ բանը իրեն հայտնելու։ Ուստի ինքը շտապել եր հետևյալ համառոտ նամակն ինձ գրկելու։

«Ազգիվ բարեկամ.

Այստեղ հասավ սույն թվականի ոգոստոս 22-ին լույս տեսած «Մեղուն»։ Ձեր լուրթյան պատճառը հասկացա. իրավունք ունիք լսեցեք...

Ձեր վշտահար քույր-Աննա։

Ձեվ յես արդարև լռեցի։ Ի՞նչ գրեյի այնուհետև նրան, քանի նյութի վրա խոսեյի. չե վոր մեր մտերմության շունչ ու հոգի ասվող խնդիրը մեռել եր և նրան այլևս հարություն տալու հույս չկար...

Անցան մի քանի ամիսներ։ Ձես վոչ մի նամակ չգրեցի իմ բարեկամուհուն, վոչ էլ նրանից ստացա։ Սակայն մի որ ինքս ինձ մտածեցի. — «Ծա արդեն անքաղաքավարություն եւ Գոնե մի քանի տող գրությամբ նրա առողջությունից հարցնեմ։ Մեղմ կինը

առանց այն էլ ճնշված և վշտերի տակ, հեռևապես և կարող վըշտակցությանը...

Ցես խոսուն էլ նաև լով՝ ոչ թե մի քանի տող, այլ շատ յերկար մի նամակ գրեցի քույր-Աննային՝ աշխատելով կարելուն չափ սիրտը նրա սիրտը կամ գեթ ապագայի հուսով պարարել։

Վերջապես մեծ յեղավ իմ զարմանքն ու ապշությունը, յերբ յերկու շաբաթից հետո, վերադ յետ առացա իմ նամակը, Պետրոս վարժապետի հետևյալ գրության հետ.

«Հարգելի բարեկամ.

«Վշտահար սրտով վերադարձնում եմ Ձեզ այն նամակը, որ ուղղել եյիք իմ սիրելյալ ուսուցչուհուն։ Նա այլևս չկա... Մի ամիս առաջ վախճանյալ յերկինք, թողնելով մեզ անմխիթար սուգի մեջ... Ներեցեք որ ինձ և վիճակվել այս տխուր նորությունը Ձեզ հաղորդելու։

Հաճեցեք ընդունել խորին հարգանքը
Ձեր հավատա ծառա Պետրոս Կովիկյանից»։

Ահա մի անսպասելի հարված էր Մերեի քույր-Աննան մեռավ. մերեն արդարև այն մեծ, այն հոյակապ կինը այլևս չէ ապրում աշխարհում... Ցես չեյի կարողանում հավատալ. չեյի կամենում որ դա ճշմարտություն լիներ... Բայց ավաղ, վարժապետի դուժալրը նամակը կատակի համար չեր գրված։

Սակայն ինչն արդյոք սպանեց նրան. մի դաժան հիվանդություն, թե յուր հայրենի վիշտը. չգիտեյի, վարժապետն այդ մասին վկայնչ չեր հիշել։

Այսպես թե այնպես այդ գույժն իմ սրտին կակիծ պատճառեց։ Քույր-Աննայի մեռնելով մենք կորցնում եյինք մինն այն գերազանց ուժերից, որոնք ծնունդ եյին առել վաթսունական թվականներին և որոնց սակայն արժանավոր հետևողներ չգտնվեցան մինչև այսոր։ Սա մի անդառնալի կորուստ եր...

86 թվականի ամառը յես վերադարձա իմ հայրենի քաղաքը և ամենից առաջ սրբազան պարտք համարեցի գնալ քույր-Աննայի գերեզմանին այցելության։

Գրեթե միևնույն ամսվա մեջ յես անցա իմ ծանոթ ճանապարհներով. տեսա նույն ժամանակվա հարուստ դաշտերը, գեղեցիկ ձորերը, կանաչ լեռներըը, գեղազարդ հովիտները, նույն կուսական անտառները, նույն ահավոր լեռներն ու կրճերը։ Բոլորն էլ նույնչափ գեղեցիկ, նույնչափ հրաշալի, վորչափ և մյն ժամանակ։ Սակայն այդ անփոփոխ գեղեցկությունների մեջ յես, կար-

ձեռ, մի սխրություն կայ նշմարում. բնությունն այլևս չէր ժըպտում, արևի շողերը չէին ծիծաղում, զեփյուռի շունչը եւ չէր զուրգուրում... յես չէյի ականջում վոչ սարյակի յերգին, վոչ ջրվեժի շառաչին, սրտիս հետ խոսում էր միայն թփերի մեջ սահող առվակի մրմունջը, վոր կարծես յուր սխուր, մեղմաձիկ շշունջով անհայտության մեջ մեռած հերոսուհուն էր վողբում...

Ցերեկոյան դեմ էր, յերբ Ն. գյուղը հասա։ Իմ ծանոթներից առաջին անգամ Տեր-Հովսեփին պատահեցի։ Նա դիմեց դեպի ինձ. մենք գրկվելով համբուրվեցանք, իբրև հայր և վորդի։ Վորքան էր նա փոխվել յերկու տարվա մեջ։ Նրա մազերն այժմ ավելի սպիտակ, իսկ դեմքը՝ դունատ էր։

— Ել ձեր ես յեկել մեզ մոտ, վորդի,— սրտաշարժ ձայնով խոսեց քահանան,— մեր գյուղը վորբացավ, անշքացավ, նրա զարդն ու դեղեցկությունը կորավ. քույր Աննան էլ չկա, վորին ես յեկել տեսնելու... Ցավ այս խոսքերի հետ նրա աչքերը լցվեցան։ Ցես ես հուզվեցա և արտասվեցի։ Ցավ ինչպես չարտասվեյի։ Ցես մտել էյի այն գյուղը, վորի բնությունն ու մարդիկը սիրելի էյին դարձել ինձ քույր-Աննայի շնորհիվ. իսկ նա այժմ չկար. գյուղը կխոսվ չափ դառարկ, անշքացած և տխրամած էր յերևում ինձ։

Հասանք տուն։ Մեզ դիմավորեցին քահանայի վորդիքը, կինը և հարսները, վերջը յեկավ և Գևորս վարժապետը յուր ամուսնու — Մանիշակի հետ։ Դրանք բոլորն էլ տխուր, բոլորն էլ կարծես ընկճված էյին նույն թախծության ներքո։ Ամենքին էլ վաղուանեցի ինչպես իմ սիրելի բարեկամներին, հետս սկսանք խոսել քույր-Աննայի մահվան վրա։ Խնդրեցի տեր հորը պատմել ցե ինչ հիվանդությամբ արդյոք մեռավ խեղճ կինը և մենք չէյին կարող բժշկական ոգնություն հասցնել։

— Ցերևի ասածուց այդպես էր վիճակված, վորդի,— սկսավ խոսել տեր-հայրը. նրա հիվանդության պատճառը վոչ վոք չիմացավ։ Դեռ անցյալ տարի այս ժամանակ ինչպես նա առողջ էր, ուրախ, զվարթ և հանկարծ ոգոստոսի վերջերում փոխվեցավ։ Ցերկու ամիս շարունակ անկողնին ծառայեց։ Շատ անգամ կամեցա գնալ քաղաք բժիշկ հրավիրելու, բայց ամեն անգամ էլ նա արգելեց։ — Ինչու՞ համար ես բերում բժիշկը, տեր-հայր,— ասում էր նա ինձ. կյանքն արդեն ինձ համար դարձել է ծանր բեռ, ուր վոր այն վերցնեն, շնորհակալ կլինեմ նրան... Ինչու՞ համար էր այդպես ասում, չէյի կարողանում հասկանալ, վորովհետև այդպիսի հուսահատական խոսքեր յես նրանից առաջները բնավ չէյի լսել։ Ցավ սակայն պատճառը չէյի համարձակվում հարցնել։ Այդպես նա հալվեց, մաշվեց, ճրագի պես հանգավ։

Պետրոս վարժապետն ուրիշ մանրամասնություններ հաղորդեց։

— Անցյալ ապռիլի 30-ին, ուրբաթ որը, չես լավ հիշում եմ,— ասաց նա, յերեկոյան դեմ քույր-Աննան, Մանիշակը և չես նստած էինք ուսումնարանի բակում և խոսում էինք։ Վանքի ծառան բերավ լրագիրները։ Քույր Աննան առավ և սկսավ թերթել։ Դրանցից մինի հեռագիրները կարդալիս նա հանկարծ բացականչեց.— «Ահ, ամեն բան կորավ...» և ձեռքը դեպի ճակատը տանելով՝ բռնեց գլուխը և այդպես, դրեթե քառորդ ժամ, մնաց անշարժ, ընդարմացած։

— Ի՞նչ և պատահել, քույրիկ, ինչու՞ աղերսիր,— հարցրեց Մանիշակը։

— Ինչ վոր պատահել և, սիրելիս, նրա ցավը դու շատ ուշ պիտի դգաս,— ասաց նա մեղմով և լռեց։ Մենք ուրիշ հարցներ չարինք, վանդի տեսանք, վոր նա չե ուզում խոսել։ Ցավ այդ արվանից էլ կարծես դժբաղդ հիվանդությունը մտավ նրա մեջ։ Վանդի մյուս առավոտ դասատուն չեկավ և ինձ հանձնեց պարապել յուր դասը, իսկ հետևյալ որը, կյուրակի պատարագին չեկավ և դպրապետությունը յես արի։ Ցերկուշաբթի և յերեքշաբթի դարձյալ դասերից բացակա յեր։ Այդ բոլոր ժամանակ նա կամ փակված եր լինում յուր սենյակում, կամ տխուր ու մտախոհ շրջում եր անտառում։ Մի շաբաթից հետո բոլորովին թողեց յուր պարապմունքը և ամեն առավոտ կանչում եր ինձ ու Մանիշակին ու պատվիրում էր ինչպես պիտի մենք յուր դասերը պարապենք։

— Հիվանդ եմ, սիրելիներս,— ասաց նա մի որ,— և գործելու սիրտ չունիմ, աշխատեցեք վոր իմ բացակայությունը զգալի չլինի յերեխաներին, պարապեցեք նրանց հետ սիրով, յեռանդով. դուք արդեն պատրաստված եք դրա համար։ Գուցե մի որ յես չլինիմ, ուրեմն այժմյանից գործը կատարելու հոգսը պիտի առնեք ձեզ վրա։

— Աստված չանե, քույրիկ, ինչու՞ այդպես եք խոսում, դուք մեզ անիծում եք,— վշտացած նկատեցինք մենք։

— Չե սիրելիներս, մի նեղանաք, իմ սիրտը վկայում և, վոր վախճանս հեռու չե,— ասաց նա հառաչելով. տխրելու էլ վոչինչ չունիք. վոչ վոք աշխարհում հավիտյան չե ապրում։ Սակայն յես ուրախ եմ, վոր ինձանից հետո չպիտի թողնեմ ձեզ, վստահ եմ, վոր դուք հավատարիմ կմնաք ինձ։

«Այնուհետև նա դարձյալ մի մի անգամ մտնում եր դասատուն, առաջվա նման քաղցրությամբ խոսում եր աշակերտների ու աշակերտուհիների հետ, ասում եր նրանց, վոր այնուհետև

միայն մենք պիտի պարապենք իրենց հետ և պատվիրում եր հնազանդ լինել մեզ։

«Մի քանի որից հետո քույրիկը կանչեց մեզ, այլ և անցյալ տարում ավարտողներից, իրենց ընդունակությամբ հայտնի մի աշակերտի ու աշակերտուհու. բոլորիս հետ միասին կազմեց դասերի նոր ցուցակ և գլխավոր առարկաները մեզ, իսկ յերկրորդականները վերջիններին հանձնելով, պատվիրեց վոր այդ որից արդեն ուսումնարանի բոլոր հոգսը առնենք մենք վրա։ Այդ միևնույն որը նա դանդատվում եր գլխացավից, իսկ յերեկոյան դողացրեց, տաք ոստիկ չերմ ուներ և ամբողջ գիշերը, ինչպես Մանիշակն եր ասում, այրվել եր տաքությունից։

«Հետևյալ առավոտ քույրիկի դրությունն ավելի վատթարացավ։ Թիկունքում, կրծքում ու կողերում ցավեր եր զգում. շնչառությունը ծանրացել եր, իսկ յերեկոյան, չերմի աստիճությունից մինչև անգամ զառանցում եր։ Այդ ամենի վրա ավելացավ նաև հազը, վոր գնալով ասստկանում և քունն ու հանգստությունը խանգարում եր։ Չնայելով վոր ախ-հար և տանուտերի խնդիրը մերժեց, թույլ չտալով բժիշկ հրավիրել քաղաքից, այսուամենայնիվ մորս աղաչանքը լսեց և թույլ տավ, վոր գյուղի վարսավիրան արյուն առնե թիկունքից։ Վերջինի ասելով քույրիկը թոքերի բորբոքում ուներ և այդ միջոցը կարող եր նրան ոգնել։ Արդարև արյուն առնելուց հետո կրծքի ու թիկունքի ցավերը հանդարտվեցան և շնչառությունը թեթևացավ։ Այնուհետև դրծադրեցինք մի քանի անսային միջոցներ ել, գլխացավի ու չերմի դեմ, վորով մի քանի որից հիվանդությունը մեղմացավ։ Բայց ինքը կարծես չեր կամենում առողջանալ և խուսյս եր տալիս ոգտավետ միջոցների գործադրությունից։ Նույնիսկ բավական չափով կերակուր չեր ընդունում, վորից հետզհետե մաշվում ու թուլանում եր։ Այդ եր պատճառը, վոր չնայելով մեր անընդհատ հոգացությանն, նա, այսուամենայնիվ, անկողնից չելավ և գրսում չերևաց։ Գրեթե մեզանից զատ ել ուրիշ վոչ վոքի չեր ուզում տեսնել. խոսում եր շատ քիչ և այն՝ միայն Մանիշակի հետ, իսկ յերբեմն անկողնում գրում եր ինչ վոր բան։ Ախորժակը հետզհետե պակվում եր և վերջին որերում համարյա վոչինչ չճաշակեց։ Իսկ բժշկական ոգնությունը, ինչպես Տեր-Հայրն ել ասաց, նա քաց և ի քաց մերժել եր։

«Հոկտեմբերի վերջին, նորեն սկսվավ խոսել Տեր-Հայրը, նա հանչեց յուր մոտ ինձ, տանուտերին և գյուղի մի քանի նշանավոր մարդկանց և ասաց.—«Զգում եմ, վոր վախճանս մոտեցել է. յես հեռանում եմ ձեզանից, բայց իմ սիրած գործերը, վորոնց արդեն

կատարած եմ և իմ միացորդ կարողութիւնը, թողնում եմ ձեզ։ Իմ ուսումնարանը, իմ սիրելի աշակերտները մնում են ձեր հսկողութեան տակ։ Պահեցեք նրանց, պաշտպանեցեք նրանց, խնդրում եմ։ Իմ վարժապետներն ու վարժուհիները դեռ չերիտասարդ են և կյանքի մեջ անփորձ, ողնեցեք նրանց, թե ու թիկունք լինեք նրանց գործին և այդ չերջանկութիւնն կլերև ձեզ... Մենք խոստացանք ու չերդվեցինք հավատարիմ մնալ նրա պատվիրանին։ Նա սրտաշարժ խոսքերով որոնեց մեզ և մենք արտասվելով դուրս գնացինք նրա մոտից։

— Նրա անկողնի մոտ հսկում եմ չես,— խոսել սկսավ այժմ Մանիշակը,— մեռնելուց մի որ առաջ խնդրեց ինձ ոչնել իրեն հասնել անկողնում և կանչել յուր մոտ Գևորսին և նորընտիր վարժապետին ու վարժուհուն։ — «Իմ սիրելի զորդիներս, ասաց նա մեզ. չես հեռանում եմ ձեզանից, բայց իմ հոգին թողնում եմ ձեզ հետ, հավատարիմ մնացեք նրան։ Գնացեք շարունակ այն շավղով, զորը չես ձեզ համար հարթեցի։ Ձեզ եմ հանձնում այն գործը, զորին նվիրել եմ իմ չերիտասարդութիւնը, իմ հասուն տարիքը, իմ ուրախութիւններին, իմ ամբողջ կյանքը... սիրեցեք այդ գործը ձեր անձից ավելի, գնահեցեք նրան ձեր հանդստութիւնը, ձեր զվարճութիւնները, չեթե կարող եք և չեթե կամենում եք ինձ ժառանգորդ կոչվիլ։ Սիրեցեք միմյանց և միանման ուժով առաջ տարեք ձեր մոր և զարժուհու սիրած ու պաշտած գործը։ Իմ հոգին կհրճվի չերկնքում և վոսկերքս գերեզմանի մեջ, չեթե դուք արիութիւնամբ ծառայեք ձեր պաշտոնին և հավատարիմ մնաք իմ դավանութեան, զոր և՝ սիրել ընկերը յուր անձից ավելի։ Խոստացեք ինձ զորդու և աշակերտի պղնվազուն խոստումով, զոր իմ պատվիրները ճշտութեամբ կկատարեք և ինչ զոր չես ավանդ եմ տալիս ձեզ նույնը և դուք ավանդ կթողնեք ձեր զորդիներին կամ հաջորդներին...

«Մենք չորս միասին ծունկ չոքեցինք նրա առաջ և արտասվելով խոստացանք նրա պատվերները ճշտութեամբ կատարել։ Հետո նա պատվիրեց կանչել յուր մոտ բոլոր աշակերտներին և աշակերտուհիներին։ Նա որոնեց նրանց, թրատես եպատվիրեց սիրով ու չեռանդով սովորել և միշտ հնազանդ լինել ու սիրել մեզ։

Ցերեկոյան դեմ նա մինչև անգամ մի փոքր ուրախ եր և հենց այդ ժամանակ մի կարևոր հանձնարարութիւն արավ ինձ, իսկ դիշերը դարձյալ զանգատվում եր սրտի չափազանց անհանգստութեյունից։ Առավոտյան վերջի ժամերը նա հոգևարքի մեջ անցկացրեց։ Տեր-Հայրը, զոր բոլոր ժամանակ Գևորսի հետ միասին գանվում եր մյուս սենյակում, չեկավ և սուրբ հաղորդութիւնը

ավալ նրան։ Ցերը արևի առաջին ճառագայթներն ընկան պատուհանի վրա, նա յուր արդար հոգին ավանդել եր արդեն...

Մանիշակն ավարտեց յուր խոսքը արտասվելով և մենք ամենքս ղդացված՝ հետևեցինք նրան։

Ցերը տխուր գրույցն ավարտելով, չես առանձնացա ինձ հատար պատրաստված սենյակն հանդստանալու, Մանիշակը, վոր քիչ առաջ դուրս եր գնացել Գևորսի հետ, նորեն վերադարձավ և մանելով ինձ մատ՝ պարզեց դեպի ինձ մի ծրար և ասաց.

— Այն հանձնարարությունը. վոր վերջին յերեկոյան արավ ինձ քուլր-Աննան, այս եր։ Նա պատվիրեց ինձ, հանձնել ձեզ այս ծրարը, յեթե յերբ և իցե գալու լինեյիք մեր գյուղը, իր գերեզմանին այցելելու։ Այս ասելով նա թողեց ծրարն իմ ձեռքում և դուրս գնաց։

Ցեվ այնքան արագ կատարեց նա այս, վոր չես սկզբում կարծես չհասկացա թե՝ ինչ եր ասում ինձ, վերջհետև ուշադրությունս առավելին գրավված եր նորատի կնոջ անսպասս ներս գալովը։ Բայց յերբ նա ծրարն իմ ձեռքում թողնելով հեռացավ, այն ժամանակ միայն խելաբերեցի և սկսա դիտել ինձ արված ավանդն այնպիսի յերկյուղած հետաքրքրությամբ, վորով միայն ջերմեռանդ հավատավորը կարող եր դիտել՝ հանկարծ ու անսպասս յերևվան յեկած մի սրբի մասունքը... Ծրարի վրա իմ անվան կամ ազգանվան փոխարեն գրված եր միայն՝ «Մեր բարեկամին»։ Այսքանն արդեն բավական եր, վոր իմ հիշողության մեջ նորեն կենդանանար քուլր-Աննայի կյանքի ամբողջ պատմությունը կամ իմ առաջ նկարվեր նրա հոյակապ, սրբափայլ պատկերը։ Ցեվ այդ եր արդյոք պատճառը, վոր ինձ մի վայրկյան այնպես թվաց թե նա իրոք չե մեռել, թե դեռ ապրում է և պիտի խոսի ինձ հետ... Նրա ձեռքով գրած յերկու բառերը այդպիսի մի հավատ ներշնչեցին ինձ առ վայրկյան։ Միևնույն ժամանակ, չես դանդաղում եյի բանալ ծրարը։ Ինձ այնպես եր թվում թե, այդ չպիտի անեմ միայնակ առանց քահանայի, կամ քուլր-Աննայի ձեռնասունների ներկայության։ Ի՞նչ կար արդյոք ծրարում, կասկած եր դա, թե մասնավոր հաղորդագրություն, չգիտեյի և վոչ ել կարող եյի գուշակել. բայց գիտեյի այն, վոր այդ առաքինի կնոջ գործերը, նրա սիրտն ու հոգին մի մարդու չեն պատկանել, այլ ժողովրդին, ուրեմն և նորա թողած ավանդը հայոնի պիտի լինի շատերին։ Այս մտքերն ինձ դրազեցրին մի քանի վայրկյան։ Բայց հետո հիշեցի, վոր Մանիշակը ծրարը հանձնեց ինձ առանձին և վերջապես ասաց. «Քուլր-Աննան պատվիրեց հանձնել ձեզ այս ծրարը, յեթե յերբ և իցե գալու լինեյիք մեր գյուղն յուր գերեզմանին

այցելելուս։ Ուրիշն միայն ինձ եր տրված այդ շնորհը և չես իրավունք չունեյի մասնակից անել նրան ուրիշներին։ Այս մտածմունքյամբ բացի ծրարը, որ պարունակում եր յուր մեջ ծալքած-ծալք գրված մի քանի թերթիկներ հետևյալ բովանդակությամբ.

«3 Հոկտեմբեր, 1883»

«Անգին բարեկամ.

«Ներկու շաբաթ առաջ ծանր հիվանդացա թոքերի բորբոքումից։ Զդիտեմ ինչպես և ինչու անցավ այն։ Ինքս իսկապես չեյի ուզում ապաքինվիլ... Այժմ փոքր ինչ կաղդուրված եմ, թեպետ տակավին չեմ յեյած անկողնից։ Կարող և պատահել, որ յերբեք էլ չկենամ։ Այդպիսի մի նախազգացում պաշարած և այժմ ինձ։ Այդ իսկ պատճառով կամենում եմ ոգտվել իմ կյանքի մնացորդից և գրել ձեզ մի քանի բան։ Ձեզ իմ անցյալի պատմությանը ծանոթացնելուց հետո, ավելորդ չեն հաղորդել և պատմությունն իմ վերջին օրերի, որոնք թվում և քիչ չի պետի յերկարեն... Ի՞նչ եյի յես ամիսներ առաջ և ինչ եմ այժմ. այդ պարզ տեսնում եմ. ուրիշն իրավունք ունեիս ապատելու վախճանիս... Կար ժամանակ, յերբ չեյի մտածում դրա համար. միտնելու հարցով չեր դրազվում հոգիս, որ առդրված եր միայն գործելու տենչով։ Իսկ այժմ... Առավոտ իմ, որքան շատ եմ փոխվել... ել կյանքն ու գործը չեն գրավում ինձ. անհաղորդությանց դեմ այնքան ուժգին մաքառող կամքս ել չե վառում իմ յեռանդը, որ մոռ և մարելու... Ձեզ հայտնի հարվածից յես այնպես ընկճվեցա, ինչպես փոթորկից բարերար ծառը, որ արմատահան լինելով դառնում և անընդունակ ապրելու և պտղելու... բայց ինչու այս ասոիճան... Յերբեմն այս մասին մտածում եմ ժամերով և ապա դալիս տխուր հետևվանքի.—ինձ համար հետզհետե պարզվում և մի հարց, որի մասին առաջ յես չեմ մտածել, կամ գոնե ինձ թվում և, թե չեմ մտածել։ Այդ այն և, որ յես այժմ ինձ տեսնում եմ անդորր այլևս արդելքի դեմ մաքառելու և դրա պատճառը համարում եմ այն, որ իմ մեջ տակավին ապրում և կինը, նա որին մեծ բանաստեղծը իրավամբ և անվանել Թուլություն։ Վիրքան և ուղիղ իմ հայացքը այս խնդրի վրա չդիտեմ, յես կպատմեմ ձեզ իմ կրածն ու դպացածը այս վերջին ամիսներում և դուք նրանից ձեր յեզրակացությունն արեք։ Բայց... ձեռքս հոգնեց, դլուխս պտտում և.. խոսենք այս մասին վազը։

«4 նոյեմ.

«Մեկ մի տարի սրանից առաջ վորքան ինձ ուժեղ և անընկճելի եյի համարում, վորքան մեծ փափագ ունեյի ապրելու, վո-

բավհետև ընտրածս ասպարիզի վրա, տակավին կատարելու դրծեր ունեյի։ Հիշում եմ, նույնիսկ ձեր հետաքրքին աված իմ պատասխանում ասում եյի թե՝ ժայժմ իմ մեջ վառվում է դրծելու նոր յեռանդ, վասնզի արժանիքն արդեն գնահատվել և ճշմարտությունը հաղթանակել է և թե ուրեմն սրա զինվորները կարող են պարծենալ և քաջալերվիլ։ Այդ զինվորների շարքում, հարկավ, Թվում եյի և ինձ... Բայց ավաղ, չանցավ մի չնչին միջոց և ահա մենք զգացինք թե վորքան վաղաժամ և մեր ուրախությունը, թե վորքան դուրկ եյինք մենք վոգևորվելու և նույնիսկ հուսալու իրավունքից... Այսպիսի դեպքում ինչ և անում արդյոք ուրիշ յերկրում կինը, այն տկար արարածը, վորին վոգևարությունը քևեր է տալիս, իսկ հուսահատությունը, զրկում մինչև անգամ կանգնուն միալու կարողությունից... Չգիտեմ։ Ինձ համար միայն կարող եմ ասել թե՝ փորձությանս այս հարվածին դիմադրել չկարողացա, թեպետ հայտնության առաջին վայրկյաններն իսկ բավական յեղան ինձ ընկճելու և վհատեցնելու։ Ցավ դրա պատճառը, ինչպես յերևի եղ ասացի, համարում եմ այն, վոր իմ մեջ տակավին ապրում և կինը. զգացմունքների և թուլության այն մանկացումը, վոր կրում է մի սիրտ բոլորովին անհման տղամարդու սրտին... Թեպետ իմ անցուցած սահմանափակ կյանքը իրավունք չի տալ ինձ դասել այս դեպքում կենցաղագիտի հավակնությամբ, այսուամենայնիվ, հիմնվելով այն ծանր թուլություններուն վրա, վոր այսքան տարի ունեցել եմ մարդկանց հետ և, մանավանդ, այն ծանր փորձերի, վորոնց իրրև կին յենթարկվել եմ անձամբ, կարող եմ պնդել թե տղամարդը անհատականն կյանքով ապրելու համար ուժաված է ավելի դրեղ կամքով ու կորովով, քան կինը։ Հետևապես վերջինս իզուր է աշխատում մրցել նրա հետ այդ ասպարիզում։ Տղամարդը, այո, կարող է ապրել միայնակ և ինքն յուր մեջ կենտրոնացած՝ նվիրվել յուր սրտի մեծագրած նպատակին (լինին դրանք անձնական, հասարակական, թե դաղափարական) և այդ նվիրման մեջ յուր սրտի հանգիստն ու գոհությունը գտնել։ Հանդիպեց նա մի դրծում անհաղորդության, կխորձե յերկրորդը, յերրորդը և սակայն հուսահատությունը չի ընկճիլ նրան։ Մինչդեռ կինն այդպես չե։ Նա ծնվել և վոչ թե ուժերի դեմ մաքառելու, այլ նրանց պաշտպանությունը վայելելու, վոչ թե կռվելու, կամ հալածվելու, այլ սիրելու և սիրվելու համար. ուստի նա լավ և ապրում և լավագես դրծում միայն այն ժամանակ, յերբ սերն ու զգվանքը անունդ են տալիս նրա սրտին և խրախուսում նրա ճիգն ու աշխատանքը։ Այդպիսի ժամանակ կինը ընդունակ և նույնիսկ մոռանալ իրեն և նվիրվել

բոլորովին սիրած անձի հյությանը, նրա մտքերին ու գաղափարներին, նրա մեծագրած շահերին, նրա անվանն ու փառքին... Կինը հաճախ ավելի սիրով դառնում է մի հյուլե կամ ամենաշատը լուսո մի շառավիղ, այդ փառքի պատկերը լուսավորելու համար, քան թե փայփայում է իր սեփականը, իբրև ուրույն գործող էրևույթ ունենալու համար: Ճիվ այդ անում է վերջ այն պատճառով, վոր ինքն ավելի չի ընդունակ անձնվիրության, քան տղամարդը, այլ այն, վոր ավելի չի ապրում դգացմունքներով, այսինքն սրտով: Ճիվ վորովհետև կնոջ սիրտը միայնակ ինացած ժամանակ չի կարողանում ինքն իրեն, քան վորում նա ստեղծված է մի ուրիշ հակի շնչով կերմանալու, նրա աղեցությամբ բարախելու, նրա դողվանքով դորանալու և, ի վերջո, նրա հյության մեջ լուծվելու և այդ լուծման մեջ յուր էերանությունը գտնելու համար, այդ պատճառով նա, ձգտելով դեպի յուր ընտրած հակը, ցանկանում է տեսնել նրան կարող ու դորավոր, վորպեսզի ինքը նրանից սիրված ժամանակ, սիրվի զերազանցարեն, բուռն և ուժգին... Ճիվ հենց այդ պատճառով էլ նա սիրով տալիս է այդ հակին ամենը, ինչ վոր ունի մեծագին, վորպեսզի դրանով ավելի զորանա այն աղբյուրը, վոր կյանք պիտի տա իրեն: Այս խոկ է պատճառը, վոր կինն ավելի չի ուրախանում սիրած անձին հասած մի հաջողությամբ, կամ տեսնում նրա կորած մի կորուստով, քան թե դրանք հասած լինելին իրեն: Վասնզի հավատում է թե ինքը կարող և ինալ միշտ կանգուն և զորավոր, քանի զորավոր է սիրտ ատարկան, բայց կնիկների, կվոչնչանա, յերբ այս վերջինը զրկվի յուր ուժից... Ճիվ թե ունենք մի կին, վոր ապրում ու գործում է միայնության մեջ, ո՛, այդտեղ էլ պատերազմ այն անյերևույթ վոգին, վոր նրան ընկերանում, շունչ ու կյանք է տալիս, հուր ու կորով է ներշնչում... այո, կնոջ սիրտը մենակ ապրել չէ կարող, միայնության մեջ նա կասչի, կընդարմանա և այդ է պատճառը, վոր նա սրտագին ձգտում է դեպի կերմացնող ճառագայթները: Թող նրանց աղբյուրը գտնվի թեկուզ հեռվում, անհունության մեջ, բավական է, վոր նրանց լույսն ու կերմությունը հասնում են իրեն. նա գոհ է լինում և այդքանով... Բայց յերբ այդ լույսը մարում, յերբ ճառագայթների աղբյուրը ցամաքում է ո՛, այն ժամանակ մի պատրաք կնոջը կենդանիների մեջ... ավե, վերքան թույլ եմ... աչքերս խառնվում են, չեմ կարող շարունակել...

ՀՅ Նկտ.

«Ի զուր չէ ասում լատինական առածը՝ Ճառող հոգին առող մարմնի մեջ»: Ինձ թվում է թե հուսահատությունն այնքան չէր ընկճել հոգիս, յեթե յես չհիվանդանայի. բայց այդ պատահեց

անսպառ։ Ձեր հեռագիրը առանալուց հետո՝ ինձ այնպես լավ էյի զգում, այնպես յերջանիկ, վոր կարծես նորեն յերիտասարդացել էյի։ Ես, վոր իմ գործունեյության յերկար շրջանում վոչ ցնորել էյի, վոչ յերազել, այժմ այդ անում էյի ինչպես կյանքի գարունը նոր վոգևորող մի պատանեկուհի։ Գրեթե որերով մտորում էյի այն մասին թե՝ ահա ուր վոր է «ընտրյալը» կգա, կվոգևոնե կարոտով սիրած հայրենիքը, կբազմի հինավուց աթոռի վրա և շուրջը խմբելով արժանյաց տեր անձինք, կսկսե վերաշինել խաթարյալ տունը, կմաքրե նրան փտուբյունից ու փոշուց և միլից հանելով հիվանդն ու ոտարամուտը տեղը կհաստատե առողջն ու հարազատը։ Նա կվանե, ասում էյի, այդ տան դռներից սիգանավորներին, հացկատակներին, բանսարկու խոովարարներին, գայթակղուբյուն սերմանողներին և դրանց փոխարեն կկարգե դեռ և խնամակալ անկաշառ, ուղղամիտ և արդարադատ անձանց, վորոնք չարի փոխարեն կհաստատեն բարին, խռովուբյունը կփոխարինեն խաղաղուբյամբ, առեղծբյունը՝ սիրով, գայթակղուբյունը՝ ուղիղ հավատով։ Նա կընդլայնե, մտածում էյի, լուսավորուբյան սպարեզը, գործի հրավիրելով անձնվեր սրտերին, արժանավոր մշակներին և քաջալերելով շնորհն ու առաքինուբյունը՝ հետաստեե մեր մեջ միայն բարձրին ու արժանավորին յերկրապագելու պաշտամունքը։ Այդպիսով հեռդհետե մեր հոգևոր աշխարհից կհալածվին ոգիաուբյունը և այն շահադործող պաշտոնյաները, վորոնց շնորհիվ շատ ջերմ սրտեր են սառել, շատ վեհ հոգիներ վշտացել, բարձրաթռիռ մտքեր ընկճվել, հույսեր ու ակնկալուբյուններ մարել... Ցեվ յերբ այսպիսով կմաքրվի Վեհավայրը շրջապատող մթնոլորտը, յերբ սևաթուր ամպերը հորիզոնից կանհետանան և արդարուբյան արևը Սուրբ Խորանը կվոգողե, այն ժամանակ այդ արևից կջերմանան նաև սառած սրտերը, կամոքվին, ույժ կառնեն վշտացած հոգիները, նորեն կվերածնվին և վեհ մտքերը և մեծ հույսերը... Ցեվ ամենքը միահամուռ, մի սիրտ և մի հոգի՝ կփարին իրենց լուսածին մորը, կտան նրան սիրո կաթոգին համբույր և նրանից կառնեն լույս, ջերմուբյուն և կենդանուբյուն... Այս վոգևորված մտորումների ժամանակ, մի հանդուգն զգացմունք խառնում եր սիրտս և լցնում այն անբացատրելի յերանուբյամբ։ Ցես մտածում էյի, թե ինչպիսի հոգեկան հրճվանքով պիտի զգվեմ այն միտքը թե՝ այս մեծ անձը, վոր այնքան առաքինաբար յուր նվիրման ընթացքը կատարեց և վորքան զոր շնորհներով զարդարվելով ազգի միահամուռ ընտրուբյան արժանացավ, այս վեհ անձը, վոր այսոր մեր հոգևոր կյանքի նավը վարում է այնքան իմաստասեր և համորեն հեռացնելով խարակներից ու խութերից՝ ուղղում

Ե՛զնակի հուսո, սիրտ և հավատո անքուէթ նավահանդիստ. այս անձը, վորին սիրում և ամեն հայի աղոթով սիրտ և վորի մեջ նա յուր լավագույն իղձերն ու հույսերն և ամփոփում, սա նա չէ, վորին իմ սիրտը սիրեց, վորին իմ հոգին փարեց ջերմագին... Ապա այս քաղցր ցնորքներին հաջորդում եր մի ուրիշը, առավել քաղցրագույնը. — Ցնս մտածում էի թե կհասնեն և այն որը, յերբ վերջը կելնեն յուր վիճակը պատելու, յուր ժողովուրդն ու նրա չարն ու բարին ճանաչելու։ Ցնվ այդ ժամանակ նա կմտնե նաև հին Սյունյաց աշխարհը, կայցելե նրա լեռներին ու հովիտներին, նրա հեռավոր, բայց սիրաղվարճ գյուղերին, նա կհանդիպե նաև այս ավանը, ուր կգտնե ինձ՝ յուր նախկին աշակերտուհուն... Նա կտեսնե նրան՝ աշխարհից հեռացած, սև աքեմ հագած և յուր խմասուն խորհրդով՝ ժողովրդին նվիրված... Կտեսնե նաև այդ նվիրման արդյունքը — իմ առեղծած գործերը, իմ աշխատությանց պատուղները և դրանց արժեքը արդարությամբ գնահատելով, կորհնե ինձ, կորհնե իմ գործերը և այն վարկյանը, յերբ իր սիրո կայծը վառեց իմ հոգին և պատճառ յեղավ այսքան բարիքների... Ո՞, կարող եք դուք չափել այն բերկրանքի, վոր լցնում եր սիրտս նման վարկյաններում և մոռացնել տալիս ինձ՝ այն բոլոր վշաերն ու նեղությունները, վոր յերբևիցե կրել եմ իմ կյանքում։ Ցնվ ինչ կանվանեիք դուք այս զգացմունքը. յեսասիրություն թե՞ անաչառություն. ինձ թվում է թե վոչ մեկն և և վոչ մյուսը։ Այս զգացմունքը նույնիսկ անուն չուներ յուր համար։ Վերավհետև նա չեր արտահայտվում հրապարակով, աղմուկ չեր հանում, մաքեր չեր հուզում. նա միայն թաղուն մնունդ եր տալիս կնոջ զգայուն սրտին և ընդունակ դարձնում նրան՝ անվերջ նվիրվելու, հավիտյան զոհվելու... Ցնվ սակայն, ավաղ, այս բոլոր յերազները անցան իբր սոսկ. իմ քաղցր հույսերը մնացան անհարիր՝ մեղնելով իրենց հետ իմ սիրան ու հոգին։

ՀՑ հոկտ.

«Ցնրկակ կամենում էի խոսել այն մասին թե՝ ինչպես հիվանդ մարմինը հիվանդացնում և հոգին. բայց զգացմունքների հոսանքը տարավ ինձ այլ կողմ, ուստի մոռացրյալ նյութից հեռացա։ Այժմ արդեն կխոսեմ այդ հիվանդության համար, վոր ինձ պատահեց գրեթե անսպասա կամ ավելի ճիշտն ասած՝ ինքնամոռացությունից։ — Տխուր նորության իրազեկ լինելուց և մեր կորուստի չափն ըմբռնելուց հետո, արդեն աշխարհը մթնել եր ինձ համար։ Առաջին վայրկյանից իսկ, ինչպես անցյալներն էլ ասացի, զգացի ծանր շունչը մի ճնշող վհատության, վոր ապա հետզհետե իմ էությանը տիրեց։ Այդ իսկ պատճա-

առվ գործ ու պարապմունք մի կողմը թողած, անձնատուր եյի յեղել տխուր մտածություններին։ Վախ միայն դյուղն ու ժողովուրդը, վորոնց կարծես մոռացել եյի, այլ և իմ դպրոցն ու սիրած սաները համարյա այլևս չեյին դրավում ինձ։ Ցես, վոր ամեն առավոտ նրանց տեսնելով թարմանում ու զվարթանում եյի, այժմ ընդհակառակն, աշխատում եյի հեռանալ նրանցից, վորպեսզի կարողանամ ազատորեն նվիրվել իմ մենավոր մտածություններին, վորոնք վորքան էլ ծանր ու հոգեմաշ, այսուամենայնիվ դրավում եյին ինձ ավելի քան վոր և է ուրիշ զբաղմունք։ Այդ իսկ նպատակով առավոտից արդեն հարկ յեղածը կարգադրելով ինքս փակվում եյի իմ առանձնարանում կամ դպրոցից հեռանալով անտառի մեջ թափառում, վորպեսզի կարողանամ ցնորքներիս աշխարհում գտնել այն սփոփանքը, վոր զլանում եր տալ ինձ իրական աշխարհը։ Ահա այդպիսի մի որ, յերկար թափառելուց հետո, վերադառնում եյի տուն։ Հասնելով անտառի յեզերքին, կամեցա քիչ հանգստանալ, վորովհետև թե հոգնած և թե քրտնած եյի։ Ցերեկոյան դեմ լինելով՝ հովը փչում եր խիստ անուշ և թռչուններըը ճոխորում եյին ծառերի մեջ։ Նստելով ասվի մոտ քնկած մամռապատ ու հանգիստ ժայռերից մեկի վրա, աչքերս սևեռեցի հեռասահ ալիքներին, վորոնց մեջ իրար տեսնում եյի մաքերիս հարազատ պատկերը։ Դրանք յերկուսն էլ հարաշարժ ու հեղհեղուկ, միշտ միմյանց հրելով և միմյանց թևակոխելով՝ շրունակ դիմում եյին առաջ, առանց գիտենալու թե՝ ուր են գնում, ուր և իրենց հանգիստը և ուր վախճանը... Զգիտեմ ախորժ հիվը, թե հոգնածությունը, քիչ հետո մի տեսակ թմրություն բերին վրաս, ուստի գլուխս ժայռին դնելով, կամեցա մի փոքր նիրհել և սակայն շուտով քաղցր քուն մտա։ Քանի ժամ անցավ չգիտեմ, միայն թե յերբ արթնացա, շուրջս արդեն մութ եր, աստղերը փայլում եյին և լուսնի սկավառակը հուշիկ բարձրանում եր լեռների յետևից։ Տեղից բարձրանալու ժամանակ զգացի, վոր մրսել եմ, վորովհետև մեջքս ու թիկունքս սառել եյին առավոտվա պես։ Վերադառնալով տուն, անհանգիստ դրությամբ մեջ գտա սպասուհուս, վոր իմ վերադարձը զրոսանքից չեր տեսած այդքան ուշ։ Ցես նրան հայտնեցի, թե քնով եյի անցել ասվի ոտին, սառը ժայռերի վրա։ Բարի կինը վախեցավ և գուշակեց, վոր անշուշտ ցուրտ առած պիտի լինեմ, ուստի խորհուրդ տվավ շտապել, կարելուն չափ շուտ պառկել և քրտնել։ Բայց յես դանդարի նրա խորհուրդը։ Կյանքն այլևս ինձ համար գրավիչ վոչինչ չուներ։ Ուրեմն հարկ էլ չկար նրա պահպանության համար հոգալ։ Հետևյալ առավոտ շատ թույլ եյի տեսնում ինձ. մարմինս

կարծես ջարդված եր։ Իսկ յերբորդ օրը, սաստիկ գլխացավն ու ջերմախտի նշաններն համոզեցին ինձ, վոր արդեն վտանգավոր հիվանդության բռան մեջ եմ... Սակայն այդ համոզմունքն ինձ չսթրեցրեց։ Ընդհակառակը, մի թաղուն ուրախություն զգացի, մտածելով թե գուցե այս նորաբաց ճանապարհով ազատվիմ իմ հոգեկան բազմաթիվ վշտերից։ — Դուք, իհարկե այս տողերը կարդալով, նախատում եք ինձ իմ փոքրոգի մտածությանց համար, բայց յես արդեն ձեղ ասել եմ թե անկեղծորեն պիտի խոստովանիմ իմ կրածն ու զգացածը։ — Ցավ ահա այսպես, յես հիվանդացա թաքուն սաստիկ բորբոքումով։ Բահանան, իմ սանները ու նրանց ծնողները շրջապատեցին ինձ իրենց կարեկից հոգատարությամբ. բայց և այնպես չդիտեյին թե ինչքիվ խոկապես կարող են առաջն առնել իմ հիվանդության, վոր հետզհետե սուր կերպարանք եր առնում։ Նրանք ամենից առաջ աշխատեցին համոզել ինձ բժիշկ բերել տալ քաղաքից, բայց յես չկամեցա և հավատացնում եյի թե շուտով պիտի առողջանամ։ Տատանվինդ որ շարունակ ճգնաժամի մեջ եյի և այժմ, գուցե, պահված լինեյի հոգի տակ, յեթե մի հասարակ միջոց, յեղյուրով արյուն առնելը, վորի բարերար ներգործության յես չեյի հավատում, թեթևացրած չլինեյին իմ ցավերը։ Բայց և այնպես այսօր արդեն ամիսը լրանում է և յես դեռ անկողնում եմ։ Թևակտ կրծքումս ու թիկունքումս այլևս ցավեր չեմ զգում, բայց հազս սաստկացել և հաճախ ջերմում և դիշերները քրտնում եմ. մարմինս հետզհետե մաշվում է և մի քանի որ կա, ինչ ուտելդ հազիս հետևում և արյուն... ինձ թվում և, թե իմ հիվանդությունն արդեն փոխվեցավ և շուտով էլ ինձ գերեզման կտանի, մանավանդ վոր սխալ մտածմունքները հանգիստ չեն տալիս ինձ... Այս պատճառով եր, վոր ասում եյի թե հիվանդ մարմինը հիվանդացնում է և հոգին։ Ցեթե մարմինս առողջ լիներ, գուցե հոգիս չնկճվեր այս աստիճան կամ հուսահատությունը չհաղթահարեր նրան... ահ, յեթե իմանաք թե՝ վորքան ուժ եմ զործ դնում ամեն անգամ մի քանի րոպե դրելու համար և թե հետո այդ լարումին վերջին անկումն ու թուլությունն և հաջորդում... բավական է. էլ դրիչ շարժել չեմ կարող...

«12 հոկտ.

«Հինգ որ շարունակ վոչինչ չդրեցի։ Ձեյի կարող. սաստիկ թուլացել եմ. հազս, մանավանդ, հանդիստ չեր տալիս. բայց այսօր կամեցա շարունակել... Դեղեցիկ յեղանակը դրավեց ինձ։ Ձրևի ջղերը լցրել են անդյակս կենդանարար ջերմությամբ. իսկ գուրսը հրաշալի յա... Հիշում եք գուք իմ պատուհանի առաջ բաց-

վող տեսարանը — լեռնալանջի թավուտը, ժայռերի պատվարը և ապա յերկուստեք ուսինները ծածկված ջրաղացի առուն, վոր ժայռերին հասնելուց՝ զրնդող շառաչով թափվում է դեպի ձորը... Այդ բոլորն այժմ վոդոդված և արևի լուսով: Սակայն կանաչը դեղնել և արդեն. ծառերը հետզհետե մերկանում են տերևը: Բնությունն ել, կարծես, թուլացել, կորցրել և յուր առույգությունը... Բայց ինչու՞ նրա այդ տկարության մեջ մենք զարձյալ գրավիչ մի բան ենք տեսնում, ինչու՞ այնքան սիրով նայում ենք նրա հանգչող կենդանության վրա... Ինձ թվում է, թե այն պատճառով, վոր հավատացած ենք թե նա չի մեռնելու, թե նրա կենդանությունը վոչ թե ոպառում, այլ հանգստանում է՝ նորեն ույժ առնելու, նորեն վերածնելու, նորեն ստեղծագործելու համար... Հավատացած ենք թե ամեն ինչ սառեցնող և մահացնող ձմեռը չի կարող սպանել բնության գեղեցկությունը. թե ցրտաշունչ յեղանակին՝ կհաջորդե գարունը՝ յուր ջերմացնող արևով, յուր քաղցրասյուդ հովերով, յուր վարսագեղ կանաչով, յուր վառվռուն ծաղիկներով, վոր առատորեն ամեն կողմ սփռելով՝ կզգենե, կզարդարե մարդն ու մարմանդը, դաշտն ու բլուրը, լեռն ու քարափը և... մոռացնել կտա մարդկանց ժանտ ձմրան գոյությունը, նրա ցուրտն ու սառույցը, նրա մահաշունչ բնությունը... Իսկ այդ գարունը, ահ, ասսված իմ, յես ել չեմ տեսնելու... նրա արևն ու հովերը, նրա կանաչն ու ծաղիկները, ել իմ աչքերը չեն պարուրելու... Բայց, ավե, ինչպես կկամենայի ապրել... նորեն ույժ առնել, նորեն առույգանալ, նորեն աշխատել, աքնել և գարնան բարիքներով իմ ջանքերը պսակել... Ինչու՞, ինչու՞ բնությունից դասեր չենք առնում. ինչու՞ նրա հարատառ ծնունդները լինելով՝ նրա ցույց տված որինակներով չենք վոգևորվում և քույլ ենք տալիս, վոր վհատությունը տիրե մեր հոգուն, գերե մեր սրտերը, սպանե քանկագին տենչերն ու իղձերը... Ջե վոր գիտենք թե՝ մահաշունչ ձմրան հաջորդում է միշտ կենսաբեր գարունը, չե՞ վոր սա արդեն հավիտենական ճշմարտություն է... Ցավ սակայն, ավաղ, սխալ դործեցի. մոռացա մի վայրկյան մեծ ճշմարտությունը և այժմ արդեն ուշ է... Ջղեաք և մոռանալ... և վոչ իսկ մի վայրկյան...

Կամեցա գրձյալ գրել, բայց տեսնում եմ, վոր ույժ չունիմ. ինքս չկարողացա նստել անկողնում. Մանիշակն ոչնեց... Ահ, այս հրեշտակը, այս բարի և աղնիվ հոգին... մի վայրկյան չի հեռանում ինձանից, իսկ Գևորսը շարունակ պատում է մյուս

անյայտում։ Ինչպես տխուր ու ճնշված են նրանց մատաղ սրտերը... Իմ ցավերը չեն տանջում ինձ այնքան, որքան արտասուքն են, որ մորմոքեցնում է սիրտս... Ո՜հ, այժմ, այժմ միայն կցանկանայի ապրել, որ սրբելի սրանց արցունքը և սովորեցնելի չլալ, չկրկնել չլալ, այլ աշխատել և գործել... ավաղ, այս դասը չես չափի նրանց, որովհետև չգիտեի քեզ հարկ կլինի լալ... այժմ տեսնում եմ, որ անհրաժեշտ դասը ձեացել և առանց խոսելու... Ի՞նչ անեմ, չես այլևս անկարող եմ... Ձեռս և սրհնել այն բերաններըը, որոնք այդ դասը կխոսեն վոգևորությամբ...

<15 նոյ.

Ծիրել այլևս անհնար և... գրիչս ընկնում և... նրա փոխարեն դորանում է արտասուքս... ծրարեմ այս թերթերը. չեքե առաջացա գործյալ կգրեմ, չեքե վոչ, խոսածս էլ բավ և... արդեն դիտեք քե ինչու մարեց կրակը.... ընդունեցեք իմ ջերմագին վողջույնը... Ցնքե յերբ և իցե պատահեք իմ սիրելի ուսուցչին, պատմեցեք նրան իմ մասին մի քանի բան... Ասացեք, որ յուր քաղցր պատվերի համաձայն՝ եմնասյ ցորյանն, դի բաղում արդյունս արասցե...»

Ձեր քույր Աննան։

Այս ամենը կարդալու ժամանակ յես շատ անգամ հուզվեցա և յերբեմն հազիվ եյի ինձ զսպում, որ բարձրաձայն չհեկեկամ։ Իսկ յերբ աննման կուսի վերջին խոսքերը կարդացի, արտասուքս սկսավ ապրյուրի պես հոսել և յես դլուխս ձեռքերիս մեջ առած՝ յերկար լաց եյի լինում, ինչպես Քանկագին հարազատը կորցրած մի մարդ։

Հետեյալ առավոտ, շատ վաղ դնացի քույր-Աննայի վերեղմանը համբուրելու։ Նա գտնվում եր յեկեղեցու արևելյան կողմը, փոքրիկ անտառի յեզերքին, դեղեցիկ ու նորաստեղծ բարձրավանդակի վրա։ Մի պարզ, սպիտակ տապանաքար ծածկում եր այդ սուրբ վերեղմանը, որի վրա սավառնում եյին նորատունկ ուսկիներ։ Բարձրավանդակն ամբողջապես զարդարված եր ծաղկանց տունկերով և նրանց շուրջը պատեպատ խոխոջում եր փոքրիկ, ակնաձիկա առվակ, որ յուր մշտամռունչ մրմունջը ուսկիների սոսափյունին խառնելով, ասես քե հավիտենական մեղեդիներ եր յերգում անդուլական կուսի հանգստյան համար։

Մենավոր շիրիմի շուրջը տիրում եր վսեմ, խորհրդավոր լռություն, որ մարդուն ակամա դարձնում եր ջերմեռանդ։ Ցես

խորին ակնածութեամբ մոտեցա շիրմին և յերկիւղածութեամբ համբուրեցի այն տապանի վրայ, հանգուցեալի ցանկութեամբ, փորագրված եր միայն յերեք բառ. «Ռուբր-Անանեայի հանգիստը»։ Բայց վորքան մտքեր, վորքան պատմութիւններ կային այդ պարզ բառերի մեջ... Այդտեղ ամփոփված եր գողտրիկ զգացմունքների, սուրբ դաղափարների և ազնվագույն վոգևվորութեան մի ամբողջ աշխարհ... Այդ կանաչադարդ շիրմի մեջ հանգչում եր Հայրենիքի սուրբ սիրո նահատակը — մարմնացյալ անձնվիրութիւնը, վոր սրի դեմ չեր գնացել, վառոդի դեմ չեր խիզախել, բայց մղել եր նույն կռիվը, ինչ վոր ամեն մի մեծ հերոս... Վ՛որ ճշմարիտ հայրենասերը չեր խոնարհիլ յուր գլուխը այդ սրբազան շիրմի առաջ և վոր յերիտասարդի սրտին՝ սեր ու յուսանդ չեր ներշնչիլ «Ռուբր-Անանեայի հանգիստը»...

Համբուրելով այդ շիրիմը, յես չոգեցի նրա առաջ և աղոթեցի սրտահուզ։

Իմ աղոթքը՝ մի ջերմ ցանկութիւն եր, տեսնել մեր մեջ, գոնե այսուհետև, Ռուբր-Անանային և նրա Ուսուցչին արժանավոր հետևողներ։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԵՋ
2. ՄՈՒՐԱՑԱՆԸ ԻՐԵՎ ԴՅՈՒՂԱԴԻՐ (Առաջաբան) . . . IX
3. ՆՈՑԻ ԱԴՌԱՎԸ 3
4. ԱՌԱՓՅԱԼԸ 47
5. ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՄԻԱՆՁՆՈՒՀԻ 201

Отв. ред.—**А. Тертерян**
Редакц. текста—**С. Арутюняна**
Супер и обложка—худ. **Ледкара**
Тех. ред.—**М. Абгарян**

МУРАЦАН

ИЗБРАННЫЕ ПРОИЗВЕДЕНИЯ

Том I

(на армянском языке)

Отпечатано в тип. Госиздата ССР Армении.
Москва, Армянский пер., 2. Зак. 1455.
Главлит № Б—12977. Изд. № 3324. Т. 4400.
Сд. в наб. 13/X-35 г. Подписано к печ.
16/XI-35 г. Печ. л. 23¼. В 1 п. л. 42000 п. з.




ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220028692

A 23692